

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2011

ՀՏԴ 338(479.25):06

ԳՄԴ 65.9(2Հ)-1

Ս 783

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Յուրի Սուվարյան
Աշոտ Մարկոսյան
Սերգեյ Ղազարյան
Վարդան Բոստանջյան
Բենիամին Եղիազարյան
Թորոս Թորոսյան
Ռոբերտ Սարինյան**

Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝

**ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**

ՎԱԼԴԻՍԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս 783

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի
Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր) / ՀՀ ԳԱԱ,
Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ; Խմբ. խորհուրդ՝
Յու. Սուվարյան և ուրիշներ, ժող. պատ. խմբ.՝ Վ. Հարությունյան – Եր.:
«Գիտություն» հրատ., 2011, 368 էջ

Ժողովածուում ներկայացված են 2011թ. հունիսի 23-24-ին ՀՀ ԳԱԱ
Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում անցկացված
«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի
Հանրապետությունում» թեմայով հանրապետական գիտաժողովի մասնակից-
ների զեկուցումներն ու հոդվածները:

ՀՏԴ 338(479.25):06

ԳՄԴ 65.9(2Հ)-1

ISBN 978-5-8080-0896-0

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2011

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

| | | |
|---|--|-----|
| Ա. ԱԼԻԽԱՆՅԱՆ | Ֆինանսական վարձակալության կամ լիզինգի ներկայացումը լիզինգատուի և լիզինգատուի հաշվերվություններում | 6 |
| Բ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | Դուրացիաների և սուբվենցիաների տնտեսական գնահատման մեթոդաբանությունը | 10 |
| Բ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ա. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Բելառուսիայի Նանրապետության և Նայասպանի Նանրապետության հարկային համակարգերի համեմատական բնութագիրը | 18 |
| Բ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ա. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Ղազախստանի Նանրապետության և ՆՏ հարկային օրենսդրության համեմատական վերլուծությունն ու գնահատումը..... | 23 |
| Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ | Լոզիթ և Փրոբիթ սթորինգային մոդելները որպես վարկային ռիսկի կառավարման գործիք ՆՏ-ում..... | 30 |
| Մ. ԴԱՎԹՅԱՆ | Բանկերի դերը միջազգային ֆինանսական ինտեգրման գործընթացներում (ՆՏ օրինակով) | 35 |
| Ա. ԶԱԶԱՐՅԱՆ, Ա. ՆՈՎԱՍՏՓՅԱՆ | ՆՏ «տնտեսական աճը» և կենտրոնական բանկի կողմից փարվող մոնետար քաղաքականությունը..... | 42 |
| Ն. ԹԵՐԶՅԱՆ | Փողի իրական պաշարների նկատմամբ պահանջարկի մոդելավորումը Էկոնոմետրիկ մոդելների միջոցով..... | 47 |
| Ն. ԻՍՊԻՐՅԱՆ | Ֆինանսական ռիսկերի դերը ՆՏ բանկային համակարգի ֆինանսատնտեսական ճգնաժամից խուսափելու նախապայման | 51 |
| Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ | Նամաշխարհային տնտեսության հետճգնաժամային զարգացման միտումները..... | 55 |
| Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | Գործառնական ծախսերի գնահատումը կազմակերպական փոփոխություններում և մեթոդ ֆինանսական շուկաներում | 60 |
| Մ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Դ. ԱՖՅԱՆ | Նայասպանի Նանրապետությունում առկա կանխիկ արտարժույթի քանակի գնահատման կարևորությունը ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում..... | 65 |
| Ա. ՄԱԿԱՐՅԱՆ | Ճգնաժամի մակրոտնտեսական ազդեցությունը ՆՏ-ում..... | 69 |
| Լ. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ | Նարկային քաղաքականության արդյունավետության գնահատումը անուղղակի հարկերի մասով..... | 76 |
| Լ. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ | Ֆրանսիայի և ՆՏ հարկային համակարգերի համեմատական վերլուծությունը | 81 |
| Լ. ՄԵԼԵՈՆՅԱՆ | Պեղական բյուջեի ուղղակի և անուղղակի հարկերի փոփոխության դինամիկան և դրա գնահատականը | 87 |
| Լ. ՄԻՆԱՍՅԱՆ | Նայասպանում վենչուրային համակարգի ներդրման կարևորությունը և խնդիրները | 92 |
| Մ. ՍԱՐԳՍՅԱՆ | Դրամական քաղաքականության զարգացման փուլերը և արդի վիճակը Նայասպանի Նանրապետությունում | 97 |
| Կ. ՍԱՖԱՐՅԱՆ | Դրամավարկային քաղաքականության դերը տոկոսադրույթի և արտարժույթային կարգավորման գործընթացում ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում..... | 105 |
| Կ. ՍԱՖԱՐՅԱՆ | Եկամտահարկի և շահութահարկի հարկման մեթոդական բարեփոխումների խնդիրները ՆՏ հարկային օրենսդրության մեջ ֆինանսատնտեսական ճգնաժամերի հաղթահարման և տնտեսական կայուն զարգացման փնտրանքում..... | 111 |
| Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ | Ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը ՆՏ կապիտալի շուկայի վրա | 119 |

| | | |
|--------------------|---|-----|
| И. АКОПЯН | Особенности антикризисной налоговой политики | 123 |
| Գ. ԴԱԴԱԿ | Учет страновых рисков при анализе развития финансового рынка Армении .. | 130 |
| Գ. ՄԱՎՈՆԻԱՆ | Финансовые рычаги обеспечения интенсификации экономического роста в условиях мирового финансово-экономического кризиса..... | 135 |

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

| | | |
|---|---|-----|
| Ն. ԱՎԱԳՅԱՆ | Սև մեքայտորգիայի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում | 139 |
| Ն. ԱՎԱԳՅԱՆ | Բնապահպանական հարցեր | 156 |
| Գ. ԱՂԱԶԱՆՅԱՆ, Ն. ՀՈՎԱԿԱՆՅԱՆ | Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պերական բաղաբականությունը (Ճապոնիայի օրինակով) | 164 |
| Է. ԲԱԲԱՅԱՆ | ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում շրջակա միջավայրի բնապահպանական խնդիրների շուրջ | 172 |
| Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | Արդյունաբերական նորամուծության վերականգնման հիմնախնդիրները | 178 |
| Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | Ռազմավարական այանսների մարբերինգային խնդիրները | 185 |
| Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | Ցանցային փոխհարաբերությունների դրսևորումները ՀՀ-ում | 189 |
| Ա. ԴԱՎԹՅԱՆ | Տեղական ինքնակառավարման մարմինների սոցիալ-բնակարանական զարգացման ծրագրերի մշակման հիմնախնդիրները ՀՀ-ում | 194 |
| Ա. ԴԱՎԹՅԱՆ | Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքը Հայաստանի Հանրապետությունում | 198 |
| Է. ԶԱԽԻՆՅԱՆ | Արտաբին ցնցումների ազդեցությունը ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի և խնայողությունների վրա | 202 |
| Ե. ՀԱԿՈԲՅԱՆ | Ռոտզման դերն ու նշանակությունը ՀՀ գյուղաբնակչության ոլորտում | 210 |
| Թ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Առևտրային բանկերի գործունեության գնահատումը պայմանավորող ցուցանիշները և դրանց գործոնային վերլուծությունը | 213 |
| Լ. ՀՈՎՏԱՆՆԻՍՅԱՆ | Գյուղաբնակչության հումբանյութային ռեսուրսների արդյունաբերական վերամշակումը և ապահովվածության հնարավորությունները | 217 |
| Լ. ՀՈՎՏԱՆՆԻՍՅԱՆ | ՀՀ գյուղաբնակչության բնակարանական աճը ճգնաժամի պայմաններում | 222 |
| Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, Է. ՂԱԶԱՐՅԱՆ | Ֆինանսաբնակարանական ճգնաժամի հերևանքների վերացման միջոցառումները ՀՀ գյուղաբնակչության ոլորտում | 226 |
| Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, Է. ՂԱԶԱՐՅԱՆ, Լ. ԱԶԱՏՅԱՆ | Փոքր և միջին ձեռնարկությունների կառավարման և զարգացման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ ագրոպարենային համակարգում | 233 |
| Թ. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ | Բարձր գնաճի իրական պարճառները և դրանց հաղթահարման հեռանկարները..... | 240 |
| Լ. ՍԱՐԳՍՅԱՆ | Արտաբնակարան կառուցվածքի ազդեցությունը ՀՆԱ-ի փոփոխության վրա ԱՊՀ երկրներում | 260 |
| Խ. ՍԱՖԱՐՅԱՆ | Ֆինանսաարդյունաբերական խմբերի գործունեության օրենսդրական հիմքերի ձևավորման անհրաճեշությունը և ուղիները ՀՀ-ում | 266 |
| Ի. ՏԱՐԱՆՅԱՆ | Մասնավոր հարվածի կառավարման արդյունավետության բարձրացումը Երևանի ջրամատակարարման համակարգում | 274 |
| А. ЗАТИКЯН | Некоторые проблемы транснационализации предпринимательства в условиях кризиса | 282 |
| А. НАЗАРЯН, Т. ОГАНЯН | Основные направления ресурсного обеспечения производства машин и оборудования РА | 290 |

ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

| | | |
|---------------------|--|-----|
| Ն. ԱԴՈՆՅ | Բնակչության կենսամակարդակը և այն բնութագրող ցուցանիշների համակարգը | 294 |
| Տ. ՄԿՐՏՉՅԱՆ | Տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի վրա ազդող գործոնների վերլուծություն | 298 |
| Т. МАНАСЕРЯН | Уроки Казахстана | 308 |

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

| | | |
|------------------------------------|---|-----|
| Բ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ | Բազմակողմ գիտակցված գործունեության հասարակություն. գաղափարը և ձևավորման հիմնախնդիրները | 318 |
| Բ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, Ա. ԳՅՈՒՐՉՅԱՆ | Մարդկային գիտակցված գործունեության զարգացման ռազմավարություն մշակելու ընդհանրական հիմնադրույթները | 322 |
| Լ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Տնտեսական ճգնաժամերի տնտեսության պարամոնից | 328 |
| Ռ. ՍԱՐԻՆՅԱՆ | Տնտեսագիտական լուսանցանշումներ | 336 |
| Б. ГАБРИЕЛЯН | Модель «Мотивация - Стимул» и типы мотиваций | 358 |
| К. ЗУРАБЯН | Учет производственных затрат и калькулирование себестоимости продукции | 364 |

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԱՆՆԱ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ՏՏ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
 արևոտաազիտության ինստիտուտի ասսյիրանտ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԼԻԶԻՆԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԼԻԶԻՆԳԱՏՈՒԻ ԵՎ ԼԻԶԻՆԳԱՌՈՒԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ֆինանսական լիզինգը լիզինգառուի կողմից ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում լիզինգի ժամկետի սկզբում արտացոլվում է որպես ակտիվ և պարտավորություն այն չափով, որը հավասար է ակտիվի իրական արժեքից և նվազագույն լիզինգավճարների գեղչված արժեքից ավելի փոքրին: Սովորաբար, լիզինգառուի կողմից կատարված լիզինգի պայմանագրի հետ ուղղակիորեն կապված սկզբնական ծախսումները ավելացվում են ակտիվի արժեքին:

Դիտարկենք հետևյալ օրինակը:

Ա ընկերությունը Բ ընկերությանը լիզինգով գյուղատնտեսական մեքենա է տրամադրում, որի իրական արժեքը 5.000.000 դրամ է: Բ ընկերությունը հինգ տարվա ընթացքում տարեկան վճարելու է 1.200.000 դրամ: Հինգերորդ տարվա վերջում այդ մեքենայի հաշվարկային մնացորդային գումարը կկազմի 500.000 դրամ: Պայմանագրի կնքման հետ ուղղակիորեն կապված ծախսերը ընդունենք հավասար գրոյի՝ հաշվարկների պարզեցման նպատակով: Գործարքի տոկոսադրույքը պետք է լինի այնպիսին, որպեսզի լիզինգավճարների և մնացորդային գումարի գեղչված արժեքների գումարը հավասար լինի ակտիվի իրական արժեքին: Այդ տոկոսադրույքը 13.48%-ն է, որը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

Լիզինգային գործարքի տոկոսադրույքի հաշվարկ

| Տարի | Կապիտալացվող գումարը ժամանակաշրջանի սկզբին(հազ.դր.) | Լիզինգավճար (հազ.դր.) | Կապիտալացվող գումարը ժամանակաշրջանի ընթացքում(հազ.դր.) | Տոկոսադրույք՝ 13.48% (հազ.դր.) | Կապիտալացվող գումարը ժամանակաշրջանի վերջում(հազ.դր.) |
|-------------|---|-----------------------|--|--------------------------------|--|
| 2011 | 5 000 | 1 200 | 3 800 | 512 | 4 312 |
| 2012 | 4 312 | 1 200 | 3 112 | 420 | 3 532 |
| 2013 | 3 532 | 1 200 | 2 332 | 314 | 2 646 |
| 2014 | 2 646 | 1 200 | 1 446 | 195 | 1 641 |
| 2015 | 1 641 | 1 200 | 441 | 59 | 500 |
| <i>Ընդ.</i> | | <i>6 000</i> | | <i>1 500</i> | |

Այսինքն 13.48%-ն այն տոկոսադրույքն է, որը կիրառելիս լիզինգավճարների (6.000.000) և մնացորդային գումարի (500.000) գեղչված արժեքների գումարը հավասարվում է ակտիվի իրական արժեքին՝ 5.000.000 դրամ (տե՛ս աղյուսակ 2): Լիզինգավճարների գեղչված արժեքը կազմում է 4.734.000 դր. (5.000.000 – 266.000), որը գրեթե հավասար է ակտիվի իրական արժեքին, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ մենք գործ ունենք ֆինանսական վարձակալության (լիզինգի) հետ:

Լիզինգավճարների և ակտիվի մնացորդային գումարի զեղչված արժեքների հաշվարկ

| Վճարման տարին | Վճարման գումար/ մնացորդ. գումար | Զեղչված արժեքի հաշվարկման բանաձևը | Զեղչված արժեքը |
|---------------|---------------------------------|-----------------------------------|----------------|
| 0 | 1200 | 1 200 | 1 200 |
| 1 | 1200 | $1\ 200 / (1 + 0.1348)$ | 1 057 |
| 2 | 1200 | $1\ 200 / (1 + 0.1348)^2$ | 932 |
| 3 | 1200 | $1\ 200 / (1 + 0.1348)^3$ | 821 |
| 4 | 1200 | $1\ 200 / (1 + 0.1348)^4$ | 724 |
| 5 | 500 | $1\ 200 / (1 + 0.1348)^5$ | 266 |
| | Ընդամենը | | 5 000 |

Լիզինգառուի կողմից լիզինգատուին կատարված վճարումները բաղկացած են երկու մասից՝ ֆինանսական ծախս և չմարված պարտավորության նվազեցում: Ֆինանսական ծախսը պայմանագրի գործողության ընթացքում պետք է բաշխվի հաշվետու ժամանակաշրջանների միջև այնպես, որպեսզի չմարված պարտավորության հիման վրա հաշվարկված տոկոսադրույքը հաստատուն լինի բոլոր հաշվետու ժամանակաշրջաններում: Ֆինանսական ծախսերը հաշվետու ժամանակաշրջանների միջև բաշխվում են հետևյալ կերպ.

Լիզինգառուի ֆինանսական ծախսի բաշխումը հաշվետու ժամանակաշրջանների միջև

| Տարի | Պարտավորությունը ժամանակաշրջանի սկզբին(հազ.դր.) | Վճարում (հազ.դր.) | Պարտավորության մնացորդային գումար (հազ.դր.) | Ֆինանսական ծախս, տարեկան 13.48% (հազ.դր.) | Պարտավորությունը ժամանակաշրջան վերջում(հազ.դր.) |
|------|---|-------------------|---|---|---|
| 2011 | 4 734 | 1 200 | 3 534 | 476 | 4 010 |
| 2012 | 4 010 | 1 200 | 2 810 | 379 | 3 189 |
| 2013 | 3 189 | 1 200 | 1 989 | 268 | 2 257 |
| 2014 | 2 257 | 1 200 | 1 057 | 143 | 1 200 |
| 2015 | 1 200 | 1 200 | 0 | 0 | 0 |
| | Ընդամենը | 6 000 | | 1 266 | |

Ինչպես տեսնում ենք օրինակից, ֆինանսական ծախսը հավասար է 1.266.000դր., որն իրենից ներկայացնում է լիզինգավճարների գումարը՝ հանած այդ լիզինգավճարների զեղչված արժեքը (6.000.000 – 4.734.000):

Լիզինգային պարտավորության հաշվեկշռային արժեքը ստանալու համար միշտ պարտավորության մնացորդային գումարին ավելացնում ենք ֆինանսական ծախսը և նվազեցնում կատարված վճարումները (տե՛ս աղյուսակ 3):

Լիզինգային պայմանագրի ժամկետի սկզբում պարտավորությունն ու ակտիվը ճանաչվում են հավասարաչափ: Ինչպես արդեն վերը նշվել է, անմիջապես լիզինգի պայմանագրի հետ կապված ծախսումները, այնպես, ինչպես որ հիմնական միջոցների ձեռքբերման դեպքում է, ավելացվում են ակտիվի արժեքին:

Ֆինանսական վարձակալության արդյունքում առաջանում են մաշվածության կամ ամորտիզացիոն (ոչ նյութական ակտիվների դեպքում) ծախսումներ, ինչպես նաև ֆինանսական ծախս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար: Լիզինգով վերցված

ակտիվների ամորտիզացիոն կամ մաշվածության մասհանումների քաղաքականությունը չպետք է հակասի կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների մաշվածության կամ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների իրականացման քաղաքականությանը: Եթե հիմքեր կան ենթադրելու, որ պայմանագրի գործողության ավարտին, ակտիվի սեփականության իրավունքն անցնելու է լիզինգառուին, ապա որպես ակտիվի օգտագործման ժամկետ պետք է ընտրել օգտակար տնտեսական ծառայության ժամկետը: Եթե նման ենթադրություն անելու հիմքեր չկան, ապա որպես ակտիվի օգտագործման ժամկետ վերցվում է պայմանագրի գործողության ժամկետից և օգտակար տնտեսական ծառայության ժամկետից նվազագույնը:

Քանի որ վարձակալության ծախսերը և մաշվածությունը պետք է հաշվարկվեն իրարից անկախ և դժվար էլ, թե համընկնեն, սխալ կլինեն լիզինգային վճարումներն ուղղակիորեն համարել տվյալ ժամանակաշրջանի ծախս (տե՛ս աղյուսակ 4): Մեր նկարագրած օրինակում ակտիվի մաշվածության գումարը ստանալու համար անհրաժեշտ է ակտիվի հաշվեկշռային արժեքը հավասարաչափ բաշխել վարձակալության ժամկետին (մաշվածության հաշվարկման գծային մեթոդ): Քանի որ լիզինգավճարների զեղչված արժեքը՝ այն է 4.734.000դր., ավելի փոքր է, քան ակտիվի իրական արժեքը՝ 5.000.000դր., հետևաբար ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է հավասար լինի լիզինգավճարների զեղչված արժեքին՝ 4.734000դր.: Երբ այն բաժանենք լիզինգային պայմանագրի ժամկետին՝ 5 տարի, կստանանք մաշվածության տարեկան ծախսը՝ 946.812դր.:

Աղյուսակ 4

Վարձակալության գծով տարեկան ընդհանուր ծախսի հաշվարկը

| Հաշվետու տարի | Ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջում (հազ.դր.) | Պարտավորության հաշվեկշռային արժեքը հաշվետու տարվա վերջում (հազ.դր.) | Եկամուտների և ծախսերի հաշվետվ.-ում արտացոլված ընդհանուր ծախսը (հազ.դր.) | Լիզինգավճարներ (հազ.դր.) |
|---------------|---|---|---|--------------------------|
| 2011 | 3 787 | 4 010 | 1 423 | 1 200 |
| 2012 | 2 840 | 3 189 | 1 326 | 1 200 |
| 2013 | 1 894 | 2 257 | 1 215 | 1 200 |
| 2014 | 947 | 1 200 | 1 089 | 1 200 |
| 2015 | 0 | 0 | 947 | 1 200 |
| | Ընդամենը | | 6 000 | 6 000 |

Լիզինգային գործարքի դեպքում *լիզինգատուն* պահպանում է սեփականության իրավունքը, սակայն փոխանցում է ակտիվի հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու հատուցումները լիզինգառուին լիզինգավճարների դիմաց: Հետևաբար, ըստ էության, լիզինգատուն իրականացնում է ֆինանսավորում և փոխարենն ակնկալում շահույթի ստացում:

Համաձայն ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի, ֆինանսական վարձակալության դեպքում, լիզինգատուն պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում լիզինգով տրամադրած ակտիվն արտացոլի որպես դեբիտորական պարտավորություն լիզինգում կատարած գուտ ներդրումների չափով: Լիզինգի պայմանագրի հետ կապված ուղղակի սկզբնական ծախսումները, օրինակ՝ միջնորդավճարներ, իրավաբանական ծառայությունների դիմաց վճարումները և այլն, ներառվում են գուտ ներդրումների գումարի հաշվարկում: Լիզինգից ստացվող ֆինանսական եկամուտը հաշվարկվում և համապարփակ ֆինանսական

արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանում՝ հիմք ընդունելով զուտ ներդրումների նկատմամբ հաստատուն տոկոսադրույքը:

Ո՞րն է ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումը:

Լիզինգատուի համախառն ներդրումները ֆինանսական վարձակալությունում իրենցից ներկայացնում են նվազագույն լիզինգավճարների հանրագումարը և երաշխավորված կամ չերաշխավորված մնացորդային գումարը, որի նկատմամբ լիզինգատուն իրավունք ունի: Չուտ ներդրումները իրենցից ներկայացնում են զեղչված համախառն ներդրումները: Չեղչման համար կիրառվում է պայմանագրում ենթադրվող տոկոսադրույքը: Ստացվում է, որ ցանկացած պահի զուտ ներդրումները հավասար են համախառն ներդրումներին՝ հանած ապագա հաշվետու ժամանակաշրջանների համախառն եկամուտը:

Այսպիսով, լիզինգային հարաբերությունների սկզբում լիզինգատուի զուտ ներդրումները հավասար են ակտիվի ինքնարժեքի և, իհարկե, ուղղակի սկզբնական ծախսումների գումարին: Համախառն և զուտ ներդրումների տարբերությունը իրենցից ներկայացնում է համախառն ֆինանսական եկամուտը, որը պետք է բաշխվի լիզինգային պայմանագրի գործողության ընթացքում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանների միջև: Ֆինանսական եկամուտը, որը պետք է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտացոլվի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, հաշվարկվում է լիզինգատուի զուտ ներդրումների նկատմամբ հաստատուն տոկոսադրույքով:

Մեր օրինակում լիզինգավճարների և ակտիվի մնացորդային արժեքի գումարը կազմում է 6.500.000դր., իսկ ակտիվի իրական արժեքը՝ 5.000.000դր., հետևաբար լիզինգառուի ֆինանսական եկամուտը կազմում է 1.500.000դր.: Դեբիտորական պարտքի սկզբնական հաշվեկշռային արժեքը հավասար կլինի ակտիվի իրական արժեքին, ինչն էլ իր հերթին հավասար է համախառն ներդրումների (6.500.000դր.) զեղչված արժեքին՝ որպես զեղչման տոկոսադրույք վերցնելով լիզինգային գործարքի տոկոսադրույքը՝ 13.48%:

Աղյուսակ 5

Լիզինգատուի դեբիտորական պարտքի հաշվարկ

| Հաշվետու տարի | Դեբիտորական պարտքը ժամանակաշրջանի սկզբին (հազ. դր.) | Ստացված լիզինգավճարներ (հազ.դր.) | Ֆինանս. եկամուտ 13.48% (հազ. դր.) | Համախառն ներդրումները տարվա վերջում (հազ. դր.) | Ապագա ժամանակաշրջանների համախառն եկամուտ (հազ. դր.) | Դեբիտորական պարտքը ժամանակաշրջանի վերջում (հազ. դր.) |
|---------------|---|----------------------------------|-----------------------------------|--|---|--|
| 2011 | 5 000 | 1 200 | 512 | 5 300 | 988 | 4 312 |
| 2012 | 4 312 | 1 200 | 420 | 4 100 | 569 | 3 532 |
| 2013 | 3 532 | 1 200 | 314 | 2 900 | 254 | 2 646 |
| 2014 | 2 646 | 1 200 | 195 | 1 700 | 59 | 1 41 |
| 2015 | 1 641 | 1 200 | 59 | 500 | - | 500 |
| | | 6 000 | 1 500 | | | |

Ինչպես երևում է աղյուսակ 5-ից, լիզինգատուի ֆինանսական եկամտի չափը կախված է նաև ակտիվի մնացորդային արժեքից, որը ակտիվի շահագործման ընթացքում պետք է պարբերաբար վերանայվի: Մնացորդային արժեքի փոփոխության դեպքում լիզինգատուն պետք է վերահաշվարկի ֆինանսական եկամտի բաշխումը հաշվետու ժամանակաշրջանների միջև:

Ի տարբերություն ֆինանսական վարձակալության, գործառնական վարձակալության դեպքում, համաձայն ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի, վարձակալի կողմից վարձավճարները ծախս են ճանաչվում համապատասխան ժամանակաշրջաններում: Վարձատուն վարձակալության հանձնված ակտիվը շարունակում է հաշվառել որպես ակտիվ, իսկ ստացված լիզինգավճարները որպես եկամուտ են ճանաչվում:

Վերոնշյալ լիզինգային հաշվառման սկզբունքները, չնայած, տարիներ շարունակ չեն փոփոխվել, սակայն հաճախ քննադատությունների առիթ են տվել: Քննադատությունների հիմնական պատճառն այն է, որ վարձակալական գործարքների դասակարգումը ֆինանսական և գործառնական վարձակալությունների կարող է տանել նրան, որ նմանատիպ գործառնությունները բավականին տարբեր կերպ արտացոլվեն հաշվետվություններում: Ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների խորհուրդը (ՖՀՄԽ) և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդն այժմ աշխատում են լիզինգային գործարքների հաշվառումը կարգավորող ստանդարտի շուրջ, որը պետք է առաջարկի գործառնական և ֆինանսական վարձակալությունների հաշվապահական հաշվառման մեկ ընդհանուր մոտեցում: Խորհուրդները կարծում են, որ բոլոր լիզինգային գործարքները պետք է հաշվառվեն այն նույն սկզբունքով, որով հաշվառվում են ֆինանսական վարձակալության գործարքները, քանի որ երկու դեպքում էլ լիզինգառուն ձեռք է բերում ակտիվի օգտագործման իրավունքը՝ դրա դիմաց կատարելով համապատասխան վճարումներ, իսկ լիզինգատուն այդ վճարումների դիմաց հանձնում է ակտիվի օգտագործման իրավունքը լիզինգառուին:

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

*ՆԳԱԿ Մ. Քոթանյանի անվան
դնարկապահպանության ինստիտուտի գիտաշխատող*

ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերության նվազեցումն է: Համայնքներին չի կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացված ֆինանսական միջոցների ուղղում կոնկրետ ծախսերի իրականացմանը: Դրանց ծախսման ուղղությունները սահմանում են ՏԻՄ-երը:

Ելնելով պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջև եկամուտների բաշխումից, ինչպես նաև համայնքային բյուջեներով կատարվող ծախսերի, դրանց ամրակցված սեփական եկամուտների և ընդհանուր հանրապետական հարկերի մասհանումների միջոցով ստացվող եկամուտների հարաբերակցությունից, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կառավարության համաձայնությամբ որոշում է դոտացիաների, սուբվենցիաների ու սուբսիդիաների չափերը, որոնք պետական բյուջեից հատկացվում են առանձին համայնքային բյուջեներին:

Դոտացիան՝ ֆինանսական օգնության կամ օժանդակության ձև է: Այն տրվում է ան-

հատույց կարգով առանձին համայնքային բյուջեներին, դրանց եկամուտների ու ծախսերի միջև գոյություն ունեցող դեֆիցիտը փակելու համար՝ չառանձնացնելով դրա օգտագործման ուղղություններն ու նպատակները: Դա նշանակում է, որ տեղական բյուջեները տնօրինող մարմիններն իրենք են որոշում դոտացիոն գումարների օգտագործման ուղղությունները:

Սուբվենցիան՝ ֆինանսական օգնության այնպիսի ձև է, որը տրվում է անհատույց կոնկրետ ընթացիկ ծախսեր կամ կապիտալ ծրագրեր ֆինանսավորելու համար: Դոտացիայի համեմատությամբ սուբվենցիայի օգտագործման նպատակայնությունն այն դարձնում է հիմնավորված, իսկ կիրառումը՝ հեշտ վերահսկելի: Այլ նպատակով օգտագործելու դեպքում սուբվենցիոն գումարները ենթակա են վերադարձման:

Սուբսիդիան՝ ֆինանսական օժանդակության այնպիսի ձև է, որը պետական բյուջեից տրվում է համայնքային բյուջեներին կամ կազմակերպություններին անհատույց կարգով և որոշակի նպատակի համար. այն հատկացնելիս, սովորաբար հիմք է ընդունվում սոցիալական բնույթի (մշակույթի, առողջապահության, ընդհանուր կրթության և այլն) ֆինանսավորման ծրագրերի կատարումը: Ոչ նպատակային օգտագործման դեպքում սուբսիդիաները ենթակա են վերադարձման:

Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը¹ (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) հաշվարկվում է՝ հիմք ընդունելով տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս, քան 4 տոկոսը:

Դոտացիաների հաշվարկման հիմքում դրվում են հետևյալ գործոնները²: Դոտացիաների գումարների չափը հաշվարկվում է ըստ առանձին համայնքների բյուջեների, վերջիններս տարանջատելով՝

- 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների.
- 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների:

Դոտացիաների գումարների չափն ըստ 300-ից ավելի բնակիչ ունեցող առանձին համայնքների որոշվում է հիմք ընդունելով վերջիններիս տնտեսական վիճակը բնութագրող հետևյալ գործոնները՝

- համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի և գույքահարկի հաշվարկային մակարդակը (ա) գործոն,
- համայնքի բնակչության թիվը (բ) գործոն:
Դոտացիաների հաշվարկման կարգը³.

(ա) գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը չպետք է պակաս լինի նախորդ բյուջետային տարում եկամտահարկի, հողի հարկի և գույքահարկի փաստացի մուտքերի հանրագումարի քսանհինգ տոկոսից, իսկ (բ) գործոնով նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ նախորդ բյուջետային տարում եկամտահարկի փաստացի մուտքերի ընդհանուր գումարի տասը տոկոսից:

¹ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 20:
² «Ֆինանսական համահարթեցման» մասին ՀՀ օրենք, հոդված 5:
³ «Ֆինանսական համահարթեցման» մասին ՀՀ օրենք, հոդված 6:

Յուրաքանչյուր բյուջետային տարում ըստ առանձին համայնքների դոտացիայի հաշվարկման ժամանակ հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության պետական վիճակագրական մարմինների կողմից ներկայացված՝ նախորդ բյուջետային տարվա հունվարի 1-ի դրությամբ հանրապետության մշտական բնակչության թիվը՝ ըստ համայնքների:

Յուրաքանչյուր բյուջետային տարում դոտացիաների ընդհանուր գումարների չափերը՝ ըստ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող, ինչպես նաև (ա) և (բ) գործոններով դոտացիաներ ստացող համայնքների, սահմանվում է տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով:

300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիաները հաշվարկվում են հավասարաչափ:

Յուրաքանչյուր բյուջետային տարում (ա) գործոնով ըստ առանձին համայնքների դոտացիայի հաշվարկման ժամանակ հիմք են ընդունվում գույքահարկով, ինչպես նաև հողի հարկով հարկվող հաշվառումը վարող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից ներկայացված՝ նախորդ բյուջետային տարվա հուլիսի 1-ի դրությամբ տվյալների հիման վրա հաշվարկված համայնքների բյուջեների համապատասխան ցուցանիշները:

(ա) գործոնով դոտացիա է նախատեսվում բոլոր այն համայնքների (բացառությամբ 300 -ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների) բյուջեներին, որոնց բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի և գույքահարկի գծով եկամտի մակարդակը ցածր է հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի, գույքահարկի և (ա) գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիաների ընդհանուր գումարի գծով միջին եկամտի սահմանային մակարդակից: Այդ սկզբունքով առանձին համայնքին նախատեսվող դոտացիայի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U = (U - \xi) \times \text{Բ} \times \text{Գ}$$

որտեղ՝

U-ն՝ (ա) գործոնով տվյալ համայնքին նախատեսվող դոտացիայի գումարն է.

U-ն՝ հանրապետության (բացառությամբ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների) բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի, գույքահարկի և (ա) գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիաների ընդհանուր գումարի գծով միջին եկամտի սահմանային մակարդակն է, որն իր հերթին որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U = [\text{Գ} + \sum (S + \text{Պ})] / (\sum \text{Բ})$$

որտեղ՝

Գ-ն՝ (ա) գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիաների ընդհանուր գումարն է.

S-ն՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա դոտացիայի հաշվարկներում կիրառվող տվյալ համայնքի (որը չի պատկանում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների թվին) բյուջեի հողի հարկի հաշվարկային ցուցանիշն է.

Պ-ն՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա դոտացիայի հաշվարկներում կիրառվող տվյալ համայնքի (որը չի պատկանում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների թվին) բյուջեի գույքահարկի հաշվարկային ցուցանիշն է.

Բ-ն՝ տվյալ համայնքի (որը չի պատկանում 300-ից ավել բնակիչ ունեցող համայնքների թվին) բնակչության թիվն է.

Հ-ն՝ տվյալ համայնքի (որը չի պատկանում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների թվին) բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի և գույքահարկի գծով եկամտի մակարդակն է, որը ցածր է հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի, գույքահարկի և (ա) գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիաների ընդհանուր գումարի գծով միջին եկամտի սահմանային մակարդակից և իր հերթին որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\zeta = (S + \mathcal{M}) / \mathcal{P}$$

Գ-ն՝ միջին կարգավորիչ գործակիցն է, որն իր հերթին որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{G} = \mathcal{G} / \sum [(U - \zeta) \times \mathcal{P}]$$

(բ) գործոնով դոտացիա է նախատեսվում բոլոր համայնքների (բացառությամբ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների) բյուջեներին՝ տվյալ համայնքի բնակչության թիվը բազմապատկելով մեկ շնչին ընկնող դոտացիայի մեծությամբ: Վերջինս հաշվարկվում է (բ) գործոնով նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարը հարաբերելով հանրապետության (բացառությամբ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների) բնակչության ընդհանուր թվին:

Դոտացիաների գումարները յուրաքանչյուր համայնքի հատկացվում են ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան գանձապետական ստորաբաժանումներում յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշիվների միջոցով՝ ըստ ամսական կամ եռամսյակային հատկացման ժամանակացույցի:

Երկրորդը՝ սուբվենցիան, իրենից ներկայացնում է պետական բյուջեից համայնքների ընթացիկ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային անհատույց հատկացումներ, որոնք ՏԻՄ-երի կողմից ըստ նպատակի չիրացվելու դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

Ինչ վերաբերում է սուբվենցիաներին, ապա ամեն տարի ՀՀ կառավարությունը որոշում է դրանց տրամադրման չափանիշները և նախատեսված միջոցների բաշխումը՝ քննության առնելով համայնքների կողմից սուբվենցիա ստանալու նպատակով ներկայացված ներդրումային ծրագրերը (հայտերը): Այս հատկացումների՝ դոտացիաների և սուբվենցիաների սահմաններում ՀՀ կառավարությունը պատասխանատվություն է կրում համայնքների առջև, իրենց հերթին համայնքները ևս պատասխանատվություն են կրում ՀՀ կառավարության առջև՝ ստացած հատկացումների արդյունավետ օգտագործման համար:


2000-2011թթ. ընկած ժամանակահատվածում համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները աճել են շուրջ 5 անգամ (աղյուսակ 1): 2000 թվականի 6 մլրդի փոխարեն 2011 թվականին «Պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված է 32.4 մլրդ ՀՀ դրամ: 2004 թվականից սկսած համայնքներին տրամադրվում են նպատակային դրամաշնորհներ, սուբվենցիաներ: Ընթացիկ սուբվենցիաները 2011 թվականին «Պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված է 6.2 մլրդ դրամ: 2011 թվականի «Պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված ամբողջ նպատակային սուբվենցիան տրամադրվում է Երևան քաղաքին: 2009 թվականին համայնքներին տրամադրվել են նաև կապիտալ սուբվենցիաներ:

**Համայնքներին տրամադրվող դոտացիաները և սուբվենցիաները
2000-2011 թթ. (մլն դրամ)¹**

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 |
|--|------|------|------|------|-------|--------|--------|--------|--------|-------|-------|--------|
| Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ | 6,09 | 7,64 | 7,64 | 9,15 | 10,69 | 13,75 | 14,58 | 17,59 | 20,98 | 27,49 | 32,42 | 32,42 |
| Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին | 0 | 0 | 0 | 0,00 | 0,13 | 338,29 | 349,55 | 879,95 | 495,48 | 78,38 | 5,37 | 6,22 |
| Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1,29 | 0 | 136,48 |

Գծապատկեր 1

**Համայնքներին տրամադրվող դոտացիաների և սուբվենցիաների
համեմատական վերլուծությունը**



Գծապատկեր 1-ից երևում է, որ վերջին տարիների ընթացքում սուբվենցիաների կտրուկ աճ է նկատվել:

ՀՀ-ում կա շուրջ 914 համայնք: Աղյուսակ 2-ի տվյալները ներկայացնում են մարզային կտրվածքով ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխումը:

¹ «Պետական բյուջեի մասին» 2000-2011 թթ. օրենքները:


2011թ. ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը ըստ մարզերի համայնքների հանրագումարի

| | Ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը (մլն դրամ) | Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ | Համայնքների թիվը |
|-------------------|---|--------------------------------|------------------|
| Երևան քաղաք | 8,969.4 | 27.6 | |
| Արագածոտնի մարզ | 1,554.5 | 4.8 | 114 |
| Արարատի մարզ | 2,927.4 | 9.0 | 97 |
| Արմավիրի մարզ | 2,912.1 | 9.0 | 97 |
| Գեղարքունիքի մարզ | 2,886.3 | 8.9 | 92 |
| Լոռու մարզ | 3,081.9 | 9.5 | 113 |
| Կոտայքի մարզ | 2,855.5 | 8.8 | 67 |
| Շիրակի մարզ | 3,294.0 | 10.1 | 119 |
| Սյունիքի մարզ | 1,863.7 | 5.7 | 109 |
| Վայոց Ձորի մարզ | 664.7 | 2.0 | 44 |
| Տավուշի մարզ | 1,478.6 | 4.6 | 62 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 32,488.1 | 100.0 | 914 |

Այդ դոտացիաների 27.6%-ը բաժին է ընկնում Երևանին, 10.1%-ը Շիրակի մարզի համայնքներին (գծապատկեր 2):

Գծապատկեր 2

2011թ. ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարի բաշխումը ըստ մարզերի համայնքների



Աղյուսակ 3-ի տվյալների հիման վրա կատարված վերլուծությունը ցույց է տալիս պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող

դոտացիաների տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում և տրվում է համեմատական վերլուծություն այլ ծախսերի հետ:

Աղյուսակ 3

Պետական բյուջեի ծախսերի և ՀՆԱ-ի ցուցանիշների դինամիկան 2008-2011թթ.


| | 2008 | 2009 | 2010 | 2011 |
|--|--------|--------|--------|--------|
| Առողջապահություն | 54.5 | 66.1 | 55.2 | 62.5 |
| Կրթություն | 103.7 | 126.9 | 99.9 | 108.5 |
| Սոցիալական պաշտպանություն | 219.2 | 252.5 | 244.4 | 272.6 |
| Պաշտպանություն | 125.4 | 149.6 | 135.7 | 140.6 |
| Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ | 21.00 | 27.50 | 32.40 | 32.40 |
| Ընդհանուր ծախսեր | 822.1 | 945.4 | 935.5 | 998.6 |
| ՀՆԱ | 3646.1 | 3102.8 | 3214.6 | 3763.5 |

Գիտարկենք համայնքներին տրամադրվող դոտացիաների կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի կշռում, որը կազմում է 3%, իսկ, օրինակ, առողջապահության ծախսերը՝ 6% (գծապատկեր 3-4):


Գիտարկվել է նաև ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի տոկոսը (գծապատկեր 5), ըստ որի դոտացիաները կազմել են ՀՆԱ-ի 0.9 տոկոսը:

Գծապատկեր 3


Պետական բյուջեի ծախսերի դինամիկան 2008-2011թթ.



Պետական բյուջեի ծախսերի առանձին տեսակների կշիռը ընդհանուրի մեջ



Պետական բյուջեի ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %



Ընդհանուր առմամբ, կատարված ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայկական համայնքները շարունակում են ֆինանսապես կախված մնալ կառավարությունից, քանի որ նրանց 90%-ը դոտացիա է ստանում: Դճնաժամի պայմաններում հանրապետության համայնքներում 2009-2010թթ. արձանագրվել է սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների աճ: Ընդ որում, կառավարությունը համայնքներին զարգացման ծրագրերի համար գումար տրամադրելիս հիմնական չափանիշ պետք է ընտրի ոչ թե համայնքի կարիքները կամ համայնքի լավ դեկավարումը, այլ որ՝ ընտրություններում համայնքապետի ունեցած դերակատարությունն ու գործադրած ջանքերը՝ հոգուտ իշխող վարչակազմի, ինչպես նաև՝ մարզպետի երաշխավորությունը, որն, իհարկե, հիմնված է նրա անձնական համակրանքի վրա:

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

*ՆԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՆԳԱԱ Մ. Զոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

**ԲԵԼԱՌՈՒՄԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Բելառուսի հարկային համակարգը

Ըստ Համաշխարհային բանկի մեթոդոլոգիայի 2007թ. Բելառուսը հարկերի վճարման հեշտության առումով գրավում է վերջին տեղը աշխարհում: Բելառուսի հարկային համակարգը աչքի է ընկնում իր բարդությամբ և անկայունությամբ: Հարկային օրենսդրությունը հակասում է մի շարք նորմատիվ իրավական ակտերի և ֆինանսների նախարարության կողմից ընդունված որոշումներին: Վերջին 3 տարիներին Բելառուսում չեղյալ են համարվել մոտ 12 հարկային վճարներ, ևս 5-ը՝ 2008 թվականից:

2010 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Բելորուսի Հարկային օրենսգրքի հատուկ մասը: Հարկային օրենսգիրքը ներառել է մի շարք հարկային օրենքներ, որոնք վերաբերում են անհատական հարկերին և հավաքագրվում են Բելառուսում: 2010 թվականի «Բյուջեի մասին» օրենքը չի պարունակում հարկմանը վերաբերող շատ կանոններ: Նմանապես էլ շատ հարկային կանոններ կանոնակարգվում են երկրորդական կարգավորիչներով (կառավարության որոշումներ), որոնցում ավելի կարճ ժամանակահատվածում կարելի է փոփոխություններ կատարել: Հարկային օրենսգրքի ընդհանուր մասը, որը ուժի մեջ էր մտել 2004 թվականից, նույնպես փոփոխության է ենթարկվել:

Հարկային օրենսգրքի հատուկ մասը ներառում է տարբեր մասեր՝ տարանջատելով առանձին հարկերը: Այն նույնպես պարունակում է հարկային տոկոսադրույքների սանդղակներ՝ ակցիզային հարկի, հողի հարկի, թույլատվության համար վճարներ, շրջակա միջավայրին վերաբերող հարկ, բնական ռեսուրսների օգտագործման հարկ և բազմաթիվ այլ պարտավորություններ: Հարկային օրենսգրքի հատուկ մասում տեղ են գտել դրույթներ, որոնք փոփոխել են նախկինում գործող օրենքների որոշ դրույթներ.

Շահութահարկ

- բոլոր ծախսերը, որոնք բխում են բիզնեսի նպատակներից և արտացոլվում են հարկ վճարողների հաշվետվություններում, նվազեցվում են համախառն եկամտից, քանի դեռ դրանք ներառված չեն հարկային օրենսգրքի չնվազեցվող ծախսերի ցուցակում:
- օտարերկրյա կազմակերպություններից ստացված շահաբաժիններից և մասնաբաժինների վաճառքից ստացված համախառն եկամուտները Բելառուսի կազմակերպությունների համար համարվում են ոչ գործընթացային եկամուտներ և նվազեցվում են 12%-ով:
- ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին վճարվող շահաբաժինները ենթակա են աղբյուրի մոտ հարկման 12%-ով:

Հարկ վճարողները կարող են հայտարարագրել իրենց կողմից վճարված հարկերը՝ եռամսյակային կտրվածքով:

Օտարերկրյա իրավաբանական անձանց եկամտահարկի հարկումը.

Համախառն եկամուտը, որը ստացվում է արժեթղթերի վաճառքից Բելառուսի տարածաշրջանում ենթակա է աղբյուրի մոտ հարկման 15%-ով (նախկինում 24%): Այնուամենայնիվ, մասնաբաժինների վաճառքից ստացված շահույթը կամ ռեզիդենտ կազմակերպությունների օգուտները ենթակա են 12%-ով հարկման:

ԱԱՀ

ԱԱՀ-ի տոկոսադրույքը աճել է 18%-ից 20%-ի:

ԱԱՀ-ի վերադարձի ժամանակաշրջանը, ինչպես նաև մյուս հարկատեսակներինը կրճատվել է 10 օրվանից 2 կամ 5 օրվա՝ համապատասխան կանոնակարգի: Հարկ վճարողները, որոնց եկամուտները չեն գերազանցում 3,815 BYR մլն. կարող են ընտրել հայտարարագրման ամսական կամ եռամսյակային ռեժիմը:

Անհատական եկամտահարկ

- Նվիրատվությունը ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև 17.5 մլն. BYR ազատված են հարկերից, անհատ ձեռնարկատերերի կողմից ստացված շահաբաժինները հարկվում են 12% տոկոսադրույքով (նախկինում 15%),
- Տրանսպորտային միջոցների վաճառքը, եթե այն կշռում է 3,500 կամ նախատեսված է 8 ուղևորների համար, ենթակա է հարկման:

Այլ հարկատեսակներ

- Շրջանառությունից հարկը, տրանսպորտային միջոցների օգտագործման հարկը, մանրածախ վաճառքից հարկը, ավտոմեքենաների կայանման վճարները չեղյալ են համարվել,
- Շրջակա միջավայրի համար նախատեսված հարկը բաժանվել է երկու մասի՝ շրջակայքի և բնական ռեսուրսների շահագործման համար հարկերի,
- շուն պահող սեփականատերերի համար սահմանվել նոր հարկատեսակ, որը սահմանվում է ըստ վզակոթի բարձրության / 3 ամսական և բարձր/

| | |
|-------------|-----------|
| մինչև 40 սմ | 0,2 տոկոս |
| 40-70 սմ | 0,3 տոկոս |
| 70 և ավելի | 0,5 տոկոս |

Փորձենք վերագրյալը ներկայացնել և վերլուծել աղյուսակներ 1-2-ում:

Աղյուսակ 1

Բելառուսի և ՀՀ հարկային համակարգերի համեմատական վերլուծություն

ԱԱՀ

| | <i>Բելառուս</i> | <i>Հայաստան</i> |
|-----------------------|---|--|
| <i>Հարկ վճարողներ</i> | ԱԱՀ վճարող են համարվում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, որոնց եռամսյակային շրջանառությունը գերազանցում է 40.000 եվրոն: | ԱԱՀ վճարող են համարվում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, ում տարեկան հարկվող շրջանառությունը գերազանցում է 58.35 միլիոն դրամը: |
| <i>Դրույքաչափ</i> | 0%, 10%, 20%, 24%, 0.5% | 20%, 0% |
| | Բելառուսիայում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառվում է ուղեկցման, բեռնման, բեռնաթափման և նմանատիպ այլ աշխատանք- | ՀՀ-ում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառվում է հետևյալ գործարքների իրացման շրջանառության նկատ- |

| | <i>Բելառուս</i> | <i>Հայաստան</i> |
|-----------------|--|---|
| | <p>ների /ծառայությունների/, որոնք անմիջակա- նորեն կապված են ապրանքների իրացման հետ՝ դեպքում, տարանցիկ փոխանցումների դեպքում, տրանսպորտային միջոցների վերա- նորոգման դեպքում, երբ դրանք այդ նպատա- կով տեղափոխվում են Բելառուսից Ռուսաս- տան կամ հակառակը:</p> <p>10% դրույքաչափ կիրառվում է պարենային և մանկական ապրանքների ներմուծման դեպ- քում, Բելառուսի տարածքում արտադրված այնպիսի արտադրանքների իրացման ժամա- նակ, որոնք վերաբերում են բուսաբուծությանը, ձկնաբուծությանը, մեղվաբուծության ու անաս- նաբուծությանը:</p> <p>0,5% Ռուսաստանի Դաշնությունից արտա- դրական կարիքների համար ներմուծվող մշակ- ված և չմշակված բոլոր տեսակի ադամանդ- ների և քանկարժեք քարերի դեպքում:</p> | <p>մամբ՝</p> <ul style="list-style-type: none"> • Արտահանում ազատ շրջանառու- թյան համար և մի քանի այլ մաք- սային ռեժիմներով փոխադրվող ապրանքների հարկվող շրջանա- ռության նկատմամբ, • Միջազգային երթուղիներով փո- խադրումներ իրականացնող փո- խադրամիջոցների սպասարկման, նորոգման, ինչպես նաև փոխա- դրվող ուղևորների, ուղեբեռների, և փոխադրման ընթացքում ուղևոր- ներին մատուցվող ծառայություն- ների հարկվող շրջանառության համար և այլն: |
| | 24% դրույքաչափ կիրառվում է Բելառուսում սպիտակ շաքարի իրացման ներմուծման դեպքում: | |
| | Մնացած ապրանքների դեպքում 20%: | |
| Արտոնություններ | <ol style="list-style-type: none"> 1. ԱԱՀ-ից ազատվում են այնպիսի ապրանք- ների արտահանումը, ինչպիսիք են դեղա- միջոցներ, դեղագործական սարքավորում- ներ, պարագաներ հաշմանդամների համար և այլն: 2. Բելառուսի նախագահի կողմից հաստատ- ված այգեգործական օբյեկտների կառուց- ման և վերանորոգման շրջանառությունը, 3. լոմբարդների կողմից ծառայությունների մատուցումը՝ կապված գույքի գրավի դի- մաց ֆիզիկական անձանց կարճաժամկետ փոխառությունների տրամադրման հետ, 4. բնակչությանը վարսահարդարական, բաղ- նիքի, լվացքի և քիմմաքրման, ժամացույց- ների վերանորոգման, հագուստի և կոշիկ- դեմի արտադրության և նորոգման, կենցա- ղային սարքերի տեխնիկական սպասարկ- ման և վերանորոգման, անձնական օգտա- գործման ապրանքների և կենցաղային ապրանքների վերանորոգման ծառայու- թյունների մատուցման շրջանառությունը: | <p>ԱԱՀ-ից ազատվում են՝ ապահովա- գրությունը, բանկային գործը և այլ ֆինանսական ծառայությունները, փոս- տային ծառայությունները, կրթական ծառայությունների մեծ մասը, առող- ջապահության ծառայությունները, կրոնական ծառայությունները: Գիտական և ուսումնական հրատա- րակությունների իրացումը, ՀՀ կառավարության կողմից սահ- մանված ցանկում նշված քանկար- ժեք և կիսաքանկարժեք քարերի իրա- ցումը և այլն:</p> |
| Հարկ վճարողներ | Հարկ վճարողներ են համարվում տարբեր կազմակերպությունները և ընկերությունները: Ռեզիդենտները հարկ են վճարում ամբողջ աշխարհում ստացած եկամտից, իսկ ոչ ռե- զիդենտները՝ միայն Բելառուսի տարածքում ստացած եկամտից: | Նույնն է: |
| Դրույքաչափեր | Դրույքաչափը կազմում է 24%: Այն կազմակերպությունները, որոնք իրակա- նացնում են լազերաօպտիկական տեխնիկայի արտադրություն, և այս տեխնիկայի տեսակա- րար կշիռը ամբողջ արտադրանքի մեջ ոչ պակաս է, քան 50 տոկոսը, շահութահարկ են վճարում 10 տոկոս դրույքաչափով: Այս դրույ- քաչափի կիրառման համար հիմք է հանդիսա- նում Բելառուսի գիտության և տեխնոլոգիայի պետական կոմիտեի կողմից որոշումը, որի | Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով: |

| | <i>Բեղառու</i> | <i>Հայաստան</i> |
|-----------------|--|---|
| | <p>համաձայն էլ արտադրանքը վերագրվում է լազերատեխնիկական տեսակին:</p> <p>5 տոկոս դրույքաչափով շահութահարկ են վճարում օրենսդրությանը համաձայն Բեղառուի պետական համալսարանի կողմից ստեղծված գիտատեխնոլոգիական ասոցիացիաները ինֆորմացիոն տեխնոլոգիաների իրացումից ստացված հասույթի և դրանց մշակման ծառայությունների համար</p> | |
| | <p>Հարկվող շահույթը որոշվում է համախառն եկամտից հանելով ծախսերը, իսկ շահաբաժինների դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով՝</p> $HB = K \times (DH - DP),$ <p>որտեղ</p> <p>K-վճարողին հասանելիք շահաբաժինների գումարի հարաբերակցությունը որպես շահաբաժին բաշխված շահույթի ամբողջ գումարին, DH-որպես շահաբաժին բաշխված շահույթի ամբողջ գումար,</p> <p>DP-բեղառուական կազմակերպության կողմից ստացված շահաբաժին, եթե շահաբաժինների այս գումարը նախկինում հաշվի չի առնվել DP-ի կազմում հարկային բազայի որոշման ժամանակ և ստացվել է 2009թ. հունվարի 1-ից ոչ շուտ: Ընդ որում արտարժույթով ստացված շահաբաժինը վերահաշվարկվում է բեղառուական ռուբլիով համաձայն պաշտոնական փոխարժեքի՝ սահմանված Բեղառուի Ազգային բանկի կողմից դրանց ստացման ամսաթվին:</p> | <p>Հարկվող շահույթը որոշվում է համախառն եկամտից հանելով ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ:</p> |
| Արտոնություններ | <p>Քրեական համակարգի ուղղիչ հաստատությունների և բուժ - պրոֆիլակտիկ հաստատությունների շահույթը:</p> <p>Այն կազմակերպությունների շահույթը, որոնք օգտագործում են հաշմանդամների աշխատուժը, եթե վերջիններս կազմում են հաշվետու տարվա աշխատողների միջին ցուցակային թվաքանակի 50 տոկոսից ավելին, բացառությամբ այն շահույթի, որը ստացվել է առևտրային և միջնորդական գործունեությունից: Բուսաբուծական (բացի ծաղիկներից, դեկորատիվ բույսերից), անասնաբուծական, ձկնաբուծության և մեղվաբուծական կազմակերպությունների շահույթը, որը ստացվել է իրենց կողմից արտադրածի իրացումից:</p> <p>Կազմակերպությունների շահույթը, որը ստացվել է մանկական սննդի արտադրությունից:</p> <p>Պետական սեփականության իրացումից ստացված շահույթը, որի իրացման ժամանակ ստացված միջոցները բաշխվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Ապահովագրական կազմակերպությունների կողմից կամավոր ապահովագրությունից/կյանքի ապահովագրություն/ ձևավորված պահուստային ֆոնդերի միջոցների ներդրումից ստացված շահույթը:</p> <p>Կազմակերպության շահույթը, որն ուղղված է հանրապետական շաբաթօրյակների (համաձայն օրենսդրության) իրականացմանը:</p> | <p>Արտոնությունները վերաբերում են՝</p> <ul style="list-style-type: none"> ● գյուղատնտեսական արտադրանքի իրացմանը, ● համահայկական բանկի կողմից շահութահարկի վճարմանը, ● ձեռագործ գորգերի իրացմանը, ● հասարակական, կրոնական և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող այլ կազմակերպություններին և ՀՀ քաղաքական կուսակցություններին: |

**Բելառուսի հարկային համակարգի թերությունների նկարագրությունը
և հարկային բարեփոխումները 2009թ.**

| Բելառուսի հարկային համակարգի թերությունները | Հարկային վարչարարության բարելավման և ծանրաբեռնվածության նվազեցման ուղղությամբ կարելի է նշել հետևյալ քայլերը, որոնք կատարվել են Բելառուսում 2009թ |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Հարկային օրենսդրության բարդություն, անկայունություն և հակասական բնույթ, 2. Հարկերի բարձր ծանրաբեռնվածության աստիճան, 3. Հարկային ծառայողների կողմից ինֆորմացիայի պակաս և առանձին դրույթների չիմացություն, 4. Էլեկտրոնային համակարգերի բացակայություն: | <ol style="list-style-type: none"> 1. Անշարժ գույքի հարկի և հողի հարկի միասնական վճարի կիրառում: 2. Տեղական հարկերի վերացում, ինչպիսին են ենթակառուցվածքի պահպանման և զարգացման վճարը և տրանսպորտային վճարը, որը կազմում էր հարկումից հետո կազմակերպության մոտ մնացած շահույթի 3 տոկոսը: 3. Տեղական հարկի միասնական դրույքի սահմանում մանրածախ առևտրից և ծառայությունների մատուցումից՝ 5 տոկոս: 4. Հանրապետական ֆոնդ վճարի վերացումը, որն ուղղված էր գյուղատնտեսական պարենային սպարանքների արտադրությանը և ագրարային գիտության աջակցմանը: 5. Մասնավոր կազմակերպությունների՝ առաջին հերթին ՓՄՁ-ների համար նորարարական ֆոնդերի հատկացումների վերացում: 6. Տոկոսադրույքների նվազեցում 8-10 տոկոսով: 7. Մի շարք հրահանգների և դրանց մեթոդների հեշտացում և այլն: |

Այսպիսով, ցանկացած հարկային համակարգ ու դրա առանձին հարկման գործիքներն ու լծակները գործնական կիրառության արդյունքում առաջացնում են թե առավելություններ, թե թերություններ: Իսկ դա նշանակում է, որ, ըստ էության, կատարյալ հարկային համակարգ գործնական հարթություններում պարզապես գոյություն չունի, ինչը վերջինիս նկատմամբ առաջացնում է հարկային բարեփոխումներ իրականացնելու մշտական պահանջ և անհրաժեշտություն:

ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Լոթսանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Լոթսանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

**ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ղազախստանի հարկային համակարգը կարգավորող հիմնական նորմատիվային ակտը համարվում է ՂՀ հարկային օրենսգիրքը: Հարկերի և այլ պարտադիր վճարների ժամանակի, դրույքաչափերով և կարգով հարկազանձումն ապահովում է ՂՀ ֆինանսների հարկային նախարարությունը կամ Հարկային կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտեն): Կոմիտեն ունի տարածքային մարմիններ առանձին վարչատարածքային բաժանումներին համապատասխան՝ շրջանային, մարզային, քաղաքային և հատուկ տնտեսական գոտիների կոմիտեներ:

Համաձայն ՂՀ հարկային օրենսդրության, սահմանվում են ընդհանուր և հատուկ հարկային ռեժիմներ:

ՂՀ-ում սահմանվում են հանրապետական և տեղական հարկեր:

Տեղական հարկերից են հողի հարկը, իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքահարկը, տրանսպորտային միջոցների հարկը, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գրանցման վճարը, աճուրդային վաճառքից գանձվող վճարը և այլն:

Փորձենք ներկայացնել և համեմատել ՀՀ և ՂՀ հարկատեսակները, որոնք ցույց են տրված աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1

ՀՀ և ՂՀ հարկատեսակների համեմատությունը

| Ղազախստան | Հայաստան |
|--|-----------------------|
| Կորպորատիվ եկամտահարկ | Շահութահարկ |
| Անհատական եկամտահարկ | Եկամտահարկ |
| Բնական ռեսուրսների օգտագործման հարկ | Բնապահպանական վճարներ |
| Տրանսպորտային միջոցների հարկ | Գույքահարկ |
| Սոցիալական հարկ | Սոցիալական հարկ |
| Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գույքի հարկ | Գույքահարկ |
| Ֆիզիկական անձանց գույքահարկ | |
| Հողի հարկ | Հողի հարկ |
| Ակցիզային հարկ | Ակցիզային հարկ |
| ԱԱՀ | ԱԱՀ |

Բյուջե վճարման ենթակա պարտադիր վճարներից են նաև պետական տուրքը և *կոնսուլյական վճարը*: Հարկերը և մյուս պարտադիր վճարները հաշվարկվում և բյուջե են

փոխանցվում ազգային արժույթով՝ տենգեով, ընդ որում, 1տենգե= 147 ԱՄՆ դոլար¹:

Հարկային արտոնությունների ներդրումների ոլորտում

Գազախստանի կառավարությանը տնտեսական քաղաքականության համատեքստում առանցքային հիմնահարցերից են համարվում հարկային և ներդրումային քաղաքականությունների փոխազդեցության գնահատումը՝ բարենպաստ ներդրումային միջավայր ձևավորելու համար: Վերջինիս նպատակն է տնտեսական ակտիվության ու նոր արդյունաբերության ճյուղերի ձևավորումն ու խթանումը: Այսպես, հարկային օրենսգրքի առանձին մասով՝ «Ներդրումային հարկային արտոնություններ», սահմանվում է առանձին հարկատեսակների գծով, մասնավորապես՝ կորպորատիվ եկամտահարկի, հողի հարկի, գույքահարկի, ներդրումների հարկային արտոնությունները:

Կորպորատիվ եկամտահարկի գծով արտոնության սահմանումը հարկ վճարողներին հնարավորություն է տալիս հարկային տարում տարեկան համախառն եկամտից նվազեցնելու շահագործման հանձնված ակտիվների արժեքի որոշակի մաս, ինչը պայմանավորված է հարկային արտոնության տրամադրման գործողության ժամկետից: Հարկ վճարողների համար արտոնությունները սահմանվում են պետական համապատասխան լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրի համաձայն, որի մեկ օրինակը՝ նոտարի կողմից հաստատված, ներկայացվում է հարկատուի գրանցման վայրի համապատասխան հարկային մարմին: Արտոնության գործողության ժամկետը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված է ակտիվներում ներդրումների ծավալից, սակայն չի կարող գերազանցել 5 տարին: Հատուկ ռեժիմով հարկվող անձանց նկատմամբ այս արտոնությունները չեն գործում:

Ավելացված արժեքի հարկ

Գազախստանում ԱԱՀ վճարողներ են հանդիսանում իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնց ապրանքների իրացումից եկամուտը գերազանցում է միջին ամսական հաշվարկային ցուցանիշի (ՄՀՑ) 10 000-ապատիկը²: 2003թ. մինչ օրս այդ ցուցանիշի միջին ամսական չափը կազմում է 972 տենգե:

Եթե հարկատուի շրջանառությունը նախորդ 12 ամիսների ընթացքում չի գերազանցում համապատասխան գումարի մեծությունը, հարկ վճարողը կարող է դիմել իր գրանցման վայրի հարկային մարմին՝ ԱԱՀ-ի հարկումից ազատվելու նպատակով: Այդ իրավունքից հարկ վճարողը կարող է օգտվել որպես ԱԱՀ-ի հարկատու գրանցվելուց առնվազն 2 տարի հետո: ԱԱՀ-ով հարկման օբյեկտ են հանդիսանում ապրանքների և ծառայությունների ներմուծումը և երկրի ներսում դրանց շրջանառությունը: Հարկի գանձումը շրջանառությունից իրականացվում է համապատասխան հարկային մարմինների, իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային մարմինների կողմից:

Որպես ԱԱՀ-ի վճարման ժամկետ հանդիսանում է օրացուցային ամիսը: Եթե վճարման ենթակա ԱԱՀ-ի միջին ամսական գումարը նախորդ եռամսյակի համար չի գերազանցել ՄՀՑ 1000-ապատիկը, որպես հարկման ժամկետ է համարվում եռամսյակը:

ԳՀ ներքին շուկայում գործարքների համար սահմանվում է ԱԱՀ-ի միասնական դրույքաչափ՝ 16 տոկոս: Արտահանման գործարքներ 0% դրույքաչափով են հարկվում, բացառությամբ՝ գունավոր և սև մետաղների ձուլվածքների արտահանումը և միջազգային փոխադրումները:

Ապրանքների արտահանումը հավաստող փաստաթղթերի ցանկը ԱԳՀ երկրների համար ավելի պարզեցված է:

¹ http://www.vedomosti.ru/finance/news/1220072/cb_kazahstana_otkazalsya_ot_valyutnogo_koridora.

² http://www.centralasia-biz.com/cabiz/kazakhstan/nalogy/nalogi_kz.htm#Индивидуальный_подходный_налог_.

Հարկային օրենսգրքով սահմանվում են ԱԱՀ-ի գծով արտոնությունները՝ *հարկից ազատում* հետևյալ դեպքերում.

- Ղազախստանի ազգային բանկի կողմից ապրանքների իրացման գործարքների նկատմամբ,
- պետական սեփականության մասնավորեցման գործարքների նկատմամբ,
- կանոնադրական կապիտալում ներդրումների գործարքների նկատմամբ,
- դեղամիջոցների ներմուծման գործարքների նկատմամբ,
- ազգային արժույթի, արտարժույթի և արժեթղթերի ներմուծման գործարքների նկատմամբ,
- Մշակույթի, գիտության և կրթության ոլորտում ծառայությունների և աշխատանքների մատուցման գործարքների նկատմամբ,
- փորձագիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման նկատմամբ:

Եկամտահարկ

Ղազախստանի Հանրապետությունում եկամտահարկը լինում է՝

1. կորպորատիվ եկամտահարկ,
2. անհատական եկամտահարկ:

Կորպորատիվ եկամտահարկ: Որպես կորպորատիվ եկամտահարկի սուբյեկտներ են հանդիսանում ՂՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք (բացառությամբ՝ ՂՀ Ազգային բանկի և պետական հաստատությունների) ու ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք իրենց գործունեությունը ՂՀ-ում իրականացնում են մշտական ներկայացուցչության միջոցով կամ էլ ՂՀ-ում եկամտի աղբյուր ունեցողները: Հարկվող օբյեկտը որոշվում է տարեկան համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությամբ: Եկամտահարկի դրույքաչափը սահմանվում է հարկվող եկամտի նկատմամբ 30% հարկային դրույքաչափով, ընդ որում, կիրառվում են մաս հետևյալ դրույքաչափերը՝

10% - եթե հարկատուի համար որպես արտադրական հիմնական միջոց հանդիսանում է հողը,

15% - եկամտի ստացման աղբյուրի մոտ հարկման դեպքում, բացառությամբ՝ ՂՀ ում եկամտի աղբյուր ունեցողների

15% - մշտական ներկայացուցչության միջոցով ՂՀ-ում եկամուտ ստացող ոչ ռեզիդենտները:

ՂՀ-ում եկամտի աղբյուր ունեցող ոչ ռեզիդենտների *հարկումը*, որոնք չունեն մշտական ներկայացուցչություն, իրականացվում է հետևյալ սանդղակով.

5% - ապահովագրական հատուցումները, ստացված ռիսկերի վերապահովագրումից և միջազգային փոխադրումների իրականացումից եկամուտներ

10% - ապահովագրական հատուցումներ, ռիսկերի ապահովագրումից

15% - շահաբաժիններ, մասնակցությունից փայամասեր:

Անձնական եկամտահարկ: Անձնական եկամտահարկի վճարողներ են հանդիսանում ֆիզիկական անձինք, որոնք տնօրինում են՝

1. եկամտի ստացման աղբյուրի մոտ հարկվող եկամուտներին,

2. եկամտի ստացման աղբյուրի մոտ չհարկվող եկամուտներին:

Ֆիզիկական անձը համարվում է ՂՀ-ում մշտական բնակվող, եթե նախորդ 12 ամիսների ընթացքում գտնվել է Ղազախստանում առնվազն 183 օրացուցային օր

Անճնական եկամտահարկի դրույքաչափն ու շեմային գործակիցները

| | |
|---|--|
| Մինչև տարեկան հաշվարկային ցուցանիշի 15-պատիկը | Հարկվող գումարի 5% |
| Տարեկան հաշվարկային ցուցանիշի 15-40-պատիկի չափով | Տարեկան հաշվարկային ցուցանիշի 15-պատիկի համար հարկի գումար + գերազանցող մասի 10% |
| Տարեկան հաշվարկային ցուցանիշի 40-600-պատիկի չափով | Տարեկան հաշվարկային ցուցանիշի 40-պատիկի համար հարկի գումար + գերազանցող մասի 20% |
| 600-պատիկ և ավելի | Տարեկան հաշվարկային ցուցանիշի 600-պատիկի համար հարկի գումար+գերազանցող մասի 30% |

Հատուկ հարկային ռեժիմներ

ՂՀ-ում կիրառվող հատուկ հարկային ռեժիմները փոքր բիզնեսի համար սահմանում են սոցիալական հարկի և անհատական ու կորպորատիվ եկամտահարկի հաշվարկման և վճարման պարզեցված կարգեր:

Հարկային հատուկ ռեժիմները չեն տարածվում գործունեության հետևյալ ձևերի վրա.

- ենթասկզբիցային ապրանքների արտադրության դեպքում,
- խորհրդատվական, ֆինանսական և հաշվապահական ծառայությունների մատուցման դեպքում,
- նավթամթերքների իրացման դեպքում,
- բժշկական, դեղագործական և նման այլ ծառայությունների մատուցման դեպքում:

Փոքր ձեռնարկատիրության սուբյեկտները ինքնուրույն են ընտրում հարկային հատուկ ռեժիմների ներքոնշյալ տարբերակներից որևէ մեկը:

Միանգամյա թերթիկի հիման վրա

Եթե ֆիզիկական անձի գործունեությունը կրում է պարբերական բնույթ (տարվա մեջ 90 օրից ոչ ավել), ապա նրանք կարող են կիրառել միանգամյա թերթիկի վրա հիմնված հարկային ռեժիմ: Այդ թվում նման ֆիզիկական անձինք որպես անհատ ձեռնարկատեր չեն գրանցվում: Այս դեպքում հարկատուների պարտականությունը հանդիսանում է նախքան գործունեություն իրականացնելը բյուջե վճարել միանգամյա թերթիկի արժեքը: Նման հարկման ռեժիմով հարկվող անձանց համար ՀՂՄ-ների առկայությունը պարտադիր չէ:

Պատենտի հիման վրա գանձվող հարկեր և պարտադիր վճարներ

Անհատ ձեռնարկատերերի համար, որոնց բիզնեսը կրում է կայուն բնույթ, նախատեսված է բյուջեի հետ պատենտային հաշվարկների իրականացում: Այս իրավունքը ստանալու համար անձը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝ չօգտագործի վարձու աշխատողների աշխատանք, տարեկան եկամուտը չպետք է գերազանցի 1.5 մլն տե՛նգ: Հարկման այս ռեժիմը հարմար է ոչ մեծ շրջանառություն ունեցող հարկատուների համար: Պատենտի արժեքը հաշվարկվում է հարկատուի կողմից ինքնուրույն՝ հայտարարագրված եկամտի 3% չափով: Պատենտի արժեքը բյուջե է վճարվում հավասարաչափ մեծություններով՝ անհատական եկամտահարկի և սոցիալական հարկի տեսքով:

Պարզեցված հայտարարագրման հիման վրա

Պարզեցված հայտարարագրման վրա հիմնված հարկային հատուկ ռեժիմ կիրառվում է փոքր բիզնեսի սուբյեկտների համար, որոնք ներկայացված են աղյուսակ 3-ում՝

Պարզեցված հայտարարագրման հաշվառման մեխանիզմը

| Անհատ ձեռնարկատերեր | Իրավաբանական անձինք |
|--|--|
| <ul style="list-style-type: none"> աշխատողների թվաքանակը չի գերազանցում 15 հարկային ժամանակահատվածում եկամուտը չի գերազանցում 4500,0 հազ. տեղաբ. | <ul style="list-style-type: none"> աշխատողների թվաքանակը չի գերազանցում 25 հարկային ժամանակահատվածում եկամուտը չի գերազանցում 9000,0 հազ. տեղաբ. |

Եթե վարձու աշխատողների աշխատավարձը հաշվետու ժամանակաշրջանում գերազանցում է սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկը, ապա հաշվարկված հարկը նվազեցվում է 1,5%-ով, յուրաքանչյուր աշխատողի համար:

Բնական ռեսուրսների օգտագործման հարկում (կոնսեցիոն հարկեր).

Բնական ռեսուրսների օգտագործման հարկումը իր մեջ ներառում է հետևյալ վճարները.

- գերշահույթների հարկում՝ 0-30%, շահույթի նորմայից կախված,
- հատուկ վճարներ, մասնավորապես՝
 - բոնուսներ,
 - ռոյալթիներ,
 - ՂՀ մասնաբաժինը արտադրանքի մասով:

Սոցիալական հարկ

Սոցիալական վճարողներ են հանդիսանում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը: Հարկման օբյեկտ են հանդիսանում աշխատողներից տրամադրված եկամուտները: Հարկումը կատարվում է հետևյալ սանդղակով, որը ներկայացվել է աղյուսակ 4-ում՝

Սոցիալական հարկի հաշվառման մեխանիզմը

| Հարկատուներ | Հարկի դրույքաչափ |
|--|--|
| Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք | 21% |
| Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք օտարերկրյա մասնագետների համար | 11% |
| Անհատ ձեռնարկատերեր | Հաշվարկվող ամսական ցուցանիշի եռապատիկի չափով իր համար, և կրկնակի աշխատողների |
| Հատուկ կազմակերպություններ, որտեղ աշխատում են հաշմանդամներ | 6,5% |

Սոցիալական հարկի գումարը ենթակա է նվազեցման հղիության և ծննդաբերության, ժամանակավոր անաշխատունակության համար վճարված գումարների չափով:

Միջազգային հարկային համաձայնագրեր

Ներկայումս ՂՀ-ը ԱՊՀ երկրների հետ ունի կնքած միջպետական համաձայնագիր՝ ապրանքների ներմուծման և արտահանման համար անուղղակի հարկերի գանձման վերաբերյալ: Անուղղակի հարկերի գանձումը ըստ «նշանակման երկիր» սկզբունքի գործում է ԱՊՀ

երկրների հետ, որից բացառություն են կազմում միայն նավթը և բնական գազը, որոնց դեպքում հարկերի գանձումը կատարվում է «ծագման երկիր» սկզբունքով:

Ղազախստանի հարկային օրենսդրությամբ ռեզիդենտների հարկումը որոշակիորեն տարբերվում է ոչ ռեզիդենտների հարկումից: Իր հերթին ոչ ռեզիդենտների հարկման առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, թե ոչ ռեզիդենտներն ունենան արդյոք մշտական ներկայացուցչություն Ղազախստանում, թե միայն եկամտի աղբյուր են:

Մշտական ներկայացուցչություն ունեցող անձի համար հարկվող եկամուտը որոշվում է տվյալ ներկայացուցչի կողմից Ղազախստանում ստացված եկամուտների և այդ եկամուտների ստացման հետ կապված ծախսերի տարբերությամբ: Այնուհետև մաքուր եկամուտը (հարկվող եկամուտ - կորպորատիվ եկամտահարկ) հարկվում է ևս մեկ անգամ 15% տոկոսադրույքով: Ղազախստանում առանց մշտական ներկայացուցչության եկամուտ ստացող ոչ ռեզիդենտները հարկվում են 5%, 10%, 15% և 20% դրույքաչափով՝ կախված եկամտի տեսակից:

Այժմ փորձենք համեմատել և վերլուծել Ղազախստանի և Հայաստանի հարկային համակարգերը.

Ամփոփելով մեր կողմի ներկայացված Ղազախստանի հարկային հարաբերությունները, հարկատեսակներն ու հարկային դրույքաչափերը, հարկային գործիքներն ու լծակները, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ բազմաթիվ հարկատեսակների համար գոյություն ունեն ընդհանրություններ, մասնավորապես՝ անուղղակի հարկատեսակների (ԱԱՀ և ակցիզային հարկերի գծով) և ուղղակի հարկատեսակների (եկամտահարկի ու սոցհարկի) համար: Այդ հարկատեսակների համար հարկման օբյեկտը և հարկ վճարողները նույնն են երկու երկրներում էլ, տարբերությունը, թերևս, դրույքաչափերի մեջ է (աղյուսակ 5):

Այսպես, Հայաստանի հարկային համակարգում իրավաբանական անձանց շահույթի հարկումը կատարվում է շահութահարկով, որի փոխարեն Ղազախստանում կիրառվում է կորպորատիվ եկամտահարկը: Ղազախստանում բավական մեծ ուշադրություն է դարձվում բնական ռեսուրսների օգտագործման վրա՝ կիրառելով տարատեսակ հարկեր ու վճարներ այդ ոլորտում: Որպես առանձին հարկատեսակ հանդես է գալիս տրանսպորտային միջոցների հարկը:

Ղազախստանում, ինչպես և Հայաստանում կիրառվում են հարկման ընդհանուր և հատուկ ռեժիմներ: Հայաստանում հատուկ ռեժիմը ենթադրում է հաստատագրված վճարների կիրառում, իսկ Ղազախստանում դա միանգամյա թերթիկի վրա հիմնված հարկ, պատենտի վրա հիմնված, պարզեցված հայտարարագրման վրա հիմնված հարկերն են՝ նախատեսված փոքր բիզնեսի հարկման համար: Կախված գործունեության տեսակներից, կիրառվում է այս հարկատեսակներից որևէ մեկը: Ինչպես և Հայաստանում, Ղազախստանում նույնպես հատուկ ռեժիմների կիրառումը ենթադրում է ընդհանուր ռեժիմով սահմանված արտոնությունների բացառում:

Ընդհանրացնելով մեր կողմից կատարված վերլուծության արդյունքները, գտնում ենք, որ Ղազախստանի հարկային համակարգի հիմնական առավելությունը հանդիսանում է պրոգրեսիվ հարկերի կիրառությունը, որը հարկերի ուղղահայաց արդարության սկզբունքի դրսևորումն է, օտարերկրյա ներդրումների խրախուսման նպատակով արտոնությունների տրամադրումը կորպորատիվ եկամտահարկի համար:

Փոքր բիզնեսի խրախուսման նպատակով հարկման հատուկ ռեժիմի կիրառումը, որը անհրաժեշտ է անցումային տնտեսություն ունեցող երկրների համար:

Ղազախստանի և Հայաստանի հանրապետությունների հարկային համակարգերի համեմատական վերլուծությունը

| Ղազախստան | | | | Հայաստան | | | |
|---|-----------------------|--|---------------|---|-----------------------|---------------------------------------|-----------|
| ԱԱՀ | | | | ԱԱՀ | | | |
| Հարկ. օբյեկտ | Հարկ. սուբ. | % | Հարկ. Շեմ | Հարկ. օբյեկտ | Հարկ. սուբ. | % | Հարկ. Շեմ |
| Ապրանքների և ծառ. շրջ. և ներմուծում | Ֆիզ. և իրավ. անձինք | 16 | 9,72մլն տենգե | Ապրանքների և ծառ. շրջ. և ներմուծում | Ֆիզ. և իրավ. անձինք | 20 | |
| Սոցիալական հարկ | | | | Սոցիալական հարկ | | | |
| Գործատուների կողմից աշխ. տրվող եկամուտներ | Գործատուներ և աշխ. | 6,5-21% | | Գործատուների կողմից աշխ. տրվող եկամուտներ | Գործատուներ և աշխ. | 15% | |
| Անձնական եկամտահարկ | | | | Եկամտահարկ | | | |
| Ֆիզ. անձ. եկամուտներ | Ռեզ. և ոչ ռեզ. անձինք | Պրոգրեսիվ, 5-30% | | Ֆիզ. անձ. եկամուտներ | Ռեզ. և ոչ ռեզ. անձինք | մինչև 80 000 - 10%, 80 000 գեր. - 20% | |
| Կորպորատիվ եկամտահարկ | | | | Շահութահարկ | | | |
| Ռեզ. և ոչ ռեզ. անձանց հարկվող շահույթ | Ռեզ. և ոչ ռեզ. անձինք | 30%, (առանձին դեպքերում գործ. ոլորտից կախված՝ 5-15%) | | Ռեզ. և ոչ ռեզ. անձանց հարկվող շահույթ | Ռեզ. և ոչ ռեզ. անձինք | 20% | |
| Հատուկ ռեժիմներ | | | | | | | |
| 1. Միանգամյա թերթիկի վրա հիմնված հարկ | | | | Հաստատագրված վճարներ | | | |
| 2. Պատենտի վրա հիմնված | | | | | | | |
| 3. Պարզեցված հայտարարագրում | | | | | | | |

ԼՈՂԻԹ ԵՎ ՓՐՈԲԻԹ ՍՔՈՐԻՆԳԱՅԻՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՀՀ-ՈՒՄ

Վերջին տարիներին հետխորհրդային երկրներում սկսել են լայնորեն կիրառել սնանկության կանխատեսման այն էկոնոմետրիկ մոդելները, որոնք հիմնված են ֆինանսական հաշվետվությունների վերլուծության վրա: Նման մոդելների տարածվածությունն ունի իր օբյեկտիվ և արդարացված պատճառները: Վարկային ռիսկի գնահատման և վարկառուի սնանկացման հավանականության կանխատեսման համար արևմտյան զարգացած երկրներում ավելի տարածված են կառուցվածքային այն մոդելները, որտեղ օգտագործվում են ընկերության բաժնետոմսերի շուկայական գինը և դրա տատանումը դիտարկվող ժամանակահատվածում (CreditMetrics, KMV's CreditPortfolioView, Moody's RiskCalc): Նախկին խորհրդային երկրների, այդ թվում նաև ՀՀ-ի ընկերություններից շատ քչերի բաժնետոմսերն են գնանշվում բորսաներում, և ակնհայտ է, որ նման մոտեցման համար անհրաժեշտ է ունենալ զարգացած արժեթղթերի շուկա: Հետևաբար ամենահասանելի ինֆորմացիան ֆինանսական հաշվետվություններն են, որոնց հիման վրա էլ կարելի է վարկարժանության մակարդակի գնահատականներ տալ: Ֆինանսական հաշվետվություններից մասնավորապես վերցվում են տարբեր ցուցանիշների հարաբերակցություններ, որոնց էկոնոմետրիկ ուսումնասիրության արդյունքում էլ հնարավոր է լինում տարբերակել սնանկացող և չսնանկացող ընկերությունները: Մոդելները, որոնց հիմքում ընկած են նման վերլուծություններ, անվանում են սքորինգային մոդելներ: Ամբողջ աշխարհում սքորինգային համակարգը լայն տարածում է գտել վարկատուների շրջանում, քանի որ հնարավորություն է տալիս նոր վարկեր տրամադրելիս որոշումներ կայացնել՝ հիմնվելով նախկինում տրամադրված համանման հատկանիշներ ունեցող վարկերի ցուցաբերած վարքագծի վրա: Սույն հոդվածում սքորինգային մոդելներից առավել մանրամասն կքննարկվեն այսպես կոչված լոգիթ և փրոբիթ մոդելների առանձնահատկությունները և տարբերությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառման հնարավորությունները:

1.1. Սնանկացման կանխատեսման մոդելներ

Ընդհանրապես սնանկացման կանխատեսման մոդելների ստեղծման փորձեր սկսել են անել դեռևս 1960-ական թվականների վերջերից և շարունակվում են մինչև օրս: Դրանով հիմնականում զբաղվել և զբաղվում են համալսարանական գիտնականներ, առևտրային բանկեր և աուդիտորական ընկերություններ: Սնանկացման կանխատեսման մոդելները ավելի շատ հայտնի են որպես ֆինանսական վիճակի չափման գործիքներ: Առանձնացվում են ֆինանսական վիճակի չափման զարգացման երեք փուլեր՝ միաչափ վերլուծություն, բազմաչափ վերլուծություն, լոգիթ և փրոբիթ վերլուծություն: Միաչափ վերլուծության դեպքում ենթադրվում է, որ սնանկացման կանխատեսման համար կարող է օգտագործվել մեկ փոփոխական (Sheppard, 1994, 9, Cook and Nilson 1998, William Beaver): Մասնավորապես Բիվերը իր աշխատանքում միաչափ դիսկրիմինատային վերլուծության օգնությամբ, 79 գույժ սնանկացող և չսնանկացող ընկերությունների տվյալների հիման վրա 30 ֆինանսական հարաբերակցություններից որպես լավագույն դիսկրիմինատոր առանձնացրել է զուտ եկամուտ/ակտիվներ, որը 90% դեպքում կանխատեսում է սնանկացումը: Սակայն միաչափ

վերլուծության թերությունն այն է, որ նրա օգնությամբ հնարավոր չէ սնանկացման ռիսկի գնահատական տալ: Որպես ֆինանսական վիճակի գնահատման զարգացման հաջորդ փուլ է համարվում բազմաչափ դիսկրիմինանտային վերլուծությունը (Multiple Discriminant analysis, MDA), որը առաջարկվել է Է. Ալտմանի կողմից (Edward Altman, 1968): Նա Altman's z-score կամ Zetta մոդելում վերցրել է 7 ֆինանսական հարաբերակցություններ, և կիրառելով 33 զույգ սնանկացող և չսնանկացող ընկերությունների տվյալները, ստացել է բավականին ճշգրիտ արդյունք (90% դեպքում մեկ տարի առաջ կանխատեսելով սնանկացումը): Սակայն Zetta մոդելը նույնպես ունի առանցքային թերություն. մոդելում ենթադրվում է, որ օգտագործվող ցուցանիշներն ունեն նորմալ բաշխում, հակառակ դեպքում մոդելը կարող է շատ մոտավոր արդյունք տալ (Sheppard, 1994): 1980 թվականին Օհլսոնը առաջարկում է լոգիթ և փրոբիթ մոդելները օգտագործել որպես սնանկության կանխատեսման գործիքներ: Մոդելներում կիրառելով 105 սնանկացած և 2058 չսնանկացած ընկերությունների տվյալներ՝ նա առաջինն էր, ով իր աշխատանքում օգտագործեց պատահական ընտրանք: Ավելին, լոգիթ մոդելների միջոցով ստացվում է սնանկացման հավանականության բավականին իրատեսական գնահատական, ինչը կարելի է օգտագործել կրեդիտային կամ ներդրումային ռիսկի ավելի արդյունավետ կառավարման մեջ: 1990-ական թվականներին արդեն բազմաչափ դիսկրիմինանտային վերլուծությունից (MDA) սկսեցին անցում կատարել լոգիթ և փրոբիթ մոդելներին (Stickney 1996, 510):

1.2. Լոգիթ և փրոբիթ մոդելների մեթոդաբանական հիմքը

Լոգիթ և փրոբիթ մոդելներին կարելի է հանգել հետևյալ մոտեցմամբ. վերցնենք ինդիկատոր փոփոխականը, որը գծայնորեն կախված է $(x_{i1}, x_{i2}, \dots, x_{ik})^T = X_i^T$ փոփոխականներից և $\varepsilon_i \sim N(0; \sigma^2)$ նորմալ բաշխված պատահական սխալից՝

$$y_i^* = X_i^T \beta + \varepsilon_i$$

Նաև վերցնենք y փոփոխականը, որն ընդունում է միայն 2 արժեք՝

$$y_i = \begin{cases} 1, & y_i^* > 0 \\ 0, & y_i^* < 0 \end{cases}$$

Օգտվելով վերոհիշյալ արտահայտություններից՝ պայմանական հավանականությունը, որ $y_i = 1$, կարող ենք գտնել հետևյալ ձևափոխություններով.

$$P(y_i = 1 | X_i^T) = P(X_i^T \beta + \varepsilon_i > 0 | X_i^T) = P(\varepsilon_i > -X_i^T \beta | X_i^T) = 1 - \Phi\left(-\frac{X_i^T \beta}{\sigma}\right) = \Phi\left(\frac{X_i^T \beta}{\sigma}\right) = p_i$$

$$P(y_i = 0 | x_i) = 1 - \Phi\left(\frac{X_i^T \beta}{\sigma}\right) = 1 - p_i$$

որտեղ $\Phi(x)$ -ը ստանդարտ նորմալ բաշխման ֆունկցիան է, այսինքն $\varepsilon_i \sim N(0; 1)$: Այն դեպքում, երբ սխալը ունի ստանդարտ նորմալ բաշխում, մենք գործ ունենք *փրոբիթ մոդելի* հետ, իսկ երբ սխալը ունի էքսպոնենցիալ բաշխում՝ *լոգիթ մոդելի* հետ:

$$p_i = P(y_i = 1 | X_i^T) = \Phi(X_i^T \beta) = \int_{-\infty}^{X_i^T \beta} F(z) dz \quad (\text{փրոբիթ մոդել})$$

$$p_i = P(y_i = 1 | X_i^T) = G(X_i^T \beta) = \frac{1}{1 + e^{-X_i^T \beta}} \quad (\text{լոգիթ մոդել})$$

Այսպիսով, լոգիթ և փրոբիթ մոդելներում տարբեր փոփոխականները համապատասխան գործակիցներով բազմապատկվելուց և գումարվելուց հետո ստացված մեծությունը էքսպոնենցիալ կամ ստանդարտ նորմալ բաշխման ֆունկցիայի միջոցով վերածվում է հավա-

նականության: Գործնականում այդ փոփոխականները կարող են ընդունել ցանկացած իրական արժեք, օրինակ սպառողական վարկերի դեպքում՝ սնանկացման հավանականությունը գնահատելիս որպես փոփոխականներ կարելի է վերցնել վարկառուի տարիքը, աշխատավարձի չափը, պատշաճ վարկային պատմությունը (ընդունում է 1 կամ 0 արժեք) և այլն, իսկ բիզնես վարկավորման դեպքում ընկերության ակտիվների լոգարիթմը (որպես ընկերության խոշորության ինդիկատոր), զուտ շահույթ (ակտիվներ, շրջանառու միջոցներ) կարճաժամկետ պարտավորություններ և այլն: Սակայն որպեսզի մոդելների կիրառումը լինի արդյունավետ, և ստացված հավանականության գնահատականը լինի իրատեսական, շատ կարևոր է, որ փոփոխականների գործակիցները պատշաճ կերպով գնահատվեն: Սովորաբար դրանք գնահատում են առավելագույն ճշմարտանմանության մեթոդով (Maximum Likelihood Method, MLM), որը կներկայացվի հաջորդիվ:

1.3. Լոգիթ և փրոբիթ մոդելների բացատրող փոփոխականների գնահատումը առավելագույն ճշմարտանմանության մեթոդով և 0-ական վարկածի ստուգումը

Առավելագույն ճշմարտանմանության մեթոդ տերմինը առաջին անգամ օգտագործվել է 1922 թվականին Ֆիշերի կողմից: Այն իրենից ներկայացնում է վիճակագրական մի գործիք, որի օգնությամբ գնահատվում են վիճակագրական մոդելի պարամետրերը՝ մաքսիմիզացնելով դիտարկումների համատեղ հավանականության խտության ֆունկցիան: Որպեսզի գնահատենք փրոբիթ և լոգիթ մոդելների բացատրող փոփոխականների $\beta = (\beta_1, \beta_2 \dots \beta_n)$ գործակիցները, նախ գտնենք համատեղ հավանականության խտության ֆունկցիան.

$$L_n = f(y_1, y_2, \dots, y_n | X_i^T) = f(y_1 | X_1^T) \times f(y_2 | X_2^T) \times \dots \times f(y_n | X_n^T) = \prod_{i=1}^n f(y_i | X_i^T) \\ = \prod_{i=1}^n F(X_i^T \beta)^{y_i} (1 - F(X_i^T \beta))^{1-y_i}$$

որտեղ $F(x)$ -ը փրոբիթ մոդելի դեպքում ստանդարտ նորմալ բաշխման ֆունկցիան է, իսկ լոգիթ մոդելի դեպքում՝ էքսպոնենցիալ բաշխման ֆունկցիան: Մաքսիմալացման խնդրի լուծման տեսանկյունից նպատակահարմար է վերցնել խտության ֆունկցիայի լոգարիթմը.

$$\ln(L_n) = \sum_{i=1}^n y_i \ln(F(X_i^T \beta)) + \sum_{i=1}^n (1 - y_i) \ln(1 - F(X_i^T \beta)) \rightarrow \max$$

Որպեսզի լուծենք մաքսիմալացման խնդիրը, $\ln(L_n)$ -ը ածանցենք ըստ β -ի և հավասարեցնենք 0-ի.

$$\frac{\partial \ln(L_n)}{\partial \beta} = \sum_{i=1}^n (y_i - F(X_i^T \beta)) X_i^T = 0 \quad (*)$$

Սակայն (*) հավասարման լուծման համար անհրաժեշտ է օգտվել թվային մեթոդներից, մասնավորապես առաջարկում ենք օգտվել Նյուտոնի մեթոդից¹:

Այսպիսով, լուծելով (*) հավասարումը՝ կստանանք գնահատված $\hat{\beta}$ գործակիցները, որոնց դեպքում համատեղ խտության ֆունկցիան ընդունում է առավելագույն արժեք:

Հաջորդ կարևոր հարցը բացատրող փոփոխականների գնահատված գործակիցների վերաբերյալ վարկածների ստուգումն է, որոնց օգնությամբ հնարավոր կլինի հասկանալ այս

¹ И.Ю Алибеков 2008, Численные Методы, стр. 54.

կան այն փոփոխականի ազդեցության նշանակալիությունը: Ըստ Կենտրոնական սահմանային թեորեմի՝ n -ի մեծ արժեքների դեպքում հետևյալ արտահայտությունն ունի նորմալ բաշխում.

$$\sqrt{n}(\tilde{\beta} - \beta_0) \sim N(0; \sigma_{\beta}^2) \Rightarrow \frac{\sqrt{n}(\tilde{\beta} - \beta_0)}{\sigma_{\beta}} \sim N(0; 1), \text{ որտեղ } \sigma_{\beta}^2\text{-ը } \tilde{\beta}\text{-ի դիսպերսիան է:}$$

Վերոհիշյալ փաստերը օգտագործելով՝ կարելի է ստուգել $\beta_0 = 0$ վարկածը ընդդեմ $\beta_0 \neq 0$ վարկածի, ինչը չափազանց կարևոր է, քանի որ այն ենթադրում է, որ $P(y_i = 1 | X_i^T)$ պայմանական հավանականությունը կախված չէ X_i^T բացատրող փոփոխականներից:

$\beta_0 = 0$ դեպքում ունենք $\hat{t}_{\beta} = \frac{\sqrt{n}(\tilde{\beta})}{\sigma_{\beta}} \sim N(0; 1)$, ապա վերցնելով 5%-անոց քվանտիլը՝ $x_{1-0,95} = 1,96$, 95% վստահության մակարդակի դեպքում կարող ենք գրել.


$$P(|\hat{t}_{\beta}| > 1,96) = 0,5$$

$$P(|\hat{t}_{\beta}| \leq 1,96) = 0,95$$

Հետևաբար, եթե $|\hat{t}_{\beta}| > 1,96$, ապա $\beta_0 = 0$ վարկածը մերժվում է ընդդեմ $\beta_0 \neq 0$ վարկածի, իսկ եթե $|\hat{t}_{\beta}| \leq 1,96$, ապա ընդունվում է $\beta_0 = 0$ վարկածը:

1.4. Լոգիթ և փրոբիթ մոդելների համեմատական վերլուծությունը և ՀՀ-ում կիրառելու կարևորությունը

Ներկայացված լոգիթ և փրոբիթ մոդելները, ինչպես արդեն նշվել էր, իրենցից ներկայացնում են սրորինգային մոդելներ, որոնք վարկային ռիսկի կառավարման բավականին հեշտ կիրառելի գործիքներ են: Առաջին հայացքից վերոհիշյալ երկու մոդելներից փրոբիթ մոդելը բավականին բարդ տեսք ունի, սակայն իրականում նրանք գեներացնում են գրեթե մոտ արդյունքներ, ինչու՞մ կարելի է համոզվել ստորև պատկերված համեմատական գրաֆիկների միջոցով:



Սակայն լոգիթ և փրոբիթ մոդելների հիմնական տարբերությունն այն է, որ փրոբիթ մոդելն ունի ավելի ծանր պոչեր, այսինքն՝ շատ ցածր և շատ բարձր սքորերի դեպքում սնանկացման հավանականությունը դանդաղ է փոփոխվում:

Այս երկու մոդելների նմանության մեջ կարելի է համոզվել նաև բացատրող փոփոխականների գործակիցների գնահատման արդյունքներից: Այդ նպատակով վերցնենք 14-ական փոփոխականներից կազմված 1052 դիտարկում, որոնցից 426-ի ինդիկատոր փոփոխականները ընդունում են 1 արժեք, իսկ 626-ինը՝ 0 արժեք (վերցված տվյալները պայմանական են): Այսպիսով՝ համատեղ հավանականության խտության ֆունկցիան կունենա հետևյալ տեսքը՝

$$L_n = f(y_1, y_2, \dots, y_n | X_i^T) = \prod_{i=1}^{1052} F(\beta_{i1}X_{i1} + \beta_{i2}X_{i2} + \dots + \beta_{i14}X_{i14})^{y_i} (1 - F(\beta_{i1}X_{i1} + \dots + \beta_{i14}X_{i14}))^{1-y_i}$$

Օգտվելով Statistica ծրագրային ապահովումից՝ հեշտությամբ կարելի է գնահատել լոգիթ և փրոբիթ մոդելների գործակիցները: Ստորև ներկայացված են գնահատման արդյունքները.

| Փոփոխական | Լոգիթ | | Փրոբիթ | |
|------------|--------------|--------------|--------------|--------------|
| | B | t-ի արժեք | β | t-ի արժեք |
| X1 | -1,01 | -1,87 | -0,67 | -1,07 |
| X2 | 3,17 | 4,33 | 2,87 | 2,86 |
| X3 | 2,69 | 3,35 | 1,93 | 2,15 |
| X4 | -22,9 | -1,46 | -30,4 | -2,56 |
| X5 | -1,26 | -2,2 | -2,76 | -2,59 |
| X6 | 0,38 | 0,53 | 0,14 | 0,32 |
| X7 | -0,1 | -2,98 | -0,06 | -3,63 |
| X8 | 17,9 | 1,15 | 7,83 | 0,64 |
| X9 | 3,82 | 12,3 | 1,42 | 8,12 |
| X10 | 0,17 | 1,46 | 0,09 | 0,79 |
| X11 | 0,18 | 1,21 | 0,05 | 1,07 |
| X12 | -1,9 | -1,87 | -2,8 | -1,97 |
| X13 | 0,13 | 3,76 | 0,04 | 2,25 |
| X14 | 20,3 | 1,29 | 8,11 | 0,87 |

Գնահատման արդյունքներից երևում է, որ երկու մոդելների դեպքում էլ նշանակալի փոփոխականներ են ընդունվում՝ X2, X3, X5, X7, X9, X13, քանի որ երկու դեպքում էլ t-ի արժեքը մոդուլով մեծ է 1,96-ից միայն նշված փոփոխականների դեպքում, ինչն էլ նշանակում է, որ 95% վստահության մակարդակով մերժվում է փոփոխականի 0 լինելու վարկածը:

Այսպիսով փրոբիթ և լոգիթ մոդելները վարկային ռիսկի գնահատման բավականին օգտակար սքորինգային գործիքներ են, որոնց կիրառումը ՀՀ բանկերում մեծապես կնպաստի վարկի տրամադրման ավելի արդար և արդյունավետ որոշումների կայացմանը, քանի որ այս մոդելները հիմնված են վիճակագրական տվյալների վրա: Սքորինգը հնարավորություն կտա ավելի լավ վերլուծել հաճախորդների պատկերը և կանխել վարկերի տրամադրումը հնարավոր վատ վարկառուներին: Շնորհիվ վարկավորման մասին որոշումների ընդունման

ավտոմատացման՝ վարկավորումը կդառնա ավելի օբյեկտիվ, իսկ սքորինգի կիրառումը կնվազեցնի վարկային հայտերի ուսումնասիրության վրա ծախսվող ժամանակը մինչև 1-2 ժամ, որը հատկապես կարևոր է մեծ քանակի հայտերի դեպքում:

Սքորինգային մոդելների կարևորությունը ընդգծում է նաև ՀՀ կենտրոնական բանկը. այդ է վկայում նրա կողմից «Սքորինգային համակարգի ձևավորման ձեռնարկ»-ի հրատարակումը, որում ներկայացված են սքորինգային համակարգի էությունը, նպատակը և դրա ճիշտ ձևավորման ընդհանուր սկզբունքները: Սակայն ձեռնարկում տեղ չեն գտել առաջարկվող կոնկրետ մոդելների մեթոդաբանությունը և վերլուծությունը, այդ իսկ պատճառով հողվածում ներկայացված մոդելների բացատրությունները շատ օգտակար կլինեն բանկային համակարգի մասնագետներին: Ամեն դեպքում պետք է հիշել, որ ներկայացված մոդելները միայն օժանդակում են վարկային վերլուծաբանին, այլ ոչ թե ամբողջովին փոխարինում են նրան: Գործնականում հնարավոր են դեպքեր, երբ վարկային վերլուծաբանը տիրապետում է այնպիսի տեղեկատվության, որը մշակված մոդելներում հաշվի չի առնվել: Բնականաբար, այդ դեպքում գնահատականները կարող են էականորեն տարբերվել իրարից:

ՄԱՐԻԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ

ԵՊՏ հայցորդ

ԲԱՆԿԵՐԻ ԴԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)


Վերջին տասնամյակի ընթացքում տեղի էր ունենում համաշխարհային խոշոր բանկերի միջազգային գործունեության ընդլայնում, որը սակայն ընդհատվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով: Բանկային գործունեության աճող միջազգայնացման հետևանքները միշտ էլ եղել են քննարկման առարկա: Գոյություն ունեցող բազմաթիվ կարծիքներից մեկը հիմնվում է բանկերի ունեցած առավելությունների և թերությունների վրա, որոնք կարող են առաջանալ զարգացող տնտեսություններում՝ առավել զարգացած ֆինանսական համակարգերի ընդլայնումների, իսկ երբեմն էլ գերիշխող դիրքերի ձեռքբերման արդյունքում: Բանկային գործունեության գլոբալացումը կարող է բերել ենթակառուցվածքների, կառավարման և վերահսկողության բարելավման, ինչը խթան է «ուժեղ սեփականատիրական իրավունքի և ֆինանսական համակարգի առաջացման համար՝ ստեղծելով կապիտալի օգտագործման առավելագույն արդյունավետություն, ինչը համարվում է բարձր տնտեսական աճի ապահովման և աղքատության արմատական վերացման կարևորագույն գործոն»¹: Երբ զարգացող տնտեսություններում շուկեր են առաջանում, արտասահմանյան բանկի մուտքը տեղական բանկային համակարգ հանդիսանում է կայունացնող ուժ: Ինչպես նաև այդ գործընթացը գլոբալացման գործընթացներում ակտիվորեն ընդգրկված տնտեսություններում հանգեցնում է ռեսուրսների առավել արդյունավետ տեղաբաշխմանը: Ավելին, միջազգային բանկերի միավորումը դիտվում է որպես 2007թ. ինդուստրիալ երկրներում սկսված ֆինանսական ճգնաժամի արդյունքում գոյացած դժվարությունների տարածում:

¹ Mishkin, Frederic. 2009, “Why We Shouldn't Turn Our Backs on Financial Globalization,” *International Monetary Fund Staff Papers*, vol. 56, no. 1, pp. 139-170.

Զարգացող երկրներում կապիտալի հոսքերի կտրուկ փոփոխությունները տրված են գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1


Մասնավոր կապիտալի ներհոսք զարգացող երկրներ (շրջաններով)¹



Մինչև 2007թ. տեղի ունեցող աճից հետո կապիտալի ներհոսքը Զարգացող Ասիա, Լատինական Ամերիկա և Զարգացող Եվրոպա կրճատվեց: Նախնական վերընթացը տեղի ունեցավ բազմակողմ մասնավոր միջազգային կապիտալ հոսքերի շրջանում՝ ընդգրկելով օտարերկրյա ուղղակի ներդրումները, բանկային վարկերը, պորտֆելային բաժնետոմսերը և գուտ պարտային արժեթղթերը (գծապատկեր 2): Եվ, չնայած փոփոխություններ տեղի ունեցան ներհոսքերի բոլոր խմբերում, այնուամենայնիվ ամենախոշոր անկումը գրանցվեց միջազգային բանկերի վարկերի գծով՝ 2007թ. 500 մլրդ. ԱՄՆ դոլարից 2008թ. հասնելով 100 մլրդ. ԱՄՆ դոլարի:

Գծապատկեր 2

Մասնավոր կապիտալի ներհոսք զարգացող երկրներ²



¹ Աղբյուրը՝ BIS Locational Banking Statistics, Bank Loans, Net Bond Issues; Foreign Direct Investment from the Global Development Fund; Portfolio equity data from CEIC; also Federal Reserve Bank of NY staff estimates. Annual data.

² Աղբյուրը՝ BIS Locational Banking Statistics, Bank Loans, Net Bond Issues; Foreign Direct Investment from the Global Development Fund; Portfolio equity data from CEIC; also Federal Reserve Bank of NY staff estimates. Annual data.

Ինչ կարող է անել բանկը, երբ իր հաշվեկշռում տեղի են ունենում շոկեր: Բանկերի հաշվեկշռի ձախ մասում գտնվում են ակտիվները (իրացվելի ակտիվներ և քիչ իրացվելի ակտիվներ), իսկ աջում՝ պարտավորությունները (ավանդներ, այլ ֆոնդեր և բանկային կապիտալ): Աշխատանքում ներկայացվում է, թե ինչպիսի առանձնահատուկ հետևանքներ է ունենում իրացվելիության կրճատումը տարբեր տիպի բանկերի վրա, ինչպիսիք են փոքր բանկերը, փոքր բանկերը միավորված այլ խոշոր բանկերի հետ և խոշոր բանկերը: Խիստ դրամավարկային քաղաքականությունը, որը կրճատում է բանկի ավանդների գումարը (կամ առաջացնում է բանկի ֆոնդերի հետ կապված ցանկացած այլ շոկ), կարող է հանգեցնել բանկի վարկային գործունեության ծավալների նվազման, եթե բանկերը անկարող են փոխարինել յուրաքանչյուր կորցրած ավանդի գումարը այլ պարտավորություններով: Կրճատված պարտավորությունները կառաջացնեն իրացվելի ակտիվների և վարկավորման միաժամանակյա կրճատում: Այդ դեպքում խոշոր բանկերը և բանկային հոլդինգները կարող են որպես թիրախ ընտրել կամ ներքին շուկան, կամ գործունեություն իրականացնել համաշխարհային շուկաներում: Միջազգային մակարդակով, հաշվեկշիռների անհավասարակշռությունները հանգեցնում են միջազգային փոխանցումների՝ կապիտալի արտաքին շուկաների միջոցով և, հետևաբար, կարևոր են վիճակագրորեն և էկոնոմետրիկորեն: Միջազգային փոխանցումները մաս և տեղի են ունենում գլոբալ բանկերի կողմից իրականացվող օտարերկրյա հոսքերի միջոցով, նույնիսկ եթե այդ բանկերը չունեն արտասահմանյան մասնաճյուղեր:

Աղյուսակ 1

Համաշխարհային հաշվեկշիռների փոփոխությունների փոխանցումների եղանակները¹

Խոշոր համաշխարհային բանկ

| Տեղական հաշվեկշիռ | | Արտասահմանյան մասնաճյուղի հաշվեկշիռ | | |
|---|---|--|-----------------|--|
| Իրացվելի ակտիվներ Վարկեր Տեղական վարկեր ↓ օտարերկրյա վարկեր | Ավանդներ ↓ Այլ ֆոնդեր Արտաքին փոխառություններ Ներքին փոխառություններ ↑ Կապիտալ | Օտարերկրյա ակտիվներ Վարկեր ↓ օտարերկրյա վարկեր ↑ Արտասահմանյան պարտավորություններ | իրացվելի | Ավանդներ Այլ ֆոնդեր Կապիտալ |

Տեղական բանկ

| Տեղական բանկի հաշվեկշիռ | |
|---|---|
| Իրացվելի ակտիվներ ↓ Վարկեր ↓ | Ավանդներ Այլ ֆոնդեր Արտասահմանյան փոխառություններ ↓ Կապիտալ |

¹ Nicola Cetorelli, Linda S. Goldberg, Global Banks And International Shock Transmission: Evidence From The Crisis, NBER Working Paper 15974, May 2010, p. 5.

Արտասահմանյան հոսքերի միջոցով համաշխարհային խոշոր բանկերի կողմից իրականացվող քաղաքականությունների և իրացվելիության շուկերի փոխանցման ձևերից մի քանիսը ներկայացված են աղյուսակ 1-ում, որտեղ օգտագործվում է բանկերի T-աձև հաշվեկշիռը: Ներկայացվում է երկու տիպի բանկ՝ Համաշխարհային բանկ զարգացող շուկայում իր մասնաճյուղով և տեղական բանկ: Աղյուսակի վերևի հատվածում ներկայացված է Համաշխարհային բանկի հաշվեկշիռը՝ բաժանելով մայր բանկի և մասնաճյուղի: Մայր բանկի ակտիվները ներկայացված են իրացվելի ակտիվների, տեղական շուկայում առկա վարկերի և արտասահմանյան վարկերի միջոցով: Պարտավորությունների գծով առաջացած նախնական անբարենպաստ շուկին՝ ավանդների կամ այլ ֆոնդերի միջոցով, Համաշխարհային բանկը կարող է արձագանքել այդ իրացվելի միջոցները կապիտալի արտաքին շուկաներ տեղափոխելով: Իսկ եթե դա հիմնավորված կամ ցանկալի չէ, բանկը կարող է ռիսկի ենթարկվել՝ վարկավորման գործառնությունների որոշ ձևերի սահմանափակմամբ՝ կրճատելով տրամադրվող վարկերի ծավալը ներքին շուկայում և արտասահմանյան հոսքերը արտաքին շուկաներում: Հաշվեկշռի վրա ճնշումները կարող են թեթևացվել, եթե մայր բանկը արտասահմանյան մասնաճյուղից փոխառություններ ներգրավի, օրինակ կապիտալի արտաքին շուկաների միջոցով: Այսպիսի փոխառությունները կարող են փոքրացնել իրացվելիությամբ պայմանավորված շուկի հետևանքները մայր բանկի շուկայում: Այնուամենայնիվ, կապիտալի արտաքին շուկայում կատարվող փոխանցումները փոփոխում են մասնաճյուղի հաշվեկշիռը՝ առաջ բերելով ճշգրտումների անհրաժեշտություն, ինչը կարող է հանգեցնել տեղական վարկավորման ծավալների կրճատման, եթե ակտիվներում և պարտավորություններում այլ ճշգրտումներ չեն ակնկալվում: Արտասահմանյան վարկերի առաջարկի և մասնաճյուղի վարկային գործառնությունների կրճատումը մայր բանկից դեպի զարգացող շուկաներ շուկերի փոխանցումների երկու հնարավոր ձևերն են:

Նշենք, որ զարգացող շուկայում գործող տեղական բանկի համար շուկերի փոխանցման նախնական աղբյուր կարող է հանդիսանալ արտասահմանյան միջբանկային փոխառությունների անկումը: Հավանական է, որ տեղի կունենա ավանդների շարժ տեղական բանկերի և խոշոր Համաշխարհային բանկի մասնաճյուղերի միջև, սակայն դրանց ուղղությունը կանխատեսել հնարավոր չէ: Այդ պատճառով առանց փոխհատուցող այլ ֆոնդերի հասանելիության՝ տեղական բանկի կողմից տրամադրվող վարկերի ծավալը կկրճատվի՝ արտասահմանյան ֆոնդերի հասանելիության նվազմանը համապատասխան: Այս գործընթացը ցույց է տալիս երրորդ ուղղությունը, որի մջոցով միջազգային շուկերի փոխանցումները կարող են կրճատել վարկերի առաջարկը զարգացող երկրներում:

Ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը քննարկելու համար փորձենք համեմատել նախաճգնաժամային և հետճգնաժամային ժամանակահատվածները: Այդ նպատակով բանակային համակարգը կբաժանենք երկու խմբի՝ դոլարային ֆոնդերի շուկերի նկատմամբ բարձր և ցածր (հավանական) զգայունություն ունեցողների: Ուսումնասիրության համար որպես նախաճգնաժամային ժամանակահատված կվերցնենք 2006թ. երկրորդ եռամսյակից մինչև 2007թ. երկրորդ եռամսյակը, իսկ որպես հետճգնաժամային ժամանակահատված՝ 2008թ. երրորդ եռամսյակից 2009թ. երկրորդ եռամսյակ: Համեմատելով նշված ժամանակահատվածներում միջազգային վարկավորման ծավալները՝ պարզ է դառնում, որ դոլարային ֆոնդերի շուկերի նկատմամբ բարձր հավանական զգայունություն ունեցող բանկերի միջազգային վարկավորման ծավալները ֆինանսական ճգնաժամից հետո կրճատվել են ավելի, քան ցածր հավանական զգայունություն ունեցողներինը: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ դոլարային ֆոնդերի շուկերի նկատմամբ ցածր զգայունություն ունեցող բանկերն ավելի մեծ

հնարավորություն են ունեցել զարգացող տնտեսություններում խուսափել միջազգային վարկավորման կրճատումից առաջացած բացերից: Նույն փաստն է արձանագրվում նաև տեղական վարկավորման ծավալների կրճատման պարագայում, միակ տարբերությունը կայանում է ծավալներում: Ինչպես ցույց է տվել համեմատությունը, ցածր զգայունություն ունեցող բանկերն արձանագրել են տեղական վարկավորման ծավալների 49 տոկոսով ավելի աճ, քան բարձր զգայունություն ունեցողները¹: Միջազգային և տեղական վարկավորման ծավալների աճի վերաբերյալ կատարված այս համեմատության արդյունքները ստիպում են մտածել զարգացած երկրների բանկային համակարգերից զարգացող երկրներ փոխանցվող շոկերի մասին, որի արդյունքում շոկերը մեծանում են բարձր զգայունություն ունեցող բանկերի համար: Սակայն այս համեմատությունը բավարար չէ, քանի որ այն չի դիտարկում տրամադրված վարկերի նպատակները, որի դեպքում բարձր զգայունություն ունեցող երկրները կենտրոնանում են զարգացող երկրների որոշակի խմբերի վրա և առաջ բերում վարկավորման պահանջարկի առավել խիստ շոկ: Այդ պատճառով ավելի նպատակահարմար է դիտարկել էկոնոմետրիկ վերլուծություն, որը հնարավորություն է տալիս տարբերակել վարկերի պահանջարկի և առաջարկի արդյունքները: Այս ուղղությամբ վերլուծություն կատարել են Նիկոլա Կետորելին և Լինդա Գոլդբերգը², որում կիրառել են հետևյալ հավասարումները՝

$$\Delta L_{ij} = \beta_0 + \beta_1 * \Delta D_i + \eta_i + \varepsilon_{ij}, \quad (2) \quad \Delta L_{ij} = Y_1 * \Delta D_i + Y_j + \varepsilon_{ij}, \quad (1)$$

որտեղ

i-ն մասնավոր բանկերն են,

j-ն մասնավոր փոխառու կազմակերպությունները,

β_0 հաստատուն է,

ΔD_i i-րդ բանկում առաջացած իրացվելիության շոկի ցուցանիշն է,

η_i անտեսանելի ցուցանիշ է, որն ընդգրկում է համապատասխանաբար առաջացող շոկերը դեպի j կազմակերպությունների վարկերի նկատմամբ պահանջարկ,

իսկ ΔL_{ij} ցույց է տալիս փոխառությունների փոփոխությունները տեղի ունեցող իրադարձություններից առաջ և հետո³:

Կատարված ռեգրեսիոն վերլուծության արդյունքում բացահայտվել են փոխհարաբերությունները շոկերի և արտասահմանյան վարկերի, տրամադրվող վարկերի նկատմամբ պահանջարկի և ներքին պահանջների միջև: Նախ՝ դիտարկվել է շոկերի ազդեցությունը արտասահմանյան փոխառությունների աճի վրա, ինչի արդյունքում բացահայտվել է, որ երկրները, որոնք ունեին դոլարային ֆոնդերի ճգնաժամին ենթարկվելու ավելի խիստ հնարավորություններ, արձանագրել են զարգացող երկրներում արտասահմանյան վարկերի տրամադրման ավելի ցածր ցուցանիշներ: Արդյունքները համապատասխան են տարբեր զգայունություն ունեցողների համար: Յածր զգայունություն ունեցող բանկերը կշարունակեն ընդլայնել տրամադրվող վարկերի ծավալները շոկերից հետո, մինչդեռ բարձր զգայունություն ունեցողները ստիպված են կատարել վերափոխումներ: Բացի այդ, արտասահմանյան վարկավորման գործընթացների կրճատումը կապված է արտասահմանյան վարկերի ներգրավման պահանջարկի համապատասխան կրճատման հետ: Այնուամենայնիվ, պահանջարկի կրճատման շոկերի մասնաբաժինը ավելի փոքր է լինում:

¹ Nicola Cetorelli, Linda S. Goldberg, Global Banks And International Shock Transmission: Evidence From The Crisis, NBER Working Paper 15974, May 2010, p. 16.

² www.nber.org.


³ Cetorelli, Nicola and Linda Goldberg, 2008, “Banking Globalization, Monetary Transmission, and the Lending Channel”, NBER Working Paper no. 14101, June 2008.

Հաջորդը դիտարկվում է ճգնաժամի ազդեցությունը ներքին պահանջների աճի վրա: Գնահատվող շուկերի ազդեցությունները կրկին բավական ուժեղ են հատկապես այն դեպքում, երբ միավորված բանկերի մասնաճյուղերը ունեն բարձր զգայունություն: Ընդհանուր առմամբ, ստացված արդյունքները ցույց են տալիս, որ զարգացող շուկաներում ներքին պահանջների ցածր աճը մեծապես պայմանավորված է սպասվող բարձր զգայունություն ունեցող բանկային համակարգերի կողմից առաջարկի շուկերով: Կատարված վերլուծությունների արդյունքում նկատվում է, որ արտասահմանյան վարկավորման առաջարկի աճը ճգնաժամից հետո նախաճգնաժամյան մակարդակի հետ համեմատած ցածր էր 8.02 տոկոսով Գերմանիայում, որի բանկային համակարգը ունի ցածր զգայունություն, իսկ Մեծ Բրիտանիայում՝ 28.44 տոկոսով, որտեղ գործում են բարձր զգայունություն ունեցող բանկեր¹:

Իսկ ինչ կարող ենք ասել ՀՀ բանկային համակարգի վարկային գործառնությունների վերաբերյալ ֆինանսական ճգնաժամից առաջ և հետո: Նշենք, որ Հայաստանում իրավիճակը որոշակիորեն տարբերվում էր մյուս զարգացող երկրներում ֆինանսական ճգնաժամից առաջացած դրությունից: Կարող ենք ասել, բանի որ դոլարային ֆոնդերի փոփոխությունների նկատմամբ ՀՀ բանկային համակարգի զգայունությունը շատ բարձր չէր, այդ պատճառով տրամադրվող վարկերի ծավալների կտրուկ կրճատում տեղի չունեցավ: ՀՀ բանկերը կարողացան իրացվելիության հետ կապված խնդիրները փոխհատուցել ներքին ֆինանսական միջոցների հաշվին՝ ներգրավելով մեծ ծավալներով ավանդներ՝ բարձր տոկոսադրույքովներով:

Գծապատկեր 3

ՀՀ առևտրային բանկերի կողմից 2000-2010թթ. տրամադրվող վարկերը²



Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, ՀՀ-ում վարկային ներդրումների ծավալը աճել է բարձր տեմպերով 2000թ. մինչև 2007թ. վերջը, իսկ հաջորդող տարիներին շարունակվել է աճը, սակայն արդեն ցածր տեմպերով: Ընդ որում աճը ավելի բարձր տեմպերով եղել է ՀՀ դրամով տրամադրվող վարկերի դեպքում, այդ պատճառով ֆինանսական ճգնաժամի պայմաններում ավելի մեծ չափով կրճատումը տեղի ունեցավ հենց ՀՀ դրամով տրամադրվող վարկերի ծավալներում՝ 2008թ. դեկտեմբերի վերջի դրությամբ 386815 մլն. դրամի համեմատ կազմելով 353100 մլն. դրամ 2009-ին և 347912 մլն. դրամ 2010-ի հուլիսին, այսինքն՝ կրճատվելով մոտ 10

¹ Nicola Cetorelli, Linda S. Goldberg, Global Banks And International Shock Transmission: Evidence From The Crisis, NBER Working Paper 15974, May 2010, p. 19.

² Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայք՝ www.armstat.am:

տոկոսով: Ի տարբերություն ՀՀ դրամով տրամադրվող վարկերի՝ տարադրամով տրամադրվող վարկերի ծավալը աճել է նույն ժամանակահատվածի համար՝ 2008թ. դեկտեմբերի վերջի դրությամբ 241879 մլն. դրամի համեմատ 2009-ին կազմելով 371751 մլն. դրամ՝ արձանագրելով մոտ 54 տոկոսով աճ, իսկ 2010-ի հուլիսին աճել է 15 տոկոսով՝ կազմելով 426376 մլն. դրամ¹: Այսինքն, կարող ենք ասել, որ խոշոր համաշխարհային բանկերից շուկերի փոխանցման հետևանքները Հայաստանի բանկային համակարգի վրա անդրադարձել են համեմատաբար փոքր ծավալներով, ինչը կարող ենք բացատրել նաև ֆինանսական ճգնաժամի պայմաններում ՀՀ բանկային համակարգի իրականացրած արդյունավետ քաղաքականությամբ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ կապիտալի շուկաների բացվածությունը, ինչը հնարավորություն է տալիս արտասահմանյան բանկերին մասնակցել ներքին շուկայի գործունեություններին՝ օտարերկրյա փոխատվական գործունեությունների աճի կամ ներքին բանկային համակարգ ուղղակի մուտքի ապահովման միջոցով, զարգացող երկրներում ապահովում է բարելավված արդյունավետություն, իրացվելի ակտիվների ապահովվածություն, ռիսկերի նվազեցում և ընդհանուր զարգացման հնարավորություններ: Բացի այդ խոշոր համաշխարհային բանկերն ակնհայտորեն ավելի ճկուն են և կարող են առավել արդյունավետ պայքարել զարգացող երկրներում առաջացած ճգնաժամերի դեմ: Այնուամենայնիվ, խոշոր ճգնաժամերի և շուկերի փոխանցումը աղբյուր հանդիսացող երկրներից դեպի զարգացող երկրներ մեծացրել է հետաքրքրությունը այսպիսի փոխանցումների մեխանիզմների և իրականացված համապատասխան քաղաքականությունների պատասխանատվության հանդեպ: Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ և՛ արտասահմանյան, և՛ տեղական բանկերը ենթարկվում են օտարերկրյա իրացվելիության կրճատումից առաջացած ազդեցություններին, սակայն տարբեր աստիճաններով: Այդ չափերը կապված են արտասահմանյան ֆոնդերից ունեցած կախվածությունից և արտասահմանյան բանկերի կազմակերպությունների արտաքին կապիտալի շուկաներից, որոնցում նրանք մասնակցում են: Ուղղակի շուկերի փոխանցումները տեղի են ունենում աղբյուր հանդիսացող երկրներից արտասահմանյան փոխատվական և վարկավորման գործընթացների իրականացման միջոցով: Անուղղակի փոխանցումները իրականանում են գլոբալացված բանկերի արտաքին կապիտալի շուկաների միջոցով, երբ կրճատվում է զարգացող երկրում գտնվող մասնաճյուղին տրվող օգնությունը կամ այդ մասնաճյուղից տեղի են ունենում մեծ քանակությամբ արտահոսքեր՝ կրճատելով նրանց վարկավորման հնարավորությունները ներքին շուկաներում: Ջարգացող երկրներում գործունեություն ծավալող տեղական բանկերը չունեն բավարար հնարավորություն դիմակայելու շուկերի փոխանցումներին և դրանց հետ փոխկապակցված վարկավորման կրճատմանը: Արտասահմանյան ֆոնդերի նկատմամբ վստահությունը անհրաժեշտաբար չի առաջացնում շուկերի փոխանցումներ, այլ շուկերի աղբյուր հանդիսացող երկրի բանկերի հաշվեկշռներում տեղի ունեցող փոփոխություններն են հետագա հետևանքների պատճառ հանդիսանում:

Չնայած և՛ արտասահմանյան վարկավորման գործունեությունը, և՛ արտաքին կապիտալի շուկաները հանդիսանում են միջազգային շուկերի փոխանցման միջոցներ, ինչպես դրական, այնպես էլ բացասական, այնուամենայնիվ այս հատկությունները պատճառ չեն հանդիսանում եզրակացնելու, որ զարգացող երկրների համար փակ կամ դեպի միջազգային կապիտալի շուկաներ սահմանափակ մուտք ունեցող շուկաները բարեկեցությունը բարելավող են: Ընդհակառակը, արդյունքները ներկայացնում են զգայուն ակտիվների տեղաբաշխման կարևորությունը այնպես, որ այս ֆոնդերը միշտ ունենան ավելցուկ այն տնտեսություններում,

¹ Վերլուծությունը կատարված է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

որտեղ ծավալում են իրենց գործունեությունը: Ինչպես նաև ստացված արդյունքներն ընդգծում են ամբողջությամբ նոր իրականությունը շուկաների և միջազգային փոխանցումների համապատասխան ուղիների միջև փոխկապվածության կարևորությունը: Այսինքն՝ կարող ենք ասել, որ երբ իրացվելիությունը կրճատվում է մի երկրում, համաշխարհային մակարադակով ակտիվ գործունեություն ծավալող բանկը կարող է իրացվելիության պակասը լրացնել արտասահմանյան մասնաճյուղերի հաշվին՝ նվազեցնելով իրացվելիության հետևանքները տեղական երկրում՝ զուգահեռաբար շուկերը փոխանցելով արտերկիր: Այդ դեպքում հետաքրքիրն այն է, որ ժամանակակից համաշխարհային տնտեսությունում փոխանցումների համար ֆինանսական փոխկապվածությունները առավել կարևոր են, քան ավանդական առևտրային փոխկապվածությունները:

ԱՐԱՐԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԱՐՄԵՆ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

ՀՀ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՁ» ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՏԱՐԿՈՂ ՄՈՆԵՏԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրամավարկային քաղաքականության նպատակներից մեկը կայուն տնտեսական աճի ապահովումն է: Ասվածի համատեքստում խիստ կարևորվում է ՀՀ տնտեսական աճի ուսումնասիրությունը ԿԲ-ի կողմից տարվող դրամավարկային քաղաքականության շրջանակներում, մասնավորապես 2010թ. առաջին կիսամյակի համար:


2010թ. առաջին կիսամյակը արժանավորվեց նրանով, որ հայ վիճակագիրները արձանագրեցին 6.7% տնտեսական աճ: Պետք է հատկապես նշել, որ 2009թ. դեկտեմբերին արձանագրված -14.4% անկումից հետո, հունվարին գրանցված 2.4% տնտեսական աճն արդեն ազդարարում էր, որ ՀՀ տնտեսությունը մտնում է վերականգնողական փուլ:

Խնդիրն արմատապես փոխվում է, երբ հարցը դիտարկվում է սպառողական զների ինդեքսի փոփոխության համատեքստում (ՄԳԻ):

Ինչպես ներկայացված է գծապատկեր 1-ում, դիտարկվող ժամանակահատվածում ՄԳԻ-ի հավելաճը գերազանցել է պաշտոնապես հրապարակվող տնտեսական աճի տեմպերը, ինչը վկայում է այն մասին, որ դիտարկվող ժամանակահատվածում ի համեմատ 2009թ. նույն ժամանակահատվածի ՀՀ-ում ֆիզիկական ծավալով արտադրվել է ավելի քիչ ապրանքներ ու ծառայություններ, և միայն գնաճի հաշվին ընթացիկ զներով հաշվարկված ՀՆԱ-ն աճել է: Մեր կողմից կատարված հաշվարկները վկայում են այն մասին, որ դիտարկվող ժամանակահատվածում շարունակվել է 2009թ. հունվարից սկսված տնտեսական անկման փուլը և միայն մայիս ամսին է գրանցվել 1.2% տնտեսական աճ, որից հետո՝ հունիսին գրանցվել է տնտեսական անկում -0.6%:

Ասվածի համատեքստում խիստ կարևոր է գնահատել ՀՀ կենտրոնական բանկի կողմից տարվող մոնետար քաղաքականությունը, այն դեպքում, երբ այն ունի գնաճի նպատակադրման ռազմավարություն:

ՀՀ տնտեսական աճի, ՄԳԻ-ի և իրական տնտեսական աճի¹ տվյալները
2010թ. առաջին կիսամյակի համար²



Պետք է նշել, որ 2010թ. հունվար ամսից սկսած ՀՀ ԿԲ-ն արձագանքելով շուկայում գնաճի աճող միտումներին սկսեց բարձրացնել ռեպո տոկոսադրույքը 5%-ից հասցնելով մինչև 7.25%: Նշված գործիքի փոփոխությունը հանգեցրեց տրամադրվող վարկերի և ավանդների միջին տոկոսադրույքի աճի: Մասնավորապես 2010թ. մայիս ամսին տրամադրվող վարկերի և ավանդների միջին տոկոսադրույքը համապատասխանաբար կազմել է 20.02% և 9.73%: Համապատասխան ցուցանիշների աճը 2009թ. նույն ժամանակահատվածի հետ համեմատ կազմել է համապատասխանաբար 1.41% և 0.83%: Այլ կերպ ասած ՀՀ ԿԲ-ն ճգնաժամային համարվող 2009թ. համեմատ էլ ավելի է կոշտացրել դրամավարկային քաղաքականությունը և դա այն դեպքում, երբ կառավարությունը հայտարարում էր վերականգնողական աճի փուլ մտնելու մասին:

Այժմ վերլուծենք այն արդյունքները, որոնք ստացվել են ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության կոշտացման արդյունքում:

2010թ. առաջին եռամսյակում առևտրային բանկերում պահ է դրվել 37.1 մլրդ. դրամի ավանդ, ի համեմատ 2009թ. նույն ժամանակահատվածի, երբ պահ դրված ավանդների ծավալը կազմել է 80.9 մլրդ դրամ: Խնդիրն ավելի է բարդանում, երբ վերլուծում ենք 2010թ. երկրորդ եռամսյակի միտումները: Նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել ավանդների մասսայական դուրս հանում բանկերից հիմնականում տնային տնտեսությունների կողմից: Միայն 2010թ. երկրորդ եռամսյակում առևտրային բանկերից հանվել է 66.4 մլրդ դրամի ավանդ: Հետաքրքիր զուգադիպությամբ նույն ժամանակահատվածում աճել են նաև ՀՀ-ից ոչ առևտրային նշանակության դրամական միջոցների արտահոսքի ծավալները: Մասնավորապես, եթե 2009թ. երկրորդ եռամսյակում ՀՀ-ից արտահոսել է ոչ առևտրային նշանակության 40.7 մլն դոլար, ապա 2010թ. նույն ժամանակահատվածում այն կազմել է 53.4 մլն

¹ Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից: Հաշվարկներն իրականացվել են բազմագործոն ռեգրեսիոն հավասարումների հիման վրա: Բազմագործոն ռեգրեսիոն հավասարման մեջ որպես անկախ փոփոխական վերցվել է անվանական ՀՆԱ-ն, իսկ որպես կախյալ փոփոխականներ վերցվել են արդյունաբերական, գյուղատնտեսական, շինարարության և առևտրային գործունեության հետ կապված մի շարք հիմնական ցուցանիշների ֆիզիկական ինդեքսները:

² Գծապատկերում, ինչպես նաև հոդվածում բերված բոլոր տվյալները վերցված են ԱՎԾ-ի կողմից հրատարակվող «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. հունվար-հունիս ամիսներին» հրատարակումներից:

դուլար: Այլ կերպ ասած նման ծավալի ավանդների դուրս հանումը տնային տնտեսությունների կողմից ունի երկու բացատրություն՝

- կապիտալի փախուստ ՀՀ-ից պայմանավորված արտարժույթի սպեկուլյատիվ միտումներով,
- սոցիալ-տնտեսական վիճակի վատացում պայմանավորված բարձր գնաճով:

Այժմ վերլուծենք առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի ծավալների փոփոխությունը: Պետք է նշենք, որ 2010թ. առաջին կիսամյակում առևտրային բանկերին տրամադրվող վարկերի ծավալները 2009թ. դեկտեմբերի համեմատ աճել են 58.7 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ 2009թ. նույն ժամանակահատվածում տրամադրվել է 83.3 մլրդ դրամի վարկ:

Գատելով վերը նշվածից պետք է փաստել, որ 2010թ. առաջին կիսամյակում ՀՀ ԿԲ-ի կողմից տարվող կոշտ դրամավարկային քաղաքականության արդյունքում նվազել են առևտրային բանկերի կողմից տրվող վարկերը, աճել են առևտրային բանկերից հանվող ավանդների ծավալները, ինչն էլ հանգեցրել է ոչ առևտրային նպատակով միջոցների արտահոսքի աճին: Սակայն փաստը մնում է փաստ, որ նման քաղաքականության արդյունքում գնաճի տեմպերը չեն նվազել: Ստացվում է, որ նման քաղաքականության արդյունքում ԿԲ-ն ուղղակի կամ անուղղակի կերպով խթանել է համախառն խնայողությունների աճը, փոխարենը խթանելու համախառն ներդրումները: Սակայն պետք է նշել, որ 2010թ. երկրորդ եռամսյակից սկսած սկսվել է կուտակված խնայողությունների փախուստ արտերկիր: Այլ կերպ ասած ՀՀ-ում տարվող դրամավարկային քաղաքականության արդյունքում կուտակված խնայողությունները չեն վերածվում ներդրումների ՀՀ-ում, այլ գնում են արտերկիր:

Անդրադառնանք ևս մի կարևոր երևույթի, որը դարձել է գնաճի զսպման գործիք, և որի կարգավորումը իրականացնում է ԿԲ-ն: Դա դուլար/դրամ փոխարժեքն է:

Եթե հետևենք դուլար/դրամ փոխարժեքի տատանման տրամաբանությանը, ապա կհայտնաբերենք հետևյալ օրինաչափությունը, այն է՝ դրամը սկսում է արժևորվել ԱՄՆ դոլարի նկատմամբ այն ժամանակ, երբ ՀՀ-ում առկա է գնաճի բարձր տեմպ, որը հնարավոր չէ զսպել ռեպո տոկոսադրույթի բարձրացման արդյունքում:

Նման իրավիճակ է գրանցվել 2010թ. առաջին կիսամյակում՝ դուլար/դրամ փոխարժեքը կազմելով 2009թ. դեկտեմբերի 31-ին 380.47, նվազել է կազմելով 373.46 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց 2010թ. հունիսի 30-ի դրությամբ: Այլ կերպ ասած, նշված ժամանակահատվածում դրամն արժևորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ 7 դրամով կամ 1.84%:

Դրամի արհեստական արժևորման գործընթացը սկսվել է 2008թ. հոկտեմբերից: Հոկտեմբեր ամիսը արժևորվում է այն առումով, որ այդ ամսից սկսված ՀՀ ֆոնդային բորսայում ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացվող չստերիլիզացված ինտերվենցիաները դարձել են խիստ նշանակալից: Չստերիլիզացված ինտերվենցիաների իրականացման էությունը բավականին պարզ է: Կենտրոնական բանկը իր արտաքին պահուստներից որոշակի ծավալի դուլար էր մերթընդմերթ լցնում շուկա ստեղծելով ԱՄՆ դոլարի արհեստական ավելցուկ, այսինքն՝ այլ հավասար պայմաններում մեծացնում էր շուկայում դոլարի առաջարկը, ինչն էլ իր հերթին հանգեցնում էր դոլարի արժեզրկմանը դրամի նկատմամբ, կամ որ նույնն է դրամի արժևորմանը: Ինտերվենցիան կոչում ենք չստերիլիզացված, քանի որ ԿԲ-ն ոչ մի ուրիշ գործիքով չի փորձում շուկայից հանել իր կողմից լցված ԱՄՆ դոլարը:

Հարկ ենք համարում նշել, որ 2009թ. մարտի 3-ից հետո հայտարարվեց, որ ԿԲ-ն վարում է լողացող կուրսի քաղաքականություն: Սակայն անկախ նման հայտարարությունից դուլար/դրամ փոխարժեքի փոփոխությունը ուղղակի կոռելացված է գնաճի բարձր տեմպի


հետ: Խոսք այն մասին է, որ բարձր գնաճը զապելու համար ԿԲ-ն ոչ միայն բարձրացնում է ռեպո տոկոսադրույքը այլ նաև չստերիլիզացված ինտերվենցիաների միջոցով արժևորում դրամը: Արդյունքում ստացվում է պարադոքսալ մի երևույթ՝ դրամն արժևորվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ, սակայն արդյունքում դրամի գնողունակությունը աճելու փոխարեն մնում է նույնը, ինչն էլ գալիս է ապացուցելու դրամի արժևորման սպեկուլյատիվ միտումը:

Կարծում ենք նպատակահարմար է կանգ առնել հասկանալու համար գնաճի զսպման նպատակով ԿԲ-ի կողմից դրամի արհեստական արժևորման գործընթացի խորքային պատճառները:

Վերլուծությունը պետք է սկսել արտաքին առևտրի սալդոյի ու դոլար/դրամ փոխարժեքի փոփոխությունների համադրումից:


Գծապատկեր 2

**ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի
դինամիկան 1999-2009թթ.¹**



Գծապատկեր 3

**ՀՀ արտաքին առևտրի հաշվեկշռի
փոփոխության դինամիկան 1999-2009թթ.
համար, մլն ԱՄՆ դոլար²**



Գծապատկերների համադրումից ակնհայտ երևում է, որ 2003թ. սկսված դրամի արժևորման հետևանքով խորացել է առևտրային հաշվեկշռի բացասական սալդոն: Ասվածի վառ ապացույց է այն, որ 2009թ. մարտի 3-ին տեղի ունեցած դրամի 22% արժեզրկման արդյունքում մասնակիորեն բարելավվել է արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը:

Քանակապես գնահատելիս ստանում ենք հետևյալ արդյունքները՝ 2003-2008թթ. համար դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ 47% արժևորման արդյունքում առևտրային հաշվեկշիռը խորացել է 2.7 մլրդ ԱՄՆ դոլարով, կամ 5.7 անգամ, իսկ 2003-2009թթ. համար դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ 37.2% արժևորման արդյունքում առևտրային հաշվեկշիռը խորացել է 2.01 մլրդ ԱՄՆ դոլարով, կամ 4.4 անգամ: Կարծում ենք թվերն արդեն խոսում են այն պարզ ճշմարտության մասին, որ դրամի արժեզրկման և լողացող կուրսի անցման դեպքում կարող ենք հասնել ընդհուպ մինչև արտաքին առևտրի դրական հաշվեկշռի:

Սակայն ամբողջ հիմնախնդիրը կայանում է նրանում, որ 2003-2009թթ. ընթացքում ներմուծման ծավալների շեշտակի աճի պայմաններում ընթացել է ներմուծման գործընթացի կենտրոնացում, որի արդյունքում ներմուծվող ապրանքների շուկայում ձևավորվել են օլիգոպո-

¹ Նույն տեղում:
² Նույն տեղում:

լիաներ: Նման պարագայում, այն էլ դրամի չափազանց արժևորման պայմաններում, ԿԲ-ն չի կարող անցնել լողացող կուրսի քաղաքականության: Ասվածը պատճառաբանենք մի քանի հիմնավորումներով: Ներմուծվող ապրանքների գներն ունեն դոլարային արտահայտություն և լողացող կուրսի անցման պայմաններում, երբ անկասկած կդիտվի դրամի արժեզրկման միտում, կհանգեցնեն ներմուծված ապրանքների դրամային գնի աճի, որը նույնիսկ բարձր ռեպո տոկոսադրույքի դեպքում ԿԲ-ն չի կարող վերահսկել: Ահա սա է այն հիմնական պատճառը, թե ինչու է ԿԲ-ն բարձր գնաճի պայմաններում առաջնային կերպով ազդում ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի վրա՝ արժևորելով դրամը: Նման քայլի արդյունքում ներմուծված ապրանքների դրամային արտահայտությամբ գները պետք է ընկնեն:

Սա է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տարվող մոնետար քաղաքականության և որդեգրած գնաճի նպատակադրման ռազմավարության տրամաբանությունը: Ակնհայտ է, որ նման քաղաքականությունը ոչ մի կապ չունի կայուն տնտեսական աճի ապահովման, մրցունակ տնտեսություն ձևավորելու, ինչպես նաև արտահանման աճի ապահովման և տեղական արտադրողին պաշտպանելու հետ: Այն ավելի շուտ միտված է ներմուծվող ապրանքների շուկայում ձևավորված օլիգոպոլ խմբավորումների կողմից թելադրվող գների հնարավոր զսպմանը դոլար/դրամ փոխարժեքի սպեկուլյատիվ արժեզրկման միջոցով, որի նպատակն է կարգավորվող գնաճի պայմաններում ապահովել սոցիալ-քաղաքական կայունության խնդիր: Ակնհայտ է, որ նման մոտեցումը երկարաժամկետ հեռանկարում չի հանգեցնի իրավիճակի կայունացմանը, քանի դեռ ՀՀ-ում չի ձևավորվել ազատ շուկա:

Ասվածի համատեքստում առաջարկում ենք անցում կատարել գնաճի նպատակադրման ռազմավարությունից ՀՆԱ-ի նպատակադրման ռազմավարության և իրապես անցնել արտարժույթի լողացող կուրսի քաղաքականության: Նման փոփոխությունների դեպքում ակնկալում ենք ստանալ հետևյալ արդյունքները՝

- ներմուծվող ապրանքների շուկայում ձևավորված օլիգոպոլիաների վերացում և ազատ մրցակցության ձևավորում,
- տեղական արտադրության և արտահանման տեմպերի ավելացում,
- կապիտալատար արտադրանք թողարկող տնտեսության ձևավորում:

**ՓՈՂԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ՊԱՅԱՆՋԱՐԿԻ ՍՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ
ԷԿՈՆՈՄԵՏՐԻԿ ՍՈՂԵԼՆԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ**

Տնտեսական ճգնաժամի պայմաններում ֆինանսական զարգացած շուկաներ ունեցող երկրներում հատկապես զգայուն է երկրի ֆինանսական հատվածը: Նրանում տեղի ունեցող ոչ բարենպաստ զարգացումները խարխլում են տնտեսության մյուս հատվածների նորմալ աշխատանքը՝ նպաստելով տնտեսական ճգնաժամի էլ ավելի խորացմանը: Եվ քանի որ փողի շուկան համարվում է մակրոտնտեսական հիմնական շուկաներից մեկը, այս հատվածի, մասնավորապես փողի փաստացի և հավասարակշիռ պահանջարկի մակարդակների ուսումնասիրությունն էլ ավելի է կարևորվում: Իհարկե, հասկանալով տնտեսագիտական կապերի բազմազանությունը և խորությունը, ներկայացվող և ստացված մոդելն արտահայտում է տնտեսական անորոշության միայն մի մասը, սակայն այնպիսի մասը, որն էականորեն պատկերացում է տալիս տնտեսության այս հատվածում տեղի ունեցող փոփոխությունների մասին: Փողի շուկան, իր հերթին, բավականին զգայուն է տնտեսությունում կատարվող փոփոխությունների նկատմամբ: Մասնավորապես, վերջինովս պայմանավորված՝ փողի պահանջարկը և առաջարկը հավասարվում են իրար բավականին հազվադեպ: Իսկ անցումն անհավասարակշիռ վիճակից հավասարակշիռ վիճակին տեղի է ունենում շատ դանդաղ: Հավասարակշիռ մակարդակի նկատմամբ փողի ավելցուկային կամ պակասուրդային պահանջարկը կարող է վկայել նաև տնտեսությունում ստվերային հատվածի ակտիվության մասին: Ինչպես հայտնի է ստվերային տնտեսությունը մեծ պահանջարկ ունի փողի նկատմամբ, և վերջինս, փաստորեն, կարող է հանդիսանալ փողի շուկան անկայունացնող գործոններից մեկը: Փողի պահանջարկի՝ հավասարակշիռ մակարդակից շեղման չափի ուսումնասիրությունն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում՝ կապված հենց ստվերային տնտեսության անուղղակի ձևով գնահատման հետ: Հաշվի առնելով վերն ասվածը՝ փորձ է արվել անուղղակիորեն գնահատել փողի հավասարակշիռ կամ ցանկալի մակարդակը, պարզել, թե փողի փաստացի մակարդակը որքան արագ է մոտենում իր ցանկալի մակարդակին:

Փողի իրական պաշարների նկատմամբ պահանջարկի վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Տարբեր տեսություններից¹ հայտնի է, որ վերջինիս վրա էական ազդեցություն ունեն, միջին տոկոսադրույքները, իրական ՀՆԱ-ի մակարդակը, փոխարժեքը²: Հետևաբար, փողի հավասարակշիռ պահանջարկը կարելի է ներկայացնել հետևյալ էկոնոմետրիկ մոդելի միջոցով.

$$\left(\frac{M}{P}\right)_t^{D*} = \eta_0 + \eta_1 y_t^r + \eta_2 e_t + \varepsilon_t \quad (1)$$

որտեղ

$\left(\frac{M}{P}\right)_t^{D*}$ – ց փողի իրական պաշարների նկատմամբ ցանկալի կամ հավասարակշիռ պահանջարկի մակարդակն է,

¹ Алексей Киреев, Прикладная Макроэкономика, “Международные отношения”, Москва 2006, ст. 86.

² ՀՀ ԿԲ և ԱՎԾ 1998-2009թթ. տարեկան և եռամսյակային հաշվետվություններ, <http://www.cba.am/> և <http://www.armstat.am/>.

y_t^r - ն իրական ՀՆԱ մակարդակն է տվյալ ժամանակահատվածում,

e_t - ն անվանական փոխարժեքն է (դրամ/դոլար),

ε_t - ն մոդելի պատահական սխալն է,

η_0, η_1, η_2 - երբ մոդելի անհայտ պարամետրերն են,

t – ն արտահայտում է ժամանակահատվածը եռամսյակային կտրվածքով

Վերը բերված (1) մոդելը գնահատելիս ի հայտ են գալիս խնդիրներ, որոնք պայմանավորված են հավասարակշիռ փողի պահանջարկին վերաբերող տվյալների բացակայությամբ: Սակայն, այն կարելի է գնահատել անուղղակի ձևով: Այդ նպատակով դիտարկենք հետևյալ արտահայտությունը.

$$\left(\frac{M}{P}\right)_t^D - \left(\frac{M}{P}\right)_{t-1}^D = \phi \left(\left(\frac{M}{P}\right)_t^{D*} - \left(\frac{M}{P}\right)_{t-1}^D \right) \quad (2)$$

որտեղ

$\left(\frac{M}{P}\right)_t^D$ – ն փողի իրական պաշարների նկատմամբ պահանջարկի փաստացի մակարդակն է,

$\left(\frac{M}{P}\right)_{t-1}^D$ – ն փողի իրական պաշարների նկատմամբ պահանջարկի նախորդ ժամանակահատվածի մակարդակն է,

ϕ -ն գործակից է, որն արտահայտում է փողի փաստացի պահանջարկի հավասարակշիռ կամ ցանկալի մակարդակին ձգտելու արագությունը:

(2) արտահայտությունից երևում է, որ եթե $\phi = 1$, ապա փողի փաստացի պահանջարկը ձգտում է իր ցանկալի մակարդակին ակնթարթորեն, եթե զրո է, ապա այդ գործընթացը գրեթե տեղի չի ունենում: Սակայն, վերջիններս ծայրահեղ դեպքերն են, այսինքն՝ վերը բերված գործակիցը գտնվելով զրոյի ու մեկի միջև, ինչ-որ արագությամբ է փողի պահանջարկի փաստացի մակարդակը հասցնում ցանկալի մակարդակին: Ընդ որում՝ այս կոռեկցիան կամ շտկումը տեղի է ունենում բազմաթիվ գործոնների ազդեցության ներքո: Մասնավորապես, փողի պահանջարկի ցանկալի մակարդակին հասնելու, կամ շեղում ունենալու վրա օրինակ կարող է ազդել ստվերային տնտեսությունը: Այսինքն՝ (2) մոդելը գրենք հետևյալ ձևով.

$$\left(\frac{M}{P}\right)_t^D - \left(\frac{M}{P}\right)_{t-1}^D = \phi \left(\left(\frac{M}{P}\right)_t^{D*} - \left(\frac{M}{P}\right)_{t-1}^D \right) + \mu_t \quad (3)$$

որտեղ

μ_t - ն (3) մոդելի պատահական սխալն է, որն արտահայտում է, օրինակ, ստվերային տնտեսության ազդեցությունը հավասարակշիռ վիճակից շեղման վրա: (3) հավասարումը լուծենք փողի ցանկալի պահանջարկի նկատմամբ, արդյունքում կունենանք հետևյալ արտահայտությունը.

$$\phi \left(\frac{M}{P}\right)_t^{D*} = \left(\frac{M}{P}\right)_t^D + (\phi - 1) \left(\frac{M}{P}\right)_{t-1}^D - \mu_t \quad (4)$$

Հարաբերելով ստացված (4) հավասարման երկու մասը ϕ -ի վրա՝ կստանանք հետևյալ միջանկյալ մոդելը.

$$\left(\frac{M}{P}\right)_t^{D*} = \left(\frac{1}{\phi}\right)\left(\frac{M}{P}\right)_t^D + \left(\frac{\phi-1}{\phi}\right)\left(\frac{M}{P}\right)_{t-1}^D - \left(\frac{1}{\phi}\right)\mu_t \quad (5)$$

Այնուհետև, (5) մոդելի ձևա մասում տեղադրենք (1) մոդելի աջ մասը.

$$\eta_0 + \eta_1 y_t^r + \eta_2 e_t + \varepsilon_t = \left(\frac{1}{\phi}\right)\left(\frac{M}{P}\right)_t^D + \left(\frac{\phi-1}{\phi}\right)\left(\frac{M}{P}\right)_{t-1}^D - \left(\frac{1}{\phi}\right)\mu_t \quad (6)$$

(6) հավասարումից գտնենք փողի փաստացի պահանջարկը.

$$\left(\frac{M}{P}\right)_t^D = \eta_0 \phi + \eta_1 \phi y_t^r + \eta_2 \phi e_t - (\phi-1)\left(\frac{M}{P}\right)_{t-1}^D + \mu_t + \phi \varepsilon_t \quad (7)$$

Կատարելով հետևյալ նշանակումը՝ $v_t = \mu_t + \phi \varepsilon_t$ կունենանք հետևյալ մոդելը.

$$\left(\frac{M}{P}\right)_t^D = \eta_0 \phi + \eta_1 \phi y_t^r + \eta_2 \phi e_t - (\phi-1)\left(\frac{M}{P}\right)_{t-1}^D + v_t \quad (8)$$

որտեղ v_t -ն (8) մոդելի պատահական սխալն է:

(8) մոդելը լիովին գնահատվում է փոքրագույն քառակուսիների եղանակով: Ինչպես տեսնում ենք այն գնահատելուց հետո ամբողջովին հնարավոր կլինի տալ սկզբում նշված բոլոր հարցերի պատասխանները: Մոդելը գնահատելու համար դիտարկենք հետևյալ հավասարումը.

$$\left(\frac{M}{P}\right)_t^D = \eta_0 \phi + \eta_1 \phi y_t^r + \eta_2 \phi e_t + (1-\phi)\left(\frac{M}{P}\right)_{t-1}^D + v_t \quad (9)$$

(9)-ը հավասարումը գնահատենք փոքրագույն քառակուսիների եղանակով՝ մինչ գնահատելը պարզելով, թե որ շարքերն են ստացիոնար, իսկ որոնք՝ ոչ: Դա կատարվում է մի շարք փուլերով, և ըստ այդ փուլերի արդյունքների, բոլոր թվային շարքերը ոչ ստացիոնար են¹: Մոդելը ստացիոնար շարքերով գնահատելու ժամանակ նշված ոչ ստացիոնար շարքերը վերջվում են համապատասխան իրենց տարբերություններով.

$$D\left(\left(\frac{M}{P}\right)_t^D\right) = \left(\frac{M}{P}\right)_t^D - \left(\frac{M}{P}\right)_{t-1}^D, D(D(e_t)) = e_t - 2e_{t-1} + e_{t-2} \quad (10)$$

Գնահատելով (9) մոդելը² համապատասխան (10) տարբերություններով կստանանք հետևյալ միջանկյալ արդյունքները՝

$$D\left(\left(\frac{M}{P}\right)_t^D\right) = \underset{(0.0631)}{3412} + \underset{(0.000)}{0.05} D(y_t^r) - \underset{(0.0016)}{136} D(D(e_t)) + \underset{(0.0505)}{0.39} D\left(\left(\frac{M}{P}\right)_{t-1}^D\right) \quad (11)$$

Ստացված մոդելը լավ որակի է, հետևաբար վստահելի՝ հետագա վերլուծությունների համար: Լավ որակի մասին են վկայում ստացված գործակիցների զրո լինելու հավանականությունների 0-ին մոտ արժեքները (փակագծերում նշված թվերը), դետերմինացիայի գործակցի 1-ին մոտ լինելը և այլն: Սակայն, անհրաժեշտ է ոչ թե (11) տարբերություններով մոդելը, այլ սկզբնականը: Այն ստանալու համար կատարելով մի շարք ձևափոխություններ կունենանք հետևյալ վերջնական մոդելը.

¹ Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А., Эконометрика, издательство “Дело”, Москва 2004, ст. 289-293.

² <http://www.eviews.com/>.

$$\left(\frac{M}{P}\right)_t^D = 3523330.87 + 0.05y_t^r - 136e_t + 0.39\left(\frac{M}{P}\right)_{t-1}^D \quad (12)$$

Այժմ, (12) մոդելի օգնությամբ, ստանանք (1) մոդելի և շտկման գործակիցների արժեքները: Դրա համար դիտարկենք հետևյալ համակարգը.

$$\begin{cases} 1 - \phi = 0.39 \\ \eta_0 \phi = 3523330.87 \\ \eta_1 \phi = 0.05 \\ \eta_2 \phi = -136 \end{cases} \quad (13)$$

(13) համակարգը լուծելու արդյունքում կունենանք շտկման կամ փողի փաստացի պահանջարկի ցանկալի մակարդակին ձգտելու արագությունը՝ $\phi = 0.61$: Ստացվածը ևս մեկ անգամ վկայում է լավ գնահատականների մասին, քանզի ինչպես երևում է այս ցուցանիշը բավարարեց առաջին պայմաններից մեկին, ըստ տնտեսագիտական հիմնավորման այս ցուցանիշը պետք է որ 0-ի և 1-ի միջև գտնվեր, որն էլ ստացվել է:

Մյուս գործակիցները համապատասխանաբար կլինեն՝

$$\eta_0 = 577592, \eta_1 = 0.08, \eta_2 = -223$$

(1) սկզբնական մոդելը կստանա հետևյալ գնահատված տեսքը, այսինքն՝ կունենանք փողի իրական պաշարների նկատմամբ ցանկալի պահանջարկի անուղղակի ձևով գնահատված մոդելը.

$$\left(\frac{M}{P}\right)_t^{D*} = 577592 + 0.08y_t^r - 223e_{t-1} \quad (14)$$

(12) և (14) մոդելների օգնությամբ համեմատելով փաստացի և ցանկալի փողի պահանջարկները՝ կարող ենք գալ որոշակի եզրահանգումների: Ինչպես նշվեց վերևում, շտկման գործակիցը բավականին մոտ էր մեկին, այսինքն՝ եթե նույնիսկ հնարավոր լինի հավասարակշռություն փողի շուկայում, ապա այն այնքան էլ դանդաղ չի կատարվում: Սակայն, ինչպես նշվեց այս հավասարակշիռ մակարդակին հասնելու ճանապարհին կան բազմաթիվ խոչընդոտներ: Դրանցից մեկը մեծ հավանականությամբ կարող է լինել ստվերային տնտեսությունը: Վերը կատարված վերլուծության շնորհիվ հնարավոր է մոտավոր հաշվարկել ստվերայնության չափը ՀՀ-ում անուղղակի ձևով, վերցնելով որպես ստվերայնությունն արտահայտող ցուցանիշ փողի փաստացի և ցանկալի պահանջարկների տարբերությունը: Իհարկե, ևս մեկ անգամ կարիք կա նշելու, որ անհավասարակշիռ վիճակը կարող է պայմանավորված լինել այլ գործոններով, սակայն չբացառելով նաև այդ տարբերակը, առաջնային գործոններից մեկն է համարվում տնտեսության ստվերայնության մակարդակը: Ստվերայնության մակարդակի մոտավոր չափերի մասին պատկերացումները հնարավորություն կտան ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները վերացնելու նպատակով իրականացվող միջոցառումներն ավելի ճիշտ կարգավորել, բացի այդ սա կբարձրացնի տնտեսական քաղաքականության արդյունավետությունը:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԴԵՐԸ ԶԶ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻՑ ԽՈՒՄԱՓԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Անցումային տնտեսություն վարող երկրներում, ինչպիսին դեռևս նաև Հայաստանի Հանրապետությունն է, տնտեսական աճի ապահովման գործում կարևոր նշանակություն ունի բանկային համակարգի զարգացումը՝ միջազգային փորձը: Մասնավորապես, տվյալ համակարգի գործունեության վրա իր դրական ազդեցությունն է թողնում ֆինանսական ռիսկերի ճշգրիտ և արդյունավետ կառավարումը: Ուստի այդ առումով, ֆինանսական ռիսկերից բանկային համակարգում իրենց կարևոր տեղն ունեն վարկային, արտարժութային, իրացվելիության, գնային և տոկոսադրույքների ռիսկերը: Այսպես, վերջին երկու (2008-2009թթ.) տարիների փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ ֆինանսական ճգնաժամի պայմաններում էլ ՀՀ առևտրային բանկերում ռիսկերի մի մասը գործել են կառավարելի շրջանակներում, և դրանց կայունությունը չի խաթարվել: Սակայն, ի սպացույց պետք է նշել, որ սկսած 2008 թվականի 4-րդ եռամսյակից ներառյալ 2009 թվականը միայն փոքր-ինչ ավելացավ վարկային և արտարժութային ռիսկերով պայմանավորված վնասների մեծությունը¹:

Միաժամանակ ուսումնասիրություններից պարզվում է, որ չնայած վերջին տարիներին արձանագրված վարկերի կտրուկ աճը զուգակցվել է Հայաստանի Հանրապետությունում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հետ, սակայն դրան համահունչ այնուամենայնիվ տեղի ունեցավ տրամադրվող վարկերի ռիսկի փոքր-ինչ վատացում՝ կապված չաշխատող վարկերի հետ, և արդյունքում 2009 թվականին վարկերի հանրագումարում հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի վարկերի տեսակարար կշիռն ավելացավ 0.4 տոկոսային կետով: 2009 թվականի 1-ին կիսամյակից սկսած վարկային շուկայի աշխուժացումն աստիճանաբար նպաստեց առևտրային բանկերի կողմից կայուն եկամուտների ստացման սպասումների ձևավորմանը՝ կապված ՀՀ ԿԲ-ի կողմից որդեգրված ճիշտ քաղաքականության և վարկավորման գործընթացի արդյունավետ վարման հետ: Անհրաժեշտ է նշել նաև այն իրողությունը, որ վերոնշյալ վարկերի գծով 2009թ. 1-ին կիսամյակում դրանց տեսակարար կշիռը հասավ նույնիսկ մինչև 10%-ի, իսկ այնուհետ տարեվերջին ունեցավ նվազման միտում՝ 5.2%-ի չափով, կազմելով 4.8%: Միաժամանակ նախորդ տարիներին վարկային պորտֆելի արագ աճման տեմպը, ինչպես նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը նախադրյալներ էին ստեղծել վարկերի որակի վատթարացման համար: Սակայն պետք է նշել, որ տարբերություն վերջինիս, 2009 թվականին վարկերի տրամադրման և ետ վերադարձման գծով վատ երևույթներ չարձանագրվեց, մասնավորապես երկրի ներսում:


Հաշվի առնելով վարկային ռիսկի դերը՝ պարզվում է, որ վարկային ներդրումները 2009 թվականի ընթացքում 2008 թվականի նկատմամբ ավելացել են 23.9%-ով կամ 155.5 մլրդ. դրամով և կազմել են 806.2 մլրդ. դրամ: Միաժամանակ, 2009 թվականին, բացառությամբ սպառողական վարկերի, մյուս բոլոր ոլորտների վարկային ներդրումներում արձանագրվել է աճման միտում, նպաստելով ոչ միայն երկրի տնտեսական աճին, այլ նաև վերջին հաշվով բանկային համակարգի շարունակական զարգացմանը: Ընդհանուր առմամբ, եթե մինչև 2009

¹ ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը (զարգացումը, կարգավորումը և վերահսկողությունը), Երևան, 2009, էջ 41:

թվականը առևտրային բանկերի վարկավորման կառուցվածքում գերակշռում էին սպառողական վարկերը, ապա հաշվետու տարում գերազանցապես վարկավորվել է արդյունաբերության ճյուղը, ինչի արդյունքում էլ վարկային պորտֆելում կտրուկ մեծացավ այդ վարկերի տեսակարար կշիռը՝ 19.7%-ի չափով (տե՛ս գծապատկեր 1-ը)¹:

Գծապատկեր 1

Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի



Արդյունաբերության ճյուղում տրամադրված վարկերն ավելացել են 71.2%-ով կամ 61.1 մլրդ. դրամով, գյուղատնտեսությունում՝ 21.1%-ով կամ 7.7 մլրդ. դրամով, շինարարությունում՝ 37.1%-ով կամ 14.7 մլրդ. դրամով, տրանսպորտի և կապի ճյուղում՝ 50.7%-ով կամ 5.2 մլրդ. դրամով, առևտրի ճյուղում՝ 10.2%-ով կամ 13.5 մլրդ. դրամով, հանրային սնունդի և սպասարկման այլ ոլորտներում՝ 30%-ով կամ 6.8 մլրդ. դրամով, հիփոթեքային վարկերում՝ 0.4%-ով կամ 0.3 մլրդ դրամով, այլ ոլորտներում՝ 30.0%-ով կամ 1.8 մլրդ. դրամով, իսկ սպառողական վարկերում արձանագրվել է նվազում՝ 21.8%-ի կամ 38.1 մլրդ. դրամի չափով²:

Ելնելով վերոշարադրյալից կարող ենք փաստել, որ ՀՀ բանկային համակարգում ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման՝ Հերֆինդալ-Հիրշմանի մեթոդի կենտրոնացվածության գործակիցը, հիմնականում ի հաշիվ բարձր տեսակարար կշիռ ունեցող սպառողական վարկերի նվազման, 2008 թվականի համեմատ իջել է 0.024 կետով և կազմել է 0.141:

Միաժամանակ, ըստ տնտեսության ճյուղերի վարկային ներդրումների կենտրոնացվածության մակարդակը նվազել է 2009 թվականի վերջի դրությամբ (գծապատկեր 1), քանի որ նույն տարվա սկզբին ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող սպառողական վարկերի ծավալը նույնպես իջել են, իսկ ավելի փոքր տեսակարար կշիռ ունեցող արդյունաբերության ճյուղի վարկերը կտրուկ ավելացել են:

Վարկային ռիսկի հետ կապված կարևորվում են ՀՀ բանկային համակարգի նորմատիվային ցուցանիշները, և ըստ գծապատկեր 2-ի³ 2001 թվականի վերջի դրությամբ կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմել է 28.4%, մեկ փոխառուի գծով ռիսկը առավելագույն չափի ցուցանիշը՝ նորմատիվային կապիտալի 15.9%-ը, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 104.5%-ը, բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 2.9%-ը, բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 36:


² ՀՀ ԿԲ տեղեկագիր (հունվար), 2011թ. էջ., 74-77:

³ ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը (գարգացումը, կարգավորումը և վերահսկողությունը), Երևան, 2009, էջ 41:

առավելագույն չափի ցուցանիշը՝ 8.7%-ը: Այսինքն՝ վերոնշյալ ցուցանիշները վկայում են, որ այդ ռիսկերը կառավարելի շրջանակներում են:

Գծապատկեր 2

Նորմատիվային ցուցանիշները՝ ըստ բանկերի (31.12.2009 թ. դրությամբ)




Ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ կարևորվում է նաև արտարժույթային ռիսկը: Այսպես, 2008 թվականի կեսերից սկսած ազգային արժույթի արժեզրկման ճնշումների, բանկային համակարգից խնայողությունների արտահոսքի և դրամային ավանդները ԱՄՆ դոլարով փոխարինման գործընթացների հետևանքով, տվյալ համակարգում առաջացած արտարժույթի իրացվելիության ու կապիտալի բավարարության հետ կապված ռիսկերը չեզոքացնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 2009 թվականի սկզբից մեծացրեց միջամտությունն արտարժույթի շուկայում, փորձելով կայունացնել փոխարժեքը: Արդյունքում 2009թ. փետրվարին ՀՀ դրամի միջին անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց 15.8%-ով: Այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքների տատանումների հետևանքով բանկային համակարգը արտարժույթի վերագնահատման առումով ունեցավ 5.7 մլրդ. դրամի չափով վնաս, որը կազմել է նորմատիվային կապիտալի 2.2%-ը, նախորդ տարվա 0.4%-ի փոխարեն: Արտարժույթի վերագնահատման եկամուտ են ապահովել 8, իսկ վնաս են ունեցել թվով 14 առևտրային բանկեր: Միաժամանակ, արտարժույթի ռիսկի գնահատման VAR մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 2009թ. վերջի դրությամբ բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում մեկօրյա հնարավոր վնասները 0.95 հավանականությամբ չեն գերազանցի 2 մլրդ. դրամը: Հատկանշական է նաև այն իրողությունը, որ ՀՀ բանկային համակարգն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում հաշվետու տարում ապահովել է 13.8 մլրդ. դրամի չափով եկամտի ստացում, չնայած 2008 թվականի նկատմամբ նվազել է 5.7%-ով:

Առևտրային բանկերի գործունեության կարգավորման համար իրացվելիության ռիսկն ունի իր կարևոր տեղը, մասնավորապես ՀՀ բանկային համակարգի կողմից իրականացված ճիշտ վարկային քաղաքականության հետևանքով 2009թ. վերջին ակտիվների 29.5% հավելվածի տեմպը կրկնակի անգամ գերազանցեց վարկերի 14.0% հավելվածի տեմպին և, ինչի արդյունքում էլ զգալի մեծացավ այդ համակարգի իրացվելիության մակարդակը: Իրացվելիության ռիսկի վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ունենալու համար ներկայացնենք ըստ առևտրային բանկերի 2009թ. դրությամբ իրացվելիության փաստացի նորմատիվային ցուցանիշները (տես գծապատկեր 3-ը)¹:

¹ ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը (գարգացումը, կարգավորումը և վերահսկողությունը), Երևան, 2009, էջ 43:

Իրացվելիության նորմատիվային ցուցանիշները՝ ըստ բանկերի (31.12.2009թ. դրությամբ)



Պարզվում է, որ տարվա ընթացքում ՀՀ բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների ծավալն աճել է 88.8%-ով, կամ բացարձակ առումով կազմել է 420.8 մլրդ. դրամ և արդյունքում ընդհանուր ու ընթացիկ իրացվելիությունների փաստացի նորմատիվային ցուցանիշներն ավելացել են համապատասխանաբար 10.6 և 37.7 տոկոսային կետերով՝ կազմելով 34.4% և 140.8%: Չնայած դրանք սահմանված նորմատիվներից բարձր են, սակայն վտանգ չեն պարունակում, մանավանդ որ 2009թ. բանկային համակարգը երկրից միջոցների արտահոսքի խնդրի առջև չկանգնեց:

Ֆինանսական ռիսկերից գնային ռիսկը ՀՀ բանկային համակարգում գնահատվում է բավականաչափ ցածր, և 2009թ. ընթացքում այդ ռիսկով պայմանավորված վնասներ գրեթե տեղի չի ունեցել: Միայն առևտրային նպատակներով ստացվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգն ունեցել է 6 մլն. դրամի վնաս, իսկ հիմնական միջոցների վերագնահատումից՝ 288 մլն. դրամի չափով վնաս: Անհրաժեշտ է նշել, որ ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում անհամեմատ փոքր է, և դրան համահունչ էլ գնային ռիսկը գնահատվում է բավականին ցածր: Իսկ ահա ՀՀ բանկային համակարգի կողմից 2009 թվականի վերջում համեմատաբար ռիսկային ոչ պետական արժեթղթերում իրականացված ներդրումները կազմել են 4.3 մլրդ. դրամ, որը նորմատիվային ընդհանուր կապիտալի 1.7%-ն է, և նշված արժեթղթերի գների նույնիսկ կտրուկ տատանումները էական վնաս չեն կարող պատճառել բանկային համակարգին:

ՀՀ բանկային համակարգում եկամտաբեր ակտիվների և ավանդների ներգրավման գործընթացում հույժ կարևոր նշանակություն ունի տոկոսադրույքի ռիսկը, քանի որ ակտիվների և պարտավորությունների միջին ժամկետայնությունը կարճատև է: Ուստի այդ առումով բանկային համակարգը շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների ժամանակ կարող է արձագանքել և վերանայել տոկոսադրույքները: Հատկապես այս հարցում ամենամեծ ռեթակատարումն ունի ՀՀ կենտրոնական բանկն իր վարած ճիշտ դրամավարկային քաղաքականության շնորհիվ: Պարզվում է, որ համաձայն տոկոսադրույքի ռիսկի դյուրացիայի մեթոդով իրականացված հաշվարկների, ընդհանուր շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով աճի դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կնվազի 1.5 մլրդ. դրամով կամ նորմատիվային ընդհանուր կապիտալի 0.6%-ի չափով:

Այսպիսով, ամփոփելով մեր կողմից վերլուծության արդյունքները, կարող ենք գալ այն հետևության, որ ֆինանսատնտեսական ճգնաժամից աստիճանաբար խուսափելու ու դրան համահունչ առևտրային բանկերի գործունեությունը կարգավորելու, դրա արդյունավետության ավելացմանը նպաստելու համար խիստ կարևորվում է բանկային համակարգի ֆինանսական ռիսկերի ճշգրիտ կառավարումը:

ՎԻԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՆԿԳԱՄ Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.*

ՀԱՄԱՇԽԱՐԻԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսության մեջ բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում հետճգնաժամային զարգացումների միտումները, ինչպես նաև առանձին երկրների տնտեսությունների վերականգնման արագությունը: Այս հիմնահարցի կարևորությունը պայմանավորված է այն մտահոգություններով, թե աշխարհի տնտեսությունը երբ կվերադառնա 2008թ. զարգացման մակարդակին:

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից 2011 թվականի ապրիլ¹ ամսին հրատարակված «Համաշխարհային տնտեսության տեսլականը» զեկույցներում փորձ է արվել կանխատեսել համաշխարհային տնտեսության մինչև 2016թ. ընկած ժամանակաշրջանի զարգացման միտումները: Այս զեկույցում ուսումնասիրվել են հիմնականում համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունների վերականգնման միտումները, ինչպես նաև առաջ է քաշվել «երկու արագությամբ (Two-Speed Recovery)» վերականգնման գաղափարը: Այսինքն՝ համաշխարհային տնտեսության վերականգնումը համաչափ բնույթ չի ստացել, որը հանգեցրել է միաժամանակ և՛ արագ, և՛ դանդաղ վերականգնման, մյուս կողմից վերականգնման հիմնահարցերի շարքում առաջնային նշանակություն են ստացել՝ գործազրկությանը, գյուղատնտեսական ապրանքների արտադրությանը և կապիտալի հոսքերին առնչվող հիմնահարցերը:

Վերոնշյալ զեկույցում մանրամասն վերլուծվում են առանձին երկրների տնտեսությունների մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության միտումների վրա, ինչպես նաև առանձին տարածաշրջանների վերականգնման միտումները, այսինքն՝ դիտարկումները կատարվել են տարածաշրջանային և առանձին երկրների մակարդակներով:

2003-2010թթ. ընթացքում աշխարհի ՀՆԱ-ն աճել է 37 տրլն դոլարից հասնելով 62 տրլնի, որը նշանակում է աշխարհի տնտեսությունն ունի բավականին արագ զարգացման տեմպեր: Ինչ վերաբերում է 2009 և 2010թթ. միջև ընկած ժամանակահատվածին, ապա հետաքրքիրն այն է, որ 2010թ. աշխարհի ՀՆԱ-ն արդեն իսկ դրամական արտահայտությամբ մոտ 1.7 տրլն դոլարով գերազանցել է 2008թ. մակարդակը: Դիտարկվող ժամանակաշրջանի առաջին կեսում աշխարհի ՀՆԱ-ն աճում էր տարեկան 3-4 տրլն դոլարով, իսկ վերջին մի քանի տարիներին այն մոտեցել էր 5-6 տրլն ԱՄՆ դոլարի աճի մակարդակին, այդ միտումը խախտվել է միայն


¹ World Economic Outlook April 2011, Tensions from the Two-Speed Recovery, Unemployment, Commodities, and Capital Flows International Monetary Fund, 251 p.

2009թ., և անկումը կազմել է 4 տրլն ԱՄՆ դոլարից ավելի: Հետաքրքիրն այն է, որ բավականին արագ աճի տեմպեր են նախատեսվում 2011թ., որի արդյունքներով աշխարհը կմոտենա 68.6 տրլն դոլարի հասնող ՀՆԱ-ի: Իսկ արդեն 2016թ. համաշխարհային տնտեսության թողարկման ընդհանուր ծավալը կկազմի 90 տրլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ ևս 5 տարի և 2001թ. ՀՆԱ-ի համեմատությամբ աշխարհի ՀՆԱ-ն կեռապատկվի:

Գծապատկեր 1

Աշխարհի տնտեսության թողարկման արդյունքները¹

(Մլրդ դոլար)




Հետաքրքիր է նաև այն, որ աշխարհի ՀՆԱ-ն համաշխարհային գնողունակության պարիտետով հաշվարկելու պարագայում գրեթե յուրաքանչյուր տարի 10-11 տրլն ԱՄՆ դոլարով գերազանցում է շուկայական կամ ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի ցուցանիշը: Բացառություն է կազմում միայն 2008թ., երբ գնողունակ ՀՆԱ-ն շուկայականից տարբերվել է 9 տրլն դոլարով, իսկ այնուհետև հաջորդող տարիների միտումը փոխվում է ի օգուտ գնողունակ ՀՆԱ-ի, այսինքն՝ 2009թ. համարժեքային գնողունակության պարիտետով հաշվարկված ՀՆԱ-ն շատ մոտ է եղել, դեռ ավելին, չնչին չափով է գերազանցել 2008թ. մակարդակը, վերջինս նշանակում է, որ գնողունակության անկում ճգնաժամի ժամանակ չի եղել: Իսկ օրինակ 2016թ. սպասվող գնողունակ ՀՆԱ-ն շուկայական գներով հաշվարկված ՀՆԱ-ն գերազանցելու է 15 տրլն ԱՄՆ դոլարով և հասնելու է մոտ 105 տրլն ԱՄՆ դոլարի:

Հարկ ենք համարում, նաև անդրադառնալ աշխարհի տնտեսության վերաբերյալ հետ-ճգնաժամային վերականգնման ժամանակաշրջանի համար կատարված կանխատեսումներին, որոնք դիտարկելով տոկոսային փոփոխությունների համատեքստում ակնհայտ է դառնում, թե ինչպես են փոփոխվում կամ վերականգնում համաշխարհային տնտեսության աճի տեմպերը:

¹ World Economic Outlook April 2011, Tensions from the Two-Speed Recovery, Unemployment, Commodities, and Capital Flows International Monetary Fund, p. 181.

Աշխարհի տնտեսության աճի միտումները¹

(%)



Համաշխարհային տնտեսությունն ամենաստորին անկման կետում է գտնվել 2009թ., այդ ժամանակ աշխարհի իրական տնտեսական աճը կազմել է -0.5%, իսկ շուկայական գներով ՀՆԱ-ի հաշվարկման պարագայում տոկոսային անկումը կազմել է -2.1%: 2010թ. աշխարհի համար հանդիսացել է վերականգնման տարի և կարելի է փաստել, որ նախորդ տարվա անկման պատկերի վրա աշխարհում տնտեսական աճի արագ տեմպեր են արձանագրվել, այսինքն՝ 2008թ. աճի միտումներն արդեն 2010թ. դրությամբ տոկոսային արտահայտությամբ գրեթե կրկնապատկվել են, և աշխարհի իրական տնտեսական աճը մոտեցել է 5%-անոց շեմին: Իհարկե, 2011թ. կանխատեսումները, որոնք արվել են ԱՄՆ-ի փորձագետների կողմից, դեռևս չեն ընդգրկում Ճապոնիայի տնտեսության բացասական ազդեցությունների տարածման հնարավորությունները, սակայն հաշվի առնելով Ճապոնիայի համաշխարհային տնտեսության մեջ ունեցած մեծ դերակատարումը կարելի է նաև մտավախություն ունենալ, որ համաշխարհային տնտեսության վրա «Դամոկլյան սրի» նման կախված է մեկ այլ ճգնաժամի խոշոր ալիք: Իսկ այդ ալիքն իրենց վրա առաջին հերթին կրելու են ասիական տարածաշրջանի երկրները, որոնք մեծ կախվածություն և կապվածություն ունեն ճապոնական տնտեսության հետ:

Իսկ ընդհանուր առմամբ, եթե բացառում ենք ճապոնական տնտեսության հնարավոր բացասական ազդեցություններն ամբողջ համաշխարհային տնտեսության վրա, ապա նկատում ենք, որ աշխարհի իրական տնտեսական աճի տեմպերը տատանվելու են 4.4-4.7% միջակայքում, և այդ միտումները պահպանվելու են մինչև 2016թ.: Իհարկե, ակնկալել նախաճգնաժամային 5%-ից բարձր աճ բավականին բարդ է, քանի որ տվյալ ժամանակաշրջանը, այն է՝ 2006-2007թթ. համարվում է աշխարհի տնտեսության գերտաքացման ժամանակաշրջաններ, քանի որ աշխարհի ՀՆԱ-ն տվյալ ժամանակահատվածում գերազանցել էր իր օգտագործման ներուժի (պոտենցիալի) 100%-անոց մակարդակը:

Տարածարջանային զարգացման առումով 2009թ. ավարտին ամենանպաստավոր դիրքում են գտնվելու Ասիայի զարգացող երկրները, որ արձանագրել են 7.2% տնտեսական աճ:

¹ World Economic Outlook April 2011, Tensions from the Two-Speed Recovery, Unemployment, Commodities, and Capital Flows International Monetary Fund, p. 181.


Այս վերջին ցուցանիշից կարելի է հետևություն անել նաև, որ ճգնաժամային իրավիճակների առումով ամենակայուն տնտեսություն կամ ճգնաժամի առավել մեծ հաղթահարման ներուժ ունեցող երկրները Ասիայի տարածաշրջանի զարգացող երկրներն են, որոնք իրենց ներքին միջոցները կարողացել են առավել արդյունավետ կերպով դիվերսիֆիկացնել և հարմարվել արտաքին միջավայրում տեղի ունեցող բացասական ազդեցություններին և զարգացումներին: Այստեղ կան երկու կարևոր տարրեր, որոնցով աչքի են ընկել այդ երկրները, այն է՝ *տնտեսական կայունությունն ապահովող ուժեղ ցանցերի համակարգը*, ինչպես նաև *ճգնաժամի փոխանցման ուղիների և բացասական ազդեցությունների մեղմման կլանիչների կամ աղտորեցիկների¹ առկայությունը*: Այս երկու կարևորագույն տարրերն ասիական երկրների համար ապահովել են և՛ դիմադրողականություն, և՛ ճկունություն: Այսինքն՝ այն ուղիները, որոնցով, սովորաբար, ճգնաժամը ներթափանցում է որևէ երկիր, պետք է կարողանալ փակել կամ, եթե անգամ զոյություն ունի ներթափանցում՝ նվազագույնի հասցնել այդ բացասական ազդեցությունը²:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանում 2008թ. արձանագրվել է՝ 3.2% տնտեսական աճ, նախորդ տարվա 5.5%-ի փոխարեն, իսկ 2009թ. տնտեսական անկում է գրանցվել՝ -3.6%, 2010թ. նախատեսվում է աճ՝ 4.2%-ի չափով, իսկ 2016թ.՝ կանխատեսվում է 3.9% տնտեսական աճ: Տարածաշրջանային համադրությունների միջոցով կարող ենք եզրակացնել նաև, որ ԱՊՀ երկրներից հետո ամենամեծ անկում ապրած տարածաշրջանն է Կենտրոնական և Արևելյան Եվրոպան: ԱՊՀ տնտեսական անկումը 2009թ. կազմել է -6.4%, իսկ 2010թ. արդեն իսկ ապահովվել՝ մոտ 4.6% աճ: Այսինքն՝ 6-9% նախաճգնաժամային աճ ունեցող ԱՊՀ տարածաշրջանը հետճգնաժամային ժամանակաշրջանում գրեթե կիսով չափ կրճատելու է իր զարգացման տեմպերը, քանի որ մինչև 2016թ. նախատեսվում է, որ աճի տեմպերը կտատանվեն 4.3-5% միջակայքում:

Գծապատկեր 3

Աշխարհի տնտեսության առանձին տարածաշրջանների ՀՆԱ-ի աճի միտումները³

(%)



¹ «Աղտորեցիկ» տերմինը վերցված է քիմիայից, և այստեղ դիտարկվում է աղտորեցիկային երևույթը, որը տարբեր տարրերի կլանումն է մեկ այլ տարրի կամ տարրերի կողմից:

² Asian Development Bank, Asian Development Outlook 2009, Broadening openness for a resilient Asia, Mandaluyong City, Philippines: Asian Development Bank, 2009, 172 p.

³ World Economic Outlook April 2011, Tensions from the Two-Speed Recovery, Unemployment, Commodities, and Capital Flows International Monetary Fund, pp. 185-187.

Ուսումնասիրելով Ասիայի զարգացած երկրների աճի միտումները՝ նկատում ենք, որ աճի տեմպերը գրեթե նույնությամբ պահպանվել են նախաճգնաժամային և հետճգնաժամային ժամանակաշրջանում, դրանք ամենաբարձրն են ամբողջ աշխարհում՝ 8.4-9.5%: Այնուամենայնիվ, ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժը որոշ չափով կցնցի ասիական տնտեսության կայուն հիմքերը, սակայն հնարավոր է նաև, որ Չինաստանի և Հնդկաստանի նման տնտեսությունները կարողանան լրացնել առաջացած բացը և ավելի կայուն դիրքեր գրավեն համաշխարհային տնտեսության մեջ: Այսինքն՝ Չինաստանը կարող է նաև ավելի մեծ թափ հավաքել և ամրապնդել աշխարհի երկրորդ տնտեսության իր վարկանիշը:

ԱՄՆ-ի փորձագետների կողմից 2011թ. ապրիլին հրատարակված «Համաշխարհային տնտեսության տեսլականը» զեկույցում կանխատեսվում է, որ Հայաստանին 2011-2016թթ. ընկած ժամանակահատվածում սպասվող տնտեսական աճը չի գերազանցում 4.6%-ի սահմանը, որը նախատեսվում է 2011թ., իսկ 2012-ին այն կկազմի 4.3%, սակայն 2016-ին այն կհիշնի մինչև 4%: Հետաքրքիր են նաև ԱՄՆ-ի կանխատեսումները ՄԳԻ-ի առումով, նշվում է, որ բարձր ինֆլյացիոն տարի կլինի 2011թ., քանի որ ՄԳԻ-ն կաճի 9.3%-ով, իսկ 2012-ին այն կհիշնի մինչև 5.5%, իսկ արդեն 2016թ. այն կհասնի 4%-ի¹: Այս կանխատեսումները նաև շատ մոտ են և գրեթե չեն տարբերվում ՎՋԵԲ-ի կողմից կատարված կանխատեսումներից, որոնք հրատարակվել են 2011թ. հունվարի 19-ի դրությամբ:

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող զարգացումների հաշվառումը, այն էլ կանխատեսման համատեքստում, անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր երկիր իր տնտեսական քաղաքականությունը կառուցելիս հաշվի նստի համաշխարհային տնտեսական զարգացումների կարճաժամկետ և միջնաժամկետ տնտեսական փոփոխությունների սցենարների հետ: Եվ ավելի լավ է պատկերացում ունենալ կանխատեսման առանձին սցենարներով զարգացման վերաբերյալ, քան թե իր տնտեսական քաղաքականությունը կառուցի անորոշության պայմաններում:

Այս համատեքստում պետք է նշել, որ աշխարհում առաջացել է զարգացման տեմպերի երկու միտում, և երկրների որոշ մասն ունի ավելի մեծ առաջանցիկ տեմպեր, քան՝ մյուսները, որը փաստում է համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող վերադասավորումների և երկփեղկվածության մասին, այն կտանի աճի ցածր տեմպեր ունեցող երկրների դիրքերի թուլացման, իսկ դա արդեն ահազանգ է այդ երկրների համար:

Համաշխարհային տնտեսության զարգացման միտումներն այսքանով չեն սահմանափակվում և պահանջում են խորը ու գիտականորեն հիմնավորված ուսումնասիրություններ, բացահայտելու համար այն արդյունավետ քաղաքականության տարբերակները, որոնք կունկրետ երկրին կընձեռեն զարգացման հնարավորություններ:

¹ World Economic Outlook April 2011, Tensions from the Two-Speed Recovery, Unemployment, Commodities, and Capital Flows International Monetary Fund, pp. 185, 191.

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՄՈՂԵԼՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, բոլոր երկրներն ունեն բաժնետերերի իրավունքների պաշտպանության տարբեր մակարդակ, ինչով էլ պայմանավորված է իրենց՝ արժեթղթերի շուկայի զարգացման տարբեր մակարդակները: Այստեղից հարց է առաջանում, թե ինչո՞ւ արժեթղթերի շուկայի զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրները չեն ձգտում ներդրողների պաշտպանության պրակտիկայի կատարելագործմանը: Հարցին լիարժեք պատասխանելու համար անհրաժեշտ է քննարկել մի շատ կարևոր հանգամանք, ինչն ինքնին կհանգեցնի առաջադրված հարցի պատասխանին. ինչպե՞ս է զուգակցվում բոլոր գործոն-ազդանշանների ազդեցությունը առանձին երկրների համար՝ նրանք բոլորը գործում են միևնույն մակարդակի վրա, թե՞ մի գործոն-ազդանշանի թույլ ազդեցությունը պատճառ է հանդիսանում մյուսների առավել ուժեղ ազդեցության:

Առաջադրված հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել ֆինանսական շուկաների կազմակերպման մոդելները:

Համաշխարհային տնտեսական համակարգում ձևավորվել են երկու այդպիսի մոդելներ՝ անգլո-ամերիկյան և գերմանական: Ընդ որում, այս մոդելները տարբերվում են ոչ միայն ֆինանսական ինստիտուտների, ֆինանսական գործիքների ձևերով, այլև արժեթղթերի շուկայի զարգացման և սեփականության համակենտրոնացման, ինչպես նաև կառուցվածքի նկատմամբ տարբեր մոտեցումներով¹:

Փորձենք ներկայացնել յուրաքանչյուր մոդելի առանձնահատկությունները:

Անգլո-ամերիկյան իսկ ակնհայտ է, որ **անգլո-ամերիկյան մոդելը** նախ և առաջ բնութագրական է ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային: Այս համակարգի կարևոր առանձնահատկություններին կարելի է դասել.

- բազմաթիվ ձեռնարկություններ, որոնց բաժնետոմսերը բորսայում ունեն գնանշումներ,
- բաժնետոմսերի սեփականության իրավունքի հաճախակի փոփոխությունը պայմանավորում է արժեթղթերի շուկայի բարձր իրացվելիություն,
- սեփականությունը ցրված է բազմաթիվ սեփականատերերի միջև (գլխավորապես, ինստիտուցիոնալ ներդրողների և ֆիզիկական անձանց),
- շատ բարձր է արժեթղթերի շուկայի դերը ձեռնարկության դրամական ռեսուրսների ներգրավման մեջ՝ ինչպես արժեթղթերի, այնպես էլ փոխառությունների թողարկման ճանապարհով:

Անգլո-ամերիկյան մոդելի պայմաններում ձեռնարկությունը գտնվում է փոքր ներդրողների ձեռքում, որոնց համար բաժնետոմսերի սեփականությունը հիմնականում կրում է առևտրային բնույթ կամ ուղղված է որոշակի եկամտի երկարատև ստացմանը: Այդպիսի ներդրողների համար ձեռնարկությունը ղեկավարելու հնարավորությունը երկրորդական նշանակություն ունի: Մենեջերը ձեռնարկության վերահսկողությունից ձգտում է ստանալ հնարավորինս շատ օգուտներ: Ընդ որում, նկատի ունենալով, որ ձեռնարկության ղեկավարման մեջ

¹ См. Миркин Я. М. Как структура собственности определяет фондовый рынок? // Рынок ценных бумаг. 2000, №1, с. 13-15.

բաժնետեր-սեփականատերերը քիչ են ներգրավված, այս հնարավորությունը գրեթե սահմանափակված չէ:

Մյուս կողմից, անգլո-ամերիկյան մոդելով զարգացած արժեթղթերի շուկայում տեղեկատվության բացահայտման անհրաժեշտությունը, ինչպես նաև արժեթղթերի շուկայում ձեռնարկության մեկնելի շահագրգռվածությունը հանդիսանում են գործոններ, որոնք հետ են պահում մեկնելի սեփական շահերից բխող գործողություններից:

Անգլո-ամերիկյան մոդելի պայմաններում փոխառնված միջոցների կարևորագույն մասը ոչ ֆինանսական ձեռնարկությունները ստանում են փոխառությունների տեղակայման օգնությամբ: Այս ճանապարհը ենթադրում է ֆինանսական միջնորդների (մասնավոր ապահովագրական ընկերություններ, մասնավոր կենսաթոշակային ֆոնդեր, խնայողական բանկեր և այլն) հզոր համակարգ: ԱՄՆ-ում փոխառությունների տեղակայմանը հասնում է ողջ փոխառնված ռեսուրսների մոտ 60%-ը, Կանադայում այս մասնաբաժինը գերազանցում է փոխառնված միջոցների մեկ երրորդը¹:

Գերմանական մոդելը բնորոշ է Եվրոպա մայրցամաքի և Ճապոնիայի տնտեսություններին: Գերմանական մոդելը բնութագրվում է.

- ոչ մեծ քանակությամբ ձեռնարկություններով, որոնց բաժնետոմսերը սակարկվում են բորսայում,
- գործարքների ոչ մեծ ծավալով, ֆոնդային շուկայի թույլ իրացվելիությամբ,
- կորպորացիաների, ինստիտուտների, առանձին անձանց կամ ընտանիքների, պետության ձեռքերում համակենտրոնացված սեփականությամբ,
- դրամական ռեսուրսների ներգրավման համար արժեթղթերի շուկայի թույլ կիրառմամբ, ինչին փոխարինում է բանկային վարկավորումը:

Իտալիայում և Ֆրանսիայում ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալը կենտրոնացված է խոշոր սեփականատերերի ձեռքերում, որոնք միաժամանակ հանդիսանում են ղեկավարության գլուխ կանգնած հարուստ ընտանիքներ: Գերմանիայում 1980-ական թվականների վերջում 200 խոշոր ձեռնարկություններից մոտ 90%-ը ուներ առնվազն մեկ սեփականատեր, որն ուներ 25%-ից ոչ քիչ բաժնետոմս: Այդ նույն ժամանակ Մեծ Բրիտանիայում 200 խոշորագույն ձեռնարկություններից երկու երրորդը չուներ 10%-ից ավել փաթեթով ոչ մի բաժնետեր²:

Ավելորդ չէ ևս մեկ անգամ նշել, որ խոշոր սեփականատերերի համար առաջնակարգ կարևորություն ունի ձեռնարկության վերահսկողությունը: Ելնելով իրենց դիրքերից՝ խոշոր փաթեթների տերերը ձեռնարկության մասին փակ տեղեկություն ստանալու հնարավորություն ունեն, ուստի նրանց համար ավելի հեշտ է վերահսկել գործադիր ղեկավարության գործունեությունը առանց տեղեկության հրապարակային բացահայտման ընթացակարգի:

Ֆինանսական համակարգի գերմանական մոդելով երկրներում փոխառված միջոցների հիմնական մասը բաժին է ընկնում բանկային վարկերին: Օրինակ, Ճապոնիայում 1970-1994թթ. ժամանակահատվածում բանկային վարկերը կազմել են ոչ ֆինանսական կորպորացիաների կողմից ներգրավված բոլոր փոխառված միջոցների ավելի քան 3/4-ը: Գերմանիայում այս մասնաբաժինը գերազանցում է փոխառնված ռեսուրսների կեսը³:

¹ Энтов Р., Радыгин А., Май В. И др. Развитие российского финансового рынка и новые инструменты привлечения инвестиций. – М.: ИЭПП АНХ РАН, 1998, с. 3.

² Franks, J. R., Mayer C. Corporate Control: A Synthesis of the International Evidence: Working Paper / London Business School. – London: LBS, 1992.

³ Энтов Р., Радыгин А., Май В. И др. Развитие российского финансового рынка и новые инструменты привлечения инвестиций. – М.: ИЭПП АНХ РАН, 1998, с.4.

Աղյուսակ 1-ում ցույց է տրված սեփականության կառուցվածքը մի շարք զարգացած երկրներում, որոնք ունեն ֆինանսական շուկաների կազմակերպման տարբեր մոդելներ: Օրինակ, ելնելով սեփականատերերի որոշակի տեսակների մասնաբաժնից՝ կարելի է կարծիք կազմել որոշակի երկրին բնորոշ սեփականության համակենտրոնացման մակարդակի մասին: Օրինակ՝ որպես կանոն, պորտֆելային (մանր) ներդրողներ հանդիսանում են տնային տնտեսությունները, կենսաթոշակային, ներդրումային ֆոնդերը, ապահովագրական ընկերությունները: Այս տեսակի ներդրողների առավել բարձր մասնաբաժինը բնութագրական է ԱՄՆ-ին (80.7%), Մեծ Բրիտանիային (79.7%), իսկ նվազագույնը՝ Ֆրանսիային (23.3%), Գերմանիային (34.6%), Իտալիային (37.1%):

Աղյուսակ 1

Սեփականության կառուցվածքը զարգացած երկրներում (%-ներով ընդհանուր թվից)*

| Սեփականատիրոջ տեսակը | Գերմանիա | Ֆրանսիա | Իտալիա** | Մեծ Բրիտանիա | ԱՄՆ | Ճապոնիա |
|--|----------|---------|----------|--------------|------|---------|
| | 1995 | 1995 | 1993 | 1995 | 1995 | 1995 |
| Ինստիտուցիոնալ ներդրողները, այդ թվում | 30.3 | 7.9 | 11.9 | 52.4 | 44.5 | 35.8 |
| բանկերը | 10.3 | 4.0 | 10.4 | 2.3 | 0.2 | 13.3 |
| կենսաթոշակային ֆոնդերը, ապահովագրական ընկերությունները | 20.0 | 3.9 | 1.5 | 50.1 | 44.3 | 22.5 |
| Տնային տնտեսությունները | 14.6 | 19.4 | 35.6 | 29.6 | 36.4 | 22.2 |
| Մասնավոր ձեռնարկությունները | 50.8 | 69.3 | 24.2 | 17.8 | 19.1 | 41.5 |
| Պետական մարմինները | 4.3 | 3.4 | 28.3 | 0.2 | - | 0.5 |

* Տվյալները համապատասխան տարվա վերջի դրությամբ են:

** Իտալիային վերաբերվող տվյալները վերցված են Corporate Governance in Europe. Working Report N 12 of a CEPS Working Party /Centre for European Policy Studies.- Brussels:CEPS, 1995, (p. 14) աշխատությունից:

Աղբյուրը՝ Миркин Я. М. Как структура собственности определяет фондовый рынок? // Рынок ценных бумаг. – 2000. –№1. – С. 13-15.

Քաղաքական հետազոտությունների Եվրոպական կենտրոնի աշխատությունում¹ նշվում է, որ այս երկու մոդելների միջև ներկայումս նկատվում է սահմանների վերացում, ինչի պատճառ են հանդիսանում ֆինանսական շուկաների լիբերալիզացիան և սեփականաշնորհումը, ինչպես նաև տնտեսական և ֆինանսական ինտեգրացման և դիվերսիֆիկացիայի գործընթացները, որոնք աստիճանաբար «ուղղվում են» ֆինանսական շուկաների կազմակերպման նախկին ազգային առանձնահատկություններին և ուժեղացնում ինստիտուցիոնալ ներդրողների դերը:

Օրինակ, համաշխարհային պրակտիկայում ձևավորվել է ֆինանսական կառույցի որոշակի բազային հարաբերություն՝ ձեռնարկության սեփական և ներգրավված միջոցների միջև: Այն երկրներում, որտեղ ձեռնարկության ընդհանուր պասիվներում փոխառված միջոցների մասնաբաժինը համեմատաբար բարձր է եղել (օրինակ, Ֆրանսիայում, Իտալիայում), վերջին տասնամյակներին համախառն պարտքի հարաբերությունը ամբողջական ակտիվների նկատմամբ զգալիորեն նվազել է: Ընդհակառակը, ԱՄՆ-ում, որտեղ այս նույն ցուցանիշը փոքր էր, 90-ականների կեսերին այս հարաբերությունը ավելացավ ավելի, քան կեսով: Արդյունքում շատ զարգացած երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա)

¹ Corporate Governance in Europe. Working Report N12 of a CEPS Working Party / Centre for European Policy Studies. – Brussels: CEPS, 1995, p. 5.

համախառն պարտքի հարաբերությունը ամբողջական սկտիվների նկատմամբ հավասարվեց. 90-ական թվականներին այն տատանվում էր 0.5-0.6-ի շուրջ¹:

Այսպես, Ֆրանսիայում և Ավստրիայում, որտեղ 1984թ. սեփական մասնաբաժնի կապիտալը նվազագույնն էր, հետագա տարիներին ավելանում էր ավելի արագ, քան մյուս երկրներում (Ֆրանսիայում սեփական միջոցների մասնաբաժինը 10 տարվա ընթացքում ավելացել է 2.3 անգամ)²:

Մյուս կողմից, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում, որտեղ դիտարկվող ժամանակահատվածի սկզբին սեփական միջոցները առանձնակի մեծ դեր էին խաղում, 90-ականների կեսերին նրանց բաժինը նվազեց՝ ավելի մոտենալով միջին բնութագրերին: Ճապոնիայում համախառն պարտքի հարաբերությունը սեփական կապիտալին՝ գնահատված շուկայական գներով, ընդհուպ մինչև 90-ական թվականների սկիզբը շատ թե քիչ նվազում էր:

Ամերիկյան և անգլիական արդյունաբերական ձեռնարկությունների կողմից փոխառված միջոցների ինտենսիվ կիրառումը 20-րդ դարի վերջին քառորդի ընթացքում ուղեկցվում էր կորպորացիաների կողմից իրենց բաժնետոմսերի մասի աստիճանաբար գնումով. ԱՄՆ-ում 1970թ. մինչև 1994թ. բաժնետիրական կապիտալի կրճատումը կազմել է 7.6%, Մեծ Բրիտանիայում՝ 4.6%³:

Սրա հետ մեկտեղ նույնիսկ այնպիսի երկրներում, ինչպիսին Ճապոնիան է, որտեղ մինչև վերջերս մասնավոր երկարաժամկետ արժեթղթերի շուկան զարգացում չէր ստացել, վերջին տարիների ընթացքում արագ ընդարձակվում է կորպորատիվ փոխառությունների թողարկումը: Թերևս նրանց է բաժին ընկնում փոխառված կապիտալի առայժմ համեմատաբար ոչ մեծ մասնաբաժինը, չնայած այն աճել է, և աճման միտումը շարունակվում է:

Այսպիսով, ֆինանսական շուկաների կազմակերպման այս կամ այն մոդելի գործունեության պայմաններում գոյություն ունեն ներդրողների գործառնական ծախսերի սահմանափակման կամ նվազեցման մեխանիզմներ:

Գերմանական մոդելում արժեթղթերի շուկայի թույլ դերը և բաժնետերերի իրավունքի առավել թույլ օրենսդրական պաշտպանությունը փոխհատուցվում են ձեռնարկության մոնիտորինգում սեփականության բարձր կենտրոնացումով և վարկատու բանկերի զգալի դերով:

Հակառակ դրան, անգլո-ամերիկյան մոդելը բնութագրվում է սեփականության ցածր կենտրոնացումով և ձեռնարկության մոնիտորինգում վարկատուների թույլ դերով, ինչը, այնուամենայնիվ, փոխհատուցվում է օրենսդրությունում բաժնետերերի իրավունքների պաշտպանության ավելի բարձր մակարդակով և արժեթղթերի շուկայի զարգացվածությամբ:

Գրանից կարելի է ենթադրություն անել, որ տնտեսական զարգացման միևնույն մակարդակի վրա գտնվող երկրները, որոնք ունեն ֆինանսական շուկաների կազմակերպման տարբեր մոդելներ, ընդհանուր առմամբ բնութագրվում են ներդրողների գործառնական ծախսերի միևնույն մակարդակով: Օրինակ, Գերմանիան և ԱՄՆ-ը տարբերվում են սեփականության համակենտրոնացումով, բանկային վարկավորման մակարդակով, օրենսդրությունում բաժնետերերի և վարկատուների իրավունքների պաշտպանության մակարդակով, արժեթղթերի շուկայի զարգացմամբ:

Մանր բաժնետերերի գործառնական ծախսերի նվազման գործում երկու գործոններից՝ արժեթղթերի շուկայից և սեփականության համակենտրոնացումից, մեկի գերակայության

¹ Энтов Р., Радыгин А., Мау В. И др. Развитие российского финансового рынка и новые инструменты привлечения инвестиций. – М.: ИЭПП АНХ РАН, 1998, с.4.

² Նույն տեղում, էջ 4:

³ Նույն տեղում, էջ 4-5:

լրացուցիչ վկայություն է հանդիսանում ձայնի իրավունքի արժեքը կամ ապահովագրության գինը (ապահովագիրը) բաժնետիրոջ ձայնի համար:

Գերմանական մոդելով երկրներում մանր բաժնետերերի գործառնական ծախսերի նվազեցման մեջ կարևոր դերը պատկանում է համակենտրոնացված սեփականությանը, ինչը բարձրացնում է ձայնի կարևորությունը և բերում սովորական բաժնետոմսերի հարաբերական թանկացմանը:

Բացի դրանից, ԱՄՆ-ի, Շվեդիայի, Ֆրանսիայի արժեթղթերի շուկաների հետազոտման ձայնի համապատասխան ապահովագիրը պայմանավորված է վերահսկման պայքարում սովորական բաժնետոմսերի պահանջարկով, ինչպես նաև վերահսկողությունից մասնավոր շահույթ ունենալու հնարավորությամբ, օրինակ, աշխատավարձի, թողարկողի կողմից մատակարարողի կամ նրա քվեարկող բաժնետոմսերի տերերի նկատմամբ ավելի արտոնյալ վերաբերմունքի¹:

Քվեարկող բաժնետոմսերի կարևորությունը կախված է նաև վերահսկող կորստից պաշտպանվելու այլընտրանքային մեթոդների առկայությունից՝ մեկ սովորական բաժնետոմսին երկու ձայն տրամադրելու հնարավորությունից և մեկ բաժնետիրոջը տրամադրող ձայների մաքսիմալ քանակի կայացման հնարավորությունից²:

Անգլո-ամերիկյան մոդելի առկայության դեպքում ձայնի կարևորությունը զգալիորեն քիչ նշանակալի է, և ապահովագիրը ձայնի համար ավելի ցածր է, քանի որ.

- բացակայում է պայքարը ձեռնարկությունների վերահսկողության համար,
- սեփականության ցածր համակենտրոնացումը ենթադրում է մանր բաժնետերերի մեծ թիվ առանց խոշոր բաժնետերերի առկայության, ինչը սահմանափակում է ձայնի իրավունքի պահանջարկը,
- գոյություն ունի գործառնական ծախսերը սահմանափակող այլ մեխանիզմ, քան համակենտրոնացված սեփականությունը, օրինակ, արժեթղթերի զարգացած շուկան, բաժնետերերի իրավունքների օրենսդրական պաշտպանությունը:

Այսպիսով, սեփականության համակենտրոնացման բարձր մակարդակը հանդիսանում է արժեթղթերի շուկայի և բաժնետերերի շահերի և իրավունքների օրենսդրական պաշտպանությունը վերահսկելու յուրովի այլընտրանքային մեխանիզմ: Ընդ որում, այս մեխանիզմը արժեթղթերի շուկան ապահովում է դրամական ռեսուրսների ներգրավման այլընտրանքային աղբյուրներով: Օրինակ, հոլդինգների կամ բանկերի ձեռքբերում սեփականության համակենտրոնացման ժամանակ առաջանում է ներքին վարկավորման հնարավորություն: Արժեթղթերի գործիքների մեջ այս դեպքում նախապատվությունը տրվում է արտոնյալ բաժնետոմսերի կամ փոխառություններին:

¹ Muus Christian K. Non-voting shares in France: An empirical analysis of the voting premium: Working paper / Johann Wolfgang Goethe University. – Frankfurt: Johann Wolfgang Goethe University, 1998, p. 6.

² Նույն տեղում, էջ 26:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ԿԱՆԽԻԿ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ
ՔԱՆԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման կարևորագույն նախապայմաններից մեկը տվյալ երկրի երկու հիմնական՝ հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականությունների նկատմամբ հասարակության վստահության ապահովումն ու պահպանումն է: Նման պայմաններում կարևոր է ազգային արժույթի նկատմամբ վստահության մակարդակի բարձրացումը և տնտեսությունում դոլարացման մակարդակի նվազեցումը: Տնտեսությունում դոլարացման մակարդակի աճը կարող է էապես նվազեցնել վերը նշված քաղաքականությունների դերը ճգնաժամային իրավիճակում հայտնված տնտեսության առողջացման և վերականգման հարցում: Մասնավորապես, դոլարացված երկիրն այլևս անկարող է դառնում դրամավարկային քաղաքականության գործիքներն օգտագործել արտաքին ցնցումների կարգավորման, գործարար միջավայրում անկանխատեսելի և կտրուկ տատանումների մեղմման նպատակով: Ըստ այդմ, դրամավարկային քաղաքականությունը դառնում է շատ ավելի պակաս ճկուն՝ ամբողջապես նույնացվելով ընդօրինակվող արժույթը թողարկող երկրի դրամավարկային քաղաքականության հետ, ինչը, բնականաբար, ոչ բոլոր դեպքերում կարող է բխել դոլարացված երկրի տնտեսական շահերից: Բացի այդ, ամբողջովին դոլարացված երկրի կառավարությունն այլևս չի կարողանա արժեգրել սեփական արժույթը՝ արտահանման խթանման նպատակով, կամ էլ բյուջեի պակասուրդը ֆինանսավորել դրամ թողարկելով: Պաշտոնական դոլարացման հիմնական թերություններից մեկը կապում են կենտրոնական բանկի՝ ծայրահեղ իրավիճակներում առևտրային բանկերին վարկերի տրամադրման գործառույթի կորստի հետ, ինչի արդյունքում իշխանությունները կորցնում են ֆինանսական կայունացման կարևորագույն լծակներից մեկը:

«Դոլարացում» հասկացությունն ընդունված է օգտագործել այն իրավիճակներում, երբ որևէ երկրում ԱՄՆ դոլարը (կամ այլ երկրի արժույթը) պաշտոնապես ճանաչվում է որպես օրինական վճարամիջոց (պաշտոնական դոլարացում), կամ երբ տվյալ երկրում առկա է քաղաքացիների կողմից կանխիկ արտարժույթի կամ արտարժույթով ավանդների տնօրինման, տիրապետման և օգտագործման երևույթը (ոչ պաշտոնական դոլարացում): Գրականության մեջ ընդունված են նաև արժույթի (կանխիկի) փոխարինում և ակտիվների փոխարինում հասկացությունները: Արժույթի փոխարինումը բնութագրում է երկրի ներսում իրականացվող գործարքների դիմաց վճարումներում արտարժույթի կիրառումը, իսկ ակտիվների փոխարինումը՝ տվյալ երկրի քաղաքացիների կողմից արտարժույթը որպես կուտակման միջոց օգտագործումը:

Գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, որ տնտեսությունում դոլարացման գործընթաց է սկսվում բարձր գնաճի և տնտեսության անկման հետևանքով: Բացի այդ գոյություն ունի հետևյալ պնդումը, համաձայն որի կայացած արևմտյան երկրներում և նախկին

Խորհրդային Միության երկրներում դոլարացման խորացումն իր բնույթով տարբերվում է: Այսինքն, եթե առաջիններում դոլարացումն առավելապես հետևանք է քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց ակտիվները դիվերսիֆիկացնելու ձգտման, ապա ՆԽՄ երկրներում ավելի կարևոր գործոն է հանդիսանում ազգային արժույթների նկատմամբ վստահության ոչ բավարար մակարդակը¹:

Այս տեսանկյունից հետաքրքրական է Ադամ Հոնիգի² աշխատանքը: Ըստ նրա՝ տնտեսության և ընդհանուր բանկային համակարգի դոլարացման մակարդակը վկայում է տնտեսության խոցելիության բարձր մակարդակի մասին, և այդ գործընթացի վրա փոխարժեքի ռեժիմի ազդեցությունը գերազանահատված է. զարգացող երկրներում առավել մեծ նշանակություն ունի ազգային արժույթի նկատմամբ եղած վստահության մակարդակը, որի ցածր լինելը վերջին հաշվով պայմանավորված է տվյալ երկրի տնտեսվարող սուբյեկտների կողմից այդ երկրի կառավարության նկատմամբ ունեցած անվստահությունից: Որպես լուծում նա առաջարկում է կառավարության հետևողական քաղաքականության իրականացում տնտեսության կայուն զարգացման, ներքին արտադրողների խրախուսման և բանկային համակարգի առավել թափանցիկության ապահովման առումով:

Դոլարացման մակարդակի գնահատմանը վերաբերող գրականության մեծ մասը հիմնված է Լատինական Ամերիկայի երկրների և այն զարգացող երկրների օրինակի վրա, որտեղ հիպերինֆլյացիոն գործընթացներն և տնտեսական ու փոխարժեքի անկայունությունը բերել են տնտեսության ամբողջական կամ մասնակի դոլարացմանը³:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում դոլարիզացիայի առաջացման և խորացման հիմնական պատճառներ են անկախության առաջին տարիներին պատերազմական իրավիճակը, տնտեսական և էներգետիկ շրջափակումը, նախկին առևտրային գործընկերների հետ կապերի խզման ու տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթներով պայմանավորված սոցիալ-տնտեսական ճգնաժամը, տնտեսության փոքր չափերն ու բաց լինելը, սփյուռքի առկայությունը, ընթացիկ և կապիտալ տրանսֆերտների մեծ ծավալները, բանկային համակարգի փոքր չափերն ու ֆինանսական շուկաների ու գործիքների թերզարգացվածության մակարդակը, բնակչության անվստահության բարձր մակարդակը բանկային համակարգի և, որպես արդյունք, անվստահությունն ազգային դրամի նկատմամբ:

Դոլարացման մակարդակի գնահատման հարցում առավել բարդ հիմնախնդիրը շրջանառության մեջ գտնվող կանխիկ արտարժույթի գնահատումն է, քանի որ արտարժութային մյուս ակտիվները հաշվառվում են դրամավարկային վիճակագրության մարմինների կողմից հաշվետու ֆինանսական կազմակերպություններից ստացվող հաշվետվությունների միջոցով:

Գոյություն ունի շրջանառության մեջ գտնվող կանխիկ արտարժույթի գնահատման երկու հիմնական մոտեցում՝ ուղղակի և անուղղակի:

Ուղղակի գնահատման մոտեցման հիմքն են հանդիսանում արտարժութը գնահատող ինստիտուտների կողմից իրականացված հաշվառումներն ու դրանց կողմից հավաքագրված պաշտոնական տեղեկատվությունը: Առանձին երկրներում ԱՄՆ դոլարի կանխիկ շրջանառության ծավալների գնահատման համար տեղեկատվություն է ստացվում «Արժույթի կամ

¹ Գալստյան Վ. «Տնտեսության դոլարացման պատճառները, հետևանքները ու հաղթահարման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», ատենախոսություն, Երևան 2005թ.:

² Adam Honig, Dollarization, Exchange Rate regimes and Government Quality, Department of Economics, Amherst College, June 2006.

³ Գիրտոնի և Ռոուպերի կողմից մշակված երկարժութային մոդելում հիմնավորվել է, որ փոխարժեքի անկայունության և արժույթի փոխարինման մեջ գոյություն ունի դրական կախվածություն: Oleh Havrylyshyn and Christian H. Beddies, Dollarization in the Former Soviet Union: From Hysteria to Hysteresis, April 2003 Version.

դրամական գործիքների միջազգային փոխադրումների մասին» հաշվետվություններից (CMIR), կամ էլ պարբերաբար իրականացվում են տվյալ թեմայով հարցումներ¹: Հայաստանի Հանրապետություն ներկրվող և արտահանվող կանխիկ արտարժույթի վերաբերյալ համատարած հայտարարագրերի վերացումից հետո, փաստացի վիճակագրական տվյալներ հնարավոր չէ ստանալ:

Անուղղակի մեթոդներից առավել տարածված են դեմոնիսացիայի արտամոդան (փոխարինման) և դրամական պահանջարկի գնահատման մեթոդները:

Դեմոնիսացիայի արտամոդան (փոխարինման) մեթոդի կիրառման ժամանակ դոլարացման խնդիր չունեցող երկրներում իրականացվող գործարքների դրամանիշային կառուցվածքը (հիմնականում խոշոր դրամանիշերի կառուցվածքը) ընդունվում է որպես չափանիշ և համեմատվում արժույթի փոխարինման բարձր մակարդակ ունեցող երկրի համապատասխան ցուցանիշի հետ: Այդ ցուցանիշների միջև ստացված տարբերությունն էլ հենց իրենից ներկայացնում է տվյալ տնտեսությունում շրջանառվող կանխիկ արտարժույթի գնահատականը: Այս մեթոդի հիմքում ընկած են մոտ 60 երկրների տվյալների ուսումնասիրության հիման վրա ստացված արդյունքները: Այն է՝ ոչ դոլարացված երկրների շրջանառության մեջ գտնվող արտարժույթի կառուցվածքն ըստ դրամանիշերի տեսակների, որպես կանոն, միանման է²: Այսինքն, եթե տվյալ երկրում չկա արժույթի փոխարինում կամ արժույթի փոխարինման տեսակարար կշիռը բավականին ցածր է, ապա տվյալ երկրում իրականացված գործարքների ընդհանուր ծավալի մեջ **բարձր անվանական արժեք** ունեցող դրամանիշերով իրականացված գործարքների տեսակարար կշիռը մոտավորապես նույնն է ինչ նմանատիպ այլ երկրներում: Իսկ եթե տվյալ երկրում առկա է արժույթի փոխարինում, ապա իրականացված գործարքների դրամանիշային կառուցվածքը շեղվում է գործարքների մի մասում ազգային արժույթին փոխարինում է համապատասխան ծավալի և արժողության արտարժույթ: Այսինքն՝ դոլարիզացիայի բարձր մակարդակի պայմաններում բնակչության՝ ազգային արժույթի մեծ անվանական արժեքների նկատմամբ պահանջարկը շատ փոքր է լինում, քանի որ հիմնականում դրանց փոխարինում է բնակչության համար առավել վստահելի արտարժույթը: Այս մեթոդով հաշվարկված շրջանառությունում առկա կանխիկ արտարժույթի ծավալը կարելի է համարել շրջանառվող արտարժույթի **պայմանական ամենացածր մակարդակը**, քանի որ դոլարացված տնտեսություններում իրականացվող գործարքների մի որոշակի մաս իրականացվում է նաև փոքր անվանական արժեք ունեցող արտարժույթի օգնությամբ:

Այսպես, որպես դրամանիշերի կառուցվածքի չափանիշ պետք է ընտրել այնպիսի երկիր, որի բանկային համակարգի զարգացվածության մակարդակը որոշ չափով մոտ է ուսումնասիրվող երկրի բանկային համակարգին (հիմնականում կանխիկ-անկանխիկ գործառնությունների հարաբերակցությամբ), և այդ երկրում ազգային արժույթի փոխարինման գործակիցը բավականին փոքր է կամ չկա արժույթի փոխարինման գործընթաց: Սույն ուսումնասիրության մեջ որպես շրջանառությունում կանխիկ դրամանիշերի օրինակելի կառուցվածք ընտրվել է Չեխիայի 2001թ. դրամանիշերի կառուցվածքը, քանի որ այդ ժամանակահատվածում Չեխիայի

¹ Zoryan H, The Measurement of Co-Circulation of Currencies and Dollarization in the Republic of Armenia The European Journal of Comparative Economics, Vol. 2, n. 1, pp. 41-65, ISSN 1824-2979.

Կանխիկ արտարժույթի գնահատման համար հարցումներ է իրականացնում նաև Ավստրիայի Ազգային բանկը (ONB), Edgar L. Feige, The Dynamics of Currency Substitution, Asset Substitution and De facto Dollarization and Euroization in transition Countries, Dubrovnik, June 26-29, 2002, pp.11-12.

² Տե՛ս Edgar L. Feige and James W. Dean, Dollarization and Euroization in Transition Countries: Currency Substitution, Asset Substitution, Network Externalities and Irreversibility, Chapter 16, p.12: Ըստ նրանց իրականացրած հետազոտության բանկային համակարգի զարգացվածության միևնույն մակարդակ ունեցող երկրներում դրամանիշերի կառուցվածքը համարյա համընկնում է:

դրլարիզացիայի մակարդակն ամենացածրերից մեկն էր Արևելյան Եվրոպայի երկրներում՝ 2001թ. $CDI^1=13.7\%$, $DI=11.1\%$, իսկ շրջանառությունում կանխիկ դրամական միջոցների միայն 21%-ն է արտարժույթ²: Կանխիկ գործառնությունների տեսակարար կշիռն ընդհանուր իրականացված գործառնությունների մեջ գնահատվում է հատուկ ընտրանքային հետազոտությունների հիման վրա: Նմանատիպ հետազոտությունների իրականացման հարուստ փորձ ունեն մաս Գերմանիայի և Ավստրիայի ազգային բանկերը: Այդ հետազոտությունների շրջանակում գնահատվել է մաս ընդհանուր Եվրամիության երկրների կանխիկ-անկանխիկ գործառնությունների հարաբերակցությունը: Ըստ նրանց ստացած արդյունքների կանխիկ գործառնությունների տեսակարար կշռի առավել ցածր մակարդակ ունեցող Գերմանիայում 2006թ. կանխիկ գործառնություններն ընդհանուր գործառնությունների ծավալի մեջ կազմել են 70%, իսկ Ավստրիայում՝ մոտ 71%: Արևմտյան Եվրոպայի համեմատաբար ավելի փոքր զարգացման մակարդակ ունեցող երկրներում կանխիկ գործառնությունների ծավալն ավելի բարձր է: Համաձայն մասնագիտական գնահատականների ՀՀ-ում կանխիկ գործառնությունների ծավալն ընդհանուր իրականացված գործառնությունների մեջ կազմում է մոտ 95%: Մույն հետազոտության մեջ արվել է այն ենթադրությունը, որ Չեխիայում կանխիկ գործառնությունների տեսակարար կշիռը 2001թ. մոտ կլինի ՀՀ ներկայիս կառուցվածքին:

Ընդհանուր առմամբ 2009 թվականի հոկտեմբերի դրությամբ ՀՀ 10 000, 20 000, 50 000 և 100 000 անվանական արժեքով թղթադրամները միասին վերցրած կազմում են շրջանառության մեջ եղած կանխիկի մոտ 82.71%, իսկ դրանց համարժեք չեխական կրոնների տեսակարար կշիռը 2001թ. կազմել է 91.1%:

Համաձայն դեմոմինացիայի փոխարինման մեթոդի Չեխիայում յուրաքանչյուր մեծ անվանական արժեք ունեցող դրամանիշի՝ շրջանառությունում մեկ շնչին ընկնող քանակը, համեմատվել է ՀՀ համարժեք դրամանիշերի համապատասխան ցուցանիշի հետ, այնուհետև տարբերությունը բազմապատկվել է ՀՀ առկա բնակչության թվաքանակով և դրամանիշերի անվանական արժեքով: Ստացված գումարը վերահաշվարկվել է եվրոյին ու ԱՄՆ դոլարին համարժեք³ և ճշգրտվել 2001թ. Չեխիայում 1 շնչին ընկնող արտարժույթի տեսակարար կշռով: Արդյունքում ստացվել է, որ ՀՀ շրջանառությունում կանխիկ արտարժույթի նվազագույն ծավալը կազմում է մոտ 3 մլրդ 146 մլն ԱՄՆ դոլար հաշվարկած 2010թ, դեկտեմբերի վերջի դրությամբ⁴: Հարկ է նշել, որ սա իրենից ներկայացնում է շրջանառությունում առկա կանխիկ արտարժույթի նվազագույն սահմանը:

Կարելի է անել հետևյալ ենթադրությունները՝ փոքր անվանական արժեքով թղթադրամների փոխարինումն իրականացվում է 1/3 կամ 1/4 չափով: Այսպես առաջին դեպքում փոքր անվանական արժեքով թղթադրամներին փոխարինող արտարժույթը կազմում է մոտ 786 մլն. ԱՄՆ դոլար: Արդյունքում, եթե արտարժույթի մեծ և փոքր անվանական արժեքներով հաշ-

¹ CDI – Comprehensive Dollarization Index, DI- traditional Dollarization index, DI-ն հաշվարկվում է որպես արտարժույթով ավանդների տեսակարար կշիռ փողի զանգվածի մեջ, իսկ CDI-ն արտարժույթով ավանդների և շրջանառությունում կանխիկ արտարժույթի տեսակարար կշիռ փողի էֆեկտիվ զանգվածի մեջ:

Ըստ Balino T., Bennett A. and Borensztein E. (1999). Monetary Policy in Dollarized Economies, Occasional Paper 171, Washington D.C. AMF-ի՝ տնտեսությունն ընդունված է համարել դոլարացված, եթե DI-ն մեծ է 30%-ից:

² Edgar L. Feige, The Dynamics of Currency Substitution, Asset Substitution and De facto Dollarization and Euroization in Transition Countries, 8th Dubrovnik Economic Conference “Monetary Policy and Currency Substitution in the Emerging Markets” Organized by the Croatian National Bank Dubrovnik, June 26 - 29, 2002:

³ Հաշվարկների մեջ որպես ԱՄՆ դոլարի ու եվրոյի փոխարժեքներ օգտագործվել են համապատասխան ժամանակահատվածի ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեքները, իսկ որպես բնակչության թվաքանակ՝ ՀՀ ԱՎԾ «ՀՀ մշտական բնակչության թվաքանակը» եռամսյակային վիճակագրական տեղեկագրի տվյալները:

⁴ Հեղինակի հաշվարկների հիման վրա:

վարկված շրջանառության ծավալները գումարենք ստացվում է, որ միջին հաշվով շրջանառությունում կա մոտ 3.9-4.0 մլրդ ԱՄՆ դոլարի կանխիկ արտարժույթ:

Համեմատության համար նշենք, որ դեմոնիացիայի արտամղման մեթոդով գնահատվել է նաև 2007թ. հոկտեմբերի դրությամբ շրջանառությունում կանխիկ արտարժույթը՝ մոտ 1 մլրդ 917 մլն ԱՄՆ դոլար մեծ անվանական արժեքով թղթադրամերով և մոտ 2 մլրդ 396 մլն ԱՄՆ դոլար մանր թղթադրամերի շրջանառությունը ներառյալ:

ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՆԳԱՍ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՃԳՆԱԺԱՄԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶՅ-ՈՒՄ

Կախված նրանից, թե զարգացման որ փուլում է գտնվում երկիրը՝ համաշխարհային կամ այլ երկրից փոխանցված ճգնաժամի առաջացումը տվյալ երկրում պայմանավորվում է կապիտալ և ընթացիկ հաշիվների շոկերով: Միջինից բարձր եկամուտներ ունեցող զարգացող երկրներում դա հիմնականում պայմանավորված է կապիտալի հաշվի շոկերով (փոխանցման մեխանիզմ՝ կապիտալի հոսքերը (պորտֆելային և օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների կրճատում): Իսկ ցածր եկամուտներ ունեցող երկրներում, որտեղ արժեթղթերի շուկան թերզարգացած է կամ սահմանային դեր է խաղում, ընթացիկ հաշվի շոկերն են ճգնաժամի պատճառ հանդիսանում (փոխանցման մեխանիզմ՝ համաշխարհային պահանջարկի կրճատում և հումքի (գյուղմթերք (անմշակ), գունավոր մետաղներ և այլ օգտակար հանածոներ) գների անկում («առևտրի» և «վճարային հաշվեկշռի» ուղիներ), ինչպես նաև աշխատող միգրանտների նկատմամբ պահանջարկի կրճատում («տրանսֆերտների» մեխանիզմ): Այս տիպի զարգացող երկրներում ընթացիկ հաշվի շոկերը կամ ճշգրտումները պատճառ են հանդիսանում տեղական արժույթի արժեզրկման կամ սովորական արժութային ճգնաժամի¹: Մի շարք հետազոտողներ որպես արժութային ճգնաժամի սկիզբ կամ տարի են ընդունում տեղական արժութի արժեզրկման որոշակի չափը², իսկ Լին և Ռ-հին³ որպես սկիզբ ընդունում են այն պահը, երբ ԱՄՆ-ն աջակցություն է տրամադրում որևէ երկրի՝ անկախ նրանից ճգնաժամը սկսվել է այդ երկրում կամ հիմնադրամը ճգնաժամը կանխելու նպատակով նախօրոք վարկ է տրամադրում: Իսկ մակրոտնտեսական ազդեցությունը գնահատելիս սովորաբար կիրառվում է «պատուհանի» սկզբունքը, երբ ճգնաժամից հետո արձանագրված մակրոտնտեսական փոփոխականների արժեքները (մեծությունները) համեմատվում են նախքան ճգնաժամը գրանցված արդյունքների հետ:

¹ Bleaney, Michael (2005). “The Aftermath of a Currency Collapse: How Different are Emerging Markets?” *The World Economy*, Volume 28, Issue 1, pp. 79-81.

² Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). *This Time is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, pp. 5-6, Frankel, Jeffrey, and Rose, Andrew. (1996), “Currency Crashes in Emerging Markets: An Empirical Treatment”, US Federal Reserve Board's International Finance Discussion Papers, Working Paper 534, New York, NY, US Federal Reserve Board, Washington, DC, p. 4, <http://www.federalreserve.gov/pubs/ifdp/1996/534/ifdp534.pdf> (last accessed: September 18, 2010), Milesi-Ferretti, Gian Maria and Razin, Assaf, (1998). “Current Account Reversals and Currency Crises: Empirical Regularities”, IMF Working Paper 98/89, Washington: International Monetary Fund, p. 22, <http://www.imf.org/external/pubs/ft/wp/wp9889.pdf> (last accessed: September 20, 2010) և այլն:

³ Lee, Jong-Wha and Rhee, Changyong (2002), “Macroeconomic Impacts of the Korean Financial Crisis: Comparison with the Cross-country Patterns”, Volume 25, Issues 4, pp. 541-542

Համաշխարհային տնտեսական անկումը ուղեկցվում է «հումք» խմբի գների իջեցմամբ համաշխարհային շուկայում, որը համեմատաբար երկարատև բնույթ է կրում¹: Հաշվի առնելով այն, որ այս խմբի ապրանքների 2 խմբերը («ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից» և «հանքահումքային մթերք») 2007թ. կազմել են ՀՀ արտահանման 49.8%², ապա համաշխարհային շուկայում գների անկումը կրճատելու էր ՀՀ արտահանման ծավալները, քանի որ «հանքանյութ (օգտակար հանածոներ), հանքաքար և մետաղներ» խմբի գների ինդեքսը (ԱՄՆ ընթացիկ դոլարով արտահայտված) 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի³ նկատմամբ մոտ 20% անկում գրանցեց, իսկ դեկտեմբերին՝ 38% անկում⁴: Ռուսաստանում, որը նավթի խոշոր արտահանողներից մեկն է, ևս նույն միտումն էր գրանցվելու, քանի որ «անմշակ նավթ» խմբի միջին կշռված գների ինդեքսը (ԱՄՆ ընթացիկ դոլարով արտահայտված) 2008թ. հոկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ մոտ 27% անկում գրանցեց⁵, ինչպես նաև արձանագրվելու էր կապիտալ հաշվի շուկա: Վատթարացող տնտեսական վիճակը միգրանտների համար աշխատաշուկա համարվող երկրներում (հիմնականում Ռուսաստան), ինչպես նաև մեծ սփյուռքի համայնք ունեցող երկրներում հանգեցնելու էր տրանսֆերտների ծավալների կրճատման, իսկ արտահանման շուկաների տեսակետից արտահանման կրճատում: Հետևաբար, ՀՀ-ում ճգնաժամը հիմնականում պայմանավորված է եղել ընթացիկ հաշվի շուկերով, որի մասին նաև փաստում է ՄԱԿ-ի Աղքատության և սոցիալական ազդեցության խումբը (ըստ որի տեղի է ունեցել 3 միաժամանակյա շուկա՝ արտահանման պահանջարկի կրճատում, արտահանվող հումքի գների անկում և մասնավոր կապտալ հոսքերի և տրանսֆերտների կրճատում)⁶: Այս շուկերն իրենց հերթին հանգեցրել են տեղական արժույթի արժեզրկման կամ արժութային ճգնաժամի (ՀՀ դրամի 2009թ. արձանագրված արժեզրկման չափը ԱՄՆ դոլարի նկատմամբ ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի «արժութային ճգնաժամի» սահմանմամբ⁷ այդ փոփոխությունը համարվում է որպես արժութային ճգնաժամ):

ՀՀ-ում համապարփակ ձևով ճգնաժամի մակրոտնտեսական ազդեցությունը ներկայացվել է Վ. Հարությունյանի և Վ. Խաչատրյանի կողմից (2010թ)⁸: Սակայն հեղինակներն ընդգրկում են մակրոտնտեսական ցուցանիշների ավելի լայն շրջանակ և այդ ցուցանիշների փոփոխությունները դիտարկում են ավելի կարճ ժամանակահատվածում: Սակայն այս հոդվածում դիտարկվում են այն մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունները, որոնք ընդհանուր են բոլոր տիպի ճգնաժամերի պարագայում (պետական պարտքի փոփոխություն, իրական ՀՆԱ-ի աճի տեմպ, գործազրկության մակարդակ, միջին ամսական աշխատավարձ) և որոնք հատուկ են արժութային ճգնաժամերին (գնաճ), ինչպես նաև

¹ Freund, Caroline. (2008), “The Trade Response to Global Downturns: Historical Evidence” World Bank, Policy Research Working Paper 5015, World Bank: Washington, DC, pp. 3, 11.

http://www-wds.worldbank.org/external/default/WDSContentServer/IW3P/IB/2009/08/06/000158349_20090806152233/Rendered/PDF/WPS5015.pdf (last accessed: March 29, 2010)

² Աղբյուր՝ ԱՎԾ, 2011թ. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2009 թվականին՝ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 2-նիշ դասակարգման: http://www.armstat.am/file/article/ft_2nish_09_8.pdf (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 30):

³ Այդ պահին արձանագրվեց բուն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի սկիզբը (նաև անվանում են «Լեհման»-ի շուկա): 2008թ. սեպտեմբերի 15-ին «Lehman Bros.» ընկերության սնանկությունը մի շարք երկրներում շուկերի պատճառ հանդիսացավ: Աղբյուր՝ <http://www.newsweek.com/2009/09/14/the-lehman-shock.html> (last accessed: March 24, 2011).

⁴ Աղբյուր՝ «UNCTAD Commodity Price Statistics» առցանց տվյալների բազա, 2011 (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 29):

⁵ Նույն տեղում:

⁶ UNDP. (2010), “Poverty and Social Impact Analysis of the Global Economic Crisis: Synthesis Report of 18 Country Studies”, New York, USA: United Nations Development Program, p. 6, http://www.undp.org/poverty/projects_psia_economic_crisis.shtml (last accessed: March 15, 2011)

⁷ Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, p. 6.

⁸ Հարությունյան Վ., Խաչատրյան Վ., Ճգնաժամ. Մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 151-203:

առանձին դիտարկվում է տրանսֆերտների փոփոխությունները որպես բնակչության աղբյուր, թեպետ այն համարվում է ճգնաժամի փոխանցման մեխանիզմ: Որպես ճգնաժամի սկիզբ այս հոդվածում ընդունվում է 2008թ. երրորդ եռամսյակը, երբ այն սկսվեց տարածվել այլ երկրների վրա, իսկ ճգնաժամի մակրոտնտեսական ազդեցությունը գնահատելիս դիտարկվելու են ճգնաժամից հետո արձանագրված փոփոխությունները:

Ճգնաժամից հետո գրանցված մակրոտնտեսական ազդեցության չափը սովորաբար փաստում է այն մասին, թե որքանով է երկիրը ճկուն եղել փոխանցվող ճգնաժամներից կամ շոկերից առաջ, դրանց բացասական ազդեցությունները կլանելու կամ չեզոքացնելու տեսանկյունից¹: Իսկ դրա առաջին ցուցանիշը ՀՆԱ-ի աճի տեմպն է:

2008թ. չորրորդ եռամսյակում նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ գրանցվեց 5.9% անկում (աղյուսակ 1), իսկ տարեկան աճի տեմպը կազմեց 6.9% 2007թ. նկատմամբ: 2009թ. նախորդ տարվա համեմատ արձանագրեց ՀՆԱ-ի 14.2% անկում (4-րդ ամենախորը անկումն աշխարհում Լատվիայից (-18.01%), Ուկրաինայից (-15.1%) և Լիտվայից (-15.03%) հետո)²: Անկման հիմնական պատճառը շինարարության ծավալների 42.3% կրճատումն էր, իսկ սա նշանակում է, որ ՀՀ-ում նախքան ճգնաժամը տնտեսական հիմքը չի եղել դիվերսիֆիկացված (տնտեսական աճ պայմանավորված հիմնականում մի ոլորտից): Իսկ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման, ինչպես նաև մշակող արդյունաբերության ոլորտներում համապատասխանաբար 13.3 և 8.8% անկում արձանագրվեց³, որը առաջինի դեպքում պայմանավորված էր արտադրական ծավալների կրճատմամբ տնտեսության այլ ոլորտներում, իսկ մշակող արդյունաբերության պարագայում՝ մի քանի հանգամանքով, որոնցից են՝ արտահանման կրճատում (օր.՝ «ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» խմբում արձանագրվեց մոտ 45%⁴ անկում 2008թ. նկատմամբ), տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի կրճատում (2.2%) ճգնաժամի հետևանքները հաղթահարելու նպատակով և այլն, ինչ էլ իր հերթին հանգեցրեց «Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում» ոլորտի 4% անկման՝ նախորդ տարվա նկատմամբ⁵:

2010թ. ՀՆԱ-ի աճը 2.6% կազմեց 2009թ. նկատմամբ, որը պայմանավորված էր արդյունաբերության և գործունեության ծառայությունների մատուցման բնագավառի աճով, որտեղ համապատասխանաբար՝ 6.9 և 4.4% աճ էր արձանագրվել, սակայն գյուղատնտեսության ոլորտում գրանցվեց 13.6%⁶ անկում: 2010թ. տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել այն ոլորտների աճով, որոնք նախքան ճգնաժամը տնտեսության շարժին ուշ չէր համարվում, ինչը կարող է փաստել այն մասին, որ տնտեսության դիվերսիֆիկացման հիմքեր

¹ Bhaskaran, Manu and Ghosh, Ritwick. (2009), “Global Economic and Financial Crisis Impact on Developing Asia and Immediate Policy Implications”, prepared by the Centennial Group as discussion materials for the “Regional Forum on the Impact of Global Economic and Financial Crisis” a regional technical assistance (RETA No. 6508), funded by the Asian Development Bank (ADB). 4 January, pp. 12-17. <http://www.adb.org/Documents/events/2010/Global-Economic-Financial-Crisis/report-1.pdf> (last accessed: July 18, 2010)

² WB, WDI-Online 2011 (last accessed: March 23, 2011).

³ 2005թ.-ի միջին տարեկան գներով հաշվարկված: Աղբյուր՝ ՀՀ ԿԲ վիճակագրական առցանց տվյալներ, 2011: <http://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx> (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 24):

⁴ Աղբյուր՝ ԱՎԾ, 2011թ. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2009 թվականին՝ Ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 2-նիշ դասակարգման: http://www.armstat.am/file/article/ft_2nish_09_8.pdf (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 30):

⁵ Աղբյուր՝ ԱՎԾ առցանց տվյալների բազա, 2011թ. <http://www.armstat.am/am/?nid=246>:

⁶ Ընթացիկ ԱՄՆ դոլարով արտահայտված: Աղբյուր՝ ԱՎԾ, 2011թ. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. հունվար-դեկտեմբերին, http://www.armstat.am/file/article/sv_12_10a_111.pdf (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 24):

են դրվում: Սակայն 2010թ. ՀՆԱ-ն դեռ չի հասել նախքան ճգնաժամային տարին գրանցված 2007թ. մակարդակին:

ՀՆԱ-ի այս անկման պարագայում հնարավոր էր ակնկալել գործազրկության մակարդակի աճ, աշխատավարձերի կրճատում կամ էլ առնվազն պահպանում, իսկ արժեզրկված դրամի պարագայում, երբ համաշխարհային շուկայում գների փոփոխությունը գերազանցում է տեղական արժույթի փոփոխությանը, գրանցվում է գնաճ, որի հետևանքով տեղի էր ունենալու իրական աշխատավարձերի նվազում:

Ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի¹ միջինից բարձր եկամուտներ ունեցող զարգացող երկրներում աշխատավարձերի ավելի ճկուն լինելը մեղմում է զբաղվածության խնդիրը դժվար տնտեսական պայմաններում, իսկ սոցիալական ապահովության համակարգում² եղած տարբերությունները զարգացած երկրների հետ համեմատած, ըստ հեղինակների, հավանաբար նույնպես իրենց դերն են խաղում: Գործազրկության մակարդակը (աղյուսակ 3) 2008թ. չորրորդ եռամսյակում երրորդի նկատմամբ աճեց 0.1 տոկոսային կետով, իսկ 2010թ. առաջին եռամսյակում 2008թ. նկատմամբ աճել է մեկ տոկոսային կետով և տարեվերջին արձանագրվեց 7.0% գործազրկության մակարդակ (2010թ. տվյալները գնահատականներ են): Գործազրկության մակարդակի այս փոփոխությունը կարող էր փաստել երկու հանգամանքի մասին՝ կամ աշխատավարձերի ճկունություն է տեղի ունեցել, կամ էլ այլ հանգամանքներ են առկա: Իսկ դիտարկելով իրական աշխատավարձերի փոփոխությունները (2009թ. արձանագրված միջին իրական աշխատավարձը 2008թ. նկատմամբ աճեց 15.8% և կազմեց 92,862 ՀՀ դրամ (աղյուսակ 6), երբ 2009թ. գնաճը 6.5% էր (աղյուսակ 4)), կարելի է փաստել այն մասին, որ տեղի է ունեցել իրական աշխատավարձերի աճ, ինչը մատնանշում է ՀՀ-ում մի քանի հանգամանքի առկայության մասին՝

1. *ՀՀ-ում սուր կադրային խնդիր է նկատվում:* Գործատուները պատրաստ են բարձրացնել աշխատակիցների աշխատավարձերը իրենց պահելու համար, քանի որ երկար ժամանակ կպահանջվի նոր աշխատակից գտնելու, նրան վերապատրաստելու համար:
2. *Չգրանցված աշխատակիցների խնդիրը դեռևս առկա է:* Հեռանում են այն աշխատակիցները, որոնք գրանցված չեն և զբաղեցնում են ոչ կարևոր կամ բարձր հմտություններ ու կարողություններ պահանջող պաշտոններ, և սրան զուգահեռ տեղի է ունենում բարձր որակավորում ունեցող կամ էլ ընկերության համար կարևոր համարվող աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում:

Ինչ վերաբերում է գնաճին, ապա 2009թ. նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ գնաճը կազմել է 6.5% (աղյուսակ 4): Նույն ժամանակահատվածում միջին տարեկան փոխարժեքը 2008թ. նկատմամբ արժեզրկվեց մոտ 19% (աղյուսակ 7), մինչդեռ «հումք» ապրանքային խմբի բոլոր խմբերի գների ինդեքսի (ընթացիկ ԱՄՆ դոլարով) փոփոխությունը 2008թ. նկատմամբ կազմել էր -16.8%, իսկ ամբողջ «սնունդ» խմբինը՝ -8.5%³, հետևաբար գնաճ էր գրանցվելու: Իսկ 2010թ. նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ գնաճը կազմեց 9.4%:

Գնաճի, դրամի արժեզրկման, գործազրկության պարագայում տրանսֆերտների աճը կարող էր մեղմել ստեղծված իրավիճակը (բյուջեի եկամտային մասի կրճատման և կառավարության միջամտության բացակայության պարագայում), սակայն 2009թ. բավականին մեծ

¹ Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, pp. 228-229.

² Սոցիալական ապահովության համակարգը իր մեջ ներառում է հետևյալ ծրագրերը ու միջոցառումները՝ ընտանեկան նպաստներ, սնունդ աշխատանքի դիմաց ծրագրեր, սննդի կտրոններ, էլեկտրաէներգիայի և այլ կոմունալ ծառայությունների վարձավճարների դիմաց տրվող սուբսիդիաներ, հանրային աշխատանքներ և այլն:

³ Աղբյուր՝ «UNCTAD Commodity Price Statistics» առցանց տվյալների բազա, 2011 (վերջին այցելություն՝ 2011թ. սեպտ. 30):

անկում գրանցվեց տրանսֆերտների ծավալների մեջ 2008թ. նկատմամբ (աշխատողների եկամուտները՝ 27.1%, իսկ մասնավոր տրանսֆերտների ծավալների մեջ՝ 30.2%): ՀՀ միգրանտների 79%-ի համար շինարարությունն է եղել զբաղվածության աղբյուր 2009թ., իսկ 2009թ. ՌԴ մեկնող միգրանտների տոկոսն ընդհանուրի մեջ նվազել է 2008թ. նկատմամբ: Եվ, եթե 2008թ. ՌԴ մեկնող միգրանտների միայն 16% էր աշխատանք որոնելու նպատակով լքում ՀՀ, ապա 2009թ.՝ 22%¹, որի հետևանքով 2009թ. Ռուսաստանից դրամական փոխանցումների ծավալը (ԱՄՆ դոլարով արտահայտված) կրճատվեց 34%-ով (1,371 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 904 մլն)²: Այս անկման հիմնական պատճառը ՌԴ շինարարության ոլորտի 17.2 անկումն էր 2009թ. 2008թ. նկատմամբ³:

2010թ. առաջին 9 ամիսների ընթացքում 2009թ. համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ աշխատողների եկամուտները 14.6% անկում արձանագրեցին, իսկ մասնավոր տրանսֆերտներն աճեցին 13.2%-ով (նախնական տվյալների հիման վրա): Աշխատողների եկամուտների կրճատումը 2010թ. նախորդ տարվա նկատմամբ կարող է փաստել այն մասին, որ կամ պահանջարկն այն ոլորտներում, որտեղ ներգրավված են լինում ՀՀ ռեզիդենտները (հիմնականում շինարարություն) դեռ համեմատաբար ցածր է, կամ էլ այլ հանգամանքով է պայմանավորված (եկամուտների կրճատում և այլն): Իսկ մասնավոր տրանսֆերտների աճը կարող է փաստել այն մասին, որ Սփյուռքում ազգությամբ հայ ռեզիդենտների եկամուտները սկսել են աճել (այն ոլորտներում, որտեղ աշխատում են սփյուռքի ներկայացուցիչները պահանջարկը վերականգնվում է):

Նվազող տրանսֆերտների, տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի պարագայում կառավարության միջամտությունը կարող էր մեղմել վիճակը: Սակայն ներմուծման և արտահանման կրճատման, վատթարացող ընկերությունների ֆինանսական վիճակի պատճառով բյուջեի եկամտային մասին, կրճատումը բերելու էր նրան, որ ՀՀ կառավարությունը պետական պարտքի ավելացման միջոցով կկարողանար աջակցել մասնավոր ընկերություններին և ավելացնել սոցիալական ուղղվածության ծախսերը:

Ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի⁴ տարբեր տիպի ճգնաժամերի միջև մեկ ընդհանրություն կա՝ պարտքի մեծ չափերի կուտակում (դիտարկվում է հեղինակների կողմից առաջարկող մոտեցումը⁵, պարտքի կումուլյատիվ աճ (պարտք/ՀՆԱ հարաբերության փոխարեն), քանի որ ՀՆԱ-ի կտրուկ անկման պարագայում պարտք/ՀՆԱ հարաբերության վերաբերյալ դժվար կլինի ճշգրիտ դատումներ անելը): 2008թ. երրորդ եռամսյակի նկատմամբ ՀՀ պետական ներքին պարտքը 2010թ. երրորդ եռամսյակի վերջում 79.9%-ով (աղյուսակ 5), իսկ արտաքին պետական պարտքը 110.9%-ով (ՀՀ ԿԲ-ի պարտքը՝ 241.5%-ով, իսկ ՀՀ կառավարության պարտքը՝ 95.4%-ով):

¹ Ersado, Lire. (2010), “The Global Economic Crisis, Migration, and Remittance Flows to Armenia: Implications for Poverty”, Presentation prepared for International Workshop on the Economic and Social Impact of Migration, Remittances, and Diaspora, Yerevan, Armenia, June 24-25. http://www.edrc.am/WP/migration/june25/Ersado_Eng.ppt (last accessed: March 15, 2011).

² Gabrielyan, Vache (2010), “Remittances in Armenia: Stylized Facts and Theories in Progress”, Presentation prepared for International Workshop on the Economic and Social Impact of Migration, Remittances, and Diaspora, Yerevan, Armenia, June 24-25. http://www.edrc.am/WP/migration/june24/Gabrielyan_Eng.ppt (last accessed: March 23, 2011).

³ Федеральная служба государственной статистики, Национальные счета России в 2002 - 2009 годах. 2010г. http://www.gks.ru/bgd/regl/b10_15/IssWWW.exe/Stg/%3Cextid%3E/%3Cstoragepath%3E::%7C2.5.6.xls (последний визит: март 23, 2011г.)

⁴ Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, p. xxv.

⁵ Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). This Time is Different: Eight Centuries of Financial Folly, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, pp. 231-232.

ՀՆԱ-ի աճի տեմպերը 2006-2010թթ.

(մլն ՀՀ դրամ)

| | 2006 | | | 2007 | | | 2008 | | | 2009 | | | 2010 | | |
|--------------|----------------------|---|---|----------------------|---|---|----------------------|---|---|----------------------|---|---|----------------------|---|---|
| | ՀՆԱ-ն ընթացիկ գներով | ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով | Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%, | ՀՆԱ-ն ընթացիկ գներով | ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով | Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%, | ՀՆԱ-ն ընթացիկ գներով | ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով | Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%, | ՀՆԱ-ն ընթացիկ գներով | ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով | Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%, | ՀՆԱ-ն ընթացիկ գներով | ՀՆԱ-ն նախորդ տարվա համապ. ժամանակ. գներով | Իրակ. ծավալի ինդեքս. նախորդ տարվա համապ. ժաման. նկատ.%, |
| I եռամսյակ | 266145.5 | 268715.6 | 108.0 | 422193.7 | 400414.4 | 112.1 | 509579.1 | 477119.0 | 113.0 | 488771.0 | 478500.3 | 93.9 | 555520.1 | 515285.4 | 105.4 |
| II եռամսյակ | 543403.8 | 526355.3 | 114.0 | 682543.3 | 649962.8 | 110.1 | 784606.9 | 748123.8 | 109.6 | 655693.0 | 644087.0 | 82.1 | 724902.9 | 699756.7 | 106.7 |
| III եռամսյակ | 910513.7 | 841063.5 | 113.2 | 1028875.7 | 993959.4 | 115.7 | 1249441.1 | 1186915.1 | 115.4 | 971576.3 | 1002138.4 | 80.2 | 1053813.4 | 940675.1 | 96.8 |
| IV եռամսյակ | 944973.6 | 907712.7 | 114.9 | 1015670.7 | 977058.1 | 115.0 | 1024600.5 | 955926.8 | 94.1 | 986774.8 | 938593.7 | 91.6 | | | |
| Տարեկան | 2665036.6 | 2543847.1 | 113.4 | 3149283.4 | 3021394.7 | 113.7 | 3568227.6 | 3368084.7 | 106.9 | 3102815.1 | 3063319.4 | 85.8 | 3509624.8 | | 102.6 |

Աղբյուր՝ ԱՎՃ, տարբեր տարիների հրապարակումներ, Նշում՝ * շեղատառ նշվածները նախնական տվյալներ են:

74

Արտաքին հատվածի մակրոտնտեսական ցուցանիշները 2006-2010թթ.

(մլն ԱՄՆ դոլար)

| Մակրոտնտեսական ցուցանիշներ | 2006 | | | | | 2007 | | | | | 2008 | | | | | 2009 | | | | | 2010 | | | | |
|---|-------|--------|---------|--------|--------|-------|--------|---------|--------|--------|-------|--------|---------|--------|--------|-------|--------|---------|--------|--------|-------|--------|---------|--------|---------|
| | I եռ. | II եռ. | III եռ. | IV եռ. | Տար. | I եռ. | II եռ. | III եռ. | IV եռ. | Տար. | I եռ. | II եռ. | III եռ. | IV եռ. | Տար. | I եռ. | II եռ. | III եռ. | IV եռ. | Տար. | I եռ. | II եռ. | III եռ. | IV եռ. | Տար. |
| ՀՀ բանկերի միջոց. ֆիզիկ. անձ. անուն. արտերկրներից մուտք եղած ընդամենը ամսական փոխանցում.* | 256.7 | 287.0 | 361.1 | 392.4 | 1297.2 | 269.5 | 396.7 | 513.4 | 562.6 | 1742.2 | 365.3 | 570.0 | 648.5 | 686.8 | 2270.6 | 261.8 | 337.4 | 544.6 | 431.9 | 1575.7 | 261.7 | 355.2 | 484.4 | 525.8 | 1627.1 |
| Ապրանքների արտահանում | 184.8 | 252.7 | 242.8 | 323.7 | 1004.0 | 231.2 | 293.9 | 303.8 | 323.4 | 1152.3 | 234.0 | 285.9 | 302.1 | 235.1 | 1057.2 | 120.8 | 163.3 | 205.9 | 220.1 | 710.2 | 197.0 | 245.9 | 262.5 | 306.1 | 1011.4 |
| Ապրանքների ներմուծում | 422.0 | 526.6 | 557.7 | 688.1 | 2194.4 | 645.2 | 714.5 | 826.8 | 1081.3 | 3267.8 | 846.8 | 1055.2 | 1220.2 | 1303.8 | 4426.1 | 613.8 | 771.5 | 861.9 | 1073.9 | 3321.1 | 777.8 | 946.2 | 954.4 | 1104.5 | 3782.9 |
| Աշխատողների եկամուտներ | 135.2 | 143.3 | 164.2 | 133.3 | 576.0 | 120.2 | 168.3 | 221.0 | 233.2 | 742.7 | 156.8 | 226.2 | 291.4 | 254.8 | 929.2 | 119.7 | 161.7 | 192.6 | 202.9 | 677.0 | 87.8 | 132.3 | 184.8 | | 404.9** |
| Մասնավոր տրանսֆերտներ | 91.8 | 174.4 | 210.4 | 233.2 | 709.7 | 148.4 | 208.1 | 275.6 | 295.5 | 927.6 | 193.0 | 285.2 | 359.3 | 323.7 | 1161.3 | 138.3 | 193.7 | 233.0 | 245.8 | 810.8 | 146.6 | 211.0 | 282.2 | | 639.8** |
| Սփյուռքից տրանսֆերտներ | 79.2 | 151.8 | 180.0 | 197.1 | 608.0 | 126.2 | 179.0 | 238.8 | 254.4 | 798.4 | 167.2 | 247.6 | 331.7 | 278.6 | 1025.1 | 119.0 | 166.6 | 198.1 | 211.6 | 695.3 | | | | | |
| Աշխատողների դրամական փոխանցումներ | 11.5 | 16.7 | 22.0 | 24.1 | 74.4 | 14.7 | 21.3 | 28.4 | 30.0 | 94.4 | 19.7 | 30.3 | 40.6 | 33.0 | 123.6 | 13.8 | 20.4 | 25.7 | 25.9 | 85.8 | | | | | |

Աղբյուր՝ ԱՎՃ, տարբեր տարիների հրապարակումներ, *Նշում՝ www.cba.am **Նշում՝ 2009թ. 9 ամիսների տվյալներ, շեղատառ նշվածները նախնական տվյալներ են:

Աղյուսակ 3

Գործազրկության մակարդակը 2006-2010թթ.

| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 |
|--------------|------|------|------|------|------|
| I եռամսյակ | 7.7 | 7.4 | 6.3 | 6.7 | 7.3* |
| II եռամսյակ | 7.6 | 7.2 | 6.3 | 6.9 | 7.2* |
| III եռամսյակ | 7.4 | 6.8 | 6.2 | 7.1 | 7.1* |
| IV եռամսյակ | 7.4 | 6.6 | 6.3 | 7.1 | 7.0* |
| Տարեկան | 7.5 | 7.0 | 6.3 | 7.0 | 7.0* |

Աղբյուր՝ ԱՎՃ, տարբեր տարիների հրապարակումներ, * գնահատական, սեփական հաշվարկ:

Աղյուսակ 5

ՀՀ պետական պարտքի ցուցանիշները 2006-2010թթ.

75

| | Ներքին պետական պարտք, ընդամենը (մլն. ՀՀ դրամ) | Արտաքին պետական պարտք, ընդամենը (մլն. ԱՄՆ դրամ) | ՀՀ ԿԲ պարտք (մլն. ԱՄՆ դրամ) | ՀՀ կառավարության պարտք (մլն. ԱՄՆ դրամ) | Հատուկ ծրագրեր (մլն. ԱՄՆ դրամ) |
|--------------|---|---|-----------------------------|--|--------------------------------|
| 31.03.2006թ. | 52326.7 | 1110.352 | 172.963 | 932.024 | 3.267 |
| 30.06.2006թ. | 55219.8 | 1163.395 | 171.256 | 986.525 | 3.517 |
| 30.09.2006թ. | 55820.5 | 1173.079 | 168.417 | 999.753 | 3.861 |
| 30.12.2006թ. | 57962.8 | 1205.635 | 163.671 | 1036.863 | 4.052 |
| 31.03.2007թ. | 55457.6 | 1222.7 | 162.116 | 1056.517 | 4.067 |
| 30.06.2007թ. | 58701.6 | 1266.818 | 158.315 | 1104.183 | 4.32 |
| 30.09.2007թ. | 61761.2 | 1321.177 | 164.472 | 1152.432 | 4.272 |
| 30.12.2007թ. | 66303.2 | 1321.177 | 167.054 | 1277.355 | 4.715 |
| 31.03.2008թ. | 85515.5 | 1551.623 | 172.821 | 1374.141 | 4.661 |
| 30.06.2008թ. | 85109 | 1550.279 | 167.319 | 1378.473 | 4.489 |
| 30.09.2008թ. | 91939 | 1530.9 | 161.973 | 1364.432 | 4.495 |
| 30.12.2008թ. | 100893.2 | 1577.106 | 151.903 | 1420.775 | 4.428 |
| 31.03.2009թ. | 96117.1 | 1788.739 | 415.543 | 1369.503 | 3.693 |
| 30.06.2009թ. | 113428.6 | 2433.415 | 447.795 | 1981.848 | 3.772 |
| 30.09.2009թ. | 140765.8 | 2720.54 | 459.239 | 2257.772 | 3.529 |
| 30.12.2009թ. | 149649.8 | 2966.677 | 500.756 | 2462.333 | 3.588 |
| 31.03.2010թ. | 150955.4 | 2980.926 | 519.874 | 2461.051 | |
| 30.06.2010թ. | 146475.7 | 3027.406 | 519.697 | 2507.71 | |
| 30.09.2010թ. | 165368.9 | 3228.067 | 553.087 | 2674.98 | |

Աղբյուր՝ ԱՎՃ, տարբեր տարիների հրապարակումներ:

Աղյուսակ 4

Սպառողական գների ինդեքսը 2006-2010թթ.

| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 |
|--------------|--------|-------|-------|-------|-------|
| I եռամսյակ | 102.8* | 102.0 | 105.2 | 100.7 | 102.9 |
| II եռամսյակ | 101.5 | 101.9 | 103.1 | 104.5 | 101.6 |
| III եռամսյակ | 98.0 | 96.1 | 97.5 | 97.6 | 100.2 |
| IV եռամսյակ | 102.8 | 106.8 | 100.9 | 103.7 | 104.5 |
| Տարեկան | 105.2 | 106.6 | 105.2 | 106.5 | 109.4 |

Աղբյուր՝ ԱՎՃ, տարբեր տարիների հրապարակումներ:
*Նշում՝ եռամսյակի վերջին ամիսը նախորդ եռամսյակի վերջին ամսվա համեմատ:

Աղյուսակ 6

ՀՀ միջին աշխատավարձերը 2006-2010թթ.

| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 |
|----------------|-------|-------|--------|--------|----------|
| I եռամսյակ | 58413 | 69127 | 84093 | 95929 | 102712 |
| II եռամսյակ | 63532 | 73967 | 89946 | 99386 | 106182 |
| III եռամսյակ | 64956 | 78331 | 93260 | 102149 | 108688 |
| IV եռամսյակ | 72311 | 88596 | 102735 | 112235 | 117294** |
| Տարեկան | 62293 | 74227 | 87406 | 96019 | 108852* |
| Տարեկան իրական | 60538 | 71099 | 80189 | 92862 | |

Աղբյուր՝ ԱՎՃ, տարբեր տարիների հրապարակումներ, * գնահատական, ** գնահատական, սեփական հաշվարկ:

Աղյուսակ 7

ՀՀ միջին փոխարժեքը (ԱՄՆ դոլար) 2006-2010թթ.

| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 |
|--------------|--------|--------|--------|--------|--------|
| I եռամսյակ | 450.95 | 359.44 | 308.05 | 325.56 | 384.08 |
| II եռամսյակ | 436.78 | 353.97 | 307.11 | 370.53 | 384.33 |
| III եռամսյակ | 402.39 | 337.83 | 302.30 | 372.64 | 365.51 |
| IV եռամսյակ | 374.04 | 317.08 | 306.41 | 384.40 | 360.73 |
| Տարեկան | 416.04 | 342.08 | 305.97 | 363.28 | 373.66 |

Աղբյուր՝ ԱՎՃ, տարբեր տարիների հրապարակումներ:

ՀՀ ԿԲ-ի պարտքը կտրուկ ձևով աճ արձանագրեց 2009թ. առաջին եռամսյակին՝ նախորդ եռամսյակի նկատմամբ աճելով 173.6%-ով և 2009թ. հունվար ամսվա նկատմամբ մարտին գրանցվեց 19.7% ՀՀ դրամի արժեզրկում ԱՄՆ դոլարի նկատմամբ¹: ՀՀ պետական արտաքին պարտքը 44.6% աճեց 2009թ. երրորդ եռամսյակին նախորդ եռամսյակի նկատմամբ, իսկ ՀՀ ներքին պետական պարտքի կտրուկ մեծացումն արձանագրվեց 2009թ. առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում՝ 2008թ. չորրորդ եռամսյակի նկատմամբ, երբ կառավարությունը սկսեց ակտիվ միջամտել և իրականացնել հակաճգնաժամային միջոցառումներ:

Այսպիսով՝ ճգնաժամը բացասաբար ազդեց ՀՀ մակրոտնտեսական վիճակի վրա՝ ուղեկցվելով իրական ՀՆԱ-ի կտրուկ կրճատմամբ, ինչպես նաև պետական պարտքի մեծ չափերի հասնող կումուլյատիվ կուտակմամբ հակաճգնաժամային միջոցառումներ իրականացնելու համար՝ նվազող ՀՀ պետական բյուջեի եկամուտների պարագայում: Գործազրկության մակարդակը կտրուկ փոփոխություններ չարձանագրեց, իսկ միջին իրական աշխատավարձերը նույնիսկ աճ արձանագրեցին, որը, թերևս, կարող է պայմանավորված լինել ՀՀ-ում առկա սուր կադրային խնդիրներով կամ այլ հանգամանքներով: Իսկ այս խորը անկման հիմնական պատճառը երկրի ոչ բարձր ճկունության կամ դիմադրողականության աստիճանն էր արտաքին շուկերի հանդեպ 2008թ., և համապատասխան ճգնաժամերի ազդեցությունը չեզոքացող կամ կլանող գործոնների բացակայության պարագայում ճգնաժամը այդպիսի մեծ մակրոտնտեսական հետևանքներ թողեց:

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

*ՆՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ ԱՆՈՒՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍՈՎ

ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականությունը բարեփոխման կարիք ունի, այդ մասին են վկայում հարկման սկզբունքների, ինչպես նաև արդյունավետության պահանջների ոչ լիով հաշվառումը:

Ըստ էության, հարկային քաղաքականության սկզբունքները ձեռք են բերել նոր տեսակ և ուղեկցվում են նոր պահանջներով: Ընդ որում, դրանք հաճախ արտահայտում են պատմականորեն ձևավորված տեսությունների այս կամ այն տարատեսակը:

Փորձենք գնահատել հարկային քաղաքականության արդյունավետությունը անուղղակի հարկերի մասով:

ԱԱՀ: Ավելացված արժեքի հարկը կազմում է պետական բյուջեի հարկային եկամուտների գերակշիռ մասը և, բնականաբար, մեծ դեր ու նշանակություն ունի պետական ֆինանսների ձևավորման, բաշխման ու վերաբաշխման գործում: Դա պայմանավորված է ԱԱՀ-ի հաշվարկման ու գանձման այն մոտեցումներով, որոնք ընդգծված ֆիսկալային բնույթ են հարողդել այդ հարկատեսակին: ԱԱՀ-ի ֆիսկալային գործառույթի վրա դրականորեն են ազդում.

- ԱԱՀ-ի չհարկվող շեմի ցածր մակարդակը, որն ի սկզբանե սահմանվել է 1 մլն դրամ, 1999թ. հունվարի 1-ից դարձվեց 3 մլն դրամ, իսկ 2009թ. հունվարի 1-ից՝ 58.35 մլն դրամ:

¹ Աղբյուր՝ ՀՀ ԿԲ վիճակագրական առցանց տվյալներ, 2011: <http://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx> (վերջին այցելություն՝ 2011թ. մարտի 24):

Այն դեպքում, երբ արտերկրներում այն բավականին բարձր է և դրական արդյունքներ է ապահովում: Կա մի հանգամանք ևս, որ շատ երկրներում չհարկվող նվազագույն շեմը կիրառվում է համեմատաբար քիչ ոլորտների վրա՝ նպաստելով այդ ոլորտների զարգացմանը: Մինչդեռ ՀՀ-ում չհարկվող նվազագույն շեմը շատ ցածր է և ընդգրկում է բոլոր ոլորտները, որն արդարացված չէ:

- ԱԱՀ-ի 10 տարուց ավել գործող 20% դրույքաչափի նշանակալի գերազանցումը այլ երկրներում գործող դրույքաչափերին: Բավական է նշել, որ ԱԱՀ-ի դրույքաչափը Հարավային Կորեայում կազմում է 10%, Թայվանում՝ 5%, Նոր Զելանդիայում՝ 12.5%, Լատվիայում՝ 18%, Սինգապուրում՝ 1%, Չիլիում՝ 18%, Կանադայում և Թուրքիայում՝ 15%, Ճապոնիայում՝ 3%¹:

ԱԱՀ-ի ֆիսկալային գործառույթի վրա բացասաբար են ազդում.

- 1998թ. օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը, որով հաստատագրված վճարը, լինելով հարկման արտոնյալ ռեժիմ և փոխարինելով «ԱԱՀ-ի և (կամ) շահութահարկին (եկամտահարկին)», նվազեցնում է ԱԱՀ-ի հարկման բազան, որն արդարացված չէ:
- 2000թ. ապրիլի 1-ից ուժի մեջ մտած «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը, որով հաստատագրված վճարը փոխարինելով «ԱԱՀ-ին, ակցիզային հարկին և մաքսատուրքին» նվազեցնում է ինչպես ԱԱՀ-ի, այնպես էլ ակցիզային հարկի հարկման բազան²:

2004թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը, որով հաստատագրված վճարը փոխարինում է³.

- ա) ավելացված արժեքի հարկին և ակցիզային հարկին (ներմուծման դեպքում),
- բ) շահութահարկին և (կամ) եկամտահարկին (անմիջական ներմուծողների կողմից իրացման դեպքում):

Թվարկված դեպքերից առաջինում նվազում է ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հարկման բազան, իսկ երկրորդի դեպքում՝ ուղղակի հարկերի մասնավորապես՝ շահութահարկի ու եկամտահարկի հարկման բազաները:

ԱԱՀ-ի գծով սահմանված հարկային արտոնությունները, որոնք ոչ միշտ են արդարացված ու տնտեսագիտորեն հիմնավորված:

Վերոնշյալ դրական ու բացասական գործոններով հանդերձ, այնուամենայնիվ, ԱԱՀ-ն էական մասնաբաժին ունի ինչպես պետական բյուջեի հարկային եկամուտներում, այնպես էլ ՀՆԱ-ում:

Պետական բյուջեի հարկային եկամուտների, որպես կանոն, կեսից ավելին բաժին է ընկնում ԱԱՀ-ին, որի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում 2002թ. կազմել է 54.1%, 2003թ.՝ 53.5%, 2007թ.՝ 54% և 2008թ.՝ 56.7%: Բարձր է նաև ԱԱՀ-ի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ շուրջ 7-8 տոկոս, իսկ ուսումնասիրվող ժամանակահատվածի միջին տարեկան մասնաբաժինը կազմել է շուրջ 7.0 տոկոս: Իհարկե, ՀՆԱ-ի առկա աճի պայմաններում ԱԱՀ-ի նման մասնաբաժինը բարձր համարել չի կարելի, քանի որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՆԱ-ն նախորդ տարիների համեմատ աճել է բավականին բարձր տեմպերով: Մինչդեռ ԱԱՀ-ի մասնաբաժինը ՀՆԱ-ում նախորդ տարվա համեմատ նվազել է: Այլ կերպ ասած, ուսումնասիրվող ժամանակահատվածում յուրաքանչյուր տարում նախորդ տարվա համեմա-

¹ 2000 Tax International Sumaries A Guide for Planning and Dicisions, Coopers Lybrand Global Tax Network, Editor Georg J. Yost, Wiley Sons, Ink., N.Y., 2000.

² http://www.taxservice.am/uploads/pdf/6_AAH.pdf.

³ Նույն տեղում:

տությամբ ՀՆԱ-ի աճի տեմպը գերազանցել է ՀՆԱ-ում ԱԱՀ-ի (գանձված) մասնաբաժնի աճի տեմպին: Դա վկայում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ԱԱՀ-ի գծով հարկման մակարդակը նվազել է 2003-2004թթ. և 2006թ., իսկ 2005թ. և 2007-2008թթ. այն աճել է ոչ բավարար, այն էլ տատանվող տեմպերով:

Այսպիսով, պարզ է դառնում, որ թեպետ ԱԱՀ-ի մասնաբաժինը, ի տարբերություն մյուս հարկատեսակների, բավականին բարձր է ինչպես ՀՆԱ-ում, այնպես էլ հարկային եկամուտներում, բայց այս հարկատեսակի հարկման արդյունավետության մակարդակը ցածր: Առաջիկայում Պետական եկամուտների կոմիտեն հասարակության քննարկմանը կներկայացնի փաստաթղթեր, որոնցով առաջարկվում է բարելավել ավելացված արժեքի հարկի հետվերադարձի համակարգը:

Ծրագիրն իրագործվում է ամերիկյան կողմի հետ համատեղ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության ֆինանսավորմամբ: Համապատասխան փոխըմբռնման հուշագիրը ՀՀ ՊԵԿ-ի և ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության միջև ստորագրվել է այս տարվա մայիսին, որը նպատակ ունի բարելավել հարկային վարչարարությունը, ինչպես նաև համապատասխան բիզնես գործընթացները:

ԱԱՀ-ի վերադարձման արդյունավետ համակարգը Հայաստանում զգալիորեն կբարելավի բիզնես միջավայրը՝ նվազեցնելով այն անորոշությունը, որը կապված է արտահանումների և ԱԱՀ-ի վճարման կարգապահության հետ¹: Ծգնաժամի հետևանքով ՀՀ պետական բյուջեն ներկայումս հայտնվել է բացարձակ ծանր վիճակում: Հարկատեսակների մեծ մասի գծով 2009թ. արձանագրվել է եկամուտների նվազում, այնուհանդերձ դրա գերակշիռ մասը բաժին է ընկնում ԱԱՀ-ին: Ինչպես հայտնի է, Հայաստանում հարկային եկամուտների մեջ մեծ տոկոս են կազմում անուղղակի հարկերը: Սովորաբար միայն ԱԱՀ-ի գծով ապահովվում է հարկային մուտքերի գրեթե կեսը: Պատահական չէ, որ այս հարկատեսակից չափազանց մեծ է բյուջեի կատարման կամ չկատարման կախվածությունը:

Եթե նախորդ տարիներին ԱԱՀ-ի եկամուտն անընդհատ ավելանում էր թե՛ տնտեսական աճի, թե՛ հատկապես ներմուծման հաշվին, ապա 2009թ. տեղի ունեցավ հակառակ երևույթը՝ կրճատվել են ինչպես երկրի ներսում հավաքվող, այնպես էլ ներմուծման սահմանի վրա գանձվող ԱԱՀ-ի մուտքը: Ի դեպ, ներմուծման 30% (300 մլն դոլար) կրճատման պայմաններում սահմանի վրա գանձվող ԱԱՀ շարունակել է կրկնակի գերազանցել ներսում հավաքվողին:

Ակցիզային հարկ: Ակցիզային հարկը, ի տարբերություն ԱԱՀ-ի, դրվում է ապրանքների սահմանափակ տեսականու վրա և համարյա բոլոր երկրներում այն ընդգրկում է երեք հիմնական ապրանքատեսակների խմբեր՝ ալկոհոլային խմիչքները, հանքային նավթամթերքը և ծխախոտը: Ակցիզային հարկով հարկման ենթակա ընտրված ապրանքները ներառում են հետևյալ չափանիշներից մեկը կամ մի քանիսը:

Նախ, դրանց արտադրությունն ու վաճառքը հարկվում է կառավարության կողմից, երկրորդ՝ դրանք բնութագրվում են գնային պահանջի գրաֆիկով, երրորդ՝ դրանք ճոխության պարագաներ կամ ծառայություններ են և չորրորդ՝ կառավարության կողմից դրանց սպառումը համարվում է բացասական արդյունք առաջացնող: Բացի դրանից, ակցիզային հարկի դրույքաչափերը, որպես կանոն, շատ ավելի բարձր են քան ԱԱՀ-ը, և առողջության համար ծխախոտի ու ալկոհոլային խմիչքների վնասակար երևույթների կանխման հետ մեկտեղ ակցիզային հարկն ունի ֆիսկալային ընդգծված գործառույթ: Բավական է նշել, որ ակցիզային հարկի մասնաբաժինը 2002թ. կազմել է հարկային եկամուտների և ՀՆԱ-ի համապատասխանաբար 20.1 և 2.6 տոկոսը, որը, սակայն, հետագա տարիներին դրսևորել է նվազման միտում,

¹ <http://www.armtown.com/news/am/has/20090604/3407106819/>.

և 2008թ. այդ մասնաբաժինները համապատասխանաբար կազմել են 8.2 և 1.3 տոկոս: Բերված տվյալները խոսում են այն մասին, որ ակցիզային հարկի գծով իրականացվող հարկազան-ծումը ՀՆԱ-ի աճի հետ գտնվում է հակադարձ համեմատականության մեջ, այսինքն՝ ՀՆԱ-ի աճին զուգընթաց նվազում է այս հարկատեսակի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Դրա պատճառները հետևյալներն են.

- Ակցիզային հարկով ապրանքախմբերի հարկումը հաստատագրված վճարով հարկման դաշտ տեղափոխումը, որը նվազեցնում է ակցիզային հարկի հարկման բազան:
- Ներմուծող բենզինի ու դիզելային վառելիքի դրույքաչափերի աննախադեպ ցածր լինելու փաստը ՏՀԶԿ-ն երկրների դրույքաչափերից: Իրավիճակը գրեթե նույնն է, բայց նվազեցված չափերով, նաև ավտոմոբիլի և սիգարետների մասով (աղյուսակ 1), որի տվյալներից երևում է նաև, որ Հարավային Եվրոպայի գինի արտադրող երկրներում այդ ապրանքատեսակի դրույքաչափերն ավելի ցածր են, քան Հայաստանում գործող դրույքաչափերն են: Այն դեպքում, երբ ՀՀ-ում ավելի է ժան են ինչպես հումքը, այնպես էլ աշխատուժը: Սակայն դրական պետք է համարել «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով այս հարկատեսակի գանձման «նշանակման վայրի» սկզբունքի ամրագրումը:

Աղյուսակ 1¹

Ակցիզային դրույքաչափերը 2000թ.*

| Երկիր | Գարեջուր | Գինի | Փրփրուն գինի | Ալկոհոլ | Սիգարետ | Բենզին | Դիզել |
|--------------|----------|--------|--------------|----------|----------------|--------|--------|
| Բելգիա | 1.75 | 48.31 | 165.29 | 1.703.74 | 16.12 + 45.84% | 566.05 | 297.52 |
| Չեխիա | 0.67 | 0 | 65.34 | 653.45 | 20.66% | 76.05 | 227.59 |
| Դանիա | 36.41 | 95.59 | 95.59 | 3.728.81 | 82.28 + 21.22% | 536.54 | 308.99 |
| Ֆրանսիա | 2.66* | 3.44 | 8.57 | 1.487.19 | 5.73 + 54.50% | 601.48 | 399.06 |
| Գերմանիա | 0.81 | 0 | 139.51 | 1.337.43 | 50.82 + 21.60% | 660.85 | 419.59 |
| Հունաստան | 1.19 | 0 | 0 | 928.37 | 3.68 + 53.86% | 354.65 | 258.21 |
| Հունգարիա | 1.32 | 1.99 | 28.40 | 5.94 | 9.10+17% | 397.69 | 317.36 |
| Իռլանդիա | 20.38* | 280.05 | 560.10 | 2.832.93 | 105.49+ 18.57% | 470.67 | 333.62 |
| Իտալիա | 1.44 | 0 | 0 | 662.01 | 3.96 + 54.27% | 571.08 | 391.54 |
| Նորվեգիա | 45.80* | 534.41 | 534.41 | 88.09 | 202.70% | 759.51 | 526.78 |
| Լեհաստան | 1.66 | 32.85 | 32.85 | 1.516.43 | 12.08 + 25% | 383.57 | 256.52 |
| Թուրքիա | 45% | 120% | 120% | 120% | 39-51% | 280% | 180% |
| Մեծ Բրիտանիա | 18.43 | 244.39 | 349.14 | 3.202.17 | 11.20 + 22% | 865.70 | 772.87 |
| Հայաստան | 12.616 | 18.02 | 32.43 | 270.27 | 8.42 | 101.23 | 15.26 |

* Թվերը ներկայացված են ԱՄՆ դոլարով տեղական արժույթների փոխարժեքով:

1. Գարեջրի համար ակցիզային հարկն ըստ հեկտոլիտրի ըստ plato աստիճանի:
2. Գինի և փրփրուն գինի, ակցիզային հարկ ըստ հեկտոլիտրի:
3. Ակցիզային հարկ ըստ գուտ ավտոմոբիլի հեկտոլիտրի:
 Ակցիզային հարկ յուր. 1000 հատի համար + % ակցիզային հարկ մանրածախ առևտրի գնի համար:
 Բենզին և դիզել, ակցիզային հարկ 1000 լիտրի համար:
 Հաշվարկված է օգտագործելով ներկա ակցիզային հարկի դրույքաչափերը ներմուծվող ապրանքների համար բաժանված 555 դրամ / դոլար:

¹ http://www.cdaily.am/home/paper/2010_04_08/news/22733/.

Հայաստանի Հանրապետությունից ակցիզային հարկով հարկվող ապրանքների արտահանման ազատումը հարկումից, ներքին արտադրողների համար ստեղծեց արտահանման ծավալների մեծացման լուրջ խթաններ և արտաքին մրցակցային շուկաներում առավել ճկուն գնային քաղաքականություն վարելու նախադրյալներ: Առաջընթաց քայլ պետք է համարել ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի համար 1997 թվականից պարտադիր դրոշմավորման պահանջի ներդրումը: Ակցիզային հարկի հաշվարկման և վճարման մեխանիզմի պարզության, ինչպես նաև դրանց նկատմամբ վերահսկողության ուժեղացման նպատակով դրոշմ ապրանքների համար (ոգելից խմիչքներ, բենզին) սահմանվեցին ներմուծման ժամանակ վճարման ենթակա ակցիզային հարկի նվազագույն չափեր, իսկ ավելի ուշ հաստատագրված վճարներ սահմանվեցին ծխախոտի արտադրանքի¹ և ներմուծվող բենզինի համար, ինչը դրական ազդեցություն թողեց այդ ապրանքատեսակների մասով հարկային վարչարարության արդյունավետության վրա: Բայց, ինչպես ակցիզային հարկի նվազագույն չափերը, այնպես էլ բենզինի ու սիգարետի մասով նվազեցված հաստատագրված վճարների սահմանումը հարաբերականորեն նվազեցրին նաև այս հարկատեսակի բյուջետային մուտքերը:

Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման առումով դրական պետք է գնահատել «Ակցիզային հարկի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը (2000թ.), որը հարկային դաշտից հանեց վարչարարական բավականին ջանքեր պահանջող այնպիսի ապրանքներ, ինչպիսիք էին մորթիները, կաշին, հախճապակին, ճենապակին, զարդեղենը և խավիարը:²

Ճգնաժամի պայմաններում, անուղղակի հարկատեսակներից համեմատաբար քիչ է անկումը ակցիզային հարկի գծով: 2008թ. ցուցանիշից այն պակաս է եղել 4%-ով (512 մլն դրամ): Ինչպես ԱԱՀ-ի դեպքում, այնպես էլ ակցիզային հարկերի մուտքերի գերակշիռ մասը ևս ստացվել է ներմուծումից՝ բենզին-դիզելայինից և ծխախոտից:

Փաստորեն, ինչպես ԱԱՀ-ի, այնպես էլ ակցիզային հարկի գծով ցածր է հարկման արդյունավետության մակարդակը և առանձին տարիների դրսևորում է նվազման միտում: Սակայն այդ ամենով հանդերձ, այս հարկատեսակների գումարային մասնաբաժինը հարկային եկամուտներում և ՀՆԱ-ում շարունակում է մնալ բարձր: Դա այն դեպքում, երբ անուղղակի հարկեր/հարկային եկամուտներ տոկոսային հարաբերակցության ցուցանիշը Բելգիայում 2006թ. կազմել է 30%, Բուլղարիայում՝ 48.2%, Չեխիայում՝ 32.9%, Էստոնիայում՝ 39.2%:

Իրավիճակը համեմատելի չէ նաև անուղղակի հարկեր/ՀՆԱ տոկոսային հարաբերակցության ցուցանիշի գծով: Այն ՀՀ-ում միջին տարեկան կտրվածքով կազմում է 7.4%, իսկ Բելգիայում՝ 2006թ. կազմել է 13.8%, Բուլղարիայում՝ 19.4%:

Ստացվում է այնպես, որ ՀՀ-ում անուղղակի հարկեր/հարկային եկամուտներ տոկոսային հարաբերակցության ցուցանիշը 1.5-2.0 անգամ գերազանցում է նշված երկրների նույն ցուցանիշին, իսկ անուղղակի հարկեր/ՀՆԱ տոկոսային հարաբերակցության ցուցանիշով զիջում է գրեթե նույնքան անգամ:

Ինչպես ԱԱՀ-ի, այնպես էլ ակցիզային հարկի գծով ցածր է հարկման արդյունավետության մակարդակը և առանձին տարիների դրսևորում է նվազման միտում: Սակայն, այս հարկատեսակների գումարային մասնաբաժինը հարկային եկամուտներում և ՀՆԱ-ում շարունակում է մնալ բարձր:

¹ http://www.taxservice.am/uploads/pdf/9_1_hastvcharner_exaxot.pdf.

² http://www.taxservice.am/uploads/pdf/8_akciz.pdf.

**ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԳՅԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Ֆինանսական ճգնաժամը վերջին տարիներին պայմանավորված է համաշխարհային տնտեսությունում անհամամասնությամբ, ինստիտուցիոնալ ոլորտում թերություններով, մրցակցության ուժեղացմամբ և երկրների փոխադարձ կապվածությամբ՝ գլոբալացման գործընթացների հետևանքների արագացմամբ:

Ճգնաժամի առավել կտրուկ փուլն արդեն իրականացվել է. առաջատար համաշխարհային տնտեսություններում նշարվել են աճի միտումներ: Կենտրոնական բանկերի և կառավարությունների միջոցառումների շնորհիվ դադարեցվել է տնտեսական ակտիվության կտրուկ անկումը: Չնայած ճգնաժամի սկզբնաղբյուրը գտնվում էր ֆինանսական հատվածում՝ կարգավորող մարմինները ստիպված էին փրկել ոչ միայն ֆինանսական համակարգը, այլ նաև համաշխարհային տնտեսությունը ամբողջությամբ: Անհրաժեշտ է ընդունել, որ ընդունված որոշումները բավականին արդյունավետ էին:

Տնտեսական ճգնաժամն անցած տարի լուրջ ազդեցություն ունեցավ Հայաստանի թե՛ տնտեսական, թե՛ հարկային եկամուտների վրա: Դրանք շոշափելի կրճատվեցին, ընդ որում, ավելի շատ հարկերը, քան տնտեսությունը: Այդ տարի վիճակը փոխվել է: Առաջին եռամսյակի ընթացքում տնտեսական աճը Հայաստանում եղավ 5.5%: Սակայն շատ ավելի մեծ է հարկային եկամուտների ավելացումը (նախորդ տարվա համեմատ՝ 19%)¹:

Արտերկրյա փորձում տնտեսության հարկային կարգավորումը իրականացվում է նոր հարկերի սահմանման միջոցով կամ գործող օրենսդրության շտկման միջոցով:

Յուրաքանչյուր երկրում ձևավորված հարկային համակարգը պետք է ուղղված լինի տվյալ երկրի իշխանությունների կողմից որոշակի ժամանակահատվածում իրականացվող տնտեսական և սոցիալական քաղաքականության հիմնախնդիրների լուծմանը, այդ համակարգում կիրառվող հարկման եղանակներն ու մեթոդները պետք է առավելագույնս հաշվի առնեն տվյալ պետությունում տնտեսական հարաբերությունների մակարդակն ու զարգացման հիմնական գերակայությունները, ինչպես նաև կառուցված լինեն օպտիմալ հարկային համակարգին հատուկ սկզբունքների ու ներկայացվող պահանջների հաշվառման վրա:

Այդ ամենի հետ կապված հետաքրքիր է մի շարք երկրների փորձը՝ կապված տնտեսության զարգացման խթանման, ներդրումների ներգրավման, սոցիալական զարգացման հետ:

Ֆրանսիայի հարկային համակարգը հետաքրքիր է նրանով, որ հենց այդ երկրում է մշակվել և առաջին անգամ ներմուծվել 1954 թվականին ԱԱՀ-ն: Ներկայումս համակարգը առանձնանում է իր կայունությամբ գանձվող հարկերի ու դրանց օգտագործման ուղղությունների առումով: Հարկերի դրույքաչափերը տարեկան վերանայվում են՝ հաշվի առնելով տնտեսական իրավիճակը և պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղվածությունը:

Ֆրանսիայի հարկային համակարգին բնորոշ հիմնական գծերից կարելի է նշել սոցիալական ուղղվածությունը, անուղղակի հարկերի մեծ տեսակարար կշիռը, եկամտահարկի

¹ <http://www.armtown.com/news/am/has/20100428/3847119293/>.

յուրահատուկ դերը, ճկուն և միևնույն ժամանակ խիստ համակարգը, արտոնությունների և գեղչերի լայն համակարգը, բաց լինելը միջազգային հարկային համաձայնագրերի համար:

Ֆրանսիայում հարկերը ձևավորում են պետական բյուջեի շուրջ 90%-ը: Հարկազան-
ձումն իրականացվում է հարկային ծառայություն միջոցով: Հարկերի հիմնական տեսակներն
են անուղղակի, ուղղակի և դրոշմային հարկերը: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Ֆրանսիայում
գերակշռում են անուղղակի հարկերը, ընդ որում դրանց 50%-ը կազմում է ԱԱՀ-ը¹: Ֆրան-
սիայում գոյություն ունի խիստ տարանջատում տեղական հարկերի և այն հարկերի միջև,
որոնք մտնում են կենտրոնական բյուջե: Հիմնական դաշնային հարկերն են՝ ԱԱՀ-ն, ֆիզի-
կական անձանցից գանձվող եկամտահարկը, իրավաբանական անձանցից շահութահարկը,
նավթամթերքի մաքսատուրքերը, ակցիզային հարկը (բացի ակցիզային հարկով հարկման
ենթակա հիմնական ապրանքներից նաև լուցկին, հանքային ջուրը, ավիատրանսպորտային
ծառայությունները), սեփականության հարկը, մաքսային վճարները:

Հիմնական տեղական հարկերն են՝ զբոսաշրջության հարկ, ընտանիքի հարկեր (երեք
տեսակի հարկեր՝ բնակարանի, գույքահարկ, հողի հարկ), մասնագիտության հարկ, տարածքի
մաքրման հարկ, հաղորդակցման հարկ, շինության վաճառքից հարկ: Ընդհանուր առմամբ,
տեղական հարկերը կազմում են ողջ հարկային բեռի 30%-ը և համալրում տեղական բյու-
ջեների 40%-ը:

2010 թվականի հունվարի 22-ին հարկային մարմինները հրապարակել են ոչ ռեզիդենտ-
ների բաժնեմասերի հարկման վերաբերյալ ձեռնարկ: Փոփոխությունների նպատակը
մասնագիտությունների սահմանափակումն է՝ բժիշկներ, իրավաբաններ, խորհրդատուներ,
դասակարգելով՝ նրանց վաստակածը շահութահարկ՝ մասնագիտական եկամտի փոխարեն²:

Երկրում կազմակերպությունների հարկազանձումն իրականացնում է հարկային ծառա-
յությունը, որը գործում է ֆինանսների նախարարության կազմում: Այն գլխավորում է Գլխա-
վոր հարկային վարչությունը, որտեղ աշխատում է 80000 ծառայող: Նրանք կենտրոնացած
են հարկային կենտրոններում (թվով 830) ու 16 տեղեկատվական կենտրոններում³: Հարկա-
յին կենտրոնները հաշվարկում են հարկման բազան յուրաքանչյուր հարկի գծով, հավաքում
են վճարները, հսկում վճարումների ճիշտ կատարման գործընթացը: Հարկազանձումը
հիմնվում է եկամուտների հայտարարագրի և դրա ճիշտ կազման ստուգման վրա: Գոյություն
ունի երկու տեսակի ստուգում՝

- ըստ փաստաթղթերի տվյալների,
- ըստ հարկային տեսուչի մոտ եղած փաստաթղթերի, եթե հայտարարագրերում կան անհամապատասխանություններ:

Հարկային եկամուտները թաքցնելու դեպքում սահմանվում է պատասխանատվության
խիստ համակարգ, մասնավորապես՝

- հարկի լրացման սխալի դեպքում հարկը գանձվում է ամբողջ չափով և սահմանվում է
տույժ 0.75% ամսական կամ 9% տարեկան,
- եթե սխալը կանխամտածված է, ապա հարկը գանձվում է կրկնակի չափով,
- լուրջ խախտման դեպքում հնարավոր է ազատազրկում:

Ֆրանսիայում գոյություն ունի ԱԱՀ-ի 4 դրույքաչափ.

1. 18.6%՝ բոլոր տեսակի ապրանքների ու ծառայությունների նորմալ դրույքաչափ,

¹ www.rusdolg.ru/document/nc%20francii.doc.

² <http://www.taxservice.am/uploads/pdf/texekanq%2016%2002%2010%20N3.pdf>.

³ www.rusdolg.ru/document/nc%20francii.doc.

2. 33.33%՝ պերճանքի առարկաների, մեքենաների, ավտոտրանսպորտի խմբի անդամների, ծխախոտի սահմանային դրույքաչափ,
3. 7%՝ մշակութային առօրյա իրերի (օրինակ՝ գրքերի) նվազեցման դրույքաչափ,
4. 5.5%՝ առաջին անհրաժեշտության ապրանքների ու ծառայությունների (այդ թվում՝ սնունդ, բացի ավտոտրանսպորտի խմբի անդամներից ու շոկոլադից):

Ներկայումս նկատվում է դրույքաչափերի նվազեցման միտում և անցում երկու դրույքաչափերի՝ 18.6% և 5.5%:

Ընդհանուր առմամբ, Ֆրանսիայում ԱԱՀ-ն իրենից ներկայացնում է առավել ճկուն կառուցվածք, քան ՀՀ-ինը: Դա արտահայտվում է զեղչերի ու արտոնությունների լայն համակարգով: Ֆրանսիայում ԱԱՀ-ի կարևոր յուրահատկությունն է՝ դրա նվազեցումը ներդրումներին ուղղված գումարի չափով: Այստեղ ԱԱՀ-ն իր ողջ ճկունությամբ ապահովում է բոլոր հարկային մուտքերի 45%-ը, ինչը խոսում է դրա արդյունավետության մասին:

Ֆրանսիայում եկամտահարկի վրա դրված են բնակչության կողմից խնայողությունների կատարման, անշարժ գույքի, բաժնետոմսերի ձեռքբերման խթաններ ստեղծելու ֆունկցիան: Դա ստեղծում է հարկի հաշվարկման և բազմաթիվ արտոնությունների կիրառման բարդ համակարգ: Այսպես, 25 մլն հարկատուներից փաստացի հարկ վճարում է միայն 15 մլն-ը (52%-ը)¹: Պոտենցիալ հարկատուներ են հանդիսանում երկրի բոլոր ֆիզիկական անձինք, ինչպես նաև այն կազմակերպություններն ու կոոպերատիվները, որոնք չեն հանդիսանում բաժնետիրական ընկերություն: Ըստ էության, հարկը հաշվարկվում է միասնական պրոգրեսիվ սանդղակով, բայց միաժամանակ այն հաշվի է առնում յուրաքանչյուր հարկատուի տնտեսական, սոցիալական, ընտանեկան վիճակը և տարիքը: Հարկի դրույքաչափեր են՝ 0-56.8%-ը՝ կախված եկամուտների մակարդակից: Եկամտահարկի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ դրա հիմքում ընկած է ոչ թե ֆիզիկական անձի, այլ ընտանիքի եկամուտը: Եթե հարկատուն ամուսնացած չէ, ապա հարկազանձման սկզբունքների համաձայն նա համարվում է մեկ անձից բաղկացած ընտանիք, ընդ որում՝ հարկը վճարվում է՝ սկսած 18 տարեկանից: Հարկազանձումն իրականացվում է հարկատուի կողմից տարին մեկ անգամ իր նախորդ տարվա եկամուտների հիման վրա լրացված հայտարարագրի համախառն եկամտի հիման վրա:

Բաժնետիրական ընկերությունների շահութահարկի տեսակարար կշիռը ընդհանուր հարկային մուտքերի մեջ կազմում է 10% և ունի նվազման միտում: Դա կապված է դրույքաչափերի մշտական նվազեցումների հետ: Տվյալ հարկը կիրառվում է միայն բաժնետիրական ընկերությունների նկատմամբ, այսինքն՝ իրավաբանական անձինք, որոնք չեն հանդիսանում բաժնետիրական ընկերություն, հարկվում են այնպես, ինչպես ֆիզիկական անձինք՝ վճարելով եկամտահարկ:

Հարկման օբյեկտ է համարվում գործունեության բոլոր տեսակներից ստացվող զուտ եկամուտը: Հարկի դրույքաչափը կազմում է հարկվող շահույթի 39%-ը, իսկ եթե այդ շահույթը վճարվում է որպես շահաբաժիններ, ապա շահութահարկի դրույքաչափը կազմում է 42%:

Նոր ստեղծված բաժնետիրական ընկերությունների համար կան որոշակի արտոնություններ՝ 5 տարվա ընթացքում և գործողության տևողությունից կախված՝ զեղչերը տարբեր են².

- մինչև 2 տարի՝ 100%,
- 3 տարի՝ 75%,

¹ bibliofond.ru/view.aspx?id=92645 - 55k.

² <http://revolution.allbest.ru/finance/d00194672.html>.

- 4 տարի՝ 50%,
- 5 տարի՝ 25%,
- 6 տարի և ավել՝ 0%:

Վնասով աշխատող կազմակերպությունները հարկ վճարում են՝ ելնելով իրենց ապրանքաշրջանառության ծավալից.

- մինչև 1 մլն ֆրանկ շրջանառության դեպքում՝ 4000 ֆրանկ,
- 1-2 մլն ֆրանկ շրջանառության դեպքում՝ 6000 ֆրանկ,
- 2-5 մլն ֆրանկ շրջանառության դեպքում՝ 8500 ֆրանկ,
- 5-10 մլն ֆրանկ շրջանառության դեպքում՝ 11500 ֆրանկ,
- 10 մլն-ից ավել շրջանառության դեպքում՝ 17000 ֆրանկ:

Ֆրանսիական հարկերը փոխկապակցված են ամբողջ հարկային համակարգում, որում կիրառվում է կրկնակի հարկման բացառման մեխանիզմը: Տեղական մարմինները բավականին շատ իրավունքներ ունեն այս ոլորտում, բայց սահմանափակված են մի շարք պայմաններով:

Ֆրանսիան կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրեր ունի հետևյալ երկրների հետ՝ Ավստրալիա, Բելգիա, Բրազիլիա, Կանադա, Դանիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Հնդկաստան, Իտալիա, Ճապոնիա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Սեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ռուսաստան և այլն¹:

Եվրամիության հանձնաժողովը հավանություն է տվել Ֆրանսիայի հանրային հեռուստատեսության համար նախատեսված երկարաժամկետ ֆինանսավորման ծրագրին՝ ներդնելով երկու նոր հարկատեսակներ՝ մեկը գովազդի նկատմամբ, մյուսը՝ էլեկտրոնային կապի նկատմամբ՝ աստիճանաբար սահմանափակելով հանրային հեռուստատեսության ալիքներով գովազդի ցուցադրումը: Նախատեսվում է, որ գովազդի հարկը պետք է վճարվի հեռուստաալիքների կողմից, իսկ էլեկտրոնային կապի հարկը պետք է վճարվի այդ ծառայությունները մատուցողների կողմից: Այդ հարկերից ստացված եկամուտները կուղղվեն պետական ֆոնդեր:

Ֆրանսիայի կառավարության մարմինները մանրակրկիտ ուսումնասիրել են հանրային հեռահաղորդակցման համակարգը և 2009թ. մարտի 5-ի ընդունված օրենքով ներդրել են նոր հանրային հեռուստահեռարձակման ծառայություն, համաձայն որի հանրային հեռուստաալիքներից պետք է կրճատվի գովազդը և 2011թ. վերջին վերջնականապես չեղյալ համարվի²:

Ֆրանսիայի տնտեսական համակարգը տնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում դրսևորում է հարաբերական կայունություն՝ պայմանավորված տնտեսական կյանքում պետության զգալի դերակատարմամբ, այսինքն, եթե տնտեսության «խաղաղ» պայմաններում պետական միջամտությունն իրենից ներկայացնում է տնտեսական աճը դանդաղեցնող գործոն, ապա ցնցումային իրավիճակներում այն դրսևորվում է հակառակ արդյունքը:

2009թ. փետրվարին հարկային եկամուտները 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ընկան 21%-ով, հունվարին արդյունաբերական արտադրանքի անկումը կազմեց մոտավորապես 5%: Այս թվերը խորհելու տեղիք են տալիս, սակայն այլ երկրների հետ համեմատության մեջ նույնիսկ կարելի է ասել, որ Ֆրանսիան շահել է³:

Նշենք, որ ՀՀ հարկային համակարգը ամբողջությամբ «հետևում» է Ֆրանսիայի հարկային համակարգին, սակայն ՀՀ և Ֆրանսիայի հարկային համակարգերի միջև տարբերու-

¹ http://www.taxservice.am/uploads/pdf/Francais_Arm.pdf.

² http://www.taxservice.am/uploads/pdf/July_News_July.pdf.

³ <http://www.armedia.am/?action=Analytical&what=show&id=1105500961&lang=arm>.

թյունը կայանում է հարկային մուտքերի չափերի, դրանց հավաքագրման գործընթացի և հետևաբար հարկեր/ՀՆԱ հարաբերության մեջ:

Աղյուսակ 1

Ֆրանսիայի և Հայաստանի հարկային դաշտի համեմատական վերլուծություն

| | Ֆրանսիա | Հայաստան |
|------------------------------|---|--|
| Եկամտահարկ | | |
| հարկ վճարողները | Ֆիզիկական անձինք, ինչպես նաև այն կազմակերպություններն ու կոոպերատիվները, որոնք չեն հանդիսանում բաժնետիրական ընկերություն | ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք |
| հարկվող օբյեկտը | Ֆրանսիայի համար՝ երկրի տարածքում և նրա սահմաններից դուրս ստացած եկամուտը, ոչ ռեզիդենտների համար՝ Ֆրանսիայի տարածքում ստացած եկամուտը | ՀՀ ռեզիդենտի համար՝ ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացած եկամուտը, ոչ ռեզիդենտների համար՝ ՀՀ տարածքում ստացած եկամուտը |
| հարկվող եկամուտը | հիմքում ընկած է ոչ թե ֆիզիկական անձի, այլ ընտանիքի եկամուտը | հարկատուի համախառն եկամտի և օրենքով նախատեսված նվազեցումների դրական տարբերությունն է |
| դրույքաչափերը | 0-56.8%՝ կապված եկամուտների մակարդակից | մինչև 80000դր.՝ 10%, 80000-ից ավելի՝ 8000+80000 դրամը գերազանցող մասի 20%-ը |
| նվազագույն շեմ, նվազեցումներ | | Հարկվող եկամուտը որոշելիս հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են՝ զինծառայողների և դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության հետ կապված եկամուտները, փրկարարական ծառայողների ծառայության հետ կապված եկամուտները, ժառանգության և նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքը և դրամական միջոցները, ոչ առևտրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրվող օգնության գումարները, ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով վճարվող օգնության գումարները և այլն: |
| արտոնություններ | Ֆրանսիայում եկամտահարկի վրա դրված են բնակչության կողմից խնայողությունների կատարման, անշարժ գույքի, բաժնետոմսերի ձեռքբերման խթաններ ստեղծելու գործառույթը: Դա ստեղծում է հարկի հաշվարկների և բազմաթիվ արտոնությունների կիրառման բարդ համակարգ: | |
| Շահութահարկ | | |
| հարկ վճարողները | բաժնետիրական ընկերություններ | ՀՀ ռեզիդենտներն ու ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե տեղափոխվող եկամուտների մասով և ՀՀ ԿԲ-ի: |


| | Ֆրանսիա | Հայաստան |
|------------------------------|---|--|
| հարկման օբյեկտը | գործունեության բոլոր տեսակներից ստացված զուտ եկամուտները | Ռեզիդենտների համար՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, ոչ ռեզիդենտների համար՝ ՀՀ տարածքում ստացած շահույթը |
| դրույքաչափերը | հարկվող շահույթի 39%, իսկ եթե այդ շահույթը ոչ թե վերաներդրվում է, այլ վճարվում է որպես շահաբաժիններ, ապա շահութահարկի դրույքաչափը կազմում է 42% | Շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% դրույքաչափով հարկվող շահույթի նկատմամբ |
| Ավելացված արժեքի հարկ | | |
| հարկ վճարողները | Ձեռնարկություններն ու անհատ ձեռնարկատերերը (իրավաբանական անձինք) | Ապրանքների մատակարարում՝ դրանց սեփականության իրավունքը փոխանցելով մեկ այլ անձի, ծառայությունների մատուցում, անհատույց սպառում, ներմուծում իրականացնող իրավաբանական անձինք |
| հարկման օբյեկտը | իրացվող ապրանքներն ու ծառայությունները, ինչպես նաև ներմուծվող ապրանքները | Ապրանքների մատակարարում՝ դրանց սեփականության իրավունքը փոխանցելով մեկ այլ անձի, ծառայությունների մատուցում, անհատույց սպառում, ներմուծում և օրենքով նախատեսված այլ գործարքների ամբողջ արժեքը |
| դրույքաչափերը | -18.6%՝ բոլոր տեսակի ապրանքների ու ծառայությունների նորմալ դրույքաչափ, -33.33%՝ պերճանքի առարկաների, մեքենաների, ավտոմոբիլային խմիչքների, ծխախոտի սահմանային դրույքաչափ, -7%՝ մշակութային առօրյա իրերի (օրինակ՝ գրքերի) նվազեցման դրույքաչափ, -5.5%՝ առաջին անհրաժեշտության ապրանքների ու ծառայությունների (այդ թվում՝ սնունդ, բացի ավտոմոբիլային խմիչքներից ու շոկոլադից): | ԱԱՀ սահմանվում է 20%՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ |
| արտոնություններ | ներդրումներ իրականացնող կազմակերպություններ: ԱԱՀ վճարումից ազատվում է գործունեության 3 տեսակ՝ բժշկություն և բուժ սպասարկում, կրթություն, հասարակական և բարեգործական բնույթի գործունեություն: ԱԱՀ-ից ազատվում են նաև ապահովագրության տեսակները, վիճակախաղերը, խաղատները: | Հանրակրթական դպրոցները, գիտահետազոտական աշխատանքները, թերթերի ամսագրերի իրացումը, նվազագույն շեմը 58.36 մլն դրամը |

**ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՈՒՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ
 ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԴՐԱ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

Հայաստանի Հանրապետությունում հարկազանձման ոլորտում հիմնախնդրի բացահայտման նպատակով հարկ ենք համարում ուսումնասիրել **ուղղակի հարկերի և անուղղակի հարկերի գումարի և ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը՝** վերջինս համեմատելով **ընդհանուր հարկային եկամուտներ/ ՀՆԱ ցուցանիշի** հետ: Սա մեր կարծիքով հնարավորություն կտա տեսական և գործնական կիրառության տեսանկյունից ներկայացնել ուղղակի և անուղղակի հարկերի բեռը ՀՀ տնտեսության մեջ: Այսպես, գծապատկեր 1-ում և գծապատկեր 4-ում վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ միայն անուղղակի և ուղղակի հարկերի մասով միասին վերցված այդ ցուցանիշը 2002-2009թթ. համար միջինը կազմել է 12.2% (գծապատկեր 2), ընդհանուր հարկային եկամուտների ունեցած 13.6%-ի փոխարեն, ինչը նշանակում է, որ այդ 13.6%-ի մոտ 90%-ը ընդգրկում է ուղղակի և անուղղակի հարկերը, իսկ մնացած 10%-ը այլ հարկային եկամուտները: Մյուս առանձնահատկությունն այն է, որ տարբեր տարիներին այդ երկու ցուցանիշները ունեցել են անկման և աճի ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր միտումներ, որոնք պայմանավորված են եղել հարկային այլ եկամուտների գծով ունեցած մուտքերի փոփոխություններով:


Գծապատկեր 1

ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների բաժնեմասը ՀՆԱ-ում և պետական բյուջեի ընդհանուր եկամուտներում¹



¹ 2002թ. տվյալները վերցված են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2007, էջ 356-357, 2003-2007թթ. տվյալները վերցված են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2008, էջ 358, 2008թ. տվյալները վերցված են http://www.armstat.am/file/article/sv12_08a_211.pdf, <http://www.armstat.am/am/?nid=126&id=01001>, 2009թ. տվյալները վերցված են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբեր» հրատարակումից, էջ 105-109 (Պետական բյուջեի ընդհանուր եկամուտներում չեն ներառվել սոց. ապահովագրման վճարները, իսկ հարկային եկամուտներում չեն ներառվել մաքսատուրքերը):

ՀՀ ուղղակի և անուղղակի հարկերի գումարի հարաբերակցությունը ՀՆԱ-ին և ուղղակի հարկերի բաժնեմասը այդ հարաբերակցության մեջ¹



Այսպես, 2003թ. երկու դեպքում էլ տեղի է ունեցել մասնաբաժնի կրճատում (գծապատկերներ 1-2), 2004թ. հարկային մուտքեր/ ՀՆԱ մասնաբաժինը աճել է նախորդ տարվա համեմատ, այն դեպքում, երբ ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կրճատվել է, 2005թ. երկու ցուցանիշների դեպքում էլ աճ է գրանցվել, 2006թ.՝ հարկային մուտքեր/ ՀՆԱ մասնաբաժինը աճել է նախորդ տարվա համեմատ, իսկ ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում մնացել է նույնը, 2007թ-2008թթ.՝ այդ երկու ցուցանիշների դեպքում էլ աճ է գրանցվել, միայն 2009թ. է, որ հարկային մուտքեր/ ՀՆԱ մասնաբաժինը նվազել է նախորդ տարվա համեմատ, իսկ ուղղակի և անուղղակի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում աճ է գրանցել:

Պատկերն ամբողջացնելով կարող ենք ասել, որ նշված ժամանակաշրջանում հարկային եկամուտներ/ ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը ավելի հաճախ է աճման միտում ունեցել:

Հաջորդ ցուցանիշը, որի մասին կուզենաինք նշել, դա **ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունն** է, որը համեմատելով մեր կողմից արդեն դիտարկված **ուղղակի և անուղղակի հարկերի հանրագումար/ ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի** հետ, գալիս ենք այն եզրակացության, որ ուղղակի հարկերի հարկազանձումը և դրա դինամիկ զարգացման հնարավորությունները յուրահատուկ միջոց են ստվերի առկայության բացահայտման գործում (գծապատկեր 2):

Մասնավորապես, ինչպես նկատվում է գծապատկեր 2-ում, ժամանակաշրջանի ընթացքում տոկոսային ցուցանիշները ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության մասով բավականին մեծ տատանումներ են տվել, ինչը չի նկատվում անուղղակի հարկերի հանրագումար/ ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի դեպքում: Եթե վերցնենք միջինացված ցուցանիշները, ապա դրանք հետևյալն են՝ ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է մոտ 37.0%, իսկ անուղղակի հարկերի հանրագումար/ ՀՆԱ հարաբե-

¹ Նույն տեղում:

րակցության ցուցանիշը՝ 12.2%: Սակայն վերջիններս չեն կարող արտահայտել հարկազանձման գործընթացներում հիմնախնդիրները: Առավել ուշագրավ է այդ ցուցանիշների տարեկան կտրվածքով ուսումնասիրությունը և համեմատությունը: Այսպես, եթե 2002թ. անուղղակի հարկերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է մոտ 22.9%, իսկ անուղղակի հարկերի հանրագումար/ ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը՝ 11.8%, իսկ 2003թ. այն 23.4% և 11.2% համապատասխանաբար, ապա նշանակում է, որ չնայած ուղղակի հարկերի բաժնեմասը աճել է, այնուհանդերձ ուղղակի և անուղղակի հարկերի գծով հարկման բաժնեմասը կրճատվել է, այսինքն՝ անուղղակի հարկերի գծով աճի տեմպերն ավելի նվազել են, ինչը երևում է նաև աղյուսակ 1-ում՝ 15.1% ուղղակի հարկերի դեպքում, 12.7%՝ անուղղակի հարկերի: 2004թ. պատկերն ավելի է փոխվել. ուղղակի հարկեր/անուղղակի հարկեր հարաբերակցության ցուցանիշը կազմել է մոտ 33.0%, իսկ անուղղակի հարկերի հանրագումար/ ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը՝ 11.1%, այսինքն՝ այդ դեպքում ևս ուղղակի հարկերի մասնաբաժնի աճին զուգընթաց անուղղակի հարկերը աճ չեն ունեցել, ինչպես ցույց է տրված աղյուսակ 1-ում բերված հավելաճի տեմպերի տարբերության մեջ: Այլ խոսքով ուղղակի հարկերի դեպքում հավելաճի տեմպը կազմել է 52.3%, անուղղակի հարկերի դեպքում՝ 8.0%: 2005թ.՝ ուղղակի հարկերի բաժինը անուղղակի հարկերի մեջ կրկին աճել է՝ այն կազմելով 39.5%, ի տարբերություն անուղղակի հարկերի գումարի ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշի, ինչը աննշան է աճել, կազմելով 11.5%:

Վերոգրյալից կարող ենք եզրակացնել, որ ուղղակի հարկերի գծով կրկին ավելի բարձր աճի տեմպեր պետք է ունենանք՝ ուղղակի հարկերի գծով 39.7%, անուղղակի հարկերի գծով՝ 16.9% (աղյուսակ 1): 2006թ. ուղղակի հարկերի տեսակարար կշիռն անուղղակի հարկերում կազմել է 49.0%, ինչը ամենաբարձրն է եղել ամբողջ ժամանակաշրջանի համար, որին զուգահեռ ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռները մնացել են անփոփոխ 2005թ. նկատմամբ՝ շուրջ 11.5%: Համաձայն մեր կողմից կատարված վերլուծության, կարող ենք ենթադրել, որ ուղղակի հարկերի գծով հավելաճի տեմպը կրկին մեծ տարբերությամբ պետք է գերազանցեր անուղղակի հարկերին. ուղղակի հարկերի գծով այն կազմել է 37.7%, անուղղակի հարկերի գծով՝ 11.0%: 2007թ. ուղղակի հարկերի մասնաբաժինը անուղղակի հարկերում 2006թ. նկատմամբ նվազել է և կազմել 42.2%, իսկ ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում աճել է, կազմելով 13.1%, ինչը ենթադրում էր, որ փոփոխություն պետք է լիներ նաև հավելաճի տեմպերում: Ընդ որում, 2007թ. առաջին անգամ ուղղակի հարկերի գծով հավելաճի տեմպերում ավելի բարձր ցուցանիշ գրանցվեց, քան անուղղակի հարկերի դեպքում (աղյուսակ 1):

Մասնավորապես, ուղղակի հարկերը աճել են 21.3%, ապա անուղղակի հարկերի դեպքում այն կազմել էր 40.7%: 2008թ. ուղղակի հարկեր/ անուղղակի հարկեր հարաբերակցությունը կրկին նվազել է (38.4%), որին զուգահեռ ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում աճ է՝ դառնալով 13.8%: Այստեղից ենթադրվում է, որ 2008թ. նույնպես անուղղակի հարկերի դերակատարումը մեծացել է հարկազանձման գործընթացում, նույնիսկ հավելաճի տեմպերի առումով այն կրկին գերազանցել է ուղղակի հարկերին՝ ուղղակի հարկերի 14.4% հավելաճի դիմաց անուղղակի հարկերի աճի տեմպը կազմել է 25.8%: 2009թ. դրական աճ է նկատվել ուղղակի հարկերի գծով: Այսպես, 2009թ. ուղղակի հարկեր/ անուղղակի հարկեր հարաբերակցությունը կտրուկ աճել է՝ կազմելով 47.8%, իսկ ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում աճել է՝ կազմելով 13.9%: Այդ փոփոխությունն, անշուշտ, կապված է ուղղակի և անուղղակի հարկերի մասով ունեցած հավելաճի տեմպերում առկա փոփոխությունների հետ, որոնք դարձյալ եղել են ի օգուտ ուղղակի հարկերի: Այսպես,

անուղղակի հարկերի մասով հավելածը եղել է բացասական՝ -18.5%, սակայն ուղղակի հարկերի մասով այն կազմել է 1.5%, ինչը չնայած բավականին փոքր ցուցանիշ է անցած տարիներին ունեցած արդյունքների հետ, չնայած 20 տոկոսային կետով ավել է քան անուղղակի հարկերի դեպքում: Համեմատության համար նշենք, որ եվրոպական երկրներում 2006 թվականին ուղղակի հարկեր/անուղղակի հարկեր հարաբերակցության առավել բարձր ցուցանիշ է գրանցվել. Դանիայում, որտեղ ուղղակի հարկերը կազմել են ընդհանուր հարկային եկամուտների 61.5%-ը, անուղղակի հարկերը՝ 35.9%-ը, այսինքն՝ այս հարաբերակցությունը կազմել է 1.7%, Նորվեգիայում՝ 1.5%, Բելգիայում՝ 1.3%, Ֆինլանդիայում՝ 1.3%, Մեծ Բրիտանիայում՝ 1.2%, Շվեդիայում՝ 1.2%, Լյուքսեմբուրգում՝ 1.1%¹:

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ՀՆԱ-ի աճի 2002-2009թթ. դինամիկան²

| Ցուցանիշները | Տարիները | | | | | | |
|--|-------------|---------------|---------------|--------------|-------------|--------------|--------------|
| | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
| տոկոսային աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ | | | | | | | |
| Համախառն ներքին արդյունք** | 19.2 | 17.4 | 17.6 | 18.4 | 18.6 | 15.8 | -13.2 |
| Պ/բ ընդհանուր եկամուտներ պաշտ. տրանսֆերտներ | 27.9 | 3.5 | 24.0 | 17.8 | 33.2 | 11.3 | -12.3 |
| Պ/բ հարկային եկամուտներ, այդ թվում* | 14.7 | 18.0 | 21.1 | 20.9 | 32.1 | 22.2 | -14.8 |
| 2.1 շահութահարկ | 1.1 | 81.8 | 45.6 | 40.1 | 15.6 | 14.2 | -5.1 |
| 2.2 եկամտահարկ | 34.4 | 21.4 | 30.4 | 33.5 | 31.8 | 14.7 | 12.1 |
| Ընդամենը եկամտային հարկեր | 15.1 | 52.3 | 39.7 | 37.7 | 21.3 | 14.4 | 1.5 |
| 2.3 գույքահարկ | -25.0 | -250.0 | -96.7 | 33.3 | -150.0 | 50.0 | -33.3 |
| 2.4 հողի հարկ | 900.0 | -33.3 | -60.0 | 150.0 | 0.0 | -20.0 | 25.0 |
| Ընդամենը գույքային հարկեր | 8.4 | -177.8 | -107.1 | 220.0 | 37.5 | -13.6 | 15.8 |
| Ընդամենը ուղղակի հարկեր | 15.1 | 52.3 | 39.7 | 37.7 | 21.3 | 14.4 | 1.5 |
| 2.5 ԱԱՀ | 13.5 | 9.4 | 24.5 | 13.0 | 49.5 | 28.3 | -20.1 |
| 2.6 Ակցիզային հարկ | 10.8 | 4.1 | -5.2 | 3.4 | 4.0 | 10.6 | -6.8 |
| Ընդամենը անուղղակի հարկեր | 12.7 | 8.0 | 16.9 | 11.0 | 40.7 | 25.8 | -18.5 |
| 2.7 Հաստատագրված վճարներ | 25.0 | 46.3 | 11.1 | 16.2 | 18.5 | 13.4 | 10.3 |
| 2.8 Պարզեցված հարկ | 35.1 | 44.0 | -6.9 | 14.9 | 29.9 | -33.0 | -95.5 |
| 2.9 Այլ հարկային եկամուտներ | 33.3 | 8.3 | 21.8 | 94.7 | 7.0 | 53.0 | -45.5 |

Ամփոփելով գծապատկեր 2-ում բերված պաշտոնական տվյալները և մեր կողմից կատարված վերլուծության արդյունքները, կարող ենք պնդել, որ Հայաստանի Հանրապետությունում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունն ավելի քան մտահոգիչ է, անկայուն և անկանխատեսելի, որը պայմանավորված է հարկային վարչարարության անարդյունավետությամբ և ստվերայնության առկայությամբ: Ավելին, ուղղակի/ անուղղակի հարկեր հարաբերակցության ցուցանիշի կտրուկ աճի անկումների դինամիկան ցույց է տալիս այն ստվերը, որն առկա է ուղղակի հարկային եկամուտների գծով վճարող գործատուների


¹ Taxation trends in the European Union, Data for the EU Member States and Norway, 2008 edition, p. 247.
² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ 2002թ. տվյալները վերցված են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2007, էջ 356-357, 2003-2007թթ. տվյալները վերցված են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2008, էջ 358, 2008 թվ. տվյալները վերցված են http://www.armstat.am/file/article/sv12_08a_211.pdf, <http://www.armstat.am/am/?nid=126&id=01001>, 2009թ. տվյալները վերցված են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբեր» հրատարակումից, էջ 105-109:

ակտիվության սուբյեկտների շրջանակներում: Կարելի է հետևություն անել, որ ուղղակի հարկեր/անուղղակի հարկեր հարաբերակցությունը հոգուտ ուղղակի հարկերին փոխելու ուղղությամբ կա օրենսդրական փոփոխություն կատարելու անհրաժեշտություն:

Ուստի, համանման ենթադրությունների հիմքով, հարկ ենք համարում կատարել ուղղակի և անուղղակի հարկերի էլաստիկության գործակցի հարաբերակցության ցուցանիշի վերլուծություն ՀՆԱ-ի նկատմամբ, այսինքն՝ պարզել, թե ամեն միավոր ՀՆԱ տոկոսային աճը այդ երկու հարկատեսակների գծով հարկման քանի տոկոս հավելած է առաջացնում, ինչպես նաև ցույց է տալիս միավոր տնտեսական աճի հարկազանձման խթանը երկու հարկատեսակների գծով (գծապատկեր 3): Ստացված տվյալները ցույց են տալիս, որ մինչև 2006թ. էլաստիկության գործակցը ուղղակի հարկերի մասով գերազանցել է համանման ցուցանիշին անուղղակի հարկերի գծով: 2007-2008թթ. պատկերը փոխվել է՝ հոգուտ անուղղակի հարկեր, սակայն 2009թ. կրկին ուղղակի հարկերի գծով էլաստիկության գործակցը աճել է: Ի դեպ 2009թ. առանձնահատուկ է անցած տարիների համեմատությամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ այդ տարի էլաստիկությունը հաշվարկվել է տնտեսության մեկ միավոր անկման նկատմամբ: Այսպես՝ 2009թ. 1% ՀՆԱ անկումը բերել է անուղղակի հարկերի գծով մուտքերի 1.4% -ով կրճատման, իսկ ուղղակի հարկերը աճել են 0.1%:

Գծապատկեր 3

Ուղղակի և անուղղակի հարկերի հավելածի էլաստիկությունը ՀՆԱ հավելածի նկատմամբ¹



Ամփոփելով վերոգրյալ խնդիրները և կատարված վերլուծության արդյունքները՝ կարելի է հիմնավորել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում էական առաջընթաց հարկային համակարգի կատարելագործման, հարկազանձման մեխանիզմների բարելավման ուղղությամբ չի իրականացվել: Բացի այդ, կատարված վերլուծության արդյունքները վկայում են նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության, հարկային վարչարարության ու հարկազանձման մեխանիզմների արդյունավետության բարձրացման անհրաժեշտության մասին:

¹ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ 2002թ. տվյալները վերցված են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2007, էջ 356-357, 2003-2007թթ. տվյալները վերցված են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2008, էջ 358, 2008 թ. տվյալները վերցված են http://www.armstat.am/file/article/sv12_08a_211.pdf, <http://www.armstat.am/am/?nid=126&id=01001>, 2009թ. տվյալները վերցված են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբեր» հրատարակումից, էջ 105-109:



**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՂՐՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետությունը ունենալով զարգացած բանկային համակարգ և միևնույն ժամանակ բանկային համակարգի նկատմամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված խիստ վերահսկողություն (ինչն իրականացվում է Բազել 2-ով ամրագրված կանխարգելիչ վերահսկողությամբ (prudential regulation)), դրան զուգահեռ չունի զարգացած արժեթղթերի շուկա և ֆինանսական շուկայի ակտիվ մասնակիցներ: Կարևորելով ՀՀ տնտեսության վրա բանկերի ունեցած դերը չի կարելի մոռանալ նաև տնտեսության նյարդային կենտրոն հանդիսացող ֆինանսական շուկան: Ռիսկերի վրա հիմնված վերահսկողությունն իր հերթին հանգեցրել է բանկերի կողմից ՓՄՁ-ների և այլ տնտեսվարող սուբյեկտների ֆինանսավորման նկատմամբ պահանջների խստացմանը, և ներկայումս ՀՀ բանկերի վարկային պորտֆելում զգալի տեսակարար կշիռ են կազմում այն սուբյեկտները, որոնց գործունեության բնույթը ռիսկային է կամ գրեթե ոչ ռիսկային: Ակնհայտ է, որ ՀՀ-ում բանկերը ֆինանսավորում են միայն ոչ ռիսկային գոտում գտնվող կազմակերպություններին, կամ եթե նույնիսկ ֆինանսավորումը իրականացվում է, ապա այն իրականացվում է շուկայականից առավել բարձր վարկային տոկոսադրույքներով:

ՀՀ-ում տնտեսվարող շատ սուբյեկտներ բախվելով նշված խնդիրների հետ սկսել են ֆինանսավորում հայթայթել արտերկրից կամ համաձայնվել բանկերի բավականին բարձր տոկոսադրույքներով ֆինանսավորման առաջարկներին: Այդ է փաստում նաև վիճակագրության ծառայության կողմից հրապարակված տեղեկատվությունը, համաձայն որի ներդրումային միջավայրի վրա ազդող գործոններից են հանդիսանում արտադրանքի նկատմամբ առկա պահանջարկը, առևտրային վարկերի տոկոսադրույքը, ներդրումային ծրագրերի իրականացման համար բանկային վարկերի ստացման գործող մեխանիզմը, ներդրումային ռիսկերը, երկրում տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ներդրումային գործընթացները կարգավորող գործող իրավական նորմատիվային դաշտը, հաղորդակցման առկա ցանցերը և այլն...

Ըստ վերոնշյալ հետազոտության արդյունքներով ստացված պատասխանների (հետազոտված 1963 կազմակերպություններից առաջադրված հարցերի գծով ստացվել է 11185 պատասխան), արտադրանքի նկատմամբ առկա պահանջարկը, որպես գործոն հիմնականում նպաստում է ներդրումային գործընթացներին, իսկ վերը թվարկված մնացած գործոնները՝ վարկավորման պայմանները, վարկային տոկոսադրույքը, օրենսդրամորմատիվային դաշտը, երկրի տնտեսական ու քաղաքական իրավիճակը և այլն, ըստ պատասխանների արդյունքների, ավելի շուտ սահմանափակում են, քան նպաստում դրանց: Ընդ որում, պատասխանների թվով, վարկավորման պայմանները, վարկային տոկոսադրույքը, որպես ներդրումային գործընթացներին սահմանափակող գործոններ, եղել են ամենաշատը՝ սահմանափակող պատասխանների ընդհանուր թվաքանակի 34.4%-ը:

Ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնների կառուցվածքն, ըստ ստացված պատասխանների, արտացոլված է ստորև բերված գծապատկեր 1-ում:



Համադրելով մասնավորապես 2010 թվականի¹ ՀՀ բանկերի վարկավորման ճյուղերը (գծապատկեր 2) եվրոպական մի շարք երկրների նմանատիպ ցուցանիշների հետ (աղյուսակ 1)

1 Աղբյուրը՝ www.armstat.am.

կարող ենք փաստել հետևյալը՝ որ ՀՀ-ում վարկավորման մեծ բաժին կազմող վարկերը (սպառողական վարկերը, առևտուրը...) եվրոպական երկրների բանկերը ընդհանուր վարկավորման տարեկան ցուցանիշներում կազմում են առավել փոքր չափեր (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

(ծավալը՝ մլրդ եվրո)²

| h/h | Երկրի անվանումը | Ընդհանուր վարկերը | Մեկ բանկին ընկնող վարկերը | Հիփոթեքային վարկեր | %-ը ընդհանուր վարկերում | Սպառողական վարկեր | %-ը ընդհանուր վարկերում |
|-----|-----------------|-------------------|---------------------------|--------------------|-------------------------|-------------------|-------------------------|
| 1 | Միաց. Թագ. | 3 967,66 | 11,84 | 824,18 | 21% | 196,12 | 5% |
| 2 | Գերմանիա | 3 140,40 | 1,38 | 791,60 | 25% | 2 237,00 | 71% |
| 3 | Իսպանիա | 2 057,55 | 5,76 | 590,60 | 29% | 226,53 | 11% |
| 4 | Ֆրանսիա | 1 831,00 | 4,57 | 729,00 | 40% | 141,20 | 8% |
| 5 | Իտալիա | 1 783,36 | 2,21 | 265,56 | 15% | 52,67 | 3% |
| 6 | Նիդեռլանդներ | 981,00 | 9,71 | 393,00 | 40% | 24,00 | 2% |
| 7 | Իռլանդիա | 630,90 | 8,09 | 123,00 | 19% | 18,37 | 3% |
| 8 | Բելգիա | 515,40 | 4,69 | 115,50 | 22% | 12,90 | 3% |
| 9 | Շվեյցարիա | 493,14 | 1,49 | 394,55 | 80% | 4,81 | 1% |
| 10 | Դանիա | 465,74 | 3,06 | 263,15 | 57% | 18,59 | 4% |
| 11 | Ավստրիա | 391,53 | 0,45 | - | 0% | 115,10 | 29% |
| 12 | Ռուսաստան | 341,47 | 0,30 | 33,53 | 10% | 56,56 | 17% |
| 13 | Նորվեգիա | 296,09 | 2,13 | 126,86 | 43% | 45,27 | 15% |
| 14 | Շվեդիա | 238,28 | 1,89 | N/A | N/A | N/A | N/A |
| 15 | Լյուքսեմբուրգ | 194,57 | 1,25 | 14,60 | 8% | 1,40 | 1% |
| 16 | Հունաստան | 183,72 | 2,83 | 52,50 | 29% | 27,54 | 15% |
| 17 | Թուրքիա | 158,66 | 3,45 | 18,08 | 11% | 34,52 | 22% |
| 18 | Ֆինլանդիա | 122,50 | 0,36 | 58,55 | 48% | 8,34 | 7% |
| 19 | Լեհաստան | 117,39 | 0,18 | 32,76 | 28% | 28,52 | 24% |
| 20 | Իսլանդիա | 80,20 | 16,04 | 13,54 | 17% | 8,98 | 11% |
| 21 | Չեխիա | 67,06 | 1,81 | 23,00 | 34% | 5,17 | 8% |
| 22 | Հունգարիա | 64,79 | 1,71 | 11,77 | 18% | 7,84 | 12% |
| 23 | Ուկրաինա | 57,53 | 0,33 | 6,99 | 12% | N/A | N/A |
| 24 | Կիպրոս | 41,02 | 0,19 | 8,07 | 20% | 9,68 | 24% |
| 25 | Խորվաթիա | 28,78 | 0,87 | 6,17 | 21% | 9,15 | 32% |
| 26 | Սլովենիա | 28,30 | 1,18 | 2,26 | 8% | 5,72 | 20% |
| 27 | Սլովակիա | 24,59 | 0,95 | 8,13 | 33% | 1,26 | 5% |
| 28 | Լատվիա | 21,42 | 0,86 | 6,76 | 32% | 1,03 | 5% |
| 29 | Մալթա | 19,10 | 1,06 | 2,10 | 11% | 0,70 | 4% |
| 30 | Բուլղարիա | 18,90 | 0,65 | 2,96 | 16% | 3,43 | 18% |
| 31 | Լիտվա | 16,44 | 1,49 | 4,61 | 28% | 0,84 | 5% |
| 32 | Էստոնիա | 11,38 | 0,76 | 5,63 | 49% | 0,80 | 7% |
| 33 | Լիխտենշտեյն | 10,99 | 0,73 | 4,18 | 38% | N/A | N/A |
| 34 | Սերբիա | 10,44 | 0,30 | 1,29 | 12% | 0,72 | 7% |
| 35 | Մոնակո | 7,22 | 0,18 | 2,32 | 32% | 1,60 | 22% |
| 36 | Անդորրա | 6,48 | 1,30 | N/A | N/A | N/A | N/A |
| 37 | Ադրբեջան | 3,73 | 0,08 | 0,25 | 7% | 1,32 | 35% |
| 38 | Ալբանիա | 2,40 | 0,14 | 0,54 | 23% | 0,85 | 35% |
| 39 | Մոնտենեգրո | 2,24 | 0,20 | 0,67 | 30% | 0,08 | 4% |
| 40 | Մոլդովա | 1,25 | 0,08 | 0,16 | 13% | 0,18 | 14% |
| 41 | Հայաստան | 0,96 | 0,04 | 0,12 | 13% | 0,29 | 30% |

¹ Դինամիկան 2007-2010 թվականների համար գրեթե մնացել է անփոփոխ:

² Տեղեկատվությունը հիմնված է ԵԲՖ-ի Հայաստանի բանկերի միությանը տրամադրած տվյալների վրա:

Հայաստանի համար առաջնահերթ խնդիր է տնտեսական աճի ֆինանսավորման աղբյուրների «տարատեսականացումը», դրա առավել ճկուն և շուկայական մեխանիզմների ձևավորումը, որը պետք է նպաստի տնտեսության իրական հատված ուղղվող միջոցների ավելացմանը: Նման իրավիճակում չի կարելի չհամաձայնվել այն մտքի հետ, որ «բյուջետային միջոցների բացակայության, առևտրային բանկերի կողմից տնտեսության իրական հատվածի համար երկարաժամկետ վարկերի ապահովման անընդունակության պայմաններում արժեթղթերի շուկայի մեխանիզմի միջոցով ներդրումների ներգրավումը դուրս է գալիս առաջին տեղ»¹: Ընդ որում, առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ բարենպաստ մակրոտնտեսական միջավայրի դեպքում արժեթղթերի շուկայի գործիքները կարող են զգալի ավանդ ունենալ իրական հատվածում կապիտալ ներդրումների ավելացման մեջ:

Զարգացած տնտեսություն ունեցող երկրներում արժեթղթերի շուկան տնտեսության կարևորագույն բաղկացուցիչ տարրերից մեկն է: Մի շարք զարգացող երկրներում բաժնետոմսերի և պարտատոմսերի թողարկումից ստացված միջոցները կազմում են ոչ ֆինանսական ընկերությունների ֆինանսավորման ընդհանուր ծավալի 40-60%-ը: ԱՄՆ-ում և Կանադայում կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխումից ստացված եկամուտները հասնում են բանկային վարկերի ընդհանուր ծավալի 50-75%-ին²: 1990-ական թվականների սկզբին բաժնետոմսերի թողարկումը ապահովել է Հարավային Կորեայի կորպորատիվ հատվածի ֆինանսավորման ծավալի 44.3%-ը, Մեքսիկայում՝ 69.4%-ը, Թուրքիայում՝ 60.9%-ը³:

Առաջ անցնելով նշենք, որ արժեթղթերի հրապարակային տեղաբաշխումը չի կարող ներդրումների ներգրավման մասշտիբ միջոց լինել բոլոր ընկերությունների համար: Ընկերությունների մեծ մասը, որոնք առանձնանում են կառավարման ոչ թափանցիկ և անարդյունավետ համակարգով, աճի հեռանարների բացակայությամբ և ֆինանսական ծանր դրությամբ, չեն կարող հաջողության հասնել արժեթղթերի շուկայում: Ուստի արժեթղթերի շուկայի մեխանիզմի օգտագործումը հասանելի և արդյունավետ է միայն այն ընկերությունների համար, որոնք աչքի են ընկնում կառավարման համակարգի թափանցիկությամբ և արդյունավետությամբ, տեղեկատվական աճող բացությամբ, գործունեության ընդլայնման բարենպաստ հեռանկարներով, բիզնեսի վարման քաղաքակիրթ ձևով և ներդրողների հետ աշխատանքի որոշակի փորձով: Այսպիսով՝ ունենալով մի տնտեսություն, որտեղ ֆինանսական շուկայի մասնակիցներից գործուն և զարգացած շուկա են ապահովում բանկերը, սակայն որոնք բավարար չափերով չեն ապահովում տնտեսության իրական սեկտորի վարկավորումը՝ վերջիններիս ռիսկային բնույթ ունենալու պատճառով և, իհարկե, փաստելով կանխարգելիչ վերահսկողության (prudential regulation) դերը բանակային համակարգում և հաշվի առնելով ՀՀ տնտեսության ռիսկային բնույթը, անհրաժեշտություն է առաջանում ինքնըստինքյան ֆինանսական շուկայի այլ կառույցներ ներգրավելու մեջ մասնավորապես ներդրումային հիմնադրամների տարատեսակ վենչուրային հիմնադրամներ:

Ներդրումային հիմնադրամների տարատեսակ հանդիսացող վենչուրային ֆինանսավորման համակարգը բնորոշ է նմանատիպ ռիսկային տնտեսություն ունեցող երկրներին, վերջիններս իրենցից ներկայացնում են բիզնեսի ֆինանսավորման այլընտրանքային ձև բանակային ֆինանսավորման համակարգի հետ միաժամանակ, բայց նաև իր էությամբ, միգուցե, անփոխարինելի և ամենաարդյունավետ ֆինանսավորման եղանակը՝ որոշակի ձեռնարկությունների՝ հատկապես, ինովացիոն ոլորտում գործող փոքր ու միջին ձեռնարկու-

¹ Шихвердиев А. П. Рынок ценных бумаг как фактор инвестиций // Финансы. 2000, N 2.

² Попов В., Конструктор для финансиста. //Эксперт, 1999, N38, стр. 19.

³ Булатов В.В. Фондовый рынок в структурной перестройке экономики.-М.: Наука, 2002, стр. 67.

թյունների համար: Իսկ փոքր ու միջին ձեռնարկությունների դերը երկրի տնտեսության զարգացման հարցում անհնար է թերագնահատել: Ըստ էության, փոքր ու միջին ձեռնարկատիրության արդյունավետ գործունեությունը ցանկացած երկրի համար ունի ռազմավարական նշանակություն:

Հայաստանի համար փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման կարևորության փաստը ամրագրված է նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարական զարգացման հիմնադրույթներում», միևնույն ժամանակ, պետք է նշել, որ Հայաստանում ձեռնարկատիրության զարգացումը, ելնելով բազմաթիվ ներքին ու արտաքին գործոններից, պետք է ունենա որոշակի գերակայություններ: Առկա բնական այլ ռեսուրսների հիման վրա արտադրությունների կազմակերպման կարևորությունը չբացառելով հանդերձ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Հայաստանի համար ամենահեռանկարային ուղղությունը կարող է լինել ինովացիոն տեխնոլոգիաների զարգացման ոլորտը, որը ներառում է գիտատեխնիկական մշակումների բարձր կոմերցիոն ներուժը, վենչուրային ներդրողների առկայությունը և պրոֆեսիոնալ կառավարիչների ինստիտուտի ձևավորումը, որոնք, կարողանալով գնահատել կոնկրետ բիզնեսի զարգացման հեռանկարները, դառնում են յուրատեսակ կապող օղակ կապիտալի և դրա կոնկրետ կիրառման մեջ: Գաղտնիք չէ, որ Հայաստանն ավանդաբար ունի գիտատար ռեսուրսների համեմատաբար մեծ ներուժ: Սա նշանակում է, անչափ նպատակահարմար կլինի այս ռեսուրսի արդյունավետ օգտագործման և կիրառման խնդիրների լուծմանն ուղղված քայլերի իրականացումը: Թե ինչպիսին է այդ գիտատեխնիկական մշակումների կոմերցիոն իրականացման ներուժը, բնականաբար, լրացուցիչ գնահատականների կարիք է գոյում, որի իրականացման ամենակենսունակ ձևն, ըստ էության վենչուրային համակարգն է: Այդ իսկ պատճառով, վենչուրային համակարգի ներդրումը Հայաստանում կարող է ունենալ չափազանց որոշիչ նշանակություն տնտեսության որակական զարգացման խնդիրների տեսանկյունից: Անհրաժեշտ է նշել ևս մեկ հանգամանք, որի ճիշտ օգտագործումը պետք է լինի Հայաստանում ապագա վենչուրային համակարգի զարգացման ազդակներից մեկը: Խոսքը վերաբերվում է մեծագույն ներուժ ունեցող հայկական սփյուռքի առկայությանը, որի մասնակցության ապահովումը սաղմնային և սկզբնական (Seed և Start up) փուլերում կարող է էական ազդեցություն ունենալ համակարգի կայացման համար խիստ անհրաժեշտ հաջողված ներդրումների օրինակների ստեղծման և այդ պրակտիկայի հետագա մասսայականացման համար: Հայաստանում ՓՄՁ աջակցության ժամանակակից ենթակառուցվածքները և գործուն մեխանիզմները անհրաժեշտ նախապայմաններ են ստեղծել ՓՄՁ հեռանկարային զարգացման համար՝ ուղղված գիտատար և նորարարական արտադրությունների աջակցմանը, տեխնոլոգիաների փոխանցման համար նպաստավոր պայմանների ձևավորմանը և ՓՄՁ սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը: Բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունները մեր հանրապետությունում քիչ չեն, իսկ «Viasphere» տեխնոպարկի տնօրենի կարծիքով, «Հայաստանում պետք է ստեղծել 2-3 վենչուրային հիմնադրամներ՝ յուրաքանչյուրը մոտ 50 մլն ԱՄՆ դոլար կապիտալով, քանի որ բանկային համակարգը չի շտապում ֆինանսավորել ռիսկային նախագծերը»¹:

Հայաստանում վենչուրային համակարգի ներդրման կարևորությունը փաստելով հանդերձ, անհրաժեշտ է արձանագրել, որ այսօր հանրապետությունում առկա են մի շարք խնդիրներ,

¹ Деловой Экспресс, N 14 (622), Апрель 2005, стр. 7.

որոնց լուծման պարագայում միայն կարելի է ակնկալել լիարժեք և արդյունավետ գործող վեճաբանական համակարգ:

Ստորև ներկայացվում են առկա հիմնական խնդիրները,

- արժեթղթերի շուկայի ոչ բավարար զարգացվածությունը¹:
- գիտատեխնիկական մշակումների իրականացման խթանման, գնահատման, շուկայացման ուղղությամբ զարգացած ենթակառուցվածքների բացակայությունը
- վեճաբանական կապիտալի ձևավորման խնդիրներին առնչվող օրենսդրական դաշտի անկատարությունը
- ինստիտուցիոնալ ներդրողների բացակայությունը:

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

*ՄԿԵՐԱՍԿԱՆ Կառավարման
ակադեմիայի ասպիրանտ*

ԴՐԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դրամավարկային քաղաքականությունը միշտ էլ եղել է ու կմնա հասարակության և պետության քննարկումների օբյեկտ, քանի որ դրա արդյունավետ կիրառման օգնությամբ է մաս, որ հնարավոր է լինում ապահովել կայուն տնտեսական աճ և տնտեսությունում ինֆլյացիայի ցածր մակարդակ: Ցանկացած երկրում տնտեսության կայունացման հիմնաքար է հանդիսանում ազգային արժույթի ներդրումը: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ազգային արժույթը ներդրվեց Խորհրդային Միության փլուզումից և ՀՀ անկախացումից երկու տարի անց (1993թ. նոյեմբերի 23), մյուս երկրների համեմատ բավական ուշացումով:

1991-1994թթ., երբ ՀՀ-ում նկատվում էր գների աճի բարձր մակարդակ, ինչը պայմանավորված էր մյուս երկրներում չընդունված՝ ռուսական ռուբլու ներհոսքով դեպի ՀՀ տնտեսություն, որպես գները կայունացնող գործիք որդեգրվել էր փողի ազդեցատների նպատակադրման ռազմավարությունը (1994թ.): Սակայն տարիների փորձը ցույց տվեց, որ փողի ազդեցատները ոչ միայն չեն ապահովում գների կայունացում, այլև թուլացնում են դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը և հասարակության վստահությունը դրա օպտիմալության և թափանցիկության վերաբերյալ: Այս դեպքում սահմանափակվում էր փողի ազդեցատների՝ որպես գնաճը կարգավորող գործիքի հնարավորությունները, որը պայմանավորված էր փողի ազդեցատների և գնաճի միջև կայուն կապի բացակայությամբ: Հաշվի չէին առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են փողի պահանջարկի տատանողական վարքագիծը, արտաքին ցնցումները, երկրում փողի զանգվածի կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև հասարակության սպասումները: Չնայած կառավարության կողմից իրականացվող բարեփոխումային ծրագրերի՝ կենտրոնական բանկի (այսուհետև նաև՝ ԿԲ) կողմից շարունակաբար կառավարությանն ուղղվող վարկային միջոցները հնարավորություն չէին ստեղծում արդեն իսկ առկա գնաճը վերահսկել և կարգավորել: Երկրում առկա գնաճի օբյեկտիվ պատճառներին զուգահեռ առաջացել էր նաև արհեստական գնաճի միտումներ, մասնավորապես՝

¹ «Վեճաբանական համակարգը Հայաստանում» ներդրումային հայեցակարգ, Կորպորատիվ կառավարման կենտրոն, 2005թ.:

բնակչության կողմից ապրանքների գների հետագա բարձրացումների սպասումներից ելնելով ապրանքների գերկուտակումներ, ինչն էլ արհեստականորեն բարձրացնում էր արդեն իսկ բարձր գները՝ ստեղծելով մուլտիպլիկատորի էֆեկտ:

Ազգային արժույթի ներդրմանը հաջորդեց ՀՀ ԿԲ-ի վերակազմավորումը և 1994թ. ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակումը: Գնաճի կայուն և ցածր մակարդակի ապահովման համար փողի զանգվածը սահմանվեց որպես դրամավարկային քաղաքականության միջանկյալ, իսկ փողի բազան՝ գործառնական նպատակ: Այս միջոցով ԿԲ-ն ապահովեց մակրոտնտեսական կայունություն, և արդեն 1994թ. երկրորդ կիսամյակում գնաճը նվազեցվեց մինչև 1761% 1993թ. 11000%-ի համեմատ¹: 1995 թվականը աչքի ընկավ տնտեսության աշխուժացմամբ, իսկ գնաճը կազմեց ընդամենը 32.2%²: Ձեռքբերումները իհարկե ակնհայտ էին, սակայն բավարար չէին դրամավարկային քաղաքականությունը ամուր հիմքերի վրա դնելու համար: 1998թ. ԿԲ-ն անցում կատարեց փողի ագրեգատների ազգային արժույթի՝ դրամային զանգվածի և դրամային բազայի նպատակադրմանը: Այս քայլը սահմանափակեց սպառողական շուկայում դրամային փողի զանգվածը, հետևաբար կրճատվեց ամբողջական պահանջարկը, ինչն էլ հանգեցրեց գների իջեցման: Սակայն այս քաղաքականությունը ևս չստեղծեց փողի ագրեգատների և գնաճի միջև լիարժեք կայուն կապ: Փողի պահանջարկը, կապված արտերկրից ներհոսող մեծաքանակ դոլարի հետ, անընդհատ գտնվում էր տատանումների մեջ, ինչը հնարավորություն չէր տալիս, որպեսզի ճիշտ կանխատեսումներ կատարվեն անհրաժեշտ փողի զանգվածի վերաբերյալ: Արդյունքում փողի իրական զանգվածը պարբերաբար մեծ տարբերությամբ շեղվում էր կանխատեսված մակարդակից:

1998թ. աշխուժացող արտաքին տրանսֆերտների ներհոսքը պատճառ էր հանդիսանում արտարժույթով ավանդների տեսակարար կշռի անընդհատ ու մեծ տեմպերով ավելացմանը ընդհանուր ավանդների մեջ: Վերջինս ստիպեց ՀՀ ԿԲ-ին, որպեսզի անցում կատարվի փողի ագրեգատների ազգային արժույթային մասի, այն է՝ դրամային փողի զանգվածի և դրամային փողի բազայի նպատակադրում: Սակայն նման փոփոխականությունները իրենց բացասական ազդեցությունն էին ունենում փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության արդյունավետության վրա:

Որպես դրամավարկային քաղաքականության երկարաժամկետ նպատակ՝ զարգացած մի շարք երկրների կենտրոնական բանկերի կողմից օգտագործվող գնաճի նպատակադրման ռազմավարությունը ուսումնասիրելով և համադրելով այն հայաստանյան դրամավարկային քաղաքականության գերնպատակների հետ՝ Հայաստանի Հանրապետությունը ևս, առաջինը ԱՊՀ երկրներում, 2006թ. անցում կատարեց դրամավարկային քաղաքականության նոր՝ գնաճի նպատակադրման ռազմավարությանը:

Որպես գնաճի նպատակադրման ռազմավարության դասական սահմանում կարելի է ընդունել հետևյալ ձևակերպումը, ըստ որի՝ «Գնաճի նպատակադրումը դրամավարկային քաղաքականություն իրականացնելու ծրագիր է, որը բնութագրվում է գնաճի՝ մեկ տարվա կամ որոշակի ժամանակահատվածի պաշտոնական ծրագրային ցուցանիշի (կամ միջակայքի) հրապարակային հայտարարման՝ նշելով, որ ցածր և կայուն գնաճի ապահովումը դրամավարկային քաղաքականության առաջնային երկարաժամկետ նպատակն է»³:

¹ ՀՀ ԱՎԾ, www.armstat.am :

² ՀՀ ԱՎԾ, www.armstat.am :

³ B. Bernanke, Th. Laubach, F. Mishkin, A. Posen, Inflation Targeting, Lessons from the International Experience, Princeton University Press. 1998, p. 4.

Ըստ մեկ այլ աղբյուրի՝ գնաճի նպատակադրումն իրենից ներկայացնում է գնաճի նպատակային ցուցանիշի սահմանում, գնաճի կանխատեսում նույն ժամանակահատվածի համար, այնուհետև՝ նպատակաուղղված քաղաքականության իրականացում՝ նպատակային և կանխատեսված ցուցանիշների միջև շեղումը վերացնելու համար¹, ընդ որում, գնաճի կանխատեսված մակարդակը ԿԲ համար դառնում է միջանկյալ նպատակ:

Երկու ձևակերպումների դեպքում էլ տեսնում ենք երկու կարևորագույն խնդիրներ, այն է՝ գնաճի կանխատեսում և դրամավարկային քաղաքականության այնպիսի մեխանիզմների ներդրում, որոնք կնվազեցնեն գնաճի մակարդակը՝ ապահովելով կայուն տնտեսական աճ:

Ի տարբերություն այլ զարգացած երկրների, որոնք կարողանում էին գնաճի վրա ազդել մեկից ավելի փոխանցումային մեխանիզմների միջոցով, ունեին ֆինանսական կայունություն և բարձր տնտեսական աճի ցուցանիշներ՝ անցումը նոր ռազմավարության ՀՀ ԿԲ-ի համար ստեղծեց մի շարք նախապայմանների ապահովման անհրաժեշտություն: Դրանք ընդգրկում էին և՛ ինստիտուցիոնալ, և՛ գործառնական, և՛ մակրոտնտեսական գործոնների համախումբ: Գնաճի կանխատեսման մեխանիզմները անհրաժեշտություն ունեին թարմացվելու, երկիրը չունեի զարգացած ֆինանսական շուկա, ներքին և արտաքին կայունություն: Այսպիսով, անհրաժեշտ էր մինչև լիարժեք գնաճի նպատակադրում սահմանելը ապահովել բոլոր նախապայմանները միջանցիկ փուլում: Այս փուլը Սիջազգային դրամավարկային ֆոնդի աշխատություններում անվանվում է գնաճի թույլ նպատակադրում (Inflation Targeting Lite (ITL))²: Այսպիսով, ՀՀ ԿԲ-ն փողի ազդեցատների նպատակադրումից անցում կատարեց գնաճի թույլ նպատակադրման, որտեղ որպես գործառնական նպատակ օգտագործվում էր և փողի բազան, և՛ տոկոսադրույքը, այնուհետև 2006թ. գնաճի լիարժեք նպատակադրման, ինչը ԿԲ-ի համար ստեղծեց մի շարք մարտահրավերներ: Գործիքակազմը ներառում էր վերաֆինանսավորման գործառույթները, պարտադիր պահուստավորումը և տոկոսադրույքի միջանցքը³: Որպես հիմնական գործիք ընդունվեց վերաֆինանսավորման կամ ռեպո տոկոսադրույքը, իսկ որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ՝ օվերնայթ տոկոսադրույքը: Վերաֆինանսավորման գործառույթները, տոկոսադրույքը և պարտադիր պահուստավորումը նպաստում են ֆինանսական միջնորդության աճին և երկրում կառավարելի դարձնում գնաճը փոխանցումային մեխանիզմի տոկոսադրույքի ուժեղացման շնորհիվ: ԿԲ-ն առևտրային բանկերի կողմից ներգրաված դրամական միջոցները արդյունավետ վերաբաշխելու միջոցով վերահսկելի է դարձնում փողի առաջարկն ու պահանջարկը, ինչպես նաև կառավարում է տոկոսադրույքը:

2008-2009թթ. ՀՀ-ում, ինչպես նաև աշխարհի բոլոր երկրներում, զգալի էին ֆինանսական ճգնաժամի բացասական ալիքների արագ տարածումը ողջ տնտեսության վրա: Չնայած ՀՀ-ը՝ շնորհիվ միջազգային ֆինանսական շուկաների հետ թույլ կապերի, կարողացավ խուսափել առավել ուժգին տնտեսական հարվածներից, սակայն ևս զերծ չմնաց ճգնաժամին դիմակայելու և դուրս գալու ուղիներ փնտրելու պահանջից:

Հաշվի առնելով 2007թ. վերջերին ԱՄՆ-ից սկիզբ առած համաաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մեծամեծ ազդեցությունները նաև ՀՀ տնտեսության, ֆինանսական շուկայի, հետևաբար նաև դրանք կարգավորող դրամավարկային քաղաքականության գործիքակազմի վրա՝ քննարկենք, թե ներկայումս ինչպիսի դրամավարկային քաղաքակա-

¹ Inflation Report, Bank of England, February 1996.

² Alina Carare and Mark R.Stone, Inflation Targeting Regimes, IMF WP 03/9, January 2003.

³ Որոշում թիվ 193Ա, առ 10 մայիսի 2006 թվականի:

նություն է վարում ՀՀ ԿԲ-ն, ինչպիսիք են տոկոսադրույքների ծրագրային և փաստացի մակարդակները:

Առաջացրած հիմնախնդիրները վերաբերում էին հիմնականում հետևյալ հիմնաքարային հարցերին.

- Մասնավոր տրանսֆերտների կրճատում,
- ՀՀ-ից արտահանվող ապրանքների պահանջարկի կրճատում,
- Միջազգային շուկաներում հումքային ապրանքների գների նվազում,
- ՀՀ տնտեսությունում ներդրումների պակաս

Այսպիսով, ակնհայտ դարձավ տնտեսության իրական հատվածի անկում, որն իր հետ բերեց բնակչության եկամուտների նվազեցում, ինչպես նաև ապագա սպասումների անորոշությանը պայմանավորված սպառողական պասիվ վարքագիծ, փողի խնայողություններ, հետևապես նաև ամբողջական պահանջարկի անկում, ինչն էլ հանգեցրեց տնտեսության մի շարք ճյուղերի ակտիվության կրճատման: ԿԲ տեսանկյունից անհրաժեշտ էր մշակել հատուկ իրավիճակային դրամավարկային քաղաքականություն, իսկ որպես հակաճգնաժամային քաղաքականության հիմնական սկզբունքներ որոշվեցին հետևյալ խնդիրների ապահովումը¹.

- ֆինանսական կայունության ապահովումը,
- ընդլայնող դրամավարկային քաղաքականության իրականացումը,
- փոխարժեքի արդյունավետ քաղաքականության իրականացում

Տնտեսության անկումը կանգնեցնելու և հակազդելու նպատակով մշակվեց ընդլայնող դրամավարկային քաղաքականություն: Մասնավորապես տնտեսության մեջ լրացուցիչ լիկվիդայնություն ներարկելու և բանկերի ֆինանսական ռեսուրսները ընդլայնելու միջոցով ապահովվեց տոկոսադրույքի առավել ցածր մակարդակ: ԿԲ-ը նվազեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1%-ով՝ սահմանելով 6.25%, իսկ ներգրաված ավանդների և լուծարողային վարկերի տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար՝ 3.25% և 9.25% (2009թ. մայիս)²: Միջոցների ներարկման տեսանկյունից մտցվեցին հետևյալ ընդլայնող պայմանները.

Դրամավարկային քաղաքականության գործիքակազմ.

- Երկարաժամկետ ռեպո գործառնություններ արտոնյալ պայմաններով. 91 օր ժամկետայնությամբ, ամսական հաճախականությամբ, ֆիքսված տոկոսադրույքով (վերաֆինանսավորման տոկոսադրույք + մարժային տոկոսադրույք), անսահմանափակ ծավալով (երկարաժամկետ ռեպո գործառնության ծավալը պետք է լինի այնքան, որ հիմնական ռեպո գործառնության ծավալը չնվազեցնի 20 մլրդ. դրամից).
- պետական պարտատոմսերի առք. բոլոր ժամկետայնության պարտատոմսեր (առավել մեծ ծավալի գործարքներ պետք է իրականացվեն այն ժամկետայնության պարտատոմսերով, որոնց եկամտաբերությունը առավել բարձր է), ոչ կանոնավոր հաճախականությամբ, սակարկվող տոկոսադրույքով, այն ծավալով, որ հիմնական ռեպո գործառնության ծավալը չնվազեցնի 20 մլրդ. դրամից.
- արտարժույթի տրամադրման սվոփի հետևյալ պայմաններով. մինչև 7 օր ժամկետայնությամբ, ոչ կանոնավոր հաճախականությամբ, ֆիքսված տոկոսադրույքով (սվոփի տոկոսադրույքը պետք է հավասար լինի երկարաժամկետ ռեպո գործառնության տոկոսադրույքին), ոչ կանոնավոր ծավալով.

¹ Ամփոփ հաշվետվություն. «ՀՀ կառավարության հակաճգնաժամային քաղաքականության իրականացման մասին»:

² ՀՀ ԱՎԾ, www.armstat.am :

Համակարգային գործիքների կիրառում.

- բանկի բաժնետերերի կողմից կապիտալի համալրման դեպքում համալրման գումարի չափով բանկերին 5 տարի ժամկետով սուբարդինացված վարկերի տրամադրում,
- բանկերի միաձուլումների դեպքում 3 տարի ժամկետով վարկերի տրամադրում մինչև կապիտալի 30%-ը:

2009թ. առևտրային բանկերում խնայողությունների արտահոսքի և ազգային խնայողությունները արտարժույթով փոխարինելու միտում էր նկատվում՝ կապված ազգային արժույթի արժեզրկման հասարակության սպասումների հետ: Այդ իսկ պատճառով 2009թ. տարեսկզբին ՀՀ ԿԲ-ն մեծացրել էր միջամտությունը արտարժույթի շուկայում՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռելով առևտրային բանկերին վերակառուցել իրենց հաշվեկշիռը և զսպել իրացվելիության և կապիտալի անբավարարության հետ կապված ռիսկերը: 2009թ. մարտից նորից անցում կատարվեց լողացող փոխարժեքի ռեժիմին: Համաշխարհային ճգնաժամի պայմաններում, երբ դեռևս հայտնի չեն միջազգային շուկաներից սպասվող նորանոր հարվածները, դժվար է ճիշտ գնահատել այս կամ այն քաղաքականության արդյունավետությունը: Սակայն փոխարժեքի աստիճանական ազատականացումը կանխեց մի շարք սպեկուլյատիվ դրսևորումներ, հասարակությունում և տնտեսության մեջ նվազեցրեց անորոշության մակարդակը:


Վիճակագրական տվյալների հիման վրա ստորև կազմվել է աղյուսակ, որտեղ ներկայացված են 2003-2011թթ. տվյալներով փողի ագրեգատների շարժը, որտեղ M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները: M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները: M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:

Աղյուսակ 1

2003-2011թթ. փողի ագրեգատների շարժը ՀՀ-ում, մլն ՀՀ դրամ¹

| | Շրջանառությունում կանխիկ դրամ | Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով | <i>M1</i> | Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով | <i>M2</i> | Արտարժույթով ավանդներ | <i>M2X</i> |
|-------------|-------------------------------|----------------------------|---------------|-------------------------------|---------------|-----------------------|---------------|
| 2003 | 79684 | 24806 | 104490 | 12017 | 116507 | 84584 | 201091 |
| 2004 | 84179 | 29870 | 114049 | 11618 | 125667 | 116699 | 242366 |
| 2005 | 110 845 | 43 927 | 154772 | 18 212 | 172984 | 138 664 | 311648 |
| 2006 | 155565 | 65405 | 220970 | 27774 | 248744 | 141978 | 390722 |
| 2007 | 243641 | 101466 | 345107 | 69286 | 414393 | 133453 | 547846 |
| 2008 | 319806 | 116922 | 436728 | 130089 | 566817 | 145902 | 712719 |
| 2009 | 248520 | 93186 | 341706 | 67412 | 409118 | 294913 | 704031 |
| 2010 | 267590 | 106093 | 373683 | 68790 | 442473 | 370120 | 812593 |
| 2011 | 276018 | 115454 | 391472 | 96999 | 488471 | 396967 | 885438 |

¹ ՀՀ ԿԲ, Գրամավարկային քաղաքականության վիճակագրություն, www.cba.am :



Ինչպես տեսնում ենք և՛ աղյուսակից և՛ առավել ընդգծված կերպով ներկայացվող գծապատկերից, 2003-2008թթ. բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից հավաքագրված միջոցները տարեցտարի աճման միտում ունեն, սակայն ցածր տեմպերով: Այդ նույն շրջանում առավել բարձր տեմպերով աճ է արձանագրվում շրջանառության մեջ կանխիկ դրամի տեսանկյունից: Նման դրսևորումները խոսում են այն մասին, որ այդ շրջանում տիրում էր տնտեսական աշխուժացում և փողերը չէին քնում, այլ անընդհատ շրջանառվում էին՝ ապահովելով արտադրության անընդհատությունը: 2008-2010թթ. ընթացքում պատկերն ամբողջովին փոխվեց՝ պայմանավորված արդեն իսկ քաջ հայտնի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դրսևորումներով: Կանխիկ դրամը շրջանառությունում, ցյահանջ և ժամկետային ավանդները բանկերում սկսեցին նվազման միտումներ դրսևորել, իսկ արտարժույթային ավանդները՝ հակառակը, կտրուկ աճ արձանագրեցին: Ինչպես նշվեց վերևում, դա կապված էր ազգային արժույթի արժեզրկման հասարակության սպասումների հետ: Երբեմն հասարակության սպասումները այնքան ուժեղ ազդեցություն են ունենում տնտեսական վարքագծի վրա, որ նույնիսկ շատ տեսաբաններ առաջնորդվում են սպասումների տեսությամբ (Behavioral Finance)¹.

Այժմ անդրադառնանք առավել նեղ և ճգնաժամից դուրս դրամավարկային քաղաքականության խնդիրներին: Ինչպես հայտնի է, գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունումից հետո մեծապես կարևորվում է գործառնական նպատակի՝ կարճաժամկետ տոկոսադրույքի արդյունավետ կառավարումը: Ներկայումս, որպես գործառնական նպատակ համարվող տոկոսադրույքի ծրագրային և փաստացի մակարդակները համընկնում են, սակայն դա չի նշանակում, որ քաղաքականությունը անթերի է և շատ արդյունավետ: Որպես իրացվելիության արդյունավետությունը բնութագրող և կառավարող չափանիշներ կարելի է համարել հետևյալները.

- բանկերի կողմից ներգրավված միջոցների ամբողջովին տեղաբաշխում,
- տոկոսադրույքների հավասարակշիռ հիերարխիա, այն է՝ բանկերի կողմից տրվող վարկերի տոկոսադրույքները ավելի բարձր են պետական պարտատոմսերի տոկոսադրույք-

¹ Martin Sewell, Behavioural Finance, University of Cambridge, February 2007, (revised April 2010).

ներից, որոնք ավելի բարձր են քան ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչն էլ ավելի բարձր է քան բանկերի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքները:

Հիմք ընդունելով վերոնշյալ չափանիշները և ուսումնասիրելով ներկա իրավիճակը՝ կարելի է դուրս բերել ՀՀ դրամավարկային քաղաքականության առկա հիմնախնդիրները և տալ դրանց լուծումներ: Այսպիսով, քննարկենք ներկայումս տիրող իրավիճակը և ներկայացվող թերությունները.

- բանկերի կողմից ներգրավված միջոցները ամբողջովին չեն տեղաբաշխվում.
- ռեպո գործառնությունների ծավալը ցածր մակարդակ ունի, երբեմն այն մոտ է լինում պարտադիր պահուստավորման մակարդակին: 2008թ. ռեպո գործառնությունների միջին ամսական ծավալը կազմել է 20 մլրդ դրամ, իսկ պարտադիր պահուստավորման մակարդակը 23.1 մլրդ դրամ.¹
- թղթակցային հաշիվներում պահվում են պարտադիր պահուստավորումից ավել միջոցներ, այսինքն արդյունավետ չեն օգտագործվում ֆինանսական միջոցները, ինչը պայմանավորված է միջբանկային շուկայի ցածր իրացվելիությամբ, ավտոնոմ գործոնների տատանողականության բարձրացմամբ: ՀՀ միջբանկային շուկան բնութագրվում է որպես ցածր իրացվելի այն պատճառով, որ այն արդյունավետ չի իրականացնում իր գլխավոր՝ վերաբաշխման ֆունկցիան: Գործարքների մեծ մասն իրականացվում է 4-5 առևտրային բանկերի միջև, այն դեպքում, երբ երկրում գործում են 21 առևտրային բանկեր: Միջբանկային ռեպո տոկոսադրույքը մոտ է կանգնած ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքին: Այս քաղաքականությունը խոչընդոտում է փոխանցումային մեխանիզմների բնականոն ընթացքին:
- Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը ցածր է բանկային ավանդների տոկոսադրույքներից, ինչը հակասում է տոկոսադրույքների հավասարակշիռ հիերարխիային:

Այսպիսով, ներկայացված թերություններին համապատասխանաբար առաջարկվում են դրանք շտկելու հետևյալ միջոցառումների համակարգը.

Բանկերի կողմից ներգրավված միջոցները ամբողջովին չտեղաբաշխվելու հետևանքով երկրի տնտեսությունում հաստատվում է տոկոսադրույքների բարձր մարժա (վարկային տոկոսադրույք - ավանդային տոկոսադրույք)² և ԿԲ-ի կողմից ֆինանսական միջնորդության թուլացում: Հակառակ դեպքում, երբ բանկերի կողմից ակտիվորեն օգտագործվում են պարտադիր պահուստավորումից ավելցուկային միջոցները, պատկերը ամբողջովին փոխվում է: Բանկերի կողմից ներգրավված միջոցների առավել արդյունավետ կառավարման դեպքում առևտրային բանկերը առավել արդյունավետ են կառավարում իրենց ակտիվները, տնտեսությունում նվազում է տոկոսադրույքի մարժան, մեծանում է ֆինանսական միջնորդությունը, և ԿԲ-ն հնարավորություն է ունենում վերահսկելու փոխանցումային մեխանիզմի տոկոսադրույքի լծակը: Վերհանելով ներգրավված միջոցների ամբողջովին տեղաբաշխելու անհրա-

¹ ՀՀ ԿԲ, www.cba.am :

² Ասվածը հաստատենք օրինակով. ենթադրենք բանկերը չեն զբաղվում վերաֆինանսավորման գործառնություններով և միայն իրականացնում են վարկավորում, ավանդների ընդունում և պարտադիր պահուստավորում: Այս դեպքում բանկերի շահույթի ֆունկցիան կներկայացվի հետևյալ կերպ. $P=R-L-R*D$, որտեղ P -ն բանկի շահույթն է, r -ը՝ վարկային տոկոսադրույքը, R -ը՝ ավանդային տոկոսադրույքը, իսկ L -ը և D -ն՝ համապատասխանաբար՝ տեղաբաշխված վարկերը և ներգրավված միջոցները: Բանկի պարզեցված հաշվեկշիռը այս դեպքում կլինի հետևյալը. $D=L+CA$, որտեղ CA -ն ԿԲ-ում տվյալ բանկի թղթակցային հաշիվն է, ինչն էլ իր հերթին բաղկացած է 2 գործոններից՝ պարտադիր պահուստավորում և ավելցուկային միջոցներ: Քանի որ ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների մարժան կախված է թղթակցային հաշիվների մակարդակից, որն այս օրինակում չի տեղաբաշխվում, ապա այն ստեղծում է տոկոսադրույքների մարժայի բարձր մակարդակ, և բանկն ավելի քիչ շահույթ է ստանում, քան ներգրավված միջոցները ամբողջովին տեղաբաշխելու դեպքում:

ժեշտությունը՝ առաջարկվում է աշխուժացնել միջբանկային շուկայի զարգացումը և ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման գործիքների ներդրումը: Միջբանկային շուկայի աշխուժացման համար խոչընդոտ են հանդիսանում մի շարք գործոններ, այդ թվում՝ բանկերում իրացվելիության վատ կառավարումը, գործարքների կազմակերպման ճկուն համակարգերի բացակայությունը և մեծ վարկային ռիսկի առկայությունը: Փորձը ցույց է տվել, որ բանկերը շատ ավելի զգայուն են ծախսերի, քան այլընտրանքային չվաստակած եկամուտների նկատմամբ: Ուստի, որպեսզի աշխուժացում տիրի այս ոլորտում, անհրաժեշտ է զգալի տարբերություն նկատվի ԿԲ-ի կողմից առաջարկված տոկոսադրույքի և միջբանկային ռեպո տոկոսադրույքների միջև:

Ինչպես նկատելի է, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներդրված և ներկայումս վարվող դրամավարկային քաղաքականության ընթացքային իրարահաջորդ բոլոր փուլերի հիմքում ընկած է գների կայունության և կայուն, թեկուզ և դանդաղ տեմպերով, տնտեսական աճի ենթատեքստ: ՀՀ ԿԲ-ի կողմից ներդրված դրամավարկային քաղաքականության զարգացման ընթացքը կարելի է բաժանել երեք իրարահաջորդ հիմնական փուլերի.

- փողի ագրեգատների ռազմավարության նպատակադրում (1994-1998թթ.),
- ներդրված փողի ագրեգատների ազգային արժույթի նպատակադրում (այս փուլը կարելի է համարել միջանցիկ փուլ, 1998-2006թթ.),
- գնաճի նպատակադրում (2006թ. մինչ օրս):

Յուրաքանչյուր փուլ աչքի էր ընկնում և՛ առավելություններով, և՛ թերություններով: Որևէ նոր ռազմավարության նպատակադրման անցումը ենթադրում էր հնարավոր ռիսկերի և ակնկալվող դրական արդյունքների համապարփակ ուսումնասիրություն, այլապես կտուժեր մասամբ դրամավարկային քաղաքականության վրա հիմնված երկրի ողջ տնտեսություն: Առաջին և երկրորդ փուլերը (համապատասխանաբար փողի ագրեգատների նպատակադրում և փողի ագրեգատների ազգային արժույթի նպատակադրում) կարելի է նույնականացնել՝ այն տարբերությամբ, որ մի դեպքում արտարժույթը ընդգրկվում էր փողի զանգվածի և փողի բազայի մեջ, մյուս դեպքում՝ ոչ: Առաջնային փուլից անցումը երկրորդային փուլին պայմանավորված էր ընդհանուր ավանդների կազմում արտարժույթային ավանդների տեսակարար կշռի անընդհատ ավելացմամբ: Իսկ անցումը գնաճի նպատակադրման ռազմավարության՝ պայմանավորված էր փողի ագրեգատների և գնաճի միջև կայուն կապի բացակայությամբ:

Անցումը գնաճի նպատակադրման ռազմավարությանը ենթադրում էր, որ ՀՀ կենտրոնական բանկը գնաճի կառավարման նպատակով օգտագործելու է վերջինիս վրա առավել արդյունավետ ազդող փոխանցումային մեխանիզմներ, որոնց հետ կապված առաջացել էին մի շարք թերացումներ, որոնք ներկայացվել են սույն աշխատությունում:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայումս վարվող դրամավարկային քաղաքականության վերաբերյալ թվարկված թերացումները փոխկապակցված են միմյանց: Մեկ գործիքի անկատարությունը պատճառ կամ հետևանք կարող է հանդիսանալ մեկ այլ գործիքի թերի կատարման: Ընդհանրացնելով՝ կարելի է նշել, որ դրամավարկային քաղաքականության հայեցակարգում իրացվելիության արդյունավետ կառավարումը ստանձնում է հիմնաքարային դեր, որին կարելի է հասնել վերաֆինանսավորման գործիքակազմի օգտագործմամբ ճկուն և արդյունավետ տոկոսադրույքի կառավարման միջոցով:

**ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՈՑ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԵՎ
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացները զարգացող շուկայական համակարգում բավականաչափ յուրահատուկ են՝ կապված զարգացման այդպիսի աստիճանի վրա գտնվող տնտեսություններին բնորոշ առանձնահատկությունների հետ: Ավելին, ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, երբ խնդրո առարկա է նաև պետական կառավարման արդյունավետ մեխանիզմների ձևավորումը և մեծամասամբ որպես ճգնաժամի հետևանք առաջ եկող տնտեսական քրեածին տարրերի զարգացումը, միայն ավելի լուրջ հաշվարկված, դրամավարկային քաղաքականության իրականացման պայմաններում կարող են ապահովվել դրական արդյունքներ և առաջադրվել ուղիներ ոչ միայն ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման, այլև հետճգնաժամային փուլում տնտեսության ավելի անխափան և պաշտպանված զարգացումն ապահովելու տեսակետից: Այս իմաստով դրամավարկային քաղաքականության իրականացման տեսանկյունից առանձնահատուկ պետք է լինի ֆինանսական կայունության հաստատման նպատակով իրականացվելիք այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնց առաջնահերթ խնդիրն է գնաճի մակարդակի կասեցումը, ներդրումային ավելի բարենպաստ դաշտի ձևավորումը, տնտեսության մեջ ներդրումների աճի խթանումը և այլն: Գնաճի գործոնը ըստ այդմ մշտապես հանդիսանում է այն կարևոր կետը, որի շուրջ կառուցվում է դրամավարկային քաղաքականությունը: Այս իմաստով նոր զարգացող կամ ճգնաժամային իրավիճակում հայտնված տնտեսության ֆինանսական կայունացման քաղաքականությունը մեծամասամբ իրականացվում է հետևյալ ձևով՝

- բյուջեի պակասորդի պահպանում ոչ ավելին, քան ՀՆԱ 5%-ի չափով,
- դրամավարկային կոշտ քաղաքականության իրականացում, այդ թվում՝ կենտրոնական բանկի կողմից բյուջեի պակասորդի ֆինանսական համալրման նպատակով արտոնյալ վարկավորման բացառում, առևտրային բանկերի վարկավորման վերաֆինանսավորման տոկոսադրույքների ավելի բարձր սահմանաչափի հաստատում, քան գնաճի տոկոսային մեծությունն է կազմում,
- մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների կառավարում, այդ թվում՝ արտարժույթի ֆիքսված կուրսի պահպանում, նվազագույն աշխատավարձի մեծության հաստատում և այլն, ինչը թույլ կտա կրճատել գնաճային սպասումները տնտեսական գործակալների և բնակչության մոտ:

Սակայն նշված միջոցառումները, որոնք ուղղված են տնտեսության մեջ շուկայի կարգավորման ճգնաժամային փուլում դրամի զանգվածի սեղմմանը, ավելի ուշ շրջանում, այլ հավասար պայմաններում պետք է ենթակա լինեն աստիճանական փոփոխության, երբ շուկան աստիճանաբար սկսում է ոտքի կանգնել ճգնաժամային իրավիճակից, և սկսում են նվազել այս իրավիճակին բնորոշ գործարար վատատեսական սպասումները:

Միաժամանակ այս մոտեցումների ընդհանրական ուղղվածությանը զուգահեռ՝ առանձնահատուկ կարևորություն ունի նաև դրամավարկային տարբերակվող քաղաքականության

կիրառումը՝ կապված ոչ միայն այս կամ այն երկրի տնտեսական զարգացման աստիճանի կամ ճգնաժամային իրավիճակի, այլ նաև՝ տվյալ երկրի տնտեսության ենթակառուցվածքի և արդյունաբերական ճյուղերի ներքին կոոպերացիայի աստիճանի հետ: Այս դեպքում հատուկ նշանակություն է ձեռք բերում, թե որքանով է տվյալ երկիրն ապահովված արտարժույթային միջոցներով, ինչպիսին է տվյալ երկրի առևտրային հաշվեկշիռը, առկա են արդյոք այդ երկրում համապատասխան ազատ ռեսուրսներ և համապատասխանաբար նաև զարգացման հեռանկարներ ունեցող այնպիսի ոլորտներ, որտեղ նպատակահարմար է ակտիվ կերպով խթանել ներդրումների իրականացումը և այլն: Ուստի, եթե այս տեսակետից փորձենք դիտարկել ՀՀ կենտրոնական բանկի դերը այն գործառնությունների շրջանակներում, որոնք ներկայումս վերապահված են վերջինիս, ապա տոկոսադրույքի և արտարժույթի կարգավորման խնդիրներն ըստ էության ՀՀ տնտեսության ներկա՝ հետճգնաժամային փուլում, առավել առարկայական նշանակություն են ձեռք բերում:

Մասնավորապես, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալների (տե՛ս աղյուսակ 1-ը), նկատելի է, որ սկսած 2006թ. ՀՀ-ում էականորեն սկսել է խորանալ դոլարի պակասուրդը, որը դադարել է միայն 2008-2009թթ.: Նշված գործընթացը հատկապես պայմանավորված է եղել ՀՀ-ում ներմուծումների ծավալի աճով, որը 2006թ. սկսած 2008թ. համեմատությամբ մեծացել է 2.95 անգամ:

Աղյուսակ 1

ԱՄՆ դոլարի բազայի աճի տեմպերը ՀՀ-ում 2004-2009թթ.

| Տարիներ | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|------------------|------------------|-------------------|--------------------|--------------------|--------------------|
| Ֆիզ. անձանց մատվ տրանսֆերտներ (ներհոսք) հազ. ԱՄՆ դոլար | 760 700 | 965 287 | 1 237 597 | 1 742 205 | 2 270 615 | 1 575 678 |
| Ֆիզ. անձանց մատվ տրանսֆերտներ (արտահոսք) հազ. ԱՄՆ դոլար | 494 482 | 613 226 | 784 475 | 1 010 689 | 1 124 466 | 752 370 |
| Չուտ տրանսֆերտների ներհոսք, հազ. ԱՄՆ դոլար | 266 219 | 352 061 | 453 122 | 731 517 | 1 146 148 | 823 308 |
| Ապրանքների ներմուծում, հազ. ԱՄՆ դոլար | 1 350 698 | 1 801 736 | 2 191 613 | 3 267 788 | 4 426 129 | 3 318 758 |
| Ապրանքների արտահանում, հազ. ԱՄՆ դոլար | 722 912 | 973 920 | 985 108 | 1 152 301 | 1 057 161 | 768 154 |
| Առևտրային հաշվեկշիռ, հազ. ԱՄՆ դոլար | - 627 786 | - 827 816 | -1 206 505 | - 2 115 487 | - 3 368 968 | - 2 550 604 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱճԸ, հազ. ԱՄՆ դոլար | - 361 567 | - 475 755 | - 753 383 | - 1 383 970 | - 2 222 820 | - 1 727 296 |


Միաժամանակ դոլարի փոխարժեքը նույն ժամանակահատվածից սկսած, ընդհակառակը հանդես է բերել նվազման միտում՝ 2006-2008թթ. ընթացքում 416.04 դրամից նվազելով մինչև 305.97 դրամի, ապա 2009թ. ընթացքում աճելով մինչև 363.28 դրամի: Հակասական այն պատկերը, որը ձևավորվել է 2006-2008թթ. ընթացքում, երբ դոլարի պակասուրդի խորացման պայմաններում տեղի է ունեցել դոլարի փոխարժեքի իջեցում, պայմանավորված է եղել Կենտրոնական բանկի կողմից ֆիքսված փոխարժեքի վարման քաղաքականությամբ, ինչը փոխվել է սկսած 2009թ., երբ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում բնակչության կողմից արտարժույթի, հատկապես ԱՄՆ դոլարի նկատմամբ պահանջարկի կտրուկ աճի արդյունքում, Կենտրոնական բանկն արտարժույթային միջոցների պակասի պատճառով անցում կատարեց լողացող փոխարժեքի քաղաքականությանը: Սա և այն հանգամանքը, որ ՀՀ տնտեսության արտաքին հաշվեկշիռը բացասական է, վկայում է այն մասին, որ հնա-

րավոր ֆինանսատնտեսական ճգնաժամի և առհասարակ տնտեսական երկարաժամկետ զարգացման հեռանկարում տնտեսության խոցելիության մակարդակը նվազեցնելու տեսակետից, տնտեսական աճի տեմպերի խթանումը կարող է հաջողվել միայն Կենտրոնական բանկի կողմից ՀՀ տնտեսության մեջ արտարժույթային միջոցների աճի խթանման պայմաններում, մասնավորապես՝ կասեցնելով արտարժույթային միջոցների արտահոսքը ֆիզիկական անձանց մասով, որոնց դեպքում այն հիմնականում ուղղվում է արտերկրից սպառողական նշանակության ապրանքատեսակների ձեռքբերմանը: Սակայն նման կարգավորումը միայն Կենտրոնական բանկի լծակների միջոցով (միջազգային պրակտիկայում այս նպատակով կիրառվում են զանազան սահմանափակումներ ֆիզիկական անձանց կողմից արտարժույթի արտահոսքը կանխելու ուղղությամբ, օրինակ՝ սահմանափակումներ ֆիզիկական անձանց կողմից կատարվող տրանսֆերտների հաճախականության, մեծության նկատմամբ և այլն) բավականաչափ դժվար կլինի: Հետևապես, դա հնարավոր դարձնելու համար, մյուս կողմից հարկ կլինի նաև հովանավորչական մաքսային քաղաքականության կիրառումը ֆիզիկական անձանց կողմից ներկրվող այն ապրանքատեսակների ներկրման նկատմամբ, որոնք արտադրվում են նաև ներքին շուկայում:

Էականորեն մեծ է նաև Կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության դերը տնտեսության ճգնաժամային և հետճգնաժամային փուլերում, երբ խոսքը վերաբերվում է հատկապես վարկային տոկոսադրույքի կարգավորման խնդիրներին:

Գծապատկեր 1

ՀՀ տնտեսության վարկավորման ծավալները ըստ ոլորտների 2006-2009թթ



Մասնավորապես ՀՀ պարագայում, եթե առավել մանրամասնորեն ենք ուսումնասիրում վարկավորման ծավալներն ըստ տնտեսության ոլորտների¹ (տե՛ս գծապատկեր 1-ը), ապա նկատելի է, որ առ 2008թ. վարկավորման գործընթացը տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի գծով հանդես է բերել աճի դինամիկա, որը սակայն ընդհատվել է 2008թ. կապված համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքների հետ: 2009թ. թվականի ընթացքում վարկավորման աճ է գրանցվել միայն արդյունաբերության գծով, մասնավորապես վարկավորման հիմնական ուղղությունները եղել են մետաղագործության, շինանյութերի արտադրության,

¹ ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական տվյեղների բազա, “Commercial Banks Loans by Fields (monthly)” <http://www.cba.am/en/sitepages/statmonetaryfinancial.aspx> :

քիմիական և սննդի արդյունաբերության, էներգետիկայի և շինարարության ճյուղերը, որոնց վարկավորումը նաև իրականացվել է այդ տարվա ընթացքում ՌԳ-ի կողմից ՀՀ-ին տրամադրված կայունացնող վարկի հաշվին¹:

Մյուս կողմից անդրադառնալով վարկային տոկոսադրույքի և շահութաբերության տոկոսային աստիճանների միջև առկա տարբերությունների մակարդակին՝ (տե՛ս աղյուսակ 2-ը)² տեսանելի է, որ վարկային տոկոսադրույքի մակարդակը ներդրումային տեսակետից բավականաչափ բարձր է, և վարկային ռեսուրսների ներգրավումը արդյունավետ կարող է լինել միայն տնտեսության այն ճյուղերի համար, որտեղ շահութաբերության մակարդակը էականորեն բարձր է միջինից:

Մեր դեպքում 2007-2009թթ. այդպիսիք են եղել հանքագործության, ինչպես նաև տրանսպորտի և կապի ոլորտները: Պատկերն ավելի է խտանում, երբ վերլուծության հիմքում դնում ենք ոչ թե արտադրանքի, այլ ակտիվների շահութաբերության մակարդակները, որոնք ի տարբերություն արտադրանքի շահութաբերության մակարդակների, որպես կանոն, միշտ ավելի ցածր են լինում: Այսուհանդերձ, ինչպես նշվում է Կենտրոնական բանկի կողմից հրատարակված «2009թ. ֆինանսական կայունության հաշվետվության» մեջ 2009թ. երկրորդ կեսից, դեկտեմբեր ամսվա դրությամբ, 2008թ. նույն ամսվա նկատմամբ ապահովվել է վարկերի 14% աճ³, որը հիմնականում տեղի է ունեցել կառավարության կողմից իրականացված հակաճգնաժամային ծրագրի շրջանակներում իրավաբանական անձանց տրամադրված վարկերի հաշվին:

Աղյուսակ 2

Արտադրանքի շահութաբերության աստիճանը և վարկավորման միջին տոկոսադրույքը 2007-2009թթ. ՀՀ-ում

| Անվանում | 2007 | | 2008 | | 2009 | |
|------------------------------------|---------------------------------|---|---------------------------------|---|---------------------------------|---|
| | Արտադրանքի շահութաբերություն, % | Վարկերի միջին տոկոսադրույք (15 օրից մինչև 1 տարի ժամկետ.) | Արտադրանքի շահութաբերություն, % | Վարկերի միջին տոկոսադրույք (15 օրից մինչև 1 տարի ժամկետ.) | Արտադրանքի շահութաբերություն, % | Վարկերի միջին տոկոսադրույք (15 օրից մինչև 1 տարի ժամկետ.) |
| 1 Հանքագործական արդյունաբերություն | 80.2 | 17.5 | 10.0 | 17.1 | 31.7 | 18.8 |
| 2 Մշակող արդյունավետություն | 11.9 | | 7.8 | | 3.6 | |
| 3 Շինարարություն | 8.4 | | 8.3 | | 16.6 | |
| 4 Տրանսպորտ և կապ | 34.4 | | 32.9 | | 28.8 | |
| 5 Առևտուր | 9.4 | | 9.9 | | 9.2 | |

2010թ. ևս տնտեսության մեջ նկատելի է եղել վարկավորման գործընթացի ակտիվացում⁴, որը ուղղված է եղել հիմնականում մեքենասարքավորումների ձեռքբերմանը և շինարարությանը: Այսպիսով նկատելի է, որ չնայած վարկային տոկոսադրույքի բավականաչափ

¹ ՀՀ կենտրոնական բանկ «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2009» էջ 16:

² ՀՀ պետական վիճակագրական ծառայություն, «Ազգային տարեգիրք 2010թ.», «Ֆինանսներ», էջ 405:

³ ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրական տվյալների բազա, հաշվետվություն՝ “Interest rates on loans extended by commercial banks (monthly)” <http://www.cba.am/en/sitepages/statmonetaryfinancial.aspx> :

⁴ ՀՀ կենտրոնական բանկ «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2009» էջ 30 :

⁴ Տե՛ս նույն տեղում:

բարձր մակարդակին, վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջարկը ՀՀ-ում բավականաչափ բարձր է: Հիմք ընդունելով նաև արտարժույթի դեալվացիայի հետ կապված ռիսկերը և գալով տոկոսադրույթի կարգավորման հեռանկարներին, պարզ է դառնում, որ տոկոսադրույթի կարգավորման խնդիրը, մեր դեպքում պետք է փոխկապակցվի 2 հանգամանքի հետ՝

- Շահույթի միջին տոկոսային մակարդակի
- Արտարժույթային միջոցների առկայության աստիճանի

Առաջին կետի համատեքստում բնականաբար առավել ցանկալի կլիներ, եթե տոկոսադրույթի ընդհանուր շեմը ավելի ցածր լիներ, ինչը հատկապես կարևոր կդառնար փոքր և միջին ձեռնարկությունների կողմից վարկային ռեսուրսների ներգրավման մատչելիության տեսակետից: Սակայն հիմք ընդունելով, որ ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի ծավալը վարկավորման ընդհանուր ծավալի մեջ հասկանալի պատճառներով բավականաչափ բարձր է¹, և սպառողական նշանակության վարկերի մասնաբաժնի աճը տոկոսադրույթի ընդհանուր մակարդակի իջեցման դեպքում ևս կարող է առարկայական լինել, որը ներքին շուկայի արտարժույթային ոչ բավարար պաշարների դեպքում, հետագայում կարող է հանգեցնել ինֆլյացիոն ռիսկերի (այս վարկերի գերակշիռ մասը ուղղվում է հատկապես երկարաժամկետ օգտագործման ապրանքատեսակների ձեռքբերմանը), նպատակահարմար է իջեցնել վարկային տոկոսադրույթի մակարդակը միայն արդյունաբերական նշանակության և ներդրումային նպատակներով ներգրավվող վարկերի համար, մանավանդ, որ ներկայումս այս խնդիրն արդեն իսկ դրված է ՀՀ կառավարության կողմից փոքր և միջին ձեռնարկությունների՝ ՓՄՁ-երի զարգացման հայեցակարգի հիմքում, որտեղ, ենթադրվում է ապահովել մանր և միջին ձեռնարկությունների համար վարկերի ներգրավման մատչելիություն, այդ թվում նաև՝ տոկոսադրույթի սուբսիդավորման միջոցով:

Ուստի, ելնելով ՓՄՁ-երի համար հասանելի տոկոսադրույքներով վարկավորմանը մասշտաբայնություն հաղորդելու անհրաժեշտությունից և վարկավորման գործընթացում նաև բանկային ռեսուրսների ներգրավման նպատակահարմարությունից, հարկ է, որպեսզի ՀՀ կենտրոնական բանկը այս ուղղությամբ ևս էական միջոցառումներ ձեռնարկի: Մասնավորապես ՓՄՁ-ների վարկավորման զարգացման հիմք կարող է դառնալ Կենտրոնական բանկի կողմից այս ընկերություններին ներդրումային նպատակներով հատկացվող վարկերի տոկոսադրույքների որոշակի սուբսիդավորման մեխանիզմի ներմուծումը: Օրինակ, ի տարբերություն ներկայումս կիրառվող մեխանիզմի, երբ համանման վարկերի տոկոսադրույքը սուբսիդավորվում է բյուջետային միջոցների հաշվին, նպատակահարմար կլիներ սահմանել առանձին, արտոնյալ վերաֆինանսավորման տոկոսադրույք այն գումարների նկատմամբ և չափով, որոնք առևտրային բանկերի կողմից վարկերի ձևով կտրամադրվեն ՀՀ տնտեսության պայմաններում զարգացման ներուժ ունեցող՝ գյուղատնտեսության, վերամշակող արդյունաբերության և տնտեսության այլ համարժեք ոլորտներում գործող ՓՄՁ-ներին և անհատ ձեռներեցներին: Վերաֆինանսավորման արտոնյալ տոկոսադրույքը, ըստ այդմ, կարող է սահմանվել հետևյալ տրամաբանությամբ. հիմք ընդունելով գործող ընդհանուր վերաֆինանսավորման տոկոսադրույքը, սահմանել նշված ոլորտների համար վարկավորման տոկոսադրույթի նպատակային որոշակի շեմ և առևտրային բանկերի կողմից ՓՄՁ-ներին այդ շեմից ավելի ցածր տոկոսադրույքով տրամադրված վարկերի գումարի չափով սահմանել արտոնյալ վերաֆինանսավորման առանձին տոկոսադրույք, որը ցածր կլիներ ընդհանուր վերաֆինանսավորման տոկոսադրույթից նույն տոկոսային կետերի չափով, ինչ չափով առավել ցածր կլինեին տրամադրված վարկերի տոկոսադրույքները վարկավորման սահմանված նպատակային շեմից: Այլ կերպ ասած, եթե օրինակ ընդհանուր վերաֆինանսավորման տոկոսադրույքը

¹ ՀՀ կենտրոնական բանկ «Դրամավարկային քաղաքականության ծրագիր 2011 թ. առաջին եռամսյակ», էջ 9:

տվյալ ժամկետի դրությամբ լինել 7% և վարկավորման հասանելի շեմը գնահատվել և սահմանվել ենթադրենք 11%, ապա որևէ առևտրային բանկի կողմից 9%-ով հիշյալ ոլորտների գծով որպես վարկ տրամադրված գումարների վերաֆինանսավորման համար կիրառվել ոչ թե 7%, այլ 5%-ին համարժեք արտոնյալ վերաֆինանսավորման տոկոսադրույք: Սա կհանդիսանար Կենտրոնական բանկի կողմից ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտներում գործող ՓՄՁ-ների գծով տրամադրվող վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման անուղղակի տարբերակ, որը մի կողմից կհամապատասխաներ Կենտրոնական բանկի ընթացիկ նպատակներին և խնդիրների բովանդակությանը, ՀՀ կառավարության կողմից հաստատված «Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման» հայեցակարգային դրույթներին, իսկ մյուս կողմից կխթաներ առևտրային բանկերին՝ ընդլայնելու ՀՀ տնտեսության հեռանկարային ոլորտներում գործող ՓՄՁ-ների վարկավորման գործընթացը՝ նախապայմաններ ստեղծելով այս ոլորտների զարգացման համար: Նշված տարբերակը հնարավորություն կընձեռնի Կենտրոնական բանկին ուղղորդել վարկային ռեսուրսները դեպի տնտեսության նպատակային ոլորտներ՝ հնարավորինս ավելի զերծ պահելով տնտեսությանը վարկավորման գործընթացի համընդհանուր զարգացման գնաճային ռիսկերից: Կարծում ենք նման մոտեցման կիրառման դեպքում էականորեն կբարելավվի մանր և միջին ձեռնարկությունների ֆինանսական վիճակը և կընդլայնվի ներդրումային նպատակներով արդյունաբերական նշանակության վարկերի կշիռը վարկերի ընդհանուր կշռի մեջ: Հետևապես, գալով Կենտրոնական բանկի կողմից ՀՀ տնտեսության ներկա, հետճգնաժամային փուլում տոկոսադրույքի և արտարժույթի կարգավորման խնդիրներին, հիմնական եզրակացությունները հետևյալն են՝

1. Հարկ է իրականացնել ֆիզիկական անձանց մասով արտարժույթի արտահոսքի աճի նվազմանը միտված քաղաքականություն, որը մյուս կողմից մաքսային հովանավորչության շնորհիվ, ուղղված կլինի ֆիզիկական անձանց կողմից ներկրվող, սակայն նաև ներքին շուկայում արտադրվող և արտադրության իրական ներուժ ունեցող ապրանքատեսակների ներկրման ծավալների սահմանափակմանը:
2. Փոքր և միջին ձեռնարկատիրության վարկավորման գործընթացը խթանելու նպատակով սահմանել առևտրային բանկերի վերաֆինանսավորման տարբերակվող համակարգ, որը հնարավորություն կտա մասնակիորեն, անուղղակի կերպով սուբսիդավորել ներդրումային նպատակով ներգրավվող վարկերի տոկոսադրույքները՝ ակտիվացնելով տնտեսության համապատասխան ոլորտների զարգացումը:

**ԵԿԱՍՏԱՅԱՐԿԻ ԵՎ ՇԱՅՈՒԹԱՅԱՐԿԻ ՀԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Ֆինանսատնտեսական ճգնաժամերի պայմաններում, երբ առաջ են գալիս այնպիսի խնդիրներ ինչպիսիք են արտադրության ծավալների անկումը, զբաղվածության ծավալների կրճատումը, բնակչության սոցիալական մակարդակի վատթարացումը, գնաճային գործընթացների խորացումը և այլն, հարկային քաղաքականությունը ձեռք է բերում առանձնահատուկ դերակատարություն: Համաձայն Է. Հանսենի, ով հանդիսանում է «Հարկային քաղաքականությունը և տնտեսական ցիկլերը» աշխատության հեղինակը, համանման իրավիճակներում, նա ի թիվս այլ գործիքների, որպես ճգնաժամերի հաղթահարման կարևոր լծակ է դիտարկում նաև եկամտահարկը: Ըստ հեղինակի՝ ճգնաժամային իրավիճակներում հարկ է կրճատել եկամտահարկերի մեծությունը բարձրացնելու համար հասարակական եկամուտների արդյունքում նաև՝ արդյունավետ պահանջարկի մակարդակը և ընդհակառակը տնտեսության զարգացման հասուն մակարդակներում բարձրացնել այն՝ խուսափելու համար գնաճային և գերարտադրության ռիսկերից¹: Սակայն, հարկային քաղաքականությունն համանման իրավիճակներում ոչ միայն եկամտահարկի, այլև ըստ էության շահութահարկի գծով պետք է ունենա այնպիսի ուղղվածություն, որը համաժամանակյա համահարթեցնող ազդեցություն կկրի՝ անկախ այն բանից, թե տնտեսությունը զարգացման ինչպիսի փուլում է գտնվում: Այս տեսակետից եկամտահարկը, որը գանձվում է ֆիզիկական անձանց եկամուտներից և զգալի ազդեցություն ունի վերջիններիս եկամուտների մակարդակի ձևավորման, հետևապես նաև բնակչության կենսամակարդակի վրա, իրապես բավականաչափ կարևոր լծակ է: Եկամտահարկի դրույքաչափերի և հարկման օբյեկտի ճիշտ ընտրությունը կարող է ձեռք բերել զգալի ազդեցություն ինչպես աշխատավարձի ձևով ստացվող եկամուտների համեմատաբար ավելի հավասարաչափ վերաբախման, այնպես և կենսամակարդակի բարձրացման, համախառն կամ արդյունավետ պահանջարկի ավելի համաչափ աճի ապահովման տեսանկյունից: Այս խնդիրն արդիական է նաև ՀՀ պարագայում, որտեղ բնակչության եկամուտների բևեռացման աստիճանը բավականաչափ խորն է:

Մասնավորապես, ըստ 20%-անոց քվանտիլային խմբերի եկամուտների² 2004-2008թթ. ընթացքում բնակչության դրամական եկամուտների բաշխման անհամաչափության աստիճանը ըստ Լորենցի կորի ներկայացված է գծապատկեր 1-ում:


Ձիների գործակցի տեղաշարժը համապատասխանաբար 2004-2008թթ. համար 2004թ. 0.395-ի համեմատ 2008թ. կազմել է 0.389³ (տե՛ս գծապատկեր 2-ը):

¹ Տե՛ս Харрод Р. “К теории экономической динамики” Глава 2.
http://adhdportal.com/book_897_chapter_3_%C2%A7_2._NEOKEJNSIANSKAJA_TEORIJA_%D0%A1IKLA._EH.KHANSE N.html:


² Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, Կենսամակարդակ, կետ 62, էջ 91:

³ Տե՛ս նույն տեղում:

Լորենցի կորը ՀՀ-ում 2004-2008թթ.



Ձիների գործակիցը ՀՀ-ում 2004-2008թթ.



Սա վկայում է այն մասին, որ բնակչության դրամական եկամուտների բեռնացման աստիճանը Հայաստանում հանդես է բերում խորացման դինամիկա: Ուստի, դրա կասեցման իմաստով բավականաչափ կարևոր դերակատարում կարող է ունենալ եկամտահարկը և գործող եկամտահարկի մասին օրենքում համապատասխան փոփոխությունների կատարումը: Մասնավորապես, արդյունավետ կլինի վերափոխել եկամտահարկի հարկման սուբյեկտին՝ որպես այդպիսին ընդունելով ոչ թե անհատին, այլ՝ ընտանեկան միավորը: Այս դեպքում, եկամուտների բախման մակարդակը կարող է շոշափելիորեն համահարթեցվել: Սկզբունքի տրամաբանությունը կայանում է հետևյալում. հաշվի են առնվում ընտանեկան միավորի համախառն եկամուտի մեծությունը և ապա հարկային նվազեցումների մեջ ներառվում են համապատասխան չափորոշիչներ կապված տվյալ ընտանիքում անչափահաս երեխաների թվաքանակի, տվյալ ընտանիքի խնամակալության տակ գտնվող մեծահասակ

ընտանիքի անդամների, դրանց բոլորի հաշվով կենսամիջոցների նվազագույն եկամուտների մակարդակի, հիփոթեքային վարկի տոկոսագումարների և այլնի հետ, ինչը հնարավորություն կընձեռի կտրուկ բարձրացնել եկամտահարկի կարգավորիչ դերը՝ այն դարձնելով առավել ճկուն սոցիալական պաշտպանվածության բարձրացման, եկամուտների առավել հավասարաչափ վերաբաշխման տեսանկյունից: Նման փոփոխությանը զուգահեռ՝ նպատակահարմար կլինի նաև պրոգրեսիվ հարկման երկաստիճան համակարգից անցում կատարել առավել բազմաստիճան համակարգի՝ կապված եկամտահարկի գծով ներկայումս գործող հարկման օրենսդրության բովանդակային հետևյալ հակասության հետ: Մասնավորապես, ինչպես հայտնի է, 2010 թվականին որպես նվազագույն աշխատավարձի մեծություն կամ եկամտի չհարկվող շեմ ընդունվել է 30 000 ՀՀ դրամը, որը մեր դեպքի (և առհասարակ միջազգային պրակտիկայում այս շեմը նախատեսվում է ոչ միայն որպես մեխանիզմ եկամտահարկի չափի կարգավորման համար, այլ նաև այն նույնացվում և համադրվում է 1 շնչի հաշվով կենսամիջոցների նվազագույն մեծությանը, որը գտնվում է հարկային արտոնյալ դաշտում) համար կարող է համեմատելի դառնալ 1 անձի հաշվով կենսամիջոցների նվազագույն արժեքի մեծության հետ: Ըստ այս տրամաբանության, եթե 4 շնչից բաղկացած ընտանիքում աշխատում է 1 անձ, ում եկամուտը չի գերազանցում 120 000 դրամը, ապա համախառն եկամտի մակարդակն այդ ընտանիքի համար պետք է ազատվի հարկումից, որպեսզի ապահովվի ընտանիքի անդամների հաշվով սպառողական նվազագույն զամբյուղի մեծությունը: Սակայն, ըստ գործող օրենքի, համանման դեպքերում այս տրամաբանությունը, փաստորեն, չի գործում: Ուստի, հնարավոր տարբերակների թվում, հարկման պրոգրեսիայի աստիճանակարգը, ինչպես նաև հարկադրույքները պետք է դիտարկվեն նախնական չհարկվող շեմի հիմքում դնելով ինչպես առանձին ֆիզիկական անձի սպառողական նվազագույն զամբյուղի մեծությունը, այնպես և այդ մեծությունը տվյալ ընտանիքի բոլոր անդամների թվաքանակի չափով, հակառակ պարագայում սոցիալական եկամուտների բախշման տեսակետից ծայրահեղ անապահով ընտանիքների ձևավորման փաստից խուսափելը, ներկա տնտեսական պայմաններում կդառնա գրեթե անհնար:

Պրոգրեսիվ հարկման աստիճանակարգի տարբերակներից մեկը, կարող է օրինակ հանդես գալ հետևյալ ձևով (տե՛ս աղյուսակ 1-ը)՝

Աղյուսակ 1

Եկամտահարկի պրոգրեսիվ հարկման աստիճանակարգ

| Ընտանեկան համախմբված բյուջեի նկատմամբ | Կիրառվող հարկադրույքը |
|---|-----------------------|
| Մինչև (ընտանքի շնչերի թիվ x նվազագույն սպառողական զամբյուղի արժեք) շեմը | 0% |
| Չհարկվող, հաշվարկվող շեմը գերազանցող գումարից մինչև 100 000 դրամը | 5% |
| 100 000 դրամից մինչև 200 000 դրամը | 10% |
| 200 000 դրամից մինչև 300 000 դրամը | 15% |
| 300 000 դրամից մինչև 400 000 դրամը | 20% |
| 400 000 դրամից ավելի եկամտի դեպքում | 30% |

Հարկային դրույքաչափերի ընտրությունը տվյալ դեպքում պետք է կախված դառնա ինչպես եկամուտների համահարթեցման, այնպես և տվյալ հարկի գծով հարկային ընդհանուր եկամուտների մեջ հարկային մուտքերը հնարավորինս հաստատուն պահպանելու

անհրաժեշտությունից կամ, այլ կերպ ասած, այնպիսի հարկադրույքներից, որոնք, ի հաշիվ առավել բարձր եկամուտ ունեցող ընտանիքներից հավելյալ հարկային մուտքերի ապահովման, կփոխհատուցեն առավել քիչ եկամուտ ունեցող ընտանիքների եկամտահարկի գծով հարկային մուտքերի կրճատման տարբերությունը:

Եկամտահարկի գծով համանման փոփոխությունը միաժամանակ կարող է հանգեցնել հավաքագրման և դրա հաշվարկման ավելի բարդ մեխանիզմների կիրառմանը, որտեղ անհրաժեշտություն կառաջանա որոշակի ժամկետային պարբերականությամբ վերանայել առանձին ֆիզիկական անձանց, ինչպես նաև նրանց համախառն ընտանեկան եկամուտների մակարդակները՝ ներմուծելով հավաքագրման նոր մեխանիզմներ՝ կապված մասնավորապես այն հանգամանքի հետ, որ գործող եկամտահարկի մասին օրենքով որպես հարկատու անձի հարկային գործակալ հանդես է գալիս գործատու կազմակերպությունը: Եկամտահարկի վճարումն այս դեպքում իրականացնում է կազմակերպությունը: Սակայն ընտանեկան եկամտահարկի հաշվարկման և վճարման պարագայում, հավաքագրման այս մեխանիզմն այլևս նույնությամբ չի կարող գործել (բացառությամբ թերևս միայն այն դեպքի, եթե միևնույն ընտանիքի աշխատող անդամներն աշխատեն միևնույն կազմակերպությունում):

Արդյունքում խնդիր կառաջանա մտցնել ընտանեկան եկամուտների ժամկետային պարտադիր հայտարարագրման գործընթաց հարկային համապատասխան մարմիններում և վերանայել հարկային գործակալ հանդես եկող անձանց կազմը:

Ինչ վերաբերում է շահութահարկին, ապա այն հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Ըստ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի¹ շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, որտեղ հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական արժեքով: Ըստ այդմ որպես շահութահարկ վճարողներ են հանդես գալիս ՀՀ ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները, բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների, բյուջետային հիմնարկների և ՀՀ կենտրոնական բանկի:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից կատարվում են համապատասխան նվազեցումներ (ծախսերը, կորուստները), որտեղ, ինչպես նշվում է գործող օրենքում, որպես ծախս է համարվում դիտարկվող տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների այն աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցմանը: Այդ թվում՝

- նյութական ծախսերը,
- աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները,
- պարտադիր սոցիալական ապահովության վճարները,
- ամորտիզացիոն մասհանումները,
- ապահովագրական վճարները,
- չփոխհատուցվող հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները,
- վարկերի և այլ փոխառությունների տոկոսները,

¹ Շահութահարկի մասին ՀՀ օրենք, ընունված 30 սեպտեմբեր, 1997թ., Բաժին 1, գլուխ 1, հոդված 2.3, ԻՐՏԵԿ:

- երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային, ապահովագրական ու վարկային կազմակերպությունների ծառայությունների համար վճարները,
- գովազդային ծախսերը և այլն:

Ըստ այդմ՝ մի շարք ծախսատեսակներ, որոնց գծով պետությունը սահմանել է համապատասխան նորմատիվային չափաքանակներ, դուրս են մնում նվազեցումների հանրագումարից այն չափով, ինչ չափով տվյալ կազմակերպությունը կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձը գերազանցում է սահմանված նորմատիվային չափը (օրինակ՝ վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար կառավարության սահմանած չափը գերազանցող վճարները, հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատակիցներին՝ օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար կառավարության սահմանած չափը գերազանցող ծախսերը, սահմանած չափը գերազանցող ներկայացուցչական և հովանավորչական ծախսերը և այլն):

Շահութահարկի հարկման դրույքաչափը կազմում է 20%, որից ազատման գծով արտոնություն է տրված՝ գյուղատնտեսական արտադրանքին (հարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը), ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին, «Համահայկական բանկին» և այլն:

Այսուհանդերձ, ներկայումս գործող օրենքով արտոնություններն հիմնականում տրված են գյուղատնտեսական ապրանքների արտադրությանը և արտահանման գործընթացին նպաստող ձեռնարկատիրական գործունեության իրականացմանը, ինչը բավականաչափ խրախուսելի է հաշվի առնելով գյուղատնտեսության զարգացման ներկա վիճակը և տեղական ապրանքատեսակներն արտաքին շուկայում գնային առումով ավելի մրցունակ դարձնելու խնդիրը: Սակայն շահութահարկի դեպքում գործում է հարկման դրույքաչափի մեկ սանդղակ, որն ընդհանուր է բոլոր հարկատուների համար, այն դեպքում, երբ ՀՀ տնտեսության զարգացման ներկա աստիճանում առավել նպատակահարմար կլիներ կիրառել պրոգրեսիվ հարկման դրույքաչափերի որոշակի աստիճանակարգ, որտեղ հատկապես շեշտադրված կլինի հակամենաշնորհային հարկման տրամաբանությունը:

Օրինակ, հարկման համանման դրույքաչափերի կիրառումը նպատակահարմար կլինի ածանցել, հիմք ընդունելով դեռևս չհարկված շահույթի տոկոսային աստիճանի մեծությունը համախառն եկամուտների նկատմամբ, որտեղ տրամաբանությունը պետք է հանգեցվի հետևյալին. որքան բարձր է տվյալ հարկատուի կողմից թողարկված արտադրանքի կամ մատուցած ծառայության գծով հարկման ենթակա շահույթի տոկոսային մակարդակը, այնքան ավելի բարձր պետք է լինի հարկման դրույքաչափը: Ընդ որում պրոգրեսիայի ընտրությունը հիմնված պետք է լինի այնպիսի հարկային դրույքաչափերի կիրառման վրա, որոնք զուտ շահույթի որոշակի նպատակային, նորմալ մեծության շուրջ հնարավորինս կհավասարակշռեն տնտեսության տարբեր ոլորտների մասով հարկված շահույթի տոկոսային մակարդակները: Եթե, օրինակ, հիմք ընդունենք, որ նման տոկոսադրույթի միջակայքը կարող է ընդգրկել 10%-20%-ը, ապա գերշահույթ ստացող կազմակերպությունները նման դեպքում ստիպված կլինեն վճարել այնպիսի շահութահարկ, որը շահույթի այդ գերմակարդակը կնվազեցնի՝ այն մոտեցնելով նշված միջակայքին:

Գա կունենա հետևյալ առավելությունները՝

1. Կունենա հակամենաշնորհային ուղղվածություն:
2. Տնտեսության մեջ տեղի կունենա նյութական արտադրության և ծառայությունների մատուցման տարբեր ոլորտների համընթաց զարգացում: Մասնավորապես տնտեսության մեջ իրավիճակային փոփոխությունների հետևանքով, երբ որոշակի ոլորտը կարող է դառնալ առավել շահութաբեր և հետևաբար՝ ներդրումային տեսակետից առավել գրավիչ, տեղի չի ունենա նյութական արտադրության մեկ այլ ոլորտից կապիտալի էական արտահոսք մեկ այլ ոլորտ:
3. Այլ հավասար պայմաններում պահանջարկի գնաճի հանդես գալու տեսակետից այն կկրի հակազդող բնույթ, երբ համախառն ծախսերի անփոփոխ մակարդակի և արդյունավետ պահանջարկի աճի դեպքում տնտեսական սուբյեկտների մոտ էականորեն կնվազի ապրանքների գների մակարդակի բարձրացման հաշվին շահույթը մաքսիմալացնելու շարժառիթը: Ընդհակառակը ավելի գերիշխող կդառնա շրջանառության ծավալները ընդարձակելու հաշվին շահույթը մաքսիմալացնելու ձգտումը, ինչը որպես հետևանք կհանգեցնի վերջիններիս կողմից ավելի գրագետ մարկետինգային քաղաքականության, ապրանքատեսակների և ծառայությունների դիվերսիֆիկացիայի մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներին, մրցակցության խորացմանը և այլն՝ արդյունքում հանգեցնելով նաև գնաճի զսպմանը:

Մյուս կողմից, քանի որ տնտեսության մի շարք ոլորտներում կարող են գործել շուկայում մենաշնորհային դիրք ունեցող տնտեսական սուբյեկտներ, որոնք կարող են ունենալ միավոր արտադրանքի հաշվով հարկվող շահույթի համեմատաբար ցածր մակարդակ, նպատակահարմար է պրոգրեսիվ հարկման սանդղակաչափը կառուցել որոշակի տրամաբանությամբ, մասնավորապես՝ չհարկված շահույթի տոկոսի տվյալ մակարդակից ցածրի դեպքում սահմանել հարկման դրույքաչափի հաստատուն մեծություն, իսկ շահույթի տոկոսային տվյալ աստիճանից ավելի բարձրի դեպքում կիրառել միևնույն հարկային դրույքաչափը, ինչ չհարկված շահույթի տոկոսային տվյալ աստիճանն է համախառն եկամուտների նկատմամբ:

ՀՀ տնտեսության պայմաններում նման մոտեցումը կարող է արդյունավետ դառնալ հիմք ընդունելով, որ տնտեսության տարբեր ոլորտներում առկա են շահութաբերության բևեռացման տարբեր աստիճաններ: Մասնավորապես, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2007-2008թթ. ընթացքում ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում գործող և տարբեր տնտեսական գործունեությամբ զբաղվող 1316 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների հաշվետվային տվյալների հիման վրա¹ հաշվարկված արտադրանքի շահութաբերության աստիճանների վերաբերյալ ցուցանիշներից կարելի է նկատել, որ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսական սուբյեկտների շահույթի միջին մակարդակը 2007-2008թթ. կազմել է 15.4-11.3%, այն դեպքում, երբ այն առավել բարձր է եղել հյուրանոցային և ռեստորանային, տրանսպորտի և կապի ծառայությունների, անշարժ գույքի հետ կապված գործունեության, վարձակալության ծառայությունների մատուցման ոլորտներում (տե՛ս աղյուսակ 2-ը):

¹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական տեղեկագիր «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-հունիսին», Երևան, 2009թ., կետ 1.2.8, էջ 56, www.armstat.am/file/article/sv_06_09a_1281.pdf:

**Արտադրանքի շահութաբերության աստիճանը ՀՀ-ում
ըստ տնտեսության ոլորտների 2007-2008թթ.**

| N | Անվանումը | Արտադրանքի շահութաբերություն, % | | Շահույթը նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը, մլն դրամ | Շահութահարկի մեծությամբ, ըստ հարկման 20% դրույքաչափի, մլն դրամ | Շահութահարկի հնարավոր մեծությունը, ըստ հարկման պրոցրեսիվ դրույքաչափերի, մլն դրամ |
|-----------------------------|---|---------------------------------|-------------|--|--|--|
| | | 2007թ. | 2008թ. | 2008թ. | 2008թ. | 2008թ. դեպքում |
| ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝ | | 15.4 | 11.3 | 176222.5 | 35244.5 | 37172.3 |
| 1 | Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն | 15.3 | 15.2 | 941.6 | 188.32 | 143.1 |
| 2 | Հանքագործական արդյունաբերություն | 80.2 | 10.0 | 10158.8 | 2031.76 | 1523.8 |
| 3 | Վերամշակող արդյունաբերություն | 11.9 | 7.8 | 39697.3 | 7939.46 | 5954.6 |
| 4 | Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում | 1.2 | 1.4 | 12221.1 | 2444.22 | 1833.2 |
| 5 | Շինարարություն | 8.4 | 8.3 | 9942.8 | 1988.56 | 1491.4 |
| 6 | Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում | 9.4 | 9.9 | 30165.3 | 6033.06 | 4524.8 |
| 7 | Տրանսպորտ և կապ | 34.4 | 32.9 | 56983.6 | 11396.72 | 18747.6 |
| 8 | Ֆինանսական գործունեություն | 73.0 | 11.7 | 73.4 | 14.68 | 11.0 |
| 9 | Անշարժ գույքի հետ կապված գործունեություն, վարձակալություն և սպառողների և ծառայությունների մատուցում | 35.4 | 28.5 | 6819.0 | 1363.8 | 1943.4 |
| 10 | Պետական կառավարում | 0.5 | 2.8 | 2.2 | 0.44 | 0.2 |
| 11 | Կրթություն | 16.8 | 23.5 | 715.1 | 143.02 | 168.0 |

Առավել փոքր շահութաբերությամբ առանձնացել են էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտները, ինչպես նաև պետական կառավարման ենթակայության տակ գտնվող ձեռնարկությունների գործունեության ոլորտները: Այլ ոլորտներում շահութաբերությունը տատանվել է 8-15% սահմաններում: Ըստ աղյուսակում ներկայացված տվյալների՝ տնտեսական ոլորտների 2008թ. շահույթի նկատմամբ շահութահարկի հաշվարկը մեր կողմից մի դեպքում իրականացվել է ըստ գործող հարկման դրույքաչափի՝ 20%, իսկ մյուս դեպքում՝ ըստ պրոցրեսիվ հարկման դրույքաչափերի, որտեղ դրանք ընդունվել են հետևյալ սկզբունքով՝

1. Մինչև 15% չհարկված շահույթի համար հարկման 15% դրույքաչափ:

2. 15%-ից բարձր չհարկված շահույթի նկատմամբ չհարկված շահույթի տոկոսային աստիճանին հավասար դրույքաչափ:

Ինչպես կարելի է տեսնել ստացված արդյունքներից, շահութահարկի գծով հարկման բեռն ավելի հավասարաչափ է այս դեպքում վերաբախշվում և միաժամանակ հարկային մուտքերի աստիճանը 5.5%-ով բարձրանում է:

Հարկման պրոգրեսիվ դրույքաչափերի ընտրությունը կարող է իրականացվել նաև այլ մեծություններով, սակայն հստակ է, որ հարկման նման մոտեցումն առավել արդյունավետ կլինի, հիմք ընդունելով ՀՀ տնտեսության զարգացման ներկա մակարդակը, այստեղ տեղ գտած խնդիրները, երբ անհրաժեշտ է միաժամանակ իրականացնել տնտեսական զարգացման, մրցակցային դաշտի ձևավորման, հակամենաշնորհային և գնաճի զսպմանն ուղղված, խթանող տնտեսական քաղաքականություն:

Հարկման պրոգրեսիվ դրույքաչափերի կիրառումը բավականաչափ կարգավորիչ ազդեցություն կարող է ունենալ ինչպես ճգնաժամային, այնպես էլ ոչ ճգնաժամային իրավիճակներում, երբ որպես ճգնաժամային իրավիճակներում հանդես եկող երևույթ առկա է դառնում ձեռնարկությունների շահութաբերության անկման գործընթացը և ֆինանսական ռեսուրսների պակասուրդը, իսկ ոչ ճգնաժամային իրավիճակներում՝ գերարտադրության արդյունքում հանդես եկող ռիսկերը: Այս դեպքում պրոգրեսիայի ընտրությունը հնարավորություն է ընձեռում ֆինանսապես ավելի դժվար կացության մեջ գտնվող ձեռնարկություններին դառնալ շարունակաբար առավել կենսունակ և ընդհակառակը՝ համահարթեցնել մենաշնորհային կամ խմբաշնորհային դիրքի շնորհիվ գերշահույթ հետապնդող կազմակերպությունների շահույթի մակարդակը՝ այն համապատասխանեցնելով շահույթի առավել «Խելամիտ» մակարդակի հետ: Նման հարկադրույքների կիրառումն այդպիսով կողմնակիորեն նպաստում է նաև ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում տարբեր ձեռնարկություններին սնանկացումից փրկելու համար պետական ուղղակի ֆինանսական աջակցության ծավալների նվազմանը, քանի որ այս մեթոդաբանությունն արդեն իսկ պարունակում է իր մեջ ֆինանսական կայունության պահպանման համահարթեցնող տարրը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՅ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը դրսևորվում է ֆինանսական ակտիվների կրճատմամբ, իրացվելի միջոցների, ֆինանսական հաստատությունների կապիտալացման մակարդակի նվազմամբ, վստահության իսպառ բացակայությամբ: Չարգացած երկրներում հարյուրավոր խոշորագույն ընկերությունների սնանկացումը, ֆինանսական շուկաների աշխատանքի խաթարումը էապես փոխում են շուկայի մասնակիցների վարքագիծը: Աշխարհի խոշորագույն տնտեսության մեջ, որն է Ամերիկայի Միացյալ Նահանգների տնտեսությունը, առաջին անգամ նկատվեց ներդրումների զուտ ներհոսք՝ արձանագրելով դոլարային էքսպանսիայի ավարտը: Իսկ սա իր հերթին բերում է ճգնաժամի խորացմանը՝ աշխարհի գրեթե բոլոր զարգացած ֆինանսական շուկաներում և զարգացող երկրներին գրկում է օտարերկրյա կարճաժամկետ ֆինանսական միջոցներից:

Հիփոթեքային շուկայում ձևավորված ֆինանսական փուչիկները, որոնք «անուցվում» էին անկատար, արհեստականորեն բարդացված ֆինանսական համակարգից, օրերից մի օր պայթեցին՝ բացահայտելով ֆինանսական և իրական հատվածի միջև էական շեղվածությունը: Ֆինանսական հատվածն արժեթղթերի շուկայի միջոցով պարտադրեց համապատասխան ճշգրտումներ կատարել իրական (կորպորատիվ) հատվածում: Սա էլ հանդիսացավ ֆինանսական ճգնաժամի հիմնական բարուրը՝ պայթեցնելով իրական հատվածը: Միաժամանակ բացահայտվեց նաև գլոբալ ֆինանսական և տնտեսական համակարգերի կառավարման, վերահսկողության և կարգավորման անկատարությունը¹:

2008թ. ընթացքում հայաստանյան թերևս բոլոր ընկերությունները գերծ չեն մնացել իրենց հաշվետվությունների մեջ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մասին հիշատակումներից, քանի որ, չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը դեռևս ամբողջությամբ ինտեգրված չէ գլոբալ տնտեսության մեջ, այնուամենայնիվ, ճգնաժամի հարվածները չզգալ չէր կարող: Ակնկալելով շուկաներում իրավիճակի շարունակական վատթարացում և տնտեսական անորոշության խորացում՝ ընկերություններն ու ներդրողները զգուշավոր դիրք ընդունեցին՝ հետաձգելով կարևոր ֆինանսական որոշումների կայացումը: Ֆինանսական ճգնաժամի պայմաններում ոչ ոք, թերևս, բաժնետոմսերի թողարկումներ չի անում, իսկ ներդրողները լուծում են իրենց ֆինանսական իրացվելիության խնդիրները: Դա է պատճառը, որ, չնայած ցուցակված և բորսայական առևտրին թույլատրված արժեթղթերի քանակի աճին, բաժնետոմսերի բորսայական շուկան տարվա ընթացքում շարունակեց բավականին պասիվ մնալ: 2009թ. ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ Հայաստանում բաժնետոմսերով ընդհանուր առևտրի ծավալը կազմել է 97.900.300 դրամ², ինչը 2.68 անգամ պակաս է նախորդ տարվա նույն ցուցանիշից³:

Այդուհանդերձ, 2009թ. տարեսկզբին՝ ճգնաժամի սուր շրջանում, «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ կողմից առաջին անգամ Հայաստանում իրականացվեց բաժնետոմսերի նախնական հրապարակային առաջարկ՝ ՆՀԱ (IPO), ինչը վկայում է այն մասին, որ ճգնաժամը շուկայի

¹ ՀՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայք - www.gov.am/am/Anticrisis/:
В настоящее время основополагающую значимость приобретает проблематика обеспечения качественного экономического роста на базе его интенсификации. Поскольку методологической базой оценки интенсивного экономического роста (а именно превышения доли прироста эффективности экономики в общем приросте ВВП) служит измерение уровня эффективности экономики (рассчитываемой как соотношение ВВП к сумме дисконтированных инвестиционных ресурсов и текущих затрат), то следует констатировать, что в Армении в 2006-2008гг. имел место экстенсивный экономический рост. Так, в 2006г. показатели прироста (снижения (-)) ВВП и эффективности экономики составили соответственно 13.2% и -2.2%, в 2007г. – 13.7 и 3.8, в 2008г. – 6.8% и -21.9% (см таблицу 1). Между тем следует отметить, что в 2007г., вследствие определенного повышения доли прироста эффективности экономики в общем приросте ВВП, имела место интенсификация экономического роста. Что же касается кризисного 2009г., то экономический спад на 14.2% был обусловлен 22.2%-ным сокращением эффективности экономики, несмотря на 10.3%-ное увеличение совокупных ресурсов, уступающих более чем в 3 раза аналогичному показателю предыдущего года.

Таблица 1

**Динамика макропоказателей
(прирост или снижение (-) в процентах к предыдущему году)¹**

| | 2006г. | 2007г. | 2008г. | 2009г. |
|----------------------------|--------|--------|--------|--------|
| Валовый внутренний продукт | 13.2 | 13.7 | 6.8 | - 14.2 |
| Совокупные ресурсы | 15.7 | 9.5 | 36.6 | 10.3 |
| Эффективность экономики | - 2.2 | 3.8 | - 21.9 | - 22.2 |

¹ <http://www.armstat.am/am/>.

Представленная неблагоприятная ситуация в вопросе степени интенсивности экономического роста актуализирует проблему выявления путей ускорения его интенсификации, среди которых основными можно считать следующие:

- освобождение от НДС и налога на прибыль в течение первых 5 лет деятельности вновь создаваемых венчурных фондов, бизнес-инкубаторов, технопарков и научно-инновационных центров;
- установление льготного налогового режима для привлечения не вообще иностранных инвестиций в сумме не ниже 500 млн. драмов (как было предусмотрено Законом РА “О налоге на прибыль”), а именно инвестиций из развитых стран и стран-стратегических партнеров РА, направляемых в производственную сферу республики. В частности, целесообразно освободить от налога на прибыль резидентов с такого типа иностранными инвестициями в течение первых 3 лет деятельности, если их величина в уставном капитале резидентов составляет 5-10 млн. амер. долларов (или равнозначную драмовую сумму), а также снизить налог на прибыль на 50% в течение последующих 2 лет, если величина инвестиций изначально превышает 10 млн. амер. доллар. Указанная мера будет способствовать стимулированию существенного роста привлекаемых в РА инвестиций, улучшению инвестиционного климата, внедрению высокотехнологичных машин и оборудования в производственные отрасли республики, а, следовательно, обеспечению интенсификации экономического роста, возрастанию ее экспортного потенциала;
- освобождение от налога на прибыль в течение первых 2-х лет деятельности тех вновь создаваемых субъектов малого бизнеса, которые заняты:
 - а) созданием принципиально новой техники, материалов, высоких технологий;
 - б) научно-исследовательской и, в частности, инновационной деятельностью;
- освобождение от НДС и налога на прибыль недействующих приватизированных предприятий производственного сектора в течение первых 2 лет их восстановленной деятельности, если они, минимум в течение года до введения этого налогового режима, вообще не функционировали. Причем эти предприятия могут воспользоваться упомянутым преференциальным налоговым механизмом при условии выполнения ими за первые 3 года устанавливаемых правительством следующих специальных условий:
 - обеспечение определенного роста объема продукции;
 - увеличение количества рабочих мест;
 - достижение минимального роста эффективности деятельности предприятия (к примеру, показателя рентабельности активов);
- поощрение на государственном уровне (в т.ч. предоставляя бюджетные гарантии) привлечения иностранных кредитов, предназначенных для:
 - а) бизнес-субъектов, производящих высокотехнологичную, а также экспортоориентированную продукцию;
 - б) восстановления деятельности тех предприятий обрабатывающей промышленности, где еще сохранился научно-технический и кадровый потенциал;
- создание инновационного банка (с государственным участием на начальном этапе его функционирования), специализирующегося на операциях по долгосрочному кредитованию венчурного капитала, новейших технико-технологических разработок.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՏՄ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, երկր. հանք. գիտ. դոկտոր

ՍԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունը բավականին հարուստ է երկաթաքարի ռեսուրսներով: Հայաստանում հայտնաբերված են հարյուրից ավելի հանքավայրեր ու հանքաերևակումներ, որոնցից, մեր կարծիքով¹ (այժմյան դրությամբ), առավել հեռանկարայինները վեցն են՝ Հրազդանի, Աբովյանի, Սվարանցի, Կամաքարի, Բագումի և Թթուջուր-Մարտունու: Թվարկված առավել հեռանկարային 6 հանքավայր-հանքաերևակումներից առաջին երկուսը՝ Հրազդանի և Աբովյանի հանքավայրերը մանրազնին հետախուզված են և ունեն նախկին ԽՍՀՄ-ի Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված հաշվեկշռային պաշարներ: Մյուս չորսից երկուսը՝ Սվարանցի և Բագումի, որակավորված են որպես հանքավայրեր և դրանցում կատարված են նախնական հետախուզական աշխատանքներ, որոնց արդյունքով էլ դրանց տարածքում կան հեղինակային հաշվարկված պաշարներ: Երկուսը՝ նշված 6-ից, որակավորված են որպես հանքաերևակումներ, որոնց արդյունաբերական նշանակությունը այժմյան դրությամբ դեռևս պարզված չէ (այդպիսի որակավորում տրվում է որոնողագնահատողական աշխատանքների արդյունքով), սակայն համանմանակման եղանակով դրանց հեռանկարները գնահատվում են միանգամայն դրական (համոզված լինելով, որ որոնողագնահատողական և հետախուզական աշխատանքների արդյունքով դրանցում կարող են հաշվարկվել որոշակի քանակի պաշարներ):

Այժմ դիտարկենք նշված հանքավայր-հանքաերևակումները մեկիկ-մեկիկ:

Հրազդանի երկաթի հանքավայրը գտնվում է Հրազդան քաղաքի հյուսիսարևելյան ծայրամասում: Տեղադրված է բարենպաստ աշխարհագրական և տնտեսական շրջանում՝ Երևան-Սևան ավտոմայրուղուց 0,5-0,7 կմ դեպի արևմուտք և Հրազդան երկաթուղային կայանից 3 կմ դեպի հյուսիս:

Հանքաքարը ներկայացվում է մագնետիտ հանքանյութի (Fe_2O_4) հոծ և երակիկացանավոր կուտակներով: Հոծ հանքայնացումը ներկայացված է երկու զուգահեռ ձգվող շերտաձև մարմիններով, որոնք ունեն համեմատաբար մեղմ անկումներ՝ 10-15⁰-ից մինչև 45-50⁰: Հանքային մարմինները տարածման ուղղությամբ ձգվում են 1100 և 600 մ, իսկ անկման ուղղությամբ՝ 300 և 270մ: Լուծվող երկաթի պարունակությունը 20%-ից բարձր է: Հանքային մարմինների երկու՝ պառկած և կախված կողերում մոտ 40 մ հզորությամբ տարածված է երակիկացանավոր հանքայնացումը երկաթի 15-ից մինչև 25% պարունակությամբ: Հետախուզված հաշվեկշռային պաշարների հաշվարկում ընդգրկված են միայն հոծ հանքաքարերը: Արդյունաբերական ($B+C_1$) կատեգորիաներով հաստատված պաշարները կազմում են 50,1 մլն տ՝ 31,76% լուծվող երկաթի միջին պարունակությամբ: Երակիկացանավոր հանքաքարերը 23,2 մլն տ պաշարներով և 17,7% երկաթի միջին պարունակությամբ, որակված են որպես արտա-

¹ Ավագյան Հ. Ա., Հայաստանի հանքահումքային ռեսուրսները: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, Երևան, 2004, 432 էջ:

հաշվեկշռային, սակայն, ինչպես ցույց են տվել Յու.Աղաբալյանի և մյուսների¹ հետազոտությունները անփոփոխ սահմաններով բացահայտում տնտեսապես նպատակահարմար են հոծ և երակիկացանավոր հանքաքարերի համատեղ արդյունահանումն ու մշակումը, այսինքն հնարավոր է պաշարների 23,2 մլն տ հավելած ի հաշիվ արտահաշվեկշռային պաշարների: Այդ պարագայում հանքաքարերի 73,3 մլն տ պաշարներում լուծվող երկաթի միջին պարունակությունը կազմում է 27,3%, իսկ երկաթ մետաղի քանակը՝ 20 մլն տ:

Հրազդանի հանքավայրի հանքաքարերի հարստացման հարցերով զբաղվել են նախկին ԽՍՀՄ տարբեր քաղաքների մի քանի գիտահետազոտական ինստիտուտներ: Փորձարկվել են երկաթաքարի թաց զատման լվացումով և առանց լվացման եղանակները: Երկաթաքարի հարստացումը առանց լվացման տրվել է 68%-անոց հարուստ խտանյութ երկաթի 90,0% կորզմամբ, իսկ լվացումով՝ 69,4%-անոց հարուստ խտանյութ՝ 89,3% կորզմամբ: Կորուստներն ամեն դեպքում կազմել են մոտ 1%: Հետազոտողները հանգել են այն եզրակացության, որ Հրազդանի հանքավայրի հանքաքարերի հարստացման ամենարդյունավետ եղանակը համարվում է թաց զատումը լվացումով, որի խտանյութերը պիտանի են ուղղակի վերականգնման եղանակով մաքուր երկաթ ստանալու համար, որն էլ հալելով վերածվում է էլեկտրատեխնիկական պողպատի:

Հրազդանի հանքաքարերում բացի հիմնական մետաղից, երկաթից, մագնետիտ հանքանյութում հայտնաբերվել են նաև մի շարք տարրեր՝ ցիրկոնիում՝ 42գ/տ պարունակությամբ, գալիում 18գ/տ, արծաթ՝ 4,5գ/տ, ոսկի՝ 1,0գ/տ, նիկել՝ 14,0գ/տ, կոբալտ՝ 276գ/տ, տիտան՝ 738գ/տ, լիթիում՝ 9գ/տ, ստրոնցիում՝ 27գ/տ, պղինձ՝ 418գ/տ, ցինկ՝ 816գ/տ, կապար՝ 31գ/տ²: Մագնետիտային հանքանյութի միջին պարունակությունը կազմում է ամբողջ 73,3 մլն տ հանքաքարերի պարունակության 37,71%-ը, հետևապես մագնետիտ հանքանյութի ընդհանուր քանակը կազմում է 27,64 մլն տ: Այս պարագայում Հրազդանի հանքավայրի հիմնական մագնետիտ հանքանյութի հետ համատեղ տարածված՝ ցրված և հազվագյուտ տարրերի, ինչպես նաև ազնիվ և այլ մետաղների քանակները կազմում են. ցիրկոնիումինը՝ 1160,9տ, գալիումինը՝ 497տ, արծաթինը՝ 124տ, ոսկունը՝ 27,6տ, նիկելինը՝ 387տ, կոբալտինը՝ 7628տ, տիտանինը՝ 20398տ, լիթիումինը՝ 249տ, ստրոնցիումինը՝ 746տ, պղնձինը՝ 11553տ, ցինկինը՝ 22554տ, կապարինը՝ 857տ:

Հրազդանի երկաթի հանքավայրի հանքաքարերում ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատվել են միայն երկաթ մետաղի պաշարները: Երկաթի մագնետիտ հանքանյութում պարունակվող հարակից տարրերի քանակները հաշվարկվել են մեր կողմից վերը բերված տվյալների հիման վրա և դրանք վերագրվել են հանքավայրի օգտակար տարրերի ռեսուրսներին:

Նշենք, որ երկաթի հետ հարակից տարածված տարրերի պարունակությունները որոշվել են ինչպես ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտնականների, այնպես էլ երկաթաքարերի հարստացման տեխնոլոգիական հետազոտություններ կատարող քիմիկ-տեխնոլոգիների կողմից, և այդ անալիզների արդյունքները նշույլ անգամ կասկածներ չեն հարուցում, որի հետ էլ կապված մենք դրանց քանակները դժվարությամբ ենք վերագրել P₁ կատեգորիայի ռեսուրսներին: Եթե հարակից տարրերի գծով կատարված անալիզների

¹ Աղաբալյան Յու. Ա., Արտահաշվեկշռային պաշարների ժողովրդատնտեսական նշանակությունը և դրանց դասակարգումը: «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», թիվ 10, 1987, էջ 65-74: Աղաբալյան Յու. Ա., Հայաստանում երկաթահանքային և սև մետալուրգիայի արդյունաբերության ստեղծման տնտեսական և մեթոդական հետազոտումը: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գրադարան, 1991: Աղաբալյան Յու. Ա., Բաղդասարյան Լ. Մ. Հայաստանի մետաղային օգտակար հանածոների օգտագործման հիմնահարցերը: «Էկոնոմիկա», թիվ 1-2, 1992, էջ 17-27:

² Магакьян И.Г., Пиджян Г.О. и др. Редкие и благородные элементы в рудных формациях Армянской ССР. Ереван: Изд. АН АрмССР, 1972, 394 с.

քանակը քիչ ավելի մեծ լիներ, ասեմբլ երկաթի գծով կատարված անալիզների թվաքանակի 10 տոկոսի չափով, ապա այդ հարակից տարրերի քանակները հնարավոր կլիներ վերագրել C₂ կատեգորիայի պաշարներին: Ինչևիցե, առայժմ դրանք թողնենք ռեսուրսների մեջ. միևնույն է՝ հանքավայրը չի շահագործվում և, հավանաբար չի էլ շահագործվելու, քանի որ Հրազդան քաղաքը աստիճանաբար շարժվում է դեպի հանքավայրի տարածքը (արդեն իսկ տներ են կառուցվել հանքավայրի տարածքում):

Այժմ հաշվարկենք Հրազդանի երկաթի հանքավայրի ընդերքի հարստությունների արժեքը 2007թ. մարտ-ապրիլ ամիսներին՝ նախաճգնաժամային օրերին, երկաթի և երկաթի հետ հարակից տարածված տարրերի միջազգային շուկայում ունեցած գներով (համոզված ենք, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարումից շատ քիչ ժամանակ անց գները ոչ միայն կարող են վերականգնվել, այլև գերազանցել նախաճգնաժամային գներին):

Հաշվարկները ցույց են տալիս, որ Հրազդանի երկաթի փոքրիկ հանքավայրի ընդերքում երկաթի հետ հարակից տարածված տարրերի արժեքը կազմում է 2 մլրդ 346 մլն 101 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկաթ հիմնական մետաղինը՝ 6 մլրդ դոլար: Եթե հանքավայրը, ինչ-որ ժամանակ շահագործվի և այդ շահագործման ժամանակ հանքահարստացման գործընթացում և մետալուրգիական փուլով խտանյութերի վերամշակման պարագայում կորզվի երկաթ մետաղի 90%-ը, իսկ հարակից բաղադրիչների 80%-ը, ապա լեռնամետալուրգիական ձեռնարկության ստացած հասույթը կարող է կազմել 7 մլրդ 276 մլն 881 հազ. դոլար:

Եթե Հրազդանի հանքավայրի ընդերքից տարեկան արդյունահանվի 1,1 մլն տ հանքաքար և հանքավայրը շահագործվի 66 տարի, ապա լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է կազմել 109 մլն 262 հազ. 477 դոլար:

Աղյուսակ 1

Հրազդանի երկաթի հանքավայրի ընդերքի հարստությունների՝ արդյունաբերական պաշարների և P1 կատեգորիայի կանխատեսումային ռեսուրսների արժեքի հաշվարկը

| Տարրերը | Տարրերի քանակի միավորը | Տարրերի քանակը | Տարրերի միավորի արժեքը, դոլ. | Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ. |
|----------------------------|------------------------|----------------|------------------------------|---------------------------------------|
| Ցիրկոնիում | տ | 1160,9 | 110000 | 127.699.000 |
| Գալիում | տ | 497 | 460000 | 228.620.000 |
| Արծաթ | տ | 124 | 450000 | 55.800.000 |
| Ոսկի | կգ | 27600 | 31500 | 869.400.000 |
| Նիկել | տ | 387 | 44780 | 17.329.860 |
| Կոբալտ | տ | 7628 | 66660 | 508.482.480 |
| Տիտան | տ | 20398 | 18000 | 367.164.000 |
| Լիթիում | տ | 249 | 70000 | 1.743.000 |
| Սարոնցիում | տ | 746 | 7000 | 5.222.000 |
| Պղինձ | տ | 11553 | 7465 | 86.243.145 |
| Յինկ | տ | 22554 | 3400 | 76.683.600 |
| Կապար | տ | 857 | 2000 | 1.714.000 |
| Ընդամենը (հարակից տարրերի) | | | | 2.346.101.085 |
| Երկաթ | տ | 20.000.000 | 300 | 6.000.000.000 |
| Ընդհանուրը | | | | 8.346.101.085 |

Մեզ հայտնի է, որ գերզտված տարրերի արժեքը բազմակի (10-ից մինչև մի քանի հարյուր անգամ) մեծ է այդ նույն սովորական տարրերի արժեքից, սակայն, այժմյան դրությամբ, Հրազդանի հանքավայրի հանքաքարերում առկա հարակից տարրերից և ոչ մեկի գերզտված տեսակի արժեքը մեզ հայտնի չէ և ձեռնարկության հասույթի հաշվարկ՝ գերզտված տարրերի վաճառքի պարագայում, կատարել չենք կարող: Մեզ հայտնի է միայն մաքուր երկաթի արժեքը, որը կազմում է 16800 դոլ/տ: Եթե Հրազդանի լեռնամետալուրգիական ձեռնարկությունը վաճառի միայն 18 մլն տ մաքուր երկաթ (հարակից բաղադրիչներն իրենց սովորական վիճակով), ապա ստացած հասույթը հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածում կարող է կազմել 304 մլրդ 276 մլն 881 հազ. դոլար: Այդ պարագայում ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կկազմի 4 մլրդ 568 մլն 722 հազ. դոլար:

Արովյանի երկաթի հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզում՝ Կապուտան գյուղի մոտակայքում, Արովյան քաղաքից 5 կմ և Երևան քաղաքից 22 կմ հեռավորության վրա: Օգտակար հանածոն՝ երկաթաքարը տեղադրված է օլիգոցենի հասակի կոտրատված ու բրեկչացված անդեզիտային պորֆիրիտների և անդեզիտների միջև, որոնք էլ ծածկված են 50-180մ հզորությամբ բազալտների և անդեզիտաբազալտների հոսքերով: Հանք ներփակող ապարների հզորությունը հասնում է 600-800մ-ի, որից երկրաբանահետախուզական աշխատանքներով (հորատանցքերով) հատվել և հետազոտվել են մինչև 400մ խորությունը: Հանքայնացումը ներկայացված է ոսպնյակաձև, երականման և երակիկացանավոր մարմիններով և ունի մագնետիտ-ապատիտային կազմավորում: Այս բոլորը համատեղ կազմում են համարյա հորիզոնական տեղադրված (10-15⁰ անկմամբ) ոսպնյակաձև մի խոշոր մարմին, որը տարածման ուղղությամբ ձգվում է 800-1200մ, անկման ուղղությամբ՝ 700-800մ և ունի 130-150մ հզորություն: Երկաթի պարունակությունը հանքային մարմնում տատանվում է մեծ սահմաններում՝ 10-15%-ից մինչև 60-69%-ի, որտեղ էլ ֆոսֆորի հինգօքսիդի (ապատիտի) պարունակությունը տատանվում է 3-ից մինչև 13%-ի սահմաններում:

Մագնետիտային հոծ հանքաքարերում լուծվող երկաթի միջին պարունակությունը կազմում է 63,5%, ֆոսֆորի հինգօքսիդինը՝ 0,12%, երկաթի երկօքսիդինը (FeO)՝ 22,34%, երկաթի օքսիդինը (Fe₂O₃)՝ 64,23%: Բրեկչացված և երակիկացանավոր հանքաքարերում լուծվող երկաթի պարունակությունը կազմում է 25,15%, ֆոսֆորի հինգօքսիդինը (P₂O₅)՝ 0,22%, երկաթի երկօքսիդինը՝ 7,15%, երկաթի օքսիդինը՝ 28,15%:

Երևանի մի քանի գիտահետազոտական ինստիտուտներում, Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում և Կրիվոյ-Ռոզում կատարված տեխնոլոգիական հետազոտություններով հաստատվել է երկաթաքարի 3-4 փուլերով մագնիսական թաց գատման արդյունավետությունը հանքաքարի տարբեր տեսակների (երկաթ մետաղի տարբեր պարունակությունների՝ աղքատ, միջին և հարուստ) համար: Այդ հանքաքարերի հարստացման տեխնոլոգիական ցուցանիշները բերված են ստորև՝ աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

| Երկաթի առաջնային պարունակությունը հանքաքարում, %% | Խտանյութերը | | Կորզումը, %% | Հարստապոչերը | |
|---|-------------|-----------------------------|--------------|--------------|-----------------------------|
| | Ելքը, %% | Երկաթի պարունակությունը, %% | | Ելքը, %% | Երկաթի պարունակությունը, %% |
| 16-18,9 | 15-19 | 64-68 | 58-69,5 | 80,5-85 | 7-7,7 |
| 23-33,0 | 25-40 | 64-69 | 72-85 | 60-74 | 6-11,3 |
| 44-56,5 | 58-80 | 62-68,5 | 89-96,5 | 20-42 | 10,5-16 |

Աբովյանի հանքավայրի հանքաքարերից բարձրորակ խտանյութեր ստանալու համար պահանջվում է հանքաքարերի նուրբ մանրացում՝ մինչև 0,1մմ: Ստացված խտանյութերը պիտանի են դոմենյան վառարաններում հալման և ուղղակի վերականգնման միջոցով սպունգային երկաթ ստանալու համար:

Հանքաքարերը հեշտ հարստացվող են, սակայն թաց մագնիսական զատման միջոցով ստացված ապատիտային խտանյութը չի բավարարում չափանիշային պահանջներին բարդ հանքանյութային կազմի պատճառով: Ապատիտի հետ, 1,4-ից 2%-ի չափով կապված են հազվագյուտ հողատարրեր, որոնք գործնական հետաքրքրություն կարող են ներկայացնել ապատիտի մաքուր խտանյութեր ստանալու պարագայում:

Աբովյանի հանքավայրի հանքաքարերի A+B+C₁ կատեգորիաներով հաստատված պաշարների քանակը կազմում է 243,6 մլն տ, երկաթի միջին պարունակությունը՝ 27,6%: Արտահաշվեկշռային պաշարների քանակը՝ 17,0 մլն տ, երկաթի միջին պարունակությունը՝ 20,55%: Մակաբացման ապարների՝ անդեզիտաբազալտների և բազալտների պաշարները A+B+C₁ կատեգորիաներով կազմում են 64,4 մլն տ, որոնք գնահատված են որպես շինանյութ:

Հանքաքարերի հարստացման տեխնոլոգիական ցուցանիշների աղյուսակից պարզորոշ երևում է, որ ինչպես ամենահարուստ (44-56,5%), այնպես էլ միջին (23-33%) և աղքատ (16-18,9%) պարունակության հանքաքարերից ստացվում են բարձրորակ խտանյութեր երկաթի համարյա հավասար պարունակություններով և միմյանց շատ մոտ կորզումներով (բնական է, որ աղքատ հանքաքարերից կորզումները քիչ ավելի պակաս պետք է լինեն): Այս հանգամանքն ասում է այն մասին, որ հանքավայրի հաշվեկշռային և արտահաշվեկշռային պաշարները կարելի է արդյունահանել համատեղ՝ ունենալով ընդհանուր պաշարների 17 մլն տ հավելած ի հաշիվ արտահաշվեկշռային պաշարների: Այդ պարագայում հաշվեկշռային և արտահաշվեկշռային 260,8 մլն տ պաշարներում երկաթի միջին պարունակությունը կկազմի 27,14%:

Աբովյանի հանքավայրի հանքաքարերում՝ Ի.Գ.Մաղաքյանի և Գ.Հ.Փիջյանի տվյալներով (1972) հիմնական օգտակար տարրերի՝ երկաթի և ֆոսֆորի հետ համատեղ հայտնաբերվել են մի շարք այլ տարրեր, որոնց մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հազվագյուտ հողատարրերը: Մագնետիտ-ապատիտային հոծ հանքաքարերում հայտնաբերվել են ցերիում՝ 1-3% պարունակությամբ, լանտան՝ 0,3-0,5%, իտրիում՝ 0,05%, արծաթ՝ 0,001%, գալիում՝ 0,0003%, լիթիում՝ 0,0003%: Մագնետիտային հոծ հանքաքարերում, որտեղ մագնետիտ հանքանյութի պարունակությունը կազմում է 80-85%, հայտնաբերվել են. նիոբիում՝ 0,003-0,01%, արծաթ՝ 0,001%, լիթիում՝ 0,0003%, բերիլիում՝ 0,001%: Ապատիտային հանքանյութում հազվագյուտ հողատարրերի ընդհանուր պարունակությունը կազմում է 2,48-ից 4,17%: Միահանքանյութային ապատիտներում հայտնաբերվել են իտրիում՝ 0,1-0,14%, լանտան՝ 0,64-1,1%, ցերիում՝ 1,36-2,3%, իտերբիում՝ 0,002-0,004%, արծաթ՝ 0,001%, լիթիում՝ 0,0006%, պրազեոդիմ՝ 0,05-0,09%, նեոդիմ՝ 0,22-0,44%, գադոլինիում՝ 0,03-0,04%, դիսպրոզիում՝ 0,06-0,17%, էրբիում՝ 0,0014-0,004%, տուլիում՝ 0,0003-0,0004% և լյուտեցիում՝ 0,0003-0,003%:

Բարդ հաշվարկներից (ոչ երկրաբան ընթերցողների համար հասկանալի) խուսափելու նպատակով անտեսենք Աբովյանի հանքավայրի միահանքանյութային հանքաքարերում հայտնաբերված տարրերի պարունակությունները և հաշվարկների համար հիմք ընդունելով համալիր հանքաքարերում հայտնաբերված վեց կարևորագույն տարրերի՝ ցերիումի, լանտանի, իտրիումի, արծաթի, գալիումի և լիթիումի միջին պարունակությունները, հաշվարկենք դրանց ռեսուրսները: Եվ այսպես. ցերիումի ռեսուրսները (դրա միջին պարունակությունն ընդունելով 2%) կարող են կազմել 5,216 մլն տ, լանտանինը (դրա միջին պարունակությունն

ընդունելով 0,4%) կարող են կազմել 1,0432 մլն տ, իտրիումինը՝ 130,4 հազ. տ, արծաթինը՝ 2608տ, գալիումինը՝ 782,4տ լիթիումինը՝ 782,4տ:

Արժույթի երկաթի հանքավայրի ընդերքի ողջ հարստությունների արժեքային ընդհանուր գնահատականը տալ չենք կարող, քանի որ երկաթի և ապատիտի հետ հարակից տարածված տարրերից շատերի՝ նիոբիումի, իտրիումի, պրագեոդիմի, նեոդիմի, սամարիումի, եվրոպիումի, գադոլինիումի, դիսպրոզիումի, էրբիումի, տուլիումի և լյուտեցիումի, գները չենք կարողացել ձեռք բերել: Այդուհանդերձ, առանց նշված տարրերի էլ այդ հանքավայրի ընդերքի հարստությունների արժեքը հաշվարկվում է միլիարդավոր դոլարներով, որն էլ կարող է կողմնորոշիչ դեր ունենալ հանքավայրի շահագործման հարցի որոշման գործում:

Աղյուսակ 3

Արժույթի երկաթի հանքավայրի ընդերքի հարստությունների՝ երկաթի արդյունաբերական պաշարների և հարակից բաղադրիչների ռեսուրսների արժեքի հաշվարկը

| Տարրերը | Տարրերի քանակի միավորը | Տարրերի քանակը | Տարրերի միավորի արժեքը, դոլ. | Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ. |
|-----------------------------------|------------------------|----------------|------------------------------|---------------------------------------|
| Ցերիում | տ | 5216000 | 64.000 | 333.824.000.000 |
| Լանտան | տ | 1043200 | 40.000 | 41.728.000.000 |
| Իտրիում | տ | 130400 | 69.000 | 8.997.600.000 |
| Արծաթ | տ | 2608 | 450.000 | 1.173.600.000 |
| Գալիում | տ | 782,4 | 460.000 | 359.904.000 |
| Լիթիում | տ | 782,4 | 7000 | 5.476.800 |
| Ընդամենը (հարակից բաղադրիչներինը) | | | | 386.088.580.800 |
| Երկաթ (սովորական) | տ | 70.781.120 | 300 | 21.234.336.000 |
| Ընդհանուրը | | | | 407.322.916.800 |
| Երկաթ (զտված) | տ | 58.451.048 | 16800 | 981.977.606.400 |

Աղյուսակ 3-ից երևում է, որ Արժույթի հանքավայրի հարակից բաղադրիչներից միայն թվարկված 6-ի (առանց լանտանոիդների մեծ մասի) արժեքը կազմում է ավելի քան 386 մլրդ ԱՄՆ դոլար, այն պարագայում, երբ սովորական մաքրության երկաթ մետաղինը կազմում է 21 մլրդ 234 մլն 336 հազ. դոլար, իսկ մաքուր (զտված) երկաթինը՝ 981 մլրդ 977,6 մլն դոլար: Տեսանելի է, որ Արժույթի հանքավայրի ընդերքում պարփակված, երկաթի հետ հարակից տարածված միայն նշված 6 տարրերի արժեքը բազմակի անգամ (ավելի քան 18 անգամ) գերազանցում է հիմնական երկաթ մետաղի արժեքին, որն էլ խոսում է այն մասին, որ այս հանքավայրի շահագործման պարագայում երբեք ու երբեք աչքաթող չպետք է արվեն նշված հարակից բաղադրիչները: Վերջիններս, ինչպես նաև աղյուսակ 3-ում տեղ չգտած, բայց Արժույթի հանքաքարերում առկա (հայտնաբերված) տարրերը (լանտանոիդները) կորզելու համար՝ մինչ հանքավայրի շահագործական աշխատանքներն սկսելը, անհրաժեշտ է կատարել լայնածավալ տեխնոլոգիական հետազոտություններ, մշակել բոլոր տարրերի բարձր աստիճաններով կորզման ժամանակակից և գերժամանակակից տեխնոլոգիաներ և դրանց համապատասխան էլ կառուցել մետալուրգիական գործարան (գործարաններ):

Եթե Արժույթի հանքավայրի շահագործման պարագայում դրա ընդերքից տարեկան արդյունահանվի 5 մլն տ հանքաքար, ապա հանքավայրը կարող է շահագործվել 52 տարի և

լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը (երկաթ մետաղի և հարակից բաղադրիչների 80%-ով կորզմամբ) կարող է կազմել 6 մլրդ 266,5 մլն դոլար:

Եթե կորզված երկաթ մետաղի գոնե 10%-ը միջազգային շուկա դուրս բերվի գտված վիճակով, իսկ մնացյալ 90%-ը և բոլոր հարակից բաղադրիչները՝ իրենց սովորական վիճակով, ապա լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է ավելանալ մոտավորապես 1,478 մլրդ դոլարով և կազմել 7 մլրդ 744,5 մլն դոլար:

Ծանոթություն. Աբովյանի երկաթի հանքավայրի հանքաքարերի հարստացման ընթացքում հնարավոր է դարձել ստանալ ապատիտային անջատ խտանյութեր, որոնց մեջ են անցել հազվագյուտ հողատարրերի՝ ցերիումի, լանտանի և նեոդիմի ամբողջ պարունակության 80-90%-ը, որից նեոդիմի բաժինը կազմել է 19-20%, իսկ ցերիումինն ու լանտանինը՝ 60-71%:

Բազումի երկաթի հանքավայրը գտնվում է Լոռու մարզում՝ Վանաձոր քաղաքից 8 կմ դեպի արևելք: Հանքայնացումը տեղադրված է եռցեմի հասակի անդեզիտային պորֆիրիտների և դիորիտային կազմի ներծին (խորքային ծագման) ապարների համան գոտում: Հանքային մարմինները ներկայացված են երկու ձևաբանական տիպերով՝ նսպնյակաձև և շերտանման մարմիններով: Ունեն գառիթափ 45-75⁰ անկումներ: Ոսպնյակաձև մարմինները՝ թվով 6-ը, ձգվում են 200-ից մինչև 450մ, 12--ից մինչև 24մ հզորությամբ (միջին հզորությունը կազմում է 20մ): Շերտանման մարմինները՝ թվով 5-ը, ձգվում են 650-ից մինչև 1800մ, 5,5-ից մինչև 65մ հզորությամբ (միջին հզորությունը կազմում է 30մ):

Բազումի երկաթի հանքավայրում կատարվել են որոնողագնահատողական աշխատանքներ: Հանքային մարմինները հորատանցքերով հատվել և հետազոտվել են 260մ խորությամբ: Ըստ խորության նկատվում է երկաթի պարունակության աճ: Հանքանյութը հիմնականում ներկայացված է մագնետիտ երկաթաքարով, որը հանքային մարմիններում բաշխված է անհավասարաչափ և մեծամասամբ երակիկացանային տեսքով: Երկաթ մետաղի պարունակությունը տատանվում է 14,7-ից մինչև 60,1%-ի սահմաններում, միջին պարունակությունը կազմում է 38,8%: Հեղինակային հաշվարկված C₂ կատեգորիայի պաշարների քանակը կազմում է 150 մլն տ, իսկ P₁ կատեգորիայի կանխատեսումային ռեսուրսների քանակը՝ 300 մլն տ: Հանքաքարերի ընդհանուր ռեսուրսները գնահատված են 450 մլն տ, երկաթ մետաղինը՝ 174,6 մլն տ:

Բազումի հանքավայրի երկաթի հանքաքարերում ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտնականների (Ի.Գ.Մաղաքյան, Գ.Հ.Փիջյան և ուրիշներ, 1972) կողմից հայտնաբերվել են նաև արծաթ 5,6 գ/տ պարունակությամբ, կոբալտ՝ 0,012%, հազվագյուտ հողատարրեր՝ 0,13% պարունակությամբ, որտեղ միայն ցերիումի պարունակությունը կազմում է 0,1% (մեկ կգ մեկ տոննա հանքաքարում):

Բազումի երկաթի հանքավայրում նշված հարակից բաղադրիչների ընդհանուր ռեսուրսները C₂ կատեգորիայի պաշարներում և P₁ կատեգորիայի կանխատեսումային ռեսուրսներում համատեղ կազմում են. արծաթինը՝ 1350տ (միջին պարունակությունն ընդունված է 3գ/տ), կոբալտինը՝ 54 հազ. տ, ցերումինը՝ 450 հազ. տ:

Աղյուսակ 4-ից երևում է, որ Բազումի երկաթի հանքաքարերում առկա, երկաթի հետ հարակից տարածված 3 տարրերի արժեքն ընդերքում կազմում է ավելի քան 33 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ երկաթ մետաղինը՝ 52,38 մլրդ դոլար: Ինչպես հայտնի է ցանկացած հանքավայրի ընդերքից հնարավոր չէ 100%-ով արդյունահանել և 100%-ով էլ կորզել բոլոր օգտակար տարրերը: Դրանք լավագույն դեպքում կարող են արդյունահանվել և կորզվել 90-95%-ով, սակայն, քանի որ Բազումի երկաթաքարերի համար տեխնոլոգիական հետազոտությունների արդյունքները նախնական են և երկաթի կորզումները կազմում են 86,9%, մեր հաշվարկ-

ներում դրանք ընդունում ենք 80%: Այսպիսով, Բազումի երկաթի հանքավայրի ընդերքից բոլոր 4 օգտակար տարրերը 80%-ով կորզելու պարագայում լեռնամետալուրգիական ձեռնարկության ստացած հասույթը հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածում կարող է կազմել 68 մլրդ 309,7 մլն դոլար:

Աղյուսակ 4

Բազումի երկաթի հանքավայրի ընդերքի հարստությունների՝ հեղինակային հաշվարկված պաշարների և կանխատեսումային ռեսուրսների արժեքի հաշվարկը

| Տարրերը | Տարրերի քանակի միավորը | Տարրերի քանակը | Տարրերի միավորի արժեքը, դոլ. | Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ. |
|----------------------------|------------------------|----------------|------------------------------|---------------------------------------|
| Արծաթ | տ | 1350 | 450000 | 607.500.000 |
| Կոբալտ | տ | 54000 | 66660 | 3.599.640.000 |
| Ցերիում | տ | 450.000 | 64000 | 28.800.000.000 |
| Ընդամենը (հարակից տարրերը) | | | | 33.007.140.000 |
| Երկաթ | տ | 174.600.000 | 300 | 52.380.000.000 |
| Ընդհանուրը | | | | 85.387.140.000 |
| Երկաթ (զտված) | տ | 144.184.680 | 16800 | 2.422.302.624.000 |

Եթե Բազումի հանքավայրի շահագործման պարագայում դրա ընդերքից տարեկան արդյունահանվի 7 մլն տ հանքաքար, ապա հանքավայրը կարող է շահագործվել 64,3 տարի, և լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է կազմել 1 մլրդ 62,4 մլն դոլար: Իսկ, եթե Բազումի հանքավայրի ընդերքից արդյունահանված և կորզված երկաթի 10%-ը միջազգային շուկա դուրս բերվի զտված վիճակով, ապա լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է աճել 29 մլրդ 486,3 մլն դոլարով և կազմել 30 մլրդ 548,7 մլն դոլար:

Բազումի երկաթի հանքավայրի հանքաքարերի տեխնոլոգիական հետազոտությունները կատարվել են Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի և հանքահումքի կովկասյան ինստիտուտի (քաղ. Թբիլիսի) լաբորատորիաներում: Հաստատվել է, որ նշված հանքաքարերի հարստացման ամենաարդյունավետ եղանակը թաց մագնիսական գատումն է, որի դեպքում խտանյութի ելքը կազմում է 48,38%, իսկ կորզումը՝ 86,91%: Երկաթի պարունակությունը խտանյութում կազմում է 68,58%: Հանքաքարերը շատ հեշտ հարստացվող են: Կոբալտն ամբողջությամբ անցնում է հարստապոչերի մեջ, որտեղ նրա պարունակությունը մեծանում է 1,5 անգամ: Հաստատվել է նաև, որ խտանյութի ելքը մինչև 50%-ով մեծացնելու պարագայում երկաթի կորզումը մեծանում է՝ հասնելով 93%-ի, սակայն այդ դեպքում փոքրանում է երկաթի պարունակությունը խտանյութում՝ կազմելով 62%, որն այնքան էլ ձեռնառու չէ (հետագա հետազոտություններով կարող են ճշտվել այդ թվերը և տրվել տեխնոլոգիական ճշտված պարամետրեր (չափագծեր-չափաբաժիններ)):

Այժմ Բազումի երկաթի հանքավայրում՝ «Սուրարտ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից կատարվում են երկրաբանահետախուզական աշխատանքներ, որոնց ավարտը նախատեսված է 2010թ. վերջին:

Թթուջուր-Մարտունի երկաթի հանքատրակումը գտնվում է Գեղարքունիքի մարզի Ճամբարակի շրջանում՝ Թթուջուր և Մարտունի գյուղերի միջև, դրանցից 0,5-1,5 կմ հեռավորության վրա, Միապոր լեռնաշղթայի արևմտյան լանջերին:

Միապորի շերտախմբի պորֆիրիտների մեջ մագնետիտային երկաթաքարի հանքայնացումներ հայտնաբերվել են դեռևս անցյալ դարի 30-ականներին: Ս.Մարտիրոսյանի կողմից՝

1960-61թթ. հայտնաբերվել է նաև Ճամբարակի հեմատիտ հանքանյութով ներկայացված հանքատեսակները: 1961-1963թթ. հետազոտելով Ճամբարակի շրջանի պղնձի և երկաթի հանքայնացումները, Ս.Մարտիրոսյանն արել է հետևյալ եզրահանգումները.

1. «Հեմատիտային հանքայնացման տարածքում նպատակահարմար է շարունակել որոնողահետախուզական աշխատանքները, քանի որ երկաթի միջին պարունակությունն այստեղ կազմում է 40%, իսկ հանքաքարի ռեսուրսները՝ 20 մլն տ»,
2. «Չայքենդի մագնետիտային հանքայնացման տեղամասը գործնական նշանակություն ունենալ չի կարող, քանի որ հանքայնացումը՝ ինչպես դեպի խորքը, այնպես էլ տարածման ուղղությամբ արագ մարում է»:

Թթուջրի տեղամասում մագնետիտային հանքայնացումը ներփակումների տեսքով տեղադրված է էքստրուզիվ գաբրոդիային զանգվածում, որտեղից Ս.Սուքիասյանի¹ կողմից վերցված 65 նմուշների տվյալներով ընդհանուր երկաթի պարունակությունը տատանվում է 13,34-ից մինչև 27,47%-ի սահմաններում, միջին պարունակությունը կազմում է 19,53% (նշենք, որ բոլոր նմուշները վերցված են եղել երկրի մակերես մերկացած հանքայնացումներից և մակերեսային փորվածքներից): Ս.Սուքիասյանը նշում է, որ գիպսմետրիկ ցածր հորիզոններից վերցված նմուշներում մագնետիտի բնածն ներփակումների չափերը մեծանում են մինչև 20-40սմ, իսկ երկաթի պարունակությունները բարձրանում են մինչև 56,4%-ը: Վերցված 25 նմուշների տվյալներով երկաթի միջին պարունակությունը ցածր հորիզոններում կազմում է 36,32%: Մակերեսային փորվածքներից և մերկացումներից վերցված 184 նմուշների տվյալներով երկաթի պարունակությունը Թթուջրի տեղամասում կազմում է 18,14%:

Ս.Սուքիասյանի գնահատմամբ Թթուջրի տեղամասի երկաթի հանքաքարերի ռեսուրսները գնահատվել են 500 մլն տ:

Թթուջրի տեղամասի հանքայնացմանը նմանատիպ հանքայնացում հայտնաբերվել է նաև Մարտունու տեղամասում: 500մ լայնության և 2000մ երկարության և բավականաչափ մեծ ինտենսիվության (1500-ից մինչև 4000-5000 գամմա)՝ ավելի ինտենսիվ, քան Թթուջրի տեղամասում, մագնիսական անոմալիան խոստանում է երկաթաքարերի 700 մլն տ ռեսուրսներ:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Թթուջրի և Մարտունու տեղամասերը հանդիսանում են մեկ միասնական հանքատեսակման՝ տարբեր, մեկը մյուսի շարունակությունը կազմող տեղամասեր, գտնվում են միևնույն երկրաբանական կառուցվածքի պայմաններում և կազմում են մեկ ընդհանուր հանքատեսակում 1260 մլն տ հանքաքարերի ընդհանուր ռեսուրսներով, որտեղ երկաթ մետաղի քանակը կարող է կազմել 500 մլն տ (երկաթի միջին պարունակությունն ընդունվել է 40%):

Քանի որ Թթուջուր-Մարտունի հանքատեսակման երկաթաքարերը բազմակողմանի հետազոտության չեն ենթարկվել՝ երկաթի հետ հարակից տարածված տարրերի մասին չունենք ոչ մի անալիտիկ տվյալ, այդ իսկ պատճառով էլ այս երևակման արժեքային գնահատականը տալիս ուղեցույց ենք ընդունում միայն երկաթ մետաղը, սակայն չբացառելով այն հանգամանքը, որ այստեղ ևս կարող են հայտնաբերվել բոլոր այն հարակից բաղադրիչները, որոնք առկա են Հրազդանի, Աբովյանի, Սվարանցի և այլ հանքավայրերի հանքաքարերում:

Թթուջուր-Մարտունի հանքատեսակման երկաթ մետաղի (սովորական մաքրության) արժեքն ընդերքում կազմում է 150 մլրդ դոլար (ԱՄՆ):

¹ Сукиасян С.С., Хачатрян Р.К. и др. Отчет о результатах проверки геохимических и геофизических аномалий и детальных поисковых работ на железо, цветные и редкие металлы в Красносельском рудном районе Арм.ССР за 1982-84гг. Армгеолфонды, Ереван, 1984.

Եթե հանքատեղակայումը հետախուզելու արդյունքում հաստատվեն նշված քանակի (1260 մլն տ) հանքաքարերի և 500 մլն տ երկաթի պաշարներ և «հանքավայրը» շահագործվի, ապա դրա ընդերքից արդյունահանված և կորզված երկաթի քանակը կարող է կազմել 400 մլն տ (80%): Այս պարագայում գտված երկաթի արժեքը կարող է կազմել 672 մլրդ դոլար, իսկ սովորական մաքրության երկաթինը՝ 12 մլրդ դոլար:

Եթե Թթուջուր-Մարտունի «հանքավայրի» շահագործման ժամանակ դրա ընդերքից տարեկան արդյունահանվի և մշակվի 10 մլն տ հանքաքար, ապա այդ «հանքավայրը» կարող է շահագործվել 126 տարի, և շահագործող ու մշակող ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է կազմել 952,4 մլն դոլար: Եվ, եթե կորզված երկաթի 10%-ը միջազգային շուկա դուրս բերվի գտված վիճակով, ապա լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է աճել 5 մլրդ 238 մլն դոլարով և կազմել 6 մլրդ 190 մլն դոլար:

Սվարանցի երկաթի հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզում՝ Գորիսի շրջանի Սվարանց գյուղից 4,5 կմ դեպի հարավ, Բարգուշատ լեռնաշղթայի հյուսիսային լանջի վրա: Այս հանքավայրում ԽՍՀՄ-ի տարիներին կատարվել են որոնողագնահատողական և ապա նախնական հետախուզական աշխատանքներ, որոնք ամբողջությամբ չեն ավարտվել, սակայն դա էլ բավական է եղել, որպեսզի կատարվեն պաշարների հեղինակային հաշվարկներ: Հիմնական հանքաքեր ապարները հանդիսանում են ներծին (ինտրուզիվ) գաբրոիդները, որոնք 1-3,5 կմ լայնությամբ ձգվում են (տարածվում են) 7 կմ: Գաբրոիդներում հանքային մարմինները ներկայացված են գառիթափի (70-90°) անկում ունեցող երականման մագնետիտ-օլիվինիտային կազմավորման հանքանյութերով: Այստեղ հայտնի են 13 հանքային մարմիններ մագնետիտային հանքայնացմամբ, որոնք ուղեկցվում են երակիկացանային տիպի հանքայնացմամբ:

Երկրաբանահետախուզական աշխատանքներով հանքային մարմինները հետապնդված են 300-ից մինչև 1400մ, որոնց հզորությունները տատանվում են 10-ից մինչև 80մ-ի սահմաններում: Երկաթի միջին պարունակությունն առանձին հանքային մարմիններում կազմում է 17,4-ից մինչև 23,4%: Հանքաքարերի հեղինակային հաշվարկված պաշարները 1963թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում են 430,7 մլն տ, որոնք գնահատվել են C_2 կատեգորիայով: Երկաթի միջին պարունակությունը հաշվարկված պաշարների առանձին մարմիններում կազմում է 19-20%: Այդ պաշարները հեշտությամբ կարելի է կրկնապատկել խորը հորիզոնների և թևերի հետախուզման միջոցով: Հանքավայրի հանքաքարերի կանխատեսումային ռեսուրսները գնահատվում են մեկ մլրդ տոննա, իսկ երկաթ մետաղինը՝ 200 մլն տ:

Սվարանցի հանքավայրի հանքաքարերի պարունակության հետազոտման, հանքահարստացման տեխնոլոգիաների մշակման, մետալուրգիական արդյունաբերության համար պիտանի խտանյութերի ստացման հարցերով զբաղվել են Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի, հանքահումքի կովկասյան ինստիտուտի (քաղ. Թբիլիսի) և Սվերդլովսկի «Ուրալմեխանորթ» ինստիտուտի լաբորատորիաներում և եկել են հետևյալ եզրահանգումների.

- երկաթի 19-20% պարունակության հանքաքարերից ստացվող խտանյութի քանակը կազմում է հանքաքարերի 25-40%-ը, որտեղ երկաթի պարունակությունը 53-55,5% է, իսկ կորզումը 60,6-75,6%:
- ապացուցվել են կոնդիցիոն մագնետիտային խտանյութի ստացման սկզբունքային հնարավորությունները: Ուշադրության է արժանի այն փաստը, որ խտանյութերում առկա է վանադիումի և տիտանի բարձր պարունակություն, որը կարող է զգալիորեն մեծացնել ապրանքային արտադրանքի արժեքը: Բացասական երևույթ կարելի է համարել ծծմբի բարձր պարունակությունը,

- արդյունաբերական հետաքրքրություն են ներկայացնում հանքաքարերի հարստացուցչերը, որոնցից, ինչպես ցույց են տվել տեխնոլոգիական հետազոտությունները, կարելի է ստանալ արժեքավոր արտադրանքներ,
- խտանյութերը կարող են օգտագործվել դոմենյան հալման համար՝ խառնելով դրանք այն հանքաքարերի հետ, որոնք ունեն ավարների ավելի թթու կազմ կամ հարուստ են կալցիումի օքսիդով,

Կատարված հետազոտությունների արդյունքով կարելի է նշել հետևյալը. Սվարանցի հանքավայրի հանքաքարերի որակատեխնոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած երկաթի համեմատաբար ցածր պարունակությանը, ուղեկից օգտակար բաղադրիչների (վանադիումի, տիտանի, մագնեզիումի) և արտադրության թափոնների (հարստացուցչերի) համալիր օգտագործման պարագայում այն կարող է ներկայացնել արդյունաբերական մեծ արժեք:

Հաշվի առնելով Սվարանցի հանքավայրի հանքաքարերի ռեսուրսների մեծությունը (մոտ 1,0 մլրդ տ), դրանց հետ ուղեկցվող կարևորագույն տարրերի՝ մագնեզիումի, տիտանի և վանադիումի օքսիդների բարձր պարունակությունը, հանքավայրի ռազմավարական դիրքն ու նշանակությունը ՀՀ հարավային տարածաշրջանի՝ Սյունիքի մարզի համար, հանքավայրի մանրագնին հետախուզումն ու յուրացումը, սև մետալուրգիայի հզոր բազայի ստեղծումը, դառնում են Հայաստանի Հանրապետության համար առաջին աստիճանի կարևորության խնդիր:

Սվարանցի հանքավայրի հիմնական հանքանյութերում երկաթ հիմնական մետաղի հետ համատեղ հայտնաբերված են մի շարք հարակից տարածված տարրեր՝ վանադիում՝ 0,07% պարունակությամբ, թալիում՝ 2,5 գ/տ, ինդիում՝ 3,0գ/տ, բերիլիում՝ 0,002%, տանտալի հինգօքսիդ (Ta_2O_5)՝ 0,0033%, որտեղ տանտալի պարունակությունը կազմում է 0,0025%, նիոբիումի հինգօքսիդ (Nb_2O_5)՝ 0,006%, որտեղ նիոբիումի պարունակությունը կազմում է 0,0042%, տիտանի օքսիդ (TiO_2)՝ 1,5%, որտեղ տիտան մետաղի պարունակությունը կազմում է 0,9%, մագնեզիում՝ 15% և հազվագյուտ հողատարրեր՝ 0,005% պարունակությամբ: Բացի այդ, Սվարանցի հանքաքարերի հարստացման խտանյութերում հայտնաբերվել են գերմանիում՝ 0,0004% պարունակությամբ, գալիում՝ 0,003%, վանադիում՝ 0,22%, սելեն՝ 0,0002%, տելուր՝ 0,0003%, քիսմուտ՝ 0,0002%, հազվագյուտ հողատարրերի պարունակությունը խտանյութերում մեծանում և հասնում է 0,006%-ի:

Սվարանցի երկաթի հանքաքարերի հարստացումից խտանյութերի միջին ելքը կազմում է հանքաքարերի 33%-ը: Այս բոլորը հաշվի առնելով Սվարանցի հանքավայրի հանքաքարերում պարունակվող հարակից տարրերի քանակների հաշվարկից պարզվում է, որ վանադիումի քանակը կազմում է 700 հազ. տ, թալիումինը՝ 2500տ, ինդիումինը՝ 3000տ, բերիլիումինը՝ 20 հազ. տ, տանտալինը՝ 25 հազ.տ, նիոբիումինը՝ 42 հազ. տ, տիտանինը՝ 9 մլն տ, մագնեզիումինը՝ 150 մլն տ, հազվագյուտ հողերինը՝ 50 հազ.տ, գերմանիումինը՝ 1200տ, գալիումինը՝ 9900տ, սելենինը՝ 660տ, տելուրինը՝ 990տ և քիսմուտինը՝ 29700տ:

Այդուսակ 5-ից պարզվում է, որ Սվարանցի հանքավայրի ընդերքում երկաթի հետ հարակից տարածված տարրերի ընդհանուր արժեքը ընդերքում կազմում է 570 մլրդ 953,2 մլն ԱՄՆ դոլար, սովորական մաքրության երկաթ մետաղինը՝ 60 մլրդ դոլար, մաքուր (գտված) երկաթինը՝ 2708 մլրդ 160 մլն դոլար, ընդհանուր հարստությունների (հարակից տարրերինը և սովորական մաքրության երկաթինը համատեղ)՝ 630 մլրդ 953,5 մլն դոլար:

Արդեն իսկ նշվել է, որ երկաթ մետաղի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ կազմում է 60,6-ից մինչև 75,6%, միջին կորզումը՝ 68,1%: Համոզված ենք, որ նորագույն

տեխնոլոգիաների կիրառմամբ երկաթի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ հնարավոր է հասցնել 80 և ավելի տոկոսի, սակայն մեր հետագա հաշվարկների համար հիմք ենք ընդունում արդեն իսկ գոյություն ունեցող փաստացի կորզումը, այսինքն 68%-ը:

Աղյուսակ 5

Սվարանցի երկաթի հանքավայրի ընդերքի հարատույթումների՝ հեղինակային հաշվարկված պաշարների և ռեսուրսների (համատեղ) արժեքի հաշվարկը

| Տարրերը | Տարրերի քանակի միավորը | Տարրերի քանակը | Տարրերի միավորի արժեքը, դոլ. | Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ. |
|---|------------------------|----------------|------------------------------|---------------------------------------|
| Վանադիում | տ | 700.000 | 40.000 | 28.000.000.000 |
| Թալիում | տ | 2500 | 1.300.000 | 3.250.000.000 |
| Ինդիում | տ | 3000 | 680.000 | 2.040.000.000 |
| Բերիլիում | տ | 20.000 | 900.000 | 18.000.000.000 |
| Տանտալ | տ | 25.000 | 200.000 | 5.000.000.000 |
| Նիոբիում | տ | 42.000 | 193.400 | 8.122.800.000 |
| Տիտան | տ | 9.000.000 | 18.000 | 162.000.000.000 |
| Մագնեզիում | տ | 150.000.000 | 2250 | 337.500.000.000 |
| Գերմանիում | տ | 1200 | 950.000 | 1.140.000.000 |
| Գալիում | տ | 9900 | 460.000 | 4.554.000.000 |
| Սելեն | տ | 660 | 52.220. | 34.465.200 |
| Տելուր | տ | 990 | 118.000 | 114.840.000 |
| Բիսմուտ | | 29.700 | 24.440 | 725.868.000 |
| Հազվագյուտ հողեր (օքսիդ) | | 50.000 | 9430 | 471.500.000 |
| Ընդամենը (հարակից բաղադրիչներ) | | | | 570.953.473.200 |
| Երկաթ (սովորական մաքրութ.) | տ | 200.000.000 | 300 | 60.000.000.000 |
| Ընդհանուրը (երկաթ +հարակից բաղադրիչներ) | | | | 630.953.473.200 |
| Երկաթ (մաքուր՝ գտված) | տ | 161.200.000 | 16800 | 2.708.160.000.000 |

Հանքահարստացման տեխնոլոգիական հետազոտություններով պարզվել է, որ Սվարանցի հանքաքարերում առկա բոլոր հարակից բաղադրիչները ամուր կերպով կապված են երկաթի հետ՝ երկաթի հանքաքարերում և հանքահարստացման գործընթացներում դրանք բոլորն էլ անցնում են խտանյութերի մեջ երկաթի կորզման ուղիղ համեմատական քանակներով: Պոչանքներ են թափվում միայն թերկորզման հետևանքով պոչանքներ թափվող երկաթաքարերի մեջ մնացած տարրերը:

Այսպիսով, եթե Սվարանցի հանքավայրի շահագործման ընթացքում դրա ընդերքից տարեկան արդյունահանվի 10 մլն տ հանքաքար, ապա լեռնահանքային ձեռնարկությունը հումքով ապահովված կարող է լինել 100 տարի: Այդ դեպքում և օգտակար տարրերի 68%-ով կորզման պարագայում, տարեկան կորզված տարրերի քանակները կարող են կազմել. վանադիումիներ՝ 4760տ, թալիումիներ՝ 17տ, ինդիումիներ՝ 20,4տ, բերիլիումիներ՝ 136տ, տանտալիներ՝ 170տ, նիոբիումիներ՝ 285,6տ, տիտանիներ՝ 61200տ, մագնեզիումիներ՝ 1020000տ, գերմանիումիներ՝ 8,1տ, գալիումիներ՝ 67,3տ, սելենիներ՝ 4,5տ, տելուրիներ՝ 6,73տ, բիսմուտիներ՝ 202տ, հազ-

վազյուտ հողատարրերինը՝ 340տ, երկաթինը՝ 1.360.000տ, և այդ պարագայում լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է կազմել ավելի քան 4,29 մլրդ դոլար: Իսկ, եթե կորզվող երկաթ մետաղի 10%-ը միջազգային շուկա դուրս բերվի գտված վիճակով, ապա ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է մեծանալ 2244 մլն դոլարով և կազմել 6,534 մլրդ դոլար: Սվարանցի հանքավայրն այժմ հետախուզվում է:

Կամաքարի երկաթի հանքաերևակումը գտնվում է Սյունիքի մարզի Մեղրու շրջանում, Մեղրի ավանից 8 կմ հյուսիս-արևելք, Կամաքար լեռան լանջին՝ 2100-2400մ բացարձակ բարձրությունների վրա:

Հանքաերևակման տարածքում ԽՍՀՄ-ի օրոք կատարվել են մանրազնին որոնողական աշխատանքներ, տրվել են մակերեսային փորվածքներ՝ հետախուզառումներ և հետախուզահորեր, դրանցից վերցվել են 480 նմուշներ և ենթարկվել քիմիական անալիզի՝ փաստորեն միայն երկաթ մետաղի պարունակության որոշման գծով:

Երկաթի հանքայնացումը սերտորեն կապված է հիմքային և ուլտրահիմքային ներծին (ինտրուզիվ) ապարների հետ և հսկվում է տեկտոնական խզման գոտիներով, որոնք էլ հենվում են մի կողմից Խուստուփ-Գիրաթաղի, մյուս կողմից Դեբաքլուի հանրահայտ խորը խզվածքների վրա:

Երկաթի հանքայնացումներն ունեն սյունանման և ոսպնյականման մարմինների ձև, հարստացած են մագնետիտ հանքանյութի ցանավոր հանքայնացմամբ և աչքի են ընկնում զառիթափ անկումներով: Որոնողական աշխատանքների արդյունքով հայտնաբերվել են մեկ ոսպնյականման և հինգ սյունաձև հանքային մարմիններ, որոնք ձգվում են 50-60-ից մինչև 380մ երկարությամբ և 8-10-ից մինչև 200մ հզորությամբ: Հիմնական հանքաքարի՝ մագնետիտի, պարունակությունը խիստ փոփոխական է հանքայնացման բոլոր ուղղություններով: Հայտնաբերվել են երկաթաքարի մագնետիտ և հեմատիտ, ինչպես նաև երկաթի և տիտանի իլմենիտ հանքանյութեր, որոնք ունեն նուրբ ցանավոր տարածվածություն՝ 0,05-ից մինչև 1մմ տրամագծով: Վերցված 480 նմուշների անալիզների տվյալներով երկաթի պարունակությունը տատանվում է 15-ից մինչև 48%-ի սահմաններում, որոնց միջին պարունակությունը բավականին բարձր է և կազմում է 34%:

Երկրաֆիզիկական և մակերեսային քարտեզագրական աշխատանքների տվյալներով երկաթաքարերի P₂ կատեգորիայի ռեսուրսները երկրաբանների կողմից գնահատվում են մեկ մլրդ տոննա, որոնցում երկաթ մետաղինը՝ 340 մլն տ: P₂ կատեգորիայի ռեսուրսների սահմանագծում երկրաբաններն անջատել են P₁ կատեգորիայի ռեսուրսներ 300 մլն տ հանքաքարերի և 102 մլն տ երկաթ մետաղի քանակներով: Սակայն նշենք, որ նշված մանրազնին որոնողական աշխատանքների արդյունքով հանքաերևակման ամբողջ մեկ մլրդ տ ռեսուրսները պետք է որակվեն P₁ կատեգորիայով:

Կամաքարի հանքաերևակման հանքանյութերը երկրաքիմիական անալիզի չեն ենթարկվել և երկաթի հետ հարակից տարրերի պարունակություններ չեն որոշվել: Մի բան ստույգ հայտնի է. հանքաերևակման հանքանյութերի թվում բավականին մեծ տարածում ունի նաև երկաթ-տիտան պարունակող իլմենիտ հանքանյութը: Սա ծանոթության կարգով: Միևնույն ժամանակ. երկրաբանական կազմության և ծագումնաբանական առումով Կամաքարի հանքաերևակումը շատ նման է Սվարանցի հանքավայրին, և այստեղ ևս սպասվում են այն բոլոր հարակից տարածված տարրերը, որոնք առկա են Սվարանցի հանքավայրում: Բայց, քանի որ մենք չունենք և ոչ մի անալիզի տվյալ, չենք կարող և չենք էլ գնահատում Կամաքարի հանքաերևակման, երկաթի հետ հարակից տարածված տարրերի արժեքը: Չենք գնահատում նույնիսկ տիտան մետաղի արժեքը, քանի որ այդ մետաղի կամ նույնիսկ դրա

հանքանյութի պարունակության տվյալներ չունենք: Մի բան պարզ է, որ տիտանի պարունակությունը Կամաքարի հանքաերևակման տարածքում շատ ավելի բարձր պետք է լինի, քան Սվարանցի հանքավայրում:

Կամաքարի հանքաերևակման ընդերքում պարփակված երկաթ մետաղի արժեքը կազմում է 102 մլրդ դոլար: Եթե հանքաերևակման հետախուզման ժամանակ հաստատվեն դրա «պաշարները» և «հանքավայրը» շահագործվի՝ տարեկան արդյունահանելով և մշակելով 10 մլն տ հանքաքար, ապա լեռնահանքային ձեռնարկությունը պաշարներով ապահովված կարող է լինել 100 տարի և տարեկան հնարավոր կլինի ստանալ 2 մլն 720 հազ.տ երկաթ (կորզումն ընդունված է 80%-ով), և լեռնամետալուրգիական ձեռնարկության ստացած հատույթը կարող է կազմել 816 մլն դոլար: Եթե լեռնամետալուրգիական ձեռնարկությունը իր տարեկան արտադրանքի 10%-ը միջազգային շուկա դուրս բերի գտված վիճակով, ապա ձեռնարկության տարեկան ստացվող հատույթը կարող է մեծանալ 4488 մլն դոլարով և կազմել 5 մլրդ 304 մլն դոլար:

Այստեղ նկարագրվել են երկաթի 4 հանքավայրեր՝ Հրազդանի, Աբովյանի, Բագումի և Սվարանցի, որոնցից երկուսը՝ Հրազդանի և Աբովյանի հանքավայրերը հետախուզված են մանրազնին և ունեն Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված արդյունաբերական պաշարներ, մյուս երկուսը՝ Բագումի և Սվարանցի հանքավայրերը, հետախուզված են նախնական հետախուզական փուլով, որոնցում կատարված են որոշակի քանակի պաշարների հեղինակային գնահատում (հաշվարկ): Նկարագրված են նաև երկաթի 2 հանքաերևակում՝ Թթուջուր-Մարտունի և Կամաքարի, որոնցում գնահատված են դրանց կանխատեսումային ռեսուրսները:

Ինչպես արդեն գրվել է, Հրազդանի հանքավայրը տեղադրված է Հրազդան քաղաքի անմիջական հարևանությամբ, նրա արևելյան ծայրամասում, որտեղ կառուցվել են և այժմ էլ կառուցվում են բնակելի տներ: Այդ հանքավայրն ամենափոքրն է նկարագրված 6-ից, և մենք խորհուրդ չենք տալիս սկսել դրա շահագործումը: Բագումի հանքավայրը տեղադրված է Վանաձոր քաղաքի մոտակայքում, անտառապատ լեռնալանջերով գեղատեսիլ վայրում և դրա շահագործումը բնապահպանական առումով նպատակահարմար չենք համարում: Երկու ամենախոշոր հանքաերևակումները՝ Թթուջուր-Մարտունի և Կամաքարի, դեռևս հետախուզված չեն և չունեն Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված պաշարներ: Այդ հանքաերևակումներում խորհուրդ ենք տալիս կատարել մանրազնին հետախուզական աշխատանքներ, Պաշարների պետական հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել դրանց պաշարները և վերջիններս պահարկել ապագայի համար:

Շահագործման ենք առաջարկում Աբովյանի և Սվարանցի հանքավայրերը, որոնց այժմյան շահագործումը և հանքաքարերի մետալուրգիական փուլով վերամշակումը ծայրաստիճանի անհրաժեշտություն է Հայաստանի Հանրապետության համար թե՛ տնտեսական, և թե՛ ռազմավարական առումով:

Սև մետալուրգիայի զարգացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում բավականին մեծ են: Հայաստանում առկա են ոչ միայն նշված 6 հանքավայր-հանքաերևակումները, այլև մոտ 100-ի հասնող այլ հանքաերևակումներ, որոնց մի մասը՝ եթե ոչ կեսը, ապա գոնե մեկ տասներորդ մասը, կարող է դառնալ հանքավայր և համարել մեր հանրապետության երկաթ մետաղի պաշարները: Միայն հետախուզման և շահագործման առաջարկվող 4՝ Աբովյանի, Սվարանցի, Թթուջուր-Մարտունու և Կամաքարի հանքավայր-հանքաերևակումների հանքաքարերի ռեսուրսները կազմում են 3,52 մլրդ տ, իսկ երկաթ մետաղինը՝ 1,11 մլրդ տ:

Աբովյանի և Սվարանցի հանքավայրերի շահագործման աշխատանքներն առաջարկվում է կատարել գուգահեռաբար, իսկ նշված երկու՝ Թթուջուր-Մարտունու և Կամաքարի հանքերևակումների՝ աստիճանաբար, Սվարանցի հանքավայրի պաշարների սպառումից հետո: Այդպես շահագործելու պարագայում լեռնահանքային և մետալուրգիական ձեռնարկությունները կարող են գործել առնվազն 300 տարի:

Առայժմ առաջարկվում է կառուցել միայն մեկ մետալուրգիական գործարան, այն էլ Սյունիքի մարզի Գորիսի շրջանի Շինուհայր նախկին բանվորական ավանի տարածքում (չհասած Սվարանցի հանքավայր մոտ 13 կմ): Այդ տարածքով է անցնում Երևան-Գորիս-Կապան, Մեղրի-Իրան ավտոմայրուղին, այդ տարածքով է անցնելու Իրան-Հայաստան նախագծվող երկաթուղին, այդ տարածքում է գործում Սիսիան-Գորիս հիդրոէլեկտրակայանների Որոտանի կասկադը, այդ տարածքով է անցնում Իրան-Հայաստան մագիստրալ գազատարը, որոնք էլ ապագա մետալուրգիական գործարանին կարող են ապահովել վառելիքով, էլեկտրաէներգիայով, արտադրանքների փոխադրման տրանսպորտով ու ճանապարհներով: Սվարանցի հանքավայրի տարածքում, Սվարանց գյուղի մոտակայքում առաջարկվում է կառուցել երկաթի հանքաքարերի հարստացման ֆաբրիկա, որի կողմից թողարկված խտանյութերը մետալուրգիական փուլով վերամշակման համար պետք է փոխադրվեն Շինուհայրի մետալուրգիական գործարան:

Աբովյանի հանքավայրի շահագործման պարագայում առաջարկվում է թողարկել երկաթի և ապատիտի խտանյութեր, որոնք էլ մետալուրգիական փուլով վերամշակելու և բոլոր օգտակար տարրերը կորզելու համար պետք է ուղարկվեն Շինուհայրի մետալուրգիական գործարան:

Համոզված ենք, որ մինչ մետալուրգիական գործարանի նախագծման և կառուցման աշխատանքների ավարտը, մինչ հանքավայրերի շահագործական աշխատանքների սկիզբը Իրան-Հայաստան երկաթուղին արդեն իսկ կառուցված կլինի:

Մետալուրգիական գործարանը պետք է կառուցվի առաջավոր երկրների տեխնիկայի և տեխնոլոգիաների ժամանակակից նվաճումները, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիայի մշակումները հաշվի առնելով, այնպես, որ երկաթի հանքաքարերից (խտանյութերից) բարձր տոկոսներով կորզվեն բոլոր, կամ հնարավորինս մեծ թվով օգտակար տարրեր, ինչպես նաև հնարավորություն ընձեռվի կորզված տարրերի որոշակի մասը (ըստ պահանջարկի) գտելու և գերգտելու համար: Նորից նշենք, որ գտված ու գերգտված տարրերի արժեքը տասնապատիկ ու հարյուրապատիկ գերազանցում է իրենց իսկ սովորական տեսակների արժեքը:

Եթե, ինչպես նշել ենք, Աբովյանի հանքավայրի ընդերքից տարեկան արդյունահանվի և մշակվի 5 մլն տ հանքաքար, ապա կատարվի 1625 հազ.տ խտանյութ, որի մեջ կլինեն. ցերիում՝ 78741տ, լանտան՝ 15748տ, իտրիում՝ 1968տ, արծաթ՝ 19,4տ, գալիում՝ 11,81տ, լիթիում՝ 11,81տ, երկաթ՝ 1068,5 հազ.տ:

Սվարանցի հանքավայրի շահագործման պարագայում, տարեկան 10 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու դեպքում կարող է ստացվել 3300 հազ.տ խտանյութ, որի մեջ կլինեն. վանադիում՝ 4760տ, թալիում՝ 17տ, ինդիում՝ 20,4տ, բերիլիում՝ 136տ, տանտալ՝ 170տ, նիոբիում՝ 285,6տ, տիտան՝ 61200տ, մագնեզիում՝ 1020 հազ.տ, գերմանիում՝ 8,1տ, գալիում՝ 67,3տ, սելեն՝ 4,5տ, տելուր՝ 6,73տ, բիսմութ՝ 202տ, հազվագյուտ հողատարրեր՝ 340տ, երկաթ՝ 1360 հազ. տ:

Այսպիսով, Շինուհայրի մետալուրգիական գործարան կուղարկվեն տարեկան 4 մլն 925 հազ.տ խտանյութեր, որոնց մեջ կլինեն. ցերիում՝ 78741տ, լանտան՝ 15748տ, իտրիում՝ 1968տ,

արծաթ՝ 19,4տ, գալիում՝ 79,11տ, լիթիում՝ 11,8տ, վանադիում՝ 4760տ, ֆալիում՝ 17տ, ինդիում՝ 20,4տ, բերիլիում՝ 136տ, տանտալ՝ 170տ, նիոբիում՝ 285,6տ, տիտան՝ 61200տ, մագնեզիում՝ 1020 հազ.տ, գերմանիում՝ 8,1տ, սելեն՝ 4,5տ, տելուր 6,73տ, քիսմուտ՝ 202տ, հազվագյուտ հողատարրեր՝ 340տ, երկաթ՝ 2.428.500տ:

Եթե մետալուրգիական փուլով վերամշակման պարագայում երկաթ հիմնական մետաղը կորզվի 98%-ով, իսկ երկաթի հետ հարակից տարածված տարրերը՝ 90%-ով, ապա մետալուրգիական փուլից հետո ստացված մետաղների և ոչ մետաղային օգտակար տարրերի քանակները կլինեն. ցերիումինը՝ 70867տ, լանտանինը՝ 14173տ, իտրիումինը՝ 1771տ, արծաթինը՝ 17,5տ, գալիումինը՝ 71,2տ, լիթիումինը՝ 10,63տ, վանադիումինը՝ 4284տ, ֆալիումինը՝ 15,3տ, ինդիումինը՝ 18,4տ, բերիլիումինը՝ 122,4տ, տանտալինը՝ 153տ, նիոբիումինը՝ 257տ, տիտանինը՝ 55080տ, մագնեզիումինը՝ 918000 հազ.տ, գերմանիումինը՝ 7,3տ, սելենինը՝ 4տ, տելուրինը՝ 6,1տ, քիսմուտինը՝ 181,8տ, հազվագյուտ հողատարրեր՝ 306տ, երկաթինը՝ 2.379.930տ: Այս պարագայում լեռնահանքային և մետալուրգիական ձեռնարկությունների ստացած տարեկան հասույթը կարող է կազմել 7 մլրդ 159 մլն դոլար (տե՛ս, աղյուսակ 6-ը): Եթե կորզվող 2.379.930տ երկաթ մետաղի գոնե 10%-ը՝ 237993տ, միջազգային շուկա դուրս բերվի գտված ու մաքրված վիճակով, ապա լեռնամետալուրգիական ձեռնարկության տարեկան ստացած հասույթը կարող է աճել 3 մլրդ 927 մլն դոլարով և կազմել 11 մլրդ 086 մլն դոլար:

Նշենք, որ Հայաստանը, ինչպես ԽՍՀՄ-ի օրոք, այնպես էլ այժմ, տարեկան ներկրում է սև մետալուրգիայի մեկ մլն տոննայից ավելի արտադրանքներ, որոնց համար միայն որպես փոխադրական ծախսեր վճարում է միլիոնավոր դոլարներ: Սև մետալուրգիան Հայաստանում զարգացնելու պարագայում ոչ միայն կարող ենք բավարարել մեր սեփական պահանջները, այլև մեծաքանակ արտադրանքներ ու մետաղներ արտահանել հարևան երկրներ և Հայաստան բերել միլիարդավոր դոլարների հասնող հասույթ:

Վերոնշյալից ելնելով առաջարկվում է.

հենց այժմ, առանց հապաղելու ձեռնարկել ՀՀ երկաթի առաջնահերթ շահագործման առաջարկվող երկու հանքավայրերի՝ Աբովյանի և Սվարանցի, հանքաքարերի հարստացման և ապա մետալուրգիական փուլով վերամշակման տեխնոլոգիական հետազոտություններ: Հետազոտություններն անհրաժեշտ է կատարել հաշվի առնելով բոլոր օգտակար տարրերի կորզումները՝ ինչպես հանքահարստացման, այնպես էլ մետալուրգիական փուլերով բարձր տոկոսներով, այնպես, որ միջավայր թափվող հարստապոչերը լինեն միանգամայն մաքուր և անվտանգ: Այդ աշխատանքների մեջ պետք է ներգրավել ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիան, որը բավականին մեծ փորձառություն ունի նշված գործերում և շատ օգտակար կարող է լինել ՀՀ սև մետալուրգիայի զարգացման գործում: Այդ աշխատանքների բարեհաջող ավարտից հետո անհրաժեշտ է ձեռնարկել լեռնահանքային և մետալուրգիական ձեռնարկությունների նախագծման աշխատանքներ և անցնել ձեռնարկությունների կառուցմանը: Որքան շուտ կառուցվի և գործի սև մետալուրգիայի հայկական ձեռնարկությունը, այնքան հարուստ և ռազմավարական առումով անվտանգ կարող է լինել մեր երկիրը: Կունենանք նաև հազարավոր նոր աշխատատեղեր:

Հրագրանի և Աբովյանի հետախուզված հանքավայրերի արժեքավոր ու հեշտ հարստացվող հանքաքարերի վերաբերյալ կատարվել են գիտահետազոտական և փորձարտադրական աշխատանքներ տեխնիկատնտեսական զեկուցագրի և հիմնավորումների կազմումով՝ պարզելու հանրապետությունում մաքուր երկաթի և դրա հենքի վրա հատուկ տեսակի պողպատների և ճշգրիտ համահավաքների արտադրության հնարավորությունը:

Սև մետալուրգիայի լեռնահանքային ձեռնարկությունների և մետալուրգիական գործարանի տարեկան համատեղ ստացած հասույթի հաշվարկը

| Տարրերը | Տարրերի քանակի միավորը | Տարրերի քանակը | Տարրերի միավորի արժեքը, դոլ. | Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ. |
|-----------------------------|------------------------|----------------|------------------------------|---------------------------------------|
| Ցերիում | տ | 70867 | 64.000 | 4.535.488.000 |
| Լանտան | տ | 14173 | 40.000 | 566.920.000 |
| Իտրիում | տ | 1771 | 69.000 | 122.199.000 |
| Գալիում | տ | 71,2 | 460.000 | 32.752.000 |
| Լիթիում | տ | 10,63 | 7000 | 74.410 |
| Վանադիում | տ | 4284 | 40.000 | 171.360.000 |
| Թալիում | տ | 15,3 | 1.300.000 | 19.890.000 |
| Ինդիում | տ | 18,4 | 680.000 | 12.512.000 |
| Բերիլիում | տ | 122,4 | 900.000 | 110.160.000 |
| Տանտալ | տ | 153 | 200.000 | 30.600.000 |
| Նիոբիում | տ | 257 | 193.400 | 49.703.800 |
| Տիտան | տ | 55080 | 18.000 | 991.440.000 |
| Մագնեզիում | տ | 218000 | 2250 | 490.500.000 |
| Գերմանիում | տ | 7,3 | 950.000 | 6.935.000 |
| Սելեն | տ | 4,0 | 52.220. | 208.880 |
| Տելուր | տ | 6,06 | 118.000 | 715.080 |
| Բիսմուտ | տ | 181,8 | 24.440 | 4.443.192 |
| Հազվագյուտ հողեր | տ | 306 | 9430 | 2.885.580 |
| Արծաթ | տ | 17,5 | 450.000 | 7.875.000 |
| Երկաթ | տ | 2379930 | 300 | 713.979.000 |
| Ընդամենը | | | | 7.159.041.872 |
| այդ թվում հարակից տարրերինը | | | | 6.445.062.872 |

Ծանոթություն. Չնայած հանքաքարերում երկաթի ցածր պարունակությանը (20-34%), Հայաստանի Հանրապետության երկաթի հանքաքարերի համար բնութագրական է վնասակար խառնուրդների ցածր պարունակությունը և արժեքավոր հազվագյուտ մետաղների ու հազվագյուտ հողատարրերի առկայությունը (ցերիումի և իտրիումի խմբերի հողատարրեր, ինչպես նաև գերմանիում, գալիում, թալիում, նիոբիում, տանտալ, ցիրկոնիում, ցրված և հազվագյուտ տարրեր), որոնք մետաղին տալիս են բնականից լեգիրված հատկություն:

Յու.Աղաբալյանի (1991) կողմից Հրազդանի փոքր հանքավայրի օրինակով կատարված տեխնիկատնտեսական հիմնավորմամբ հաստատվել է, որ մեկ տոննա մաքուր երկաթից ստացած տեսակարար շահույթը կազմում է գնի 56,5%:

2010թ. հունվարին ռուսական լրատվամիջոցներից հայտնի դարձավ, որ Ռուսաստանի Դաշնության Լիպեցկ քաղաքի սև մետալուրգիայի գործարանը վերանորոգվել և վերակահավորվել է նորագույն տեխնիկայով և տեխնոլոգիաներով, որոնք, ինչպես հայտարարեցին ռուսական հեռուստաալիքներով, այժմ լավագույնն են աշխարհում: Հաշվի առնելով այս հանգամանքը, մենք գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում կառուցվելիք մետալուրգիական գործարանն անհրաժեշտ է կահավորել նմանատիպ տեխնիկայով և տեխնոլոգիաներով:

Օգտագործելով Ռուսաստանի Դաշնության դեկլարության բարյացակամ տրամադրվածությունը Հայաստանի Հանրապետության հանդեպ, անհրաժեշտ է մեր գործարանի կառուցման գործում ներգրավել Լիպեցկի լավագույն մասնագետներին և Հայաստան բերել Ռուսաստանի Դաշնությունում արտադրված այդ նորագույն տեխնիկան և մշակված տեխնոլոգիաները: Սակայն պետք է նշենք, որ Լիպեցկ քաղաքի «Սվոբոդնի սոկոլ» կոչվող մետալուրգիական կոմբինատը թողարկում է միայն 4 տեսակի արտադրանք՝ ձուլածո թուջ, ձևափոխելի թուջ, նոդուլյարային թուջ և «Սինտիկ» կոչվող՝ թուջի և երկաթի օքսիդների խառնուրդ (շիխտա), որն էլ այլ ձեռնարկություններում օգտագործվում է բարձրորակ պողպատ ձուլելու համար:

«Սվոբոդնի սոկոլ» կոմբինատը, որքանով տեղեկացանք ինտերնետ կապի օգնությամբ, երկաթաքարի խտանյութերի վերամշակման ժամանակ նշված արտադրանքներից բացի այլ արտադրանքներ չի թողարկում: Դա նշանակում է, որ երկաթաքարի մեջ պարունակվող երկաթից բացի այլ տարրեր (երկաթի հետ հարակից տարածված) չեն կորզվում: Մեզ այդպիսի մետալուրգիական գործարան չէ որ պետք է. մեզ պետք է գործարան, որը կարողանա երկաթաքարերից կորզել և՛ երկաթը, և՛ երկաթի հետ զուգակցվող՝ հարակից տարածված, շատ թանկարժեք ու շատ կարևոր տարրերը ևս: Դրա համար էլ անհրաժեշտ է օգտագործելով «Սվոբոդնի սոկոլ» կոմբինատի փորձը, տեխնիկան և տեխնոլոգիաները, չբավարարվել դրանով, դրան ավելացնել մերը, նորագույնը, հայրենականը, այսինքն՝ մշակել ու ներդնել երկաթաքարերի մեջ պարունակվող հարակից տարրերի բարձր տոկոսներով կորզման տեխնոլոգիա, որն էլ մեր սև մետալուրգիայի արդյունաբերությունը կարող է դարձնել տասնապատիկ ավելի արդյունավետ:

ՀՐԱԶԻԿ ԱՎԱԳՅԱՆ

*ՆՇ ԳՍԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, երկր. հանք. գիտ. դոկտոր*

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

«Մի «հիանալի» ակնթարթ կարող է առաջանալ «բնապահպանական շղթայական ռեակցիա» և կփոփոխվի ողջ բիոմիջավայրը: Ե՞րբ այդպիսին կառաջանա՝ գիտությունը կանխատեսել չի կարողանում: Բնապահպաններն ասում են՝ դա կարող է տեղի ունենալ ցանկացած ժամանակ. ամեն ինչ արդեն հասունացել է:

Աշխարհն այսօր ապրում է մեր կյանքի պատմության մեջ նմանը չունեցող՝ անընդհատ ուժգնացող գլոբալ էկոլոգիական ճգնաժամի պայմաններում, որի բաղկացուցիչ մասն են կազմում մոլորակի չվերականգնվող ռեսուրսների սպառումը, կլիմայի փոփոխությունը, որն առաջանում է արդյունաբերական արտանետումների ազդեցությամբ, կենդանի օրգանիզմի մահացությունը, բույսերի և կենդանիների զարգացման և տեսակների թվի ու դրանց կյանքի տևողության կրճատման, մարդու՝ որպես բիոլոգիական տեսակի այլասերումը, նրա ֆիզիկական ու մտավոր կարողությունների դեգրադացիան»¹: Այս ամենը Լյուդմիլա Ֆիոնովան գրում է վերացական և համընդհանուր տեսակետով, առանց կոնկրետ օրինակների: Մենք

¹ Людмила Фионова – Фининтерн – машина по уничтожению человечества. Деловой экспресс, №21, июнь, 2009.

ցանկանում ենք այդ ամենին տալ ավելի կոնկրետ բնույթ, շաղկապված մեր տարածաշրջանի, մեր բնակավայրի և բնական միջավայրի հետ:

Եվ այսպես՝ Սյունիքի մարզի տարածքում են շահագործվում մեր հանրապետության պղնձամոլիբդենային և ոսկի-բազմամետաղային խոշորագույն հանքավայրերից մի քանիսը: Դրանցից են Քաջարանի և Ագարակի պղնձամոլիբդենային և Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը, որոնց շահագործման արդյունքով բնական միջավայրին հասցվում են այնպիսի սարսափելի վնասներ, որի մասին մտածելիս մարդու մարմնով սարսուռ է անցնում:

Այդ հանքավայրերի շահագործման և հանքահարստացման գործընթացներում օգտակար տարրերի (օգտակար են, եթե դրանք կորզվում ու օգտագործման մեջ են ներդրվում, բայց խիստ վնասակար են, երբ դրանք հանքահարստացման թափոնների՝ հարստապոչերի հետ թափվում են շրջակա միջավայր) թերկորզման, իսկ որոշակի հանքանյութերի չկորզման հետևանքով յուրաքանչյուր տարի շրջակա միջավայր են թափվում միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր տոննաների հարստապոչեր, որոնց հետ էլ հազարավոր ու տասնյակ հազարավոր տոննաներով ծանր մետաղներ ու թունավոր տարրեր:

Բերենք կոնկրետ օրինակներ.

- Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրը Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից շահագործվում է 1951 թվականից (ավելի, քան 58 տարի): Չանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից թողարկվում էին և այժմ էլ թողարկվում են կիսաարտադրանքներ՝ պղնձի և մոլիբդենի խտանյութեր, որոնք ԽՍՀՄ-ի օրոք վերամշակվում էին ԽՍՀՄ-ի տարածքում. պղնձի խտանյութերը՝ Ալավերդու մետալուրգիական կոմբինատում, իսկ մոլիբդենինը՝ Ռուսաստանի Չելյաբինսկ և Օրջոնիկիձե (այժմ Վլադիկավկազ) քաղաքներում: Այժմ այդ խտանյութերը մեծամասամբ վաճառվում են արտասահմանյան երկրներին:

Ինչպես ԽՍՀՄ-ի օրոք, այնպես էլ այժմ, և շատ ավելի վատ այժմ, օգտակար տարրերը հանքաքարերից խտանյութերի մեջ են կորզվում շատ ցածր տոկոսներով: Ճշմարտացի լինելու համար բերենք մի քանի օրինակ.

- 1988-1990թթ. թողարկված պղնձի խտանյութում պղինձ մետաղի միջին պարունակությունը կազմել է 17,9%, իսկ պղնձի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ՝ 72,5%, մոլիբդենի խտանյութերում մոլիբդեն մետաղի միջին պարունակությունը կազմել է 51,41%, իսկ մոլիբդենի կորզումը՝ 81,4%,
- 1998-2000թթ. թողարկված պղնձի խտանյութերում պղինձ մետաղի միջին պարունակությունը կազմել է 24%, իսկ պղնձի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ՝ 60,85%, մոլիբդենի խտանյութերում մոլիբդեն մետաղի միջին պարունակությունը կազմել է 50,79%, իսկ մոլիբդենի կորզումը՝ 72,89%:

Նշենք, որ Քաջարանի հանքավայրում հիմնական (քանակական մեծամասնություն կազմող) հանքանյութեր են համարվում պղնձի խալկոպիրիտը, մոլիբդենի մոլիբդենիտը և ծծմբի հրաքար պիրիտը, ընդ որում պիրիտ հանքանյութի, որը, ի դեպ, բոլորովին չի կորզվում և ամբողջությամբ պոչամբար է թափվում, քանակը շատ ավելին է, քան պղնձի խալկոպիրիտինը:

Նշված հիմնական տարրերի հետ զուգակցված (սերտորեն կապված) են մի քանի շատ կարևոր և շատ էլ արժեքավոր տարրեր՝ ռենիում, սելեն, տելուր, բիսմութ, ոսկի, արծաթ, պլատին, պալադիում և այլն: Առանձին հանքանյութերի տեսքով Քաջարանի հանքաքարերում հայտնաբերված են նաև կապարի, ցինկի, կոբալտի, նիկելի, մկնդեղի, երկաթի, տիտանի, վանադիումի և սկանդիումի հանքայնացումներ, որոնցից մի քանիսի (կապարի, ցինկի,

մկնդեղի) հանքանյութերը հանքահարստացման գործընթացներում, հիմնական օգտակար տարրերին ուղիղ համեմատական քանակներով, անցնում են խտանյութերի մեջ, իսկ մյուս մասը, ինչպես և հիմնական տարրերինը, չկորզվող հանքանյութերի և օգտակար տարրերի (մագնետիտի, երկաթի, տիտանի, վանադիումի, սկանդիումի, պիրիտի հանքանյութի) հետ միասին թափվում են պոչամբարներ և թունավորում շրջակա միջավայրը: Նշենք, որ սելենը, տելուրը, մկնդեղը, կադմիումը և սնդիկը, որոնք Քաջարանի հանքաքարերում հանդիպում են հազվադեպ, շատ քիչ քանակությամբ, բայց այնուամենայնիվ, նշված մյուս տարրերի հետ համահավասար, թունավոր են և դրանք բոլորն էլ խիստ վտանգավոր են բուսական և կենդանական աշխարհի համար (նշված տարրերը թունավոր են նույնիսկ իրենց միացությունների՝ հանքանյութերի տեսքով):

Բերված երկու օրինակներից պարզ երևում է, որ յուրաքանչյուր տարի, օգտակար տարրերի թերկորզման հետևանքով բնական միջավայր են թափվում ծանր մետաղների թունավոր տարրեր, բոլորն էլ խիստ վտանգավոր՝ 18,6-ից մինչև 39,15%-ը, որոնց կշռային քանակները կազմում են հարյուրավոր ու հազարավոր տոննաներ (հիմնավորենք):

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածում (1951 թվից մինչև 2009թ.) դրա ընդերքից արդյունահանվել և մշակվել է 318,2 մլն տ հանքաքար, որի մեջ պարունակվող օգտակար տարրերի քանակները կազմել են.

- պղնձինը՝ 707358,6 տ, մոլիբդենինը՝ 118688,6տ, ռենիումինը՝ 50,91տ (որից 5,36տ պիրիտ հանքանյութի մեջ), ոսկունը՝ 8909,6 կգ, արծաթինը՝ 496,392տ, սելենինը՝ 515,484տ, տելուրինը՝ 429,57տ, քիսմուտինը՝ 496,392տ, նիկելինը՝ 532,985տ, կոբալտինը՝ 199,83տ, կապարինը՝ 9227,8տ, ցինկինը՝ 8177,74տ: Նշված տարրերից հանքահարստացման գործընթացներում թերկորզման հետևանքով պոչամբարներ թափված քանակները կազմել են.
- պղնձինը՝ 222747տ, մոլիբդենինը՝ 26194,6տ, ռենիումինը՝ 23,995տ (որից 5,36տ պիրիտ հանքանյութի հետ), սելենինը՝ 430տ (որից 282,1տ պիրիտ հանքանյութի հետ), տելուրինը՝ 313,78տ (որից 275տ պիրիտ հանքանյութի հետ), քիսմուտինը՝ 296,44տ (որից 225տ պիրիտ հանքանյութի հետ), ոսկունը՝ 2805,6կգ, արծաթինը՝ 306,3տ (որից 150տ պիրիտ հանքանյութի հետ), նիկելինը՝ 117,63տ, կոբալտինը՝ 44,1տ, կապարինը՝ 290,8տ, ցինկինը՝ 2575,2տ:

Պոչամբարներ թափված պիրիտ հանքանյութի քանակն արդյունահանված 318,2 մլն տ հանքաքարերում կազմել է 3571.159տ, որի հետ կապված ծծումբ տարրի քանակը կազմել է 1.908.780տ, իսկ երկաթ մետաղինը՝ 1.662.379տ: Պիրիտ հանքանյութի հետ պոչամբար են թափվել նաև վերը նշված քանակներով ռենիում, սելեն, տելուր, քիսմուտ, արծաթ (հավանաբար նաև ոսկի, պլատին և պալադիում, որոնց գծով անալիզներ չեն կատարվել, բայց երկրաբանական գիտությանը հայտնի է, որ պիրիտի հետ դրանք հանդիպում են համարյա մշտապես, հատկապես պղնձամոլիբդենային, բազմամետաղային, ոսկի-բազմամետաղային կազմավորման հանքավայրերում): Քաջարանի հանքավայրի առանձին տեղամասերում, աչքով տեսանելի քանակներով, հայտնաբերված են նաև մկնդեղի արսենոպիրիտ և ծարիրի անտիմոնիտ սուլֆիդային հանքանյութերը, որոնց քանակները շատ քիչ են և տարածված են ոչ ամենուրեք, բայց, այնուամենայնիվ, դրանք առկա են: Պոչամբարները, որոնք իրենցից ներկայացնում են փշրված, մանրացված, հանքահարստացման նպատակով քիմիկատներով մշակված, օգտակար (վնասակար, քանի որ դրանք չեն կորզվել) տարրերով ու ծանր մետաղներով առլեցուն հանքաքարերի կուտակներ, լցված են Սյունիքի մարզի (Կապանի շրջանի) բնակավայրերի շրջակայքի ձորերն ու ձորակները: Մթնոլորտային տեղումների, գրունտային

ջրերի, քամիների, ընտանի և վայրի կենդանիների ու թռչունների շարժման հետ այդ ծանր մետաղների և թունավոր տարրերի նրբահատիկ փոշիներն ու տարրալուծված նյութերը տարածվելով դեպի շրջակա միջավայր թունավորում են օդը, ջուրը, հողը և, վերջին հաշվով, ընտանի և վայրի կենդանիներին ու մարդկանց:

ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների» կենտրոնի տնօրեն Ա.Սաղաթելյանի հաղորդման համաձայն (Panorama.am.) «Կապան քաղաքի տարածքում փոշու մեջ հայտնաբերվել են հիպերտոքսիկանտներ (մասնագետները դրանց աղբյուրը գտել են պոչամբարներում): Հայտնաբերվել են սնդիկ և կադմիում, որոնք ծանր մետաղներից ամենավտանգավորներն են համարվում»:

Ա.Սաղաթելյանը գրում է՝ «Ուսումնասիրության ենթարկելով քաղաքի տարբեր պոչամբարներում արածող կովերի կաթի բաղադրությունը, մասնագետները պարզել են, որ այնտեղ առկա է սնդիկի, կադմիումի, մկնդեղի, իսկ հիմնական մայրուղուն հարակից տարածքում արածող կովերի կաթում նաև կապարի մնացուկներ: Հետազոտվել են նաև Քաջարանի 12 և հարակից Լեռնաձոր գյուղի 5 երեխայի առողջական վիճակը: Քաջարանի երեխաների 70%-ի մոտ մազերում սկնդեղի գերխտություն է հայտնաբերվել, բոլորի մոտ կա կադմիումի, նիկելի, պղնձի գերազանցություններ, իսկ 4 երեխայի մոտ՝ սնդիկի գերխտություն: Քաջարանի քաղաքապետարանն իր միջոցներով այդ երեխաներին բուժման է ուղարկել և պարզվել է, որ նրանց մոտ առողջական լուրջ խնդիրներ կան: Այդ քաղաքում կարելի է անգեմ աչքով նկատել անեմիա հիվանդությունը: Առավել վատ վիճակ մասնագետները գրանցել են Սյունիքի գյուղական համայնքներում, որտեղ որևէ մաքուր սննդամթերք չի աճում, յուրաքանչյուրում առկա են տարբեր մետաղների գերնորմատիվային ցուցանիշներ»:

Այդ ամենին էլ ավելանում են Քաջարանի հանքաքարերում առկա ռադիոակտիվ տարրերը (ուրանի հանքայնացումները), որոնց մասին քաջատեղյակ են այդ հանքավայրը հետախուզող երկրաբանները, բայց բոլորովին գաղափար անգամ չունեն ինչպես Քաջարան քաղաքի, այնպես էլ շրջակա գյուղերի բնակիչները: Ռադիոակտիվ տարրերից առավել մեծ վտանգների են ենթարկվում պոչամբարներին մոտ գտնվող գյուղերի բնակիչները:

Հանրահայտ է, որ Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանված հանքաքարերը հանքահարստացման ենթարկելուց առաջ փշրվում ու մանրացվում են, որի ընթացքում էլ բացվում ու մերկացվում են երկրի ընդերքում՝ հոծ քարաբեկորների մեջ խորը թաղված հանքանյութերը, այդ թվում նաև ուրանի հանքայնացումները: Վերջիններս մի քանի այլ հանքանյութերի (երկաթի մագնետիտի, վանադիումի, սկանդիումի և այլ տարրերի հանքանյութերի) հետ շրջանցելով խտանյութերն անցնում են պոչամբարների մեջ և թափվում պոչամբարներ՝ շրջապատ սփռելով իրենց մահաբեր վտանգը: Ճիշտ է, ուրանի հանքայնացման պարունակությունը Քաջարանի հանքաքարերում շատ փոքր է, բայց և այնպես դա ռադիոակտիվ հանքայնացում է և շատ ու շատ վտանգավոր մոտակայքում գտնվող մարդկանց ու կենդանիների համար: Այն էլ նշենք, որ դրանք մթնոլորտային տեղումների ազդեցության ներքո դանդաղորեն տարրալուծվելով կարող են անցնել գրունտային ջրերի և պոչամբարներից ցած գտնվող բուսականության մեջ և վերջիններից էլ մարդկանց ու կենդանիների օրգանիզմ: Դրանից հետո թե ինչ տեղի կունենա՝ դժվար չէ կռահել:

Պոչամբարները վտանգավոր են ոչ միայն ծանր մետաղներով ու թունավոր տարրերով, այլ նաև թունավոր գազերով, որոնք առաջանում են պոչամբարներում բնական քիմիական ճանապարհով և գոյատևում են այնքան ժամանակ, քանի դեռ գոյատևում են պոչամբարները, իսկ վերջիններս գոյատևում են և գոյատևելու են հազարավոր տարիներ: Պոչամբարներում առկա սուլֆիդային հանքանյութերի տարրալուծման հետևանքով գոյանում է ծծմբաթթու, որն

էլ ազդելով մկնդեղի և ծարիրի հանքանյութերի վրա, դրանց հետ մտնելով քիմիական ռեակցիայի մեջ, առաջացնում է արսին (AsH_3) և ստիբին (SbH_3) խիստ թունավոր գազերը, որոնց առաջացման ռեակցիաները արտահայտվում են հետևյալ կերպ.

1. բնական ճանապարհով ծծմբաթթվի առաջացման ռեակցիան՝
 $FeS_2(\text{պիրիտ})+2H_2O+3O_2=2H_2SO_4+Fe,$
2. արսին գազի բնական ճանապարհով առաջացման ռեակցիան՝
 $2FeAsS(\text{արսենոպիրիտ})+3H_2SO_4=2AsH_3(\text{արսին})+5SO_2+2FeO,$
3. ստիբին գազի բնական ճանապարհով առաջացման ռեակցիան՝
 $Sb_2S_3(\text{անտիմոնիտ})+3H_2SO_4=2SbH_3(\text{ստիբին})+6SO_2:$

Նույնանման իրավիճակ է տիրում նաև Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման հետևանքով շրջապատ թափված և թափվող հարստապոչերի պոչամբարներում: Բայց, ամբողջ հարցն այն է, որ Ագարակի պոչամբարները գտնվում են Մեղրու շրջանի ցածրադիր վայրերում, Արաքս գետի ձախափնյա մասում, որոնցից ներքև միայն Արաքս գետն է և չկան ավաններ ու գյուղական բնակավայրեր, որոնց բնակիչները ենթարկվելին թունավոր տարրերի ու ծանր մետաղների վնասակար ազդեցությանը (վտանգի տակ կարող են գտնվել պոչամբարների շրջակայքում աշխատող փոքրաթիվ մարդիկ և արածող կենդանիները: Այնպես, որ այստեղ վտանգները Քաջարանի համեմատ շատ ավելի փոքր են, բայց, այնուամենայնիվ, դրանք առկա են):

Շատ ավելի վատ վիճակում են Գեղանուշ գյուղի բնակիչները:

Յու Կուլեշովան¹ գրում է՝ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի տվյալների համաձայն համայնքի հողի նմուշներում նկատվում են մետաղների սահմանային թույլատրելի կուտակումների գերազանցում՝ պղնձի գծով՝ 6 անգամ, մոլիբդենի գծով՝ 4 անգամ, նիկելի գծով՝ 2,4 անգամ, սնդիկի գծով՝ 30 անգամ, կադմիումի գծով՝ 10 անգամ: Նշենք, որ կադմիումը և սնդիկը համարվում են բարձր թունավորության տարրեր՝ առողջ կյանքի չափանիշներին անհամատեղելի: Եվ այդ աղտոտվածությունները հողի մեջ պահպանվում են երկար տարիներ, եթե ոչ մշտապես և շարունակում են իրենց քայքայիչ ազդեցությունը: Գյուղում շատ են օնկոլոգիական հիվանդությունները, հատկապես կանանց մոտ»:

Գևորգ Գրձեյանն իր հոդվածում² գրում է՝ «Բնապահպանական առումով Կապանի տարածաշրջանը հանդիսանում է, ինչպես այժմ ընդունված է ասել, ռիսկային: Ըստ էության դա կոռեկտ բնորոշում է այն կործանարար գործունեության, որը տեղի է ունենում դարեր շարունակ օգտակար հանածոների՝ պղնձի, ոսկու, մոլիբդենի արդյունահանման հետևանքով: Այժմ միջավայրի էկոհամակարգի վրա ազդող հիմնական ձեռնարկություններն են. Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը և Deno Gold Mining-ը: Այդ տարածքի հողի վրա աճեցված մթերքների օգտագործումը՝ երկարատև (աղտոտության աստիճանից կախված նաև կարճատև) ժամանակահատվածում կործանարար ազդեցություն է ունենում մարդկանց առողջության վրա»:

Շատ չխորանալով նշված հոդվածների վերլուծման մեջ, նշենք, որ դրանց հիմնական բովանդակությունն ամփոփված է նշված նախադասությունների մեջ:

Այժմ հակիրճ տեղեկություններ հաղորդենք շահագործման նախապատրաստվող Թեղուտի (Լոռու մարզ) պղնձամոլիբդենային հանքավայրի և դրա շահագործման հետևանքով բնական միջավայրին հասցվելիք վտանգների մասին:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի հաշվեկշռային պաշարները կազմում են.

¹ Ю.Кулешева – Заложники руды, Деловой экпресс, №2, 2010.

² Р.Грдзелян – Армянский образ иностранной компании, Голос Армении, 23 января 2010.

հանքաքարերինը՝ 459,24 մլն տ, պղնձինը՝ 1630,2 հազ.տ, մոլիբդենինը՝ 99116,8տ, ծծմբինը՝ 17021,5 հազ.տ, ոսկունը՝ 4776,2կգ, արծաթինը՝ 303,8տ: Անհասկանալի պատճառով երկրաբանների կողմից ռենիումի պաշարներ չեն հաշվարկվել և Պաշարների պետական հանձնաժողովի կողմից չեն հաստատվել, սակայն այս հանքավայրի շահագործման իրավունքն ստացած՝ «Արմենիան քափրո փրոգրամ» ընկերության կողմից կազմված «աշխատանքային նախագծում» կան ռենիումի համար գնահատված 44,8կգ պաշարներ: Գ.Փիջյանի¹ տվյալների հիման վրա մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ռենիումի պաշարները մոլիբդենի հաշվեկշռային պաշարներում կազմում են 120,71տ:

Վերը նշված ընկերությունը նախագծել է հանքավայրը շահագործելիս դրա ընդերքից տարեկան (առաջին 8 տարիներին) արդյունահանել և մշակել 7 մլն տ հանքաքար, հետագա 4 տարիներին արդյունահանման քանակը պետք է կրկնապատկվի, իսկ այնուհետև՝ եռապատկվի:

Գ.Փիջյանի տվյալներով Թեղուտի հանքավայրի հիմնական՝ պղինձ և մոլիբդեն մետաղների հանքանյութերի մեջ սելեն տարրի քանակը կազմում է 1637,3տ, իսկ տելուրինը՝ 8,3տ: Սակայն նշված քանակներով չեն սահմանափակվում սելեն և տելուր թունավոր տարրերը: Սելեն և տելուր են հայտնաբերված նաև իր քանակով առաջին տեղն զբաղեցնող ծծմբի հրաքար պիրիտ հանքանյութի մեջ: Ծծմբի պարունակությունից ելնելով պիրիտ հանքանյութի մեր կողմից հաշվարկված քանակը Թեղուտի հանքաքարերում կազմում է 28642,3 հազ.տ, իսկ սելենի և տելուրի քանակները պիրիտ հանքանյութի մեջ կազմում են համապատասխանաբար՝ 572,85 և 401,0տ:

Թեղուտի հանքավայրի շահագործման նախագծով նախատեսված է, որ ընկերությունը թողարկելու է միայն և միայն պղնձի և մոլիբդենի խտանյութեր, որոնք վաճառվելու են արտասահմանյան երկրներին:

Այնպես, ինչպես Հայաստանում շահագործվող բոլոր հանքավայրերի պարագայում, Թեղուտի հանքաքարերի հարստացման պարագայում ևս պիրիտ հանքանյութի խտանյութ չի ստացվելու, ասել է թե՛ պիրիտն իր մեջ պարունակվող ծծումբ, երկաթ, սելեն, տելուր և այլ, դեռևս չհետազոտված, բայց սպասվող տարրերով հանդերձ ամբողջությամբ թափվելու է պոչամբար և թունավորելու է միջավայրը: Պոչամբար են թափվելու նաև հիմնական օգտակար հանածոներ համարվող պղնձի և մոլիբդենի թերկորզման հետևանքով մնացած 20-30% քանակները, որոնց հետ էլ պոչամբար կթափվեն համապատասխան քանակների սելեն և տելուր թունավոր տարրերը:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարերում քիչ, բայց, այնուամենայնիվ, աչքով տեսանելի քանակությամբ հայտնաբերված են նաև կապարի գալենիտ, ցինկի սֆալերիտ, մկնդեղի արսենոպիրիտ և այլ հանքանյութեր, որոնց մի մասը հանքահարստացման գործընթացներում կարող է անցնել խտանյութերի մեջ, իսկ մյուս մասը՝ թափվելու է պոչամբարներ:

Թեղուտի հանքավայրի տարածքին և շրջակա միջավայրի բնակչությանը հասցվող վնասներն ու վտանգները չեն սահմանափակվում միայն պոչամբարներից շրջակա միջավայր սփռվող ծանր մետաղների և թունավոր տարրերի թունավորումներով: Բավականաչափ մեծ վնասներ ու վտանգներ են սպասվում այդ տարածքի գեղատեսիլ անտառների ոչնչացումից: Գ.Ա.Բելլերը² (էջ 64) գրում է՝ «Սեկ հեկտար անտառը տարեկան մաքրում է 20 մլն խոր.մ մթնոլորտ, խոնավացնում է օդը տասն անգամ ավելի, քան դա անում է մեկ հեկտար

¹ Пиджян Г.О. Медно-молибденовая формация руд Армянской ССР. Ереван, Изд. АН Арм.ССР, 1975, 310с.

² Беллер Г.А. Экзамен разума, Москва, “Мысль”, 1988, 252 с.

մակերեսով ջուրը: Անտառը արտադրում է «մթնոլորտի վիտամիններ»՝ ֆիտոնցիդներ կոչվող նյութը, որի մի քանի տասնյակ կգ-ը բավարար է միջին չափերի քաղաքի բոլոր վնասակար մանրէները ոչնչացնելու համար»:

Գ.Ա.Բելլերը այնուհետև գրում է՝ «Այժմ հանրահայտ է անտառի ազդեցությունը մթնոլորտի ջերմային հաշվեկշռի վրա, ջրերի պահպանության, կենդանական ու բուսական աշխարհի բազմազանության գործում, որոնց կրճատումը փոխում է էվոլյուցիայի ուղին: Արևադարձային անտառները հարուստ ծագումնաբանական (գենետիկական) միջավայր են, որոնցում կենտրոնացված է երկրի բուսական ու կենդանական տեսակների կեսից ավելին:

Բժիշկները գտնում են, որ արևադարձային անտառների ոչնչացումը կարող է լրջորեն խանգարել հիվանդությունների դեմ ուղղված պայքարին, հատկապես օնկոլոգիական» (էջ 64):

Այժմ տեսնենք, թե ինչ է սպասվում Լոռու մարզի բնակչությանը, հատկապես Թեղուտի հանքավայրի շրջակա տարածքի և ձորերով ու Դեբեդ գետի հոսանքով Թեղուտից ներքև ընկած բնակավայրերի բնակչությանը, երբ Թեղուտի հանքավայրի շահագործման հետևանքով տարեկան 7, այնուհետև 14 և 21 մլն տ փշրված ու մանրացված հանքաքարերի հետ պոչամբարներ կթափվեն բացված ու մերկացված սելեն, տելուր, մկնդեղ թունավոր տարրերի հսկա քանակներ (սելեն՝ 4,64-ից մինչև 13,92տ, տելուր՝ 3,25-ից մինչև 9,75տ, մկնդեղ՝ դրանցից մոտ տասն անգամ պակաս), ինչպես նաև կապար, ցինկ, կադմիում (կապված ցինկի հետ) և պղինձ ու մոլիբդեն, որոնցից կապարը, ցինկը և կադմիումը քիչ (շատ ավելի քիչ, քան պղինձը), բայց, այնուամենայնիվ, որոշակի քանակությամբ, որոնք բոլորն էլ նպաստում են սրտանոթային հիվանդությունների և քաղցկեղի առաջացմանը: Շրջակա անտառների ոչնչացման և ծանր մետաղների ու թունավոր տարրերի առկայության պայմաններում (օդում, ջրում և հողում) գլուխ են բարձրացնելու և արագ թափով զարգանալու զանազան հիվանդություններ, որոնք անհնար են դարձնելու նշված տարածքում ապրելը:

Գտնում ենք, որ արդեն իսկ շահագործվող հանքավայրերը, հատկապես պղնձամոլիբդենային, պետք է շահագործվեն, իսկ Թեղուտի հանքավայրն այժմ և առաջիկա մի քանի հարյուր տարիներին չպետք է շահագործվի (այն պետք է պահարկվի հեռավոր ապագայի համար): Շահագործվող հանքավայրերից բխող վտանգները, եթե ոչ իսպառ վերացնելու, ապա, գոնե, առավելագույնս կրճատելու և մեղմելու միակ ճանապարհը՝ հանքաքարերից օգտակար տարրերի (որոնք պոչանքների մեջ մնալու պարագայում դառնում են վտանգավոր) բարձր ու գերբարձր տոկոսներով (92-95-96) կորզումն է: Որքան քիչ տարրեր մնան հանքահարստացման թափոններում (հարստապոչերում) այնքանով էլ կարող են նվազել դրանցից սպասվող վտանգները: Այս առաջարկությունը վերաբերում է այժմվանից հետո կատարվելիք (եթե կատարվեն) հանքահարստացումներին: Բայց, չէ՞ որ շահագործվող հանքավայրերի շրջակայքում արդեն իսկ կուտակված են ծանր մետաղներով ու թունավոր տարրերով առլեցուն՝ միլիոնավոր, տասնյակ և հարյուր միլիոնավոր տոննաներով պոչանքներ, որոնք արդեն իսկ կատարում են իրենց սև գործը՝ թունավորում են միջավայրը, բուսական ու կենդանական աշխարհը, այդ թվում՝ ցավալիորեն մեր բնակչության ամենաթույլ և անկարող մասին՝ ծերերին ու երեխաներին: Այդ վտանգներն էլ վերացնելու միակ ճանապարհը մենք տեսնում ենք պոչամբարներում կուտակված պոչանքների վերամշակման մեջ, դրանցից օգտակար տարրերի (ծանր մետաղների ու թունավոր տարրերի) բարձր ու գերբարձր տոկոսներով կորզման մեջ:

Իր ու իր ժողովրդին սիրող, անտառների հիասքանչ հատկություններին քիչ թե շատ ծանոթ մարդը (հայր) ոչ թե պետք է անտառներ ոչնչացնի (անկախ նրանից, թե ինչ է ստանալու, քանի միլիոն դոլար է կուտակելու այդ ոչնչացման արդյունքով), այլ հնարավորինս ծառա-

տունկ պետք է կազմակերպի, նոր անտառներ պետք է հիմնի, թթվածին ու ֆիտոնցիդներ ավելացնի, ջուր, կենդանական ու բուսական աշխարհի պահի և, ի վերջո, այս Հայաստանի տարածքում բնակչություն՝ հայ պահի:

Լյուդմիլա Ֆիոնովան իր հոդվածում գրում է՝ «Համատարած անտառահատումների պատճառով (այժմ աշխարհում տարեկան ոչնչացվում է 11 մլն հեկտար անտառ) մթնոլորտում մեծ թափով աճում է ջերմոցային գազերի քանակը (այն այժմ 37%-ով գերազանցում է կանխատեսումները): Դրա արդյունքով մթնոլորտում նվազում է թթվածնի քանակը, նվազում է նաև տեղումների քանակը ցամաքի վրա, անապատացումը սպառնում է ցամաքի մեկ քառորդ մասին (32 մլն քառ.կմ տարածքին)»:

Չէինք ցանկանա, որ առաջիններից մեկը անապատացվեր մեր փոքրիկ հայրենիքի (29,74 հազ. քառ.կմ) տարածքը:

Վերջաբանի փոխարեն նշենք, որ Հայաստանի բնակչությանը սպառնացող ամենամեծ վտանգը պոչամբարներից ու անտառահատումներից ծագող վտանգն է: Հանքահարստացման պոչամբարների ծավալների և թվաքանակի մեծացման և անտառահատումների հետևանքով նվազում են մշակման համար պիտանի հողատարածքները, Հայաստանի ջրի և պարենի պաշարներն ու ռեսուրսները, աղտոտվում են օդը, հողն ու ջուրը, թունավորվում ու մահանում են մարդիկ ու կենդանիները: Եվ, պատահական չէր, որ Լյուդմիլա Ֆիոնովան գրում է՝ «Մոլորակի բնակչության համարյա կես մասը տառապում է սովից, համարյա 40%-ը՝ խմելու ջրի պակասից: Միացյալ ազգերի կազմակերպության տվյալներով ջրի և օդի աղտոտումից երկրի վրա տարեկան մահանում է 2,5 մլն մարդ: Կարծում ենք, որ՝ եթե ոչ ամբողջությամբ ջրի աղտոտման, ապա օդի, հողի և հողից ստացած բերք ու բարիքի աղտոտման հետևանքով Հայաստանում մահացության դեպքերը, տոկոսային հարաբերությամբ պակաս չեն կարող լինել համաշխարհային չափանիշներից (ափսոս, որ մեզ մոտ այդպիսի տվյալներ չեն հրապարակվում): Ինչևիցե, այժմ, հենց այսօրվանից մենք պետք է խստագույնս մտահոգվենք առողջ բնակչություն ունենալու հարցով, պետք է աշխատենք մաքրել ու մաքուր պահել մեր բնական միջավայրը, մեր հողն ու ջուրը, մեր հանրապետության տարածքի օդը, մեր հանապազօրյա «հացը»»:

ԴԱՎԻԹ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՆՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.

ՆԱՐԵԿ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

ՆՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ՃԱՊՈՆԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ինչպես արտահանման խթանման, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խնդիրները ժամանակակից պայմաններում հանդիսանում են բոլոր երկրների տնտեսական քաղաքականության անբաժանելի մասը՝ իրենց զարգացման մակարդակով բնորոշելով վերջիններիս տնտեսության որակը: Երկու կարևոր խնդիրներ, որոնց համատեղ և արդյունավետ լուծման ուղի կարող է լինել ՓՄՁ-ների արտահանման գործունեության աշխուժացումը, ինչպես նաև պետության կողմից ՓՄՁ-ների արտահանմանն ուղղված արտադրության աջակցությունը: Բիզնեսի միջազգայնացման, ինչպես նաև միջազգային առևտրի ոլորտում ՓՄՁ-ների դերակատարման մեծացման մասին է խոսում նաև այն փաստը, որ արդեն 1990թ. Տ.Մադսենի կողմից առաջարկվեց ՓՄՁ-ների գործունեության վրա հիմնված տեսություն, ըստ որի ՓՄՁ-ները հիմնադրման պահից հակված են սպասարկելու միջազգային և անգամ գլոբալ շուկաները: Միևնույն ժամանակ նշում է, որ նրանց գործունեության հիմքում պետք է ընկած լինի կամ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ բացառիկ արժեքների թողարկումը, կամ հենց նորարարական գործունեությունը¹: Ուշագրավ է նաև Մ.Պորտերի «Մրցակցային առավելությունների» տեսությունը, որտեղ նա իրավացիորեն նշում է, որ միջազգային շուկայում միմյանց հետ մրցակցում են ոչ թե ազգերը, այլ ընկերությունները²: Համաշխարհային շուկայում մրցակցության մեծացումն իր հերթին պատճառ է հանդիսանում ապրանքների և ծառայությունների առաջարկի աճի համար:

Շատ երկրներում ՓՄՁ-ները մեծ մասամբ գործում են ներքին շուկայի պահանջարկի բավարարման շրջանակներում, և միայն առավել խոշորներն են դուրս գալիս արտաքին շուկա: Մակայն համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում վերջին տարիներին շատ զարգացած երկրների ՓՄՁ-ները, որոնք յուրացրել են միջազգային համագործակցության նոր ձևերը և մեթոդները, կառավարման և արտադրության մեջ ներդրել են նորարարական մոտեցումներ, սկսեցին իրենց իրավունքները ցույց տալ արտաքին տնտեսական գործունեության համակարգին մասնակցելու առումով³: Նշենք, որ «Փոքր բիզնես» (small business) տերմինը տարածում է ստացել միայն անգլախոս երկրներում: Մնացած արևմտաեվրոպական երկրներում և Ճապոնիայում ավելի հաճախ օգտագործում են «փոքր և միջին ձեռնարկություններ» (Small and Medium Enterprises) տերմինը: Վերոհիշյալ տերմինները տարբեր երկրներում սահմանվում են տարբեր չափորոշիչներով: Այսպես, օրինակ՝ ԱՄՆ-ում⁴,

¹ Madsen T., Rasmussen E., Servis P. Differences and similarities between Born Globals and other types of exporters, Working Papers in Marketing, no 22, University of Southern Denmark-Odense, 1999, pp. 1-27.

² Porter M. Competitive Advantage of Nations, Macmilan, New York 1990, pp. 73-108.

³ Экспортный потенциал малого и среднего бизнеса России меры государственной поддержки. www.aisme.ru/doc/080705_Article_1.pdf.

⁴ U.S.Small Business Administration, Table of Small Business Size Standards, 22.08.2008.

Գերմանիայում¹ ՓՄՁ-ներում աշխատողների առավելագույն թիվը սահմանված է ոչ ավել քան 500-ը, Ճապոնիայում՝ 300-ը², Ռուսաստանում՝ 250-ը, Ֆրանսիայում, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում, Դանիայում, Լեհաստանում և Հունաստանում արդեն իսկ կիրառվում են 2005թ. հունվարի 1-ի դրությամբ ուժի մեջ մտած Եվրամիության չափորոշիչները, որի համաձայն փոքր և միջին ձեռնարկություններ են համարվում այն կազմակերպությունները, որոնցում աշխատողների թիվը չի գերազանցում 250-ը:

Գրեթե բոլոր զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում (այդ թվում ՀՀ-ում) ՓՄՁ ոլորտի հիմնախնդիրների շարքում բավականին սուր է դրված վերջիններիս համաշխարհային շուկային ինտեգրվելու հարցը: Այս առումով հրապուրիչ է հատկապես «Ճապոնական» մոդելի ուսումնասիրությունը, քանի որ հենց այս մոդելի արդյունքն է, որ ճապոնական ՓՄՁ-ները, հանդիսանալով որպես տնտեսության ակտիվ սուբյեկտներ, համաշխարհային տնտեսության մեջ ներգրավվել են որպես հիմնականում արդյունաբերական և տեխնոլոգիական ապրանք արտահանողներ: ՓՄՁ-ների լայն շերտերի առաջացումը Ճապոնիայում ունի պատմական պատճառներ: Քանի որ փոքր բիզնեսը շարժուն ոլորտ է, ընդունակ արտաքին պայմանների փոփոխություններին շատ արագ արձագանքելու, խոշոր ներդրումներ և կառուցման երկար ժամանակահատված չի պահանջում: Հետպատերազմյան ժամանակաշրջանում տնտեսության վերակառուցումը, որտեղ գերիշխում էին մենաշնորհային միավորումները (ձայքացու), ուղեկցվում էր ոչ մեծ ֆիրմաների արագ աճով, ինչն էապես մեղմեց գործազրկության սրացած խնդիրը: Ճապոնիայում մշակվել են տարաբնույթ արդյունավետ մեխանիզմներ, որոնց շնորհիվ ՓՄՁ-ների համաշխարհային շուկային հարմարվելու գործընթացը և կառուցվածքային վերափոխումները արտահանման հաջողությունների գրավական են դարձել: Մեծ չափով այն պայմանավորված է ՓՄՁ-ների զարգացման Ճապոնիայի մոտ 200-ամյա փորձով: Ճապոնիան ՓՄՁ-ներին սկսեց ակտիվորեն պետական աջակցություն ցուցաբերել սկսած 1948 թ., (փոքր բիզնեսի վարչության միջոցով): 50-ական թվականներին հաշվարկվում էր արդեն մոտ 3 մլն ՓՄՁ սուբյեկտ, որոնք սկզբից առանձնանում էին աշխատանքի ծանր պայմաններով և ցածրորակ, էժան աշխատուժի կիրառմամբ (այստեղ հիմնականում աշխատում էին ձեռնարկատիրոջ ընտանիքի անդամները), այնուհանդերձ գիտատեխնիկական առաջընթացը թույլ տվեց կարճ ժամանակահատվածում վերաճակափոխել վերջիններս, կտրուկ կրճատել նոր արտադրանքի յուրացման ժամանակահատվածը, բարձրացնել որակը մասնագիտացված աշխատողների հաշվին: 1963թ. ընդունվեց ՓՄՁ-ների վերաբերյալ հիմնարար օրենքը, որը կառուցվածքային վերափոխումների, սարքավորումների թարմացման և տեխնոլոգիաների նորացման գրավականը դարձավ: Ընդհանուր առմամբ 90-ական թվականներին և այժմ նույնպես շարունակվում է ՓՄՁ-ների գործունեության պետական աջակցության քաղաքականությունը, այն դառնում է էլ առավել համալիր, բազմաձևաձև, և առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հասարակության մեջ կառուցվածքային և սոցիալական տեղաշարժերին: Այսօր փոքր բիզնեսը, որը գործում է մրցակցային միջավայրում կարևոր դեր ունի արտադրության ընդլայնման, ապրանքների և ծառայությունների տեսականու ընդլայնման և որակի բարձրացման գործում: Այս առումով հատկանշական է, որ վենչուրային բիզնեսը, կապված բարձր ռիսկայնության հետ, նույնպես հիմնականում կապված է ՓՄՁ-ի հետ: Չանգվածային արտադրանքի գծով պահանջարկի նվազման պայմաններում շատ ճյուղեր անցնում են փոքր սերիական արտադրությանը, ինչը և համապատասխանում է ոչ մեծ, բայց լավ զինված ֆիրմաների շահերին: ՓՄՁ-ների կողմից արտահանման գործըն-

¹ Deutsche Bank Research, “Germany’s Mittelstand – an endangered species?”, July 6, 2007.

² Small and Medium Enterprise Basic Law of Japan (Article 2, Paragraph 1) (www.sme.ne.jp).

թացները սկսեցին զարգանալ Ճապոնիայում ավելի քան 100 տարի առաջ, որին աջակցեցին խոշոր առևտրային կազմակերպությունները կամ ընդհանուր առևտրային կազմակերպությունները: Ճապոնիայի կառավարությունն անընդհատ ապահովում էր հավասարակշռության պահպանումը փոքր ու միջին ձեռնարկատիրության և խոշոր ձեռնարկությունների զարգացման միջև, ՎԱԿ-երի մեծ մասը ՓՄՁ-ների հետ կապ էին հաստատում ինչպես արտադրության, այնպես էլ առևտրի ոլորտում: Դա թույլ էր տալիս ՓՄՁ-ներին արտադրել առավել ցածր սպառողական պահանջարկ վայելող սպրանքներ, որոնց գծով մասնակցություն չեն ունենում խոշոր ֆիրմաները, կամ էլ հանդես են եկել որպես խոշոր ֆիրմաների ենթակապալառուներ: Առևտրային կամ ներդրումային խոշոր ձեռնարկությունները, որոնք լայն սպառում ունեցող սպրանքների գծով համաշխարհային շուկայում ունեին նշանակալի ծավալով գործարքներ, Ճապոնիայում համարվում էին «Ընդհանուր առևտրային ձեռնարկություններ» (ԸԱՁ): 1980-90-ական թթ.. «Ընդհանուր առևտրային ձեռնարկությունները» արտասահմանում սկսեցին լայնամասշտաբ նախագծեր իրականացնել այլ ձեռնարկությունների հետ: Ճապոնիայում ՓՄՁ-ները ԸԱՁ-ների հետ համագործակցության հետ մեկտեղ ուղղահայաց կերպով կապված են (ենթակապալառուի կարգավիճակով) ՎԱԿ-երի հետ և ինտեգրված են դրանց արտադրության մեջ: Ընդհանուր առմամբ ճապոնական ՓՄՁ-ները կարողացան ընդլայնել իրենց մասնաբաժինը արտահանման մեջ 11.6 տոկոսից մինչև 12.2 տոկոս, սկսած 1990-ական թթ. կեսերից: Այս առաջընթացի հիմնական գործոններ էին հանդիսանում փոքր և միջին գործարարության պետական աջակցությունը, ինչպես նաև ՓՄՁ-ների ուղղահայաց կապը խոշոր բիզնեսի և միջազգային կորպորացիաների հետ, ՓՄՁ-ների և ընդհանուր առևտրային ձեռնարկությունների միջև համագործակցության խթանումը և արտահանման աճը այս ձեռնարկությունների միջոցով: Կարևոր է նաև այն, որ Ճապոնիայի ՓՄՁ-ները հանդիսանում էին տնտեսության վերակառուցման ակտիվ մասնակիցները, ինչպես նաև անընդհատ արդիականացնում են իրենց արտադրությունը և դիվերսիֆիկացնում առևտրային գործունեությունը:

Կորեայի առևտրի և ներդրումների խթանման գործակալության (Korea Trade-Investment Promotion Agency) տվյալների համաձայն Ճապոնիայի ՓՄՁ-ների 38.9 տոկոսը սկսել են իրենց արտահանման գործունեությունը, որպեսզի պահպանեն իրենց կենսունակությունը, և միայն 22 տոկոսն է այս քայլին դիմել արտաքին շուկայում շահույթի առավել բարձր մակարդակի պատճառով: Ճապոնական ձեռնարկությունները հենվելով փորձի և մրցունակության վրա կարճ ժամանակամիջոցում գրավեցին համաշխարհային շուկայի առավել մեծ մասնաբաժիններ: Այն հանգամանքը, որ ճապոնական ՓՄՁ-ների արտահանման բաժինը երկրի ընդհանուր արտահանման մեջ առավել փոքր տեսակարար կշիռ ունի, քան օրինակ Կորեայում, պայմանավորված է ճապոնական ՎԱԿ-երի առավել առաջատար դերով ճապոնական տնտեսության մեջ:

Ինչպես արդեն նշել ենք անչափ կարևոր ուղղություն էր «Ընդհանուր առևտրային ձեռնարկությունների»՝ «արտահանման պատուհանների» ստեղծումը փոքր և միջին գործարարության համար: Հարկ է նշել, որ ՓՄՁ-ների համար ԸԱՁ-ների վրա հենվելը ունեցավ պատմական նշանակություն: Այս մասնագիտացված ձեռնարկությունների ստեղծումը մինչև վերջին ժամանակներս համապատասխանում էր Ճապոնիայի տնտեսության զարգացման շահերին ընդհանուր առմամբ, և փոքր և միջին ձեռնարկատիրության շահերին՝ մասնավորապես: Ներկայումս արդեն ԸԱՁ-ների դերը ՓՄՁ-ների համար այնքան էլ կարևոր չէ՝ ՓՄՁ-երի գործունեությունը դարձել է առավել դիֆերենցված, ստեղծվել են սպառման սեփական ուղիները, աճում են ներդրումները արտասահմանում:

ՓՄՁ-ները կարևոր դեր են խաղում արտահանման մեջ և տնտեսության արտահանմանն ուղղված ճյուղերի ստեղծման գործում՝ վերջիններս արտադրում են մասեր և կիսաֆաբրիկատներ արտահանում իրականացնող խոշոր ձեռնարկությունների համար:

Տնտեսապես զարգացած երկրներում ՓՄՁ սուբյեկտները կազմում են տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակի 97-99%-ը: Համաձայն ՏՀԶԿ (OECD) տվյալների Ֆրանսիայում և Իսպանիայում կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտները կազմում են 99.8%, Ճապոնիայում՝ 99.7%, Շվեյցարիայում՝ 99%¹: Այսօր արդեն, ՓՄՁ-ների արտադրության մոտ 25%-ը մրցունակ է դարձել միջազգային շուկաներում, որոնց արտադրանքի մոտ 20%-ին է ընկնում ապրանքների և ծառայությունների միջազգային շարժից ստացած հասույթի 10-40%-ը: ՓՄՁ-ների բաժինը համաշխարհային արտահանման մեջ կազմում է 30%-ից ավելին, և նրան է ընկնում ՕՈՒՆ-ների հիմնական մասը²: ՓՄՁ-ների արտաքին տնտեսական գործունեության, արտահանման խթանման նպատակով երկրները կիրառում են խթանման մի շարք գործիքախմբեր՝ արտահանման արտադրության խթանում, արտահանման ուղղակի աջակցություն, առևտրաքաղաքական միջոցառումներ, որոնք ուղղված են արտաքին շուկաներում արտադրողների շահերի լոբբինգին:

Անդրադառնալով Ճապոնիայի փորձին՝ նշենք, որ այստեղ իրականացվում է արտահանման ներուժի զարգացման ակտիվ քաղաքականություն: Այդ նպատակով հատկացվում են զգալի ֆինանսական ռեսուրսներ, ստեղծվում են հզոր ենթակառուցվածքներ՝ մասնագիտացված պետական կազմակերպություններ, որոնք ունեն զարգացած տարածաշրջանային ցանց, համագործակցում են այլ պետական կառույցների հետ, ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում, օգտվում են լիազորված ֆինանսավարկային կազմակերպությունների աջակցությունից՝ այդպիսով ցուցաբերելով ազդեցիկ ֆինանսական, տեղեկատվական, խորհրդատվական և մեթոդաբանական աջակցություն ՓՄՁ-ների արտահանմանը: Ճապոնական կառավարության ֆինանսական աջակցության չափը տարեկան կազմում է բյուջեի ծախսային մասի մոտ 0.2 տոկոսը: 1998-99թթ. ճգնաժամից հետո, երբ երկրի ՀՆԱ-ն կրճատվեց մոտ 2 տոկոսով (1997թ. նկատմամբ) ՓՄՁ բաժինը ՀՆԱ-ում կրճատվեց մոտ 50 տոկոսով, և այն, որ բացասական ամենամեծ փոփոխությունները առնչվում էին ՓՄՁ-ների հետ, կապված էր այն հանգամանքի հետ, որ դեռևս այս հատվածը պատրաստված չէր գլոբալ շուկաներում առկա փոփոխություններին, մրցակցային պայքարի սրացմանը, ֆինանսական և տնտեսական անկայունությանը: Արդյունքում, շատ առումներով ճապոնական ՓՄՁ-ները կորցրեցին իրենց մրցունակությունը արտաքին շուկայում, և 2000թ. Ճապոնիան մրցունակության տեսանկյունից 47 առաջատար երկրների շարքում արդեն 17-րդ տեղում էր³: Ճգնաժամի արդյունքում ՓՄՁ-ների թիվը տարեկան կրճատվեց միջինը 2 տոկոսով, ինչը ցույց տվեց, որ ՓՄՁ-ների աջակցության նախկին մեխանիզմները կորցրել էին իրենց արդիականությունը: Այս փաստը և եզրահանգումները, որոնք եղան ճգնաժամից հետո, պարզ դարձրեցին, որ 21-րդ դարում պետք է փոխել ռազմավարությունը:

¹ «ՓՄՁ ոլորտը Հայաստանում» տեղեկագիր 2006-2008, էջ 45:

<http://www.smednc.am/download.php?f=1019&fc=Final%20VERSION%202009%20SME%20sphere%2006-08.pdf>, կամ Small Business in Japan “White paper on small and medium enterprises in Japan” MITI, 2002, 219 p., p. 109.

² Экспортный потенциал малого и среднего бизнеса России меры государственной поддержки. www.aisme.ru/doc/080705_Article_1.pdf.

³ «Мониторинг проблем и препятствий, сдерживающих развитие малого предпринимательства в Ленинградской области в сфере внешнеэкономической деятельности» Санкт-Петербург 2008 www.bmpproject.813.ru/library/reports/report2.doc, կամ Опыт зарубежных стран в развитии конкурентоспособного экспортно-ориентированного малого и среднего предпринимательства http://www.giac.ru/content/document_r_E5F0CC3E-98AF-4DC6-87B0-FF96C8D9DFE2.html.

Այս ոլորտում առկա զարգացումներից եղավ նաև այն, որ 1999թ. վերանայվեց ՓՄՁ-ների մասին հիմնական օրենքը, որը ընդունվել էր 1963թ., և այսօր արդեն գոյություն ունեն 40 տարբեր առանձնահատուկ օրենքներ (ենթաօրենսդրական ակտեր), որոնք կարգավորում են ՓՄՁ-ների գործունեությունը, իսկ Ճապոնիան, հարկ է նշել, որ ՏՀԶԿ երկրների մեջ այս առումով ամենահարուստ իրավաբանական փորձն ունի¹: Այս նոր փոփոխությունները ըստ էության նոր հնարավորություններ տրամադրեցին ՓՄՁ-ներին առավել արդյունավետ կերպով հարմարվելու տեղեկատվական և բարձր տեխնոլոգիական հեղափոխությանը, շուկաների գլոբալացմանը և մրցակցության ուժգնացմանը:

Ճապոնիայի տնտեսության, առևտրի և արդյունաբերության նախարարությունը (ՃՏԱԱՆ) (Ministry of Economy, Trade and Industry – METI)² հանդիսանում է երկրի տնտեսության զարգացման պետական ռազմավարության մշակողը, որը նաև ուղղորդում է ՓՄՁ-երի զարգացման և խթանման ամբողջ ազգային համակարգը: Փաստորեն, կապված 1997-1998թթ.. ճգնաժամի արդյունքների հետ, ինչպես նաև համաշխարհային շուկայում մրցակցության սրացմանը և նոր մարտահրավերներին ընդառաջ 2001թ. կառավարության որոշմամբ կառուցվածքային փոփոխություններ տեղի ունեցան ՃՏԱԱՆ-ում: Նպատակն էր տնտեսության առողջացումը, ՓՄՁ-ների զարգացում և արտահանման ներուժի ընդլայնում: ՃՏԱԱՆ-ի կազմում ստեղծվեց նոր «ՓՄ ձեռնարկատիրության գործակալություն» (Small and Medium Enterprise Agency – SMEA)³, որը նախատեսված էր կարգավորել ֆինանսավորման և հարկման ոլորտը, իրականացնել շուկայական հետազոտություններ և լուծել արտաքին միջավայրի բարելավման հետ կապված խնդիրները:

Ի դեպ, «ՓՄ ձեռնարկատիրության գործակալության» ջանքերով է նաև իրականացվում խոշոր կազմակերպությունների համագործակցությունը և կոորդինացումը՝ նպատակ ունենալով կրկին անգամ աջակցել ՓՄՁ-երի զարգացմանը: Դրանք են՝ «ՓՄՁ-երի և տարածաշրջանների ինովացիոն զարգացման կազմակերպություն» (Organization for Small & Medium Enterprise and Regional Innovation – SMRJ, «ՓՄՁ-ի ճապոնական ֆինանսական կազմակերպություն» (Japan Finance Corporation for Small & Medium Enterprise - JASME⁴), «Ֆինանսական աջակցության ազգային կազմակերպություն» (National Life Finance Corporation - NLFC⁵):

ՓՄՁ-ների արտահանման ներուժի ընդլայնման և արտահանման խթանման գործում նշանակալի է պետական «Արտաքին առևտրի ճապոնական կազմակերպության» դերը (Japan External Trade Organization - JETRO⁶), որը ստեղծվելով 1958թ. ի սկզբանե նպատակ է ունեցել տեղեկատվական, խորհրդատվական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել ճապոնական արտահանողներին:

Առավել հզոր և բազմակողմանի (ֆինանսական, խորհրդատվական, տեղեկատվական և տեխնիկական) աջակցություն են տրամադրում ՓՄՁ-ներին բազմաթիվ մասնավոր կազմակերպությունները, համալսարանները, հետազոտական ինստիտուտները և հասարակական կազմակերպությունները: Մասնավոր ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական աջակցության չափերը մոտ 9 անգամ գերազանցում են պետական աջակցության ցուցանիշներին: Ահա այսպիսի համախմբված ջանքերի շնորհիվ, որտեղ

¹ JAPANESE SMALL ENTERPRISE DEVELOPMENT COOPERATION ERSEAS: LINKAGES WITH JAPANS INDUSTRIAL ORGANIZATION AND TIES WITH JAPANESE SMEs, By Professor Philippe Rngnier Graduate Institute of Development Studies, Geneva, Switzerland (November 2006), <http://www.jil.go.jp/profile/documents/Regnier.pdf> .

² <http://www.meti.go.jp/english/index.html> .

³ http://www.chusho.meti.go.jp/sme_english/index.html .

⁴ <http://www.smrj.go.jp/jasmec/ck/english/index.htm> .

⁵ <http://www.kokukin.go.jp/pfce/indexc.html> .

⁶ <http://www.jetro.go.jp/> .

համագործակցում են պետական և մասնավոր կազմակերպությունները, տարաբնույթ մասնագիտացված կամ հասարակական կազմակերպությունները, 2003թ. արդեն զգալի առաջընթաց ապրեցին ճապոնական ՓՄՁ-ները, որոնք համաշխարհային շուկայի առանձին սեգմենտներում դարձան առաջատարներ: Արդեն 2004թ. ճապոնական ապրանքների և ծառայությունների արտահանումը նախորդ տարվա նկատմամբ աճել էր 20.3 տոկոսով, կազմելով 565.1 մլրդ. դոլար, իսկ ՓՄՁ-ների բաժինը վերջինիս մեջ կազմում էր 40 տոկոս¹:

Այսպիսով, կարելի է ասել, որ Ճապոնիայում ՓՄՁ-ների արտահանման ներուժի ընդլայնումը առաջացրեց առաջին հայացքից բավականին հակասական թվացող իրավիճակ. չնայած այն հանգամանքին, որ սովորաբար Ճապոնիան աշխարհին հայտնի է իր միջազգային խոշոր ապրանքանիշերի անուններով, ինչպիսիք են Սոնին, Տոյոտան, Նիկոն, Սուգուկին, Միցուրիշին և այլն, այնուհանդերձ, 300-ից ավել աշխատող ունեցող ֆիրմաները, կազմում են գոյություն ունեցող բոլոր ֆիրմաների ընդամենը 0.3 տոկոսը՝ 2005թ. կազմելով 13430 միավոր: Իսկ փոքր ընկերությունները՝ 20-ից ավելի քիչ աշխատողներ ունեցող, կամում են ճապոնական տնտեսության հիմնական մասը՝ 87.2 տոկոս, միջինի կշիռը արդեն կազմում է 12.5 տոկոս: 20-300 աշխատողներ ունեցող միջին ընկերություններին է ընկնում ընդհանուր զբաղվածության 44.9 տոկոսը, իսկ փոքր ձեռնարկություններում զբաղվածների տեսակարար կշիռը կազմում է 25.3 տոկոս, այսինքն ՓՄՁ-երի բաժինը կազմում է 70.2 տոկոս, խոշոր ֆիրմաներին ընկնող 29.8 տոկոսի դիմաց: Ավելացրած արժեքի մեջ չնայած որ խոշոր ֆիրմաներն ունեն բավականին զգալի ներդրում՝ 43.2 տոկոս, այնուհանդերձ առավել զգալի է ՓՄՁ-երի բաժինը, համապատասխանաբար 11.2 և 45.6 տոկոս: Ընդհանուր 56.8 տոկոս: Մեծածախ առևտրում ՓՄՁ-երի բաժինը կազմում է 64.5 տոկոս (31.8 և 32.7 տոկոս համապատասխանաբար), մանրածախ առևտրում փոքր ձեռնարկություններին է ընկնում 54.2 տոկոսը, միջինին՝ 17.9, իսկ խոշոր ընկերություններին՝ 27.9 տոկոս: Այսինքն ՓՄՁ-երին ընկնում է բավականին նշանակալի բաժինը՝ 72.1 տոկոս²:

Համաձայն Ճապոնիայի ֆինանսների նախարարության առևտրային հաշվեկշռի վիճակագրության՝ վերջին 26 տարվա ընթացքում, 2008թ. մի շարք ամիսներին Ճապոնիան առաջին անգամ բացասական հաշվեկշիռ ունեցավ, իսկ ընդհանուր տարվա կտրվածքով անկումն ակնհայտ էր: Արտահանման նման աննախադեպ նավազումը կապված էր ավտոմեքենաների արտահանման ծավալների նվազման հետ դեպի ԱՄՆ և ԵՄ, ինչպես նաև Ասիա և Չինաստան: 2009թ. արդյունաբերական արտադրանքի ծավալները աննախադեպ անկում ունեցան՝ 10.2 տոկոս, իսկ ՓՄՁ-ի մասով այն պայմանավորված էր ենթակապալառուական գործարքների նվազման հետ:

Չնայած այսօր ՀՀ-ում ձեռնարկված են ՓՄՁ-երի ստեղծման տարաբնույթ միջոցառումներ՝ համապատասխան օրենքներ, պետական աջակցության ծրագրեր, այնուհանդերձ ՓՄՁ-ների վիճակը ներկայումս էլ մնում է բարդ և անորոշ: Այլ կերպ ասած՝ այս ոլորտը, որը զարգացած երկրներում կայուն դինամիկ հատված է, սպասվող զարգացում չի ունեցել ՀՀ-ում և չի դարձել տնտեսության վերակառուցման և համաշխարհային շուկայի հետ կապող օղակ:

ՓՄՁ-ների տեսակարար կշիռը, առավել ևս նրանց տեղը և ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա դժվար է գնահատել: Հիմնական պատճառն այն է, որ Հայաստանում ընդունված չէ ՓՄՁ սահմանում և հետևաբար ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից չի իրա-

¹ 2009 White Paper on Small and Medium Enterprises in Japan Finding Vitality through Innovation and Human Resources, JSBRI, 2009. www.chusho.meti.go.jp/pamflet/hakusyo/h21/h21.../2009hakusho_eng.pdf.

² JAPANESE SMALL ENTERPRISE DEVELOPMENT COOPERATION ERSEAS: LINKAGES WITH JAPANS INDUSTRIAL ORGANIZATION AND TIES WITH JAPANESE SMEs, By Professor Philippe Rngnier Graduate Institute of Development Studies, Geneva, Switzerland (November 2006), <http://www.jil.go.jp/profile/documents/Regnier.pdf>.

կանացվում այդ ոլորտի առանձնացված վիճակագրական հաշվառում (սակայն վերջինիս կողմից պարբերաբար իրականացվել են ոլորտի ձեռնարկություններին վերաբերող ընտրանքային հետազոտություններ): Այդուհանդերձ, համաձայն փորձագիտական գնահատականների ՓՄՁ-ները (վերջինիս հատուկ որակական ցուցանիշներով) կազմում են բոլոր գրանցված ձեռնարկությունների ավելի քան 95%-ը: Հայաստանում փոքր և միջին բիզնեսի զարգացման համար առկա են մի շարք խնդիրներ: Հատկապես կարելի է նշել արտահանման հետ կապված խնդիրը: Բացի այդ՝

- խնդիրներ են ծագում օրենսդրության չիմացության և պետական մարմինների հետ հարկային և մաքսային դաշտում համագործակցության ժամանակ, շուկայի մոնոպոլիզացիայի, բիզնես վարելու հետ կապված և այլն՝ կարելի է ասել, որ ՓՄՁ-ների խթանման օրենսդրությունը անկատար է,
- ՓՄՁ-ների ճյուղային և գույքային կառուցվածքը չի համապատասխանում ՀՀ տնտեսական զարգացման ռազմավարությանը՝ գերակշռում է առևտուրը և ծառայությունների ոլորտը, փոքր թիվ են կազմում բարձր տեխնոլոգիական և նորարարական սուբյեկտները,
- թույլ է ռեսուրսային բազան՝ տեխնիկական, ֆինանսական, արտադրական:
- ՓՄՁ-ների խթանման, աջակցման և զարգացման ենթակառուցվածքները դեռևս գտնվում են ձևավորման փուլում և կայուն գործունեություն չեն ապահովում,
- հասարակության մեջ բավականին մեծ է բացասական կարծիքը ձեռնարկատերերի նկատմամբ,
- արդյունավետ համագործակցություն չկա պետական կառույցների և գործարար հասարակության միջև, բարձր են վարչարարական արգելքները սկսնակ գործարարների համար,
- ՓՄՁ-ներում կառավարման մասնագիտական մակարդակը չի համապատասխանում ժամանակակից պայմաններին՝ հատկապես արտահանման ոլորտում հաջողություններ ունենալու առումով,
- չի գործում ՓՄՁ-ների և խոշոր ձեռնարկությունների միջև համագործակցության որևէ արդյունավետ ինտեգրման համակարգ՝ ենթակապալառուական համագործակցության, կամ կլաստերների ստեղծման ճանապարհով (այս համակարգն, ի դեպ, բարձր արդյունավետությամբ գործում է հենց Ճապոնիայում)
- ՓՄՁ-ների զարգացման և աջակցության, խթանման ոլորտում բավականին ցածր է միջտարածաշրջանային և միջազգային կապերի մակարդակը: Հայկական ՓՄՁ-ների մասնակցության մակարդակը միջազգային տոնավաճառներին, ֆորումներին չի կարելի նույնիսկ միջին գնահատել: ՓՄՁ-ներն աննշան չափով են իրականացնում գովազդային արշավներ՝ միջազգային կատալոգների կամ այլ տեղեկատվական համակարգերի միջոցով: Կազմակերպական բնույթի աջակցությունը արտահանման գործարքների ձևակերպման և ուղեկցման գործում գրեթե չի գործում, արտերկրներում հատուկ կենտրոններ, ազգային ներկայացուցչություններ ՓՄՁ-երի արտահանման աջակցման համար չեն ստեղծվել:

Եթե դիտարկենք ՓՄՁ-ների արտահանման ներուժը բնութագրող մի քանի ցուցանիշներ Ճապոնիայի և Հայաստանի համար (աղյուսակ 1), ապա կհամոզվենք, որ վերջիններս այնքան էլ ամբողջական չեն և արտահանման ներուժի որակական պատկերը չեն ներկայացնում, ինչը մեթոդաբանական նոր մոտեցման կարիք ունի:

ՓՄՁ արտահանման ներուժը

| | Ճապոնիա 2003-2004թթ. ¹ | Հայաստան 2008-2009թթ. ² |
|--|--------------------------------------|---------------------------------------|
| ՓՄՁ բաժինը ՀՆԱ-ում | 51.6% | 42.1% |
| ՓՄՁ-ների բաժինը ընդհանուր ձեռնարկությունների մեջ | 99.7% | 95% |
| ՓՄՁ-ների բաժինը զբաղվածության մեջ | 69.5% | 42.1% |
| ՓՄՁ բաժինը արտահանման մեջ | 40% | 17.6% |

Երկրի տնտեսական համակարգում ՓՄՁ ոլորտի տեղի և նշանակության առավել ամբողջական պատկեր ստանալու հնարավորություն է ընձեռում մաս Միացյալ ազգերի կազմակերպության ՓՄՁ ոլորտի վերաբերյալ իրականացված հետազոտություններում կիրառվող ազդեցացված մի ցուցանիշ, որը կոչվում է՝ ՓՄՁ զարգացման ինդեքս³: Այն իր մեջ ներառում է ամբողջ ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը ազգային տնտեսության մակարդակով⁴, իսկ ՓՄՁ զարգացման ինդեքսը կարող է արտահայտվել տոկոսներով և/կամ ՀՆԱ-ի նկատմամբ մեկ շնչին ընկնող եկամուտների հաշվով: Ինչպես նկատում ենք, այս մեթոդը շատ բաներով նման է նախորդին և կրկին չի կարող ամբողջական կերպով ներկայացնել ՓՄՁ ԱՆ-ը: Այն ապացուցելու համար բավական է բերել հետևյալ փաստը՝ 2009թ. 2002թ. նկատմամբ ՀՀ ՓՄՁ զարգացման ինդեքսը աճել է մոտ 7 անգամ⁵, այն դեպքում, որ 2009թ. 2003թ. նկատմամբ ՓՄՁ բաժինը արտահանման մեջ աճել է ընդամենը 3.4%-ային կետով (2009թ.՝ 17.7%, 2003թ.՝ 14.3%⁶):

ՀՀ-ում, բացի վերը նշված խնդիրները, ՓՄՁ-ների արտահանման խթանման հիմնախնդիրների վերաբերյալ սահմանափակ թվով վերլուծություններ կան, իսկ վիճակագրական շարքերն ըստ տարիների դեռևս նման հնարավորություն չեն ընձեռում սույն ոլորտում տնտեսական գնահատում կամ զարգացման միտում կանխատեսելու համար: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից չի իրականացվում այդ ոլորտի առանձնացված վիճակագրական հաշվառում (սակայն վերջինիս կողմից պարբերաբար իրականացվել են ոլորտի ձեռնարկություններին վերաբերող ընտրանքային հետազոտություններ)⁷: Չնայած ՀՀ ՓՄՁ-երի զարգացման, արտաքին տնտեսական գործունեության վերաբերյալ բավականին արժեքավոր վերլուծություններ են կատարվել Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի կողմից, սակայն այստեղ ևս խոսք չի գնում ՓՄՁ արտահանման ներուժի գնահատման ընդհանրացնող և ամբողջական ցուցանիշի հաշվարկման մասին:

¹ Նույն տեղում:
² <http://www.smednc.am/?laid=1&com=module&module=menu&id=189>.
³ “Small and medium entrepreneurship sector in Armenia 2003-2004” Reference book, Yerevan 2005 /in armenian/
<http://www.smednc.am/download.php?f=325&fc=Stat%202003-2004.pdf>.
⁴ Հիմնված է 3 հիմնական տնտեսական գործունեների վրա՝ մասնավոր հատվածի տեսակարար կշիռը երկրի տնտեսությունում, ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատուժի տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում:
⁵ <http://www.smednc.am/?laid=1&com=module&module=menu&id=189>.
⁶ “Small and medium entrepreneurship sector in Armenia 2003-2004” Reference book, Yerevan 2005 /in armenian/
<http://www.smednc.am/download.php?f=325&fc=Stat%202003-2004.pdf>:
⁷ Օրինակ՝ «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման», Main Indicators of Industrial Organizations by Sizes Based on Number of Employees and by Economic Activities (two-digit code) for January-December 2009 (in Armenian)
<http://www.armstat.am/en/?nid=82&id=1120>:

Իհարկե, խնդիրները շատ են, և ոչ բոլոր դեպքերում է հնարավոր որդեգրել Ճապոնիայի փորձը և իրագործել հայկական ՓՄՁ-ների արտահանման ներուժի ընդլայնման նպատակով: Սակայն միանշանակ պարզ է, որ մեր անհաջողությունների սուբյեկտիվ գործոնները հաշվի առնելով և վերջիններիս վերացման ռազմավարությունն իրագործելով էականորեն կարելի է բարելավել պատկերը:

ԷԲԱ ԲԱԲԱՅԱՆ

*ՆՊՁԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, աշխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր*

ՀՀ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՐՋ

Համաշխարհային տնտեսության ճգնաժամային ցնցումները, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների համար ստեղծելով ավելի նպաստավոր պայմաններ, առավել են ընդգծում այս ոլորտում օպտիմալ կառավարման անհրաժեշտությունը: Կայուն զարգացման համակարգի կառուցումը իրական պահանջ է հատկապես զարգացող և հետանցումային տնտեսության պայմաններում, որտեղ ցնցումները, անհրաժեշտ ինստիտուտների փաստացի անկատարությունն ու անհավասարակշիռ զարգացումը առաջացնում են բնապահպանական լրացուցիչ բարդություններ:

Էկոճգնաժամը օրինաչափ արդյունք է դեռևս չլուծված հակասության, որը պայմանավորված է քաղաքակրթության պրակտիկայում հաստատված սպառողական վերաբերմունքով դեպի շրջակա միջավայրը և կենսոլորտի ունակությունը: Բնությունը ետան է ապրում, դրա հետ ետան է ապրում մարդկությունը: Բնակչության առողջությունը, անկասկած, վատանում է աղտոտման հետևանքով:

Մարդու շփումը բնության հետ, որը մշտապես անհրաժեշտ է նրա գոյության համար, բառիս ընդհանուր իմաստով էլ հենց բնօգտագործումն է: Մարդու կյանքի և գոյության հիմքում ընկած է բնօգտագործումը: Այդ պատճառով պատմականորեն և փաստացի բնօգտագործումը կազմում է հասարակական կյանքի հիմքը, հասարակության և բնության փոխհարաբերություններում բազիսը¹:

Տնտեսության զարգացման ներկա փուլում շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրները ձեռք են բերում մեծ կարևորություն: Հատկապես տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված, բնապահպանական հիմնախնդիրների շրջանակը բավականաչափ ընդլայնվել է՝ ենթադրելով այդ ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացում: Շրջակա միջավայրի պաշտպանության հարցերն ուղղակիորեն առնչվում են երկրի տնտեսական և սոցիալական զարգացման հիմնախնդիրների հետ, քանի որ ցանկացած տնտեսական գործունեություն իր ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի վրա:

Սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլը բնութագրվում է շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրների խորացմամբ: Բնապահպանական իրավախախտումների բացասական հետևանքները ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ հասարակության

¹ “Право природопользования в СССР”, Москва – 1990г, с. 17.

բնականոն զարգացման վրա խիստ զգալի են, ինչով էլ պայմանավորված են մասնագետների շրջանում այդ ուղղությամբ իրականացվող լայն քննարկումները:

Բնապահպանական անվտանգության ապահովման նկատմամբ տնտեսական զարգացման նպատակների առաջնահերթությունը, ինչպես նաև բնօգտագործման կարգավորման տնտեսական մեխանիզմների ցածր արդյունավետությունը ստիպեցին շատ երկրների վերանայել իրենց դիրքորոշումը բնապահպանական հիմնախնդիրների լուծման մոտեցումների վերաբերյալ: Այս առումով, պետք է նշել, որ հանրապետությունում տվյալ ոլորտի պետական կարգավորման համակարգում ավելի շատ գերակշռում են ադմինիստրատիվ-իրավական ներգործության մեթոդները այն դեպքում, երբ շատ երկրների փորձը վկայում է տնտեսական մեթոդների կիրառման արդյունավետության մասին: Այս առումով, մեծ կարևորություն է ձեռք բերում բնօգտագործման տնտեսական մեխանիզմի կատարելագործման հնարավորությունների ուսումնասիրությունը: Վերջինս, ըստ էության, հանդիսանում է բնապահպանական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրների համալրման միջոցներից մեկը և, հաշվի առնելով տնտեսական զարգացման ներկա փուլում պետական ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը, ձեռք է բերում մեծ կարևորություն:

Հարկ է նշել, որ բնօգտագործման տնտեսական մեխանիզմն իր վրա կրում է մի շարք գործոնների ազդեցությունը, որոնք բաժանվում են երկու խմբի՝ տնտեսական և ոչ տնտեսական: Ակնհայտ է, որ առաջինները որոշիչ ազդեցություն են ունենում տնտեսական մեխանիզմի գործունեության արդյունավետության վրա: Այս առումով, որոշակի ուսումնասիրության է արժանի ոչ տնտեսական գործոնների ազդեցությունը: Ընդհանրապես, անգամ ամենաարդյունավետ տնտեսական մեխանիզմի մշակումը դեռևս բավարար չէ պետական կարգավորման գործընթացում դրա մեխանիկական կիրառման համար: Նախ և առաջ, պետք է լուծվի դրա օրենսդրորեն ամրագրման խնդիրը: Այլ կերպ ասած, տնտեսական մեխանիզմի կենսունակության վրա էական ազդեցություն ունի նաև գործնական կիրառման խնդիրը, հատկապես օրենսդրական և այլ իրավական ակտերի պահանջների կատարման առումով: Ընդ որում, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ տնտեսական որոշումների կայացման վրա ազդում է քաղաքական մեխանիզմը:

Հայաստանի Հանրապետությունում առկա են բնապահպանական բազմաթիվ խնդիրներ, ինչպիսիք են՝ մթնոլորտային և տարածքային աղտոտումները, անտառային ռեսուրսների կրճատումը, հողի էրոզիան, անապատացումը, ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը: Այս խնդիրները և վերը նկարագրված իրավիճակը ոչ միայն դժվարացնում, այլև վտանգում են երկրի կայուն զարգացումը և, ի վերջո, իրենց հետադարձ ազդեցությունն են թողնում տնտեսության վրա:

Ժամանակակից էկոլոգատնտեսական իրավիճակի վերլուծությունը և «հասարակություն-բնություն» փոխհարաբերությունների գիտական իմաստավորումը, ինչպես նաև կայուն զարգացման հայեցակարգի գնահատումն ընդգծում են տնտեսական և էկոլոգիական արժեքների համաձայնեցման անհրաժեշտությունը: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է արտադրության և սպառման կառուցվածքներում կատարել համապատասխան վերափոխումներ, որոնք կապված են տնտեսական մեխանիզմի կատարելագործման հետ, և այդ գործընթացը պետք է համապատասխան վարչական աջակցում և ընկալում ստանա հասարակության կողմից:

Բնապահպանության և բնօգտագործման հիմնախնդիրը սերտորեն կապված են սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտի հետ, որը պայմանավորված է մարդու և բնական միջավայրի փոխներգործության գործընթացների հետ, որոնց ուժեղացումը խիստ կերպով ազ-

դում է մարդու օրգանիզմի, կյանքի որակի և հոգեբանական վիճակի վրա: Այն պայմանավորվում է նաև շրջակա միջավայրի պահպանման, վերականգնման և բարելավման անհրաժեշտությամբ:

Այժմ անդրադառնանք ՀՀ հարավարևելյան մասում գտնվող մարզերի՝ Վայոց ձորի և Սյունիքի էկոլոգիական իրավիճակների համառոտ վերլուծությանը:

ՀՀ Վայոց ձորի մարզն ընդգրկում է Վայքի և Եղեգնաձորի տարածաշրջանները: Մարզում ընդգրկված են 44 համայնքներ, այդ թվում 3 քաղաք՝ Ջերմուկ, Վայք, Եղեգնաձոր: Վերջինս հանդիսանում է Վայոց ձորի մարզկենտրոնը, որտեղ բնակչության ընդհանուր քանակը կազմում է 8187 մարդ և մարզում բնակչության թվով առաջինն է:

Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և նրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի հիմնական ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (71մ): Վայոց ձորի տարածքի 4.6%-ը կազմում են բնական անտառները:

Անտառները հանդիսանում են բազմատեսակ և տարածված բնապահպանական համակարգերից մեկը երկրի վրա և կատարում են մի շարք ֆունկցիաներ. դրանք հունք են փայտ և այլ նյութերի արտադրելու համար, ունեն վերականգնողական (ռեկրեացիոն) նշանակություն, իրականացնում են բնապահպանական համակարգային գործառույթ, ընդ որում ջրային և հողային ռեժիմների կարգավորում, ծառայում են որպես կենսաբազմազանության օբյեկտներ և կլանում են ածխաթթու գազը: Անտառների չափազանց շահագործումը, հատվածավորումը (ֆրագմենտացիան), բնական միջավայրի վատթարացումը (դեգրադացիան) և բազմատեսակ հողօգտագործման բաժանումը վտանգում է անտառտնտեսության ռեսուրսները:

ՀՀ էկոլոգիական հիմնախնդիրների շարքում ներկայումս կատարվում է անտառների ֆոնդի վերականգնում: Անտառների ոչնչացման գործում լուրջ և էական ազդեցություն ունեցավ արոտավայրային անտառապահության զարգացումը Հայկական լեռնաշխարհում: Հնէաբանական, հնագիտական և պատմական տվյալները ցույց են տալիս, որ սկսած ուշ քարեդարից անասնապահության զարգացումը անտառների հսկայական զանգվածների ոչնչացման պատճառ է դարձել: Անտառածածկ տարածքները, որոնք նախկինում կազմում էին ՀՀ բնատարածքի 40%-ը, ներկայումս նվազել են մինչև 9.8%, անտառների ոչնչացման առումով մեծ վնաս հասցրեցին միջնադարում Հայաստանը նվաճած մոնղոլ-թաթարական և թուրք քոչվոր ցեղախմբերը: Անասունների գլխաքանակի ավելացումն ուղեկցվում էր արոտավայրերում դրանց ծանրաբեռնվածության ավելացմամբ, արժեքավոր խոտաբույսերի փոխարեն ոչ արժեքավոր և թունավոր տեսակների տարածմամբ և այլն: Անասնապահության զարգացումն, իր հերթին, առաջ բերեց անտառների մակերեսների կրճատում և հողածածկի որակի կտրուկ անկում: Տնտեսապես արժեքավոր կաղնու և հաճարենու անտառներն իրենց տեղը զիջեցին բոխու անտառներին, իսկ անասունների արածեցման վայրերում հայտնվեցին անտառային և թփուտային օտար տեսակներ: Կտրուկ կրճատվեցին անտառային զանգվածները, հատկապես դրանց վերին և ստորին սահմանները: Տափաստանային խոտածածկույթներում ավելացան այլախոտերի տեսակները, իսկ բարձր լեռնային գոտում նվազեցին մի շարք արժեքավոր կերաբույսերի տեսակները:

Վայոց ձորի սոցիալ-տնտեսական խնդիրները գտնվում են պետության ուշադրության ներքո: Մինչև այսօր շրջանը համարվում է զարգացման փուլում, իսկ ապագայում հանրապետության տարածաշրջաններից գրավելու է առաջատար դերը: 2009թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Վայոց ձորի մարզում գրանցված է եղել 2490 ՓՄՁ սուբյեկտ, որը կազմում է հանրապետ-

տությունում գրանցված ՓՄՁ սուբյեկտների 1.9%-ը: Միայն 2008թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզում գրանցվել է 373 ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով շուրջ 451 նոր աշխատատեղ: ՀՀ Վայոց ձորի մարզում 1000 բնակչի հաշվով գրանցված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2008թ.ն կազմել է 45¹:

Վայոց ձորի մարզում կան անհրաժեշտ պայմաններ տնտեսության զարգացման համար: Խաղողի հայրենիքի՝ Արենիի գինու գործարանի ծավալի աճն ապահովելու նպատակով մշակվել են 700 հա նոր խաղողի այգիներ, ուստի շատ կարևոր է ջրի հարցը, առանց որի հնարավոր չէ ոռոգել հողատարածքները: Կառավարության օժանդակության ներքո կառուցված են երկու ինքնահոս ջրատարներ, որոնք սնում են 7 հազ.հա տարածքներ:

Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի հետ միացնող ավտոմայրուղին, որն էական դեր է կատարում մարզի տնտեսության զարգացման գործում: Մարզում ընդհանուր առմամբ զբաղվում են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 187792 հա, այդ թվում վարելահողերը՝ 46757 հա:

Շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտությունն իր հերթին ենթադրում է տնտեսական ակտիվության նոր որակի ապահովում, նպաստում է լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, մասնավորապես, էկոլոգիական ուղղվածության ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը:

Այսպիսով, հաստատվում է այն դրույթը, որ տնտեսության զարգացումն անհրաժեշտ պայման է գերակա էկոլոգիական հիմնահարցերի լուծման համար: Հետևաբար, ժամանակակից տնտեսագիտությունը և բնօգտագործման կազմակերպումը պետք է հաշվի առնեն նշված հասկացությունները և սահմանեն ռացիոնալ հարաբերակցությունը սպառման, արտադրության զարգացման մակարդակների ու էկոլոգիական գործոնների միջև:

ՀՀ Սյունիքի մարզը (մարզպետարանը) ձևավորվել է 1996 թվականից և բաղկացած է 60 համայնքներից, որի կազմում են ընդգրկված 6 քաղաքներ՝ Կապան, Գորիս, Միսիան, Դաստակերտ, Մեղրի, Ագարակ:

2009թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Սյունիքի մարզում գրանցված է եղել 6591 ՓՄՁ սուբյեկտ, որը կազմում է հանրապետությունում գրանցված ՓՄՁ սուբյեկտների 5%-ը: Միայն 2008թ. ընթացքում ՀՀ Սյունիքի մարզում գրանցվել է 1005 ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով շուրջ 1275 նոր աշխատատեղ: ՀՀ Սյունիքի մարզում 1000 բնակչի հաշվով գրանցված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2008թ. կազմել է 43²:

Կապան քաղաքը նախկինում եղել է Կապանի շրջանի վարչական կենտրոնը, իսկ 1995թ. վարչատարածքային բարեփոխումից հետո Սյունիքի մարզի մարզկենտրոնն է (բնակչությունը՝ 34656 մարդ): Քաղաքի գրաված տարածքում շատ են պղնձի հանքավայրերը, ինչի հիման վրա ավանը կոչվել է Մադան, այսինքն՝ հանքավայր: Կապանի անվանումը կապված է միջնադարյան Կապան քաղաքի անվան հետ: Այն 10-րդ դարի վերջին Սյունիքի մայրաքաղաքն է եղել և գտնվում է այժմյան քաղաքից 16-17կմ դեպի արևմուտք, Ողջի գետի բարձրադիր աջափնյակում և ըստ այդ դիրքի կոչվել է Կապան՝ «լեռնանցք»:

Քաղաքն ունի համեմատաբար զարգացած արդյունաբերություն: Նրա արդյունաբերական ճյուղերից են պղնձի արդյունաբերությունը, որը տալիս է արդյունաբերական համախառն արտադրանքի մեծ մասը: Պղնձի հանքերը հայտնի են եղել դեռևս միջին դարերից, սակայն դրանց արդյունաբերական շահագործումը սկսվել է 19-րդ դարի 2-րդ կեսից: Այդ ժամանակվանից խտանյութը և հանքաքարը ձուլման է ուղարկվել Ալավերդի: 1960-ական թթ. շա-

¹ Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն, 2008, էջ 44:

² Նույն տեղում, էջ 43:

հագործվել է նոր, ավելի հզոր հարստացուցիչ ֆաբրիկան՝ մեքենայացված և ավտոմատացված կոմբինատով: Քաղաքն ունի մեքենաշինական ձեռնարկություններ, որտեղ արտադրվում են սարքավորումներ, ոչ պարենային սպրանքներ, կահույքի արտադրություն, դեղաբույսերի արտադրություն, ունի նաև զարգացած սննդի արդյունաբերություն, այստեղ արտադրվում են մսամթերք, կաթնամթերք, պանիր, հացաբուլկեղեն, հրուշակեղեն, զովացուցիչ ըմպելիքներ և այլն:

Մյունիքի ընդհանուր անտառային ֆոնդը կազմում է 94825 հա, ներառյալ 68912 հա անտառները և 25913 հա թփուտները: Մյունիքի մարզի անտառածածկ տարածքները մարզի հարավային հատվածում են, և դրանց մի մասը ներկայացված է նաև արգելոցների ու արգելավայրերի տեսքով: Մարզի դիրքը և ռելիեֆը նպաստել են կենսաբազմազանության մեծ տեսականու ձևավորմանը: Մյուս կողմից մարզը ենթարկվում է մարդածին և տեխնածին մի շարք գործոնների ազդեցությանը: Իսկ դրա հետևանքը պարզ է՝ բնական միջավայրի, էկոհամակարգերի և դրանց համակեցությունների տեսակային կազմի փոփոխություն, կենսապաշարների գերօգտագործում, աղտոտում:

Մյունիքում արգելոցներն ու բնության հուշարձանները կազմում են մարզի մակերեսի մոտ 10%-ը:

Մարզի հանքային պաշարներով՝ մետաղներով, քարերով հարուստ ընդերքը հանքարդյունահանվում է, որը սոցիալ-տնտեսական դրական հանգամանքի հետ մեկտեղ բնապահպանական բազում խնդիրներ է առաջացնում: Հիմա էլ հանքային պաշարներ են հետազոտվում, սա նշանակում է՝ ինչքան շատանան հանքավայրերը, այնքան կմեծանա շրջակա միջավայրի աղտոտվածությունը, կվտանգվեն անտառները:

Մարզում զարգացած է գյուղատնտեսությունը, մերձքաղաքային տնտեսությունը: Պետական նշանակության հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արտավայրեր, վարելահողեր, պտղատու այգիներ, խոտհարքեր: Մարզում զբաղվում են բանջարաբուստանային, կերային, հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Չարգացած է կաթնամսատու անասնապահությունը, խոզաբուծությունը, ունի թռչնաբուծական ֆաբրիկա: Բուծում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ:

Մարզի համար կարևորվում են մի շարք հիմնախնդիրներ: Առաջնային են համարվում բնապահպանական հարցերը: Պղնձի կոմբինատի մթնոլորտ արտանետված թունավոր նյութերի շնորհիվ քաղաքում խիստ աղտոտված է օդային, ջրային ավազանը: Ընդարձակ տարածքներ են զբաղեցնում հանքաքարի թափոնները:

Կապանի և Քաջարանի հանքադաշտերը զբաղեցնում են մի քանի տասնյակ քառակուսի կիլոմետր տարածություն՝ իրենց մեջ ընդգրկելով բազմաթիվ հանքեր ու հանքախմբեր:

Ներկայումս նույնպես հանքարդյունաբերության դերը շատ մեծ է և կարող է դառնալ այն հիմնասյուներից մեկը, որի վրա կբարձրանա Հայաստանի տնտեսությունը:

Սակայն միևնույն ժամանակ արդի ժամանակաշրջանում տարակուսանք չի առաջացնում այն փաստը, որ մարդու տնտեսական գործունեությունը, հատկապես հանքարդյունաբերության բնագավառում, անվերադարձ ազդեցություն է թողնում շրջապատող միջավայրի վրա՝ վատացնելով նրա որակը և հանդիսանալով մի շարք խնդիրների պատճառ, որոնք կենսականորեն կարևորագույնն են մարդկության և ընդհանրապես կենդանի աշխարհի համար: Քանի որ պղինձը դասվում է օգտակար հանածոների շարքին, որը համարվում է սպառվող և չվերկանգնվող ռեսուրս, այսօր կարևորվում է նաև այդ պաշարների ռացիոնալ օգտագործումը, հանքաքարից օգտակար միներալների առավելագույն կորզումը և մարդկային պահանջ-մունքների վերանայումը:

Այսպիսով, մեր կարծիքով, ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի կառավարման համակարգի գործունեությունը շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման բնագավառներում դեռևս չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Դա միասնական ազգային էկոլոգիական քաղաքականության բացակայության հետևանքն է, մասնավորապես բնապահպանական գործողությունների արդյունավետության գնահատման և էկոլոգիական պլանավորման բնագավառներում:

Հանրապետությունում դեռևս ձևավորված չէ էկոլոգատնտեսական հաշվառման ժամանակակից համակարգ, որի գործունեությունը հնարավորություն է տալիս գնահատել և հսկել զարգացման էկոլոգիական ընթացքը, հատկապես մակրոտնտեսական ցուցանիշների օգնությամբ:

Վերջերս ընդունված «ՀՀ շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագիրը» (ՇՄՊԳԱԾ-2), որի նպատակն էր մշակել ազգային բնապահպանական ռազմավարական նոր ծրագիր հինգ տարվա կտրվածքով (2008-2012թթ.) առաջարկում է Հայաստանում համապարփակ բնապահպանական կառավարման ընդհանուր շրջանակների սահմանները, որի միջոցով կօպտիմալացվի երկրի բնական ռեսուրսների օգտագործումը և միաժամանակ կհստակեցվի բնապահպանական քաղաքականությունը, ինչը ուղղված կլինի ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում առկա բնապահպանական խնդիրների լուծմանը, այլև երկրի ընդհանուր կայուն զարգացմանը:

Եվ այսպես, մարդիկ չեն կարող իրենց հայեցողությամբ հրաժարվել շրջակա միջավայրի պահպանության բնօգտագործման խնդիրները լուծելուց կամ էլ շրջանցել դրանք, քանի որ, և այս միտքը արդեն ապացուցված է. տվյալ պրոբլեմի պատճառները օրգանապես կապված են հասարակության արտադրական ուժերի աճի, գիտատեխնիկական առաջընթացի, բնակչության աճի, քաղաքաշինության զարգացման, տեխնիկական արտադրության կատարելագործման հետ և այլն: Ավելին, մարդիկ ոչ միայն չեն կարող խուսափել բնությունը պահպանելուց, նաև չեն կարող հասնել այդ հիմնախնդրի միանգամյա լուծման: Հակառակ դեպքում մարդկությունը կհայտնվի ոչնչացման եզրին: Այսօր էլ շարունակում է արդիական մնալ Օ.Ս.Կալբասովի այն միտքը, թե բնության պահպանությունն ու ռացիոնալ բնօգտագործումը մարդկության բարգավաճման օբյեկտիվ պայման է¹:

Եվ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում բնօգտագործման կառավարման օրենսդրական դաշտը բավականին հարուստ է օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, այնուամենայնիվ, հանուն հայ ազգի ներկայի և ապագայի բարգավաճման, կարելի է գոնե աշխատել կիրառել այդ օրենքները, որպեսզի դրանք չլինեն լոկ թղթի վրա գրված, այլ կիրառվեն մեր իրականությունում:

¹ Колбасов О.С. “Экология. Политика – право”, М-1976, стр. 27.

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՈՐԱՄՈԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ՅԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ՀՀ հակաճգնաժամային միջոցառումների ծրագրի¹ կետերից մեկը ինովացիոն հանճա-
ժողովի ձևավորումն ու դրան առնչվող բիզնես նախագծերի մշակմանն ու նախապատրաստ-
մանն աջակցումն է: Այսպիսով, կարևորվում է նորամուծությունների դերը տնտեսական ճգնա-
ժամի հաղթահարման գործընթացում:

Հակաճգնաժամային կառավարման գործընթացում ամբողջ արդյունաբերության մա-
կարդակով կիրառվում են նորամուծության հետևյալ տեսակները.

1. Նոր արտադրատեսակների ստեղծում, որոնք դեռ հայտնի չեն սպառողներին կամ արտադրանքի որակի նոր՝ ավելի բարձր մակարդակների ստեղծում:
2. Արտադրական նոր՝ ավելի արդյունավետ մեթոդների ու միջոցների ստեղծում և կիրառում, որոնք մինչ այդ չեն կիրառվել արդյունաբերության համապատասխան ճյուղերում և որոնց հիմքում ընկած են գիտական նոր հայտնագործությունները:
3. Սպառման նոր շուկաների յուրացում:
4. Հումքային, նյութական ռեսուրսների և կիսաֆաբրիկատների նոր աղբյուրների ստեղծում և կիրառում:


Արդյունաբերական ձեռնարկությունների մակարդակով նորամուծությունների ստեղծման և կիրառման մեխանիզմները ճգնաժամի հաղթահարման գործընթացում ներկայացված է գծապատկեր 1-ում:

Արդյունաբերության համակարգում նորամուծության վերականգնման հիմնախնդիրները ճգնաժամային պայմաններում գնահատվել են մշակող արդյունաբերության արտադրանքի գիտատեխնիկական մակարդակի բարձրացման նկատմամբ ներկայացվող պահանջների ապահովման տեսանկյունից: Այդպիսի գնահատումը միաժամանակ ենթադրում է այդ արտադրանքի թողարկման առաջընթաց տեմպերի ապահովում և ճյուղի կենսացիկլի ընդհանուր տևողության կրճատում, ընդ որում առանձնացվում են կենսացիկլի գիտահետազոտական, կոնստրուկտորական-նախագծային, տեխնոլոգիական, փորձարարական և թողարկման հատվածները:

Այդ հատվածների կրճատման ու նոր կենսացիկլի ստեղծման դեպքում բարձրանում է արտադրության ինտենսիվությունը, արագանում են նոր արտադրանքը սպառող ձեռնարկու-
թյունների արտադրանքի նորացման տեմպերը, բարձրանում է տեխնիկական մակարդակը, թողարկվող արտադրանքի գիտատեխնիկական աստիճանը: Այստեղից էլ առաջանում են մեքենաշինության զարգացման այն հիմնախնդիրները, որոնցից կարելի է առանձնացնել.

¹ Հակաճգնաժամային միջոցառումների ծրագիր:
(Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Հայաստանի Հանրապետության վարչապետի ելույթից բխող միջոցառումների ցանկը), <http://www.gov.am/am/Anticrisis/>:

Հակաճգնաժամային կառավարման գործընթացում նորամուծությունների ստեղծման և կիրառման մեխանիզմը արդյունաբերական ձեռնարկությունների մակարդակով²



1. Ձեռնարկությունների դասակարգումը, ըստ դրանց տեխնիկայի, տեխնոլոգիաների, նյութական ռեսուրսների և թողարկվող արտադրանքի համասեռության,
2. ճյուղի ձեռնարկությունների կոռպորացման և ինտեգրման ուղղությունների հիմնավորումը,
3. նորարարությունների և նորամուծության նախադրյալների գնահատումը,
4. հարկային և վարկային արտոնությունների պետական աջակցումը,
5. միջազգային գիտաարտադրական համալիրների վերականգնումը,
6. ճյուղային կառուցվածքային նոր տեղաշարժերի ձևավորումը, որը պետք է ուղղված լինի ինչպես ամբողջ ճյուղի, այնպես էլ ձեռնարկությունների տեխնիկական վերարտադրությանը,
7. արտադրության կենտրոնացումը՝ ըստ արտադրության և արտադրանքի տեխնիկական համասեռության, որը թույլ է տալիս բարձրացնել ճյուղի նորամուծության ակտիվու-

² Менеджмент организации. Под общей ред. В.Е. Ланкина. Таганрог: ТРТУ, 2006, с. 253.

թյունը և կրճատել ԳՀՓԿԱ-ի վրա կատարվող ծախսերը,

8. նոր ճյուղային կառուցվածքի ստեղծումը, կառուցվածքային տեղաշարժերի ձևավորումը, որը կապված է արտադրության և թողարկվող արտադրանքի գիտատեխնիկական մակարդակի բարձրացման, նոր հումքանյութերի օգտագործման, ինտեգրացման և ներդրումային ռեսուրսների ապահովման հետ,
9. արտադրանքի տեխնիկական մակարդակի բարձրացման միջոցառումների ապահովումը, որը հնարավոր է համատեղ ձեռնարկությունների կազմակերպման, վերջնական սպառման արտադրանքի թողարկման և հավաքող ձեռնարկությունների ստեղծման միջոցով,
10. կոնստրուկտորատեխնոլոգիական գիտահետազոտական կենտրոնի ստեղծումը, որը կարող է հիմնավորել ինկուբացիոն, չափագիտական, կլաստերային, տեխնոպարկային և այլ ծառայությունների ստեղծման կազմակերպությունների ձևավորման անհարժեշտությունը:

ՀՀ նորամուծության համակարգում և դրա ճյուղային կառուցվածքում պետք է առանձնացնել.

- հաստոցագործիքային արդյունաբերությունը, որտեղ թողարկվում են հատուկ սարքավորումներ, կոմպլեքտներ, պոմպեր, ավտոգեն կառույցներ և հարմարանքներ,
- էլեկտրատեխնիկական համակարգը, որտեղ թողարկվում են մալուխային արտադրանք, էլեկտրաշարժիչներ, գեներատորներ, կոմուտացիոն ապարատներ և լուսատեխնիկական սարքավորումներ:
- սարքաշինությունը և էլեկտրոնային ճյուղերը, որտեղ թողարկվում են էլեկտրասարքեր, չափիչ ապարատներ, ռելեներ և այլ արտադրատեսակներ:

Մեքենաշինության ենթաճյուղերի նորամուծության զարգացման համար, որպես հիմնական ուղղություններ պետք է համարել այն ձեռնարկությունների և ճյուղերի զարգացումը, որոնց արտադրանքը ենթակա է նորացման և որտեղ արտադրության և արտադրանքի տեխնիկական համասեռության վրա հնարավոր է կազմակերպել ուղղահայաց ինտեգրացիա և հետևաբար ստեղծել համատեղ ձեռնարկություններ, ինչպես նաև՝ արտադրանք հավաքող կազմակերպություններ: Մեքենաշինության զարգացման խնդիրների լուծումը կապված է դրա արտադրության կենտրոնացման հետ, որը կարելի է իրականացնել տեխնիկապես համասեռ հաստոցների և դրանց հիմնական հանգույցների արտադրական կարողությունների ծավալի ավելացման ճանապարհով: Արտադրության կենտրոնացումը պահանջում է կապիտալի նոր կառուցվածքի ստեղծում, որը թույլ է տալիս թողարկել վերջնական սպառման արտադրանք, ինչի արդյունքում մեքենաշինական ձեռնարկությունները կարողանում են ապահովել երկրի առանձին ճյուղերի տեխնիկական պահանջները և արտադրանքի արտահանումը: Այժմ մեքենաշինության կենտրոնացումը հիմնականում արտահայտվում է էլեկտրական, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրության ուղղություններով:

Մեքենաների և սարքավորումների արտադրության ենթաբաժնի ամենախոշոր խումբը հաստոցների արտադրությունն է: Այս խմբի մեջ մտնում է մետաղահատ հաստոցների, փայտամշակման, դարբնոցային, էլեկտրագոդման, մեխանիկական գոդման համար անհրաժեշտ սարքավորանքի և այլ տիպի հաստոցների արտադրությունը: 2001-2008թթ. այս խումբը պահպանել է իր գերակշիռ դիրքը՝ ենթաբաժնի ընդհանուր արտադրանքի մեջ տատանվելով 31-50%:

Մետաղագործության համար մեքենաների և սարքավորումների արտադրության խումբն է, որը ներառում է հատկապես շինարարական մեքենաների և սարքավորումների, սննդամթերքի, խմիչքների, ծխախոտի արտադրություն, մանածագործական արտադրություն, թղթի, սովարա-

թղթի արտադրություն, մեքենաների և սարքավորանքների արտադրություն և այլն: Խումբը 2001-2008 թթ. գրեթե պահպանել է իր կշիռը ընդհանուրի մեջ՝ տատանվելով 16-28%: «Մեխանիկական սարքավորանքի արտադրություն» խումբը, որն ընդգրկում է շարժիչների, տուրբինների, պոմպերի, կոմպրեսորների, առանցքակալների և այլնի արտադրություն, իր կշռով երրորդն է: Նրա տեսակարար կշիռը 2001-2008 թթ. տատանվել է 14-18% սահմաններում:

Մեքենաշինության ոլորտում որպես հակաճգնաժամային միջոցառում, անհրաժեշտ է մշակել և ներդնել մոնիթորինգի համակարգ, որը թույլ կտա կանխատեսումներ կատարել և մշակել զարգացման ռազմավարության սցենարներ:

Դրա համար անհրաժեշտ է՝

- նյութական ռեսուրսների ապահովման և օգտագործման գնահատում,
- նորամուծության տեսակների յուրացման և թողարկման հիմնավորում:

Նյութական ռեսուրսների օգտագործման մոնիթորինգը պետք է ընդգրկի՝ տեղական բնական ռեսուրսներից ստացվող նոր հումքանյութային ռեսուրսների արտադրություն

- ներմուծվող նյութական ռեսուրսների օգտագործում, որը կապված կլինի նորամուծության արտադրանքի թողարկման և արտահանման հետ:

Որոշ ձեռնարկությունների գործունեության համար անհրաժեշտ են մետաղյա ռեսուրսներ և կիսապատրաստուկներ: Էլեկտրատեխնիկայի և հեռահաղորդակցման սարքավորումների արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսների կազմում գերակշռում են պղնձի, մալուխների և տարբեր տիպի ռադիո, էլեկտրա կիսապատրաստուկներ: Մեքենաշինության նշված ենթաճյուղերի աճը կախված է մետաղյա ռեսուրսների ներմուծումից, այդ առումով պետք է ներմուծել այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ինչպես գիտատեխնիկական բարձր մակարդակով արտադրանքի թողարկման, այնպես էլ բարձր տեխնոլոգիաների կիրառման համար:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ՀՀ մեքենաշինության ռեսուրսաօգտագործման ու բարձր տեխնոլոգիաների կիրառման մակարդակը, ներմուծման և արտահանման տեսակետից ընդհանուր առմամբ բավարար չէ: Այժմ մեքենաշինությունը արտահանում է 200 տեսակի արտադրանք, որից ընդամենը 14-ն են մասնագիտացված, այսինքն, ընդամենը 8%-ը, որը ամբողջովին չի համարվում նորամուծության արտադրանք:

Ըստ այդմ, ճյուղի նոր արտադրանքի թողարկման և ռեսուրսների արդյունավետ օգտագործման իրականացման համար անհրաժեշտ հիմնական խնդիրներն են.

- մշակել մեքենաշինության զարգացման և ճյուղային կառուցվածքի ձևավորման ուղղվածությունը,
- գնահատել ճյուղի զարգացման գործոնները և կառուցվածքային տեղաշարժերը, ըստ ձեռնարկությունների արտադրանքի կարևորության,
- բացահայտել գիտատեխնիկական ներուժի հնարավորությունները,
- գնահատել ճյուղային նորամուծության համակարգի ենթակառուցվածքը և դրա դիվերսիֆիկացման հիմնական ուղղությունները,
- բացահայտել արտադրանքի ծավալի, կառուցվածքի և ինդեքսների փոփոխության գործոնները, ինչպես նաև մեքենաշինական արտադրանքի թողարկման կենտրոնացումը:

Մեքենաշինական արտադրանքի ծավալը, տեսակարար կշիռը և ինդեքսները նախորդ տարվա համեմատությամբ³

| Արտադրանքի անվանումը | Արտադրանքի ծավալը (մլն. դրամ) | | | | | | Տեսակարար կշիռը (%) | | | | | | Ինդեքսները (%) | | | | | |
|---|-------------------------------|--------|--------|--------|--------|--------|---------------------|------|------|------|------|------|----------------|------|------|------|------|------|
| | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2008 | 2009 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2008 | 2009 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2008 | 2009 |
| ՀՀ ամբողջ արդյունաբերությունը | 426053 | 536264 | 651920 | 644863 | 739292 | 664523 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 125 | 127 | 122 | 99 | 102 | 92.5 |
| ՀՀ մեքենաշինություն | 14499 | 17341 | 16076 | 17434 | 22304 | 21450 | 3.4 | 3.2 | 2.5 | 2.7 | 2.7 | 2.6 | 135 | 139 | 93 | 91 | 98 | |
| որից՝ | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1. մեքենաների և սարքավորումների արտադրություն | 5821 | 7520 | 6627 | 7560 | 6728 | 6790 | 0.40 | 0.43 | 0.42 | 0.44 | 1.3 | 1.3 | 115 | 132 | 89 | 114 | 83 | 98 |
| 2. գրասենյակային սարքավորումների և հաշվիչ տեխնիկայի արտադրություն | 745 | 1018 | 695 | 634 | 695 | 419 | 0.05 | 0.06 | 0.04 | 0.04 | 0.1 | 0.06 | 144 | 137 | 68 | 91 | 103 | 60 |
| 3. էլեկտրական մեքենաների և սարքավորումների արտադրություն | 3866 | 4495 | 4612 | 5104 | 7434 | 3611 | 0.27 | 0.28 | 0.29 | 0.29 | 1.5 | 0.9 | 129 | 102 | 105 | 102 | 104 | 68 |
| 4. ռադիոյի, հեռուստատեսության սարքավորումների արտադրություն | 827 | 474 | 597 | 686 | 1665 | 489 | 0.06 | 0.03 | 0.04 | 0.04 | 0.3 | 0.02 | 203 | 58 | 126 | 115 | 142 | 68 |
| 5. բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն | 3065 | 3149 | 3257 | 3164 | 5545 | 2601 | 0.06 | 0.03 | 0.04 | 0.04 | 1.1 | 1 | 139 | 104 | 94 | 108 | 107 | 47 |
| 6. այլ տրանսպորտային միջոցների արտադրություն | 165 | 665 | 238 | 233 | 210 | - | 0.02 | 0.04 | 0.01 | 0.01 | 0.0 | 0.0 | 131 | 402 | 36 | 98 | 61 | 45 |

³ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (2009-2010), ՀՀ ԱՎԾ, Երևան, 260-268 էջ:

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակ 1-ից վերջին տարում տեղի է ունեցել մեքենաշինական արտադրանքի առանձին տեսակների բնեղեն քանակի անկում: Մեքենաշինական արտադրանքի բնեղեն քանակի առանձին տեսակների կրճատումը տեղի է ունեցել նրա նյութական ռեսուրսների սակավության և կարողությունների կրճատման պատճառով: Կարողությունների վերականգնումը պահանջում է մեծ ծավալի ներդրումներ և արդիականացում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ մեքենաշինության զարգացման ուղիների և խնդիրների իրականացումը մեծ մասամբ կապված է ԳՀՓԿԱ-ի կատարման ծախսերի ապահովման հետ: Այդ ծախսերը կատարվում են արտադրանքի կոնստրուկտորական բարելավման և թողարկման բարձր տեխնոլոգիաների ներդրման համար:

Մեքենաշինության ԳՀՓԿԱ-ի վրա կատարված ծախսերը տարբեր երկրներում կախված են լինում դրանց մեքենաշինության տեխնիկական մակարդակի գիտատարության աստիճանի բարձրացումից: Մեքենաների ու սարքավորումների արտադրության ծավալում նորամուծություն ցուցաբերած ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՀ-ում կազմում է 27%, Եվրամիության երկրներում՝ 50%: Էլեկտրական, էլեկտրոնային, օպտիկական սարքավորումների արտադրության գծով նորամուծություն ցուցաբերած ձեռնարկությունների տեսակարար կշիռը ՀՀ-ում կազմում է 57%, Եվրամիության երկրներում՝ 53%:

Հաստոցաշինության ոլորտում նորամուծության ակտիվություն դրսևորած ձեռնարկությունների տեսակարար կշիռը շուրջ 2 անգամ փոքր է Եվրամիության ցուցանիշից, այնինչ էլեկտրատեխնիկայի ոլորտում ցուցանիշները գրեթե հավասար են: Այստեղից կարող ենք ենթադրել, որ էլեկտրատեխնիկայի արտադրության ոլորտն ավելի մոտ է եվրոպական չափանիշներին, քան հաստոցաշինականը:

Մեքենաների և սարքավորումների արտադրության գծով ԳՀՓԿԱ-ի վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է՝ ըստ ձեռնարկությունների՝ 2.6%, ըստ ԳՀՓԿԱ իրականացրած ձեռնարկությունների՝ 7% և ըստ ամբողջ մեքենաշինության՝ 2.7%:

Էլեկտրական, էլեկտրոնային, օպտիկական սարքավորումների արտադրության գծով ԳՀՓԿԱ-ի ծավալի տեսակարար կշիռը կազմում է ըստ բոլոր ձեռնարկությունների՝ 3%, ԳՀՓԿԱ կատարած ձեռնարկությունների ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 5%, ըստ ամբողջ մեքենաշինության՝ 6%:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ գիտատեխնիկական աշխատանքների վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռը հաստոցաշինության մեջ ավելի բարձր է, քան էլեկտրատեխնիկայում, այնինչ համաշխարհային տնտեսության մեջ առկա է հակառակ երևույթը՝ էլեկտրատեխնիկայի արտադրությունը պահանջում է գիտահետազոտական աշխատանքների ավելի մեծ տեսակարար կշիռ, քան հաստոցաշինությունը, այդ մասին վկայում է այն փաստը, որ էլեկտրատեխնիկայի արտադրությունը դասվում է բարձր տեխնոլոգիաների օգտագործման և գիտատար արտադրանք թողարկողների շարքին:

Ժամանակակից պայմաններում զարգացած երկրների գիտատար արտադրանքի ծախսերի ձևավորման համար օգտագործվում են հետևյալ գործոնները և պայմանները.

- արտադրության գիտատարության բարձր շարժունակությունը և թողարկվող արտադրանքի նորացման բարձր տեմպերը,
- արտադրանքի քանակական և որակական վերափոխությունները և գիտաարտադրական կառուցվածքի կառավարման բարելավման մեթոդները,

- հիմնական ֆոնդերի ակտիվ մասի նորացման բարձր տեմպերը, որոնք առանձին տեխնոլոգիական զարգացած երկրներում հասնում են մինչև 10-13%, իսկ դրանց գիտատար հատվածում այդ ցուցանիշը կազմում է մինչև 30-35%,
- պետության աջակցումը գիտատար արտադրանքի յուրացման ֆինանսավորման, հարկային, վարկային արտոնությունների տրամադրման գործում:

ՀՀ մեքենաշինության գիտատար հատվածում կարող են ներգրավվել նորամուծության ձեռնարկությունները, որոնք զբաղվում են գիտատար արտադրանքի յուրացման ու թողարկման աշխատանքներով: Չնայած առկա գիտական կազմակերպությունների գոյությանը, միևնույնն է, գրեթե դադարել է գիտատար արտադրանքի մշակումն ու թողարկումը: Այժմ ՀՀ-ում գործում են փոքր և միջին գիտատար կազմակերպություններ, որոնց գիտատար գործունեության համար առաջնահերթ խնդիրը համարվում է ֆինանսավորումը: ՀՀ առևտրային բանկերն ունեն ֆինանսավորման վարկային հսկայական ռեսուրսներ, սակայն դրանց օգտագործումը սահմանափակվում է նրանով, որ անբավարար են վարկերի գրավական ապահովության մեխանիզմները, և բարձր են վարկային տոկոսադրույքները: Ներդրողներն ընտրում են այն գիտատար նախագծերը, որոնք կարող են ապահովել շահութաբերության բարձր աստիճան (20-25%): Այդ առումով առաջարկում ենք գիտատար արտադրանքի մշակման, յուրացման և թողարկման համար ստեղծել նորամուծությունների կենտրոն, որը կարող է անցկացնել գիտատար արտադրանքի թողարկման ընտրություն, որոշել արտադրանքի գերակայելիությունը, մրցունակության հնարավորությունները, ինչպես նաև գիտատարության ներուժը: Մեր երկիրն ունի բարձր մակարդակի ծրագրավորողներ, գիտական ցանցի ստեղծման մասնագետներ, որոնց համակենտրոնացման համար կարևոր դեր ունի պետությունը: ՀՀ-ի համար գիտական ցանցի կազմակերպումը կապված է բարձր տեխնոլոգիաների ստեղծման և ներդրման բարդությունների հաղթահարման հետ: Ժամանակակից պայմաններում լուրջ դժվարություն է ներկայացնում բարձրտեխնոլոգիական շղթայի ձևավորումը: ՀՀ-ում կարևորվում է նաև գործող տեխնոլոգիական միջոցների նորացումը, որը կարող է նպաստել թողարկելու բժշկական տեխնիկայի թողարկմանը: Այսօր ՀՀ տնտեսության գիտական հատվածների զարգացման հիմնական խնդիրը կայանում է հիմնարար և կիրառական մաշկումների ֆինանսավորման մեջ: Եթե ֆինանսավորվի միայն գիտության հիմնարար մասը, ապա դրա հետ չի միանա տեխնոլոգիական շղթան: Հայրենական տեխնոլոգիական հատվածի ձևավորման համար գոյություն չունի ոչ մի մակրոտեխնոլոգիական շղթա: Մենք ունենք առանձին մշակումներ, որոնք չունեն յուրացումներ և վաճառքի շուկաներ: Մինչդեռ զարգացած երկրներում առկա է մակրոտեխնոլոգիական շղթա, որն անընդհատ շարժվում է դեպի միջազգային շուկա: Տեխնոլոգիական շղթայի ստեղծման համար կարևորվում է ներդրումային մոտիվացումը, որն անհրաժեշտ է նաև բարձր տեխնոլոգիական հատվածների ինտեգրացման համար: ՀՀ-ում գոյություն ունեն գիտական մշակումներ, սակայն դրանց շուկայական իրացումը: Եթե գալիք 4-5 տարվա ընթացքում ստեղծված հոլդինգները կարողանան անցկացնել վերակառուցում, նորացնել հիմնական ֆոնդերը, արտադրական կառուցվածքը և ներդնեն տեղեկատվական տեխնոլոգիաներ, ապա կարելի է ստեղծել կայուն և շարժունակ բարձր տեխնոլոգիական հատված: Այդ հատվածի ստեղծման նպատակի ու խնդիրների լուծումը թույլ կտա պահպանել և զարգացնել հայրենական գիտատեխնոլոգիական կարողությունը, բարձրացնել նորամուծական ակտիվությունը, ձևավորել դրա գիտատար կառուցվածքը և տեխնոլոգիական մշակումները ներկայացնել միջազգային շուկաներում: Փորձը ցույց է տալիս, որ այդ հատվածը կարող է նախ հետագոտել ՀՀ արդյունաբերության գիտատարության կարողությունները, մշակել համակարգային մոտեցումներ, որպեսզի դրանց միջոցով

ինտեգրվեն հանրապետության համանման սեկտորները: Երկրորդ՝ ուսումնասիրել նորամուծության ձեռնարկությունների ինտեգրման սկզբունքները, գործունեության տեսակները և ֆինանսավորման աղբյուրները: Չորրորդ՝ գնահատել նորամուծության կազմակերպությունների կադրերի գիտատեխնիկական պատրաստությունը: Հինգերորդ՝ մշակել նորամուծության կազմակերպությունների բիզնեսի զարգացման խնդիրները և ապահովել տեղեկատվական համակարգի ձևավորման պահանջները: Վեցերորդ՝ նորամուծության ներուժի ուսումնասիրման արդյունքները, դրա իրականացման ուղղություններն ու նշանակությունը ներկայացնել պետական քննարկման և բյուջետային ֆինանսավորման:

Այսպիսով, մեքենաշինության նորամուծության խնդիրների լուծումը թույլ է տալիս ստեղծել ճյուղի արտադրանքի գիտատեխնիկական և մրցունակության մակարդակի բարձրացման նախադրյալներն ու գործոնները:

ՎԱԴԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՊՏՏ ասպիրանտ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱԼՅԱՆՍՆԵՐԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մենեջմենթի և մարքեթինգի գրականության մեջ ներկայացված են ռազմավարական այլանսի տարբեր սահմանումներ: Առավել հաճախ օգտագործվում է Բ. Գարետի և Պ. Դյուսոյի կողմից տրված սահմանումը. «Այլանսն ընդհանուր ռազմավարական նպատակին կողմնորոշված, բայց ռազմավարական ինքնուրույնությունը պահպանող ընկերությունների միավորումն է»¹: Ռազմավարական այլանսների ակտիվ ձևավորումը սկսել է 1980-ական թթ. վերջերից, և այսօր արդեն ռազմավարական այլանսները էական դերակատարում ունեն ժամանակակից շուկաներում:

Ջ. Դեյվիսի և Մ. Բլիկլիի² կարծիքով այլանսների ստեղծումն ուղղված է փոխգործակցության յուրաքանչյուր մասնակցի մրցունակության բարձրացմանը: Այլանսներում ընկերությունների միավորումն իրականացվում է մարքեթինգային և լիցենզիոն համաձայնագրերի հիման վրա, համատեղ ձեռնարկությունների ստեղծման միջոցով՝ հաճախ միջազգային խոշոր նախագծերի շրջանակներում:

Ռազմավարական այլանսների տեսության կայացումը և էվոլյուցիան անցել են մի քանի փուլերով: Սկզբնական շրջանում այլանսները ստեղծվում էին առանց ընկերության մարքեթինգային նպատակները հաշվի առնելու՝ որպես գործարքային ծախսերի օպտիմալացման խնդրի լուծում: Այդ իմաստով ռազմավարական այլանսների ձևավորման սկզբունքները համապատասխանում են Ռ. Քոուզի և Օ. Ուիլյամսոնի տեսություններին³:

Հետագայում գիտական հետազոտության վեկտորն ուղղվում է ռազմավարական այլանսների դերի վերլուծությանը՝ որպես միջֆիրմային ինտեգրման յուրահատուկ մոդելի:

Ռազմավարական այլանսների տեսության մեջ լուրջ ներդրում է կատարել Ռոզաբեթ Մոս Կանտերը: Նրա կողմից առաջարկվել է համակարգված, բավականին լայն մոտեցում,

¹ Гарретт Б., Дюссож П. Стратегические альянсы (Пер. с англ.). - М.: ИНФРА-М, 2002.

² Devlin G., Bleakley M. Strategic Alliances – Guidelines for Success. Long-Range Planning, 1988, 21 (5), p. 18-23.

³ Коуз Р. Природа фирмы // Вестник С.-Петербургского университета. Серия «Экономика». 1992. № 4; Williamson О. Transaction Costs Economics and Organization Theory. Journal of Industrial and Corporate Change, 1993, vol. 2.

որը հիմք է տալիս խոսելու ռազմավարական այլանսների ֆեռմենի մասին¹:

Գ. Համելը և Կ. Պրահալադը ռազմավարական այլանսները ստեղծելու և արդյունավետ կառավարելու ունակությունը դիտարկում էին որպես «գլոբալ մրցակցության մեջ հաղթանակի հասնելու» հիմնական պայմաններից մեկը²: Նրանց աշխատությունում դիտարկվում է նաև լրացուցիչ արժեքի ստեղծման արվեստը՝ ռազմավարական այլանսների և գործընկերությունների կառուցման միջոցով:

Չուգահեռաբար վերջին ժամանակներս սկսել է զարգանալ մի մոտեցում, որը վերլուծում է ռազմավարական այլանսները ռազմավարական մարքեթինգի տեսության շրջանակներում: Մարքեթինգային կողմնորոշիչների նշանակությունը ռազմավարական այլանսների մշակման և իրացման ժամանակ մեծանում է կապված մարքեթինգի դերի համընդհանուր բարձրացման հետ:

Մեր կողմից փորձ է արվել առանձնացնել ռազմավարական այլանսների առավելապես մարքեթինգային խնդիրները և կողմնորոշիչները, ինչպես նաև մշակել այդ վերլուծության մեթոդոլոգիան:

Ռազմավարական այլանսների մարքեթինգային բաղկացուցիչը պատմականորեն առանձնացվել է դեռևս նախորդ դարի 80-ական թթ., երբ մի շարք եվրոպական գիտնականներ ինքնատիպ գաղափարներ են արտահայտել արդյունաբերական և ծառայությունների մարքեթինգի ոլորտներում, որոնք էականորեն լրացնում էին մարքեթինգային համալիրի դասական տեսությունը: Պարզվել է, որ այդ շուկաներին բնութագրական է ընկերությունների միջև կայուն և երկարատև գործընկերային փոխհարաբերությունների հաստատումը, որոնցում մատակարարման գինը կողորդինացման մեխանիզմի տարրերից միայն մեկն է: Այդ հարաբերությունները տարբերվում էին ռեսուրսների կոմբինացմամբ, գործընկերների նպատակների բարդ համաձայնեցմամբ, նրանց միջև տեղեկատվության, գիտելիքների փոխանակմամբ և տնտեսավարման այլ անսովոր սկզբունքներով: Ընկերությունների միջև փոխհարաբերությունների համակարգի ավելի լայն տեսակետի տարածման խթան են հանդիսացել ճապոնական ընկերությունների ակնհայտ հաջողությունները քսաներորդ դարի 70-ականների վերջերին և 80-ականների սկզբներին: Խոսքը գնում է ճապոնական առաջատար ավտոմոբիլային կորպորացիաների և նրանց մատակարարների միջև երկարատև գործընկերային կապերի մասին:

Ֆ. Վեբստերը, հավանաբար, մարքեթինգի հայտնի տեսաբաններից առաջինն էր, ով ռազմավարական այլանսները անմիջականորեն կապեց ընկերության մարքեթինգային «էություն» հետ: Ռազմավարական այլանսների դերը այդպիսի լայն իմաստով ներկայացնելով՝ Ֆ. Վեբստերը եզրակացնում է. «Չնայած ռազմավարական այլանսների տեսակների ողջ բազմազանությանը՝ գործնականում դրանք բոլորն էլ պետք է դիտարկվեն մարքեթինգային դիրքերից, քանի որ ենթադրում են գործընկերային հարաբերություններ սպառողների, միջնորդների կամ առկա և պոտենցիալ մրցակիցների հետ՝ նոր տեխնոլոգիաների և ապրանքների մշակման նպատակով»³:

Ընկերությունների մարքեթինգային ռազմավարությունների համակարգում ռազմավարական այլանսների արդիականությունը արտացոլվում է ռազմավարական մարքեթինգի վերաբերյալ վերջին հրատարակություններում տվյալ երևույթի նկատմամբ հետաքրքրության

¹ Кантер Р. Рубежи менеджмента (книга о современной культуре управления). – М.: Олимп-Бизнес, 1999, с. 236.

² Hamel G., Prahalad C.K., Core Competence of the Corporation // Harvard Business Review, 1990, Vol. 67, n.1.

³ Вебстер Ф. Изменение роли маркетинга в корпорации // Классика маркетинга. Составители: Энис Б. М., Кокс К. Т., Москва М. М. – СПб.: Питер, 2001.- с. 141-142.

աճով: Դ. Կրևենսը «Ռ-ազմավարական մարքեթինգ» հիմնարար աշխատության մեջ մասնավորապես նշում է, որ «Ռ-ազմավարական ալյանսները, համատեղ ձեռնարկությունները և մատակարարների և արտադրողների միջև սերտ համագործակցությունը առանձին անկախ ընկերությունների միջև փոխշահավետ համագործակցության օրինակներ են: Մրցակցային առավելության ստեղծումը գնալով ավելի մեծ չափով է կախված այլ ընկերությունների հետ փոխշահավետ կապերի առկայությունից»¹:

Ռ-ազմավարական ալյանսների՝ որպես «ինտեգրման մեխանիզմների», մարքեթինգային նպատակների այդպիսի հաստատում է նաև Կ. Պրահալադի և Վ. Ռամասվամի նոր աշխատությունը, որը նվիրված է ընկերության ռազմավարության մեջ սպառողի դերի փոփոխմանը և ներկա պայմաններում սպառողների, մատակարարների, մրցակիցների, այլ արտաքին սուբյեկտների հետ ընկերության ռազմավարական համագործակցության միջոցով արժեքի համատեղ ստեղծման վճռորոշ դերին: Այդպիսի համատեքստում ռազմավարական ալյանսները դառնում են «արժեքի համատեղ ստեղծման հարացույցի»՝ որպես «անընդհատ փորձարկումների, ռիսկի նվազեցման, ժամանակի խտացման, ներդրումների մինիմալացման և շուկայի վրա ազդեցության ուժեղացման» գործընթացի կարևորագույն մեթոդներից մեկը: «Ոչ մի առանձին ընկերություն միայնակ չի կարող իրականացնել բոլոր վերոնշյալ գործընթացները»²:

Ամերիկյան գիտնականներ Ս. Վարգոյի և Ռ. Լաշի հոդվածում նշվում է, որ ժամանակակից մարքեթինգային համադրույթն ունի լայն և շատ դեպքերում միջգիտակարգային բնույթ: Նրա հիմքում ընկած է գործընկերությունը որպես ունիվերսալ մոտեցում, որը միավորում է շուկայական տարածության հիմնական սուբյեկտներին³: Համանման եզրահանգման է եկել նաև ռուս գիտնական Օ. Տրետյակը, որը այսպես է ձևակերպել մարքեթինգի ժամանակակից բնույթը. «Փոխգործակցությունը և միջֆիրմային կոորդինացումը դառնում են արտադրության և սպառման կապերի իրացման մեխանիզմի առաջատար օղակ: Այդ իսկ պատճառով զարգացող կառավարման մարքեթինգային համադրույթի հիմնական դիտակետը տեղափոխվում է արտադրության և սպառման փոխգործակցության բարդ համակարգում մասնագիտացած շուկայական սուբյեկտների ինտեգրման վրա»⁴:

Այսպիսով, ռազմավարական ալյանսների հետազոտման ելակետային սկզբունքը դրանց առնչությունն է ընկերության ռազմավարական որոշումների ընդհանուր դաշտին, որոնք գտնվում են ռազմավարական մենեջմենթի և ռազմավարական մարքեթինգի սահմանագլխին: Ընդհանուր մեթոդոլոգիական մոտեցումը, որը դիտարկում է ռազմավարական ալյանսները որպես ռազմավարական մենեջմենթի և ռազմավարական մարքեթինգի ածանցյալ մոդել, ներկայացված է գծապատկեր 1-ում:

Ռ-ազմավարական կառավարման համակարգում ռազմավարական ալյանսների ներգրավվածության առանձնահատկությունների վերլուծության համար անհրաժեշտ է որոշակի մեթոդոլոգիայի ընտրություն: Հետազոտության այդպիսի ելակետային մեթոդոլոգիական սկզբունքներից կարող է լինել ռազմավարական կառավարման հիերարխիկ մեխանիզմի մասին հայտնի թեզիսը:

¹ Кривенс Д. Стратегический маркетинг. – 6-е изд.: пер. с англ. – М.: Вильямс, 2008. – с. 222.

² Прахалад К.К., Рамасвами В. Будущее конкуренции. Создание уникальной ценности вместе с потребителями. – пер. с англ. – М.: Олимп-Бизнес, 2006. – с. 259.


³ Варго И., Лаш Р. Развитие новой доминирующей логики маркетинга // Российский журнал менеджмента. 2006. Т 4. № 4.

⁴ Третьяк О. А. Эволюция маркетинга: этапы, приоритеты, концептуальная база, доминирующая логика // Российский журнал менеджмента. 2006. Т 4. № 4, сс. 140-141.

Ռ-ազմավարական ալյանսները մարքեթինգի տեսանկյունից ընկերության ինչպես բիզնես ռազմավարությունների, այնպես էլ գուտ մարքեթինգային ռազմավարության բաղկացուցիչ են:

Գծապատկեր 1

Ռ-ազմավարական ալյանսները որպես ռազմավարական մենեջմենթի և ռազմավարական մարքեթինգի ածանցյալ մոդել



Ընդհանուր կորպորատիվ մակարդակում ռազմավարական ալյանսները կարող են լուծել, օրինակ, ավելի հավասարակշռված ապրանքաշարի ստացման, նպատակային շուկաների ընդհանուր ընդլայնման, կոնստրուկտորական և նորարարական տեխնոլոգիական ենթակառուցվածքների ինտեգրման խնդիրները: Այսպիսի կորպորատիվ ռազմավարական ալյանսի օրինակ է Նիսան-Ռենո ավտոմոբիլային հայտնի ալյանսը:

Բիզնես ռազմավարությունների մակարդակում ռազմավարական ալյանսները սպասարկում են դասական մարքեթինգային խնդիրներ՝ կապված մրցունակ ապրանքի արտադրման, հավատարիմ հաճախորդների բազայի ձևավորման, բրենդների ստեղծման և զարգացման հետ: Այդպիսի ալյանսների ամենահայտնի օրինակը Սոնի-Էրիկսոն ալյանսն է, որի ստեղծումը գործընկերներին թույլ տվեց պահպանել բավականին կայուն դիրքեր բջջային հեռախոսների համաշխարհային շուկայում:

Գործառնական ռազմավարությունների մակարդակում վերլուծությունը պետք է կենտրոնանա տարբեր գործառնական մարքեթինգային ռազմավարությունների վրա, ինչը պահանջում է ինքնուրույն մեթոդոլոգիական բազա ռազմավարական ալյանսների տվյալ տեսակի վերլուծության և դասակարգման համար: Մեր կարծիքով այդպիսի հետազոտության ամենակենսալից էլակետային մեթոդոլոգիական սկզբունք կարող է հանդիսանալ «մարքեթինգային համալիրը», որը մարքեթինգի ժամանակակից տեսության մեջ է մտել որպես պարտադիր և ունիվերսալ մեթոդ: Դա նշանակում է, որ մարքեթինգային «գործառնական» ռազմավարական ալյանսները պետք է դիտարկել դրանց ստեղծման խնդիրների և առանձնահատկությունների տեսանկյունից՝ ապրանքի, գնի, բաշխման և առաջանցման մակարդակներում:

Այս տեսանկյունից ռազմավարական ալյանսները կարող են ձևավորվել որպես «ըստ ապրանքի» ռազմավարական գործընկերություններ՝ ներառելով նաև այնպիսի համեմատաբար նոր երևույթ, ինչպիսին կորբենդինգն է կամ համատեղ բրենդինգը:

Ժամանակակից պրակտիկայում հանդիպում ենք նաև գնագոյացման ոլորտում ընկերությունների համատեղ ռազմավարական որոշումների, ընդ որում, խոսքը գնում է ոչ թե օրենսդրությամբ արգելված հակամրցակցային գնային համաձայնությունների, այլ, օրինակ, «գնումային գործընկերությունների» մասին, որոնց մեջ փոքր և միջին բիզնեսի ընկերություն-

ները միավորվում են հումքի և դետալների գնումների ժամանակ ծախսերի մինիմալացման համար:

Լայնորեն տարածված են նաև ընկերությունների վաճառքի և իրացման քաղաքականության կորորդինացման համար կազմակերպված ռազմավարական այլանսները: Բազմաթիվ են նաև այն ռազմավարական այլանսները, որոնք ստեղծվել են ոչ միայն ապրանքների, այլ նաև գերակա ճյուղային նախագծերի առաջանցման համար: Իմիջային ռազմավարական այլանսները, գործընկեր ընկերությունների ապրանքանշանների «առաջնդման» համատեղ նախագծերը դառնում են մարքեթինգային ռազմավարությունների արդիական տեխնոլոգիաներ:

ՎԱԴԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՊՏՆ ասպիրանտ

ՑԱՆՑԱՅԻՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ռազմավարական ցանցերի (strategic networks)¹ ձևավորումը և զարգացումը նոր ուղղություն է համաշխարհային տնտեսության և շուկաների գլոբալացման պայմաններում: Նման միտումը պայմանավորված է բարձրտեխնոլոգիական ապրանքների սրընթաց զարգացմամբ և տարածմամբ, տեխնոլոգիաների կատարելագործմամբ, ինչպես նաև ժամանակակից շուկաներում ռիսկի բարձր մակարդակով: Այսօր ոչ մի ընկերություն չունի անհրաժեշտ բոլոր ռեսուրսները կայուն մրցակցային առավելության ձևավորման և պահպանման համար: Միջֆիրմային կառուցվածքի առավելությունն այն է, որ ցանցերի շրջանակներում հնարավոր է դառնում մվազեցնել յուրաքանչյուր ընկերության ծախսերը և անհրաժեշտ ներդրումների ծավալը նոր ապրանքների ստեղծման և դրանց շուկա դուրս բերման ժամանակ: Բացի դրանից, ցանցային կառուցվածքի շրջանակներում ընկերությունները հնարավորություն են ստանում ուղղել իրենց սահմանափակ ռեսուրսները սեփական առանցքային ունակությունների ստեղծմանը և պահպանմանը:

Մարքեթինգի և մենեջմենթի գրականության մեջ ներկայացված են ցանցի տարբեր սահմանումներ: Օրինակ, Կ. Կուկը և Ռ. Էմերսոնը² ցանցը սահմանում են որպես գործող սուբյեկտների միջև փոխադարձաբար կախված փոխանակման հարաբերությունների ամբողջություն: Ըստ Խ. Խականսոնի³ ցանցը փոխազդող ընկերությունների համախումբ է, որոնք միավորում են ռեսուրսները համատեղ գործունեության նպատակով շուկայի որոշակի հատվածին ապրանքներ և ծառայություններ ներկայացնելու համար:

Շատ երկրներում ընկերությունները ձևավորում են ցանցեր, որոնք ներառում են մատակարարներին, բիզնես-սպառողներին, ֆինանսական ինստիտուտներին, պետական կառույցներին, հետազոտական կենտրոններին: Արդյունավետության բարձրացման նպատակով,

¹ Գիտական գրականության մեջ միջֆիրմային ցանցերին երբեմն անվանում են «արդյունաբերական ցանցեր» կամ «բիզնես-ցանցեր»:

² Cook K.S., Emerson R. M. Power, Equity and Commitment in Exchange Networks. American Sociological Review, 1978, 43(5): 721-739

³ Hakanson H. (ed.) International Marketing and Purchasing of Industrial Goods: An Interaction Approach. John Wiley & Sons, Ltd.: Chichester, 1982

որին դժվար է հասնել ուղղակի մրցակցության պայմաններում, ընկերությունները ցանցեր են կազմավորում նույնիսկ մրցակիցների հետ:

Ցանցային մոտեցումը հիմնվում է փոխհարաբերությունների մարքեթինգի (relationship marketing) վրա և ենթադրում է ամուր փոխհարաբերությունների սահմանում և զարգացում մատակարարների, գնորդների և արտաքին գործընկերների հետ:

Ցանցի ներսում փոխհարաբերություններն իրենցից ներկայացնում են հետևյալ կապերի ամբողջությունը.

- տնտեսական՝ մատակարարման և վճարման բացառիկ պայմանները,
- իրավական, օրինակ, երկարատև պայմանագրերը,
- տեխնիկական՝ ապրանքների, տեխնոլոգիաների և բիզնես-գործընթացների ադապտացումը,
- կոգնիտիվ, օրինակ, գործընկերոջ մասին տեղեկատվությունը,
- սոցիալական՝ փոխադարձ վստահությունը և անձնական բարեհաճությունը:

Ցանցերն առաջանում են որոշակի մշակութային, պատմական և ինստիտուցիոնալ համակարգի շրջանակներում և ենթարկվում են անընդհատ էվոլյուցիոն փոփոխությունների: Վ. Ռադաևը¹ մասնավորապես նշում է ստվերային տնտեսության ուժեղ ազդեցությունը, որի տակ հասկացվում է ֆիրմայի տնտեսական գործունեությունը, որը չի արտացոլվում ընկերությունների միջև ձևական պայմանագրերում: Հուբերի և Վորգոտերի² կարծիքով կարելի է առանձնացնել ցանցերի երկու միանգամայն տարբեր տեսակներ՝ «գոյատևման» ցանցեր և ձեռնարկատիրական ցանցեր: Ձեռնարկատիրական ցանցի շրջանակներում ընկերությունների ղեկավարների հիմնական խնդիրը ցանցի շուկայական դիրքերի ամրապնդումն ու շահույթի ստացումն է, այն դեպքում, երբ «գոյատևման» ցանցի մեջ մտնող ընկերությունների ղեկավարները ներգրավվում են որոշակի սահմանափակ ռեսուրսների տիրապետումից առավելությունների կորզման լայնամասշտաբ պայքարի մեջ (ինչը մեծամասամբ չի էլ ենթադրում ինչ-որ արտադրական գործունեության իրականացում)՝ կիրառելով ազդեցության ոչ այնքան շուկայական, որքան վարչական և քաղաքական լծակներ: «Գոյատևման» ցանցերը բաղկացած են այնպիսի ընկերություններից, որոնք չեն տեսնում իրենց գոյատևման հեռանկարը շուկայական մրցակցության պայմաններում: Ընդհակառակը, նրանք միավորվում են ցանցի մեջ մտնող ընկերություններին շուկայական մրցակցությունից մեկուսացնելու նպատակով: Իսկ այդպիսի ցանցի կառուցվածքը մեզանում հիմնվում է խորհրդային շրջանում ձեռք բերված կապերի վրա: Ձեռնարկատիրական ցանցերը, ի տարբերություն «գոյատևման» ցանցերի, բաղկացած են ընկերություններից, որոնք ձգտում են հաջողությամբ մրցակցել նոր շուկայական պայմաններում՝ զարգացնելով գործունեության առավել շահութաբեր տեսակները:

Առավել քիչ մենաշնորհային ճյուղերում ընկերությունների ցանցերն առանձնանում են առավել մեղմ հիերարխիկ կառուցվածքով, առավել բաց են նոր ընկերությունների մուտքի համար, առավել ճկուն են և նպատակատուղված են շահույթի ստացմանը: Այսօր դրանց թիվը և շուկայական ուժը համեմատաբար փոքր է, բայց ակնհայտ է, որ երկարատև հեռանկարում դրանց թիվն անընդհատ ավելանալու է: Հենց ձեռնարկատիրական ցանցերն են ընկերությունների առջև բացում նոր հնարավորություններ նոր շուկաներում արդյունավետ մրցակցելու և ստեղծում են առանցքային մրցակցային առավելություն ցանցի բոլոր մասնակիցների համար:

¹ Радаев В., Сетевой мир // Эксперт. 2000. № 12. С. 34-37

² Huber P., Worgotter A. Observations on Russian Business Networks // Post-Soviet Affairs. 1998. Vol.14. Iss 1. P. 81-91

ՀՀ ընկերությունների կողմից հարաբերությունների ցանցի ստեղծման հիմնական նպատակներից կարելի է առանձնացնել, մեր կարծիքով, հետևյալները.

1. մտավոր սեփականության ձեռքբերումը,
2. արժեքային շրթայի մեկ կամ մի քանի օղակների նկատմամբ հսկողության սահմանումը (ուղղահայաց ինտեգրում),
3. միասնական բիզնես-ռազմավարության որդեգրումը:

Մտավոր սեփականության ձեռք բերումը: Երկարատև հարաբերությունների կառուցման գործընթացը մտավոր սեփականության ձեռքբերման նպատակով ակնառու ձևով կարող է արտահայտվել դեղագործության ոլորտում: Այդ ոլորտի ձեռնարկությունները գիտահետազոտական ինստիտուտներին տրամադրում են ֆինանսական ռեսուրսներ նոր հետազոտությունների իրականացման համար և ձեռք են բերում արդեն անցկացված հետազոտությունների արդյունքները՝ դրանց հետագա առևտրականացման նպատակով: Նման հարաբերությունները, որպես կանոն, կառուցվում են պայմանագրային հիմունքների վրա՝ փոխադարձ պարտավորությունների խստագույն կատարմամբ և տեխնիկական պայմանների պահպանմամբ:

Արժեքային շրթայի մեկ կամ մի քանի օղակների նկատմամբ հսկողության սահմանումը: Շատ արդյունաբերական ձեռնարկություններ ռազմավարական ռեսուրսների նկատմամբ մեծ հսկողություն սահմանելու նպատակով կազմակերպում են հարաբերությունների ցանցեր արժեքային շրթայի այլ մասնակիցների հետ (հիմնականում մատակարարների հետ): ՀՀ-ում գործարար էթիկան դեռևս չի գտնվում բարձր մակարդակի վրա, այնպես որ սովորաբար միայն հստակ ձևակերպված պայմանագիրը կամ կողմերից մեկի ունակությունը՝ թողնել որոշակի ազդեցություն մյուս կողմի վրա և վերահսկել պայմանագրի կատարման գործընթացը, կարող են երաշխավորել պարտավորությունների կատարումը: Այդ պատճառով շատ ընկերություններ, հատկապես արտասահմանյան, ձգտում են իրենց շուրջը ձևավորել կայուն հարաբերությունների ցանց՝ արժեքային շրթայի մեկ կամ մի քանի օղակների նկատմամբ հսկողության սահմանման համար:

Միասնական բիզնես-ռազմավարության որդեգրումը: Ընկերության զարգացման որոշակի փուլում անհրաժեշտություն է առաջանում ներգրավել գործընկերներին ընդհանուր ռազմավարության մշակմանը և կատարելագործմանը: Սկզբնական շրջանում անհրաժեշտ է, որ գործընկերները ավելի լավ ընկալեն գոյություն ունեցող ռազմավարությունը: Այնուհետև, երբ սերտ կոոպերացումը ինչպես օպերատիվ հարցերի լուծման, այնպես էլ ռազմավարության մշակման գործում դառնում է հրատապ անհրաժեշտություն, սկսում է գործընկերների իրական համագործակցությունը ընդհանուր ռազմավարական հիմնադրույթների ձևավորման նպատակով:

Մենք առաջարկում ենք ՀՀ ընկերությունների ցանցերը դասակարգել ըստ հետևյալ հատկանիշների.

1. ըստ ընկերությունների հարաբերությունների տեսակների՝ երկկողմանի հարաբերությունների ցանցեր և մի քանի մասնակիցների հետ հարաբերությունների ցանցեր,
2. ըստ ցանցի մասնակիցների կազմի՝ ցանցեր սպառողների, մատակարարների և մրցակիցների հետ,
3. ըստ բուն հարաբերությունների բնույթի՝ ձևական կամ պայմանագրային և ոչ ձևական հարաբերություններ:

Այսօր ՀՀ-ում երկկողմանի հարաբերությունների ցանցերը առավել լավ են զարգացած բազմակողմ հարաբերությունների ցանցերի համեմատ: Սակայն կարելի է նկատել բազմակողմ ցանցերի ձևավորման որոշակի միտում, որը պայմանավորված է երկկողմ հարաբերու-

թյունների հետագա զարգացմամբ և միաժամանակ մի քանի գործընկերների հետ հարաբերություններից ընկերության աճող փոխկախվածությամբ:

ՀՀ-ում մի շարք ճյուղերում հումքի շուկան ունի գերակա նշանակություն, ինչը մատակարարներին ապահովում է յուրահատուկ կարգավիճակ: Ուստի, ընկերությունները հիմնական ուշադրությունը սևեռում են երաշխավորված մատակարարումների ապահովմանը: Ընկերության մարքեթինգային գործունեությանը և սպառողների հետ հարաբերություններին նույնպես պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Բայց մատակարարներից և սպառողներից բացի, ցանցի մյուս մասնակիցները ևս՝ բանկերը, գիտահետազոտական ինստիտուտները և պետական կազմակերպությունները կարող են վերահսկել ընկերության համար կարևոր արտաքին ռեսուրսները և պահանջել անընդհատ ուշադրություն ընկերության ղեկավարության կողմից: Այսպես, օրինակ, բանկի հետ երկարատև հարաբերությունները կարող են նպաստել ընկերության գործունեության նոր ուղղության զարգացման համար վարկային գծի տրամադրմանը, գիտահետազոտական ինստիտուտի հետ հարաբերությունների պահպանումը կարող է նոր հնարավորություններ բացել հետազոտությունների անցկացման և նոր տեխնոլոգիաների մշակման համար:

Ինժինիրինգային և ծառայություններ մատուցող ընկերությունները մեծ ուշադրություն են դարձնում սպառողների հետ փոխհարաբերություններին արժեքային շղթայի մնացած մասնակիցների համեմատ, ինչը պայմանավորված է նրանց կողմից առաջարկվող ապրանքների յուրահատկությամբ: Արդյունաբերական ընկերությունների ցանցերը մեծամասամբ հիմնված են մատակարարների հետ սերտ փոխգործակցության վրա, ինչը պայմանավորված է դրանց արտադրական գործընթացի առանձնահատկություններով: Մատակարարների հետ փոխգործակցության աստիճանը այդ ընկերություններում շատ բարձր է և ցանցի կենտրոնական ընկերություններն առաջին հերթին հարաբերություններ են սահմանում և պահպանում հենց դրանց հետ: Հեռահաղորդակցության ոլորտի ընկերությունների ցանցերը առավելապես կազմված են մրցակիցներից: Դա պայմանավորված է հեռահաղորդակցության ոլորտի առանձնահատկություններով, որի դեպքում ընկերությունների մի ամբողջ խումբ կախված է հեռահաղորդակցման միակ օպերատորից:

ՀՀ արդյունաբերական շուկաներում գործունեություն ծավալող ընկերությունների պրակտիկայում կարելի է հանդիպել հարաբերությունների երկու տեսակներին էլ՝ և պայմանագրերի վրա հիմնված, և ոչ ձևական հարաբերությունների: Հարաբերությունների յուրաքանչյուր տեսակը կախված է կոնկրետ ճյուղից: Ոչ ձևական հարաբերություններ առկա են ընկերությունների մեծամասնության գործունեության մեջ:

Այսպիսով, խիստ ձևականացված պայմանագրային հարաբերությունները առավել բնութագրական են հեռահաղորդակցման ոլորտին: Ընդ որում դա վերաբերում է ինչպես հեռահաղորդակցման ծառայությունների օպերատորներին, այնպես էլ հեռահաղորդակցման սարքավորումների արտադրողներին: Հիմնականում դա պայմանավորված է տվյալ շուկաներում խիստ մրցակցությամբ: Այդ ցանցերի սահմաններում շատ ընկերություններ ձգտում են հաստատել կենտրոնական ընկերության հետ բացառիկ հարաբերություններ, որը հիմնված է բացառիկ համաձայնագրի վրա, ինչն էլ կարող է մեծացնել երկու ընկերությունների փոխգործակցության երկարատևությունը:

Ոչ ֆորմալ համաձայնագրերի վրա հիմնված հարաբերությունները առավել բնութագրական են այն ճյուղերին, որոնք առաջարկում են բարդ ապրանքներ և համալիր լուծումներ: Ծառայությունների ոլորտի ընկերությունների ցանցերը նույնպես կառուցված են հիմնականում ոչ ֆորմալ համաձայնագրերի հիման վրա, ինչն առաջին հերթին պայմանավորված է

ցանցի շրջանակներում միասնական ռազմավարությամբ, որին հետևում են դրա բոլոր մասնակիցները:

Եթե 1990-ական թվականների սկզբներին ցանցերը կառուցվում էին առաջին հերթին անձնական կապերի հիման վրա, ապա այժմ նրանք գնալով ավելի են կառուցվում մասնագիտական հենքի վրա: Ինչպես ցույց են տվել հետազոտությունները ընկերությունների միջև երկարատև համագործակցության հիմքում ընկած են.

- ցանցի կենտրոնական ընկերության լավ համբավը, որը ցանցի մյուս մասնակիցների համար երաշխիք է երրորդ ընկերությունների հետ հարաբերությունների սահմանման ժամանակ,
- ցանցի մասնակիցների շուկայական դիրքերի կայունությունը,
- պարտավորությունների փոխադարձ կատարումը,
- գործընկերների միջև տեղեկատվության անընդհատ փոխանակումը,
- ցանցի բոլոր մասնակիցների կողմից միասնական մարքեթինգային ռազմավարության որդեգրումը և կենտրոնական ընկերության կողմից այդ մասնակիցների համակողմանի աջակցությունը,
- սահմանափակ ռազմավարական ռեսուրսների հասանելիությունը,
- ցանցից դուրս գալու բարձր արգելքները
- անձնական ծանոթությունները և կապերը:

Մասնակիցների միջև փոխանակման արդյունքում որքան ավելի շատ ռեսուրսներ և տեղեկատվություն է դառնում ամբողջ ցանցի ընդհանուր սեփականությունը, այնքան ավելի են ուժեղանում ցանցի շուկայական դիրքերը: Այսպես, օրինակ, մատակարարների հետ տեղեկատվության փոխանակման ինտենսիվ գործընթացը կարող է նպաստել նոր ապրանքի մշակմանը: Սպառողների պահանջումներին սեփական ապրանքի համապատասխանության մասին ընկերության տեղեկացվածության աստիճանը իր հերթին նպաստում է ոչ միայն ապրանքի հետագա կատարելագործման գործընթացին, այլ նաև էականորեն նվազեցնում է մրցակցության հնարավորությունը այլ ընկերությունների կողմից:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում անկախության տարիների ընթացքում իրականացված և դեռևս ընթացող քաղաքական, սոցիալ-տնտեսական, հասարակական, հոգևոր-մշակութային և կենսագործունեության այլ կարևորագույն ոլորտները ներառող վերափոխումները կարելի է ներկայացնել որպես համակարգային և լայնածավալ բարեփոխումներ՝ ուղղված համայնքների և տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը: Վերջինս ընդունված է բնութագրել ոչ միայն որպես իշխանության իրականացման համակարգ, այլև ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը:

Այս տեսանկյունից տեղական ինքնակառավարման բնագավառում հարաբերությունների կանոնակարգման ու կատարելագործման հարցերն առանձնակի տեղ են զբաղեցնում ոչ միայն ՀՀ իշխանությունների քաղաքական ծրագրերի և հանրային կառավարման համակարգի արդիականացման ռազմավարության մեջ, այլև ընդգրկված են միջազգային հեղինակավոր կազմակերպությունների առջև ստանձնած պարտավորությունների ցանկում:

Տեղական ինքնակառավարման բարեփոխումներն ընդգրկող ՀՀ կառավարության առաջին ռազմավարական փաստաթուղթը «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրն» է (ԱՀՌԾ), որն ընդունվել է 2003-ին և գործելու է մինչև 2015 թվականը: Թեև ծրագիրը չի տալիս տեղական ինքնակառավարմանը վերաբերող շատ խնդիրների լուծման ուղիները, այսուհանդերձ, այն բարեփոխումների իրականացման ճանապարհին անհրաժեշտ առաջին քայլն էր: ԱՀՌԾ-ում ներկայացված են տեղական ինքնակառավարմանն առնչվող քաղաքականության հետևյալ 13 հիմնական ուղղությունները.

- վարչատարածքային բաժանման օպտիմալացում,
- վարչատարածքային միավորների սոցիալ-տնտեսական ներդաշնակ զարգացում,
- աղքատության բարձր մակարդակ ունեցող փոքր և միջին քաղաքների առաջանցիկ զարգացում,
- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) գործունեությունը կանոնակարգող իրավական դաշտի կատարելագործում,
- համայնքային բյուջեների ձևավորման գործընթացում հրապարակայնության և թափանցիկության բարձրացում,
- ՏԻՄ-երի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների դիմաց սահմանվող վարձավճարների, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի մատչելիության բարձրացում,
- գյուղական, քաղաքային և թաղային համայնքների լիազորությունների շրջանակների տարբերակում և հստակեցում,
- ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացման կարգի օրենսդրորեն սահմանում,
- տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների ու ունակությունների բարձրացում,

- «Տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում,
- միջհամայնքային միավորումներին, դրանց ենթակառուցվածքների ցանցերի զարգացման ֆինանսական աջակցություն,
- միջնակարգ կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների համակարգերի կառավարման տեղական նշանակության գործառույթների աստիճանական փոխանցում ՏԻՄ-երին,
- աղետի գոտու, սահմանամերձ, լեռնային ու բարձրլեռնային, փոքր համայնքներում արտոնությունների, զեղչերի ու հավելումների նպատակային և հասցեական համակարգի զարգացում:

Անցած ժամանակահատվածում տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից նախանշված աշխատանքների մի մասն արդեն կատարվել է, որով, սակայն, բավարար հիմքեր չեն ստեղծվել համայնքների բնականոն սոցիալ-տնտեսական զարգացման և նրանցում առկա ներուժի արդյունավետ օգտագործման և կառավարման համար: Բազում հիմնախնդիրներ, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, այդպես էլ իրենց արժանի տեղը չեն գտել մեր երկրի զարգացման ռազմավարական ծրագրերում, իսկ առանձին հարցերի շուրջ արտերկրում և հայրենական գիտնականների կողմից կատարված բավականին լուրջ հետազոտությունների արդյունքները պատշաճ ուշադրության չեն արժանացել:

Համաշխարհային փորձը վկայում է, որ բնակչության սոցիալական պահանջումների, անվտանգության, կյանքի հարմարավետության, կրթության և բուժապասարկման հասանելիությունը, բնակավայրերում անհրաժեշտ աշխատանքի շուկայի, որակյալ ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծումը ցանկացած երկրի զարգացմանն ուղղված ջանքերում կառավարությունների գլխավոր կողմնորոշիչներն են: Այդ նպատակների իրագործումը հնարավոր է միայն գիտակցված, հետևողական և իրատեսական քաղաքականության մշակման ու իրականացման շնորհիվ, քաղաքականություն, որը կբացառի նախորդ ժամանակահատվածներում տեղ գտած թերություններն ու բացթողումները և միտված կլինի քաղաքացիների կենսամակարդակի ու կյանքի որակի բարելավմանը: Նշվածը ենթադրում է, որ համայնքների հեռանկարային զարգացումը պետք է հիմնվի սոցիալ-տնտեսական զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի ու հայեցակարգերի վրա, որոնք կբխեն առկա իրավիճակի, երկրի տարածքային զարգացման օրինաչափություններից ու միտումների օբյեկտիվ վերլուծությունից:

Իրականում Հայաստանի բոլոր համայնքներն ունեն քառամյա ծրագիր, սակայն շատ քիչ համայնքներում է, որ դրանք համայնքի զարգացման պլանավորման իսկապես լավ մշակված փաստաթղթեր են: Մեծ մասամբ, հատկապես համապատասխան մասնագետ չունեցող փոքր համայնքներում, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի փոխարեն հանդիպում է ձևական և կյանքից կտրված, բարի ցանկությունների շարադրանք, որը նախատեսված ժամկետում գոյատևելուց հետո չնչին փոփոխություններով, կրկին ընդունվում է որպես հաջորդ չորս տարիների զարգացման ծրագիր: Դրա պատճառներից է համայնքների մասին համապարփակ տեղեկատվական շտեմարանների բացակայությունը: Տարիներ շարունակ համայնքներից շատերը բավարարվել են միայն ամենամանրաժեշտ որոշ տվյալներ ձեռք բերելով և դժվարությունների պատճառով չեն ձգտել ունենալ համապարփակ տեղեկատվություն: Հետևաբար, նպատակահարմար է ստեղծել տեղեկատվական բանկ, որը ՏԻՄ-երին կարող է ծառայել հեռանկարային և ընթացիկ նպատակների համադրման, ռազմավարական և ընթացիկ

պլանավորման կազմակերպման, համայնքային քաղաքականության մշակման ու վերահսկողության, ըստ իրավիճակի՝ որոշումների վերանայման ու ռեսուրսների վերաբաշխման, բյուջեի տարբերակների կազմման, կատարված աշխատանքների արդյունավետության գնահատման համար:

Ցանկացած համայնքի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նրա կառավարումից: Կառավարումը, որոշակի գործիքների օգտագործման միջոցով նյութական, մարդկային, ֆինանսական և այլ ռեսուրսների վրա ազդելով, համայնքի նպատակներին հասնելն է: Այդ գործիքները կառավարման տեսության մեջ հայտնի են որպես կառավարման գործառնություններ: Դրանք են՝ պլանավորումը, կազմակերպումը, առաջնորդումը (ղեկավարումը) և վերահսկողությունը:

Պլանավորումը կառավարչական գործունեության սկիզբն ու հիմքն է: Դրանից են բխում կառավարման մնացած գործառնությունները: Բարձրորակ պլանավորումն ապահովում է կառավարման մնացած գործառնությունների հեշտությամբ կատարումը, յուրաքանչյուրի կողմից իր աշխատանքների բովանդակության և վերջնական արդյունքի գիտակցումը, քանի որ առաջադրում է համայնքի նախորդ տարիների գործունեության դիտարկման և ներկա արտաքին ու ներքին իրավիճակների վերլուծության հիման վրա ապագայի իրագործելի նպատակները, նախանշում դրանց հասնելու ուղին: Պլանավորման միջոցով հստակեցվում են համայնքի ապագա գործունեության հիմնական ցուցանիշները, գնահատվում առաջադրված խնդիրների լուծման համար պահանջվող ռեսուրսները: Դրանից ելնելով՝ առաջնահերթ խնդիր է դարձել համայնքների համար քառամյա ծրագրերի կազմման մեթոդաբանության մշակումը, որը կնպաստի այդ ծրագրերի իրատեսության, մշակվածության մակարդակի և կիրառելիության աստիճանի բարձրացմանը, ինչպես նաև դրանց կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացմանը:

Այս տեսանկյունից տեղական ինքնակառավարման մարմինների համար առավել նշանակալի է ռազմավարական պլանավորման դերը համայնքի հեռանկարային զարգացման գործում: Ռազմավարական ծրագիրը պարունակում է համայնքի ապագայի մասին երկարաժամկետ պատկերացումները կամ տեսլականը և այն արդյունքները, որոնց ձգտում են տեղական ինքնակառավարման մարմինները: Ծրագրում վերլուծվում են համայնքի կարողությունները, ներքին ու արտաքին միջավայրերը, նշվում են առաջադրված նպատակներին հասնելու ռազմավարությունները, արտացոլվում են շահառուների վրա հնարավոր ազդեցությունները և հանրային կարիքների բավարարման չափորոշիչները: Ռազմավարական ծրագիրն օգտագործվում է ռեսուրսների բաշխման վերաբերյալ որոշումների ընդունման և բյուջետավարման գործընթացում:

Ռազմավարական պլանավորումը հսկողության տակ է պահում համայնքի ղեկավարի աշխատակազմի գործունեությունը՝ պայմաններ ստեղծելով հաշվետվողականության գործուն համակարգի կիրառման համար: Բացի այդ՝ նման պլանավորման միջոցով կառավարումը կապ է հաստատում բյուջետային միջոցների օգտագործման և համայնքի առջև ծառայած հիմնախնդիրների լուծման միջև, որի արդյունքում բյուջեն դառնում է ռազմավարական նպատակների իրականացման հիմնական միջոցը: Ինչ վերաբերում է նպատակներին, ապա դրանք կարելի է ներկայացնել որպես վերջնական արդյունք, որով պետք է ավարտվի ծրագիրը: Նպատակն արտահայտում է համայնքի զարգացման վերջնական արդյունքները՝ կապված բնակչության բարեկեցության բարձրացման և անվտանգության ապահովման, հասարակական հարաբերությունների զարգացման և ամրապնդման, ապագայի համար ներուժի ստեղծման և պահպանման հետ:

Որոշակի նպատակի կարելի է հասնել՝ մեկ կամ մի քանի ծրագրեր իրագործելով, և ընդհակառակը՝ ծրագիրը կարող է օգնել իրագործելու մի քանի նպատակներ: Հնարավոր է նաև, որ ծրագրի իրականացումը արգելք հանդիսանա այլ նպատակների իրագործմանը: Նպատակը պետք է՝

- պայմանավորված լինի համայնքի կարգավիճակով և առաքելությամբ,
- ապահովի համայնքի գործունեության համար քաղաքականության հստակ ուղղությունը,
- նկարագրի հանրության պահանջը,
- լինի կոնկրետ և հստակորեն սահմանված,
- լինի ուղղորդված դեպի ապագան,
- յուրահատուկ լինի տվյալ համայնքին:

Նման ծրագրի նպատակներն իրագործելու համար ձևակերպվում են խնդիրներ, որոնք բնութագրվում են հասցեով, ժամկետներով և ռեսուրսներով:

Պետության տնտեսությունն ամբողջական համակարգ է իր հիերարխիկ կառուցվածքով, որի գնահատումը, իրավիճակի վերլուծությունը, հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը պետք է կատարվեն նաև ենթահամակարգերում՝ համայնքներում հիմնախնդիրների բացահայտման, ռեսուրսների որոշակիացման և դրանց օգտագործման նպատակահարմար ուղղությունների որոշման հիման վրա: Այլ կերպ, մեր երկրի մակրոտնտեսական զարգացման ծրագրի հիմքում պետք է ընկած լինեն համայնքային զարգացման ծրագրերը: Դրանք, իհարկե, նախօրոք կարող են ուղղորդվել կենտրոնական կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական դրույթների իրականացմամբ, եթե այդպիսիք, որպես գերակայելի ուղղություններ, հիմնավորված են երկարատև ժամանակահատվածի համար՝ այդ նպատակով օգտագործելով համապատասխան շահադրժան մեխանիզմներ համայնքների համար:

Սակայն ծրագրման այդպիսի կազմակերպումը համայնքների մեծ թվի և դրանց ներուժի ու առկա հիմնախնդիրների բազմազանության պատճառով զգալի դժվարություն է ներկայացնում և, ըստ երևույթին, մեծ ծախսերի հետ միասին հազիվ թե կարողանա ապահովել բարձր արդյունավետություն: Խնդրի լուծմանը մեծապես կարող է նպաստել նույն կամ նման (ոչ մեծ տարբերությամբ) բնութագրեր ունեցող համայնքների առանձնացումը որոշակի խմբերում, օրինակ, համայնքների խմբավորումը կամ դասակարգումը՝ ըստ ընտրված բնութագրերի: Դիշտ ընտրված մեթոդի օգտագործմամբ այդպիսի դասակարգումը հնարավորություն կընձեռի որոշակիացնելու համակարգի խմբավորված կամ խոշորացված կառուցվածքի նկարագիրը, ուսումնասիրելու համայնքների զարգացման խմբային օրինաչափությունները, բացահայտելու միանման հիմնախնդիրները, վերլուծելու համայնքների միջև համաժամանակյա և տարաժամանակյա տարբերությունները և հետաքրքրություն ներկայացնող այլ բնութագրեր:

Միաժամանակ, հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարման համակարգը հանրապետությունում դեռևս չի հաղթահարել ձևավորման փուլին հատուկ բոլոր բարդություններն ու հիմնախնդիրները, և ընդամենը 15-ամյա փորձը չի կարող ապահովել սպասվող կամ ցանկալի արդյունքներ: Նշվածը վերաբերում է ոչ միայն համայնքային և միջհամայնքային հարաբերությունների, բնակավայրերի զարգացման ու բնակչության կենսամակարդակի փոփոխությունների դինամիկային, այլև ստեղծված քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված՝ զարգացման ծրագրերի մշակման ընթացքում կիրառվող մոտեցումներին, առանձնահատկություններին և ամենակարևորը՝ համայնքների ֆինանսական հնարավորություններին:

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում ձևավորվել է 1996 թվականից և իր 15-ամյա գոյության ընթացքում շարունակաբար ենթարկվել է բարեփոխումների: Ոլորտի զարգացման և կատարելագործման հիմնահարցերը մշտապես եղել են երկրի կառավարության, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների, հայրենական և արտասահմանյան գիտնականների, հասարակական կազմակերպությունների ուշադրության ներքո, բարեփոխումների ընթացքը պարբերաբար գնահատվել և լուսաբանվել է զանգվածային լրատվամիջոցներում, համաժողովներում, պետական կառավարման մարմինների կողմից ընդունված փաստաթղթերում, գիտական հոդվածներում ու տարբեր հրատարակություններում:

Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքը, որպես կանոն, գնահատվել է ժամանակագրական, կենտրոնական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակների պատասխանատու մարմինների դերի, միջազգայնորեն ընդունված չափանիշների ու ցուցանիշների ապահովման և նախանշված գործողությունների իրականացման դիտակետից: Ընդ որում, կատարված դիտարկումները, տարբեր մակարդակի քննարկումները, գիտական հետազոտությունների արդյունքները և ոլորտում առկա իրավիճակի վերլուծությունը վկայում են, որ մինչև այժմ Հայաստանում ընթացող բարեփոխումները հիմնված չեն համակարգային և համալիր մոտեցումների վրա: Ավելին՝ ՀՀ կառավարության կողմից ապահովված չէ իր իսկ կողմից ընդունված մի շարք ծրագրերի կատարումը, որոնք, այդուհանդերձ, չեն կարող իրենց բնույթով որակվել որպես ռազմավարական: Թերևս, որպես այդպիսին կարելի է նշել «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» և դրան հետևած մի շարք համապետական այլ ծրագրեր, որոնցում պարունակվող առանձին դրույթների կատարումը հնարավոր է դարձնում պատկերացում կազմել բարեփոխումների ընթացքի մասին:

Տեղական ինքնակառավարման կայացած համակարգ ունեցող երկրների փորձի և միջազգային կազմակերպությունների շրջանակում ընդունված համաձայնագրերի (օրինակ, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա) շնորհիվ կարելի է կազմել այդ համակարգի բարեփոխումների վիճակը բնութագրող քանակական և որակական ցուցանիշների համախումբը: Այսպես, Հայաստանը Եվրոպական խորհրդի անդամ երկիր է և նրան անդամակցելիս, ի թիվս բազմաթիվ հարցերի, ստանձնել է նաև տեղական ինքնակառավարմանն առնչվող պարտավորություններ, որոնց շարքում են նաև ժողովրդավարական հասարակության ձևավորումը և այդ նպատակով տեղական ինքնակառավարման համակարգի կայացումը:

Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրականացման սկիզբը դրվեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» ընդունմամբ, որի գործողության ժամկետը սահմանվել է 2015 թվականը: Ծրագրի շրջանակներում ընդունվել են դիտարկվող ոլորտում ծագող իրավահարաբերությունները կարգավորող մի շարք օրենքներ և իրավական ակտեր, կատարվել են աշխատանքներ՝ կապված համայնքների վարչական տարածքներում գտնվող պետական սեփականություն համարվող հողամասերի անհատույց սեփականության

իրավունքով համայնքներին փոխանցելու և համայնքների սահմանները ճշգրտելու, տեղական ինքնակառավարման մարմիններին առանձին հարկերի հավաքագրման, տարբեր ծառայությունների և գործունեության տեսակների կազմակերպման ու իրականացման գործառույթները պատվիրակելու, Երևանին համայնքի կարգավիճակ տալու, Մահմանադրությամբ համայնքների խոշորացման երաշխիքն ամրագրելու, տեղական հարկեր սահմանելու, միջհամայնքային փոխափոխությունների տրամադրման գործընթացը կանոնակարգող կարգը մշակելու հետ և այլն:

Միաժամանակ, չնսեմացնելով անցած տարիներին կատարված աշխատանքները, հարկ է արձանագրել, որ առաջիկայում կպահանջվի ավելի լարված և հետևողական աշխատանք՝ տեղական ինքնակառավարման դերը հանրային կառավարման համակարգում բարձրացնելու և ամրապնդելու, օրենսդրության և գործնական քայլերի միջև խզումները վերացնելու ուղղությամբ: Այս համատեքստում ուշադրության են արժանի կենտրոնական (պետական) կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) փոխհարաբերությունները, վերջիններիս լիազորությունները ըստ ոլորտների, հատկապես հանրային ծառայությունների մատուցման բնագավառում, ընդլայնելու հարցերը:

Այսպես, ի տարբերություն եվրոպական բազմաթիվ երկրների, ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինները լիազորություններ չունեն վերահսկողություն իրականացնելու տարրական, միջնակարգ և տեխնիկական կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, հասարակական կարգի, հրշեջ և քաղաքացիական պաշտպանության և այլ բնագավառներում: Բացի նշվածից՝ փոխանցված որոշ լիազորություններ ՏԻՄ-երի կողմից համայնքներում չեն իրականացվում՝ վերջիններիս փոքր լինելու, համապատասխան ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսների բացակայության պատճառով, իսկ միամակարդակ տեղական ինքնակառավարման համակարգի գոյության պայմաններում խախտվում է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում ամրագրված ՏԻՄ-երի լիազորությունների ավելացման և ամբողջական իրականացման վերաբերյալ սուբսիդիարության սկզբունքը:

Նշված կարծիքը հիմնավորվում է նաև այնպիսի ցուցանիշներով, ինչպիսին է համայնքների բյուջեների տեսակարար կշիռը հանրային ծախսերում և ՀՆԱ-ի մեջ: Համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ վերջին 5 տարիների ընթացքում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների գծով առաջընթաց տեղի չի ունեցել, իսկ համայնքների բյուջեների տեսակարար կշիռը հանրային ծախսերում անգամ նվազել է: Այսպես, 2006-2011 թվականներին հիշյալ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 6,9-5.2% և 1,5-1.6%: Դրանք շատ ցածր ցուցանիշներ են, իսկ համայնքների բյուջեները բացարձակ թվերով ուղղակի անհամեմատելի են եվրոպական շատ երկրների համանման ցուցանիշների հետ: Այսպիսով, տեղական ինքնակառավարման տեղն ու դերը հանրային կառավարման համակարգում խիստ ցածր են:

Տեղական ինքնակառավարման ու կենտրոնական (պետական) կառավարման մարմինների փոխհարաբերությունները հիմնականում արտացոլվում են որակական և քանակական ցուցանիշների զուգակցման միջոցով: Այդ համատեքստում կենտրոնական կառավարման մարմինների խորհրդատվական և հսկողական գործառույթների կատարման էական բարեփոխումներ 2004-2009 թվականներին չեն կատարվել: Խորհրդատվություն տրամադրելու փոխարեն, մարզպետարանները հաճախ շարունակում են մշակել համայնքների բյուջեները՝ ձևավորելով կարծիք, թե համայնքի բյուջեն հաստատում է մարզպետը:

Նպատակային չէ նաև ՏԻՄ-երի նկատմամբ հսկողությունը, որը կոչված է ապահովելու նրանց աշխատանքների ճիշտ և արդյունավետ իրականացումը, օրենսդրության խախտում-

ների բացառումը: Կանոնակարգման կարիք ունեցող հարցերի շարքում են մնում պետական բյուջեից համայնքների բյուջեներին սուբվենցիաների տրամադրումը և պատվիրակված լիազորությունների իրականացումն ու ֆինանսավորումը:

Հիմնահարցերի հաջորդ խումբը վերաբերում է տեղական ինքնակառավարման ինստիտուտների ներկայիս վիճակին և զարգացմանը: Այդ ուղղությամբ 2004-2006 թվականներին էական փոփոխություններ չեն արձանագրվել: Այստեղ կարևորվում են համայնքի ավագանու գործունեությունն արտացոլող որոշ ցուցանիշներ և երևույթներ: Համայնքներում չեն սերմանվում ավագանու անդամների նախաձեռնությամբ որոշումների ընդունման պրակտիկան և համայնքի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի քննարկման ընթացքում նրանց ակտիվ մասնակցությունը: Որպես կանոն, նրանք դրսևորում են պասիվ դիրքորոշում՝ դրանով իսկ նվազեցնելով ավագանու դերը համայնքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման գործում:

Միջհամայնքային միավորումների ստեղծման օրենսդրական պահանջները չեն ընդունվել, և այդ կարևոր ինստիտուտը դիտարկվող ժամանակահատվածում չի ձևավորվել: Չնայած համայնքների միությունների ստեղծման օրենսդրական խոչընդոտներ չկան, սակայն այդ ինստիտուտը ևս չի կայացել: Համայնքների միությունները ստեղծվել են միայն տարածաշրջաններում (ազգային մակարդակում չկա համայնքների միություն), որոնք ի վիճակի չեն կատարել այդ ինստիտուտի առջև դրված հիմնական խնդիրը՝ տեղական ինքնակառավարման և համայնքների շահերի ներկայացումն ու պաշտպանությունը:

Այս ցուցանիշների շարքում առանձնանում են տեղական ինքնակառավարման միավորներին (համայնքներին) բնութագրող ցուցանիշները: Դիտարկվող ժամանակահատվածում դրանց բարելավման միտում գրեթե չկա: Այսպես, համայնքների թիվը մնացել է գրեթե նույնը (931-ից դարձել է 926), 01.01.2011 թ. դրությամբ մեկ համայնքին ընկնող բնակիչների թիվը նվազել է 231-ով՝ կազմելով 3249 մարդ, այդ թվում առանց Երևանի՝ 2137 (նախկինում առկա 2317-ի փոխարեն), իսկ մեկ համայնքին ընկնող տարածքը (20 քառ. կմ) մնում է փոքր:

Համայնքների ֆինանսական ցուցանիշներից համայնքների բյուջեների ընդհանուր ծավալը 2003-2007թթ. ընթացքում աճել է 184.7%-ով՝ կազմելով 53.7 մլրդ դրամ, սակայն հետագայում այն ունեցել է նվազման միտում՝ 01.01.2010 թ. արդյունքներով կազմելով 53.4 մլրդ դրամ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ նույն ժամանակահատվածում սպառողական գների ինդեքսի չնչին աճի (0.5 տոկոսային կետով) պարագայում արդյունաբերական և մի շարք այլ ապրանքների ու ծառայությունների գների ինդեքսներն աճել են առաջանցիկ տեմպերով՝ հանգեցնելով բյուջեների իրական աճի ցուցանիշի նվազեցմանը:

2004 թվականից հետո համայնքներին են փոխանցվել նրանց վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող հողերը, մինչդեռ համայնքային սեփականության ընդլայնման և բարելավման ուղղությամբ աշխատանքները դեռևս շարունակվում են: Լուծման կարիք ունեն փոխատվական կապիտալի շուկա համայնքների մուտքն ապահովելու հարցերը: Մինչ օրս չի մշակվել և չի ընդունվել համայնքային պարտատոմսերի թողարկման կարգը, չեն հստակեցվել համայնքներին բանկային վարկերի տրամադրման և բյուջետային վարկերի ու փոխատվությունների տրամադրման կարգի կիրարկումն ապահովող մեխանիզմները:

Հանրապետությունում լուրջ անելիքներ կան տեղական ժողովրդավարության վիճակի բարելավման բնագավառում: Նշվածը վերաբերում է ոչ միայն ներկայացուցչական ժողովրդավարության կարևոր սկզբունքներին, (համայնքների ղեկավարների և ավագանու անդամների նախընտրական լուրջ ծրագրերի պատրաստմանը, քննարկումների և բանա-

վեճերի կազմակերպմանը, քաղաքական կուսակցությունների ակտիվ մասնակցության ապահովմանը), այլև ուղղակի ժողովրդավարության ձևերի արմատավորմանը (տեղական հանրաքվեների անցկացում, հանրային լուսնների և քննարկումների կազմակերպում): Հարկ է արձանագրել նաև, որ քաղաքացիական հասարակության սուբյեկտների (կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ և այլն) ակտիվության մակարդակը շարունակում է բարձր մնալ միայն մայրաքաղաքում, մարզկենտրոններում և նախկին շրջկենտրոններում: Հանրապետությունում պատշաճ ուշադրություն չի դարձվում նաև ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության, թափանցիկության և բնակչությանը հաշվետու լինելու պահանջին, ինչպես նաև նրանց ինքնուրույնության ապահովմանը: Մյուս կողմից՝ պետական կառավարման մարմինները դժվարությամբ են հրաժարվում ՏԻՄ-երի գործունեությունը դեկավարելու գործառույթից, իսկ վերջիններս բնականոն են համարում նման ենթակայությունը:

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի կայացման խոչընդոտներից է նաև միջհամայնքային միավորումների (ՄՀՍ) խիստ դանդաղ ձևավորումը, որը պայմանավորված է անհրաժեշտ ու բավարար օրենսդրական դաշտի բացակայությամբ, ինչպես նաև նրանց ստեղծման ու գործունեության կազմակերպման հետ կապված բազմաթիվ խնդիրների ու հարցադրումների առկայությամբ: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 78-80-րդ հոդվածներում սահմանված են ՄՀՍ-ներ կազմելու համայնքների իրավունքը, կարգը և մարմինները, մինչդեռ դրանց ստեղծման, գործունեության, ՏԻՄ-երի և մյուս մարմինների հետ փոխհարաբերությունների, ֆինանսավորման և բազմաթիվ այլ հարցեր կարգավորված չեն: Այս պայմաններում միանշանակ է «Միջհամայնքային միավորումների մասին» առանձին օրենքի մշակման և ընդունման անհրաժեշտությունը, որը լուծում կտա ոչ միայն նշված, այլև այն հարցերին, որոնք կապված են ՄՀՍ-ների նկատմամբ իրավական հսկողության և ֆինանսական վերահսկողության, դրանց լուծարման, լիազորությունների ու իրավունքների իրականացման, բյուջետային միջոցների օգտագործման, համայնքային սեփականության օգտագործման և կառավարման հետ: Պետք է բավարար հիմքեր ստեղծվեն լիազորությունների պատվիրակման ու դրանց ֆինանսավորման մեխանիզմների հստակեցման, ֆինանսական համահարթեցման մեխանիզմի բարելավման և այլ խնդիրների լուծման համար:

Դրա հետ մեկտեղ, հարկ է գիտակցել, որ ՄՀՍ-ների ստեղծման անհրաժեշտությունը, նպատակի առաջադրումն ու դրա իրագործման եղանակների ընտրությունը պետք է կատարվեն ապակենտրոնացված եղանակով՝ համայնքային նախաձեռնությունների մակարդակով: Կարծում ենք, խրախուսելի են նաև պետության անուղղակի աջակցության ծրագրերը, որոնք նպատակ ունեն խթանելու ՄՀՍ-ների ստեղծումը: Դրանք թույլ կտան որոշակի խնդիրների լուծման և նպատակների իրականացման առումով համախմբել համայնքի ուժերն ու ռեսուրսները և ապահովել բոլորի համատեղ մասնակցությունն ընդհանուր նշանակության խնդիրների լուծման գործում:

Այսպիսով, Հայաստանի իշխանությունների կողմից տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման ու զարգացման ուղղությամբ ձեռնարկված միջոցները դեռևս համահունչ չեն հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությանն ու նպատակներին, որոնք շուկայական վերափոխումների ու տնտեսական գործունեության ազատականացման պայմաններում ստիպում են վերաիմաստավորել տեղական ինքնակառավարման ինքնուրույնության բարձրացման ու Եվրախորհրդի առջև ստանձնած պարտավորությունների կատարման խնդիրները: Բնական է, որ համեմատաբար երիտասարդ համակարգի զարգացման աստիճանը հնարավոր չէ համադրել արդեն որոշակի ուղի անցած և այդ

ուղորտում փորձ ձեռք բերած երկրներում գործող տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակին: Այնուամենայնիվ, տեղական ինքնակառավարման զարգացման ռազմավարական ամբողջական փաստաթղթի ընդունման, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում և ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված տեղական ինքնակառավարման սկզբունքների և դրանցից բխող մեխանիզմների փաստացի իրագործման, տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալ զարգացման ուղղությամբ հետևողական աշխատանք կատարելու շնորհիվ կարելի էր արձանագրել ավելի բարձր արդյունքներ:

Հետևաբար, նախանշված նպատակների իրագործմանը պետք է ակտիվորեն մասնակցեն ոչ միայն Հայաստանի իշխանությունները, այլև տեղական ինքնակառավարման զարգացման գործում շահագրգիռ կողմ հանդիսացող բոլոր մարմիններն ու կազմակերպությունները, ինչպես նաև գիտական ոլորտի հետազոտողները:

ԷՄԻԼ ԶԱԽՆՅԱՆ

ՆՊՏՏ հայցորդ

ԱՐՏԱՔԻՆ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՅ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻ ԵՎ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը վճարային հաշվեկշռի երկու հիմնական բաժիններից մեկն է և առևտրային հաշվեկշռի՝ ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերության, զուտ գործույնային եկամուտների և զուտ տրանսֆերտների գումարը: Միևնույն ժամանակ այն նաև հավասար է երկրի զուտ արտաքին ակտիվների փոփոխությանը և կարող է ներկայացվել որպես ազգային խնայողությունների և ներդրումների՝ համախառն կուտակման տարբերություն: Հետևաբար ընթացիկ հաշվի վրա արտաքին տնտեսական ցնցումների ազդեցության հարցը կարող է հանգել ինչպես առևտրային հաշվեկշռի, այնպես էլ խնայողությունների և ներդրումների տարբերության վրա ազդեցությանը:

2009 թվականին Հայաստանի Հանրապետությունն ունեցել է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի բացասական հաշվեմնացորդ՝ 1368.9 մլն ԱՄՆ դոլարի չափով, որը կազմել է նույն տարվա համախառն ներքին արդյունքի 16.0%-ը: Բոլոր ժամանակների առավելագույն արժեքն արձանագրվել էր 1998 թվականին, երբ ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ հավասար էր 21.2%-ի: Այս ցուցանիշի նվազագույն մակարդակը թե՛ բացարձակ, թե՛ հարաբերական արտահայտությամբ դիտվել էր 2004 թվականին և կազմում էր համապատասխանաբար 19.6 մլն ԱՄՆ դոլար կամ 0.5%-ը ՀՆԱ-ի նկատմամբ, որից հետո այն ունեցել է շարունակական ավելացման միտում¹:

2008 թվականին Արժույթի միջազգային հիմնադրամի անդամ և ընթացիկ հաշվի պակասուրդ ունեցող 126 երկրների մեջ ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի պակասուրդի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում էր 50-րդ տեղը, իսկ արդեն 2009 թվականին պակասուրդային երկրների թիվն ավելացավ 5-ով՝ հասնելով 131-ի, որոնց մեջ Հայաստանը

¹ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ-ի «ՀՀ վճարային հաշվեկշիռը» վիճակագրական ժողովածուները:

նույն ցուցանիշի մեծությամբ 22-րդն էր¹: Բացի այդ, 2008թ. ընթացիկ հաշվի պակասուրդով 126 երկրներից 29-ն ունեցել են ընթացիկ հաշվի վատթարացում, այդ թվում նաև Հայաստանը: Ավելին, Հայաստանի՝ ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի բացասական փոփոխությունը 2009 թվականին հավասար էր 4.1 տոկոսային կետի, որն իր մեծությամբ 8-րդ ամենամեծ վատթարացումն էր: Հայաստանից ավելի վատ զարգացում են ունեցել միայն Բելառուսը, Սողոմյան կղզիները, Եմենը, Ջիմբաբվեն, Բուտանը, Նիգերը և Չադը: ԱՊՀ երկրների ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի միջին բացասական փոփոխությունը 2009թ. կազմել է 2.3 տոկոսային կետ, իսկ զարգացող երկրներինը՝ 1.8 տոկոսային կետ:

Իսկ ինչ վերաբերում է ընթացիկ հաշվի հիմնական հոդվածին՝ առևտրային հաշվեկշռին (առանց «Ծառայություններ» հոդվածի), ապա այն նույնպես 2009 թվականին եղել է բացասական և հավասար էր 2081.2 մլն ԱՄՆ դոլարի կամ ՀՆԱ-ի 24.4%-ի, որը միևնույն ցուցանիշի՝ 2005 թվականին դիտված նվազագույն արժեքը գերազանցում էր շուրջ երկու անգամ:

Սույն հոդվածում ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի վրա արտաքին ցնցումների ազդեցության բնույթը և աստիճանը գնահատելու համար ընդունել ենք վճարային հաշվեկշռի կազմալուծման հիմնական մեթոդաբանությունը, որ մշակվել է Բալասայի² կողմից 1981թ. և այնուհետև կատարելագործվել Ավիլայի և Բաչայի կողմից: Այս մեթոդաբանությամբ արտաքին ցնցումները և տնտեսության ներքին արձագանքներն ու հարմարեցումները վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի փոփոխության որոշիչներն են: Ներմուծման ծավալները կապված են ներքին աբսորբցիայի հետ, իսկ արտահանման ծավալները՝ համաշխարհային առևտրի ծավալների հետ: Տոկոսային վճարները կապված են տոկոսադրույքի և պարտքի կուտակված պաշարի հետ: Առաջնային արտաքին ցնցումները վերաբերում են առևտրի պայմաններին՝ արտահանման և ներմուծման գներին, արտաքին պարտքի տոկոսադրույքին և համաշխարհային առևտրի ծավալին: Երկրորդային արտաքին ցնցումներն են պարտքի կուտակման բեռը և այլ արտաքին փոփոխականներ, ինչպիսիք են՝ եկամուտները կապիտալի մասնակցությունից, աշխատողների եկամուտները և ընթացիկ տրանսֆերտները: Չնայած արտաքին փոփոխականներ լինելուն՝ դրանք նաև զգալուն են ներքին քաղաքականությունների և մասնավոր հատվածի հարմարվողական վարքագծի նկատմամբ: Եվ վերջապես, ներքին արձագանքման փոփոխականները կազմված են ներքին կլանումից, արտահանման թափանցելիությունից և ներմուծման փոխարինումից: Ներքին կլանման վրա գլխավորապես ազդում են երկրի հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները, իսկ արտահանման թափանցելիության և ներմուծման փոխարինման վրա՝ առևտրային քաղաքականությունը:

Աղյուսակ 1-ում ներկայացված ՀՀ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի վերլուծության արդյունքներն արտահայտված են տոկոսային կետերով ՀՆԱ-ի նկատմամբ և ցույց են տալիս, որ արտաքին տնտեսական ցնցումների զուտ ազդեցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի փոփոխության վրա եղել է գերազանցապես բացասական, բացառությամբ 2000 և 2002 թվականների:

¹ Աղբյուրը՝ IMF World Economic Outlook October Database, <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2010/02/weodata/index.aspx> :

² Bela Balassa, “Policy Responses to Exogenous Shocks in Developing Countries”, The American Economic Review, Vol. 76, No.2, May 1986, pp. 75-78.

ՀՆԱ-ի նկատմամբ ՀՀ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի փոփոխության գործոնային վերլուծությունը՝ ըստ առանձին արտաքին ցնցումների

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Ընթացիկ հաշվեմնացորդի փոփոխությունը (ՀՆԱ-ի նկատմամբ) | 0.013 | 0.031 | 0.041 | 0.002 | 0.018 | 0.037 | -0.013 | -0.044 | -0.044 | -0.034 |
| Արտաքին ցնցումներ | 0.005 | -2.619 | 0.189 | -1.076 | -2.865 | -3.747 | -3.719 | -2.228 | -4.726 | -9.533 |
| Առևտրի պայմանների էֆեկտ | -1.176 | -0.699 | 0.988 | -0.952 | -2.333 | -1.946 | -2.707 | -0.635 | -4.145 | -9.831 |
| Ներմուծման գների էֆեկտ | -1.591 | 0.679 | -0.297 | -2.055 | -2.405 | -1.338 | -2.762 | -0.551 | -4.090 | -8.647 |
| Արտահանման գների էֆեկտ | 0.415 | -1.379 | 1.285 | 1.103 | 0.072 | -0.608 | 0.055 | -0.083 | -0.055 | -1.185 |
| Տոկոսադրույքի ցնցում | 0.001 | 0.000 | 0.000 | 0.000 | 0.000 | 0.001 | 0.000 | 0.001 | 0.000 | -0.003 |
| Համաշխարհային առևտրի էֆեկտ | 1.183 | -1.907 | -0.797 | -0.125 | -0.523 | -1.831 | -1.020 | -1.583 | -0.592 | 0.319 |
| Պարտքի կուտակման բեռ | 0.000 | 0.000 | 0.000 | 0.000 | 0.000 | 0.000 | 0.000 | 0.000 | 0.000 | 0.000 |
| Այլ արտաքին փոփոխականներ | -0.002 | -0.012 | -0.003 | 0.001 | -0.009 | 0.029 | 0.008 | -0.011 | 0.011 | -0.018 |
| Եկամուտների կապիտալի մասնակցությունից | -0.004 | 0.010 | -0.004 | -0.007 | -0.026 | 0.004 | -0.003 | 0.002 | 0.013 | -0.014 |
| Աշխատողների եկամուտներ | -0.002 | -0.006 | 0.010 | 0.003 | 0.002 | 0.010 | 0.010 | -0.007 | 0.003 | -0.001 |
| Ընթացիկ տրանսֆերտներ | 0.004 | -0.016 | -0.009 | 0.005 | 0.015 | 0.014 | 0.002 | -0.006 | -0.005 | -0.002 |
| Ներքին հարմարեցումներ | -1.147 | 6.824 | 2.697 | 2.569 | 5.540 | 6.314 | -1.424 | -1.339 | -4.955 | 0.119 |
| Ներքին արտաբերիա | -0.430 | 0.832 | 1.090 | 0.861 | 0.086 | 0.287 | -0.488 | -0.402 | -0.890 | -1.435 |
| Մասնավոր սպառում | -0.287 | 1.148 | 1.148 | 1.722 | 0.287 | 2.009 | 0.803 | 0.201 | 0.029 | -2.841 |
| Պետական սպառում | 0.000 | 0.287 | 0.287 | 0.000 | 0.000 | -0.287 | 0.258 | -0.057 | -0.029 | -0.631 |
| Ներդրումներ | -0.172 | -0.344 | -0.545 | -0.746 | -0.172 | -1.607 | -1.550 | -0.545 | -0.890 | 2.037 |
| Ներմուծման փոխարինում | -2.142 | 0.708 | -0.840 | -2.391 | 7.014 | -0.258 | 3.914 | -1.477 | 1.070 | 2.637 |
| Արտահանման թափանցում | 1.424 | 5.284 | 2.447 | 4.100 | -1.560 | 6.285 | -4.851 | 0.540 | -5.136 | -1.083 |
| Այլ գործոններ | 1.155 | -4.174 | -2.845 | -1.492 | -2.657 | -2.529 | 5.131 | 3.522 | 9.638 | 9.380 |

Առանձնացված արտաքին տնտեսական ցնցումներից ոչ նշանակալի են եղել տոկոսադրույքի ցնցումները և արտաքին պարտքի կուտակման բեռը: Պարտքի կուտակման բեռի պարագայում այն համարյա զրոյական է, իսկ տոկոսադրույքի ցնցումների դեպքում՝ առավելագույնը 0.1-ից մինչև 0.3 տոկոսային կետ: Սա զարմանալի բացահայտում չէ, քանզի տոկոսադրույքների նկատմամբ առավել զգայուն պորտֆելային ներդրումների ծավալներն աննշան են, իսկ արտաքին պետական պարտքի մեջ արտոնյալ վարկերի բաժինը կազմում է մոտ 99.1%:

Կապիտալի մասնակցությունից եկամուտները ցուցաբերել են առավել մեծ ազդեցություն, քան տոկոսադրույքի ցնցումները և պարտքի կուտակման բեռը: Այն եղել է դրական 2001, 2005, 2007 և 2008 թվականներին և կազմել է 0.5-1.3 տոկոսային կետ:

Աշխատողների եկամուտների և ընթացիկ տրանսֆերտների գումարային ազդեցությունը մինչև 2007 թվականը դրական էր, իսկ դրանից հետո բացասական՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով: Առավելագույն դրական էֆեկտը կազմում էր 2.5 տոկոսային կետ 2005 թվականին, իսկ առավելագույն բացասական փոփոխությունը՝ 2.2 տոկոսային կետ 2001 թվականին:

ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի հաշվենացորդի փոփոխությունը պայմանավորող ամենանշանակալի գործոնն են առևտրի պայմանները՝ արտահանման և ներմուծման գների գուտ էֆեկտը: Ներմուծման գների ինդեքսի փոփոխությունը դիտարկվող ժամանակահատվածում ունեցել է ընթացիկ հաշիվը վատթարացնող ազդեցություն՝ ի տարբերություն արտահանման գների, որոնց փոփոխությունը եղել է դրական 2000, 2002-2004 և 2006 թվականներին: Եվ ինչպես ցույց են տալիս հավելված 26-ի գծապատկերները, ներմուծման գների բացասական ազդեցության չափը դրսևորել է շարունակական աճի միտում: 2008 և 2009 թվականներին ներմուծման գների փոփոխություններով բացատրվել է արտաքին ցնցումների գուտ էֆեկտի համապատասխանաբար 86.5%-ը և 90.7%-ը, իսկ արտահանման գների փոփոխություններով՝ 1.2%-ը և 12.4%-ը:

Ընթացիկ հաշվի վրա արտաքին առևտրային գների՝ առևտրի պայմանների ազդեցություններն ընդարձակ կերպով հետազոտվել են 1950-ական թվականներից ի վեր, երբ Հարբերգերը¹ և Լաուրսենն ու Մեցլերը², օգտագործելով մեկ ապրանքի վրա հիմնված քեյնսյան բաց տնտեսության մոդելներ, որոնցում ենթադրվում էր կապիտալի միջազգային հոսքերի բացակայություն, բացահայտեցին այն, ինչ այժմ հայտնի է որպես Հարբերգեր-Լաուրսեն-Մեցլերի էֆեկտ (այսուհետ՝ ՀԼՄ էֆեկտ): Վերջինիս համաձայն՝ առևտրի պայմանների վատթարացումը հանգեցնում է երկրի ընթացիկ եկամտի ավելի մեծ չափով նվազման, քան կայուն եկամտի նվազումն է, որի արդյունքում կրճատվում են խնայողությունները, և վատթարանում է ընթացիկ հաշիվը: Սակայն անհրաժեշտ է նկատել, որ տեսականորեն ընթացիկ հաշվի այսպիսի վարքագիծը դրսևորվում է առևտրի պայմանների ժամանակավոր (կարճաժամկետ) փոփոխությունների դեպքում: Առևտրի պայմանների մշտական (երկարաժամկետ) փոփոխման դեպքում ընթացիկ և կայուն եկամուտները փոխվում են միևնույն չափով՝ անփոփոխ թողնելով ընթացիկ հաշիվը:

Հարբերգեր-Լաուրսեն-Մեցլեր էֆեկտը կարևոր դեր է խաղացել վճարային հաշվեկշռի, այդ թվում առևտրային հաշվեկշռի վրա արժույթի փոխարժեքի արժեզրկման ազդեցության վերլուծության առաձգականության և արտոբքիայի մոտեցումների հարաբերական առավելությունների ուսումնասիրման գործում: Այն շարունակում է հանդիպել բաց տնտեսության մակրոտնտեսագիտության մեջ հավասարակշռության խախտումների փոխանցման ուղիների վերաբերյալ քննարկումներում:

ՀԼՄ էֆեկտի բացահայտումից երեք տասնամյակ անց տարբեր հեղինակներ այս հարցին անդրադարձան ներկայացուցչական գործակալի դինամիկ օպտիմալացման մոդելների միջոցով: Այս ուղղությամբ աշխատանքը սկսեց Օբստֆելդը³, ով ցույց տվեց, թե ինչպես երկրի ժամանակային նախապատվության մակարդակի աճի դեպքում առևտրի պայմանների վատթարացումը հանգեցնում է խնայողությունների մակարդակի բարձրացման և ընթացիկ

¹ Harberger A.C., “Currency Depreciation, Income and the Balance of Trade”, Journal of Political Economy, No.58, University of Chicago Press, 1950, pp. 47-60.

² Laursen S. and L.A. Metzler, “Flexible Exchange Rates and The Theory of Employment”, Review of Economics and Statistics, No 32, 1950, pp. 281-299.

³ Maurice Obstfeld, “Aggregate Spending and the Terms of Trade: Is There a Laursen-Metzler effect”, Working Paper No. 686, National Bureau of Economic Research, 1981, p 22.

հաշվի ավելցուկի՝ հակասելով Հարբերգեր-Լաուրսեն-Մեցլեր ենթադրությանը: Միջժամանակային օպտիմալացման մոդելի համատեքստում առևտրի պայմանների վատթարացումը հանգեցնում է ընթացիկ հաշվի ավելցուկի, քանի որ տնային տնտեսությունները սկսում են ձեռք բերել օտարերկրյա եկամտաբեր ակտիվներ իրենց իրական եկամտի սկզբնական մակարդակը վերականգնելու նպատակով:

Այլ հետազոտողներ ցույց տվեցին, որ ՀԼՄ ենթադրության իրավացիությունը նաև կախված է մոդելի ձևակերպման այլ առանձնահատկություններից: Օգտագործելով երկժամանակային մոդել՝ Սվենսոնն ու Ռազինը¹ ցույց տվեցին, որ ապրիորի ներմուծվող ապրանքների գների բարձրացման ազդեցությունն անորոշ է: Նրանք ուշադրություն դարձրեցին ներկայում և ապագայում սպառման սահմանային հակվածության հարաբերական մեծությունների վճռորոշ դերին ընթացիկ հաշվի վրա առևտրի պայմանների փոփոխության ազդեցության հարցում: Նրանց մոտեցումը նաև միավորում է տնտեսագիտական գրականությանը հայտնի առանձին տարբեր էֆեկտներ: Նրանք ուսումնասիրեցին առևտրի պայմանների ժամանակավոր և մշտական փոփոխություններին արտաքին առևտրի հաշվեկշռի արձագանքների միջև տարբերությունները: Առևտրի պայմանների վատթարացման պատճառով առևտրային հաշվեկշռի փոփոխությունները նրանք բաժանեցին երեք տարբեր էֆեկտների²՝

1. ուղղակի էֆեկտը՝ զուտ արտահանման արժեքային փոփոխությունը,
2. սպառման վրա հարստության էֆեկտը, որը գործում է առևտրի պայմանների վատթարացման հետևանքով հարստության կրճատման միջոցով,
3. զուտ փոխարինման էֆեկտը, որ ազդում է սպառման վրա ներժամանակային և միջժամանակային հարաբերական գների փոփոխությունների միջոցով:

Ընդհանուր առմամբ այս էֆեկտների գումարն անորոշ է, չնայած ուղղակի և հարստության էֆեկտների գումարը որոշակիորեն բացասական (դրական) է առևտրի պայմանների ժամանակավոր (ապագա) վատթարացման դեպքում: Առևտրի պայմանների ժամանակավոր վատթարացումն առաջացնում է երկու էֆեկտ՝ իրական եկամտի ժամանակավոր անկում և իրական տոկոսադրույքի փոփոխություն: Իրական եկամտի անկումը հանգեցնում է ուղղակի և հարստության բացասական էֆեկտների և հետևաբար առևտրային հաշվեկշռի վատթարացման, որովհետև սպառման և իրական եկամտի կրճատումը համամասնական չէ (սպառման սահմանային հակվածություն): Սա ծախսերի հարթեցման վարքագծի օրինակ է: Իրական տոկոսադրույքների փոփոխությունն առաջ է բերում փոխարինման էֆեկտ: Եթե իրական տոկոսադրույքը նվազում է, ապա փոխարինման էֆեկտն ուժեղացնում է ուղղակի և հարստության էֆեկտները, և ընթացիկ հաշիվը որոշակիորեն վատթարանում է:

Փոխարինման էֆեկտների առավել ընդարձակ վերլուծություն են ներկայացրել Քաշինն ու Մակ Դերմոտը: Նրանք ուսումնասիրել են միջժամանակային և ներժամանակային փոխարինման էֆեկտները³, որոնք կոչել են հարաբերական գների էֆեկտներ և առանձնացրել երկու հարաբերական գներ՝ ազգային գների մակարդակների հարաբերությունը (իրական փոխարժեք) և ներմուծման հարաբերական գինը (առևտրի պայմաններ): Միջժամանակային էֆեկտի դեպքում առևտրի պայմանների անբարենպաստ ցնցումը թանկացնում է ընթացիկ ներմուծումն ու սպառումը ապագա ներմուծման և սպառման համեմատ և դրդում սպառման տեղափոխումը ապագա ժամանակաշրջան, ինչի արդյունքում աճում են ընթացիկ խնայո-

¹ Svensson L. and Razin A., “The Terms of Trade and The Current Account: The Harberger-Laursen-Metzler Effect”, The Journal of Political Economy No. 91, 1983.

² Svensson L. and Razin A., “The Terms of Trade and The Current Account: The Harberger-Laursen-Metzler Effect”, The Journal of Political Economy No. 91, 1983, էջ 99.

³ Paul Cashin, John McDermott, “Terms of Trade and the Current Account”, IMF Working Paper, 1998, p. 9.

դությունները: Միջժամանակային փոխարինման աստիճանը կախված է փոխարինման միջժամանակային առաձգականությունից: Որքան մեծ է առաձգականությունը, այնքան ավելի մեծ կլինեն ընթացիկ խնայողությունները:

Փոխարինման երկրորդ էֆեկտը տեղի ունի, երբ մոդել են ներմուծվում չարտահանվող ապրանքները: Առևտրի պայմանների անբարենպաստ ցնցումը թանկացնում է ներմուծվող ապրանքների սպառումը չարտահանվող ապրանքների սպառման համեմատությամբ, ինչի հետևանքով տեղի է ունենում ներմուծվող ապրանքների փոխարինում չարտահանվող ապրանքներով (ենթադրելով, որ դրանք միմյանց փոխարինող ապրանքներ են) և վերջիններիս գների բարձրացում: Չարտահանվող ապրանքների գների բարձրացումը ժամանակավորապես բարձրացնում է գների ընդհանուր մակարդակը՝ հարաբերականորեն թանկացնելով ընթացիկ սպառումը և խթանելով ընթացիկ խնայողությունների աճը: Ներմուծվող և չարտահանվող ապրանքների միջև փոխարինման չափը կախված է ներժամանակային առաձգականությունից. որքան բարձր է առաձգականությունը, այնքան մեծ է ընթացիկ խնայողությունների պատասխանն առևտրի պայմանների վատթարացմանը:

Առևտրի պայմանների փոփոխության էֆեկտը այլ դինամիկ էֆեկտներից առանձնացնելու նպատակով Սվենսոնն ու Ռազինը ուսումնասիրել են սպառողական նախապատվությունների ժամանակային փոփոխությունների դերը և գտել, որ իրական տոկոսադրույքների հաստատուն մակարդակի դեպքում առևտրի պայմանների մշտական վատթարացումն առևտրային հաշվեկշռի վատթարացման կամ բարելավման պատճառ է դառնում՝ կախված նրանից, թե սպառման ապագա սահմանային հակվածությունը կգերազանցի՞ սպառման ընթացիկ սահմանային հակվածությանը, թե՞ ոչ, կամ որ համարժեքն է, թե ժամանակային նախապատվության մակարդակը կնվազի՞, թե՞ կաճի¹: Նմանատիպ եզրահանգման են եկել նաև Պերսոնն ու Սվենսոնը², ովքեր, կիրառելով սերունդների մոդել, ցույց տվեցին, որ առևտրի պայմանների փոփոխության ազդեցությունը կախված է ցնցման մշտական կամ ժամանակավոր, կանխատեսված կամ չկանխատեսված լինելուց:

Առևտրի պայմանների ազդեցությանը նոր չափում են ավելացնում Ագենորն ու Այզենմանը³: Նրանք ուսումնասիրել են առևտրի պայմանների ցնցումների ասիմետրիկ ազդեցությունը մասնավոր խնայողությունների վրա փոխառության սահմանափակումների առկայության դեպքում: Նրանք փաստարկներ են բերում, որ անբարենպաստ զարգացումների դեպքում փոխառության սահմանափակումների պայմաններում խնայողությունների մակարդակը կարող է զգալիորեն լինել առևտրի պայմանների մշտական դրական փոփոխությունների նկատմամբ՝ ի տարբերություն ավանդական սպառման հարթեցման մոդելների կանխատեսումների:

Ամփոփելով նշված գրականության բացահայտումները՝ կարող ենք հստակորեն ասել, որ ընթացիկ հաշվի վրա առևտրի պայմանների ցնցումների ազդեցության ուղղությունը կախված է՝

- ցնցման ժամանակային տևողությունից,
- միջժամանակային և ներժամանակային փոխարինման առաձգականություններից,
- փոխատվական կապիտալի հասանելիությունից սպառման հարթեցման նպատակով:

¹ Svensson L. and Razin A., “The Terms of Trade and The Current Account: The Harberger-Laursen-Metzler Effect”, The Journal of Political Economy No. 91, 1983, p. 100.

² Persson T. and Svensson L., “Current Account Dynamics and the Terms of Trade: Harberger-Laursen-Metzler Two Generations Later”, Working Paper No. 1129, NBER, 1983.

³ Pierre-Richard Agenor, Joshua Aizenman, “Savings and Terms of Trade under borrowing constraints”, Journal of International Economics 63, 2004, էջեր 321-340.

Վերոնշյալ Բալասայի մեթոդաբանության գնահատականները մեզ տվյալներ են հաղորդում արտաքին ցնցումների մասշտաբների և ուղղության մասին, բայց չեն տարանջատում դրանք ըստ տևողության և տեղեկատվություն չեն հաղորդում ի պատասխան դրանց տնտեսական տնտեսությունների կամ առհասարակ տնտեսական գործակալների վարքագծի վերաբերյալ: Վերջինիս գնահատման նպատակով նպատակահարմար մոդելային հենք ենք համարում Գլիքի և Ռոզոֆի մոդելի հետևյալ մոդիֆիկացված տարբերակը¹.

$$\Delta CA = \gamma_0 + \gamma_1 I_{t-1} + \gamma_2 S_{tot}^t + \gamma_3 S_{tot}^p + \gamma_4 S_{gdp}^t + \gamma_5 S_{gdp}^p + \varepsilon_t \quad (1)$$

(1) ռեգրեսիոն հավասարման մեջ՝ որպես կախյալ փոփոխական, ծառայում է ընթացիկ հաշվի հաշվեմանագործի փոփոխությունը (ΔCA), իսկ որպես անկախ փոփոխականներ՝ առևտրի պայմանների (S_{tot}^t, S_{tot}^p) և ՀՆԱ-ի ցնցումները (S_{gdp}^t, S_{gdp}^p): Ժամանակավոր և մշտական ցնցումների ազդեցությունը բացահայտելու նպատակով առևտրի պայմանների և ՀՆԱ-ի եռամսյակային սեզոնային հարթեցված տվյալների ժամանակային շարքերը բաժանել ենք ժամանակավոր և մշտական բաղադրիչների: Դրա համար Դիքի-Ֆուլերի ընդլայնված թեստի օգնությամբ ստուգել ենք արտաքին առևտրի գների և ՀՆԱ-ի շարքերի ստացիոնարությունը: Հաշվի առնելով բոլոր շարքերի առաջին կարգի ինտեգրվածությունը՝ Բարսթեր-Քինգի ֆիլտրի միջոցով իրականացրել ենք պարբերաշրջանային (ժամանակավոր) և թրենդային (մշտական) բաղադրիչների առանձնացում: Հետևաբար ժամանակավոր և մշտական ցնցումները սահմանել ենք որպես պարբերաշրջանային և թրենդային արժեքների տարբերություն:

$$\Delta CA = 22.8 - 0.203 I_{t-1} + 0.308 S_{tot}^t + 0.693 S_{tot}^p - 0.570 \gamma_4 S_{gdp}^t - 0.404 \gamma_5 S_{gdp}^p \quad (2)$$

Ռեգրեսիոն հավասարման գնահատման արդյունքում առևտրի պայմանների ցնցումների գործակիցները ստացել ենք դրական: Առևտրի պայմանների ժամանակավոր ցնցման դեպքում եկամուտների աճը մեծացնում է խնայողությունները, իսկ նվազումը՝ կրճատում դրանք, ինչը համապատասխանում է Հարբերգեր-Լաուրսեն-Մեցլերի հիպոթեզին (վարկածին): Տնտեսական գործակալները, կարճաժամկետում պահպանելով սպառման սովորույթները և սահմանային հակվածության մեծությունը, եկամուտների փոփոխությանն արձագանքում են դրա համեմատությամբ սպառման ծավալների ավելի քիչ փոփոխությամբ:

Առևտրի պայմանների մշտական ցնցումների գնահատված գործակցի դրական նշանն անսպասելի արդյունք է՝ ելնելով, ի պատասխան մշտական ցնցումների, ընթացիկ հաշվի անփոփոխության մասին ենթադրությունից: Այնուամենայնիվ այս արդյունքը համահունչ է Մենդոզայի բացահայտումներին առ այն, որ Հարբերգեր-Լաուրսեն-Մեցլեր էֆեկտը կախված չէ ցնցման տևողությունից²: Սա վկայում է անբարենպաստ ցնցումների դեպքում ներմուծման փոխարինման ցածր զգայունության, ինչպես նաև սպառման միջժամանակային փոխարինման ցածր առաձգականության մասին: Մեր ստացած արդյունքների օգտին է խոսում նաև Հայաստանի համար սպառման միջժամանակային փոխարինման առաձգականության գործակցի գնահատականը³: Կ. Պողոսյանի և Ա. Սկրտչյանի հետազոտական նյութի մեջ ՀՀ փաստացի մակրոտնտեսական տվյալների հիման վրա իրականացված հաշվարկները ցույց են տվել, որ «...Հայաստանի միջժամանակային փոխարինման առաձգականության գործա-

¹ Joseph W. Gruber, “Productivity Shocks, Habits, and the Current Account”, Board of Governors of the Federal Reserve System, International Finance Discussion Papers, Number 733, August 2002, p. 13.
² Sergio V. Barone, Ricardo Descalzi, Alberto Diaz Cafferata, “Transitory and Permanent Terms of Trade Shocks and the Current Account in Latin American Countries”, International Society for Comparative Studies ISCES, Amoldshain IX Seminar, October 2009, p. 10.
³ Պողոսյան Կ., Սկրտչյան Ա., Սպառման միջժամանակային փոխարինման առաձգականության գործակցի գնահատումը ՀՀ համար, 2007թ., էջ 72:

կիցը բավականին փոքր է, ... հետևաբար ՀՀ-ում իրական տոկոսադրույքի փոփոխությունը շատ թույլ է ազդում բնակչության սպառողական վարքագծի վրա»:

Ժամանակային լագով ներդրումների և ՀՆԱ-ի ցնցումների գործակիցները սպասվածի պես ստացել են բացասական նշաններ՝ ունենալով ընթացիկ հաշիվը վատթարացնող ազդեցություն:

Աղյուսակ 2

Արտաքին տնտեսական ցնցումների նկատմամբ ՀՀ տնտեսության հարմարվողականության զգայունության վերլուծություն

| Մոդել՝ $PR_t = \beta_0 + \beta_1 * ES_t + \varepsilon_t$ | β_0 | β_1 | t վիճակ. | Adjusted R ² |
|--|-----------|-----------|----------|-------------------------|
| Մասնավոր սպառում | -3.62 | 1.39 | (2.61) | 0.39 |
| Պետական սպառում | 0.21 | 0.07 | (3.03) | 0.47 |
| Ներմուծման փոխարինում | -0.69 | -0.50 | (-1.50) | 0.12 |
| Արտահանման թափանցում | 2.34 | 0.53 | (1.14) | 0.03 |

Ներքին հարմարեցման փոփոխականների՝ ներքին արտաբերչիայի, ներմուծման փոխարինման և արտահանման թափանցման ստացված արժեքները, որոնք ներկայացրել ենք աղյուսակ 1-ում, թույլ են տալիս Հայաստանի համար նաև գնահատելու տվյալ փոփոխականների զգայունությունները արտաքին ցնցումների նկատմամբ:

Զգայունության ռեգրեսիոն վերլուծության՝ աղյուսակ 2-ում ամփոփված արդյունքները ցույց են տալիս, որ նշանակալի են ստացվել միայն մասնավոր և պետական սպառման փոփոխականների գործակիցները և ընդհանուր առմամբ խոսում են տնտեսության թույլ հարմարվողականության մասին արտաքին անբարենպաստ ցնցումների նկատմամբ: Վերջիններս չեն հանգեցնում մասնավոր և պետական սպառման կրճատմանը ինչը կարող է մեղմել ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի վատթարացումը, այլ ընդհակառակը: Ի պատասխան արտաքին ցնցման հետևանքով 1 տոկոսային կետով ՀՆԱ-ի նկատմամբ ընթացիկ հաշվի հաշվեմնացորդի վատթարացման՝ մասնավոր սպառման ծավալների աճը մեծացնում է այդ ճեղքվածքը 1.39 տոկոսային կետով: Ներմուծման փոխարինման փոփոխականի գործակիցը թեև ստացել է բացասական արժեք, բայց նշանակալի չէ:

**ՈՌՈՎՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Ձուրը բույսի կենսագործունեության անհրաժեշտ պայմանն է: Այն հողի բերրիության տարրերից մեկն է: Բույսի պահանջը ջրի նկատմամբ ի հայտ է գալիս զարգացման առաջին իսկ օրերից: «Ջրի պարունակությամբ են պայմանավորված բույսերի կենսական պրոցեսները, միկրոօրգանիզմների կենսագործունեությունը, ինչպես նաև հողի տեխնոլոգիական հատկությունները, տեսակարար դիմադրությունը, մշակման ժամկետները և այլ հարցեր»¹:

Խոնավությունը բույսին առաջին հերթին անհրաժեշտ է որպես սինթեզվող օրգանական նյութերի կազմի մեջ մտնող քիմիական տարրերի աղբյուր: Այն ծառայում է որպես միջավայր, որտեղ լուծվում են բույսերի կենսագործունեության համար անհրաժեշտ սննդանյութերը և տեղի են ունենում մի շարք կենսաքիմիական պրոցեսներ:

Բույսերի ծախսած ամբողջ ջրի ամենամեծ քանակությունը (95%-ից ավելի) գոլորշիանում է տերևների միջոցով: Գոլորշիացումն ու ջրի անընդհատ շարժումն արմատներից դեպի տերևներն ունեն կարևոր ֆիզիոլոգիական նշանակություն: Ջրի հետ միասին բույսի մեջ շարժվում են սինթեզի համար անհրաժեշտ զանազան նյութեր: Ջրի գոլորշիացման գործընթացը կապված է ջերմափոխանակության հետ: Այդ պատճառով էլ գոլորշիացման դեպքում իջնում է բուսական հյուսվածքների ջերմաստիճանը, և դրանով բույսն պաշտպանում է հնարավոր գերտաքացումից:

Հողի անբավարար խոնավության և ուժեղ գոլորշիացման դեպքում բույսի արմատները չեն կարող տերևներին ջուր մատակարարել այնպիսի արագությամբ, ինչպիսի արագությամբ այն գոլորշիացվում է տերևների միջոցով:

Ոռոգման դերի ու նշանակության մասին վկայում են նույնիսկ «...դեռևս մեր ժամանակաշրջանից առաջ կառուցված և պահպանված ջրամբարների, ջրանցքների, թունելների և այլ հիդրոտեխնիկական կառուցվածքների մնացորդները: Դարեր առաջ կառուցված և ներկայումս գործող ոռոգման համակարգերը վկայում են այն մասին, որ Հայաստանը եղել է բարձր կուլտուրա ունեցող զարգացած երկիր»²:

Հայաստանի ջրային ռեսուրսները ձևավորվում են հիմնականում մթնոլորտային տեղումների և Արաքս ու Ախուրյան սահմանային գետերի ջրհոսքերի հաշվին: 1961-1995թթ. հիդրոլոգիական տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 17.6 մլրդ խ.մ. :

Հանրապետության տարածքում ձևավորվում է ամբողջ գետային հոսքի ավելի քան 80%-ը (չհաշված Սևանա լճի ավազանը): Մակերևութային հոսքի մնացած մասը կազմում է սահմանային գետերի՝ Արաքսի և Ախուրյանի տարանցիկ հոսքը³: Սահմանային գետերի ներհոսքը գնահատված է հավասար՝ տարեկան 0.9 մլրդ խ.մ.: Ստորերկրյա ջրերի ներհոսքի և արտահոսքի տարբերությունը դրական է՝ տարեկան 0.1 մլրդ խ.մ.: Տարեկան գոլորշիացումը կազմում է 11.5 մլրդ խ.մ., իսկ ներքին գետերի շարժուն հոսքը՝ 6.3 մլրդ խ.մ.:

¹ Հայրապետյան Է.Մ., Հողագիտություն, «Ասողիկ» հրատ., Երևան, 2000թ., էջ 111:

² Баграмян Г “Повышение эффективности комплексного использования водных ресурсов Армянской ССР”, 1973, с.34.

³ Չիլինգարյան Լ.Ա., Մնացականյան Բ.Պ., Աղաբաբյան Կ.Ա., Թորմաջյան Հ.Վ., Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը, Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ, Ազոտայրես ՊՓԲԸ, Երևան, 2002, էջ 5:

Մակերևութային ջրերի վերականգնվող պաշարները տարեկան կազմում են 7.2 մլրդ խ.մ.: Այս ջրերից օգտագործվում են շուրջ 2.3 մլրդ խ.մ. նախկինում՝ 4 մլրդ խ.մ., որից 2 մլրդ խ.մ. նախկինում՝ 3 մլրդ խ.մ.՝ ոռոգման և արտադրության մյուս ոլորտների մատակարարման, իսկ 430.0 մլն խ.մ., նախկինում՝ 550 մլն խ.մ.՝ խմելու և կենցաղային նպատակներով¹:

Արհեստական ջրային օբյեկտներից են հանրապետության շուրջ 82 ջրամբարները՝ 1067 մլն խ.մ. ընդհանուր տարողությամբ, որոնցից հիդրոմելիորատիվ նշանակության 74 ջրամբարներ՝ 973.71 մլն խ.մ. ընդհանուր ծավալով, որից 20-ը խոշոր ջրամբարներն են՝ 947.4 մլն խ.մ. ընդհանուր ծավալով, իսկ 54-ը փոքր են և նախատեսված են 1-2 գյուղերի հողերի ոռոգման համար՝ 26.3 մլն խ.մ. ընդհանուր ծավալով: Հանրապետությունում եղած ջրամբարները կառուցվել են խորհրդային ժամանակներում, թեև փոքր ջրամբարներ եղել են և նախկինում: Ջրամբարների կառուցման հիմնական նպատակը գետային հոսքի սեզոնային կամ տարեկան վերաբաշխումն է: 2010 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ կառուցվել են 901 կմ խողովակաշարեր և ջրատարեր, որից 181 կմ-ը ոռոգման ջրատարները և ջրանցքներն են²:

Հանրապետությունում գործող ջրամբարները հիմնականում ծառայում են ոռոգման նպատակներով: Հայաստանի Հանրապետությունում ոռոգման ոլորտը կամ գյուղատնտեսությունը ամենամեծ ջրօգտագործողն է: Բավական է նշել, որ 2008 թվականի ընթացքում իրականացված ջրօգտագործման շուրջ 2.0 մլրդ մ³ ծավալի շուրջ 80%-ը ծախսվել է գյուղատնտեսական կարիքների համար³:

Ոռոգելի հողերի անհավասարաչափ բաշխվածությունը հանրապետությունում առաջին հերթին բացատրվում է բնակլիմայական պայմանների բազմազանությամբ:

Ոռոգման նշանակությունը բացահայտելու նպատակով վերջին տարիների տվյալներով իրականացրել ենք ուսումնասիրություններ՝ ուղղված հանրապետության տարածաշրջաններում գյուղատնտեսական հողատեսքերից ապահովվող արդյունքի գնահատմանը:

Մեր կողմից, ըստ հանրապետության մարզերի, կատարվել են ուսումնասիրություններ՝ ուղղված ոռոգվող և անջրդի հողատարածքներից ստացվող բերքի համեմատական գնահատմանը: Երեք տարվա փաստացի ցուցանիշների հիման վրա կատարված հաշվարկները վկայում են ոռոգելի երկրագործության արդյունավետության մասին:

Այսպես օրինակ, հանրապետության այն մարզերում, որտեղ ոռոգելի վարելահողերի տեսակարար կշիռը գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշ, համապատասխանաբար բարձր է եղել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը:

2008-2010 թթ. տվյալներով հաշվարկային գնահատականներից ակնհայտ է, որ այն մարզերում, որտեղ ոռոգելի վարելահողերի տեսակարար կշիռը բարձր է, օրինակ՝ Արմավիրի մարզում, հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը հանրապետության միջին ցուցանիշի համեմատությամբ հարաբերվում է այսպես՝ հացահատիկային մշակաբույսերը շուրջ 1.5 անգամ, կարտոֆիլը՝ 1.7, բանջարեղենը՝ 1.2, իսկ Արարատի մարզում, որտեղ ոռոգելի վարելահողերի տեսակարար կշիռը նույնպես բարձր է, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը հանրապետության միջինի նկատմամբ բարձր է եղել, հացահատիկային մշակաբույսերինը՝ 1.7 անգամ, կարտոֆիլինը՝ 1.7, բանջարեղենինը՝ 1.3 և այլն⁴:

¹ «Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության համակարգի բարեփոխումների ու զարգացման մասին ՀՀ կառավարության որոշումներ և ծրագրեր», Երևան, մայիս, 2001թ., էջ 5-6:

² scws.am/downloadFile711arm-հաշվետվության սեղմագիր, 2011.pdf.

³ www.scws.am .

⁴ Հաշվարկների համար հիմք է ընդունվել «Պարենային ապահովությունը և աղքատությունը 2010թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագիրը: ՀՀ ԱՎԾ, Երևան -2011, էջ 42-48:

Տարբեր հետազոտողների կողմից կատարված ուսումնասիրությունները և հաշվարկները ցույց են տալիս գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության արդյունավետությունը՝ կախված ոռոգման պայմաններից: Այսպես օրինակ, հացահատիկային մշակաբույսերի արտադրության շահութաբերության մակարդակը ոռոգման լրիվ նորմայի դեպքում կազմում է 60%, իսկ անջրդի պայմաններում աճեցման դեպքում՝ 25.3%, ջրելու 80% նորմայի դեպքում շահութաբերության մակարդակը կազմել է 26.4%, ընդ որում 50% նորմայի դեպքում հացահատիկի արտադրությունը դառնում է վնասաբեր (-7.1%), կարտոֆիլի արտադրության համար այն համապատասխանաբար կազմում է՝ վաղահասի դեպքում 42.0, 9.1 և -12.7, իսկ ուշահասինը՝ 51.7, 13.9 և -7.9%: Նման օրինաչափություն նկատվել է մյուս գյուղատնտեսական մշակաբույսերի մոտ:

Իսկ այժմ աղյուսակի տեսքով ներկայացնենք 2006-2010 թթ. ընդհանուր ոռոգելի հողերն ու դրանց մեջ առանձին մշակաբույսերի տեսակարար կշիռները:

Աղյուսակ

Հայաստանի Հանրապետության ոռոգելի հողերը 2006-2010 թթ.¹

| Տարեթվեր | Ոռոգելի հողեր | Այդ թվում՝ ըստ մշակաբույսերի | | | | | |
|----------|---------------|------------------------------|---------------|-------------|--------------|--------------|---------|
| | | Աշնանացան ցորեն | Բանջար-բոստան | Խաղողի այգի | Բազմամյա խոտ | Պտղատու այգի | Այլ |
| | հա | հա | հա | հա | հա | հա | հա |
| 2006 | 123297.5 | 32149 | 29151.15 | 10823.8 | 15652.6 | 19372.15 | 16148.8 |
| 2007 | 125631.75 | 28196.5 | 29657.6 | 11977.95 | 16770.3 | 20726.4 | 18303 |
| 2008 | 128860 | 26747.6 | 31015.2 | 12506.5 | 16894.5 | 20899.9 | 20796.3 |
| 2009 | 128076 | 26102 | 31055 | 12569 | 16903 | 20952 | 20495 |
| 2010 | 129194 | 25945 | 31103 | 12608 | 16941 | 21003 | 21594 |

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, ոռոգվող հողերը տարեցտարի ավելացել են: 2006 թվականին դրանց ընդհանուր թվաքանակը կազմել է 123297.5 հա, իսկ 2010-ին՝ 129194 հա: Այսինքն՝ 2010 թվականին 2006-ի համեմատ ավելացել են 2896.5 հա-ով: Ընդհանուր ոռոգելի հողերում, ինչպես երևում է աղյուսակից, ամենամեծ տեսակարար կշիռն ունեն բանջարաբոստանային կուլտուրաները (մշակաբույսերը), որոնց տեսակարար կշիռը կազմում է 27.05 տոկոս: Եթե ըստ տարիների ուսումնասիրենք այս մշակաբույսի դինամիկան, ապա կտեսնենք, որ այն 2010 թվականին 2006-ի համեմատ աճել է 1951.85 հա-ով: Ըստ մեծության՝ 2-րդ տեղն է զբաղեցնում աշնանացան ցորենը, որի տեսակարար կշիռը ընդհանուր ոռոգելի հողերում կազմում է 20.08 տոկոս: Իսկ խաղողի այգիների տեսակարար կշիռն ընդհանուր ոռոգելի հողերում 2010 թվականին կազմել է 9.7 տոկոս: Պտղատու այգիների գծով նույնպես աճ է նկատվել: Եթե 2006 թվականին այդ ցուցանիշը կազմել է 19372.15 հա, ապա 2010-ին այն աճել է 1630.85 հա-ով՝ դառնալով մինչև 21003 հա: 2010 թվականին այս մշակաբույսի տեսակարար կշիռը ընդհանուր ոռոգվող հողերում կազմել է 16.2 տոկոս:

Ինչպես արդեն նկատեցինք, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունը գլխավորապես կախված է ոռոգման համակարգից: Իսկ կատարված ուսումնասիրություններն էլ վկայում են հանրապետության ոռոգման տնտեսական արդյունավետության, հետևաբար նաև հանրապետության ոռոգման համակարգերի դերի ու նշանակության մասին:

¹ <http://asrc.am>, ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալներ:

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Շուկայական էկոնոմիկայի պայմաններում ամեն մի երկրում գործող յուրաքանչյուր առևտրային բանկ իր գործունեությունն իրականացնում է նրա զարգացմանը նպաստող հիմնական օրինաչափություններին համահունչ: Այնուհաստի, որ բանկային համակարգը այս կամ այն երկրում պատմականորեն ձևավորված, օրենսդրորեն ամրագրված ու տարբեր տեսակի փոխկապված բանկերի և այլ վարկային կազմակերպությունների ամբողջությունն է, որոնք գործում են միասնական ֆինանսավարկային համակարգի շրջանակներում¹: Ներկայումս ՀՀ բանկային համակարգը գտնվում է աստիճանական բարգավաճման փուլում՝ հիմնվելով միջազգային փորձի վրա: Բանկային համակարգը ֆինանսական շուկայի ամենահիմնական մասնակիցն է, նրա հանգուցային օղակը, որի կայունությունն ու հուսալիությունը փողի և կապիտալի շուկաների գործունեության արդյունավետության ապահովման կարևորագույն նախապայմաններն են: Բանկերի դերը տնտեսության մեջ բնութագրվում է նրանով, որ նրանք հանդես են գալիս որպես ֆինանսական միջնորդներ դրամական միջոցներ տրամադրողների և օգտագործողների միջև²: Այդ իսկ պատճառով հատկապես կարևորվում է առևտրային բանկերի գործունեության գնահատումը, որը ներառում է ֆինանսական ցուցանիշների ամբողջությունը, այդ թվում՝ շահույթի (վնասի) և շահութաբերության ցուցանիշների համակարգն ու դրանց վերլուծությունը, որոնք հնարավորություն են տալիս ճիշտ գնահատելու տվյալ բանկի ֆինանսական գործունեությունը: Ուստի այդ առումով որպես հետազոտման օբյեկտ վերցվել է «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ-ն և հաշվի առնելով բանկային համակարգի ֆինանսական կայունության կարևորությունը՝ ուսումնասիրվել են տվյալ բանկի ֆինանսական գործունեությունը բնութագրող և վերջինիս վրա ազդող գործոնները՝ ելնելով վերջին երեք տարիների ֆինանսական արդյունքներից: Կատարված հաշվարկների և վերլուծությունների համար տվյալների աղբյուր են հանդիսացել բանկի ֆինանսական ամփոփ հաշվետվությունների տվյալներով պայմանավորված և դրա վիճակը բնութագրող ցուցանիշները (ROA, ROE, NPM, AU), որոնք հնարավորություն են տալիս ճիշտ գնահատել բանկի ակտիվների որակը, դրամական հոսքերի կառուցվածքը, իրացվելիության աստիճանը և այլն:

Բանկերի գործունեության արդյունավետությունը բնութագրող հարաբերական ցուցանիշների թվին են դասվում բանկի շահութաբերության ցուցանիշները³, այդ թվում՝

1. Սեփական կապիտալի շահութաբերությունը, որը հարկումից հետո զուտ շահույթի և սեփական կապիտալի միջին մեծության հարաբերակցությունն է, որը համաշխարհային պրակտիկայում հանդես է գալիս **ROE** անվանմամբ: Վերջինս ցույց է տալիս միջին հաշվով սեփական կապիտալի մեկ միավորին բաժին ընկնող հարկումից հետո զուտ շահույթի գումարի չափը:

2. Ակտիվների շահութաբերությունը, որը հարկումից հետո զուտ շահույթի և ակտիվների միջին մեծության հարաբերակցությունն է:

¹ Բարսյան Վ., Բանկային գործի հիմունքներ, Երևան 2003թ., էջ 23:
² Սաստրյան Բ., Բանկային գործ, Երևան 2004թ., էջ 166:
³ Բաղանյան Լ., Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Երևան 2007թ., էջ 499:

Այս ցուցանիշն էլ իր հերթին անվանում են **ROA**, որը ցույց է տալիս, թե միջին հաշվով ակտիվների մեկ միավորին ինչքան հարկումից հետո զուտ շահույթ է բաժին ընկնում:

3. Չուտ տոկոսային մարժան (NIM), որը տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի տարբերության ու ակտիվների միջին մեծության հարաբերակցությունն է:

4. Չուտ ոչ տոկոսային մարժան (NNIM), որը հաշվարկվում է որպես ոչ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային ծախսերի ու ակտիվների միջև եղած հարաբերակցություն:

Վերոնշյալ ցուցանիշներից յուրաքանչյուրը բնութագրում է բանկի գործունեության այս կամ այն կողմը: Այսպես, եթե **ROA**-ի միջոցով բացահայտվում է, թե բանկը ակտիվների ինչպիսի մակարդակ ունի և որքանով է հաջող կատարում ներգրավված միջոցների տեղաբաշխումն այդ ակտիվներում, ապա դրան համահունչ էլ **ROE**-ն բանկի շահութաբերության չափման ցուցանիշն է բաժնետերերի համար: Այսինքն, այն մոտավոր սահմանում է զուտ շահույթի այն մեծությունը, որը բաժնետերերը ստանում են իրենց կապիտալի ներդրման շնորհիվ⁴:

5. Ակտիվների օգտագործման արդյունավետությունը կամ եկամտային բազան (AU), որը հաշվարկվում է որպես եկամտաբեր և ընդհանուր ակտիվների միջև եղած հարաբերակցություն:

6. Սփրեդ, որը հաշվարկվում է որպես տոկոսային եկամուտների և եկամտաբեր ակտիվների ու տոկոսային ծախսերի և ծախսատար պարտավորությունների միջև եղած հարաբերակցությունների տարբերություն:

Սփրեդը միաժամանակ ցույց է տալիս միջոցների տեղաբաշխման և ներգրավման տոկոսադրույքների տարբերությունը, և որքան բարձր է մրցակցությունը բանկային համակարգում, այնքան փոքր է հաշվարկային սփրեդը: Վերջինիս մեծությունը կախված է նաև բանկի ռիսկայնության աստիճանից:

7. Չուտ շահույթի մարժան (NPM), որը զուտ շահույթի և ընդհանուր եկամուտների միջև եղած հարաբերակցությունն է:

8. Ակտիվների բազմարկիչ (EM), որն ակտիվների և սեփական կապիտալի միջև եղած հարաբերակցությունն է:

Վերոնշյալ ցուցանիշների միջև կա փոխադարձ կապ և բանկի կողմից իրականացվող և գործունային վերլուծություն կատարելու համար որպես արդյունքային ցուցանիշ պայմանականորեն ընտրենք ROE-ն: Այն ներկայացնենք հետևյալ հավասարման տեսքով՝

$$ROE = NPM \times AU \times EM$$

$$\text{կամ } (ՉԸ \text{ հ.հ.}) / ՄԿ = ՉԸ (\text{հ.հ.}) / ԵԱ * ԵԱ / Ա * Ա / ՄԿ (1.1.1.)$$

որտեղ՝

NPM-ը բանկի զուտ շահույթի մարժան է

AU-ն՝ ակտիվների օգտագործման արդյունավետությունը

EM-ը՝ ակտիվների բազմարկիչը

Ինչպես գիտենք, յուրաքանչյուր բանկի գործունեության գնահատման բացարձակ ցուցանիշների թվին են դասվում եկամուտները, ծախսերը և շահույթը: Ընդ որում բանկում այս ցուցանիշները ներկայացվում են դասակարգված՝ տոկոսային եկամուտներ, տոկոսային ծախսեր, ոչ տոկոսային եկամուտներ, ոչ տոկոսային ծախսեր: Մակայն վերը նշված բացարձակ ցուցանիշները բնութագրում են բանկի գործունեությունը միայն մասնակիորեն: Առավել խորը ուսումնասիրությունների ժամանակ կիրառվում է հարաբերական ցուցանիշների համակարգը (աղյուսակ 2):

⁴ Բայադյան Ա. Հ., Առևտրային բանկերի շահութաբերության ցուցանիշների համակարգը և դրանց գործունային վերլուծությունը, Երևան 2004թ., էջ 18:

Ուսումնասիրվող բանկի բացարձակ ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ի տեսքով:

Աղյուսակ 1

«Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի գործունեության բացարձակ ցուցանիշները

(հազար դրամ)

| Ցուցանիշներ | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|-------------------------------|-----------|------------|------------|
| Տոկոսային եկամուտներ | 8,199,371 | 13,054,942 | 11,616,092 |
| Տոկոսային ծախսեր | 2,242,086 | 4,158,118 | 5,566,863 |
| Ոչ տոկոսային եկամուտներ | 2,224,622 | 2,700,278 | 2,035,491 |
| Ոչ տոկոսային ծախսեր | (12,183) | (3,886) | (8,106) |
| Զուտ շահույթ (հարկումից հետո) | 4,127,122 | 5,188,190 | 1,253,744 |

Աղյուսակ 2

«Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի եկամտաբերությունը բնութագրող ցուցանիշները

(հազար դրամ)


| Եկամտաբերության ցուցանիշներ | 2007թ. | 2008թ. | 2009թ. |
|--|--------|--------|--------|
| Սեփական կապիտալի շահութաբերություն(ROE) | 0,220 | 0,206 | 0,047 |
| Ակտիվների շահութաբերություն(ROA) | 0,044 | 0,045 | 0,010 |
| Զուտ տոկոսային մարժա (NIM) | 0,064 | 0,078 | 0,051 |
| Զուտ ոչ տոկոսային մարժա (NNIM) | 0,0237 | 0,0238 | 0,017 |
| Սփրեդ | 0,11 | 0,11 | 0,12 |
| Զուտ շահույթի մարժա (NPM) | 0,03 | 0,04 | 0,05 |
| Ակտիվների օգտագործման արդյունավետություն(AU) | 0,12 | 0,13 | 0,16 |
| Ակտիվների բազմարկիչ (EM) | 4,99 | 4,49 | 4,46 |

Ուսումնասիրելով «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ն և կատարելով ֆինանսական գործունեության գնահատում՝ պարզ դարձավ, որ շահութաբերության ցուցանիշներից սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշը՝ ROE-ն, 2008թ. տարեվերջին կազմել է 20.6 % նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 22.0%-ի դիմաց, իսկ 2009թ.՝ 4.7%: 2007թ. այս ցուցանիշի աճը տեղի է ունեցել ի հաշիվ հարկումից հետո զուտ շահույթի աճի, որը 2007թ. եղել է 4127122 հազար դրամ, իսկ 2008թ.՝ 5188190 հազար դրամ: Ակտիվների շահութաբերության ցուցանիշը 2007թ. տարեվերջին կազմել է 4.4%, 2008թ.՝ 4.5%: Այս ցուցանիշի աճը վկայում է այն մասին, որ բանկի ղեկավարության աշխատանքն արդյունավետ է եղել:

Գծապատկեր 1-ի միջոցով ներկայացնենք բանկի ակտիվների և սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշների փոփոխության դինամիկան 2007-2009թթ.:

Տոկոսային ծախսերի ու եկամուտների աճի հետևանքով աճել է նաև զուտ տոկոսային մարժան, որը 2007թ. եղել է 6,4%, 2008թ.՝ 7,8%, իսկ 2009թ.՝ 5,1%: Տոկոսային եկամուտների աճը հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ վարկային պորտֆելի, որն ամեն տարի աճման միտում է ունեցել¹: Աճման միտում են դրսևորել նաև եկամտային բազան, սփրեդը, զուտ շահույթի մարժան, ակտիվների օգտագործման արդյունավետության ցուցանիշը, սեփական կապիտալի բազմապատկիչը:

¹ «Արդշինհիմվեստբանկ» ՓԲԸ-ի 2007-2009թթ. տարեկան ֆինանսական հաշվետվություններ, www. ashib.am



Այսպես, ուսումնասիրվող բանկի եկամտային բազան 2007-2009թթ. աճել է՝ կազմելով համապատասխանաբար 55%, 66% և 65%: Սա ևս դրական երևույթ է և վկայում է այն մասին, որ ոչ եկամտաբեր ակտիվները բավականին արդյունավետ կերպով փոխարինվել են եկամտաբեր ակտիվներով:

Ելնելով այս ամենից՝ նպատակահարմար ենք գտնում բարձրացնել սեփական կապիտալի ու ակտիվների շահութաբերության ցուցանիշները, քանի որ դրանցից յուրաքանչյուրը բնութագրում է բանկի գործունեության որևէ կողմը և բանկի ղեկավարության աշխատանքի արդյունավետությունը:

Մասնավորապես, քանի որ ROE-ն 2008թ. նվազել էր՝ պայմանավորված EM-ի նվազմամբ, իսկ վերջինս ցույց է տալիս ֆինանսական կախվածության աստիճանը, այսինքն, թե քանի անգամ են ակտիվներն ավելացել սեփական կապիտալից: Քանի որ 2008թ. բանկի սեփական կապիտալը 2007թ. համեմատ ավելի արագ է աճել, քան ակտիվները, հետևաբար, բանկը, ունենալով ավելի շատ սեփական կապիտալ, կարող է ձեռք բերել ավելի շատ պարտավորություններ, ինչը կհանգեցնի նաև բանկի ակտիվների մեծացմանը: Այդ ակտիվները բանկը կարող է տեղաբաշխել տարբեր վարկերի տեսքով և ունենալ ավելի շատ շահույթ, ինչի հետևանքն էլ կլինի ROE-ի աճը:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԱՆՅՈՒԹԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀՀ-ում ագրովերամշակող արդյունաբերությունը գյուղատնտեսության ճյուղի առաջընթացը և զարգացումը պայմանավորող բնակչության պարենային ապահովվածության, արտաքին ապրանքաշրջանառության և հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկն է:

Վերջին տարիներին (2005-2009թթ.) միջին տվյալներով գյուղատնտեսության ճյուղին բաժին է ընկնում երկրի ներքին արդյունքի 19,5%: Հանրապետության պարենային հաշվեկշռի տվյալների համաձայն՝ տեղական արտադրության գյուղատնտեսական ծագման արտադրատեսակներին բաժին է ընկնում սպառված էներգետիկ արժեքի 58-60%-ը: Ըստ 2007-2009թթ. տվյալների՝ հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության մեջ 16,8%-ը պատկանում է գյուղատնտեսական ծագման արտադրատեսակներին, ընդ որում արտահանման կառուցվածքում այն կազմում է 17,1%, իսկ ներմուծման կառուցվածքում՝ 16,8%:

Լինելով փոքր տնտեսություն ունեցող երկիր՝ Հայաստանի համար կայուն տնտեսական աճի ապահովումը կարող է լինել միայն արտահանման հատուկ կողմնորոշում ունեցող ճյուղերի և արտադրությունների զարգացման հաշվին: Այս արտադրությունները և ծառայությունները պետք է լինեն հնարավորինս դիվերսիֆիկացված և հիմնված լինեն ժամանակակից տեխնոլոգիաների և որակյալ աշխատուժի օգտագործման վրա՝ միջազգային շուկայական կոնյունկտուրայի տատանումներից անկախ:

Գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված արտադրատեսակների արտադրության ծավալները 2005-2008թթ. ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները¹

| | 2005թ. | 2006թ. | 2007թ. | 2008թ. |
|--|---------|---------|---------|---------|
| Միս, տոննա | 45432.8 | 52694.4 | 57662.2 | 60047.1 |
| Մսամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա | 1414.6 | 1792.4 | 2265.8 | 2960.8 |
| Պանիր, տոննա | 14426.2 | 14653.9 | 16911.7 | 17229.8 |
| Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի), հազ. տոննա | 299.743 | 311.893 | 351.0 | 369.0 |
| Պաղպաղակ, տոննա | 1737.3 | 2362.6 | 2502.6 | 2110.8 |
| Պահածո, տոննա (հազ. պայմ. բանկա) | 12198.8 | 13926.7 | 12311.3 | 12707.5 |
| Ալյուր, հազ. տոննա | 139.716 | 152.334 | 145.1 | 128.4 |
| Չավարեղեն, տոննա | 139.9 | 295.5 | 367.8 | 202.4 |
| Հաց և հացամթերք, հազ. տոննա | 294.7 | 295.3 | 296.5 | 296.5 |
| Հրուշակեղեն, տոննա | 4540.6 | 7538.1 | 9552.2 | 8076.0 |
| Մակարոնեղեն, տոննա | 2429.4 | 3006.3 | 2399.6 | 2198.8 |

¹ ՀՀ ԱՎԾ տարեգիրք 2010թ., էջ 277:

| | 2005թ. | 2006թ. | 2007թ. | 2008թ. |
|--|---------|---------|---------|---------|
| Շաքարավազ, տոննա | 1893.0 | 2210.0 | 3293.7 | 3826.5 |
| Բուսական յուղ, տոննա | 289.1 | 2734.7 | 287.5 | 365.9 |
| Օղի և օդու-լիկյորի արտադրանք, հազ. լիտր | 13921.3 | 12786.5 | 12735.2 | 12122.1 |
| Կոնյակ, հազ.լիտր | 9135.3 | 9058.9 | 14130.8 | 15961.5 |
| Խաղողի գինի, հազ. լիտր | 6739.4 | 3831.4 | 3674.0 | 8238.5 |
| Շամպայն գինի, հազ. լիտր | 519.2 | 542.8 | 578.7 | 464.4 |
| Գարեջուր, հազ. լիտր | 10750.9 | 12617.6 | 11631.4 | 10527.0 |
| Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր | 32422.4 | 35651.1 | 37444.9 | 44286.2 |
| Բնական հյութեր, հազ. լիտր | 4281.0 | 4525.0 | 5712.2 | 6643.7 |
| Հանքային ջրեր, հազ. լիտր (հազ. 0.5լ շիշ) | 24115.3 | 27239.5 | 31601.9 | 35846.6 |
| Աղբյուրի ջուր, հազ. լիտր | | | 8108.3 | 10518.6 |
| Աղ, տոննա | 34682.1 | 36990.2 | 34815.0 | 37334.4 |
| Սիգարետներ, մլն հատ | 3019.5 | 2825.4 | 2910.7 | 3116.9 |
| Ֆերմենտացված, ծխախոտ, տոննա | 665.2 | 245.8 | 219.5 | 432.4 |

Ըստ աղյուսակի տվյալների՝ 2008թ. 2007 թվի համեմատ կրճատվել է՝ մակարոնեղենը 8,5%, ալյուրը՝ 11,5%, ձավարեղենը՝ 45,0%, օղի և օղի-լիկյորային արտադրանքը՝ 4,8%, գարեջուրը՝ 9,5%: Նկատելի է աճի միտումը մսի՝ 4,1%, միս-մսամթերքի՝ 31%, կաթինը՝ 5,1%, բուսական յուղինը՝ 27,3%, կոնյակինը՝ 18,3%, սիգարետների՝ 7,1% և ֆերմենտացված ծխախոտինը՝ 97,0%:

Գյուղատնտեսական ծագման մթերքների ներմուծման և արտահանման ցուցանիշներն արժեքային արտահայտությամբ ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Արտահանման և ներմուծման գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների ծավալները¹

| | Արտահանում | | | Ներմուծում | | |
|--|------------|--------|--------|------------|--------|--------|
| | 2008թ. | 2009թ. | 2010թ. | 2008թ. | 2009թ. | 2010թ. |
| Ընդամենը | 1041.2 | 710.2 | 1011.4 | 3579.2 | 3281.8 | 3321.1 |
| այդ թվում՝ | | | | | | |
| Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 7.4 | 15.3 | 23.4 | 95.1 | 97.5 | 101.6 |
| Բուսական ծագման արտադրանք | 18.3 | 19.9 | 15.9 | 173.0 | 198.0 | 214.9 |
| Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր | 0.047 | 2.9 | 29.1 | 38.8 | 51.8 | 49.9 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 152.0 | 99.6 | 131.2 | 271.0 | 264.7 | 309.6 |
| Ընդամենը գյուղատնտեսական ծագման արտադրանք | 177.7 | 119.5 | 170.5 | 577.9 | 612.0 | 676.0 |

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ 2009-2010թթ. արտահանման ընդհանուր ծավալում գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է՝ 16,8 և 16,9%, իսկ ներմուծման մեջ՝ 18,4 և 17,1%: Ընդհանուր արտահանման աճը 2007թ. նախորդ տարվա համեմատ կազմել է 17,5%:

Տվյալների համաձայն՝ արտադրատեսակների ընդհանուր արտահանման տեմպերն

¹ ՀՀ «Սոցիալ-տնտեսական վիճակը», 2010թ., էջ 125:

ավելացել են, ներմուծման տվյալները 2009թ. նախորդ տարվա համեմատ ավելացել են 10,4%-ով: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական ծագման արտադրանքի ծավալներին, ապա դրանք աճել են՝ արտահանման գծով՝ 42,0%-ով, ներմուծման գծով՝ 10,5%-ով: Վերը նշված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսական հումքանյութային ռեսուրսների արդյունաբերական ագրովերամշակման դերը և ծառացած խնդիրները պահանջում են ճյուղի հանդեպ պետական կարգավորման և աջակցության տարբեր գործիքների և մեխանիզմների կիրառում, մասնավորապես տեղական հումքով արտադրվող սննդամթերքի ինքնարժեքի իջեցման նպատակով մթերվող գյուղատնտեսական հումքի ինքնարժեքի նվազման համար անհրաժեշտ է՝

- գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի դրույքաչափերի, ոռոգման ջրի, մատուցվող ագրոտեխնիկական ծառայությունների, պարարտանյութերի և բուսաքիմիկատների ձեռքբերման գների սուբսիդավորում.
- գյուղացիական տնտեսությունների խորացմանը նպաստող մեխանիզմների և արտոնությունների սահմանում, այսինքն՝ գյուղացիական տնտեսությունների միավորումը վերամշակողների հետ հանձնիս կոոպերատիվների և վերջիններիս համար հատուկ հարկային արտոնությունների սահմանում:

Տարբեր աղբյուրների ներդրումների շնորհիվ վերջին երկու տարիներին ստեղծվել կամ վերազինվել են պահածոների, զինեգործության, պանրի, կաթնամթերքի և մսամթերքի արտադրությամբ զբաղվող մոտ 170 փոքր և միջին ձեռնարկություններ: Ներկայումս ՀՀ-ում գործում են վերագործարկված կամ նոր ստեղծված շուրջ 30 պահածոների, 40 զինեգործական, ավելի քան 250 կաթի, 70 մսամթերքի և 4 ծխախոտի վերամշակման ընկերություններ:

Վերամշակող ընկերությունների գործունեության ակտիվացումը նպաստում է գյուղացիական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը: Վերամշակող ընկերությունների կողմից գյուղատնտեսական մթերքների գնումների ծավալները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Վերամշակող արդյունաբերական ընկերությունների կողմից պտղի, բանջարեղենի և խաղողի գնումների տվյալները

| | 2005թ. | 2006թ. | 2007թ. | 2008թ. | 2009թ. | 2010թ. |
|------------|--------|--------|---------|---------|----------|----------|
| Պտուղ | 20715 | 12789 | 11254.9 | 19405.5 | 11255.0 | 36265.0 |
| Բանջարեղեն | 42925 | 67563 | 32308 | 38999 | 32309.7 | 29682.0 |
| Խաղող | 95592 | 100055 | 127749 | 137356 | 127740.0 | 134968.0 |

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, խաղողի մթերումների ծավալները տարեց-տարի աճում են: Ընդ որում, ըստ մարզերի՝ ունեն հետևյալ պատկերը: Արարատի մարզում գործում է 17 ընկերություն, գնումների ծավալը՝ 75562,5տ, Արմավիրում համապատասխանաբար՝ 8, 36575,8տ, Կոտայքի մարզում՝ 4, 7388,1տ, Արագածոտնի մարզում՝ 2, 1501,3տ, Վայոց Ձորի մարզում՝ 2, 1688,0տ, Տավուշի մարզում՝ 5, 5024,3տ: Պտղի մթերումների ծավալների նվազումը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով: Բանջարեղենի գնումների ծավալների նվազումն իր ազդեցությունն է թողել պահածոների արտադրության վրա: ՀՀ գործում են պտուղ-բանջարեղենի 28 ընկերություններ:

Ըստ ԱՎԾ տվյալների՝ 2009թ. ընդհանուր առմամբ մթերվել և վերամշակվել է 171,3 հազար տոննա պտուղ-բանջարեղեն և մոտ 17,2 միլիարդ դրամի խաղող, այդ թվում՝ 43:6

հազար տոննա պտուղ-բանջարեղեն՝ մոտ 2,41 մլրդ դրամի և 127,7 հազար տոննա խաղող, մոտ 14,74 մլրդ դրամի, իսկ արտահանումը կազմել է մոտ 24,0 հազար տոննա նախորդ տարվա 16,2 հազարի փոխարեն:

Հանրապետության վերամշակող արդյունաբերության ճյուղի զարգացմամբ և այդ նպատակով բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմամբ ու մրցակցության ուժեղացման ուղղությամբ նպատակամետ քաղաքականության իրագործմամբ պետք է անհրաժեշտ նախադրյալներ ստեղծվեն արդյունաբերական ձեռնարկությունների հումքանյութային ռեսուրսների ապահովման մակարդակի բարձրացման, ճյուղի կայուն զարգացման ամրապնդման գործում:

Ագրովերամշակող կազմակերպությունների հետագա զարգացման նպատակով անհրաժեշտ է լուծում տալ օգտագործվող հումքի որակի, քանակի, ինչպես նաև մատակարարումների անընդհատությանը, քանի որ այդ գործոնները կանխորոշում են ոչ միայն շրջանառու միջոցների վերարտադրության տեմպերը և վերջնական արտադրանքի որակաքանակական ցուցանիշները, այլև աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրական ֆոնդերի օգտագործման բարելավման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման, ճյուղի շահութաբերության բարձրացման կարևորագույն բաղադրիչներն են:

Կարևորվում է ՀՀ ագրովերամշակող կազմակերպությունների հզորացման մրցակցային պայմանների բարելավման միջոցով խթանել հիմնական պարենամթերքի ներկրումը տեղական արտադրությամբ փոխարինելու գործընթացը, որի համար անհրաժեշտ է.

- ագրովերամշակող կազմակերպությունների տնտեսական գործունեությունը խթանող օրենսդրական դրույթների իրականացում,
- ագրովերամշակող կազմակերպությունների կարողությունների հզորացմանն ուղղված պետական աջակցության միջոցների իրականացում,
- գյուղատնտեսական հումքի արտադրության ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման արդիական մեխանիզմների կիրառում:

Միջազգային փորձը վկայում է, որ գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը հանգեցնում է տնտեսվարող սուբյեկտների կրճատմանը, մեկ տնտեսության հաշվով հողատարածության մեծացմանը և ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման՝ զբաղվածների թվի կրճատմանը: Ուստի, փոքր հողակտորների վրա արդյունավետ տնտեսվարմանը պետք է նպաստեն ճյուղի սպասարկող ծառայությունների և շուկայական ենթակառուցվածքների ընդլայնումը և մրցունակության բարձրացումը: Դա կոոպերացիայի փոքր հողակտորներով պայմանավորված դժվարությունների հաղթահարման ամենաարդյունավետ ուղին է:

Հանրապետության ագրովերամշակող ճյուղի զարգացման համար կարևորվում է նաև գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը, որտեղ խթանման քայլերն են.

- գյուղատնտեսության համակարգում իրականացվող դրամաշնորհային վարկային ծրագրերի համապատասխան մասնաբաժինների նպատակաուղղում գյուղատնտեսական կոոպերատիվների, գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեության կազմակերպման ձևերի ստեղծմանը և ամրապնդմանը,
- օրենսդրորեն արտոնությունների կիրառում կոոպերատիվների և գյուղացիական անհատ տնտեսությունների համար՝ ԱԱՀ-ի հարկման նվազագույն շեմի սահմանման միջոցով հատուկ պայմանների սահմանում՝ կոոպերատիվների անդամ հանդիսացող գյուղացիական տնտեսությունների թիվը հաշվի առնելով,

- աջակցություն կոոպերատիվների խորհրդատվական տեղեկատվության տրամադրման գործում:

Հաշվի առնելով գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների դերը նաև բնակչության պարենային ապահովման մակարդակի բարձրացման բնագավառում՝ այդ ոլորտի հումքանյութային ռեսուրսների հետագա արդյունաբերական վերամշակումը և զարգացումը պետք է նպատակաուղղված լինեն հետևյալ խնդիրների լուծմանը՝

- բարձրացնել ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանության մակարդակը,
- արդյունավետ կառուցակարգերի ներդրման միջոցով խթանել ոլորտի վարկավորումը՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից շրջանառու միջոցների համալրման, տեխնիկական վերագինման, նոր տեխնոլոգիաների կիրառման մատչելիությունը բարձրացնելու նպատակով,
- հաշվի առնելով, որ վերամշակված արտադրատեսակների վրա կատարված ծախսերում 60-70 %-ը կազմում է հումքի արժեքը, տնտեսական համապատասխան լծակների միջոցով նպաստել գյուղատնտեսական մթերքի ինքնարժեքի նվազմանը,
- ընդլայնել աջակցությունը նոր շուկաների որոնման և ավանդական շուկաների վերականգնման բնագավառում՝ ամրապնդելով միջպետական համագործակցությունը, ագրոֆորումների, ցուցահանդես-վաճառքների կազմակերպման, արտադրանքի որակը միջազգային չափանիշներին համապատասխանեցման (ազգային ստանդարտների ընդունման), գովազդի բարելավման և այլ եղանակներով,
- նպաստել հումքանյութային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, հումքի համալիր (անթափոն) օգտագործմանը, վերամշակող արտադրության ռացիոնալ տեղաբաշխմանը,
- աջակցել գյուղմթերք արտադրողների և վերամշակողների ու վարկավորվող կառույցների միջև պայմանագրային հարաբերությունների կատարելագործմանը, կապված երկարաժամկետ և արտոնյալ վարկերի տրամադրման հետ,
- նպաստել գյուղմթերք արտադրողների, վերամշակողների, իրացնողների միավորմանը կոոպերատիվներում և կամավոր հիմունքներով ստեղծվող այլ միավորումներում,
- բարձրացնել գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը, մեղմել գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնախնդիրները,
- բարձրացնել կարևորագույն պարենամթերքների նկատմամբ ՀՀ ինքնաբավարարման մակարդակը,
- բարձրացնել գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսավարողների ապրանքների մրցունակությունը,
- ավելացնել կարևորագույն պարենամթերքի տեղական արտադրության ծավալները,
- բարելավել գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշիռը՝ կրճատելով հաշվեկշռի բացասական մնացորդը,
- արտահանվող արտադրանքի կառուցվածքում մեծացնել գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների մասնաբաժինը,
- բարենպաստ պայմաններ ստեղծել գյուղատնտեսության զարգացման, մասնավորապես գյուղատնտեսության տնտեսավարող սուբյեկտների համար:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Չնայած վերջին տարիներին հանրապետությունում հաստատագրվող տնտեսական աճին՝ դեռևս ձևավորված չեն այն բոլոր նախադրյալները, որոնք անհրաժեշտ են տնտեսության տարբեր ոլորտների, այդ թվում՝ գյուղատնտեսության զարգացման համար: Ներկայումս հանրապետությունում ծառայել են ռազմավարական նշանակություն ունեցող՝ պարենային ինքնապահովվածության աստիճանի բարելավման, երկրի պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրներ, որոնք կարող են լուծվել առաջին հերթին տեղական արտադրության հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման միջոցով, քանի որ առաջնահերթ անհրաժեշտ պարենի պահանջարկի 55-60%-ը բավարարվում է տեղական արտադրության հաշվին: Ինչպես պարենային ապահովվածության, այնպես էլ պարենային անկախության լուծման համար առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել հանրապետության ագրոարդյունաբերական համակարգի համաչափ և կայուն զարգացումը՝ բարձրացնելով աշխատանքային, նյութատեխնիկական, ֆինանսական, բնական և այլ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը:

Ագրոպարենային համակարգը 2004-2008թթ. ՀՆԱ-ի կառուցվածքում կազմել է 25%, իսկ գյուղատնտեսությունը՝ 18,8%: Մյուս ճյուղերի համեմատ ՀՆԱ-ի ընդհանուր անկման վրա գյուղատնտեսությունն ավելի քիչ է տուժել: Ուրեմն՝ գյուղատնտեսության զարգացման վարկավորման պայմաններում այն կդառնա ավելի կայուն և հուսալի:

Աղյուսակ 1

Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները և կառուցվածքը¹

| Մշակաբույսերը | 1990թ. | | 2007թ. | | 2008թ. | | 2009թ. | | 2010թ. | |
|---------------------------------|---------|----------------|---------|----------------|---------|----------------|---------|----------------|---------|----------------|
| | հազ. հա | Կառուցվածքը, % | հազ. հա | Կառուցվածքը, % | հազ. հա | Կառուցվածքը, % | հազ. հա | Կառուցվածքը, % | հազ. հա | Կառուցվածքը, % |
| Հացահատիկային մշակաբույսեր | 138.2 | 54.6 | 176.2 | 57.6 | 172.8 | 56.8 | 171.0 | 57.2 | 171.0 | 56.3 |
| Կարտոֆիլ | 22.4 | 9.0 | 31.6 | 10.3 | 34.3 | 11.3 | 32.0 | 10.7 | 31.5 | 10.4 |
| Բանջարեղեն | 18.0 | 7.2 | 25.6 | 8.4 | 24.2 | 8.0 | 23.9 | 8.0 | 24.0 | 8.0 |
| Բոստան | 4.8 | 2.3 | 5.9 | 1.9 | 5.4 | 1.8 | 6.0 | 2.1 | 6.0 | 2.0 |
| Կերային մշակաբույսեր | 65.0 | 26.1 | 65.0 | 21.2 | 65.3 | 21.5 | 63.2 | 21.3 | 67.0 | 22.2 |
| Տեխնիկական մշակաբույսեր | 1.9 | 0.8 | 1.6 | 0.5 | 2.4 | 0.8 | 2.4 | 0.8 | 3.2 | 1.1 |
| Ընդամենը ցանքային տարածությունը | 250.3 | 100 | 305.9 | 100.0 | 304.4 | 100.0 | 300.0 | 100.0 | 301.7 | 100.0 |
| Պտուղ | 50.2 | 63.2 | 38.0 | 70.5 | 36.7 | 68.6 | 37.0 | 69.2 | 39.0 | 68.8 |
| այդ թվում՝ բերքատու | 36.3 | x | 32.4 | x | 31.1 | x | 31.7 | x | 33.4 | x |
| Խաղող | 29.2 | 36.8 | 15.9 | 29.5 | 16.8 | 31.4 | 16.5 | 30.8 | 17.7 | 31.2 |
| Այդ թվում՝ բերքատու | 24.6 | x | 14.1 | x | 14.4 | x | 14.3 | x | 15.3 | x |
| Ընդամենը բազմամյա տնկարկներ | 79.4 | 100.0 | 53.9 | 100.0 | 53.5 | 100.0 | 53.0 | 100.0 | 56.7 | 100.0 |

¹ ԱՎԾ տվյալներ, 2010թ.:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետ զարգացումը խոչընդոտում են գյուղական տնտեսությունների փոքր չափերը և գյուղատնտեսությունն ու գյուղը սպասարկող ենթակառուցվածքների դանդաղ ձևավորումը: Մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1/4 գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1/1 վարելահող: Վարելահողերի 33%-ը կամ 150 հազար հա նպատակային նշանակությամբ չի օգտագործվում: Հրատապ լուծում պահանջող խնդիր է գյուղացիական տնտեսությունների խոշորացումը: Հողօգտագործման հիմնախնդիրների մասին են վկայում գյուղացիական մշակաբույսերի ցանքատարածությունները և բազմամյա տնկարկների տարածքները (աղյուսակ 1):

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2009թ. հանրապետությունում կատարվել է 298.1 հազար հա ցանք անցյալ տարվա 304.4 հազարի դիմաց:

Հիմնական բուսաբուծական մթերքների արտադրության ծավալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հիմնական մշակաբույսերի համախառն բերքը և բերքատվությունը¹

| Մշակաբույսերը | Չափի միավորը | 2007թ. | 2008թ. | 2009թ. | 2010թ. |
|-----------------------------------|--------------|--------|--------|--------|--------|
| Հացահատիկային մշակաբույսեր | | | | | |
| Համախառն բերքը | հազ.տ | 452.5 | 415.4 | 359.1 | 416.5 |
| Բերքատվությունը | ց/հա | 25.9 | 24.1 | 22.6 | 24.5 |
| Կարտոֆիլ | | | | | |
| Համախառն բերքը | հազ.տ | 583.9 | 648.6 | 579.1 | 617.0 |
| Բերքատվությունը | ց/հա | 183.3 | 188.7 | 184.4 | 196.0 |
| Բանջարեղեն | | | | | |
| Համախառն բերքը | հազ.տ | 845.3 | 825.3 | 793.1 | 876.0 |
| Բերքատվությունը | ց/հա | 324.0 | 321.4 | 327.1 | 365.0 |
| Բոստան | | | | | |
| Համախառն բերքը | հազ.տ | 206.3 | 182.2 | 210.9 | 222.0 |
| Բերքատվությունը | ց/հա | 350.6 | 334.5 | 350.6 | 370.0 |
| Պտուղ | | | | | |
| Համախառն բերքը | հազ.տ | 260.2 | 317.8 | 332.8 | 305.0 |
| Բերքատվությունը | ց/հա | 79.7 | 101.2 | 104.4 | 91.3 |
| Խաղող | | | | | |
| Համախառն բերքը | հազ.տ | 218.9 | 185.8 | 203.5 | 222.6 |
| Բերքատվությունը | ց/հա | 153.6 | 128.0 | 144.9 | 145.5 |

Հիմնականում, ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, ցանքատարածությունների ավելացման և որոշ չափով ինտենսիվացման մակարդակի բարձրացման հաշվին է ավելացել հացահատիկի, բանջարեղենի և կարտոֆիլի համախառն բերքը: Որոշ տեղաշարժ է նկատվում այգեգործության մեջ: Խաղողագործության զարգացումը խոչընդոտում են խաղողի որոշ տեսակների անհամապատասխանությունը վերամշակող արդյունաբերությանը և շուկայի պահանջներին, ագրոտեխնիկայի ոչ լիարժեք կատարումը և այգիների բարձր նոսրությունը:

Ժամանակակից գյուղատնտեսության զարգացման ուղին արդյունավետության բարձրացումն է, արդիական տեխնոլոգիաների և կառավարման համակարգի կիրառումը: Այն, որ

¹ Նույն տեղում, էջ 320-304:

դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, խոսում է ինտենսիվացման ցածր մակարդակ ունեցող գյուղատնտեսության մասին:

Գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման գործում բացառիկ նշանակություն ունի հողերի ոռոգումը: Հանրապետության 232.9 հազար հա ոռոգելի հողատարածքներից փաստացի ոռոգվում է 156.0 հազար հա: Թեև պետական աջակցությամբ զգալի աշխատանքներ են կատարվել ոռոգման համակարգերի վերականգնման և զարգացման ուղղությամբ, սակայն դեռևս կան բազում խնդիրներ՝ կապված ոռոգման համակարգի կատարելագործման հետ: Ջրի ազգային ծրագրերն իրականացնելու համար սահմանվել են կարճ (2010թ.), միջին (2010-2015թթ.) և երկարաժամկետ (2015-2020թթ) ծրագրեր, որտեղ հիմնական միջոցառումներն են՝ ոռոգման տեխնոլոգիաների վարկավորումը, ոռոգման նոր ձևերի ներդրումը և անցումը տեխնիկական ոռոգման ինքնահոս եղանակի:

Լուրջ խնդիր է պարարտացման հարցը: Վերջին տասնամյակում 10 անգամ կրճատվել է հանքային և 18 անգամ օրգանական պարարտանյութերի և համարյա 10 անգամ էլ բույսերի պաշտպանության միջոցների օգտագործումը:

Ամնխիթար վիճակում է գյուղատնտեսական տնտեսություններում նյութատեխնիկական ապահովման և արտադրական սպասարկման կազմակերպման գործընթացը:

Ներկայումս գյուղտեխնիկայի և սարքավորումների ավելի քան 95%-ի շահագործման ժամկետը լրացել է: Տեխնիկայի սեփականատերերի մեծ մասն ի վիճակի չէ ապահովելու աշխատանքների պահանջը, բավականին դժվար է վառելիքի և պահեստամասերի ձեռքբերման հարցը: Տեխնիկայի սեփականատերերն իրենց կամքն են թելադրում, և գյուղացու համար դժվար է հողամշակման ծախսերը վճարել, և հետևաբար տիրապետող է դառնում ձեռքի աշխատանքը: Հրատապ պահանջ է տեխնիկայի համատեղ տնօրինման և օգտագործման անհրաժեշտությունը:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում հանրապետությունում զարգացած որոշակի դրական ցուցանիշների հետ մեկտեղ, ինչպես գյուղատնտեսական մթերք արտադրող, այնպես էլ վերամշակող արդյունաբերական ձեռնարկություններում շարունակում են գոյություն ունենալ բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց լուծումն առանց ֆինանսական լուրջ ներդրումների գործնականում անհնարին է:

Ագրոպարենային համակարգի զարգացման ներկա փուլում, հաշվի առնելով գյուղական աղքատության բարձր մակարդակը (25,5%), աշխատուժի շուկայում գյուղացիության որոշակի անմրցունակությունը, ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը, արմատապես փոխված հողօգտագործման համակարգը և հողակտորների մասնատվածությունը, առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների արդիականությունը՝ գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմամբ, որի իրականացման համար անհրաժեշտ է պետության նպատակային աջակցությունը:

Ավելին, ըստ միջազգային փորձի, գյուղատնտեսության ոլորտում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը, որպես կանոն, ստեղծում է տնտեսվարող սուբյեկտների կրճատում, մեկ տնտեսության հաշվով հողատարածության բարձրացում և ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման՝ զբաղվածների թվի նվազում: Կարևորելով տնտեսավարման բազմաձևության և կամավորության սկզբունքը՝ կոոպերացիայի զարգացումն անհրաժեշտ է հստակ ներկայացնել գյուղացիական տնտեսությունների և կոոպերատիվների առավելություններն ու թերությունները՝ կարևորելով այն, որ գյուղացիական խորհրդատվական, բացատրական պարզաբանումների շնորհիվ գյուղացին համոզվի, որ անդամագրվելով չի

կորցնում հողի նկատմամբ իր սեփականատիրության իրավունքը, քանի որ այն իրավաբանորեն հաստատագրված է կանոնադրական փաստաթղթերում:

Տնտեսությունների խոշորացումը կոռպորացման միջոցով արդիական է ինտեգրման գործընթացների խթանման և երկրի մակրոտնտեսական կայունացման և առաջընթացի տեսանկյունից: Այսպես, արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում պարենի և հումքի բաժինը (2004-2008թթ.) կազմել է արտահանման 14,3%-ը և ներմուծման 17,1%-ը: 2009թ. 2008թ. համեմատ մոտ 30-35%-ով կրճատվել են գյուղատնտեսական ծագման արտադրանքի արտահանման ծավալները, որից էլ տուժել է գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունը, մոտ 7,8%-ով պակասել է համախառն արտադրանքը նախորդ տարվա համեմատ:

2006-2008թթ. գյուղատնտեսությունում ապահովվել է որոշ տնտեսական աճ, 2006թ. այն կազմել է 0,4%, 2007թ.՝ 9,6%, 2008թ.՝ 1,3%: Ընդհանուր գյուղատնտեսական ոլորտում գրանցվել է 0,1% անկում, իսկ 2009թ. հանրապետության ընդհանուր տնտեսական անկումը կազմել է 14,4%: Գյուղատնտեսության տնտեսական կայուն աճի ապահովումը պայմանավորված է արտահանման հատուկ կողմնորոշում ունեցող ճյուղերով և արտադրություններով:

Ագրոպարենային համակարգի զարգացման միջոցով տնտեսական աճի ապահովման համար կարևորվում են նաև գիտական նվաճումները, նոր տեխնոլոգիաների ներդրումը և մասնագիտական խորհրդատվության համակարգի ինտեգրումը, որի համար պահանջվում են հետևյալ միջոցառումները.

- շարունակել գյուղատնտեսական ոլորտի տեղեկատվության, խորհրդատվության, գիտական և կադրային ապահովման հիմնախնդրի լուծման ուղղությամբ պետական քաղաքականությունը:
- Իրականացնել գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների գոտիական սկզբունքով խոշորացում և կառուցվածքային փոփոխություններ:
- Իրականացնել մարզային մակարդակով գիտական-ուսումնական և խորհրդատվական կառույցների ինտեգրման միջոցով ինստիտուցիոնալ բարեփոխումներ:
- Ապահովել ուսումնական համակարգի հետևողական բարեփոխումները՝ արդիական տեխնոլոգիաներին իրազեկ աշխատանքի շուկայում մրցունակ մասնագետների պատրաստում և վերապատրաստում:
- Բարձրացնել գյուղատնտեսության աջակցության հանրապետության և մարզային կենտրոնների տեխնիկական վերազինման և մասնագիտական կարողությունների հզորացման միջոցով խորհրդատվական համակարգի արդյունավետությունը, բացահայտել ֆերմերների առաջնային կարիքները, ձևավորելով գործուն համակարգ:
Գյուղատնտեսության տնտեսական աճի ապահովումը և ծառայած մյուս հիմնախնդիրները պահանջում են գյուղի հանդեպ պետական կարգավորման և աջակցության մեխանիզմների կիրառում:

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՄԳ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտության գծով փոխարևօրեն, տ. գ. դ., պրոֆեսոր*

ԷԴՈՒԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՄԳ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ. գ. դ., պրոֆեսոր*

**ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԴԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԴՅ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերացման համար, հատկապես ՀՀ գյուղատնտեսության ոլորտում, այժմ պահանջվում է կոնկրետ արդյունավետ միջոցառումների իրականացում, որոնք կնպաստեն ճգնաժամի հետևանքների լիկվիդացմանն ու գյուղատնտեսության հետագա զարգացմանը: Նախ նշենք, որ Հայաստանի գյուղատնտեսությունը ինչպես նախկինում, այնպես էլ անկախությունից հետո ունեցել է և ունի իր կարևոր ու վճռորոշ դերը՝ հանրապետության սոցիալ-տնտեսական, բնակչությանը սննդի ապահովման, աշխատատեղերի ստեղծման, երկրի պարենային ապահովման կարևոր գործում:

Վերջին հինգ տարիների (2005-2009թթ.) տվյալներով գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կազմել է միջինը 18%, իսկ սննդարդյունաբերության կշիռն էլ կազմում է 5,5%:

Իհարկե, ճգնաժամը նաև բացահայտեց Հայաստանի տնտեսության թույլ կողմը. դրանք են՝ տնտեսության դիվերսիֆիկացման ոչ բարձր մակարդակը և մեծ ծավալի դրամի անհրաժեշտությունը, մրցունակության ցածր մակարդակը:

Առաջնային խնդիր է այս ոլորտի համար նախատեսված վարկային միջոցների պակասը: Գյուղական շրջաններում միկրոձեռնարկությունների ու ձեռներեցների համար լուրջ դժվարություն է նոր գործ ձեռնարկելու և իրականացնելու հարցում անհրաժեշտ կապիտալի բացակայությունը: Կառավարությունը չի տնօրինում համապատասխան ռեսուրսներ՝ գյուղատնտեսությունը վարկավորելու համար: Առևտրային բանկերը կողմնորոշված են հիմնականում մեծ ձեռնարկությունների ուղղությամբ և երբեմն հակված չեն լինում փոքր տնտեսություններին վարկավորելու գործում: Իսկ գյուղական շրջաններում միկրովարկավորման և փոքրածավալ ֆինանսավորման շուկան առկա է, և գյուղական բանկային համակարգի լրիվ ձևավորումն ու դրանց գործունեության ակտիվացման գործընթացը՝ գերակա խնդիր:

Գյուղական տնային տնտեսությունները, ապրուստի միջոցներ ձեռք բերելու համար, բացի գյուղատնտեսությունից, ունեն խիստ սահմանափակ ընտրություն: Հայաստանում գյուղական զբաղվածության մոտ 4/5 մասը դեռ ներառված է գյուղատնտեսության ոլորտում, որը բարձր ցուցանիշ է նույնիսկ անցումային տնտեսությունների համար: Սա մասամբ բացատրում է այն փաստը, որ գյուղատնտեսությունը թեև դանդաղ, բայց զարգանում է, սակայն այն լրիվ մասնագիտացված չէ և չունի անհրաժեշտ առևտրային կողմնորոշում, ինչպես նաև չունի հաստատուն առաջընթաց ու հետադարձ կապեր, որոնք կխթանեին աճը գյուղական տնտեսության մնացած հատվածում:

Գյուղատնտեսության ոլորտի մեկ այլ յուրահատկությունն էլ մասնակի զբաղվածությունն է: Գյուղական աշխատուժի միայն 1/3-ն է աշխատում ամբողջ տարին, մնացածի համար զբաղվածությունն ունի խիստ սեզոնային բնույթ:

Չարգացած տնտեսություն ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ շուկայի մրցակցությանը դիմանալու, իրենց արտադրանքն առանց դժվարության իրացնելու, ընդհանուր առմամբ՝ արտադրությունը զարգացնելու նպատակով, ֆերմերները համախմբվում են տարբեր տիպի կոոպերատիվներում, ինչը թույլ է տալիս նրանց համատեղ ուժերով հաղթահարել արտադրության կազմակերպման, ինչպես նաև՝ գյուղմթերքների իրացման ժամանակ առաջացած խոչընդոտները:

Այստեղ գլխավոր նպատակը գյուղացիական տնտեսությունների խոչորացումն է, որը խթանելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ընդունել մի շարք նոր օրենքներ և կատարել օրենսդրական փոփոխություններ՝ կապված խոչորացվող տնտեսությունների իրավահարաբերությունների կարգավորման, արտոնյալ, երկարաժամկետ անտոկոս վարկերի և այլ արտոնությունների տրամադրման հետ:

Գյուղացիական տնտեսությունների խոչորացումն իրոք կարևորագույն խնդիր է: Անտարակույս, գյուղատնտեսությունը բավականին խոցելի է, ինչն առաջին հերթին պայմանավորված է գյուղացիական տնտեսությունների փոքր չափերով (մեկ տնտեսությանը միջինը բաժին է ընկնում 1,4 հա գտ. հողատեսքեր, այդ թվում՝ 1,1 հա վարելահողեր), հողաբաժինների կտրտվածությամբ (գտ. արտադրությունը իրականացվում է ավելի քան 1,2 մլն. հողակտորների վրա (տարբեր տեղերում), ոլորտը բնութագրվում է վարման բարձր ռիսկայնությամբ: Հողի շուկան գրեթե չի գործում:

Գեռևս անկատար է և տնտեսավարման ներկայիս պայմաններին չի համապատասխանում՝ արտադրական, շուկայական (ֆինանսական) և սոցիալական ենթակառուցվածքների գործունեությունը: Բնակլիմայական պայմաններն էլ իրենց ազդեցությունն են ունենում արտադրության վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարելահողերը վատ են օգտագործվում: Վերջին 4 տարիների կտրվածքով վարելահողերի օգտագործման միջին մակարդակը կազմում է 69,7%:

ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի տարածքը և կառուցվածքը

| Գյուղատնտեսական հողատեսքեր | Հողատարածքը հազ. հա | Տեսակարար կշիռը, % |
|--|---------------------|--------------------|
| Վարելահողեր | 449, 41 | 21,20 |
| Բազմամյա տնկարկներ | 32,56 | 1,54 |
| Խոտհարքներ | 127,35 | 6,0 |
| Արոտներ | 1.116,56 | 52,06 |
| Այլ հողատեսք | 394,43 | 18,60 |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը | 2.120,31 | 100,0 |

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ վերջին չորս տարիների տվյալներով հանրապետության ցանքատարածությունների 1հա-ից միջին հաշվով ապահովվել է 951 հազար դրամի համախառն արտադրանք, որը, գնահատելով 145 հազար հա չօգտագործվող վարելահողերի հաշվով, ստացվում է, որ հողային ռեսուրսների լիարժեք չօգտագործման հետևանքով ստացված համախառն արտադրանքը կազմում է 138 մլրդ դրամ, որը այդ նույն ժամանակաշրջանի բուսաբուծության և անասնապահության համախառն արտադրանքի համապատասխանաբար 34 և 22%-ն է: Ստեղծված վիճակը գյուղացիական տնտեսություն-

ների եկամուտների կրճատման պատճառն է, որի հետևանքը գյուղական բնակավայրերում աղքատության դեռևս բարձր մակարդակն է:

Առաջարկում ենք աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման ոլորտում նոր աշխատանքային ռեսուրսների ընդգրկման տեսանկյունից կարևոր նշանակություն տալ ճկուն պայմանագրային համակարգերի կիրառմանը արտադրող - վերամշակող - սպառող ոլորտում: Այն գյուղացիական տնտեսություններին հնարավորություն կընձեռի ունենալ արտադրված մթերքի իրացման երաշխիք, կանխավճարներով լրացնել շրջանառու միջոցների սեզոնային, հատկապես գարնանային ժամանակահատվածի ճեղքվածքը: Պայմանագրային հարաբերությունները շահեկան են նաև վերամշակող ձեռնարկությունների համար, քանի որ դրանով ոչ միայն ապահովվում է անհրաժեշտ չափի հումքի երաշխավորված քանակություն, այլև տվյալ ձեռնարկությունում աշխատող մարդկանց՝ երկարաժամկետ զբաղվածություն:

Միանգամայն անբավարար է արտադրատեխնիկական սպասարկումը: Շատ վատ է վիճակը տեխնիկայով զինվածության բնագավառում: Եղած տեխնիկան հին է ու մաշված: Ապահովվածության ցուցանիշը գործող տեխնիկայի համար 100 գյուղացիական տնտեսության հաշվով կազմում է՝ կոմբայներինը՝ 0,9%, տրակտորներինը՝ 3,4%, տրակտորային կցասայլերինը՝ 1,6%, գութաններինը՝ 0,9%, շարքացաններինը՝ 0,46%, խտսինձիչներինը՝ 0,5% և այլն:

Օրինակ, տրակտորների մի մասը՝ 16%-ը, օգտագործվում է 30 տարուց ավելի, 93 տոկոսը՝ 25 տարուց ավելի: Մաշված տեխնիկայի շահագործումը հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի գերաժախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում նորոգման և տեխսպասարկման աշխատանքները: Ուրեմն, ոլորտում՝ որպես օրախնդիր, առաջարկվում են տեխնիկական վերազինմանն ուղղված արտակարգ միջոցառումների կազմումը, նպատակային ծրագրերի մշակումը, լիզինգի կիրառումը: Առաջարկվում է, գյուղացիական տնտեսություններում արտադրական սպասարկման և պարարտանյութերով, թունաքիմիկատներով ու այլ նյութական միջոցներով ապահովման խնդրի լուծման նպատակով, համայնքներում ստեղծել վճարովի ծառայություն կատարող կառույց: Պետության կողմից տարբեր ծրագրերով հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան, պարարտանյութերը և այլն, տրամադրել ոչ թե առանձին անհատ հողագործներին, այլ համայնքներում ձևավորվող մասնագիտացված կազմակերպությանը՝ գյուղացիական և այլ տնտեսությունների սպասարկելու համար:

ՀՀ ագրովերամշակման ոլորտն ունի զարգացման զգալի չօգտագործված ներուժ: Հաստատում ենք կայուն գործում են խաղող մշակող 63, պտուղ և բանջարեղեն վերամշակող՝ 53, կաթ վերամշակող՝ 252, միս վերամշակող՝ 83, ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության՝ 47, հացամթերման՝ 154, ալրադաշտային՝ 56 ընկերություններ: Սակայն, հանրապետության սննդարդյունաբերության ոլորտի արտադրական հզորություններ օգտագործվում են ընդամենը 35-40%-ով:

Այժմ առաջնահերթ են հետևյալ խնդիրները՝ ագրովերամշակող ընկերությունների տեխնիկական վերազինում, նոր տեխնոլոգիաների ներդրում, վարկային միջոցների ձեռքբերման մատչելիության բարձրացում, ինովացիոն ծրագրերի իրականացման ուղղությամբ պետական աջակցության ընդլայնում: Կարևոր են նաև արդիական ու այլ կենսատեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված սննդամթերքի շրջանառության կանոնակարգումը և այդ ոլորտում արտադրական ուժերի ռացիոնալ տեղաբաշխումը, նաև գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրումը, հակակարկտային տեղակայանների ցանցի

ընդլայնումը: Այս տարվա մայիս ամսվա «ՀՀ» օրաթերթերից մեկում ներկայացված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության՝ «Բնակլիմայական պայմաններն այս տարի հնարավորություն չեն տալիս ավարտին հասցնել գարնանացանը: Անդադար տեղացող անձրևներից ցանքսը փտում է, օրինակ՝ Խնձորեսկում արդեն 325 հա ցորենի ցանքատարածություն փտել է: Դրա հետ մեկտեղ, եղանակային անբարենպաստ պայմաններից տուժած գյուղացիներին պետությունը փոխհատուցում չի տրամադրի (բայց կաջակցի): Նախքան ոլորտում ապահովագրական համակարգի ներդրումը, ճիշտ չէ փոխհատուցման մասին խոսելը»:

Հարց է առաջանում, գյուղացին մեղավոր՞ է, որ այդ համակարգը չի ներդրվում:

Չափազանց կարևոր է հիմնական սննդամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացումը: Ներկայումս տեղական արտադրության հաշվին, էներգետիկ արժեքով հաշվարկված, բավարարվում է կենսական կարևորագույն պարենամթերքի շուրջ 57-60 տոկոսը: Այժմ մշակվել է ծրագիր՝ մինչև 2021թ., ըստ հաշվարկների՝ ինքնաբավության մակարդակը ևս 15-20 տոկոսային կետով ավելացնելու հնարավորություն կա:

Հայաստանի գյուղատնտեսությունը հետայսու կշարունակի աշխատանքները թարմ մրգի, խաղողի, հացահատիկի, կարտոֆիլի ու դրանց վերամշակումից ստացվող բազմաթիվ արտադրատեսակների, ինչպես նաև մսամթերքի ու կաթնամթերքի լայն տեսականու արտադրության ուղղությամբ: Ընդ որում, առաջիկա տարիներին կազմակերպվելու է շաքարի (շաքարավազի) տեղական արտադրությունը, որի արդյունքում ոչ միայն կբավարարվի այդ կարևորագույն (անփոխարինելի) սննդատեսակի պահանջարկը ներքին շուկայում, այլ նաև հնարավորություն կընձեռնվի տարեկան շուրջ 100-120 հազ.տ. արտահանել արտերկիր:

Գյուղատնտեսության հիմնական ճյուղերի զարգացման կարևորագույն միջոցառումներից են՝ բուսաբուծության ճյուղում՝ 1) ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգի ներդրման ապահովումը, 2) գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության բարձրացումը, 3) ռոտոման համակարգի և հողերի մելիորատիվ վիճակի բարելավումը, 4) արոտավայրերի բարելավման և ջրարբիացման միջոցառումների իրականացումը, 5) օրգանական գյուղատնտեսության խթանման նպատակով սուբսիդավորման մեխանիզմների մշակումը և ներդրումը, և այլն: Անասնապահության ճյուղում՝ 1) տոհմային գործի բարելավումը, արհեստական սերմնավորումը, 2) հակահամաճարակային և ախտորոշիչ միջոցառումների լիարժեք իրագործումը, 3) կերարտադրության և գյուղկենդանիների կերակրման ու պահպանման պահվածքի բարելավումը:

Հիմնական պարենամթերքի գծով մեկ շնչի սպառումը, ՀՀ առողջապահության նախարարության կողմից մեկ շնչի հաշվով, օրական սպառվող սննդամթերքների էներգետիկ արժեքը չպետք է ցածր լինի 2412 կգ-ից: Առանձին սննդամթերքի գծով սպառումն առայժմ (մեկ շնչին) չի բավարարվում:

Բժշկագիտությունը սահմանել է, որ ՀՀ պայմաններում նորմալ կենսագործունեության համար 1 մարդուն անհրաժեշտ է տարեկան սպառել՝

| | |
|-----------|---------------------------|
| | հացահատիկ – 121 կգ |
| ֆիզիկական | պտուղ և խաղող – 92 կգ |
| նորմաներ | միս – 76 կգ |
| | կաթ և կաթնամթերք – 392 կգ |
| | ձու – 251 կգ |
| | ձուկ – 12,8 կգ: |

Մինչդեռ այժմ մեզ մոտ նշված առանձին մթերքների փաստացի սպառումը դեռևս ցածր է: Ներկայումս (2010թ. տվյալները) տեղական արտադրության հաշվին, էներգետիկ արժեքով հաշվարկված, բավարարվում է կենսական կարևորագույն պարենամթերքի նկատմամբ պահանջարկի շուրջ 56-60%-ը: Սակայն երկրի բնատնտեսական ներուժը միջնաժամկետ հեռանկարում հնարավորություն է ընձեռում ավելացնել ինքնաբավության մակարդակը ևս 10-12 տոկոսային կետով:

Կարևոր են նաև սննդամթերքի տեղական արտադրության և ինքնաբավության մակարդակի տվյալները, որոնք ներկայացվում են 2004-2009թթ. միջին ցուցանիշներով՝

| արտադրվել է | ինքնաբավության մակարդակը |
|---|--------------------------|
| 1) ցորեն 229 հազ.տ. | 38% |
| 2) պտուղ, հատապտուղ 210 հազ.տ. | 93% |
| 3) բուսական յուղ 0,8 հ.տ. | 4,3% |
| 4) շաքար 30 հազ.տ. | 2,4% |
| 5) կաթ 621 հազ.տ. | 98% |
| 6) տավարի միս 41 հազ.տ. | 77,7% |
| 7) խոզի միս 10 հազ.տ. | 50,6% |
| 8) ոչխարի միս 7 հազ.տ. | 107% |
| 9) հավի միս 5,4 հազ.տ. | 20,4% |
| Ինքնաբավության մակարդակը՝ (էներգետիկ արժեքով հաշվարկված, %) 58,5% | |

Ընդհանրացված նշենք, որ կարտոֆիլի, պտղի, բանջարեղենի, խաղողի, կաթի, ձվի նկատմամբ բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվում է տեղական արտադրության հաշվին, սակայն ցորենի (38%), շաքարի (2,4%), բուսական յուղի (4,3%), տավարի մսի (77%), խոզի մսի (5%) և հավի մսի (20%) պահանջարկը հիմնականում բավարարվում է ներմուծման հաշվին:

Հանրապետությունում ինքնաբավության մակարդակը էներգետիկ հաշվարկով կազմում է ընդամենը 58%, և առաջիկայում այն կարող է ավելանալ ևս 5-10%-ով:

Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կողմից համատեղ ուսումնասիրվեցին հանրապետության պարենային անվտանգության կարևոր հարցը՝ համապատասխան եզրակացություններով և առաջարկվող միջոցառումներով: Հատուկ ուշադրություն դարձվեց մսի արտադրությանը, քանի որ տավարի մսի ինքնաբավությունը չի անցնում 77%-ից, իսկ խոզի մսինն էլ 50%-ից:

Ուսումնասիրությունները և համաշխարհային փորձը վկայում են, որ կոռպերացումը հաջողությամբ կարող է լուծել մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես կապված նյութատեխնիկական ապահովման, արտադրանքի վերամշակման և իրացման, աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացման հետ և այլն: Առավել արդիական են արտադրանքի իրացման և սպառման գործընթացները: Այսօր գյուղատնտեսական արտադրանքի իրացման և սպառման հարցերը մեծապես պայմանավորված են պատահական վերավաճառողների թելադրանքով: Այդ իսկ պատճառով, առաջին հերթին, անհրաժեշտ է ձևավորել իրացման և սպառման աշխատանքները կազմակերպող կոռպերատիվներ:

Վերջին տարիներին հանրապետության ագրոպարենային ոլորտում ձևավորվել են տարբեր գործառույթ իրականացնող, կոռպերացման սկզբունքով գործող կառույցներ՝ կոռպե-

րատիվներ, միավորումներ և ասոցիացիաներ, որոնց գործունեության նպատակը ծառայած խնդիրների համատեղ լուծման կամ դրանց մեղմացման ճանապարհով գյուղական համայնքներում արտադրության զարգացման խթանումն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական կոոպերացիան դեռևս շատ թույլ է զարգանում: Այս գործընթացը խթանելու և որոշակի պետական աջակցությամբ ակտիվացնելու համար անհրաժեշտ է հստակեցնել գյուղատնտեսական կոոպերատիվների իրավաօրենսդրական հիմքերը՝ այդտեղ շեշտադրելով նաև պետական աջակցության և խթանման մեխանիզմները:

Մեր կարծիքով, ոլորտում ի վերջո կոոպերատիվների ձևավորումը հնարավորություն կստեղծի համատեղ օգտագործելու արտադրության տեխնիկական միջոցները, արդյունավետ կազմակերպելու գյուղմթերքների վերամշակումն ու իրացումը, որի արդյունքում կոոպերատիվի անդամները կստանան ինչպես տնտեսական մեծ օգուտ, այնպես էլ կձգտեն իրենց տնտեսությունը հասցնել ավելի բարձր տեխնիկական ու տեխնոլոգիական մակարդակի:

Համոզված ենք, որ այդ դեպքում նաև կխթանվի ագրոշուկայի ձևավորումն ու զարգացումը, որն իր հերթին կնպաստի արտաքին շուկայի հետ նորմալ հարաբերությունների կարգավորմանը, կստեղծվեն բարենպաստ պայմաններ տեղական ու արտասահմանյան գործարարների կողմից հանրապետության ագրարային ոլորտում ներդրումներ կատարելու համար: Գյուղում կստեղծվի նոր սոցիալ – տնտեսական իրավիճակ, հիմնականում կլուծվեն գյուղական բնակչության զբաղվածության հիմնախնդիրները:

Հանրապետությունում մոտակա հեռանկարում բոլոր դեպքերում առավել նախընտրելի կլինեն այնպիսի տնտեսությունները, որոնք կկոոպերացնեն իրենց ջանքերը՝ կիրառելու առավելապես բարձր արտադրողական, մեքենայացված աշխատանքը: Մասնավորապես, առանձին դեպքերում լայնորեն կարող է կիրառվել փոքր տեխնիկան, ինչը ձևավորվող, ճիշտ է կոոպերացված, սակայն համեմատաբար փոքր արտադրության ծավալների դեպքում առավել նախընտրելի է:

Կարելի է եզրակացնել, որ ճգնաժամի ընթացքում խոշոր բիզնեսը գրեթե չի վնասվել, և շատ ընկերություններ արդեն գտնվում են մինչճգնաժամային վիճակում: Դա կարելի է բացատրել նրանով, որ մեր խոշոր ընկերությունները պրակտիկորեն կապված չեն գլոբալ ֆինանսական շուկայի հետ, իսկ իրացման շուկաները (սպառող) բոլոր երկրներն ընդհանուր ջանքերով արագ վերականգնում են: Բացի այդ, Հայաստանը հիմնականում արտահանում է արդյունաբերական որոշ հումքեր, որոնք մշտապես ունեն իրենց շուկան:

Ինչ վերաբերում է փոքր բիզնեսին, ապա դա խիստ տուժեց, քանի որ այն ունի արդյունավետության շատ ցածր ցուցանիշներ, էլ չասած այն մասին, որ այդ ձեռնարկությունների գրեթե կեսն ընդհանրապես չի գործում:

Ամենամեծ հիմնախնդիրը անարդարացի և ոչ հավասար մրցակցությունն է, երբ խոշոր բիզնեսը խլում է փոքր բիզնեսից նրա վերջին դիրքերը, երբ այսպես ասած առանձին անհատները սկսում են արտադրել «հատուկ սալաթներ», բացել տաքսի – ծառայություններ և այլն: Մյուս պատճառն այն է, որ սնանկ և ցածր կարողությամբ կազմակերպությունների լուծարումը չափազանց բարդ ընթացակարգ է: Ձեռնարկությունը պետք է մարի իր պարտքերը, որպեսզի իրավունք ունենա անցնել այդ համակարգով. դա օրենքի պահանջն է: Արդյունքում, անհաջողակ բիզնեսմենները սառեցնում են իրեն չարդարացնող կամ սպասած արդյունքը չտված ձեռնարկություններն ու բացում նորը: Իհարկե, արդեն ՀՀ կառավարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը հանձնարարել է զբաղվել ձեռնարկությունների սնանկացման և լուծարման հարցերով:

Հանրապետության ագրարային համակարգի ենթակառուցվածքների զարգացման համապարփակ ծրագրի բացակայության պատճառով, այդ բնագավառում միասնական համակարգված քաղաքականություն չի իրականացվում: Ենթակառուցվածքների բարելավումը բարդ և դինամիկ գործընթաց է, որը պետք է համահունչ լինի տնտեսության մեջ ձևավորված հարաբերություններին ու կանխատեսվող իրավիճակին: Սակայն, այդ պատասխանատու և շատ կարևոր բնագավառում դեռևս առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնց հանգուցալուծմամբ մեծապես պայմանավորված են ագրարային համակարգի հետագա զարգացումն ու արդյունավետության բարձրացումը:

ՀՀ ագրոպարենային համակարգի զարգացման գործում մեծ տեղ պետք է հատկացվի նաև բնապահպանական գյուղատնտեսությանը և այս ոլորտի ռազմավարական ծրագրերը պետք է խթանեն այն արտադրատեսակները, որոնք ունեն արտահանման ներուժ և առավել նպաստավոր են ոլորտի զարգացման համար: Բնապահպանական գյուղատնտեսության մեջ, գյուղացու համար անմատչելի թանկ ագրոքիմիկատների փոխարեն, կիրառվող օրգանական նյութերն ու պարարտանյութերը թույլ են տալիս նվազեցնել գյուղացիական տնտեսությունների արտադրական ծախսերը, ինչպես նաև կախվածությունն արտաքին ֆինանսական կամ այլ տեսակի աջակցությունից:

Էկոլոգիական գյուղատնտեսությունը, որն ամբողջովին հիմնված է տեղական հումքի օգտագործման վրա, լուծում է նաև բնական էկոհամակարգերի և շրջակա միջավայրի պահպանման շատ հարցեր ու սպառողներին ապահովում առողջ, ավելի սննդարար և անվտանգ սննդամթերքով (նման օրինակներ հանրապետությունում կան):

Տնտեսական նոր հարաբերությունների զարգացումը պահանջում է սոցիալական, տնտեսական, կառուցվածքային, ներդրումային, հարկային, բյուջետային, արտաքին տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման այնպիսի մոտեցումներ, որոնք, ելնելով շուկայական տնտեսավարման սկզբունքներից, տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ գործունեության համար կստեղծեն առավել բարենպաստ պայմաններ: Կարևորագույն խնդիր պետք է դառնա հանրապետության տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման հիմնական ուղղությունների բացահայտումը, դրանցով պայմանավորված գործընթացների օրենսդրաիրավական կարգավորումը, գործունեության բոլոր ոլորտներում համապատասխան քաղաքականության ձևավորումը, ինչպես նաև դրա իրականացման իրատեսական մեխանիզմների ներդրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Իսկ գյուղատնտեսության մեջ ճգնաժամի հետևանքների վերացման ու ճյուղի հետագա զարգացման հնարավորությունները մեծ են:

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՄԿԳԱՄ Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտության գծով փոխարևօրեն, Վ.Գ.Պ., պրոֆեսոր*

ԷՂՈՒԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՄԿԳԱՄ Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, Վ.Գ.Պ., պրոֆեսոր*

ԼԻԱՆԱ ԱԶԱՏՅԱՆ

*ՄԿԳԱՄ Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող*

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԶԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀՀ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՀՀ ագրոպարենային համակարգում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերացման, նրանց հետագա կառավարման բարելավմանն ու զարգացմանը վերաբերող 2008-2010թթ. մեր կողմից բացահայտված հիմնախնդիրների լուծումը հնարավոր է այդ բնագավառում վարվող հիմնավորված ռազմավարության մշակման և իրականացման միջոցով: Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել կանխորոշել ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունները:

Նախ տեղին է նշել, որ հանրապետության ֆինանսական շուկայում ձևավորվել է խիստ անհամամասնություն ֆինանսական միջոցների պահանջարկի և առաջարկի միջև: Առևտրային բանկերի վարկային «պորտֆելները» չեն կարող բավարարել բազմաճյուղային գյուղացիական տնտեսությունների (շուրջ 340 հազար) և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների վարկային ռեսուրսների իրական պահանջարկը:

Բացի այդ, գյուղատնտեսական արտադրությունը բնական աղետների (երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, սելավներ և այլն) առաջացման բարձր հավանականության և ապահովագրական գործուն համակարգի բացակայության պայմաններում համարվում է բարձր ռիսկային, և վարկային միջոցների գերակշռող մասը տրվում է տնտեսության այլ ճյուղերի տնտեսավարողներին:

Միաժամանակ, ագրարային ոլորտը, համարվելով բավականին կապիտալատար, չի կարող արդյունավետ գործել առանց որոշակի չափերի հասնող կապիտալ ներդրումների: Հանրապետության գյուղացիական տնտեսություններում, ագրարային ոլորտի վերամշակող և սպասարկող ՓՄՁ սուբյեկտներում մշտապես առկա է վարկային միջոցների ճեղքվածք: Ըստ ուսումնասիրությունների, ներդրումների ներգրավման հիմնախնդիրն առանցքային է լինելու ոչ միայն միջնաժամկետ կտրվածքով, այլ նաև հեռանկարում: Փորձը ցույց է տալիս, որ ներդրումային ակտիվությունն անմիջական կապ ունի ագրարային ոլորտի տնտեսական աճի հետ:

Վերջին տասնամյակում օտարերկրյա պետությունների ագրարային ոլորտների տնտեսական աճի վերլուծությունը վկայում է, որ այն ձեռք է բերվել հիմնականում ներդրումային ակտիվության (վարկային «էժան» ռեսուրսների ներգրավման) շնորհիվ: Այդ երկրներում համեմատաբար կարճ ժամանակահատվածում ստեղծվեցին համապատասխան տնտեսական կառույցներ, որոնք ի վիճակի էին արագ հարմարվել շուկայի (ներքին և արտաքին) իրավի-

ճակի փոփոխություններին: Նշվածի հետ մեկտեղ, տնտեսագիտության տեսությունից հայտնի է, որ շուկայական տնտեսության պայմաններում ներդրումների ծավալի աճը հանգեցնում է ազգային եկամտի ավելացմանը, ընդ որում ավելի մեծ չափերով, քան ներդրումների աճն է:

Ներդրումային գործընթացների կարգավորման համար առանձնանում են ֆինանսական շուկայի երկու կարևորագույն բաղադրիչները՝ բանկային կամ նպատակային վարկերը և արժեթղթերի շուկան: Բանկային վարկերի տոկոսադրույքները Հայաստանում դեռևս խիստ բարձր են (12-24%) և գերակշռում են փոքր չափերի կարճաժամկետ վարկերը: Բացի այդ՝ ագրոպարենային համակարգում համեմատաբար ցածր շահութաբերության մակարդակի, կոշտ մրցակցության, ինչպես նաև ռիսկայնության հետևանքով բարձր տոկոսադրույքներով վարկավորումը տնտեսապես աննպատակահարմար է տնտեսավարողների համար, որի հետևանքով ներքին շուկայում, դեռևս մեծամասամբ, իրացվում է ներմուծված պարենամթերքը, և լիարժեք չի օգտագործվում արտահանման ներուժը:

Ուստի, հանրապետության ագրոպարենային համակարգի տնտեսական կայուն աճի ապահովման նպատակով անհրաժեշտ է համապատասխան կառույցների միջոցով (նոր կամ արդեն իսկ ձևավորված) լուծում տալ նպատակային մատչելի պայմաններով (երկարաժամկետ, մինչև 10% տոկոսադրույքով) տարբերակված վարկավորմանը՝ ներգրավելով ինչպես ՀՀ պետական բյուջեի, այնպես էլ օտարերկրյա պետությունների և դոնոր կազմակերպությունների (վարկային ծրագրերի, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) աջակցությամբ իրականացվող, Հազարամյակի մարտահրավերներ Հայաստանյան ծրագրերի և այլն) ֆինանսական միջոցները:

ՓՄՁ-ների ստեղծումը և զարգացումը կախված է գյուղատնտեսական արտադրության գոտիականությունից և շուկայում ձևավորված պահանջարկից: ՓՄՁ-ներին աջակցության պետական քաղաքականության հիմնական ուղղություններից են՝ գյուղատնտեսական արտադրության խթանումը և կառուցվածքի օպտիմալացումը: Այդ խնդրի լուծումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ նպատակաուղղված է երկրի պարենային անվտանգության և նրա բաղկացուցիչ մասը կազմող պարենային անկախության մակարդակի բարձրացմանը:

ՓՄՁ-ների ստեղծմանն ու զարգացմանն աջակցությամբ, հնարավորություն է ընձեռվելու բարձրացնելու պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև տեղական արտադրության հաշվին պահանջարկի բավարարումը, որը ներկայումս կարևորագույն պարենամթերքի համար կազմում է 53-55% (էներգետիկ արժեքով հաշվարկված), այն դեպքում, երբ Հայաստանի նման դեպի ծով անմիջական ելք չունեցող, խոցելի միջազգային հաղորդակցողիներով, պարենային ճգնաժամերի առաջացման ռիսկայնությամբ բնութագրվող երկրում այդ ցուցանիշը պետք է կազմի 75-80% (այդ հնարավորությունները կան):

Ագրարային արտադրական գործոնների արդյունավետ օգտագործումը, ՓՄՁ-ների ստեղծման և զարգացման ուղղությունների կանխորոշումը, ինչպես նաև տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման կառավարման կատարելագործումը և գյուղական ու քաղաքային աղքատության միջև առկա բևեռացման հաղթահարումը պահանջում են բազմակողմանիորեն հիմնավորված արտադրության գոտիական մասնագիտացում: Շուկայական տնտեսության պայմաններում այդ գործընթացները հիմնականում կարգավորվում են շուկայական գործոններով, սակայն համապատասխան ուղղվածության ՓՄՁ-ների ստեղծմանն ու զարգացմանն աջակցելը պետական կարգավորման այն կարևոր լծակներից մեկն է, որով անուղակիորեն պայմանավորվում է գոտիական մասնագիտացման օպտիմալացումը: Ագրա-

րային բարեփոխումների անցումային շրջանում նկատելիորեն խաթարվել է գյուղատնտեսական գոտիների ավանդական մասնագիտացումը, որի հետևանքով զգալիորեն կրճատվել են միավոր տարածությունից ստացվող համախառն արտադրանքը և արտադրողականությունը:

ՀՀ ագրոպարենային ոլորտում ՓՄՁ-ների զարգացման բնագավառում հայեցակարգային հստակ մոտեցումների ձևավորման և նախատեսվող մատչելի վարկավորման արդյունավետության բարձրացման նպատակով պետք է հիմք ընդունվի հանրապետության գյուղատնտեսության հիմնական ճյուղերի գոտիական մասնագիտացումը՝ աջակցելով վերջինիս համապատասխան ուղղվածություն՝ ՓՄՁ-ների ձևավորման համար:

Իհարկե, շուկայական տնտեսության պայմաններում գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունները իրացնող (միջնորդ գնորդներ), վերամշակող, արտադրությանը սպասարկող, փոխադրող, պահեստավորող կառույցների հետ էականորեն բարդ են, քան նախկին տնտեսակարգում ձևավորված հարաբերությունների ժամանակ: Արտադրողի, վերամշակողի, իրացնողի և պարենամթերքի ապրանքային շարժի այլ մասնակիցների գործելակերպը շուկայում պետք է բխի փոխշահավետության սկզբունքից:

Այդ պայմաններում պետության կողմից տնտեսական գործընթացների կարգավորման արդյունավետ լծակներից է ՓՄՁ-ներին մատչելի վարկերի տրամադրման միջոցով ներագրելը վերջիններիս ռացիոնալ տեղաբաշխման վրա: Դրա համար անհրաժեշտ է վերլուծել ինչպես հումքային բազայի առկայությունը և զարգացման հեռանկարները, այնպես էլ հստակ կանխորոշել վարկավորվող ՓՄՁ-ների ուղղվածությունը և բաշխվածությունն ըստ տարածաշրջանների՝ ելնելով աշխատանքի միջազգային բաժանման ու մասնագիտացման համատեքստում Հայաստանի կանխատեսվող հնարավորություններից:

Չեռնարկատիրության համաշխարհային միտումների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ձեռնարկությունների ընդհանուր քանակի շուրջ 90%-ը փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) սուբյեկտներ են: Չարգացած և անցումային տնտեսություն ունեցող երկրներում ՓՄՁ սուբյեկտներ են նոր աշխատատեղերի հիմնական ստեղծողները՝ ապահովելով մոտ 60% զբաղվածություն: ՓՄՁ սուբյեկտներն են ստեղծում նոր ապրանքներ և ծառայություններ, միաժամանակ հանդես գալով որպես մրցակցության ու ինովացիոն գործունեության աղբյուր՝ նպաստում են աշխատաշուկայում գիտելիքների և հմտությունների արդյունավետ բաշխմանը, արտադրում են ապրանքատեսակներ, որոնք մրցակցության մեջ են մտնում ներմուծվող ապրանքատեսակների հետ, ի վերջո դրանց զարգացմամբ է մեծապես պայմանավորված տնտեսության մրցունակության աճը:

Երկրի տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ամենակարևոր ցուցանիշի՝ համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) արտադրության ծավալն ընթացիկ գներով 2009թ. կազմել է 3165 մլրդ դրամ, 2008թ. 3646.1 մլրդ դրամի և 2007թ. 3149.3 մլրդ դրամի փոխարեն: Գյուղատնտեսությունը 2009թ. կազմել է 511.4 մլրդ դրամ, որի մեջ մտնում են որսորդությունը, անտառային տնտեսությունն ու ձկնաբուծությունը:

ՀՆԱ իրական ծավալի ինդեքսը 2009թ. կազմել է 85.6%՝ 2008թ. 106.8%-ի և 2007թ. 113.7%-ի փոխարեն:

Ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, ՓՄՁ գործունեության և զարգացման գործում դեռևս կան շատ լուրջ անելիքներ՝ եղած զգալի թերություններն աստիճանաբար վերացնելու համար, հատկապես ՀՀ մարզերի կտրվածքով: Ելնելով նրանից, որ ՓՄՁ պետական աջակցության իրագործվող ծրագրերը հիմնված են ՀՀ տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքների վրա, ներկայումս ՓՄՁ զարգացումը մտնում է որակական նոր փուլ

և կոչված է ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ ստեղծելով բարենպաստ գործարար միջավայր ձեռնարկատիրությանը զբաղվելու բնագավառում, ինչպես նաև տնտեսությանը հաղորդելով ինովացիոն ուղղվածություն:

Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, աղքատության հաղթահարման, հասարակության միջին խավի ձևավորման և երկրում տնտեսական, սոցիալական ու քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը ՓՄՁ ոլորտի զարգացումը համարում է երկրի տնտեսության գերակա ուղղություններից մեկը: Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականությունն ու ռազմավարությունը պետք է ուղղված լինեն ՀՀ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման գործընթացներում ՓՄՁ սուբյեկտների գործունեության և զարգացման համար բարենպաստ միջավայրի ապահովմանը և արդյունքում՝ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և երկրում հասարակության միջին խավի ձևավորմանը:

Գյուղական համայնքներում ՓՄՁ-ների ձևավորումը և զարգացումը հնարավորություն կտան որոշակիորեն մեղմելու գյուղական աշխատուժի օգտագործման սեզոնայնությունը և ծանրաբեռնվածությունը, որը գյուղական աղքատության հաղթահարման հիմնական ուղղություններից է:

Ագրարային ոլորտում ՓՄՁ-ների զարգացման խթանումը պայմաններ կստեղծի գյուղատնտեսության զարգացման, մասնավորապես գյուղատնտեսական մթերքների ծավալների ավելացման և որակի բարելավման համար:

ՓՄՁ-ներում սննդամթերքի որակի և անվտանգության պահանջների կիրառման և արտադրատեսակների տեսականու ընդլայնման արդյունքում զգալիորեն կավելանան ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում իրացման ծավալները, տեղական արտադրության հաշվին կփոխարինվեն մի շարք պարենամթերքներ, կբարձրանա գյուղատնտեսության ասպրանքայնության մակարդակը:

Ագրարային ոլորտում ՓՄՁ-ների ձևավորումը և զարգացումը պայմաններ կստեղծեն նաև գյուղական բնակավայրերում այլ ոլորտի ՓՄՁ-ների ձևավորման ու զարգացման, ինչպես նաև գյուղական ենթակառուցվածքների զարգացման և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման համար:

Հանրապետության հետճգնաժամային միջոցառումների իրականացման և տնտեսական զարգացման ներկա փուլում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունն ուղղված է ոչ միայն բիզնեսի համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը, արտահանման պոտենցիալի զարգացմանը, պետություն – մասնավոր հատված սերտացմանը, այլ նաև հասցեական աջակցության ժամանակակից մեխանիզմների ու կատարելագործված ծրագրերի իրագործմանը:

Այս իմաստով կարևորվում է Հայաստանում պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացումը, որոնք հիմնված են կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են հանրապետության, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, ինչը ներկայումս տնտեսական քաղաքականության ռազմավարական և գերակա ուղղություններից մեկն է:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ագրովերամշակման ոլորտում ծառայել են մի շարք լուծում պահանջող խնդիրներ՝ կապված շրջանառու միջոցների համալրման, բեռնափոխադրումների, մաքսային և հարկային վարչարարության ու այլ բնագա-

վառների հետ: Նշված խնդիրների լուծման և ՓՄՁ ոլորտի հետագա զարգացման նպատակով, առաջարկվում է.

- ա) ներքին շուկայում ներմուծվող ակոհոլային խմիչքները և զարեջուրը տեղական արտադրությամբ մասնակի փոխարինման նպատակով վերջինների ներմուծումը դարձնել լիցենզավորվող գործունեություն:
- բ) Ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանության նպատակով, վերանայել այն պարենամթերքի մաքսատուրքի դրույքաչափերը (10%-ից սահմանելով 15%), որոնք արտադրվում են հանրապետությունում:
- գ) Կրկնապատկել ներմուծվող ենթակցիզային սննդամթերքի ակցիզային հարկի դրույքաչափը:
- դ) Ուսումնասիրել, ըստ առանձին ենթաճյուղերի, ՓՄՁ-ների զարգացման հնարավորությունները՝ ելնելով ներդրության հարաբերական առավելություններից, մասնագիտացումից, պարենային շուկայի կոնյունկտուրայից:
- ե) Խստացնել ներմուծվող պարենամթերքի (մասնավորապես թռչնամսի), ինչպես նաև անասնակերի և դրա բաղադրամասերի (հավելումների) որակի նկատմամբ պետական վերահսկողությունը:
- զ) Զննության առնել պարենամթերքի խոշոր խմբաքանակների արտահանման դեպքում շահութահարկի մասով որոշ արտոնությունների տրամադրման նպատակահարմարությունը:
- է) Ցածր տոկոսադրույքներով (կամ անտոկոս) երկարաժամկետ վարկերի տրամադրումը ՓՄՁ-ներին:

Անհրաժեշտ է հնարավորինս նպաստել ՓՄՁ-ների ստեղծմանը և զարգացմանը սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային համայնքներում՝ նկատի ունենալով արտադրական ուժերի ռացիոնալ տեղաբաշխումը և գյուղական տարածքների համաչափ զարգացումը:

Առկա հիմնախնդիրների լուծումը պահանջում է պետական կարգավորման տնտեսական լծակների, մասնավորապես՝ նպատակային վարկավորման, նոր տեխնոլոգիաների ներդրման և մարքեթինգային գործունեությանը բազմակողմանի աջակցության միջոցով գյուղատնտեսական հումքի արտադրության զգալի ներուժ ունեցող մարզերում խթանել ագրովերամշակման ուղղվածության փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը:

Առկա հումքային բազան միջնաժամկետ հեռանկարում, համապատասխան ներդրումների շնորհիվ, հնարավոր է ավելացնել ևս 15-20%-ով: Այդ խնդրի լուծման համար կարևորվում են ՓՄՁ-ների ստեղծումը և զարգացումը: Մասնավորապես, անհրաժեշտ է հանրապետության տարածաշրջաններում, գյուղական բնակավայրերի մարդկային, հումքային, նյութատեխնիկական ռեսուրսների բազայի հիման վրա, մատչելի վարկավորման և աջակցության այլ միջոցներով ձևավորել նոր ՓՄՁ-ներ: Այդ ՓՄՁ-ների ուղղվածությունը, ըստ ուսումնասիրության արդյունքների գնահատման, պետք է լինի.

- պահածոների արտադրությամբ զբաղվող ընկերություններ, որոնց կողմնորոշումը կլինի մուրաբաների, ջեմերի, օշարակների, հյութերի, տոմատի մածուկի, չրերի, էթնիկական շուկաներում մեծ պահանջարկ ունեցող ազգային քաղցրավենիքների արտադրությունը,
- կարտոֆիլի և հացահատիկի վերամշակումը,
- բուսական յուղերի արտադրությունը,
- սպանդանոցների առկայությունը և թարմ մսի վերամշակումն ու իրացումը,

- կաթի մթերումն ու վերամշակումը, որոնք սառնարանային տարողությունների միջոցով կապահովեն կաթի մթերումն ու կարճաժամկետ պահպանումը, ինչպես նաև կաթնամթերքի արտադրությունը,
- սառնարանային պահեստային տնտեսությունները, որոնք կապահովեն թարմ պտղի, բանջարեղենի, մսի և այլնի երկարատև պահպանությունը (այդ ընկերությունները նշված աշխատանքները կարող են կատարել վարձակալությամբ տարածքներ տրամադրելու միջոցով, պայմանագրային հիմունքներով),
- ծխախոտի մթերումը, այդ ՓՄՁ-ները միջնորդական գործունեություն կիրականացնեն արտադրողների ու ֆերմենտացնող ընկերությունների միջև,
- գյուղատնտեսության արտադրատեխնիկական և այլ սպասարկումները:

Չափազանց կարևոր են սպառողների առողջության համար սննդամթերքի անվտանգության գործընթացները, որոնք պարենամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիության հետ մեկտեղ պարենային անվտանգության հիմնական բաղադրիչներն են: Ինչպես միջազգային նորմատիվ ակտերով, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ սննդամթերքի անվտանգության համար պատասխանատվությունը կրում են արտադրողները, ուստի, բացի վերահսկման գործառույթներից, պետական կարգավորման կարևորագույն տարրերից է՝ վերամշակող ընկերություններին (ՓՄՁ-ներին) համապատասխան աջակցության ցուցաբերումը: Այն կարող է իրականացվել ISO 9001-2000 որակի կառավարման, HACCP՝ սննդի անվտանգության կառավարման ռիսկերի վերլուծության և կրիտիկական կետերի վերահսկման համակարգերի ներդրման, մասնավոր հատվածի անկախ լաբորատորիաների տեխնիկական վերազինման, կադրերի պատրաստման, սպանդանոցների ստեղծման, բույսերի պաշտպանության, կարանտինի, անասնաբուժության և սննդամթերքի անվտանգության բնագավառին առնչվող այլ ուղղություններով արտոնյալ (ցածր տոկոսադրույքով, երկարաժամկետ) նպատակային վարկերի տրամադրման միջոցով: Այս բնագավառում անհրաժեշտ է աջակցությունը նաև օրենսդրության, տեխնիկական կանոնակարգերի մշակման, կադրերի ուսուցման, ձեռնարկների հրատարակման, ինստիտուցիոնալ վերափոխումների ժամանակ տեխնիկական աջակցության, մարքեթինգային, խորհրդատվական ծառայությունները մասնավոր հատվածում բարելավելու և այլ ուղղությամբ:

Ագրարային արտադրանքի արտահանման ծավալների ավելացումը, ինչպես նաև ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի արդյունավետ պաշտպանությունն ագրարային ոլորտի միջազգայնացման արդի փուլում գրեթե անհնարին է առանց սննդամթերքի անվտանգության գործուն համակարգի ներդրման, քանի որ անդամակցությունն ԱՀԿ-ին պարունակում է նաև որոշ ռիսկեր ՀՀ ագրոպարենային ոլորտի միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում զարգացման համար: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի նաև օրգանական արտադրության խթանմանը, որի ներուժը դեռևս չի օգտագործվում:

2009թ. մայիսի 29-ին ՀՀ կառավարության որոշմամբ տնտեսական բարեփոխումների բնականոն ընթացքն ապահովելու, այդ փուլում ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու, տնտեսության արդի մարտահրավերները հնարավորինս արագ հաղթահարելու, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների շահերը համակողմանի պաշտպանելու նկատառումով և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասով և 89-րդ հոդվածի 4-րդ կետով 2009թ. հունիսի 1-ից մինչև 2011թ. հունվարի 1-ը «ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինները, բացառությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների

կոմիտեի, 2008թ. արդյունքներով մինչև 70 մլն դրամ շրջանառություն (այդ թվում՝ ավելացված արժեքի հարկը) ունեցած ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգումներ չեն կարող իրականացվել:

Սա իրոք աննախադեպ որոշում էր, որ կայացրեց ՀՀ կառավարությունը 2009թ. մայիսին՝ նպատակ ունենալով առավել բարենպաստ պայմաններ ստեղծել փոքր և միջին ձեռնարկությունների համար՝ հանրապետությունում ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունները հաղթահարելու նպատակով:

ՓՄՁ ոլորտի կարևորության գիտակցումը պայմանավորված է նաև վերջին 15-20 տարիների ընթացքում համաշխարհային տնտեսական զարգացումներով, որոնք ցույց են տալիս, որ նորաստեղծ ՓՄՁ-ներն են հանդիսանում նոր աշխատատեղերի ստեղծման մշտական աղբյուրը:

Ինչպես անցումային տնտեսության երկրների, այնպես էլ Հայաստանի տնտեսական միջավայրում փոփոխությունները շարունակական են լինելու, որն ինչպես նորաստեղծ ձեռնարկություններին, այնպես էլ վերջիններիս աջակցության նպատակով ստեղծված ենթակառուցվածքներից և ծառայություններ մատուցող կազմակերպություններից պահանջելու է ավելի ճկուն և խորը ձեռնարկատիրական հմտություններ ու գործողություններ:

Այս համատեքստում ակնհայտ է, որ ՓՄՁ ոլորտի կայացումը և զարգացումը Հայաստանում անհնար է առանց պետության կողմից լրջագույն աջակցության և ՓՄՁ հիմնախնդիրների հաղթահարման, ու լուծման հաջողությունը մեծապես պայմանավորված է պետական համապատասխան աջակցության առկայությամբ:

Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, աղքատության հաղթահարման, հասարակության միջին խավի ձևավորման և երկրում տնտեսական, սոցիալական ու քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը ՓՄՁ ոլորտի զարգացումը համարում է երկրի տնտեսության գերակա ուղղություններից մեկը: Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականությունն ու ռազմավարությունը պետք է ուղղված լինեն ՀՀ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման գործընթացներում ՓՄՁ սուբյեկտների գործունեության և զարգացման համար բարենպաստ միջավայրի ապահովմանը և արդյունքում՝ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և երկրում հասարակության միջին խավի ձևավորմանը:

ՀՀ կառավարության 2011-2020թթ. ծրագրում նախատեսված է, որ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է սահմանվեն անհատ ձեռնարկատիրության խրախուսումը և պաշտպանությունը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը, գործարար միջավայրի բարելավումը, գործարարության աջակցությանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը:

**ԲԱՐՁՐ ԳՆԱԾԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԱՂԹԱՅԱՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Գնաճն ինքնին չի կարելի դասել տնտեսական սպառնալիքների շարքը: Ավելին, ժամանակակից պայմաններում, երբ թղթադրամն այլևս ապահովված չէ ոսկով կամ այլ ապրանքներով, որոշակի առումով պետական պարտավորություն է, գնաճը կարելի է անգամ խթան համարել ազգային տնտեսության դինամիկ զարգացման համար, մասնավորապես տարեկան միանիշ՝ մինչև 5-6 տոկոսի սահմաններում: Բնական կարելի է համարել նաև այն երևույթը, որ տարվա վերջին սովորաբար ավելանում են ինչպես ապրանքների սպառումը, այնպես էլ ընկերությունների արտադրական ծախսերը, որոնք լրացուցիչ դրամական զանգված են պահանջում: Գիտակցելով, որ դրամական զանգվածը չի կարող բավարարել տարեմուտի առևտրի համար նախատեսված ապրանքների ծավալներին, զարգացած երկրներում սովորաբար առևտրային ընկերությունները սպառողներին էական զեղչեր են առաջարկում՝ նրանց սահմանափակ գումարներն իրենց համար շահույթի վերածելու նպատակով: Հայաստանում գները ճիշտ հակառակ (աճի) միտում են արձանագրում, քանզի վաճառողները գրեթե համոզված են, որ հայ սպառողն ամեն գնով (երբեմն՝ պարտքով) պատրաստ է ձեռք բերել դրանք:

Որոշ դեպքերում գնաճն օգտակար է անգամ տարեկան մինչև 10 տոկոսի սահմաններում, պայմանով, որ գնաճը ամսվա մեջ 1 տոկոսի սահմաններից չանցնի: Համաչափ, դանդաղ շարժման պատճառով այն երբեմն անվանում են նաև «սողացող» գնաճ: Այն ուղեկցվում է դրամական զանգվածի համապատասխան աճով, որն արագացնում է վճարման շրջապտույտը, էժանացնում է վարկավորումը, որն էլ նպաստում է ներդրումներին, արտադրության աճին, արտադրության արդիականացմանը և տնտեսության մրցունակության բարձրացմանը: Իսկ արտադրության աճը, ինչպես հայտնի է, վերականգնում է ապրանքային և դրամական զանգվածների հավասարակշռությունը համեմատաբար բարձր գների պայմաններում: Իհարկե, միշտ առկա է «սողացող» գնաճի՝ պետական վերահսկողությունից դուրս գալու վտանգը, մասնավորապես այն երկրներում, որտեղ արտադրության մակարդակը ցածր է, և տնտեսության կառուցվածքային ձևախեղումների պայմաններում դեռևս մշակված չեն տնտեսական գործունեության կարգավորման հստակ մեխանիզմներ:

Ընդամին, առնվազն երկու հավանական իրավիճակներում գնաճը կարող է լրջորեն վնասել երկրի տնտեսական անվտանգությանը: Առաջին իրավիճակում այն դառնում է երկնիշ և հետզհետե անկառավարելի՝ վնասելով միաժամանակ տեղական սպառողին և տեղական արտադրողին: Մյուսն այսպես կոչված ստագնացիան է¹, երբ տնտեսության ներսում առկա գործազրկության բարձր մակարդակը զուգորդվում է բարձր գնաճով: Ակնհայտ է, որ Հայաստանում առկա են նշված անցանկալի երևույթներից միանգամից երկուսը:

Կարևոր է, թե ինչպես է բնութագրում ներկա գնաճը պաշտոնական վիճակագրությունը: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) հրապարակած տվյալների՝ Հայաստանում դեկտեմբեր ամսին գները աճել են 1,8 տոկոսով, ինչը 0,2 տոկոսով ավելի է,

¹ Իսկ երբ ստագնացիան ուղեկցվում է արտադրության անկումով, ապա առկա է այսպես կոչված ստագֆլյացիա:


քան նոյեմբերին: Նման աճը պայմանավորված է հիմնականում պարենային ապրանքների թանկացմամբ՝ 3,7 տոկոսով, իսկ ոչ պարենային մթերքի գների ավելացումը 0,1 տոկոսով: Գրան գուգահեռ 0,2 տոկոսով նվազել է ծառայությունների արժեքը:

Ավելի երկարաժամկետ հատվածի դիտարկման արդյունքները վկայում են, որ ամբողջ տարում թանկացումը կազմել է 9,8 տոկոս, այդ թվում՝ պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտը)՝ 14,6 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 5,6 տոկոս, ծառայությունների սակագներինը՝ 4,2 տոկոս: Ի դեպ, քանի որ բոլոր համեմատությունների համար հիմք է ծառայում 2005թ. բազիսային տարին, ապա նշենք, որ համաձայն ԱՎԾ 2011թ. հունվարին հրապարակած զեկույցի՝ ընդհանուր առմամբ սպառողական գներն աճել են 37,7 տոկոսով, իսկ պարենային ապրանքներինը՝ 44,3 տոկոսով¹: Տնտեսական անվտանգության առումով վերջին թվերը, ինչ խոսք, հեռու են բոլոր թույլատրելի սահմանային մեծություններից: Հիշեցնենք, որ գնաճի ցուցանիշն արդեն անցել է «2010թ. ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում ամրագրված 5+-1,5 տոկոսի սահմանից: Մեր կարծիքով, խնդիրը ոչ միայն այն է, որ գնաճն ինքնին միայն հետևանք է և իր հիմքում ունի կարևորագույն տնտեսական պատճառներ, այլև այն, որ վերջինս տնտեսագիտորեն մեթոդաբանական ճշգրտման կարիք ունի:

Քչերն են իրագրված, որ գնաճը բնավ էլ առաջին անհրաժեշտության այն մեկ տասնյակ ապրանքների գների տատանումները չեն, որոնցով կարելի է դատողություններ անել աղքատության մակարդակի և կենսապահովման նվազագույն զամբյուղի մասին: Գնաճն այսօր ներառում է 470 ապրանքներ և ծառայություններ, որոնցից մեծ մասը միջին, իսկ առավել ևս՝ աղքատության շեմին կամ դրանից ցածր մակարդակում հայտնված մարդկանց առօրյա գնումների մաս, մեղմ ասած, չի կազմում (մասնավորապես պղինձ, մոլիբդեն, ոսկի և այլն): Արդյունքում, սպառողների շրջանում մեծ պահանջարկ չունեցող հիմնականում ոչ պարենային ապրանքների և ծառայությունների մի մասի գնանկման համապատկերում կարելի է ստանալ շատ «գուսպ» գնաճի ցուցանիշ, իսկ երբեմն էլ, ինչպես դա արձանագրվել է առանձին տարիների, նույնիսկ միջինացված գնանկում: Այլ խոսքով, տեսականորեն կարելի է ստանալ հավասարակշռված գնաճ (երբ առանձին ապրանքների գների աճն ուղեկցվում է այլ ապրանքների գների անկումով) անգամ այն պայմաններում, երբ պարենային զամբյուղի մեջ մտնող ապրանքների գների երկնիշ աճ է գրանցվել:

Այս ամենով հանդերձ, միջազգային կառույցների կողմից քաջալերվող նման հաշվարկից, ինքնին մեծ շփոթության մեջ չէր ընկնի սովորական քաղաքացին, եթե 470 ապրանքների ինդեքսի հետ մեկտեղ հանրությանը ներկայացվի, ասենք, առաջին անհրաժեշտության ապրանքների իրական գնաճը, և քայլեր ձեռնարկվեն դրանք թիրախավորելու և մեղմելու ուղղությամբ: Իսկ նշված ապրանքների գները, միայն ԱՎԾ պաշտոնական տվյալների համաձայն, 2010 թվականին հետևյալ թռիչքն են արձանագրել. հացամթերք՝ 12,7 տոկոս, մսամթերք՝ 16,4 տոկոս, ձկնամթերք՝ - 5,3 տոկոս (գնանկում), կաթնամթերք՝ 20 տոկոս, ձու՝ 27,4 տոկոս, կենդանական և բուսական յուղ՝ 10,6 տոկոս, միրգ՝ 22,6 տոկոս, բանջարեղեն և կարտոֆիլ՝ 35,6 տոկոս, շաքարավազ՝ 1,9 տոկոս, սուրճ, թեյ, կակաո՝ 1,9 տոկոս, հրուշակեղեն՝ 6,5 տոկոս, այլ մթերքներ՝ 2,5 տոկոս, ոչ ոգելից խմիչք՝ 0 տոկոս: Գրաֆիկական պատկերը հետևյալն է՝

¹ Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2010թ. հունվար - դեկտեմբերին, էջ 5:



Մեթոդաբանության առումով կարևոր է հաշվի առնել նաև ապրանքատեսակների սպառումն ըստ համայնքների (ակնհայտ է, որ Երևանում և հեռավոր գյուղական համայնքներում այդ ցուցանիշները խիստ տարբեր են), մինչդեռ ԱՎԾ կողմից յուրաքանչյուր մարզից ընտրվել է մեկական ոչ թե գյուղ, այլ համեմատաբար բարվոք միջին կենսամակարդակ ունեցող քաղաք: Բացի այդ, բնական է, որ սպառողների տարբեր խմբեր նույն ապրանքատեսակների սպառման տարբեր հակումներ ունեն, օրինակ՝ աղքատության շեմին գտնվող սպառողներ, միջին խավ, հարուստներ և այլն: Հասարակության բևեռացման հանգամանքը ևս հաշվի չի առնված, ԱՎԾ կողմից այն միջինացված է ներկայացված: Մեթոդաբանության խոցելիությունը մասամբ փորձում է հաղթահարել 2011թ. հունվարի 25-ին ԱՎԾ կողմից «Տարվա ընթացքում ընթացիկ մակրոտնտեսական ցուցանիշների հավաքագրման, ամփոփման և հրապարակման աճողական մեթոդից դիսկրետ (զուտ ամսական) մեթոդին անցման մասին» ընդունված որոշումը, համաձայն որի հունվար ամսվանից հաշվարկվելու է նոր՝ տնտեսական ակտիվության ցուցանիշ:

Այս ամենով հանդերձ, տվյալների հավաստիության աստիճանը բնակչության շրջանում առանձնապես աճի միտում չի արձանագրում: Ակնհայտ է, որ կարտոֆիլի գները ոչ 18,8 և ոչ էլ 35,6 տոկոսով են աճել: 2009թ. համեմատ դրանք բարձրացել են առնվազն հինգ անգամ, ասել է թե՛ 500 տոկոսով, հնդկացորենի գինը՝ 300 տոկոսով, խնձորը՝ 500 տոկոսով: Նման անճշտություններ կան նաև այլ ապրանքների (պանիր, ձու, մսամթերք) գնաճի ցուցանիշներում: Սակայն միջինացնելով, կարելի է գնաճի ավելի «համեստ» ցուցանիշ արձանագրել: Հարկ է նշել նաև, որ ձկնամթերքի տարեկան գնանկման ցուցանիշը բնավ հաշվի չի առնում այն հանգամանքը, որ առանձին ամիսներին համեմատաբար էժան գներով ներկրված սառեցված ձկնատեսակների սպառման ծավալներն ուղղակի անհամադրելի են, ասենք, տարեմուտին միանգամից թռիչք արձանագրած և սպառողին հարկադրված վաճառքի ծավալների հետ: Հետևաբար, իրականում ձկնամթերքի ոչ թե գնանկում, այլ զգալի գնաճ է արձանագրվել: Նույնը այլ ապրանքատեսակների գծով: Սպառման ծավալները տարվա տարբեր ամիսներին ևս մեթոդաբանական լուրջ խնդիր է, որը ենթակա է հանգուցալուծման:

Գնաճի նպատակադրման ներկայումս գործող ռազմավարության ներքո թիրախավորվում է գների մակարդակի 12-ամսյա ցուցանիշը (տվյալ տարվա գնաճի ցուցանիշի համադրումը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշին, որը որպես կանոն նորմատիվային է դառնում տարվա դեկտեմբեր ամսվա ցուցանիշի համադրմամբ, իսկ Կենտրոնական բանկը տարվա ընթացքում գների մակարդակի տատանումների վերաբերյալ արձագանքումն իրականացնում

է վերլուծության մակարդակով), ինչը մի կողմից ամբողջական պատկերացում չի տալիս գնողունակության իրական մակարդակի վերաբերյալ: Մինչդեռ կարևոր է նաև դիտարկել միջին գնաճի ցուցանիշը, ինչի թիրախավորումից շեղվելը կարևոր ազդակ է Կենտրոնական բանկի և կառավարության միջամտության համար:

Տեսական-մեթոդաբանական խնդիրներից անցնելով **գնաճի իրական պատճառներին՝** հարկ է նշել հետևյալը: Դրանք կարելի է պայմանականորեն դասակարգել

ա) առարկայական (օբյեկտիվ) պատճառների,

բ) ենթակայական (սուբյեկտիվ) պատճառների,

ինչպես նաև

գ) արտաքին պատճառների և

դ) ներքին պատճառների:

Ըստ որում, **առարկայական պատճառներն իրենց հերթին կարող են ունենալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ազդակներ:** Նույնը ճիշտ է նաև ենթակայական պատճառների պարագայում: Վերլուծելով գնաճի աննախադեպ բարձր մակարդակը՝ կարելի է հանգել այն կարծիքին, որ, անշուշտ, **բարձր գնաճի պատճառները չի կարելի փնտրել միայն Հայաստանում:** Այլ կերպ ասած, կան առարկայական գործոններ, որոնք ակամայից հարկադրում են ընդունել տնտեսվարման խաղի կանոնները դրսից: Այս պարագայում՝ որպես բաց շուկայական երկիր, Հայաստանը հատկապես ապրանքներ ներկրելիս ընդունում է այն գները, որոնք ձևավորվում են համաշխարհային շուկայում: Միաժամանակ ոմանց համար այս օրինաչափ կապը շահարկման առարկա է հատկապես միջազգային գների բարձրացման պարագայում: Ինչ վերաբերում է դրանց նվազման միտմանը, ապա այն, որպես կանոն, այդպես էլ Հայաստան չի հասնում: Այսպիսով, բնական, **առարկայական պատճառներից մեկը, եթե ոչ՝ որոշիչը, ապրանքների միջազգային գների աճն է:** Իհարկե կան երկրներ, որոնք դիմակայում են արտաքին ճնշումներին՝ փորձելով պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող սուբսիդավորմամբ բնակչության սոցիալապես խոցելի խավերի համար մատչելի դարձնել գոնե առաջին անհրաժեշտության ապրանքները: ԱՄՆ-ում, օրինակ, սննդամթերքի գների աճից ապահովագրված են անգամ դեռևս օրինական բնակչության կարգավիճակ չունեցող գաղթականները, որոնք պետությունից ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար ստանում են սննդի ձեռքբերման ամսական անվճար կտրոններ: Տնտեսական ռեֆորմների դժվարին շրջանում՝ 1990-ական թվականների սկզբին, արտաքին ճնշումներից սեփական քաղաքացիներին սննդամթերքի գնաճից պաշտպանելու նման միջոցների դիմեցին Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ մի շարք երկրներ, ներառյալ Հայաստանը: Սակայն երկարատև ժամանակահատվածում նման քայլերն արձատյակալ լուծում չեն կարող խոստանալ. պետության կարևորագույն մտահոգություններից է սոցիալական խնդիրները լուծել ոչ թե արհեստական պատնեշներով, այլ կայուն զարգացման համապատասխան մեխանիզմների ձևավորմամբ: Եվ բնավ էլ գոհունակություն չի կարող պատճառել այն հանգամանքը, որ գնաճի ալիքը համեմատաբար ավելի ուժեղ հարված է հասցրել, ասենք, հարևան երկրներին և որ Հայաստանն այդ առումով ամենավատ վիճակում չի հայտնվել: **Արտաքին - առարկայական պատճառներից կարևորագույնը թերևս այն է, որ կրճատվել է սննդամթերքի արտադրության որոշ հատվածը՝ բնակչի մայական անբարենպաստ պատճառների և աղետների պատճառով:** Որոշ առումով, որպես առարկայական գործոն կարևոր են նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի անբարենպաստ ազդեցությունը և աշխարհի տարբեր երկրներում սպառողների գնողունակության նկատելի անկումը, որը բազմիցս հիմնավորվել է վիճակագրական տվյալներով:

Ի վերջո, արտաքին - առարկայական գործոնների շարքում հարկ է հիշատակել ԱՄՆ-ի դոլարի զգալի արժեզրկումը: 2010թ. ոչնչով չապահովված ամերիկյան արժույթի նոր խմբաքանակի շրջանառության մեջ մտցնելը, իհարկե, հանգեցրեց դրա արժեզրկմանը Forex շուկայում: Ակտիվորեն սկսեց աճել եվրոյի փոխարժեքը, թեև դրանից ընդամենը մի քանի ամիս առաջ եվրոյի համար արվել էին անգամ կործանման կանխատեսումներ: 2010թ. ամռանն արձանագրված նվազագույն՝ \$1,187 մեկ եվրոյի դիմաց փոխարժեքն արդեն նոյեմբերին հասավ \$1,423-ի:

EUR/USD փոխարժեքի դինամիկան 2010թ.¹




Հաշվի առնելով ներկա միտումները՝ դժվար չէ կանխատեսել, որ եվրոյի փոխարժեքը 2011թ. կարող է տատանվել 1,20-1,40 ԱՄՆ դոլարի սահմաններում. ըստ որում, հնարավոր է, որ փոխարժեքի վերին սահմանը գրանցվի տարվա վերջին ամիսներին, մինչդեռ առաջին երկու եռամսյակներին կարելի է ակնկալել եվրոյի դիրքերի որոշ թուլացում:

Սակայն սրանով, թերևս, կարելի է ավարտել արտաքին - առարկայական պատճառների ոչ հարուստ ցանկը: **Արտաքին - ենթակայական պատճառները** մեր կարծիքով գերակշռում են նախորդներին և ի գորու են ավելի մեծ ու երկարատև վնասներ պատճառել մարդկությանը, և ներկայիս գնաճի համաճարակը միգուցե առաջին լուրջ նախազգուշական հարվածն է: Խոսքը **գարգացած երկրների կողմից տնտեսագիտական ոչ մի հիմնավորում չունեցող պետական խոշորամասշտաբ սուբսիդավորման քաղաքականության** մասին է: Սուբսիդավորմամբ պայմանավորված գների արհեստական իջեցումը, այլ խոսքով՝ ապրանքների մրցունակության արհեստական բարձրացումը, մեր համոզմամբ, կարելի է դասել համաշխարհային կարևորագույն տնտեսական հիմնախնդիրների շարքը: Այն լրջագույն վնաս է հասցնում ոչ միայն գարգացող երկրներին, որտեղ աշխատավարձի և արտադրության ինքնարժեքի այլ բաղկացուցիչների համեմատաբար ցածր մակարդակն ինքնին կանխորոշում է մի շարք ապրանքների, մասնավորապես գյուղատնտեսական մթերքների բարձր մրցունակությունը, այլև, ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսության զարգացմանը: Ավելին՝ այն ուղղակի հակասության մեջ է մտնում Արևմուտքի գարգացած երկրների կողմից զարգացող աշխարհին հորդորվող ազատական գաղափարախոսության սկզբունքների հետ: Արդյունքում, ֆերմերների համար շահավետ է դառնում ոչ միայն գյուղմթերքների արտադրությամբ զբաղվելը, այլև դրա ժամանակավոր դադարեցումը, եթե վերջինս թելադրված է տվյալ երկրի գնաճի նպատակադրման քաղաքականությամբ: Ի վերջո, հատկապես **գյուղմթերքների արտադրության սուբսիդավորումն անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում տնտեսական**

¹ Աղբյուրը՝ *информационно-торговая платформа iTrader 8 www.k2kapital.com/quote/analytics/443978/*.

գարգացման տարրեր մակարդակներում գտնվող երկրներում նույն մթերքն արտադրողների համար նաև այն պատճառով, որ պետական բյուջեից գյուղատնտեսության սուբսիդավորման համար առկա են անհավասար հնարավորություններ (ֆինանսական միջոցներ):

Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հաշվարկների համաձայն՝ հարուստ երկրներում սպառողներն ու կառավարություններն ամեն տարի վճարում են մոտ 350 մլրդ ԱՄՆ դոլար՝ գյուղատնտեսությունը սուբսիդավորելու համար: Մի գումար, որը բավարար է, օրինակ, որ այդ երկրներում բուծվող 41 միլիոն կովերը մեկկես անգամ երկրագնդի շուրջը ինքնաթիռով առնվազն ութ պտույտ կատարեն բիզնես կարգով: Մեկ այլ ուսումնասիրության համաձայն՝ մեկ կովի հաշվարկով Եվրամիության երկրներն ավելի շատ ֆինանսական միջոցներ են ծախսում, քան, ասենք, Ռուսաստանի Դաշնության գյուղական բնակավայրերում մեկ շնչին ընկնող եկամուտն է¹:



Իհարկե, տնտեսական և սոցիալական վնասները սրանով չեն ավարտվում: Իրականում սպառողին մրցակցային գներով մատուցվող մի շարք ապրանքների արտադրությունը դառնում է խիստ ծախսատար և ուղիղ համեմատական կախվածության մեջ է ընկնում տվյալ երկրի պետական բյուջեի սուբսիդավորման համար նախատեսված աղբյուրների ծավալից: Եվ եթե դրանք հատկապես համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում պակասում են, ապա բնականաբար և համապատասխանաբար պակասում է նաև այդ ապրանքների արտադրությունը: Միջազգային ապրանքային բորսաներում առաջանում է դեֆիցիտ, որն էլ, անշուշտ, հանգեցնում է դրանց գների կտրուկ աճին:

Արտաքին - ենթակայական պատճառներից չի կարելի շրջանցել նաև **ապրանքների որոշ տեսակների արտադրության մեջ բացարձակ առավելություններ ունեցող երկրների կողմից արհեստական պակասուրդի ձևավորումը**, որը բնավ կապված չէ ճգնաժամային իրավիճակների հետ: Նման ապրանքներից են նավթը, գազը, այլ էներգակիրներ, ոսկին, ադամանդը և այլն: Նման երևույթներն առավել հաճախակի կարող են լինել հատկապես այն դեպքերում, երբ գործում են նույն ապրանքի արտադրության բնագավառում միասնական շահերով համախմբված ռազմավարական այնպիսի միություններ, ինչպես օրինակ՝ 1960 թվականից գործող նավթ արտահանող երկրների կազմակերպությունը՝ OPEC և նման այլ կառույցներ: Բացառություն չեն նաև սննդամթերքի շուկաները: Ներկայումս լրջորեն վտանգված է ոչ միայն պարենային, այլև տնտեսական անվտանգությունը պարենով հարուստ այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Չինաստանը և Հնդկաստանը, որոնք ավանդաբար նաև սննդամթերք արտահանող երկրներ են: World Food Program միջազգային պարենային ծրագիրը, որը գործում է ՄԱԿ-ի հովանու ներքո, ներկայիս պարենային ճգնաժամն անվանել է «անաղմուկ ցունամի», որը կարող է առնվազն 100 միլիոն մարդ զգել սովի ճիրանների մեջ: Goldman Sachs

¹ http://www.wto.org/english/thewto_e/whatis_e/10ben_e/10b04_e.htm .

հայտնի ներդրումային ընկերության տնտեսագետները ներմուծել են տնտեսագիտական նոր տերմին՝ **ազֆլյացիա**, որով բնութագրում են սննդամթերքի գների բարձր թռիչքը (agriculture և inflation բառերի համադրում): Մանհեթրնում հիմնված այս ընկերության փորձագետների վկայությամբ 2006թ. ազֆլյացիան կազմել է 26 տոկոս, 2007թ.՝ 41 տոկոս, 2008-2009թթ. այն փոքր-ինչ նվազել է, սակայն 2010թ. մոտեցել է 49 տոկոսին, որը ռեկորդային է¹: Այն լրջորեն մտահոգում է նաև զարգացած երկրներին և միջազգային կառույցներին: Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Գորդոն Բրաունը սննդամթերքի գների թռիչքը նույնքան վտանգավոր է համարում, որքան և ֆինանսական ճգնաժամի բացասական հետևանքները: Իսկ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Զի Մունի համոզմամբ սննդամթերքի նման գնաճը համընդհանուր ճգնաժամ է, այն կարող է լուրջ վնաս հասցնել համաշխարհային տնտեսությանն ու միջազգային անվտանգությանը, ուստի անհրաժեշտ են համախմբված գործողություններ այն զսպելու համար: Ի դեպ, ավելի քան 50 երկիր արդեն սանկցիաներ է կիրառում՝ սեփական երկրից սննդամթերքի արտահանումը կասեցնելու նպատակով: Իսկ ԱՄՆ-ում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո թերևս առաջին անգամ կիրառվում են սննդամթերքի վաճառքի սահմանափակումներ, ներառյալ հայտնի Costco և Sam's Club մեծածախ խանութների ցանցում:

Ակներև է, որ ազֆլյացիան ներկայումս խիստ բնորոշ է նաև Հայաստանի տնտեսությանը: Միջազգային միտումների գնահատման հետ մեկտեղ, պակաս կարևոր չէ նաև գնաճի ներքին պատճառների վերլուծությունը: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ **ներքին պատճառներն իրենց հիմքում նույնպես ունեն ինչպես առարկայական, այնպես էլ ենթակայական հիմքեր:**

Նախ՝ առարկայական հիմքերի մասին: Դրանց մի մասը պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ ներքին ազատականացված շուկան ուղղակիորեն կապված է համաշխարհային շուկային, այլև այն փաստով, որ **առաջին ոչ թե Հայաստանի տնտեսությունն է արտահանվող ապրանքների գծով գներ թելադրում, այլ ավելի շատ ընդունում է համաշխարհային շուկայում ձևավորված գները:** Ավելի հստակ պատկերացնելու համար համաշխարհային շուկայի գներից հիշյալ կախվածության աստիճանը, հարկ է հաշվի առնել ԱՀԾ պաշտոնական տվյալներն առ այն, որ 2011թ. հունվարի 1-ի դրությամբ ներմուծման ծավալները (3782,9 մլն դրամ) գրեթե քառապատիկ գերազանցում են արտահանման ծավալները (1011,4 մլն դրամ)², ուստի տեղական սպառողը վճարում է ապրանքների համար համաշխարհային շուկայում ձևավորված և տրանսպորտային ծախսերով, մաքսատուրքով և ներկրող շահույթով (հաճախ՝ գերշահույթով) ամբողջական տեսք ստացած գները: Այս ամենը, իհարկե, տեսականորեն բացառում է մենաշնորհների, ստվերային տնտեսության և մաքսանենգության որևէ տարր և ենթադրում, որ բոլոր տնտեսավարողները և ներմուծողները գործում են լիակատար օրենսդրական և իրավական դաշտում: Հակառակ դեպքում գնաճի վրա ազդող գործոններն առանձին վերլուծության առարկա են: Այս ամենով հանդերձ, արտաքին շուկաներից ներքին գնաճը կարող է լինել, մի կողմից, անկանխատեսելի, երբ հաշվի չեն առնվում համաշխարհային շուկայի զարգացումներն ու միտումները, մյուս կողմից՝ կանխատեսելի և որոշակի սպասումներ ձևավորելով, պետական կառավարման մարմիններին և տնտեսավարողներին հնարավորություն ընձեռել համապատասխան քայլեր ձեռնարկելու՝ խուսափելու համար հնարավոր ցնցումներից:

Հաջորդ առարկայական գործոնը գնաճի բարձր տեմպերը զսպելու համար անհրաժեշտ պետության ֆինանսական ռեսուրսների անբավարար քանակությունն է: Դրանից բխում է նաև կենսապահովման նվազագույն զամբյուղին համարժեք նվազագույն աշխատավարձի,

¹ <http://www.trefis.com/articles/35958/unilevers-agflation-challenge-to-preserve-margins-or-market-share/2011-01-21>.

² <http://armstat.am/am/>.

կենսաթոշակների և նպաստների համապատասխան ինդեքսավորման անկարողությունը: Վերջապես, չի կարելի շրջանցել **եղանակային անբարենպաստ պայմանները**, որոնք հնարավորություն չեն ընձեռում գյուղացիական տնտեսություններին անգամ մասամբ փոխհատուցել համաշխարհային տնտեսությունից «ներմուծած» գնաճը: Կան նաև այլ առարկայական պատճառներ, որոնք նվազ կամ աննշան ազդեցություն ունեն գնաճի վրա (օրինակ՝ որոշ մշակաբույսերի ցանքատարածությունների կրճատումը, դրանց մի մասի ժամանակավոր մաշվածությունը և այլն): Մեր հաշվարկներով 2003-2010թթ. շուրջ 50 հազար հեկտարով կրճատվել են աշնանացան ցորենի ցանքատարածությունները, իսկ 2010թ. մոտ 10 հազար հեկտարով պակասեցին կարտոֆիլի ցանքատարածությունները՝ նախորդ տարվա կարտոֆիլի գնանկման, ուստի և շահութաբերության կտրուկ նվազման պատճառով: Էսպես կրճատվել են նաև բանջարեղենի ցանքատարածությունները: Սա էլ իր հերթին բերում է նրան, որ որոշ մթերքներ պարզապես շատ քիչ են արտադրվում, որը հանգեցնում է դրանց գնաճին:

Ինչ վերաբերում է ներքին ենթակայական կամ կամայական պատճառներին, ապա դրանց թվարկումն անգամ կարող է հակակշռել ինչպես արտաքին - առարկայական և արտաքին - ենթակայական, այնպես էլ ներքին առարկայական պատճառները և դրանց արդյունքում առաջացած վնասները:

Թեև ընդհանուր առմամբ Հայաստանը միջազգային գեկույցներում դասվում է ազատական տնտեսություն ունեցող երկրների շարքին, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ **մի շարք ապրանքների շուկաներում ստեղծված են արտաքուստ անտեսանելի արգելքներ**, որոնք փակում են պոտենցիալ մրցակիցների մուտքը հիշյալ շուկա: Տարբեր ապրանքների շուկաների սահմանափակվածությունը կամ դրանց գրեթե փակ կարգավիճակը գնաճի բարձր մակարդակին նպաստող ներքին - ենթակայական գործոններից են: ՀՀ կառավարությունը և Կենտրոնական բանկը տարբեր առիթներով արձանագրել են, որ ներքին շուկայում կան գերիշխող դիրք ունեցողներ, որոնք գնային մանիպուլյացիաներ են կատարում:

Հայկական դրամի արժևորումը և գների բարձր մակարդակը, այդ թվում՝ ներմուծվող ապրանքների գերակշիռ մասով, մի կողմից պայմանավորված են ներկրողների ձգտումով՝ ապահովել գերշահույթներ ոչ միայն արտարժույթով, այլ նաև հայկական դրամով, մյուս կողմից վկայում են ՀՀ տնտեսությունում բարձր կենտրոնացվածության մասին, ինչն էլ կարևոր նախապայման է գերիշխող կամ մենաշնորհային դիրք ունեցող սուբյեկտների կողմից հակամրցակցային համաձայնությամբ կամ այլ մեթոդներով ներքին շուկայում զբաղեցրած իրենց դիրքի չարաշահման համար: Այդ մասին են վկայում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հրապարակված պաշտոնական տվյալները: 2010թ. այս մարմնի կողմից 12 պարենային ապրանքների շուկաներում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցից 7-ը բարձր կենտրոնացված են, 5-ը՝ միջին կենտրոնացված: Ցածր կենտրոնացվածության ապրանքային շուկա չի գրանցվել: Հատկանշական է, օրինակ, ներքին շուկայում պանրի գնի տատանումների դիտարկումը: ՀՀ տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովների տվյալներով երկրում կան 78 գրանցված սուբյեկտներ, չհաշված պանիր արտադրող բազմաթիվ գյուղացիական տնտեսություններ: Թվում է, թե միասնական գներ թելադրելն այս պարագայում գրեթե անհնար է, այնուամենայնիվ, նկատվեցին անբարեխիղճ մրցակցության կազմակերպված երևույթներ: Տարբեր պանիր արտադրողներ, գրեթե միաժամանակ, գրեթե նույն չափով բարձրացրին իրենց արտադրանքի գինը: Այն պետք է թանկանար մի քանի ամիս անց և առավելագույնը՝ 150-200 դրամով, որը պայմանավորված էր կաթի գնի աճով: Ձրի պանիր, ինչպես ասում են, միայն թակարդում է լինում: Ձրի կամ շատ էժան ձու՝ նույնպես: Երբ 2010թ. ամռան ամիսներին ձվի

վաճառքի գները դրա ինքնարժեքից ցածր էին, ակնհայտորեն խոշոր արտադրողների կողմից փոքրերին շուկայից դուրս մղելու նպատակով, ակնկալվում էր, որ այդ վնասը շուկան մենաշնորհելուց հետո պետք է «փոխհատուցվեր»: Այն իրեն շատ երկար սպասել չտվեց, և տարեմուտին տարբեր հիվանդություններ վկայակոչելով՝ ձու մատակարարողները ամառվա համեմատ տասնապատիկ բարձրացրին գները: Նման գնաճ իրականում քիչ կարելի է հանդիպել համաշխարհային շուկայում:

Տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգի արդյունավետության ցածր մակարդակի և կոռուպցիայի տարածվածության պայմաններում Հայաստանի տնտեսության զգալի հատվածը տեղական և միջազգային փորձագետների գնահատմամբ վերածվել է կիսամենաշնորհային համակարգի, որն անխուսափելիորեն խոչընդոտում է սոցիալական ուղղվածություն ունեցող մրցունակ ազգային տնտեսության կայացումը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի հատկապես Երևան քաղաքում գործող գյուղմթերքների կենտրոնացված առևտրային շուկաներում տիրող վիճակի վերլուծությունը: Այսպես կոչված «գիշերային» մեծածախ շուկաներում առաջարկվող մրգերի և բանջարեղենի գները զգալիորեն զիջում են ընդամենը 3-4 ժամ հետո սպառողներին պարտադրվող միասնական-մենաշնորհված գներին: Խոսքն, իհարկե, շահույթի նորմայի դասական պատկերացումների մասին չէ: Այստեղ ևս առկա է «ազահության ֆենոմենը»: Դրանց տարբերությունը սովորաբար կազմում է 75 – 100, իսկ առանձին դեպքերում մինչև 200 տոկոս և ավելի: Ակներև է, որ այս պայմաններում անտեղի է շոշափել առողջ մրցակցության գաղափարը կամ փնտրել առարկայական որևէ պատճառ: Իրականում ընդամենը մի քանի ֆիզիկական անձանց՝ խմբիշխանների կողմից գյուղմթերք արտադրողներից գրեթե բռնի «գնվում է» ապրանքների ողջ խմբաքանակը, ադմինիստրատիվ-հրամայական կարգով նշանակվում և սպառողին թելադրվում են ոչնչով չարդարացված բարձր գներ: Ընդունված է ասել, որ աղջամուղջին նրանց կողմից թելադրվող գներն են որոշում ողջ առևտուրը, և այդ օրը լույսը կարծես բացվում է ոչ թե գյուղացու, այլ խմբիշխանի համար: Նման երևույթն անգամ անհամադրելի է սոցիալիզմի օրոք գործող տնտեսական վարչարարության հետ: Այն ավելի ճշգրիտ կարելի է գնահատել որպես ֆեոդալիզմի օրոք գործող առևտրավաշխատուական վերնախավի կամայական վարքագիծ, իսկ այսօրվա լեզվով՝ տնտեսական հանցագործություն, որն ակնհայտորեն ոտնահարում է պետության կարգավորիչ և վերահսկիչ գործառնությունները և թուլացնում պետականության տնտեսական ու սոցիալական հիմքերը:

Հաճախ գնաճ ասելով մարդիկ հասկանում են միայն մեկ երևույթ, մինչդեռ իրականում այն տարբեր երևույթների հետևանք է: Այսպես օրինակ, կարելի է գնաճ արձանագրել ինչպես այն դեպքում, երբ առաջանում է ապրանքների դեֆիցիտ (այսինքն՝ արտադրության իրական ծավալների համեմատ համախառն պահանջարկի ավելցուկի դեպքում), այնպես էլ այն դեպքում, երբ արտադրական մի շարք ռեսուրսների թերօգտագործման պայմաններում ավելանում են արտադրության ծախսերը, և գների գոյություն ունեցող մակարդակի պայմաններում միավոր արտադրանքի համար պահանջվող ծախսերի ավելացումը կրճատում է դրա առաջարկը արտադրողի կողմից: Բնական է, որ երկու դեպքում էլ փոխվում են սպառողների սպասումները, նրանց հոգեբանությունը, բնականաբար նաև՝ վարքագիծը: Մեր երկրում այս երևույթն ամենևին էլ եզակի բնույթ չի կրում: Երբեմն բավարար է անգամ ոչնչով չհիմնավորված տեղեկատվություն կամ ասեկոսեներ տարածել այս կամ այն ապրանքի գնի հնարավոր բարձրացման մասին, և կարող է առաջանալ նույն ապրանքի հանդեպ անհամեմատ ավելի մեծ պահանջարկ, որը որոշ ձեռնարկատերերի և առևտրականների համար գները կտրուկ բարձրացնել լավ առիթ է: Ըստ որում, մեր կողմից իրականացված **ուսումնասիրությունները**

վկայում են, որ Հայաստանում սպառման համար նախատեսված ապրանքների ընդամենը 6-7 տոկոսի անհետացումը շրջանառությունից կարող է առաջ բերել ոչ միայն սովորական գնաճ, այլև խուճապ: Սպառողները փորձում են ավելի մեծ քանակներով նման ապրանքների պաշարներ կուտակել, որն էլ ավելի է կրճատում շրջանառության մեջ գտնվող ապրանքների քանակությունն ու ահագնացնում գների թռիչքը:

Վերադառնալով պետության կարգավորիչ և վերահսկիչ գործառնություններին, հարկ է անդրադառնալ տնտեսության մրցունակության միջոցով գնաճի վրա ներազդելու այնպիսի կարևոր գործիքների, ինչպիսիք են մաքսային, հարկային և դրամավարկային լծակները:

Չնայած այն հանգամանքին, որ տարեցտարի փորձեր են արվում կատարելագործելու երկրի հարկային համակարգը և կիրառվող մեխանիզմները, այսուամենայնիվ, դրանք արդյունավետ բնութագրելն առայժմ վաղաժամ է: «Կոշտ» վարչարարությունը, մի կողմից նպատակ ունի կրճատել սովերային տնտեսությունը, մյուս կողմից նման քաղաքականությունը վարվում է որոշ վերապահումներով՝ «արտոնություններ» տալով առանց այն էլ բարվոք վիճակում գտնվող որոշ տնտեսվարողների: Ինչ վերաբերում է իրական հարկային արտոնություններին, դրանք օրենսդրաիրավական առումով առայժմ մերժելի են: Այլ խոսքով՝ չկա այս կամ այն ոլորտը կամ տարածքը զարգացնելուն ուղղված նպատակային և տարբերակված հարկային քաղաքականություն: Արդյունքում, փակվում են փոքր և միջին ձեռնարկություններ, աճում է սովերային տնտեսության տեսակարար կշիռը, որի հետևանքով նվազում է պետական եկամուտների ծավալը, իսկ որպեսզի այն բավարար լինի պետությունից ծախսերն ապահովելու համար, անվերջ կարող է աճել հարկային բեռը, որը գնալով կենտրոնացնում է ավելի քիչ քանակությամբ տնտեսվարողների ուսերին: Լրացուցիչ հարկերն էլ իրենց հերթին ավելանում են ապրանքների և ծառայությունների ինքնարժեքին և նպաստում գնաճի բարձր տեմպերին:

Գնաճային ճնշումների իրական պատճառների թվում կարելի է նշել նաև մաքսանենգությունը, մաքսային անարդյունավետ քաղաքականությունը, ինչպես նաև եկամուտների հավաքագրմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության ցածր մակարդակը: Որոշ փորձագետների կարծիքով գնաճային ռիսկեր է պարունակում իր մեջ նաև ավելացված արժեքի ձևը, դրա հաշվարկը, փաստաթղթաշրջանառության գործող մեխանիզմը:

Գնաճի ներկա մակարդակի հարցում պակաս կարևոր դեր չեն խաղում նաև տնտեսության իրական հատվածի վարկավորման հիմնահարցերը: Հատկանշական է, որ 2010թ. (ըստ տնտեսության ոլորտների) տրամադրված բանկային վարկերի թվում (շուրջ 806 մլրդ դրամ) առաջին տեղում է առևտրի ոլորտին տրամադրված վարկերի ծավալը (21,6 տոկոս): Ընդ որում, առևտուրը, սպասարկումն ու սպառողական վարկերը միասին կազմում են բանկային համակարգի վարկային պորտֆելի 41 տոկոսը, այն դեպքում, երբ գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը (ընդհանուրի 6 տոկոսը) չի գերազանցում 50 մլրդ դրամը (ինչը 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է ընդամենը 17 մլրդ դրամով, իսկ 2009թ. սեպտեմբերի նկատմամբ՝ ընդամենը 4 մլրդ դրամով), արդյունաբերությունը՝ 174 մլրդ դրամը (ընդհանուրի 21 տոկոսը):¹ Սա վկայում է նաև բանկային համակարգի կողմից տնտեսության արտադրական ոլորտի զարգացմանը նվազ մասնակցության մասին: Ընդամենին պետք է պարզել՝ տրամադրվող վարկերը նպաստելու են գնաճի^ո, թե^ո գնանկմանը:

Գնաճի ներքին պատճառների մեջ բացառություն չէ նաև երկրի արժույթային քաղա-

¹ www.cba.am; www.orensdirdotcom.files.wordpress.com

քականությունը: Ազգային արժույթի արժեզրկումն, ընդհանուր առմամբ, կարող է նպաստել տնտեսության մրցունակության բարձրացմանն ու խթանել արտահանումը, սակայն ավելի երկար ժամանակահատվածում այն կարող է բացասաբար անդրադառնալ գների վրա և հանգեցնել գնաճի: Մյուս կողմից, Արտահանման մեծ ծավալներն ապահովում են արտարժույթի մեծ ներհոսք, որն անխուսափելիորեն անդրադառնում է փոխարժեքի մակարդակի վրա՝ բարձրացնելով ազգային արժույթի գնողունակությունն ու հետևաբար՝ արժեքը: Իրականում լուրջ խնդիր է դառնում փոխարժեքի որևէ մակարդակի ֆիքսումը: Մեր երկրում դրամի գերարժեզրկման (հիպերինֆլյացիայի) և գերարժևորման շրջաններ կարելի է համարել համապատասխանաբար 1994թ. և 2008թ.: 1994թ. ընթացքում դրամը արժեզրկվեց 3162%-ով. ՀՀ Կենտրոնական բանկը կառավարության հետ համատեղ ձեռնամուխ եղավ ԱՄՀ և Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի ներդրմանը: Բնականաբար, ԿԲ-ի համար ամենակարևորը դրամավարկային ճիշտ ռազմավարության ընտրությունն էր, այսինքն՝ ԿԲ-ն միջին ժամկետում պետք է ընտրեր քաղաքականության երեք նպատակներից միայն երկուսը (փոխարժեքի ֆիքսում կամ վերջինիս նեղ միջանցքի ապահովում, գներ կամ անկախ դրամավարկային քաղաքականություն, հետևաբար և դրանից ածանցված ճիշտ ռազմավարության ընտրություն և կապիտալի հոսունություն): Անկախ դրամավարկային քաղաքականության ռազմավարության պարագայում կապիտալի ազատ հոսունության պայմաններում պետք է թույլ տրվի, որ փոխարժեքը լողա: Միաժամանակ հարկ է նշել, որ դրամի արժեզրկման և գների սրընթաց աճի պատճառ կարող են դառնալ դրամաշրջանառության և դրամավարկային ոչ ճիշտ քաղաքականությունը, պետության արտաքին և ներքին պարտքերի, ոչ արտադրողական ծախսերի առկայությունը և այլն: Ժամանակ առ ժամանակ երկրի արժույթի արժեզրկումը կարող է էժանացնել տեղական ապրանքներն օտարների համար, իսկ դրա արժևորումը ապրանքները դարձնում է ավելի թանկ արտաքին շուկաներում: Երբ երկրի արժույթը արժեզրկվում է, էժանանում է արտահանումը, իսկ ռեզիդենտների համար թանկանում է արտերկրից ներմուծումը: Ազգային արժույթի փոխարժեքի բարձրացումն ունի հակադարձ էֆեկտ. օտարներն ավելի շատ են վճարում տվյալ երկրի ապրանքների համար, իսկ տեղական սպառողները քիչ են վճարում ներմուծվող ապրանքների համար: Այլ խոսքով՝ ազգային արժույթի արժևորումը բարձրացնում է դրա արտահանման գինը և իջեցնում է դրա ներմուծման գինը: Հակառակ դեպքում ազգային արժույթի արժեզրկումը իջեցնում է երկրի արտահանման գինը՝ բարձրացնելով տեղական ապրանքների մրցունակությունը և ներմուծվող ապրանքների գները: Ուսումնասիրությունները վկայում են, որ այն երկրներում, միաժամանակ փորձել են ապահովել երեք նպատակները, տեղ է գտել խոր ճգնաժամ (Բրազիլիա, Արգենտինա, Ռուսաստան): Իսկ եթե ԿԲ-ն ընտրի ֆիքսված փոխարժեքի ռեժիմ ու վերահսկի դրա վարքագիծը, ապա այն պետք է իր վրա վերցնի նաև փոխարժեքի ռիսկը և շուկայի մասնակիցների համար դառնա կանխատեսելի և խոցելի՝ արտաքին շուկերի և բաց սպեկուլյատիվ գրոհների տեսանկյունից: Տարբեր առիթներով անհրաժեշտություն է առաջացել, որպեսզի ԿԲ-ը միջամտի փոխարժեքի կարճաժամկետ արժևորմանը՝ արտաքին մրցունակության պահպանման և այլ նպատակներով: **Տնտեսական զարգացումների ներկա փուլում ցածր գնաճի թիրախավորման պարագայում ներքին շուկայում մշտապես առկա է լինելու հայկական դրամի անվանական փոխարժեքի արժեքավորում:**

Այլ պատճառների թվում **արտաքին** ասպարեզում կարելի է հիշատակել նաև.

- **նավթի գների աճը** (մեկ բարելն այսօր ռեկորդային է 2008թ. ճգնաժամային թանկացում-

ներից հետո և տատանվում է 100 ԱՄՆ դոլարի շուրջ¹, իսկ Եգիպտոսում քաղաքական իրավիճակի սրման պատճառով դրանք կարող են հասնել անգամ 200 ԱՄՆ դոլարի²),

- **սննդամթերքի հանդեպ պահանջարկի աճը** (աշխարհի բնակչության թիվը 2011թ. կհասնի 7 միլիարդ մարդու³),
- **հացահատիկի համաշխարհային պաշարների վերջին երեք տասնամյակում գրանցված ամենացածր մակարդակը** և դրանց գների ամենաբարձր մակարդակը⁴,
- **սննդամթերքի արտադրության ծախսերի աճը⁵,**
- **զարգացած երկրներում արհմիությունների առանցքային դերակատարությունը**, որը սահմանափակում է շուկայական մեխանիզմի հնարավորությունները՝ ձևավորելու տնտեսության համար ընդունելի աշխատավարձի մակարդակ, ինչպես նաև այն հանգամանքը, որ
- համաշխարհային շուկայում հաճախ գները թելադրելու համաձայնություն են ձեռք բերում ոչ այնքան առանձին վաճառող ընկերությունները, որքան քաղաքական և տնտեսական մենաշնորհները,
- գյուղմթերքների մի մասն արդեն օգտագործում են բիովառելիքի ստացման համար (շաքարի եղեգ, եգիպտացորեն, այլ մշակաբույսեր),
- աշխարհի շատ երկրներում ֆինանսատնտեսական ճգնաժամի և ազգամիջյան հակամարտությունների պայմաններում ավելանում են ռազմական ծախսերը, պետական ապարատի պահպանման ծախսերը, որոնք լրացուցիչ դրամական զանգված են պահանջում, իսկ վերջինս չի համապատասխանում շրջանառության մեջ գտնվող ապրանքային զանգվածին:

Ինչ վերաբերում է մեր երկրում առկա գնաճի այլ ներքին պատճառներին, ապա դրանցից կարելի է առանձնացնել.

- **նվազող առևտրատնտեսական կապերը հարևան երկրների հետ** (մասնավորապես, 2010թ. կրճատվել են Վրաստան և Իրան արտահանվող ապրանքների ծավալները, աճել են նույն երկրներից ներմուծումների ծավալները⁶, որը պահանջում է դրամի նոր էմիսիա և լրացուցիչ գնաճ),
- **կոռուպցիան և կաշառակերությունը**. ներկայումս որոշ չինովնիկներ պահանջում են ավելի մեծ կաշառքներ կամ այսպես կոչված *откат*-ներ, որը պայմանավորված է չինովնիկների պաշտոնավարման անկանխատեսելիությամբ, և ստեղծում է ուղիղ համեմատական կախվածություն կաշառքների և չինովնիկների պաշտոնավարման ժամկետների միջև,
- **թույլ տնտեսական և ինստիտուցիոնալ միջավայրը**. չկան արդյունավետ կուտակային մեխանիզմներ, բանկերի տված տոկոսները մի քանի անգամ զիջում են գնաճի տեմպերին,
- **բնակչության ընդհանուր գնողունակության աճը**, որը պայմանավորված է ոչ այնքան աշխատանքային, որքան անաշխատ եկամուտների (արտերկրից ստացվող տրանսֆերտների, նպաստների, մարդասիրական և այլ նյութական օգնության աճով),
- տնտեսության որոշ ճյուղերում խոշոր ընկերությունների կողմից **արտադրության ծախս-**

¹ www.forexfp.ru/chart/lightsweet/.

² <http://top.rbc.ru/economics/05/02/2011/538417.shtml>.

³ www.http://techie-buzz.com/did-you-know/7-billionth-person-in-2011.html.

⁴ www.liveinternet.ru/tags.

⁵ <http://geography.kz/slovar/typy-selskogo-xozyajstva-mira/>.


⁶ http://armstat.am/file/article/sv_12_10a_411.pdf.

սերի և գնի ձևավորման մենաշնորհի առկայությունը,

- **գազի սակագնի բարձրացումը,** որն արտացոլվում է գրեթե բոլոր ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի աճի տեմպերում,
- հայկական պանրի, ոչխարի մսի, որոշ ձկնատեսակների և այլ **տեղական սննդամթերքի արտահանումը** հանգեցնում է նաև ներքին շուկայում դրանց առաջարկի կրճատման, ուրեմն նաև՝ գների աճի,
- **տեղական արտադրության իրական ծավալների կրճատումը,** որը դրամական զանգվածի կայուն մակարդակի պայմաններում հանգեցնում է գների աճի, քանի որ փողի նախկին քանակությանը համապատասխանում է ապրանքների և ծառայությունների համեմատաբար քիչ ծավալ:

Ինչպես բոլոր այլ պարագաներում, գնաճի հասցրած վնասները նույնպես կարելի է գնահատել այլ երկրների հետ համեմատության շնորհիվ:

Ընդհանուր առմամբ, գնաճն աշխարհում այսօր հետևյալ տեսքն ունի. 2010¹



Ներկայումս Վրաստանում գներն ավելի ցածր են, քան Հայաստանում: Գնաճի մակարդակը 2010թ. սեպտեմբերին կազմել է 1,2 տոկոս, իսկ սննդամթերքի գնաճը, նախորդ ամսվա համեմատությամբ, 2 տոկոս է կազմել: Միևնույն ժամանակ իջել են մրգերի և բանջարեղենի գները (համապատասխանաբար 7 և 2,8 տոկոսով): Գնաճը կտրուկ բարձրացել է անցյալ տարվա ավարտին և 2011թ. սկզբին: Հատկանշական է, որ Հայաստանից հարևան Վրաստան վերջերս կապիտալի ինտենսիվ արտահոսք է նկատվում: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա թանկացումներն այս երկրի վրա ավելի են ազդել, քան Հայաստանի: Ադրբեջանում ապրանքը Հայաստանի նույն ապրանքի համեմատ թանկացել է առնվազն 30–180 դրամով, որոշ դեպքերում էլ նկատելիորեն ավելի է:

Ինչպես վկայում են միջազգային փորձագետների վերլուծությունները, վերջին ժամանակներս սննդամթերքն անընդհատ թանկանում է: Սննդամթերքի գների կտրուկ գնաճ է դիտվում Եվրամիության երկրներում: Ընդ որում, Արևելյան Եվրոպայի մի քանի պետություններում հացի ու կաթնամթերքի արժեքն ավելացել է 21 տոկոսով: Հացի գներն ավելացել են 11.5 տոկոսով՝ ցորենի վատ բերքի պատճառով: ԵՄ երկրներում կաթնամթերքը ցենտերից արդեն եվրոների է հասնում. օրինակ, 250 գրամ կարագը 75 ցենտից 1.17 եվրո է դարձել: Իսպանիայում վերջին մեկ տարում հացը թանկացել է 8.2, կաթը՝ 11.3, թռչնամիսը՝ 11.4 տոկոսով: Եվ հետաքրքիր մի հանգամանք. Իտալիայում մակարոնեղենն է թանկացել. վերջին

¹ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/rankorder/2092rank.html>.

մեկ տարում գնաճը 5 տոկոս է հասել: Չեխիայում կարագն այնքան է թանկացել (համարյա 35 տոկոսով), որ սպառողները նախընտրում են մարգարին օգտագործել: Ռուսաստանում սննդամթերքի զգալի թանկացում է դիտվում: Մասնավորապես, առավել էականորեն աճել են արևածաղկի ձեթի (13,5 տոկոսով), պաստերիլիզացված (վարակազերծված) կաթի (9,4 տոկոսով), կաթնաթթվային մթերքի (7,9 տոկոսով), տարբեր յուղայնության կաթնաշոռի (7,5 տոկոսով) գները:

Առաջին անհրաժեշտության ապրանքների գների փոփոխությունները 2010թ.

| | հացամթերք | հատիկա-ընդեղենային մշակաբույսեր | կաթնամթերք | շաքարավազ | կենդանական և բուսական յուղ | մսամթերք |
|-----------|-----------|---------------------------------|------------|-----------|----------------------------|----------|
| Ռուսաստան | 107,6 | 158,8 | 116,7 | 122,5 | 125,5 | 105,3 |
| Ռկրաինա | 116,5 | 111,3 | 116,0 | 120,3 | 119,6 | 104,1 |
| Բելառուս | 104,1 | 112,1 | 109,6 | 129,3 | 118,9 | 106,3 |
| Մոլդովա | 110,8 | 102,7 | 104,4 | 109,8 | 109,9 | - |
| Հայաստան | 113,2 | 123,5 | 121,1 | 106,5 | 110,9 | 117,6 |

Չիկագոյի բորսայում հացահատիկի բուշելի գինը նոր գյուղատնտեսական տարվա սկզբին (2010թ. հուլիս) կտրուկ բարձրացավ՝ հասնելով 2008թ. մինչճգնաժամային մակարդակին և շարունակեց մնալ 8-9 ԱՄՆ դոլարի շուրջ: Նմանատիպ զարգացումներ, որոնք հետևանք են գյուղմթերքների առաջարկի կրճատման, անբարենպաստ եղանակային պայմանների և բարձր գնաճի, դրսևորվում են նաև շաքարավազի և բրնձի միջազգային շուկաներում, որտեղ շաքարավազի գները Նյու Յորքի ապրանքահումքային բորսայում հասել են 12 ԱՄՆ ցենտ՝ ֆունտի դիմաց, իսկ բրնձի գները Չիկագոյում 21 ԱՄՆ դոլարի շուրջ՝ 100 ֆունտի դիմաց: Կենդանական յուղի գները միջազգային շուկայում շարունակում են դանդաղ աճել:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (UN FAO) 2010-2011թթ. սննդամթերքի համաշխարհային շուկայի վիճակի վերաբերյալ վերջին գեկույցի համաձայն՝ 2011թ. բոլոր երկրները պետք է պատրաստ լինեն գների նոր բարձրացման: Իսկ Հացահատիկային մշակաբույսերի միջազգային խորհրդի տվյալներով, հացահատիկի արտադրությունը 2011թ. սպասվում է 1.725 մլն տոննայի սահմաններում, որը 3,5 տոկոսով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Նման կրճատումը հիմնականում պայմանավորված է եգիպտացորենի սպասվող բերքի անբավարար ծավալներով:

Մյուս կողմից, հացահատիկի սպառումը նախորդ տարվա համեմատ կավելանա 1,6 տոկոսով և կհասնի 1,786 մլն տոննայի: Այսպիսով, հացահատիկի սպառման ավելացման և արտադրության ծավալների նվազման պատճառով դրա պաշարները կարող են կրճատվել 61 մլն տոննայով և կազմել 340 մլն տոննա: Հիշեցնենք, որ հացահատիկի հիմնական արտահանողներն են Արգենտինան, Ավստրալիան, ԱՄՆ-ը, Կանադան, Եվրոպան, Ղազախստանը, Ռուսաստանը և Ռուկրաինան: Կանխատեսումների համաձայն՝ հիշյալ երկրները կկրճատեն պաշարները 55 մլն տոննայով՝ հասցնելով դրանք 2003թ. ի վեր գրանցված ռեկորդային մակարդակի: Հաշվի առնելով համաշխարհային պաշարների նման կրճատումը՝ 2011թ. բերքահավաքը կարող է ճակատագրական նշանակություն ունենալ համաշխարհային շուկայում գների կայուն մակարդակ ձեռք բերելու գործընթացում: Ագրարային հատվածի հետագա վարքագիծը պայմանավորված կլինի ոչ միայն մշակաբույսերի բերքատվության ցուցանիշներով, այլև մակրոտնտեսական ցուցանիշներով և համաշխարհային տնտեսության ընդհանուր վիճակով:

| հացահատիկի շուկան, ընդամենը (մլն տոննա) | 06/07 | 07/08 | 08/09 | 09/10 | 10/11 (կանխատեսում) |
|--|-------|-------|-------|-------|------------------------|
| արտադրություն | 1588 | 1697 | 1801 | 1787 | 1725 |
| սպառում | 1629 | 1685 | 1724 | 1759 | 1786 |
| պաշարները | 281 | 294 | 372 | 401 | 340 |
| տարեկան փոփոխություն (բացարձակ ծավալներ) | -41 | 13 | 78 | 29 | -61 |

2010թ. ցորենի գնի դինամիկան հիմնականում համապատասխանել է ագրարային շուկայում արձանագրված բարձրացման միտմանը: Յորեն արտադրող բազմաթիվ տարածքներում երաշտը հուլիսին հանգեցրեց գների մոտ 70% բարձրացման:

Ցորենի գների դինամիկան 2010թ.¹



Ի դեպ, վերջին ամիսների ընթացքում նկատվում է ցորենի պահանջարկի որոշակի կայունացում: Չի բացառվում, որ ԱՄՆ-ում շարունակվող երաշտը և Ավստրալիայում շարունակական դարձած հորդառատ անձրևները 2011թ. առաջին կեսին կարող են հանգեցնել ցորենի բերքատվության և որակի անկման: Բացի այդ, Հնդկաստանը, չնայած ավելցուկային պաշարներին, սահմանափակումներ է մտցրել ցորենի արտահանման բնագավառում, իսկ ցորենի խոշորագույն սպառողի՝ Չինաստանի կողմից պահանջարկը շարունակում է աճել: Այս և այլ գործոններ, անշուշտ, կարող են լուրջ ազդեցություն բողնել գների վրա: Միաժամանակ, ԱՄՆ-ի գյուղդեպարտամենտի՝ USDA-ի կանխատեսմամբ ցորենի համաշխարհային արտադրությունը 2010-2011թթ. կկազմի 644 մլն տոննա, որը 5%-ով քիչ է նախորդ տարվա ցուցանիշից: Համախառն սպառումը կավելանա 10 մլն տոննայով և կկազմի 660 մլն տոննա: Պաշարները կարող են կրճատվել 76 մլն տոննայով՝ հաշվի առնելով նաև Ռուսաստանում և Ուկրաինայում արձանագրված կրճատումները:

| ցորեն (մլն տոննա) | 06/07 | 07/08 | 08/09 | 09/10 | 10/11 (կանխատեսում) |
|--|-------|-------|-------|-------|------------------------|
| արտադրություն | 598 | 609 | 686 | 677 | 644 |
| սպառում | 610 | 612 | 638 | 650 | 660 |
| պաշարները | 125 | 121 | 169 | 196 | 180 |
| տարեկան փոփոխություն (բացարձակ ծավալներ) | -12 | -4 | 48 | 27 | -16 |


¹ Աղբյուրը՝ *информационно-торговая платформа iTrader & www.k2kapital.com/quote/analytics/443978/.*

Միաժամանակ կարելի է արձանագրել, որ 2010թ. երկրորդ կեսի մասշտաբները չի կարելի համեմատել 2007-2008թթ. համաշխարհային պարենային ճգնաժամի հետ: Անցյալ տարվա անբավարար առաջարկը, ինչպես նաև Ուկրաինայում և Ղազախստանում կանխատեսվող ցածր բերքը ծրագրվում է լրացնել վերջին երկու տարիներին ռեկորդային բարձր բերքի շնորհիվ կուտակված ցորենի համաշխարհային պաշարների հաշվին: Ակնհայտորեն հացահատիկի գների վրա կարող է ազդել նաև ԱՄՆ դոլարի փոխարժեքի դինամիկան: Եթե այն արժեզրկվի, ապա համապատասխանաբար կբարձրանա նաև ցորենի գինը: Ներկայումս ցորենի խոշորագույն արտադրողներ և սպառողներ են Չինաստանն ու Եվրոպան, ուստի գների դինամիկան պայմանավորված կլինի նաև այդ երկրների տնտեսությունների զարգացման մակարդակով: Ներկայումս մեկ բուշելի գինը 7,5-8 ԱՄՆ դոլարի սահմաններում է: 2011թ. առաջին կիսամյակում այն կարող է հասնել 8-8,5 ԱՄՆ դոլարի, որից հետո կարող է դիտվել որոշակի կայունացում:

Հացահատիկի գնի կանխատեսումը 2011թ.¹



Գնաճի բարձր մակարդակի մասին խոսելիս կարևոր է հաշվի առնել նաև սոցիալական գործոնը: Տնտեսական զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրներում գնաճի բարձր մակարդակն ունի տարբեր ազդեցություններ: Նախ և առաջ, պետք է նկատի ունենալ, որ Եվրամիության անդամ երկրներում մարդիկ միջին հաշվով, նույնիսկ ճգնաժամի պայմաններում սննդի վրա ծախսում են իրենց եկամուտների 12 տոկոսը: Նույնը չի կարելի ասել Հայաստանի մասին, որտեղ ստացած աշխատավարձը հիմնականում ծախսվում է սննդի վրա: Պաշտոնական տվյալները վկայում են, որ աղքատության շեմին մոտ գտնվող մարդկանց համար սննդի վրա է ծախսվում ընդհանուր ծախսերի մոտ 70 տոկոսը:²



¹ Աղբյուրը՝ *информационно-торговая платформа iTrader 8* www.k2kapital.com/quote/analytics/443978/.

² Measuring poverty in Armenia: Methodological explanations http://www.armstat.am/file/article/poverty_2010e_7.pdf.

Ըստ պաշտոնական տվյալների՝ Հայաստանում աղքատության մակարդակը կազմում է 23,5 տոկոս: Ծագածամի և դրան հետևած դրամական փոխանցումների կրճատման արդյունքում, ըստ փորձագետների, իրավիճակը կարող է սրվել՝ աղքատության ցուցանիշը հասցնելով մինչև 31 տոկոս: Իհարկե, անցանկալի է, որ աղքատության մակարդակն ավելանա այն տեմպերով, ինչ դա տեղի է ունեցել Վրաստանում (60 տոկոսով), սակայն նման միտումն ինքնին այսօր անխուսափելի է¹:

Հայաստանում միջին անվանական աշխատավարձը բյուջետային կազմակերպություններում, ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, թեև այս տարի աճել է 4,2 տոկոսով՝ կազմելով մոտ 85.000 դրամ, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում՝ 9,3 տոկոսով՝ հասնելով 133.000 դրամի, սակայն գնաճի թռիչքային պայմաններում այս հավելումները մեծ հաշվով որևէ բան չեն փոխում:

2010թ. նոյեմբերին կենսաթոշակները բարձրացան 2500 դրամով, սակայն դրանից թոշակառուների բեռը հազիվ թե թեթևանա, եթե նրանց թոշակը բարձրացել է մոտ 11 տոկոսով, մինչդեռ հիմնական սննդամթերքի մի մասի գինն աճել է առնվազն կրկնակի: Ներկայումս բնակչության սոցիալապես անապահով խավի սոցիալական վիճակը մնում է անփոփոխ, իսկ որոշ դեպքերում անգամ ավելի է վատանում:

Ո՞րն է ելքը:

Ակներև է, որ գնաճը կրճատելու կարևորագույն միջոցը ՀՆԱ-ի հստակ ձևավորված կառուցվածքն է և տնտեսության մրցակցային առավելությունների հաջող իրացումը, որը հնարավորինս կկրճատի արտաքին կախվածությունները և թույլ կտա առողջ մրցակցային դաշտում կանխատեսելի և վերահսկելի դարձնել գները՝ ապահովելով կայուն զարգացում: Ներկայումս ՀՆԱ-ի աճի հիմքում արդյունաբերությունն է, ավելի հստակ՝ լեռնահանքային արդյունաբերությունը, իսկ հանքերն ավելի ինտենսիվ շահագործելու հաշվին ձևավորված ՀՆԱ-ի աճը երկար ժամանակահատվածում կախվածություն է առաջացնում մեկ ճյուղի զարգացումից, ինչպես մի քանի տարի առաջ արտահանման կախվածությունն էր դրա կեսից ավելին կազմող ադամանդագործությունից:

Տարբեր ապրանքային խմբերում գների անհամաչափ աճը հանգեցնում է շահույթի նորմայի անհամաչափության, որն, իր հերթին, կարող է բերել երկրի տնտեսության արտադրական ոլորտներից (արդյունաբերություն, գյուղատնտեսություն) ֆինանսական և մարդկային ռեսուրսների արտահոսքը դեպի առևտրային և այլ ծառայությունների ոլորտներ, անգամ դրանց արտահոսքը՝ երկրից:

Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել գնաճի հաշվարկի մեթոդաբանությանը: Միջազգային կառույցների կողմից առաջարկված 470 ապրանքների ինդեքսի հաշվարկի հետ մեկտեղ անհրաժեշտ է ներկայացնել առաջին անհրաժեշտության ապրանքների իրական գնաճը և քայլեր ձեռնարկել դրանք թիրախավորելու և մեղմելու ուղղությամբ:

Ներկայումս հասունացել է Հայաստանի ազֆյազհան՝ գյուղատնտեսական մթերքների գների աճն ամեն ամիս հաշվարկելու պահանջը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայիս գնաճի գերակշիռ մասը կազմում է սննդամթերքի գնաճը:

Առաջարկվում է ԱՎԾ կողմից 2011թ. հունվարից որդեգրված դիսկրետ հաշվարկից բացի (որն ընդգրկում է երկրի 10 մարզերի ընտրովի քաղաքները), կիրառել նաև գնաճի հաշվարկ ըստ գյուղական բնակավայրերի, որտեղ գնաճն ավելի մեծ բացասական ազդեցություն ունի:

¹ <http://www.blackseanews.net/read/9503>.

Նպատակահարմար է գնաճը հաշվարկել ոչ միայն ըստ ամիսների, այլ նաև ըստ ապրանքների ծավալների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, օրինակ, տարեմուտին սպառվում են երկու-երեք անգամ ավելի ապրանքներ, քան առանձին ամիսների ընթացքում, և դրանց միջինացումը ճշգրիտ պատկեր չի կարող հաղորդել:

Հաշվի առնելով հասարակության բեռնացվածության ներկա մակարդակը, հարկ է նաև հաշվարկել գնաճը՝ ըստ սպառողների խմբերի (աղքատության շեմին գտնվողներ, միջին խավ, բարձր գնողունակություն ունեցող սպառողներ):

Գնաճի մեթոդաբանության հիմքում հնարավորինս հաշվի առնել բոլոր հնարավոր արտաքին (առարկայական և ենթակայական) և ներքին (առարկայական և ենթակայական) պատճառները:

Յուրաքանչյուր ամսվա կտրվածքով անհրաժեշտ է հաշվարկել սպառողական նվազագույն գամբյուղի և կենսապահովման նվազագույն գամբյուղի արժեքը, որոնք, համաձայն «Կենսապահովման նվազագույն գամբյուղի մասին» ՀՀ օրենքի,¹ կկիրառվեն կենսաթոշակների և նվազագույն աշխատավարձի ինդեքսավորման համար:

Գնաճային ճնշումների մասին վաղօրոք տեղեկանալու և ճիշտ կանխատեսումների համար կարելի է հաշվարկել նաև այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպես արտադրողների գների ինդեքսը (Producer Price Index, PPI), որն արտացոլում է տեղական արտադրության ինքնարժեքը՝ առանց շրջանառության, ավելացված արժեքի և այլ հարկերի), այնպես էլ սպրուստի ծախսերի ինդեքսը (Cost-of-living Index, COLI, որը հաշվի է առնում եկամուտների և ծախսերի աճի հաշվեկշիռը) և կապիտալի (արժեթղթերի, անշարժ գույքի, փոխատվական կապիտալի և այլն) գնի ինդեքսը, որը սովորաբար ավելի արագ է աճում, քան սպառողական գների ինդեքսը՝ հնարավորություն տալով դրանց տերերին գնաճից միակողմանի օգուտներ քաղել:

Իհարկե, ցանկալի կլինի, եթե վիճակագիրները պարբերաբար հանրությանը ներկայացնեն նաև ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ միանման ապրանքախմբերի գծով գների փոփոխությունները, ազգային արժույթի գնողունակության մակարդակը (պարիտետը), սպառման ընթացիկ ծախսերի հարաբերությունը նույն ապրանքների սպառման բազիսային ժամանակահատվածի ձեռքբերման ծախսերի նկատմամբ կամ այսպես կոչված Պաաշեի ինդեքսը և այլն:

Այս ամենը ոչ միայն կարտացոլի գների տատանումների իրական պատկերը, այլև միանշանակ կավելացնի գների վերահսկելիության առումով սպառողների վստահությունը, որն իր հերթին կարևոր ազդակ է շուկայում առկա դրական սպասումների և սպառողների վարքագծի համար:

Գնաճի դեմ պայքարելիս հարկ է հիշել, որ գների բարձրացման վարչական արգելքները երբեմն կարող են հանգեցնել այն ապրանքների դեֆիցիտին, որոնց գները կարող են բարձրանալ առանց պետության միջամտության՝ ոչ միայն աճող պահանջարկի, այլև դրանց առաջարկի պակասի պատճառով: Գների տարբերության սուբսիդավորումը, որն իրականացվում է արտադրողի կամ սպառողի շահերից, լրացուցիչ կարող է բարձրացնել նաև համախառն պահանջարկը:

Քանի որ պետության ուշադրության կենտրոնում ոչ միայն գնաճի զսպումն է, այլև զբաղվածության ավելացումը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ երկու նպատակները միաժամանակ անհնար է իրագործել: Երբ քայլեր են ձեռնարկվում զսպելու գնաճը, դրամական զանգվածի կրճատման խնդիր է առաջանում, որի հետևանքով բնակչության գնողունակությունն ընկնում է: Այն, իր հերթին, կրճատում է ապրանքների այն քանակության

¹ www.parliament.am

արտադրությունը, որն ուղիղ համեմատական է գնողունակության անկմանը: Արդյունքում կրճատվում է արտադրությունը, և աճում է գործազրկությունը: Նման հակառակ համեմատական կախվածություն կա նաև գործազրկության կրճատմանն ուղղված քայլեր ձեռնարկելիս, որին իրենց աշխատանքներում անդրադարձել են Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Ֆին Կիդլանդն ու էրուարդ Պրեսկոտը, Ռոբերտ Լուկասը, Միլթըն Ֆրիդմենը և այլք:¹

Նպատակահարմար է, որ երկրի հարկային, մաքսային և դրամավարկային քաղաքականությունները դառնան ավելի նպատակային և արդյունավետ: Մասնավորապես, տնտեսության մրցունակության խթանման միջոցով գնաճը զսպելու նպատակով համաշխարհային տնտեսական ճգնաժամի ներկա փուլում նոր սարքավորումներ ներկրողներին անհրաժեշտ է ազատել մաքսատուրքից: Հետագայում նոր սարքավորումներ ներկրած ձեռնարկատերերից հարկեր կարելի է գանձել շահույթի ստացմանն ու ավելացմանը զուգահեռ՝ հնարավորություն ընձեռելով խթանելու տեղական արտադրության մրցունակությունը և իջեցնելու գործող գների մակարդակը:

Ավելի արդյունավետ պայքար է պահանջվում մաքսանենգության և ստվերային տնտեսության տեսակարար կշիռը կրճատելու ուղղությամբ: Ստվերային տնտեսությունն, ինչպես հայտնի է, կրճատում է պետական եկամուտները, որոնք ապահովելու համար աճում է հարկային բեռը նվազ թվով տնտեսվարողների համար: Իսկ լրացուցիչ հարկերն իրենց հերթին ավելացնում են ապրանքների և ծառայությունների ինքնարժեքն ու նպաստում գնաճի բարձր տեմպերին: Գնաճի տեմպերի կրճատմանն է ուղղված նաև հարկային տարբերակված քաղաքականությունը, ինչպես նաև երկրում հարկային շրջանայնագման համակարգին անցումը:

Հեռավոր, հատկապես սահմանամերձ բնակավայրերում տնտեսվարողներին պետք է ազատել մի շարք հարկատեսակներից: Ավելին, այս բնակավայրերում պետք է ավելացնել գյուղմթերքների արտադրության սուբսիդավորումը: Պետական բյուջեի սահմանափակ միջոցները հաշվի առնելով՝ առաջարկում ենք կիրառել սուբսիդավորում՝ ոռոգման ջրի անվճար ապահովման ձևով հատկապես այն տնտեսություններին, որոնց գործունեությունն ուղղված է երկրի պարենային անվտանգության ապահովմանն ու ագֆյուլացիայի կրճատմանը:

Առաջարկվում է նաև անցնել տնտեսության առաջընթացն ու մրցունակությունն ապահովող առանձին ճյուղերի (մասնավորապես, արտադրությունների) նպատակային վարկավորման: Միջազգային ֆինանսական կառույցներից արտոնյալ պայմաններով ստացված վարկերն առաջին հերթին հարկ է նպատակաուղղել հենց նման արտադրությունների զարգացմանը, որը ևս գնանկման հստակ նպատակ ունի: Առաջարկվում է առևտրային վարկերի համեմատ նվազեցնել արտադրության նպատակներով տրվող վարկերի տոկոսադրույքը:

Նպատակահարմար ենք գտնում նաև, որ կենսաապահովման նվազագույն զամբյուղի ապրանքների գները սահմանվեն կառավարության կողմից: Առավելագույնս պետք է խթանել կենսաապահովման զամբյուղի մեջ մտնող տեղական սննդամթերքի արտադրությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողի սեփականաշնորհման արդյունքում նոր սեփականատերերն առանձնապես շահագրգռված չեն դրանք մշակելու խնդրով, մի շարք մշակաբույսերի ցանքատարածություններ կրճատվել են, դրանց մի մասն աղակալել է, մյուս՝ մասը «մաշվել»: Այլ խոսքով, ոմանց համար անշարժ գույքի նման շահութաբեր գործարքը մեծ վնաս է հասցրել երկրի գյուղատնտեսությանը, որի նպատակների համար առանց այն էլ Հայաստանի տարածքի գրեթե կեսը պիտանի չէ: Հիշյալ երևույթը բացառելու նպատակով առաջարկում ենք կիրառել հողի չօգտագործման պրոգրեսիվ հարկ, որը հիմնավորված է նաև

¹ Нобелевские лауреаты в области экономики, Ереван, АИ, 2009г., стр. 122-321.

արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Նման հարկ, բնականաբար, չի կարելի գանձել օգտագործվող հողատարածքներից: Իսկ նրանք, ովքեր կնախընտրեն երկրում հազարավոր հեկտարների հասնող հողատարածքները պահել «սերունդների համար», ստիպված կլինեն տարեցտարի ավելի բարձր հարկ վճարել: Սա կհարկադրի նրանց մտածել հողն արդյունավետ օգտագործելու մասին, կամ այն վաճառել հողի իրական արժեքն իմացողներին: Այլապես, ստեղծվում է տարիմաստություն. գյուղատնտեսության բնագավառում զբաղվածները կազմում են երկրի աշխատունակ բնակչության գրեթե կեսը, սակայն պետությունը ստիպված է սննդամթերք ներմուծել արտերկրից, այն էլ բարձր գներով: Երկրի հողային ֆոնդը պետք է արդյունավետ օգտագործել հացահատիկի, այլ մշակաբույսերի արտադրություն կազմակերպելու և պարենի խնդիրը լուծելու համար:

Մինչ այդ, անհրաժեշտ է հակակշռել գների բարձրացումը նպաստների և վճարների բարձրացումով և անցնել սոցիալապես անապահով խավի (հատկապես՝ խանութից հաց ու այլ սնունդ պարտքով վերցնողների համար) առաջին անհրաժեշտության որոշ ապրանքների կտրոնային համակարգի: Միաժամանակ, գյուղմթերքների շուկաներում պետք է կիրառել գների խիստ վերահսկողություն տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և այլ կառույցների կողմից:

Հաշվի առնելով համաշխարհային տնտեսությունում սննդամթերքի գների հետագա թանկացումները՝ չենք բացառում, որ գնաճի բարձր մակարդակները կարող են հանգեցնել մի իրավիճակի, երբ դրամական շրջանառությունն առժամանակ և որոշ դեպքերում իր տեղը զիջի բնամթերային փոխանակմանը: Մի երևույթ, որը պատմության տարբեր փուլերում հանգուցալուծել է ճգնաժամի մարտահրավերները (20-րդ դարի 20-ական թվականներին Գերմանիայում, ԽՍՀՄ-ում Հայրենական մեծ պատերազմի որոշ փուլերում և այլն):

Ավելի արմատական լուծման առումով կարևոր է նկատել, որ գնաճի բնական հակակշիռն իրականում բնակչության համախառն պահանջարկն է: Վերջինս այն հակակշիռն է, որը թույլ չի տալիս գներն անվերջ բարձրացնել: Եթե բնակչության իրական վճարունակ պահանջարկն ընկնի, այլ խոսքով՝ ապրանքները չսպառվեն նույն քանակությամբ, ապա գոնե մենաշնորհները ստիպված կլինեն գներն իջեցնել համապատասխան մակարդակի, որպեսզի կարողանան շահույթներ ապահովել, և ոչ թե կրճատել շրջանառության ծավալները: Իսկ այդ երևույթը երկար ժամանակ Հայաստանում հնարավոր է՝ տեղի չունենա, քանի որ չկա ուղիղ համեմատական կախվածություն բնակչության իրական եկամուտների և սպառման ծավալների միջև: Դրանց միջև՝ որպես հանգուցալուծող օղակ, ընկած են այսպես կոչված անաշխատ եկամուտները (արտերկրից ստացվող դրամական օգնությունը), որը ևս թույլ չի տա՝ երկրի տնտեսությունը զարգանա տնտեսական օրինաչափություններով:

ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱ-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Տնտեսական ճգնաժամերն ամենևին էլ նոր երևույթ չեն մարդկության պատմության մեջ: Դրանք ունեն բավականին հարուստ պատմություն: Ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամը սկսվեց ԱՄՆ-ի հիփոթեքային շուկայից 2007թ. ամռանը և տարածվեց ամբողջ աշխարհում: Քանի որ ԱՊՀ երկրների ֆինանսական շուկաները մեծ չափով ինտեգրված չէին համաաշխարհայինին, ապա ճգնաժամի առաջին ալիքն այնքան էլ չազդեց այս երկրների վրա: Միայն Ղազախստանում¹, որի բանկային համակարգն այդ ժամանակ ԱՊՀ-ում ամենազարգացածներից էր, արտաքին պարտքը կտրուկ մեծացավ: Բացի այդ, երկրում ակնհայտ «պղպջակ» գոյացավ նաև անշարժ գույքի շուկայում: Այսպիսով, Ղազախստանը ԱՊՀ երկրներից միակն էր, որ ճգնաժամի ազդեցությունը զգաց հենց առաջին փուլի ժամանակ:

Ճգնաժամի ժամանակ արդեն ի հայտ եկան ԱՊՀ բոլոր երկրների տնտեսությունների թույլ կողմերը՝ ՀՆԱ-ի աճ ոչ արդյունավետ ճյուղերի հաշվին, արտաքին առևտրի ոչ դիվերսիֆիկացում, տնտեսության զարգացման հեռանկարային ոլորտների սխալ ընտրություն և այլն: Ինչի արդյունքում էլ յուրաքանչյուր երկրում ճգնաժամն ունեցավ իր յուրահատուկ դրսևորումները և հետևանքները:

Նախ ցույց տանք արտահանման կառուցվածքի ազդեցությունը ՀՆԱ փոփոխությունների վրա ԱՊՀ հանրապետություններում, որից հետո էլ պարզ կլինի ճգնաժամի ժամանակ յուրաքանչյուր երկրում դրսևորված յուրահատկությունը:

Ռեգրեսիոն վերլուծություն կատարելով 2000-2007թթ. ԱՊՀ հանրապետությունների իրական ՀՆԱ-ի և իրական արտահանման² միջև՝ կստանանք արտահանման գործակիցը, որը ցույց կտա, թե այլ հավասար պայմաններում արտահանման 1% փոփոխությունը ՀՆԱ-ի որքան փոփոխության է բերում:

Ռեգրեսիոն հավասարումն ունի հետևյալ տեսքը՝ $GDP = c + a \cdot Export + \varepsilon$,

որտեղ GDP-ն իրական ՀՆԱ-ն է, c-ն՝ հաստատունը, Export-ը՝ իրական արտահանումը, a-ն՝ արտահանման գործակիցը, իսկ ε -ը՝ ստանդարտ սխալը:

Ընդ որում, տվյալ պարագայում մեզ հետաքրքրում է արտահանման գործակցի ոչ թե մեծությունը, այլ դրա 1-ից մեծ կամ փոքր լինելու հանգամանքը: Եթե երկրի արտահանման գործակիցը մեծ է 1-ից, կարող ենք պնդել, որ տվյալ երկիրն արտահանում է այնպիսի արտադրանք, որի արտադրությունը նպաստում է նաև տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը և հակառակը, եթե գործակիցը 1-ից փոքր է (նման դեպքում սովորաբար երկիրն արտահանում է հումք կամ նավթամթերք):

Ռեգրեսիայի արդյունքները ցույց են տալիս, որ.

- արտահանման գործակիցները Հայաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուզբեկստանում, Ադրբեջանում և Ռուսաստանում տատանվում են 0.71-0.76 միջակայքում, ինչը Հայաստանի, Տաջիկստանի և Թուրքմենստանի պարագայում նշանակում է, որ այս երկրների արտահանման հիմնական մասը կազմում են հանքահումքային արտա-

¹ 2007թ. Ղազախստանի բանկային համակարգի ակտիվները ՀՆԱ-ի հարաբերակցությամբ կազմում էին 93%, որն ամենաբարձր ցուցանիշն էր ԱՊՀ երկրների շրջանակում (տե՛ս Բնտերֆաքս-1000. ԱՊՀ երկրների բանկերը, 2007թ. ամփոփում):

² <http://www.worldbank.org/>- GDP & Exports of goods and services by countries (constant 2000 US\$).

դրանքը և մետաղները: 2000-2007թթ. Հայաստանի արտահանման 70%-ից ավելին կազմում են թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներն ու հանքահումքային արտադրանքը: Վերջին տարիների ընթացքում Հայաստանում էական տնտեսական աճի պայմաններում տեղի է ունեցել մրցունակության անկում՝ չափված ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից թողարկվող Մրցունակության համաշխարհային զեկույցի: ՀՆԱ-ի աճը՝ նվազող մրցունակության զուգակցմամբ դրսևորվում է փոքրաթիվ երկրներում (ԱՊՀ երկրներից՝ Հայաստանում, Ադրբեջանում և Ղազախստանում): Տնտեսության հետագա զարգացման հեռանկարները բավականին վատատեսական են այն երկրներում, որտեղ ՀՆԱ-ի աճը զուգակցվել է մրցունակության անկմամբ, բացառությամբ ռեսուրսահնտեսափվ տնտեսությունների, ինչպիսին է ԱՊՀ երկրներից Ադրբեջանը:

Նույն ժամանակահատվածում Ռուսաստանում, Ադրբեջանում, Ղազախստանում, Տաջիկստանում և Թուրքմենստանում հանքահումքային արտադրանքի և ոչ թանկարժեք մետաղների տեսակարար կշիռը յուրաքանչյուր երկրի ընդհանուր արտահանման մեջ գերազանցել է 60%-ը: Ռուսաստանում մետաղներն և հանքահումքային արտադրանքը կազմել են արտահանման 70%-ից ավելին: Տաջիկստանի արտահանման մեջ հաջորդ համեմատաբար զարգացած ոլորտները հանդիսանում են չվերամշակված բամբակի և էլեկտրաէներգիայի արտահանումը, որոնց արտադրությունը ևս չի նպաստում տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը: Ուզբեկստանի արտահանման հիմնական մասը կազմում են չվերամշակված բամբակն ու մետաղները: Հատկապես Ադրբեջանի (Ադրբեջանի արտահանման 75%-ից ավելին կազմում է նավթը), իսկ մասնավորապես Ռուսաստանի համար (Ռուսաստանի արտահանման մեջ 3-րդ տեղում նավթն է) այս ցուցանիշը նշանակում է, որ արտահանման մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունի նավթը:

- Արտահանման գործակիցը Բելառուսում, Ուկրաինայում և Ղազախստանում մեծ է մեկից: Եվ եթե Ղազախստանի պարագայում դա կարելի է բացատրել զարգացած ֆինանսական շուկայով, ապա Ուկրաինայի և Բելառուսի դեպքում հենց արտահանման կառուցվածքն է էական: Այս 2 երկրներում էլ արտահանման մեջ հանքահումքային արտադրանքն ու մետաղները չեն գերազանցում արտահանման 50%-ը. Բելառուսում արտահանման 40%-ը հանքահումքային արտադրանքը և մետաղներն են, 20%-ը՝ քիմիական արտադրանքը, 16%-ը՝ մեքենա-սարքավորումները, իսկ Ուկրաինայում մոտ 50%-ը՝ մետաղներ և հանքահումքային արտադրանք, 20%-ը՝ մեքենա-սարքավորումներ, 12%-ը՝ սնունդ և ծխախոտ, այսինքն՝ չնայած արտահանման մեջ 40-50% կազմում են կրկին հանքահումքն ու մետաղները, սակայն այս երկրների արտահանման մեջ դրանց հաջորդող արտադրատեսակներն այնպիսին են, որ նպաստում են նաև տնտեսության այլ ոլորտների զարգացմանը:
- Արտահանման գործակիցը Մոլդովայում և Ղրղզստանում փոքր է նույնիսկ 0,5-ից, ինչը վկայում է, որ այս երկրներում արտահանումը դեռևս նոր է սկսում զարգանալ (այս երկրների արտահանումը ԱՊՀ երկրների ընդհանուր արտահանման մեջ ամենավոքոր տոկոսն է կազմում:)

Ճգնաժամի 2-րդ փուլը, որն ընդգրկեց արդեն ԱՊՀ երկրների մեծ մասը, սկսվեց 2008թ. ամռանը և տարածվեց հիմնականում հետևյալ ուղիով.

- Զարգացող երկրներից օտարերկրյա կապիտալի արտահոսք:
- Դեպի զարգացած երկրներ արտահանման կրճատում, որն էլ շղթայաբար բերեց հումքային ապրանքների գների անկում: Բանի որ ԱՊՀ երկրները հիմնականում հումք կամ

քիչ վերամշակված ապրանք արտահանողներ են, ապա նրանց արտահանած ապրանքների գների կրճատումը հանգեցրեց նրանց արտաքին առևտրի զգալի կրճատման: 2009թ. առաջին կեսին արտաքին առևտրի զգալի կրճատումն ակնհայտ էր արդեն շատ երկրներում. 2009թ. արտաքին առևտուրը կազմում էր 2008թ. առևտրի մի մասը՝ Ուկրաինայում 53,2%, Ռուսաստանում՝ 64,3%, Ղազախստանում՝ 52,8%, Բելառուսում՝ 65,34%, Հայաստանում՝ 67,2%:

- Արտահանման ծավալների, ինչպես նաև հիմնական արդյունաբերական ճյուղերում արտադրության կրճատման հետևանքն էր աշխատավարձերի իջեցումը և/կամ գործազրկության մեծացման, ինչն էլ հանգեցրեց ներքին սպառողական պահանջարկի կրճատման: Այս ամենին ԱՊՀ երկրներում ավելանում է ևս մի յուրահատկություն՝ տրանսֆերտների կրճատումը:
- Արտաքին գործոնների և օտարերկրյա արժույթի նկատմամբ պահանջարկի մեծացման ազդեցությամբ երկրների ներսում սկսեց նկատվել ազգային արժույթի արժևորման միտում:
- Բնական է, որ կրճատվեցին ՀՆԱ-ն և արդյունաբերական արտադրությունը: Այս տեսանկյունից ամենից շատ ԱՊՀ երկրների շրջանակում տուժել են Հայաստանը, Ղազախստանը, Մոլդովան, Ռուսաստանը և Ուկրաինան:

ԱՊՀ երկրներում ճգնաժամի ալիքը տարածվեց 2 ձևով. նախ՝ համաշխարհային շուկայում պահանջարկի և գների մակարդակի անկման տեսքով, ապա՝ ԱՊՀ երկրների տեղական շուկաներում, հատկապես Ռուսաստանի, պահանջարկի նվազման տեսքով¹:

ԱՊՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով 2009թ. 2008թ. հետ համեմատած ներտարածաշրջանային արտահանման ընդհանուր ծավալը կրճատվել է 43%-ով: Դեպի ԱՊՀ երկրներ արտահանման ծավալներն ամենաշատը կրճատվել են Ուկրաինայում (41,8%-ով), Հայաստանում (44,18%-ով), Բելառուսում (35%-ով), Ղազախստանում (38,51%-ով), Ռուսաստանում (32,58%-ով): Ամենաքիչը կրճատվել է Մոլդովայի (20,46%) և Տաջիկստանի (8,8%) արտահանումը:

ԱՊՀ երկրների արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների վրա ճգնաժամային երևույթների ազդեցության վերլուծությունը թույլ է տալիս մի քանի հետևություններ անել.

- նախ անհրաժեշտ է նշել, որ արտահանման կրճատման հարցում առավել զգալի եղավ համաշխարհային ճգնաժամի էֆեկտը. արտահանման ընդհանուր ծավալների կրճատմանը ներտարածաշրջանային առևտուրը նպաստել է 1/5-ով, իսկ 4/5-ով այն կրճատվել է ոչ տարածաշրջանային գործոնների հաշվին:
- Արտաքին առևտրի կրճատման հետևանքով մեծացավ ներտարածաշրջանային երկրների առևտրի տեսակարար կշիռը որոշակի գործոնների ազդեցությամբ՝ ԱՊՀ երկրների ապրանքային կառուցվածքի յուրահատկությունը, ԱՊՀ ներտարածաշրջանային շուկայում գնագոյացման յուրահատկությունը և այլն:
- Քանի որ ԱՊՀ ներտարածաշրջանային արտահանման դինամիկայի յուրահատկությունը հիմնականում պայմանավորված էր ներտարածաշրջանային առևտրում այդ ապրանքների համեմատաբար ցածր տեսակարար կշիռով՝ կապված ԱՊՀ երկրների արտահանման կրճատման հիմնական պատճառ հանդիսացող համաշխարհային

¹ 2007թ. տվյալներով ԱՊՀ առանձին երկրների արտաքին առևտրում ԱՊՀ տեսակարար կշիռը միայն Ռուսաստանում է եղել 25 %-ից ցածր:

շուկայում նախ և առաջ ցածր ավելացված արժեքով ապրանքների պահանջարկի և զնային մակարդակի անկման հետ (հումքային ապրանքներ, մետալուրգիական և քիմիական ապրանքներ): Իհարկե, ԱՊՀ երկրների ներտարածաշրջանային առևտրի մեջ հանքահումքային արտադրանքն ունի զգալի ծավալ՝ 35,9%, այն դեպքում, երբ մեքենա-սարքավորումների տեսակարար կշիռը կազմում է 20,7%, այսուհանդերձ, հանքահումքային արտադրանքը կազմում է դեպի ոչ ԱՊՀ երկրներ առևտրի 70,5%-ը, իսկ մեքենա-սարքավորումներին բաժին է ընկնում ընդամենը 2,8%-ը¹:

- Ընդհանուր առևտրում ներտարածաշրջանային առևտրի տեսակարար կշռի մեծացման համար կարևոր գործոն էր ԱՊՀ երկրների, հատկապես Ռուսաստանի, հակաճգնաժամային միջոցների կիրառումը, որոնք ուղղված էին ոչ ԱՊՀ երկրներից ներմուծման կրճատմանը: Այս ամենի հետևանքը եղավ այն, որ տարածաշրջանի ներսում մեծացավ ԱՊՀ երկրների ապրանքների մրցունակությունը համեմատած ոչ ԱՊՀ երկրների հետ: Դիտարկենք ճգնաժամի ազդեցությունը ԱՊՀ երկրների վրա՝ ՀՆԱ-ի տեսանկյունից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**ԱՊՀ երկրների ՀՆԱ-ի և արտահանման դինամիկան 2007-2009թթ.
(% նախորդ տարվա համեմատ)**

| Երկրներ | 2007 | | 2008 | | 2009 | |
|-----------|-------|------------|-------|------------|-------|------------|
| | ՀՆԱ | Արտահանում | ՀՆԱ | Արտահանում | ՀՆԱ | Արտահանում |
| Ադրբեջան | 125 | 95.1 | 110.8 | 788.27 | 109.3 | 30.78 |
| Հայաստան | 113.8 | 117 | 106.8 | 92.8 | 85.6 | 67.2 |
| Բելառուս | 108.6 | 123 | 110 | 135.5 | 100.2 | 65.34 |
| Դազախստան | 108.9 | 124.8 | 103.3 | 149.1 | 101.2 | 52.8 |
| Դրոգստան | 108.5 | 148.3 | 107.6 | 124.3 | 102.3 | 77.69 |
| Մոլդովա | 103 | 127.6 | 107.2 | 119.1 | 93.5 | 80.9 |
| Ռուսաստան | 108.1 | 116.8 | 105.6 | 133 | 92.1 | 64.3 |
| Տաջիկստան | 107.8 | 104.9 | 107.9 | 95.8 | 103.4 | 71.83 |
| Ուկրաինա | 107.9 | 128.5 | 102.1 | 135.9 | 85 | 53.2 |

ԱՊՀ դիտարկված գրեթե բոլոր հանրապետություններում 2007-2008թթ. ՀՆԱ-ն դեռևս աճում էր, ճիշտ է՝ նվազող տեմպերով, ինչը ցույց է տալիս, որ ճգնաժամի առաջին փուլը ԱՊՀ երկրների վրա զգալի ազդեցություն չունեցավ: 2009թ. արդեն ԱՊՀ որոշ հանրապետություններում ՀՆԱ-ն սկսեց նվազել՝ Հայաստանում՝ 14.4%-ով, Մոլդովայում՝ 6.5%-ով, Ռուսաստանում՝ 7.9%-ով, Ուկրաինայում՝ 15%-ով: Արդյունաբերական արտադրանքի ծավալների անկում 2009թ. գրանցվեց ԱՊՀ գրեթե բոլոր հանրապետություններում, բացառությամբ Ադրբեջանի և Դազախստանի:

Ճգնաժամի ընթացքում ԱՊՀ մի շարք երկրներում ՀՆԱ-ի կրճատման կարևոր նախադրյալ հանդիսացավ արտերկրից՝ հատկապես այլ ԱՊՀ հանրապետությունից, դրամական փոխանցումների կրճատումը: 2000-2007թթ. հետխորհրդային երկրներում դրամական փոխանցումների աճի տեմպերը տարեկան կազմում էին 25-35%, 2008թ. առաջին անգամ

¹ ԱՊՀ Վիճակագրական ծառայության 2008թ. տվյալներ:

դրանց աճի տեմպը նվազեց, իսկ 2009թ. առաջին կիսամյակում արդեն գրանցվեց դրամական փոխանցումների կրճատում՝ համեմատած 2008թ. նույն ժամանակահատվածի հետ:

Ներկայիս տնտեսական ճգնաժամը տեսանելի դարձրեց Հայաստանի տնտեսության խոցելիությունը, որն արտահայտվում է տնտեսության հետևյալ բնորոշիչ գծերով.

- Աճի ոչ կայուն շարժիչ ուժեր:
- Արտահանման սահմանափակ և հիմնականում հումքային ռեսուրսներով գերիշխող կառուցվածք:
- Մասնավոր տրանսֆերտներից զգալի կախվածություն:
- Ճգնաժամի ազդեցության արագ տեղափոխումը Հայաստան ցույց տվեց վերջինիս բավական զգայունությունն արտաքին շոկերի նկատմամբ: 2009թ. Հայաստանը ճգնաժամի արդյունքում ՀՆԱ-ի ամենաշատ անկում գրանցած երկրների շարքում էր՝ 14.4%:

Հայաստանում ճգնաժամն ունեցավ յուրահատուկ դրսևորումներ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- Վերջինիս տարածման արագությանը հատկապես նպաստեց տնտեսության ցածր դիվերսիֆիկացման աստիճանը:
- Ի տարբերություն այլ երկրների, որտեղ ճգնաժամը սկիզբ առավ ֆինանսական շուկայում ցնցումներից, Հայաստանում այն սկսվեց իրական հատվածում պայմանավորված պղնձի և մոլիբդենի միջազգային գների կտրուկ անկմամբ:
- Տնտեսական անկման հետագա խորացումը խթանեց մասնավոր տրանսֆերտների նվազումը և շինարարության ոլորտում կտրուկ անկումը:

Սկսած 2000թ. կեսերից՝ առաջ եկան ՀՀ տնտեսության խոցելի կողմերը: Կախվածությունը դրամական փոխանցումներից և կապիտալի հոսքերից աճեց այս տարիներին ընդհանուր առմամբ առևտրի ոլորտի և մասնավորապես արտահանման աճի դանդաղելու պայմաններում: Շինարարությունը և ծառայությունները դարձան աճին նպաստող հիմնական ոլորտները: Բարձր և արագացող տնտեսականի աճի ժամանակաշրջանի ավարտին՝ 2008թ., ՀՆԱ-ի աճը 2008թ. առաջին երեք եռամսյակներում արձանագրված 10 տոկոսից դանդաղեց մինչև 6.8 տոկոսը: 2008թ. չորրորդ եռամսյակում աճը եղել է բացասական՝ առաջին եռամսյակային անկումը սկսած 1994թ.: Այն ժամանակվանից անկումն արագացել է: Անշարժ գույքի ոլորտը՝ վերջին տարիներին աճի ամենամեծ նպաստողը, կտրուկ անկում է ապրել, ինչպես և հանքարդյունաբերությունը և մետաղների արտադրությունը: Մյուս հատվածները (օրինակ, Հայաստանի փոքր, բայց աճող ՏՏ ճյուղը) նույնպես ճնշման տակ են: Գործազրկությունը կտրուկ աճել է, քանի որ փակվել են պղնձի և մոլիբդենի բազմաթիվ հանքավայրեր՝ ավելացնելով ճնշումը գյուղական տնտեսության, սոցիալական ապահովության համակարգի և հարկային մուտքերի վրա: Հայաստանի արտաքին հաշվեկշիռն էականորեն վատթարացել է՝ սկսած 2007թ.՝ 2008թ. ունենալով ՀՆԱ-ի նկատմամբ մոտ 11 տոկոսի չափով ընթացիկ հաշվի պակասուրդ և ՀՆԱ-ի նկատմամբ 25 տոկոսը գերազանցող առևտրային պակասուրդ: Արտահանումը ծավալային առումով սկսեց նվազել 2006 թվից, սակայն արտահանման թույլ ցուցանիշները քողարկվել էին գունավոր մետաղների՝ Հայաստանի արտահանման հիմնական ապրանքային խմբի նպաստավոր գներով: Ներմուծման աճը, մյուս կողմից, շատ մեծ է եղել՝ պայմանավորված դրամական փոխանցումներով, ՕՈՆ-ներով, առևտրային բանկերի արտաքին փոխառություններով և իրական փոխարժեքի արժևորմամբ: 2008թ. վերջին եռամսյակում արտաքին միջավայրի կտրուկ վատթարացումն արտահայտվել է արտահան-

ման ավելի քան 40 տոկոսանոց անկումով 2009թ. առաջին եռամսյակում (արտահայտված ԱՄՆ դոլարով):

2010թ. արդեն նկատվում է տնտեսական կայունացում և աճ ԱՊՀ գրեթե բոլոր հանրապետություններում: Համաշխարհային տնտեսության աճը, նավթի և գազի գների աճը նախապայման հանդիսացան տնտեսական ակտիվության վերականգնման այնպիսի երկրներում, որոնք էներգառեսուրսների արտահանողներ են (Ռուսաստան, Ղազախստան, Ադրբեջան, Թուրքմենստան): Սրան զուգահեռ անհրաժեշտ է նշել, որ համեմատաբար բաց, և, հետևաբար, ճգնաժամից առավել շատ տուժած երկրները (Ռուսաստան, Ղազախստան) ավելի դանդաղ են վերականգնվում, հակառակ երևույթն է դիտվում համեմատաբար փակ տնտեսությամբ երկրներում (Ադրբեջան, Թուրքմենստան):

Էներգառեսուրսների չտիրապետող երկրներում (Ուկրաինա, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան) տնտեսական զարգացումը և դրա հետագա հնարավորությունները զգալիորեն կախված են տվյալ երկրի յուրահատկությունից: Օրինակ՝ Ուկրաինայի տնտեսական աճի համար նախ անհրաժեշտ է քաղաքական իրավիճակը կայունացնել, Ղրղզստանի, Տաջիկստանի, Մոլդովայի, Հայաստանի տնտեսությունները զգալիորեն կախված են միգրանտների դրամական փոխանցումներից: Վրաստանի և Հայաստանի հետագա զարգացման համար կարևորվում են օտարերկրյա ներդրումները, տնտեսության մեջ արտադրության և արտահանման դիվերսիֆիկացումը:

2010 թվականի անցած ամիսների փաստացի տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տարվա առաջին կիսամյակում ՀՀ-ում արձանագրվում է տնտեսության վերականգնում, որը հանգեցնում է մակրոտնտեսական իրավիճակի զգալի բարելավման՝ ձևավորելով լավատեսական սպասումներ: 2010 թվականի հունվար-հունիս ամիսներին գրանցվել է 6.7% տնտեսական աճ, որն արձանագրվել է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության: Տեղի է ունեցել արտաքին առևտրաշրջանառության աճ, հատկապես գրանցելով բարձր արտահանման աճ՝ 55.9%: Հետճգնաժամային աճի համար ամուր հիմքեր նախապատրաստելու նպատակով կառավարությունը սահմանել է հիմնական գործողություններ և խթաններ կորպորատիվ կառավարման, տնտեսական մրցակցության, ձեռնարկությունների գրանցման, տեսչական ստուգումների և պետական-մասնավոր համագործակցության ոլորտներում, որն էլ, հուսանք, կտա անհրաժեշտ արդյունք:

**ՖԻՆԱՆՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ինչպես ցանկացած այլ գործունեության, ֆինանսարդյունաբերական խմբերի (ՖԱԽ) ձևավորման ու գործունեության համար կարևոր նշանակություն ունի համապատասխան օրենսդրական հիմքերի ձևավորումը: Թեև միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՖԱԽ-երի գործունեության համար առանձին օրենսդրության առկայությունը պարտադիր չէ, և այդ կազմավորումները կարող են գործել նաև առանց հատուկ օրենսդրության, այդուհանդերձ, զարգացող այնպիսի երկրներում, ինչպիսին է նաև Հայաստանը, նման իրավական հիմքերի առկայությունը ոչ միայն ցանկալի, այլև խիստ անհրաժեշտ է: Խնդիրն այն է նրանում, որ զարգացող երկրներում, բացի ստվերային տնտեսության մեծ ծավալների առկայությունից, մրցակցային հարաբերությունների անկատարությունից և հանրահայտ մյուս երևույթներից, դեռևս ձևավորված չեն նաև գործարարության կայուն ավանդույթներ և էթիկայի կանոններ, ինչն էլ, բնականաբար, հնարավորություն չի տալիս լրացնելու այն «բացերը», որոնք առաջանում են այս կամ այն ոլորտում օրենսդրական հիմքերի բացակայության պարագայում:

Այս տեսանկյունից, կարծում ենք, ՀՀ-ում շատ արդիական և հրատապ խնդիր է ՖԱԽ-երի ձևավորման և գործունեության օրենսդրական հիմքերի ստեղծումը, որը պետք է հիմնվի առաջին հերթին ՀՀ քաղաքացիական օրենսդրության վրա: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջինս բավականաչափ ազատական բնույթ ունի և որևէ խոչընդոտ չի պարունակում ՖԱԽ-երի մասին օրենք մշակելու և ընդունելու համար (այս առումով վատագույն դեպքում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում ընդամենը որոշ լրացումների անհրաժեշտություն կարող է առաջանալ): Ուստի, կարգավորման հիմքում ունենալով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը, կարծում ենք, անհրաժեշտ և նպատակահարմար է ձևավորել հատուկ օրենսդրություն՝ ՖԱԽ-երի ձևավորման, գործունեության և դրանց նկատմամբ պետական վերահսկողության հետ կապված հարաբերությունների հստակ կանոնակարգման նպատակով:

Այս կապակցությամբ, հաշվի առնելով նաև արտասահմանյան փորձը, անհրաժեշտ է մշակել ու ընդունել «Ֆինանսարդյունաբերական խմբերի մասին» ՀՀ օրենք, որի նախագծի մշակման նպատակով էլ առաջարկում ենք որդեգրել հայեցակարգային հետևյալ մոտեցումները:

Որպես այս օրենքի հիմնական նպատակ՝ անհրաժեշտ է սահմանել ՖԱԽ-երի ստեղծման, գործունեության, վերահսկողության և դրանց լուծարման իրավական հիմքերի ձևավորումը: Սակայն, սա չի նշանակում, որ տվյալ օրենքը պետք է լինի ՖԱԽ-երի հետ կապված հարաբերությունները կանոնակարգող միակ օրենսդրական փաստաթուղթը: Այս շրջանակում պետք է ընդգրկվեն նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածները, իրավաբանական անձանց պետական գրանցման մասին ՀՀ օրենսդրությունը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ՖԱԽ-երի ստեղծման մասին տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրերը (համաձայնությունները), ինչպես նաև միջազգային կամ միջպետական ՖԱԽ-երին առնչվող միջազգային ու միջպետական պայմանագրերը: Այսինքն, հարցն այն է, որ հնարավոր չէ մեկ օրենքի ընդունմամբ լուծել ՖԱԽ-երի հետ կապված տարաբնույթ հարաբերությունների կարգավորման խնդիրները,

ինչն էլ նշանակում է, որ մշակման ենթակա օրենքը պետք է հաշվի առնի արդեն իսկ գոյություն ունեցող օրենսդրական նորմերը, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով վերաբերում են ՖԱԽ-երին:

Այս առումով, կարծում ենք, բացի այն, որ առանձին հարցեր պետք է կարգավորվեն ՀՀ կառավարության կողմից (օրենքի կիրարկումն ապահովող առանձին կարգերի ընդունումը, տարբեր նորմատիվների սահմանումը և այլն), անհրաժեշտ է նախատեսել նաև, որ եթե ՖԱԽ-ի ստեղծումը պայմանավորված է նաև որևէ սոցիալական կամ պետական քաղաքականության այլ ուղղություններով որոշակի ծրագրերի իրականացմամբ, ապա ՖԱԽ-ի ստեղծման, գործունեության և վերահսկողության հետ կապված առանձին հարցեր նույնպես կարող են կարգավորվել ՀՀ կառավարության որոշումներով: Վերջինս անհրաժեշտ է կարգավորման տվյալ դաշտն առավել ճկուն դարձնելու և այս ոլորտում հանրապետության գործադիր իշխանության անմիջական մասնակցությունն ապահովելու համար, ինչն էլ, իր հերթին, կհանգեցնի ոչ միայն պետական, այլև ՖԱԽ-երի կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացմանը և «պետություն-մասնավոր հատված» կապերի ռացիոնալացմանը:

Օրենքի հստակության առումով շատ կարևոր է ճիշտ սահմանել «ֆինանսաարդյունաբերական խումբ» հասկացությունը, որը, բնականաբար, պետք է կատարվի այդ հասկացության ինչպես տնտեսագիտական, այնպես էլ իրավական իմաստի շեշտադրմամբ: Կարծում ենք, որպես այդպիսին կարելի է ֆինանսաարդյունաբերական խումբը սահմանել. «ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին պայմանագրի հիման վրա իրավաբանական անձանց միավորում, որը գործում է որպես հիմնական և դուստր ընկերությունների համակարգի և (կամ) ամբողջությամբ կամ մասամբ իրենց նյութական և ոչ նյութական ակտիվների միավորման (մասնակցության համակարգի) միջոցով՝ ներդրումային և այլ ծրագրերի (նախագծերի) իրականացման, մասնակիցների տեխնոլոգիական և տնտեսական ինտեգրացիայի նպատակով, որոնք ուղղված են մասնակիցների մրցունակության մակարդակի բարձրացմանը, ապրանքների և ծառայությունների շուկաների ընդլայնմանը, արտադրության արդյունավետության մակարդակի բարձրացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը»:

Ինչ վերաբերում է ֆինանսաարդյունաբերական խմբի մասնակիցների կազմին, ապա նրանք իրավաբանական այն անձինք են, որոնք ստորագրել են ՖԱԽ-ի ստեղծման մասին պայմանագիրը, ինչպես նաև այդ պայմանագրով հիմնադրված՝ ՖԱԽ-ի կենտրոնական (հիմնական կամ մայր) ընկերությունը, կամ էլ ֆինանսաարդյունաբերական խումբ ձևավորած հիմնական և դուստր ընկերությունները: Մյուս կողմից՝ ՖԱԽ-ի կազմում կարող են ընդգրկվել հայրենական ու օտարերկրյա ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպություններ (բացառությամբ հասարակական և կրոնական կազմակերպությունների), սակայն նշվածը դեռևս բավարար չի կարելի համարել, քանի որ այս իրավաբանական անձինք շատ տարբեր են: Ուստի, անհրաժեշտ է սահմանել նաև այնպիսի պայմաններ, որոնք կերաշխավորեն ՖԱԽ-երի կողմից այս օրենքով նախատեսված նպատակների իրականացումը: Այս առումով, ստեղծվող ՖԱԽ-երը, մեր կարծիքով, պետք է բավարարեն հետևյալ հիմնական պայմանները՝

- ՖԱԽ-ի կազմում պարտադիր պետք է ընդգրկված լինեն ապրանքային և ֆինանսավարկային ծառայությունների շուկաներում գործող առնվազն մեկական կազմակերպություն,
- ցանկացած ընկերություն կամ ֆինանսավարկային կազմակերպություն կարող է հանդիսանալ միայն մեկ ՖԱԽ-ի մասնակից,

- եթե հիմնական ընկերությունը չունի ֆինանսավարկային կամ բանկային դուստր ընկերություն կամ կազմակերպություն, ապա հիմնական և դուստր ընկերությունների համակարգը կարող է ՖԱԽ կազմել այդպիսի որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա,
- ՖԱԽ-երի մասնակից կամ հիմնադիր կարող են հանդիսանալ նաև պետական (պետական բաժնեմաս ունեցող) և համայնքային ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որոնց մասնակցության ձևերն ու ծավալները պետք է որոշվեն դրանց հիմնադիրների կողմից,
- դուստր ընկերությունները ՖԱԽ-ի ստեղծման մասնակից կամ գործող ՖԱԽ-ի կազմում կարող են ընդգրկվել միայն իրենց հիմնական (մայր) ընկերության հետ միասին,
- ՖԱԽ-ի մասնակից կարող են դառնալ ֆինանսավարկային կամ ներդրումային կազմակերպություններ, որոնք որոշակի դեր ունեն այդ ՖԱԽ-ի ներդրումային գործընթացի ապահովման մեջ:

Օրենքում անհրաժեշտ է հստակ տարբերակել նաև ՖԱԽ-երն ըստ կապիտալի ծագման երկրի: Մասնավորապես, եթե ՖԱԽ-ի կազմում ընդգրկված է որևէ այլ երկրի տարածքում ստեղծված իրավաբանական անձ, ապա այդպիսի խումբը կկոչվի վերագրային ֆինանսաարդյունաբերական խումբ, իսկ եթե ՖԱԽ-ը ձևավորվում է միջկառավարական համաձայնագրերի հիման վրա, ապա տվյալ խումբը կարելի է անվանել միջպետական ֆինանսարդյունաբերական խումբ, որի ստեղծման, գործունեության ու լուծարման առանձնահատկությունները (այդ թվում՝ նաև տրամադրվող արտոնությունների շրջանակը) պետք է սահմանվեն համապատասխան միջպետական համաձայնագրերով (պայմանագրերով):

Օրենքի կարգավորման հաջորդ խնդիրը ՖԱԽ-ի պետական գրանցումն է և համապատասխան կարգավիճակի շնորհումը, ինչը կկատարվի իրավաբանական անձանց պետական գրանցման մասին օրենսդրությանը համապատասխան: Սակայն, այս տեսանկյունից կարևոր հանգամանք է պետական գրանցման նպատակով ՖԱԽ-ի կենտրոնական (գլխամասային) ընկերության կողմից ներկայացվող փաստաթղթերի շրջանակի սահմանումը: Որպես այդպիսիք կարող են սահմանվել ՖԱԽ-ի ստեղծման մասին պայմանագիրը (բացառությամբ այն ՖԱԽ-երի, որոնք ստեղծվում են հիմնական ու դուստր ընկերությունների մասնակցությամբ), մասնակից ընկերությունների և կազմակերպությունների պետական գրանցման և հիմնադիր փաստաթղթերի, ինչպես նաև բաժնետիրական ընկերություն հանդիսացող յուրաքանչյուր մասնակցի (ներառյալ կենտրոնական ընկերությունը) բաժնետերերի գրանցամատյանների նոտարական կարգով վավերացված պատճենները, ՖԱԽ-ի կազմակերպական նախագիծը, վերագրային (միջպետական) ՖԱԽ-երի դեպքում՝ նաև նոտարական կարգով վավերացված օտարերկրյա մասնակիցների հիմնադիր փաստաթղթերի պատճենները, ՖԱԽ-ի ստեղծման նպատակով հակամենաշնորհային մարմնի կողմից տրված դրական եզրակացությունը: Սա, իհարկե, սպառիչ ցանկ չէ, և ՀՀ կառավարությանն անհրաժեշտ է իրավունք վերապահել սահմանելու նաև այլ պահանջներ, որոնք պետք է ապահովեն հնարավոր չարաշահումների կանխարգելումը:

ՖԱԽ-ի պետական գրանցման մասին որոշումը պետք է ընդունվի կազմակերպությունների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնի կողմից՝ ներկայացված փաստաթղթերի փորձաքննության արդյունքների հիման վրա, որոշակի ժամկետի (օրինակ՝ մեկ կամ երկու ամսվա) ընթացքում: Ընդ որում, ավելորդ քաշքշուկներից և կոռուպցիոն ռիսկերից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հստակ սահմանել այն որոշումները, որոնք

կարող է ընդունել լիազորված մարմինը, մասնավորապես՝ ՖԱԽ-ի գրանցումը մերժելու մասին, ՖԱԽ-ը գրանցելու մասին և ՖԱԽ-ի ստեղծման նպատակով ներկայացված փաստաթղթերը վերադարձնելու և որոշակի ժամկետում դրանք սահմանված պահանջներին համապատասխանեցնելու մասին (եթե դրանք թերի են կամ պարունակում են էական սխալներ): ՖԱԽ-ի պետական գրանցումը մերժելու և փաստաթղթերը լրամշակման համար վերադարձնելու մասին որոշումները պետք է լինեն հիմնավորված և հստակ պատճառաբանված՝ նշելով նաև այն իրավական ակտերի կոնկրետ հոդվածներն ու նորմերը, որոնք հիմք են հանդիսացել համապատասխան որոշումն ընդունելու համար, իսկ այս շրջանակից դուրս պետական գրանցում իրականացնող մարմինների կատարած գործողություններն ու անգործությունը կարող են բողոքարկվել դատական կարգով:

ՖԱԽ-երի պետական գրանցումը, մեր կարծիքով, պետք է կատարվի առանձին գրանցամատյանի վարման ձևով, ինչը թույլ կտա ոչ միայն հեշտացնել այս բարդ կազմավորումների հետ աշխատանքը, այլև հիմք կհանդիսանա ՖԱԽ-երի գործունեության վերաբերյալ ամփոփ վիճակագրական տվյալների հավաքագրման և հաշվետվությունների ուսումնասիրության ենթահամակարգ ձևավորելու համար: Սա շատ կարևոր է ՖԱԽ-երի հետագա գործունեության և իրենց կողմից հռչակված նպատակների ու ծրագրերի համապատասխանության ստուգման տեսանկյունից, քանի որ ՖԱԽ-երին բոլոր երկրներում որոշակի արտոնություններ են տրվում, իսկ ցանկացած արտոնության տրամադրումը, առավել ևս զարգացող երկրներում, չարաշահումների և ստվերային գործունեության հնարավորություններ է ընձեռում:

Պետական գրանցումից հետո ՖԱԽ-երը պետք է ստանան ՀՀ կառավարության կողմից սահմանված մնուշի պետական գրանցման վկայական, որում պարտադիր պետք է նշված լինեն ՖԱԽ-ի անվանումը և «ֆինանսաարդյունաբերական խումբ», «վերագալիս ֆինանսաարդյունաբերական խումբ» կամ «միջպետական ֆինանսաարդյունաբերական խումբ» բառերը: Ընդ որում, այդ բառերը պետք է իրավունք ունենան իրենց ֆիրմային անվանման մեջ օգտագործել միայն ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությունները, իսկ գրանցված ՖԱԽ-ի կազմում կամ դրա ստեղծման մասին պայմանագրում փոփոխություններ կատարվելու դեպքում այդ փոփոխությունները ևս նույն կարգով պետք է գրանցվեն լիազորված մարմնի կողմից:

Շատ կարևոր հանգամանք է ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին պայմանագրին ներկայացվող հիմնական պահանջների և պայմանների հստակ սահմանումը, որոնցից պարտադիր պետք է լինեն՝

- ՖԱԽ-ի անվանումը,
- ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության հիմնադրման կարգը և դրա կազմակերպարարական տեսակը,
- ՖԱԽ-ի կառավարման բարձրագույն և մյուս մարմինների ձևավորման կարգերը, դրանց լիազորությունների և գործունեության հիմնական պայմանների շրջանակը,
- ՖԱԽ-ի մասնակիցների կազմում փոփոխությունների կատարման կարգը,
- ակտիվների միավորման ծավալները, կարգը և պայմանները,
- մասնակիցների միավորման նպատակը և պայմանագրի գործողության ժամկետը,
- ՖԱԽ-ի կողմից ստացված շահույթի բաշխման և վերաներդրման կարգն ու պայմանները,
- մասնակիցների կողմից որոշված և գործող օրենսդրությանը չհակասող մյուս պայմանները:

Կարծում ենք՝ այս օրենքի հատուկ կարգավորման առարկա պետք է հանդիսանա ՖԱԽ-ի կազմակերպական նախագիծը, այսինքն՝ պետք է տրվի ՖԱԽ-ի ստեղծման նպատակների ու խնդիրների, ներդրումային և այլ նախագծերի, ՖԱԽ-ի գործունեության ընթացքում ակնկալվող տնտեսական, սոցիալական և այլ արդյունքների հնարավորինս մանրամասն նկարագրությունը, ինչպես նաև ՖԱԽ-ի կողմից ներկայացվող այլ տեղեկություններ (տվյալներ) ու փաստաթղթեր, որոնք էլ պետք է հանդիսանան այն հիմնական կողմնորոշիչը, ըստ որի պետք է կայացվի դրա պետական գրանցման մասին որոշումը: Տեղեկատվական և փաստաթղթային այս «փաթեթը» կարող է բավականին ծավալուն լինել և որոշակիորեն տարբերվել նաև առանձին ՖԱԽ-երի դեպքում, ուստի նպատակահարմար կլինի ՖԱԽ-ի կազմակերպական նախագծին վերաբերող պահանջների սահմանման լիազորությունը վերապահել ՀՀ կառավարությանը՝ օրենքում սահմանելով միայն բոլոր տեսակի ՖԱԽ-երի կազմակերպական նախագծերին բնորոշ հիմնական պայմանները:

ՖԱԽ-ի, որպես ձեռնարկատիրական գործունեության համալիր միավորի, պետական կարգավորման և վերահսկողության միասնականության ապահովման նպատակով անհրաժեշտ է սահմանել, որ դրա կառավարման բարձրագույն մարմինը ֆինանսաարդյունաբերական խմբի տնօրենների խորհուրդն է, որի կազմում պարտադիր պետք է ընդգրկվեն ՖԱԽ-ի բոլոր մասնակիցների ներկայացուցիչները (բնականաբար, դրանք կընտրվեն այդ ՖԱԽ-ի մասնակիցների կառավարման համապատասխան իրավասու մարմինների կողմից՝ իրենց հիմնադիր փաստաթղթերով սահմանված կարգով): Հաշվի առնելով այս հարցի խիստ կարևորությունը, կարծում ենք, ֆինանսաարդյունաբերական խմբի տնօրենների խորհրդի լիազորությունների և հիմնական գործառույթների շրջանակը, ինչպես նաև որոշումների ընդունման կարգը նույնպես պետք է սահմանվեն ՖԱԽ-ի ստեղծման մասին պայմանագրով և ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության կանոնադրությամբ:

Մյուս էական հարցը, որն օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն է զգում, ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության հետ կապված հարաբերությունների հստակեցումն է: Հասկանալի է, որ այդ ընկերությունը պետք է լինի իրավաբանական անձ, որը կարող է հիմնադրվել ինչպես ՖԱԽ-ի ստեղծման պայմանագիր կնքած բոլոր մասնակիցների կողմից, այնպես էլ ձևավորվել որպես մայր ընկերություն՝ արդեն իսկ գոյություն ունեցող իր դուստր ընկերությունների հետ ՖԱԽ կազմելու դեպքում, քանի որ օրենքով և իր կանոնադրությամբ այդ ընկերությունն արդեն իսկ լիազորված կլինի վարելու իր դուստր ընկերությունների հետ կազմած ՖԱԽ-ի գործերը: ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությունը պետք է կառավարի միավորման գործունեությունը և համակարգի դրա մասնակիցների գործողությունները՝ պայմանագրով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով, իսկ ՖԱԽ-ի գործունեություն ասելով անհրաժեշտ է հասկանալ և օրենքով սահմանել խմբի մասնակիցների այն գործողություններն ու գործունեությունը, որոնք վարվում են ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրին և (կամ) կազմակերպական նախագծին համապատասխան՝ համախմբված (միավորված), իսկ առանձին դեպքերում՝ նաև առանձնացված ակտիվների օգտագործման դեպքում (կախված ՖԱԽ-ի կազմակերպաիրավական տեսակից, ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրի պայմաններից և այլն): Իսկ ինչ վերաբերում է ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության կազմակերպաիրավական տեսակին, ապա այն կարող է հանդես գալ ինչպես ներդրումային ընկերության, այնպես էլ տնտեսական ընկերության, ասոցիացիայի կամ իրավաբանական անձանց միության ցանկացած տեսակի կարգավիճակով, որոնք արդեն իսկ սահմանված են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով:

ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության կողմից լիարժեք գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ է հստակ սահմանել նաև նրա լիազորությունների և իրավասությունների շրջանակը, որոնք կարող են արտացոլված լինել ինչպես օրենքում, այնպես էլ նրա կանոնադրության մեջ: Այդ լիազորություններից հատկապես կարևոր է շեշտադրել՝

- ՖԱԽ-ի մասնակիցների անունից, դրա ստեղծման և գործունեության հետ կապված հարաբերություններում հանդես գալը և ներկայացուցչական գործառույթների իրականացումը,
- ՖԱԽ-ի հաշվապահական ամփոփ (համախմբված) հաշվեկշռի, հաշվառման և հաշվետվությունների կազմումն ու վարումը,
- ՖԱԽ-ի մասնակիցների անունից որպես անձանց խումբ և համախմբված հարկատու հանդես գալը,
- ՖԱԽ-ի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների պատրաստումը, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հրապարակումը և լիազորված մարմիններին ներկայացումը,
- օրենսդրությամբ սահմանված կարգով ՖԱԽ-ի մասնակիցների համար կամ նրանց շահերից ելնելով՝ բանկային առանձին գործառնությունների կատարումը,
- ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրով և իր կանոնադրությամբ սահմանված դեպքերում խմբի մասնակիցների անունից որոշակի գործարքների կամ գործողությունների կատարումը, պայմանագրերի կնքումը,
- ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության պարտավորությունների համար, ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով, դրա մասնակիցների կողմից համապարտ և (կամ) սուբսիդիար (լրացուցիչ) պատասխանատվության կրումը և այլն:

ՖԱԽ-երի ձևավորման գործընթացի խթանման, ինչպես նաև պետության կողմից տնտեսական, սոցիալական և մի շարք այլ նպատակների իրականացման համար պետությունը ՖԱԽ-երին կարող է տրամադրել որոշակի աջակցություն, որի ձևերից օրենքում անհրաժեշտ է նշել՝

- ՖԱԽ-ի այն մասնակցի պարտքերի հաշվանցումը, որի բաժնետոմսերը վաճառվում են ներդրումային աճուրդներում, և որոնք ձեռք են բերվում նույն ՖԱԽ-ի կենտրոնական ընկերության կողմից,
- ՖԱԽ-ի մասնակիցներին սարքավորումների ամորտիզացիոն ժամկետների ինքնուրույն որոշման իրավունքի վերապահումը՝ ամորտիզացիոն հատկացումներից ստացված միջոցները ՖԱԽ-ի գործունեությանն ուղղելու պայմանով,
- ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությանը որոշակի ժամկետով պետական (համայնքային) ընկերությունների բաժնետոմսերի փոխանցումը՝ տիրապետման և օգտագործման իրավունքով,
- ներդրումների ներգրավման նպատակով ՖԱԽ-ին պետական երաշխիքների տրամադրումը,
- ՖԱԽ-ի ներդրումային նախագծերի իրականացման նպատակով ներդրումային վարկերի, հարկային արտոնությունների և ֆինանսական աջակցության այլ ձևերի տրամադրումը և այլն:

Նմանատիպ արտոնություններ կամ աջակցության ձևեր ՖԱԽ-ի կազմում գործող բանկային և ֆինանսավարկային կազմակերպություններին կարող են տրամադրվել նաև ՀՀ Կենտրոնական բանկի կողմից՝ նրանց ներդրումային ակտիվության մակարդակի բարձրացման

նպատակով, որոնք նույնպես պետք է սահմանվեն օրենքով: Նշենք նաև, որ աջակցության այս ձևերն ու միջոցառումները պետք է տրամադրվեն երկրի տնտեսական զարգացման համապատասխան տարվա գերակայություններից ելնելով, որոնք էլ, իրենց հերթին, հայտարարվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ներկայացման ժամանակ, իսկ պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ էլ պետք է արտացոլվեն տրամադրված պետական աջակցության հետևանքով ձեռք բերված տնտեսական, ֆինանսական և սոցիալական արդյունքները՝ հնարավորության տալով երկրի օրենսդիր մարմնին տեղեկանալու ՖԱԽ-երի գործունեության արդյունավետության ու նպատակայնության մակարդակի մասին և իրականացնելու անհրաժեշտ վերահսկողություն:

ՖԱԽ-երի գործունեության արդյունավետ կազմակերպման, տրամադրված պետական աջակցության նպատակային օգտագործման, ինչպես նաև պետական քաղաքականության հետ դրանց գործունեության ներդաշնակեցման տեսանկյուններից շատ կարևոր նշանակություն ունեն ՖԱԽ-երի գործունեության նկատմամբ պետական վերահսկողության ու հաշվետվության համակարգի ձևավորումն ու կիրառումը: Այս առումով, օրենքի վերահսկողական դրույթները պետք է դիտարկել ոչ թե առանձնացված, այլ որպես ի լրումն տնտեսավարող սուբյեկտների վերահսկողության մասին գործող օրենսդրությամբ սահմանված այն դրույթների, որոնց միջոցով իրականացվում են հարկային, մաքսային, բնապահպանական և վերահսկողության մյուս ձևերը:

Որպես ՖԱԽ-երի գործունեության նկատմամբ վերահսկողության առաջին մակարդակ, առաջարկում ենք օրենքով ներդնել հաշվետվությունների ներկայացման մեխանիզմը, մասնավորապես՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան 60-օրյա ժամկետում ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությունը, ինչպես պետական կառավարման լիազորված մարմնին, այնպես էլ ՖԱԽ-ի բոլոր մասնակիցներին պետք է ներկայացնի ՖԱԽ-ի տարեկան գործունեության մասին հաշվետվություն, որի ձևը և դրան ներկայացվող պահանջները կսահմանվեն ՀՀ կառավարության կողմից: Ընդ որում, հաշվետվության հետ միասին պետք է ներկայացվի նաև անկախ աուդիտորի կողմից կազմված եզրակացությունը, որի հետ կապված ծախսերը պետք է կատարվեն կենտրոնական ընկերության միջոցների հաշվին, և որը (հաշվետվության հետ միասին) պետք է հրապարակվի առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում և տեղադրվի կենտրոնական ընկերության ու լիազորված մարմնի ինտերնետային կայքերում: Վերահսկողության խստացման անհրաժեշտության դեպքում, կարծում ենք, կարելի է սահմանել նաև լրացուցիչ (տարեկան ոչ ավելի, քան մեկ անգամ) հաշվետվությունների և աուդիտորական ստուգման պահանջներ՝ պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով, որը կիրականացվի նրա կողմից ընտրված անկախ աուդիտորի միջոցով:

Ինչ վերաբերում է վերահսկողության հիմնական ձևին՝ ստուգումներին և ուսումնասիրություններին, ապա՝

- ստուգումներն ու ուսումնասիրությունները պետք է կատարվեն գործող օրենսդրությանը համապատասխան,
- բացի նրանից, որ ՖԱԽ-ի մասնակիցներն օրենսդրությամբ սահմանված կարգով առանձին-առանձին կենթարկվեն ստուգումների, ֆինանսաարդյունաբերական խումբը՝ որպես մեկ միասնական կազմակերպություն, նույնպես կստուգվի օրենքով նախատեսված կարգով՝ որպես առանձին միավոր: Բացի դրանից, լիազորված մարմինը պետք է իրավունք ունենա նշանակելու լրացուցիչ ստուգումներ (տարեկան ոչ ավելի, քան երկու անգամ), որոնց աշխատանքներին կարող են ներգրավվել նաև ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասնագետները,

- ՖԱԽ-ի կենտրոնական ընկերությունը և դրա մասնակիցները պետք է պարտավորված լինեն ներկայացնելու անհրաժեշտ (ինչպես նախորդ ժամանակահատվածների, այնպես էլ ընթացիկ գործունեության վերաբերյալ) բոլոր տվյալներն ու փաստաթղթերը, որոնք կպահանջվեն ստուգող մարմինների կողմից, ընդ որում՝ ինչպես ստուգման ընթացքում, այնպես էլ դրանից հետո՝ լիազորված մարմնի պաշտոնական գրության հիման վրա,
- ստուգումների արդյունքում հայտնաբերված տվյալների անհամապատասխանության, անհրաժեշտ փաստաթղթերն ու տվյալները չներկայացնելու, ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրի դրույթներից և կազմակերպական նախագծից շեղվելու փաստերի բացահայտման, պետական աջակցության ձևերի և միջոցների չարաշահման, օրենսդրության պահանջների և մյուս խախտումների հայտնաբերման դեպքում լիազորված մարմինը պետք է պարտավորված լինի ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ դրանց վերացման և ՖԱԽ-ի ստեղծման պայմանագրով, կանոնադրությամբ ու կազմակերպական նախագծով սահմանված խնդիրներին խմբի գործունեության համապատասխանեցման ուղղությամբ: Խախտումների բնույթից և ծավալներից կախված, լիազորված մարմինը կարող է ընդունել համապատասխան որոշումներ, մասնավորապես ՖԱԽ-ի մասնակիցներին առաջարկել որոշակի ժամկետներում վերացնելու հայտնաբերված խախտումները, առաջարկել ՀՀ կառավարությանը ՖԱԽ-ին տրամադրված արտոնությունները և պետական աջակցության ծավալներն ամբողջությամբ կամ մասամբ դադարեցնելու նպատակով, խախտումների կատարման մեջ մեղավորներին ենթարկելու օրենքով սահմանված պատասխանատվության կամ դիմել ՀՀ կառավարությանը՝ ՖԱԽ-ի լուծարման և դրա պետական գրանցումը չեղյալ համարելու նպատակով: Նշված բոլոր միջոցառումների մասին լիազորված մարմնի կողմից պետք է տեղեկատվություն հրապարակվի՝ ՖԱԽ-երի հետ կապված պետական քաղաքականության թափանցիկության և հրապարակայնության ապահովման նկատառումներից ելնելով:

Օրենքով պետք է հստակ կանոնակարգվեն նաև ՖԱԽ-ի լուծարման և գործունեության դադարեցման հետ կապված հարաբերությունները, ըստ որի՝ ՖԱԽ-ը լուծարված կհամարվի դրա պետական գրանցման վկայականի գործողությունը դադարեցնելու և ՖԱԽ-երի պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից: Ընդ որում, անհրաժեշտ է հստակ սահմանել, որ ՖԱԽ-ը կարող է լուծարվել միայն որոշակի հիմքերի առկայության դեպքում: Որպես նման հիմքեր, կարծում ենք, անհրաժեշտ է ամրագրել՝

- ՖԱԽ-ի գործունեության դադարեցման մասին դրա բոլոր մասնակիցների կողմից ընդունված որոշումը,
- դատարանի կողմից ընդունված և ուժի մեջ մտած որոշումը՝ ՖԱԽ-ի ստեղծման պայմանագիրն անվավեր ճանաչելու կամ ՖԱԽ-ի ստեղծման պայմանագիրը և հիմնադիր մյուս փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու մասին,
- ՖԱԽ-ի ստեղծման մասին պայմանագրի ժամկետը լրանալը (եթե այն ստեղծվել է որոշակի ժամկետով, և սահմանված կարգով այդ ժամկետը չի երկարաձգվել),
- ՀՀ կառավարության կողմից ՖԱԽ-ի գործունեության դադարեցման մասին որոշման ընդունումը՝ կապված դրա գործունեությունը պայմանագրին և (կամ) կազմակերպական նախագծին չհամապատասխանելու հետ (բնականաբար, սրան պետք է նախորդեն համապատասխան հանձնարարականները, որոնք չկատարելու դեպքում էլ կարող է ընդունվել տվյալ որոշումը):

Ինչ վերաբերում է ՖԱԽ-ի գործունեության դադարեցման իրավական և տնտեսական հետևանքներին, ապա դրանք արդեն իսկ կարգավորված են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով և կկիրառվեն նաև ՖԱԽ-երի լուծարման պարագայում, և այս առումով օրենսդրական նոր դրույթների ներմուծման անհրաժեշտություն, կարծում ենք, չի առաջանա:

Առաջարկվող մոտեցումներն, իհարկե, սպառնիչ չեն կարող լինել և նպատակ ունեն ընդամենն ուրվագծել օրենսդրական կարգավորման այն հիմնական շրջանակը, որն անհրաժեշտ է ամրագրել ՖԱԽ-երի ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները քաղաքակիրթ և նպատակային կարգավորելու տեսանկյունից:

ԻՐԻՆԱ ՏԱՐԱՆՅԱՆ

*Մ Գ Ա Ա Մ. Զոթասյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

ՂԱԿԻԹ ՇԱՄՇՅԱՆ

ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

«Երևան ջուր» ՓԲԸ երկարաժամկետ վարձակալության պայմանագիրը մասնակի ներդրումային պարտավորություններով կարելի է դասել մասնավոր ընկերության մասնակցության խառը մոդելին: Պայմանագրի կառուցվածքն այնպիսին է, որ թույլ է տալիս հաշվի առնել այն առավելությունները, որոնք կարող էր տալ օրենսդրորեն ձևակերպված պետության և մասնավոր հատվածի միջև կոնցեսիոն հարաբերությունների համակարգը: Ի տարբերություն վարձակալության ստանդարտ մոդելի, երբ վարձատուն (պետությունը կամ քաղաքային ինքնավարության մարմինը) իր վրա է վերցնում ամբողջությամբ նոր ներդրումներ իրականացնելու և ֆինանսավորելու պատասխանատվությունը՝ տվյալ մոդելում մասնավոր ընկերությանը փոխանցված է սահմանափակ ներդրումներ կատարելու պատասխանատվություն: Ընկերության հիմնական պարտավորություններն են՝

- տեխնիկական կառավարումը, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման (ՋևՋ) կառույցների շահագործումը, սարքավորումների՝ տրանսպորտային միջոցների, շինարարական մեքենաների, տեղեկատվական մեքենաների, տեղեկատվա-գրաֆիկական համակարգերի, հոսակորուստների հայտնաբերման նյութերի ձեռքբերումը 6.4 մլն եվրոյի չափով,
- առևտրային հարցերի կառավարումը,
- պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքային ծրագրի (ՊՎԸԱԾ) իրականացումը 8.87 մլրդ դրամի չափով պայմանագրի գործողության ամբողջ ժամանակաընթացքում,
- վարձակալության վճարի վճարումը,
- հաշվետվության ներկայացումը պայմանագրի պահանջների համաձայն:

Ինչպես տեսնում ենք, ընկերության առջև դրված են համակարգի հիմնական ֆոնդերի պահպանման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման, այլ ոչ թե ենթակառուցվածքի

գարգացման և արդիականացման հիմնախնդիրները:

Գոյություն ունի ընկերության ներդրումների մոտավոր պլան առաջիկա 5 տարիների համար՝ կապված Համաշխարհային բանկի վարկի հետ, որի հիման վրա օպերատորը կազմում է իր տարեկան ներդրումային պլանները: ՀԲ 18.75 մլն ԱՄՆ դոլար գումարը ներառված է վարձակալության պայմանագրում՝ որպես Երևանի ՋԼՋ Ներդրումների ինդիկատիվ ծրագրի հիմնադրամ, որը պետք է օգտագործի վարձակալը կապիտալ ներդրումների համար: Այդ հիմնադրամը ֆինանսավորվում է մի մասով նաև ՀՀ կառավարության կողմից: Այդ ֆոնդից ֆինանսավորվող հիմնական ներդրումները վերաբերում են՝

- Էներգախնայողությանը- 10.5 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 5 մլն ԱՄՆ դոլար բաշխիչ ցանցերի վերակառուցման և 5 մլն ԱՄՆ դոլար մնացած ջրաբաշխիչ համակարգերի սեզոնափոխման համար,
- ջրամատակարարման հուսալիության բարձրացմանը և գործառնությունների վերահսկմանը՝ 6.75 մլն ԱՄՆ դոլար,
- շրջակա միջավայրի աղտոտման կրճատմանը՝ 1.5 մլն ԱՄՆ դոլար:

Երևանի ՋԼՋ ծրագրի նպատակն է իրականացնել բոլոր հիմնական պահանջվող ներդրումները:

Մայրաքաղաքի ՋԼՋ համակարգում ընկերության կողմից 2006-2010թթ. ընթացքում ՀԲ վարկից կատարված ներդրումները կազմել են 12 մլն ԱՄՆ դոլար, իսկ սեփական միջոցներից՝ 5 մլրդ դրամ¹: Շնորհիվ իրականացված ներդրումների՝ ընկերությունը կարողացել է արձանագրել լուրջ առաջընթաց տարբեր ծրագրերի իրականացման ուղղությամբ: Նշենք, որ 2016թ. իտալական և ֆրանսիական օպերատորների ներդրումները համակարգում կկազմեն 57.5 մլն ԱՄՆ դոլար²: Ակնհայտ է, որ այդպիսի ներդրումների շրջանակներում հնարավոր չէ վերականգնել և արդիականացնել մայրաքաղաքի մաշված ՋԼՋ համակարգերը: Ըստ մասնագետների՝ համակարգերն ամբողջովին վերականգնելու համար անհրաժեշտ է մոտ 600-800 մլն ԱՄՆ դոլար³:

Այսինքն, համակարգի լիարժեք, արդյունավետ գարգացումը պահանջում է խոշոր ներդրումների ներգրավում, որոնք կարող են փոխհատուցվել տասնամյակների ընթացքում: ՋԼՋ համակարգի ներդրումային գրավչության բարձրացման համար ընկերությանը և ներդրողին պետք է տրվեն հստակ և ոչ երկիմաստ օրենսդրական երաշխիքներ, որ կատարված ներդրումները ոչ միայն կփոխհատուցվեն, այլև կապահովեն որոշակի շահույթ: Ընդ որում, ընկերության սեփական և փոխառու ներդրված միջոցներից ստացված եկամուտը պետք է համադրելի լինի ռիսկերի հետ, որը նա կրում է՝ կատարելով ներդրումներ մենաշնորհային գործունեության մեջ: Նման օրենսդրական երաշխիքներ հնարավոր է ապահովել վարձակալության պայմանագրից գույքի կառավարման առավել կատարելագործված և ճկուն ձևի՝ կոնցեսիոն պայմանագրի անցման դեպքում: Կոնցեսիոն պայմանագիրն այն հիմքն է, որի վրա կառուցվում է պետության և մասնավոր հատվածի համագործակցությունը (ՊՄՀ) կոնցեսիայի հիման վրա ներդրումային նախագծեր իրականացնելիս: Կոնցեսիոն մեխանիզմի ներդրման համար հանրապետությունում պետք է ստեղծվեն համապատասխան օրենսդրական, ինստիտուցիոնալ և կազմակերպչական պայմաններ:

ՋԼՋ ոլորտում կոնցեսիոն հարաբերությունների առանձնահատկությունն այն է, որ այստեղ առաջնային նշանակություն է ձեռք բերում մասնավոր ընկերության գործունեության

¹ /arka.am/rus/finance/2010/05/25/20037.html.

² <http://www.168.am/am/articles/3451-pr>.

³ <http://www.ecolor.org/hy/news/2010-06-10/1068/>.

սոցիալական ուղղվածությունը: Այդ գործառույթների փոխանցումն ընկերությանը, անպատճառ, ռիսկեր է պարունակում պետության համար, որոնց թվին, մասնավորապես, կարելի է դասել սակագների անվերահսկելի աճի, պետական ակտիվների նկատմամբ վերահսկողության կորստի, մասնավոր ընկերության ընտրության և նրա արդյունավետության աստիճանի գնահատման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների մի մասը չկատարելու ռիսկը:

Օրենսդրության բացակայության դեպքում ընկերությունը նույնպես կարող է բախվել բազմաթիվ ռիսկերի հետ, օրինակ՝ սակագների կարգավորման, լիցենզիա չստանալու կամ ժամանակին չստանալու, անշարժ գույքի օբյեկտի նկատմամբ իրավունքի ձևակերպման, շինարարությունը ժամանակին չթույլատրելու հետ և այլն:

Այդ առումով խիստ կարևոր նշանակություն ունի պետության և ընկերության միջև իրավական հարաբերությունների ճիշտ ձևակերպումը, որը կապահովի շահերի հաշվեկշիռը և համագործակցության հստակ կազմակերպումը նախագծի իրականացման շրջանակներում: Միայն լիարժեք կոնցեսիոն օրենսդրության կիրառմամբ ընկերությունը կարող է հենվել կայուն իրավական ռեժիմի վրա, որը նրան կապահովի ոչ թե ժամանակավոր արտոնություններով, այլ անհրաժեշտ երկարատև երաշխիքներով՝ ներդրված միջոցները փոխհատուցելու համար:

Համապատասխան պայմանագրում ներդրողը ոչ միայն կամրագրի լուրջ բանակցությունների ընթացքում ձեռքբերված և իրեն ձեռնադրող կոմերցիոն պայմաններ, այլև կերաշխարհի այդ պայմանների կայուն պահպանումը ողջ ժամկետի ընթացքում: Խաղի կանոնները պետք է լինեն այնպիսին, որ պետությունը հնարավորություն ունենա ձեռնարկելու իրեն և ներդրողին պաշտպանելու միջոցառումներ՝ չստեղծելով դրա հետ մեկտեղ բարդություններ նախագծի իրականացման համար:

Այսօր կոնցեսիոն հարաբերությունները կարգավորող օրենքներ ընդունված են ՌԳ-ում (2005թ.), Ուկրաինայում (1999թ.), Թուրքմենստանում (1993թ.), Լիտվայում, Վրաստանում, Մոլդովայում (1996թ.), Ուզբեկստանում (2000թ.), Դոմինիկյան Հանրապետությունում (1998թ.), Բուլղարիայում (1997թ.), Խորվաթիայում (1992թ.) և մի շարք այլ երկրներում, այնուամենայնիվ այդ ոլորտում օրենսդրական բազան թույլ է զարգացած, և դրանց կիրառման դրական փորձը դեռ չի ձևավորվել: Ներկայումս հանրապետությունում ՊՄՀ օրենսդրական կարգավորման հիմնական իրավական ակտն է 2002 թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու մասին» ՀՀ օրենքը, որը հնարավորություն չի տալիս լիարժեք գործարկել ՊՄՀ մեխանիզմը նույնիսկ սեփական կարգավորման ոլորտում: Հետևաբար, անհրաժեշտ է մշակել ջրամատակարարման ոլորտը կարգավորող օրենք կոնցեսիայի մասին, որի նորմերը պետք է հաշվի առնեն ոլորտի առանձնահատկությունները: Ճյուղի առանձնահատկությունը պահանջում է, որպեսզի կոնցեսիայի առարկա դառնան ոչ միայն անշարժ օբյեկտները, այլև սպառողներին ծառայություններ տրամադրող հասարակական գործունեության ձևերը:

Օրենսդրական նորմերի շրջանակներում անհրաժեշտ է լուծել ոչ միայն ենթակառուցվածքի արդիականացման խնդիրները, այլև նվազեցնել ռիսկերի հնարավոր աճը, որոնք մեր երկրում, ի տարբերություն զարգացած երկրների, դժվար է կանխատեսել, հաշվարկել և վերահսկել: Կոնցեսիայի դեպքում, քանի որ ընկերությունը պատասխանատվություն է կրելու հիմնական ֆոնդերի արդիականացման և ցանցերի ընդլայնման համար, ռիսկերը բարձր և ավելի բարդ բնույթի կլինեն՝ կապված ընկերության վարձատրության հետ, որը հիմնված է

Методология учета ресурсных ограничений, относящихся к качественному росту производства, значительно менее развита, чем способы отражения воздействия количественных показателей. В рамках микроэкономических построений ограничивающая роль недостаточного технического уровня продукции, а также низкой мобильности структуры машиностроения практически не улавливается, особенно в отношении проблем внутриотраслевой несбалансированности между инвестициями и ПМО.

Наиболее содержательные результаты в этой области получены в настоящее время в рамках модели межотраслевых взаимодействий: динамическая версия модели построена исходя из взаимосвязи потребностей и распределения инвестиций, с учетом как спроса на инвестиции, так и их распределения под воздействием ресурсных ограничений.

Постановка динамической модели позволяет сопоставить объемы и отраслевую структуру производства, объемы внедрения, объемы и функциональную структуру конечных общественных потребностей, т.е., с одной стороны, с расчетами от заданного объема инвестиционных ресурсов и сложившегося механизма их распределения, а с другой – с заданными объемами конечных потребностей. Совмещение этих двух подходов обеспечивается путем совместного решения системы уравнений. Решение модели определяет наиболее вероятное состояние экономики в перспективе при заданных значениях инвестиционных ресурсов. В связи с этим центральным звеном модели является блок эффективности вложений, раскрывающий связь между вложениями и приростом продукции.

Схема комплексного исследования приводится на рисунке 1. Отправным моментом является обоснование потребности в инвестициях, исходя из прогнозируемой интенсивности обновления основных фондов в отраслях, определяемой целями и задачами социально-экономического развития. Прогноз показателей обновления должен учитывать уровень физического и морального износа основных фондов в отраслях, сроки их службы; социально-экономические мотивы обновления производственного аппарата в отдельных отраслях, их приоритетность; имеющиеся ограничения на накопление основных фондов, в

том числе со стороны возможностей обеспечения дополнительными трудовыми ресурсами прироста новых рабочих мест; возможности и целесообразности повышения надежности и долговечности оборудования и т.д.

Показатели воспроизводства основных фондов по машиностроению необходимо определять с учетом существующих отраслевых приоритетов обновления. Это вызывается не только количественными различиями в их величине по отдельным отраслям и производствам, но и различием требований к их будущей динамике: если в ряде обрабатывающих отраслей требуется ускорение выбытия и замены устаревших ресурсов, то, в частности, в добывающих отраслях необходимо увеличение сроков службы мобильной техники.

Рисунок 1

Схема комплексного исследования анализа и прогноза инвестиционного обеспечения



Для перехода от прогнозных показателей обновления фондов к требуемым необходимо исходить из различия существующих воспроизводственных направлений интенсивности обновления фондов. Таким образом, на наш взгляд, для интенсивного обновления фондов целесообразно выделение следующих групп: обеспечение государственного содействия предприятиям машиностроения по использованию местных природных ресурсов; реконструкция предприятий за счет государственной финансовой поддержки и предоставления налоговых и кредитных льгот; рост производство машин и оборудования с помощью внедрения новейших технологий, а также осуществление мероприятий по улучшению их конструкторско-технологических параметров; сокращение удельных затрат технических параметров выпускаемой продукции, с учетом опыта передовых зарубежных фирм по сертификации однородных продуктов.

ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ–ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՆԱՐԻՆԵ ԱՐՈՆՅ

ՏՏ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ. գ. թ.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԱՅՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՍԱԿԱՐԳԸ

Կենսամակարդակը տնտեսական կարևորագույն կատեգորիա է, որը թույլ է տալիս պատկերացում կազմել հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի մասին՝ որպես տնտեսական ու սոցիալական հարաբերությունների ընդհանրացված արտահայտություն: Տնտեսագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել «կենսամակարդակ» կատեգորիայի տարբեր մեկնաբանումների: Որոշ հեղինակների կողմից այն քննարկվում է լայն իմաստով՝ որպես մարդկանց կենսագործունեությունը բնութագրող տարբեր պայմանների ամբողջություն, որոնք թույլ են տալիս որոշել անհատի տեղն ու դերը հասարակության մեջ: Որոշ հեղինակներ էլ այն դիտարկում են նեղ իմաստով՝ որպես այդ ամբողջության մի մաս:

Կենսամակարդակ հասկացության լայն մեկնաբանումներից է հետևյալ բնորոշումը, համաձայն որի կենսամակարդակը ներկայացվում է որպես «երկրի բնակչության կյանքի պայմանների ամբողջություն, որը համապատասխանում է նրա տնտեսական զարգացման ձեռք բերած մակարդակին»¹:

Կենսամակարդակի ավելի նեղ բնորոշման կարելի է հանդիպել Վ.Ֆ. Մայերի մոտ, համաձայն որի կենսամակարդակը բնակչության կյանքի համար անհրաժեշտ նյութական և մշակութային (հոգևոր) բարիքներով ապահովվածությունն է, նրանց սպառման ձեռք բերած մակարդակը և այդ բարիքներով մարդկանց պահանջմունքների բավարարման աստիճանը²:

Որոշ հեղինակների կարծիքով էլ «կենսամակարդակ» կատեգորիան բնութագրում է մարդու պահանջմունքների կառուցվածքը և դրանք բավարարելու հնարավորությունները³:

Մ.Խ. Չոբանյանի կարծիքով կենսամակարդակը բնակչության նյութական ու կուլտուրական (հոգևոր) անհրաժեշտ բարիքներով ապահովվածությունն է, որը բնորոշում է նրանց սպառման մակարդակը և պահանջմունքների բավարարման աստիճանը հասարակության զարգացման տվյալ փուլում⁴:

Ըստ Բ.Ա. Ռայզբերգի՝ կենսամակարդակը պայմանների ու ցուցանիշների ամբողջությունն է, որոնք բնութագրում են մարդկանց հիմնական, կենսական պահանջմունքների բավարարման չափը⁵: Այսինքն՝ նա առանձնացնում է մարդկանց հիմնական, կենսական պահանջմունքների բավարարումը:

Ալֆ. Մարշալի կարծիքով կենսամակարդակի բարձրացումը նշանակում է գիտակցության, էներգիայի ու սեփական արժանապատվության զգացումի այնպիսի բարձրացում, որը

¹ Большой экономический словарь / под ред. А.Н.Азрилияна – 2-ое изд. доп. и перераб. – М. Институт новой экономики, 1997, ст. 764.

² Майер Б.Ф. Планирование социального развития и повышения уровня жизни народа: - М. изд. ВО МГУ, 1998 – ст. 8.

³ Савченко П., Федорова М., Шелкова Е. Уровень и качество жизни: понятия, индикаторы, современное состояние в России // Российский экономический журнал – 2000 - №7. – ст. 66.

⁴ Չոբանյան Մ.Խ., Քաղաքային և գյուղական բնակչության կենսամակարդակի մերձեցումը զարգացած սոցիալիզմի պայմաններում, Եր., Հայաստան, 1980, էջ 6:

⁵ Райзберг Б.А., Лозобский Л.Ш., Стародубцева Е.Б., Современный экономический словарь. – 3-е изд., перераб. и доп. – М.: 2001. – ст. 410.

միջոցները ծախսելիս մարդուն ուղղորդում է դեպի առավել զգուշավորությունն ու խելամտությունը, ստիպում է բացառել սննդի ու խմիչքի այնպիսի ծախսերը, որոնք ախորժակ են գրգռում, բայց չեն ավելացնում ուժերը, և այնպիսի զգացմունքները, որոնք պատճառում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ բարոյական վնասներ:

Այսպիսով, կարելի է ասել, որ կենսամակարդակը բնակչության իրական սպառումն արտացոլող սոցիալ-տնտեսական կատեգորիա է, որն արտահայտում է բնակչության պահանջմունքների զարգացման աստիճանը, պահանջմունքների կառուցվածքը, հասարակական ճանաչում ստացած հիմնական կենսական պահանջմունքների բավարարման իրական մակարդակը:

Բազմաթիվ հեղինակներ «կենսամակարդակը» նույնացնում են «բարեկեցություն», «ապրելակերպ», «կյանքի նվազագույն ստանդարտ», «կյանքի որակ» և մի շարք այլ նմանատիպ կատեգորիաների հետ, այսինքն՝ այն ամենի հետ, ինչը պայմանավորում է մարդու կենսագործունեությունն ու զարգացումն ամբողջությամբ:

Այսպես, օրինակ, Վ. Բալիկովի կարծիքով. «...հասարակական բարեկեցության մակարդակը մարդկանց ապահովվածության աստիճանն է՝ նյութական բարիքներով, ծառայություններով ու հետևաբար կենսապայմաններով, որոնք անհրաժեշտ են նրանց հարմարավետ ու անվտանգ գոյության համար»¹:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը կենսամակարդակը նույնացնում է բարեկեցության հետ, այն քննարկում լայն իմաստով, բնութագրում մասնորայն հարմարավետ ու անվտանգ գոյության համար պայմաններով ապահովության աստիճան: Մինչդեռ բազմաթիվ հեղինակներ կենսամակարդակը ներկայացնում են որպես բարեկեցության բաղկացուցիչ մասերից մեկը: Նրանց կարծիքով «բարեկեցությունը» լայն հասկացություն է և ներառում է «կենսամակարդակը», «ապրելակերպը» և «կյանքի որակը»:

Կենսամակարդակի մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով քննարկենք վերը նշված կատեգորիաներն առանձին-առանձին:

Տնտեսագիտական գրականության մեջ «ապրելակերպը» շատ հաճախ բնութագրվում է որպես մարդկանց կենսագործունեություն կամ ակտիվություն մարդկային գործունեության տարբեր ոլորտներում՝ աշխատանքի պրոցեսում, կենցաղում, ընտանիքում, հասարակական-քաղաքական կյանքում և այլուր: Բնորոշումից տեսնում ենք, որ «ապրելակերպը» առնչվում է գործունեության տարբեր ոլորտների հետ և կարծես թե միաձուլում ու կապում է նշված գործունեության ձևերի էական գծերը, որոնք չնայած շատ տարբեր են, բայց որոշակի համադրումների տեսքով ներկայացնում են հասարակության, անհատի ապրելակերպը:

Եվ պատահական չէ, որ Բ.Վ. Ռակիտսկին «ապրելակերպ» կատեգորիան մեկնաբանում է որպես ոչ թե միայն առանձին մարդկանց, այլ նրանց սոցիալական խմբերի, շերտերի, դասակարգերի գոյատևման եղանակ²: Գոյատևելու, պահանջմունքները բավարարելու նպատակով մարդը հասարակության մեջ դրսևորում է որոշակի վարքագիծ:

Հենց այս վարքագիծն էլ թույլ է տալիս պատկերացում կազմել անհատի ապրելակերպի մասին: Դրա համար էլ ճիշտ կլինի ապրելակերպը բնորոշել որպես մարդու վարքագծի դրսևորման ձև:

«Կենսամակարդակը» չի կարելի նույնացնել «կենսական ստանդարտի» հետ, քանի որ «կենսամակարդակը» փաստացի ցուցանիշ է, մինչդեռ կենսական ստանդարտը օրենքով սահմանված այն նորմերի ու նորմատիվների ամբողջությունն է, որոնք ամրագրում են սոցիա-

¹ Баликов В.З. Общая экономическая теория., Новосибирск: 1998. ст. 213.

² Ракитский Б.В., Стратегия благосостояния, - М.: 1993, ст. 2.

լական պաշտպանության նվազագույն մակարդակը: Նման ստանդարտներ են սահմանվում աշխատավարձի, կենսաթոշակային ապահովության, կրթության, առողջապահության, մշակույթի, բնակարանային-կոմունալ սպասարկման և այլ ոլորտների գծով:

Սոցիալական զարգացումը բնութագրող առավել ընդգրկուն հասկացություն է «կյանքի որակը», որը բազմաթիվ տնտեսագետներ բնութագրում են որպես «մարդկանց առողջություն, կրթաորակական ներուժ, մշակութաբարոյական հնարավորություններ», իսկ Կամակի կարծիքով՝ «կյանքի որակն» մի շարք բնութագրիչների ամբողջություն է, որն արտացոլում է բնակչության նյութական, սոցիալական, ֆիզիկական ու հոգևոր բարեկեցությունը»¹:

Շատ հաճախ «կյանքի որակը» ներկայացվում է որպես կյանքի հարմարավետությունը որոշող պայմանների ամբողջություն: Հարմարավետություն ասելով հասկացվում է մարդկանց այնպիսի պահանջումներն բավարարումը, որը բխում է ոչ թե անհրաժեշտությունից, այլ մարդկանց ցանկություններից: Հարկ է նկատել, որ «կյանքի որակը» ձևավորում ու պայմանավորում է հասարակության ու անհատի կենսագործունեության համար անհրաժեշտ ինչպես օբյեկտիվ պայմանները, այնպես էլ դրանց սուբյեկտիվ-հոգեբանական գնահատումը:

Որպես Մարդկանց կենսագործունեության օբյեկտիվ պայմանները բնութագրող հիմնական ցուցանիշներն են շրջակա միջավայրի աղտոտվածությունը, գործազրկության, հանցագործությունների մակարդակը և այլն:

Սուբյեկտիվ-հոգեբանական գնահատման հիմքում ընկած է անհատի կողմից կյանքի պայմանների գնահատումը, իսկ վերջինս մեծապես կախված է մարդու անհատական հատկանիշներից՝ հոգեկան վիճակից, կենսափորձից, մտավոր ներուժից, կյանքից բավարարված լինելու աստիճանից, սեփական երջանկությունից: Այլ կերպ ասած, այս դեպքում «կյանքի որակը» գնահատվում է՝ ելնելով ոչ նյութական արժեքներից:

«Կյանքի որակի» բնութագրումը թույլ է տալիս մեզ եզրակացնել, որ այն ավելի լայն, ընդգրկուն հասկացություն է, քան «կենսամակարդակը»: Քանի որ կենսամակարդակը կյանքի որակը բնութագրող օբյեկտիվ պայման է, ուստի այն ներառվում, արտացոլվում է կյանքի որակի մեջ:

«Կենսամակարդակի» և «կյանքի որակի» միջև գոյություն ունի շատ ավելի որոշակի կապ, քան «կենսամակարդակի» և «ապրելակերպի» միջև: Դա բացատրվում է նրանով, որ, մեր կարծիքով, «կենսամակարդակը» «կյանքի որակի» բաղկացուցիչ մասն է, ուստի այն կարող է էապես ազդել «կյանքի որակի» վրա: Հնարավոր չէ խոսել կյանքի բարձր որակի մասին առանց բարձր կենսամակարդակի:

«Կենսամակարդակը» այն ելակետն է, որը պայմաններ է ստեղծում «կյանքի որակը» բարելավելու համար: Դա է պատճառը, որ պետությունն իր սոցիալական քաղաքականությունն իրականացնելիս մեծ ուշադրություն պետք է դարձնի բնակչության կենսամակարդակի բարձրացման խնդիրներին:

Բնակչության բարեկեցությունը ներկայացվում է զբաղվածության, աշխատավարձի և եկամուտների, սոցիալական վճարների, բնակչության ձեռք բերած ամբողջ նյութական և հոգևոր բարիքների, ֆիզիկական և հոգևոր առողջության մակարդակի, կրթության, մշակույթի և մտավոր ներուժի ցուցանիշներով: Այս ցուցանիշներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, այսինքն՝ գոյություն չունի կենսամակարդակը բնութագրող կատարյալ ցուցանիշ: Կենսամակարդակի գնահատման ընթացքում օգտագործվում է ցուցանիշների մի ամբողջ համակարգ, որը կարելի է բաժանել երեք խմբի.

¹ Римащевская Н.М., Римащевский А.А., Равенство или справедливость. – М., 1991. – ст. 15-19.

1. Կենսամակարդակի ամփոփ ցուցանիշներ՝ համախառն ներքին արդյունքի, ազգային եկամտի մեծությունը բնակչության մեկ շնչի հաշվով, ծնելիության, մահացության, բնակչության բնական աճի գործակիցները, կյանքի տևողությունը, տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածությունը, գործազրկության մակարդակը, աշխատանքային շաբաթվա տևողությունը, կրթության և մշակույթի վրա ծախսվող միջոցների տեսակարար կշիռը պետական բյուջեում և այլն: Ամփոփ ցուցանիշներն արտացոլում են տնտեսական կյանքի բազմաթիվ կողմերի ազդեցությունը: Օրինակ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծության միջոցով հնարավոր է պատկերացում կազմել երկրի քաղաքացիների սննդի, կրթական, առողջապահական, մշակութային և այլ պահանջմունքների բավարարման մասին:
2. Կենսամակարդակի բնաիրային ցուցանիշներ. արտահայտում են կոնկրետ նյութական բարիքների սպառման ծավալները (ապահովվածությունը անձնական գույքով, սննդամթերքի սպառումը, կենսական նվազագույնը, տրանսպորտի առանձին տեսակներով տեղափոխված ուղևորների թիվը և այլն):
3. Կենսամակարդակի տեսակարար ցուցանիշներ. արտահայտում են կենսամակարդակի կառուցվածքը և համամասնությունները (բնակչության բաշխումը ըստ եկամտային խմբերի, եկամուտների համակենտրոնացումը և տարբերակումը և այլն):

Կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների համակարգը կարելի է դասակարգել նաև հետևյալ կերպ.

- Մակրոտնտեսական ցուցանիշներ՝ համախառն ներքին արդյունք, ազգային եկամուտ, համախառն ազգային արդյունք մեկ շնչի հաշվով:
- Բնակչության եկամտի ցուցանիշներ՝ անվանական, իրական և տնօրինվող:
- Բնակչության կողմից նյութական բարիքների ձեռքբերման վրա կատարված ծախսումներ՝ սպառման կառուցվածք, կենսական նվազագույն, սպառողական զամբյուղ:
- Ծառայության ոլորտի ցուցանիշներ՝ կոմունալ սպասարկման ապահովվածություն, առողջապահություն, մշակույթ, կրթություն:
- Զբաղվածության և ժամանակի բյուջեի ցուցանիշներ՝ ազատ ժամանակի, աշխատանքային շաբաթվա, արձակուրդների տևողության և այլն:

Կենսամակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշ է համարվում նաև կենսական նվազագույնը, որը հաշվարկվում է վիճակագրական, նորմատիվային, համակցված ռեսուրսային և այլ մեթոդներով:

Վիճակագրական եղանակով հաշվարկելիս կենսական նվազագույնը սահմանվում է երկրի բնակչության առավել պակաս ունևոր մասի (10-20%) կողմից տնօրինվող եկամուտների մակարդակին համապատասխան:

Նորմատիվային մեթոդով կատարվող հաշվարկների հիմքում դրված են սպառողական զամբյուղի մեջ մտնող ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման վրա կատարվող փաստացի ծախսերը:

Ըստ համակցված մեթոդի՝ կենսական նվազագույնն ընդգրկում է պարենամթերքի հավաքածու, որը պետք է ապահովի անհրաժեշտ կալորիայի նվազագույն քանակը, ինչպես նաև ոչ պարենային ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսերը, հարկերը և պարտադիր մուծումները, որոնք ծախսերի այդ կառուցվածքով համապատասխանում են ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների բյուջեներին:

Կենսական նվազագույնը կարող է հաշվարկվել նաև՝ ելնելով տնտեսության հնարավորություններից (ռեսուրսային մեթոդ), ինչպես նաև բնակչության շրջանում կատարված սոցիոլոգիական հարցումներից:

Կենսամակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշ է նաև կենսապահովման նվազագույն զամբյուղը, որը տարբեր ապրանքների ու ծառայությունների հավաքածու է, որը մարդուն անհրաժեշտ է գոյության համար: Ըստ կենսապահովման նվազագույն զամբյուղի կամ կենսապահովման նվազագույն բյուջեի մասին օրենքի՝ կենսապահովման նվազագույն զամբյուղը մարդու առողջության պահպանման և կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ միջազգայնորեն ընդունված, ֆիզիոլոգիական, առողջապահական, սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործոններով հաշվարկված ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների կազմն ու կառուցվածքը սահմանող նվազագույն քանակն է, իսկ կենսապահովման նվազագույն բյուջեն՝ կենսապահովման նվազագույն զամբյուղի դրամական արժեքը: Կենսապահովման նվազագույն զամբյուղը պետք է երաշխավորի ոչ միայն գոյության միջոցների նվազագույնը, այլև դրանց արտադրական խեղման, վնասվածքի և մասնագիտական հիվանդությունների դեպքում:

ՏԻՐԱՆ ՄԿՐՏՅԱՆ

ԵՊՏ աստվիրանսը

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՆԱՌՈՒԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


Ըստ ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների՝ ՀՀ-ում միայն առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրված վարկերի մնացորդը վերջին հինգ տարում աճել է շուրջ 6.75 անգամ¹:

Բանկերը և վարկային կազմակերպությունները հետևողականորեն զարգացնում ու բարելավում են իրենց վարկային ծրագրերը՝ մշակելով և առաջարկելով վարկեր՝ նախատեսված ինչպես առաջին անհրաժեշտության պահանջմունքները բավարարելու, այնպես էլ անշարժ գույքի կամ երկարատև օգտագործման ապրանքներ ձեռք բերելու համար: Սակայն մյուս կողմից գործ ունենք այն տեսանելի փաստի հետ, որ չնայած գործադրված ջանքերին՝ ՀՀ բնակչության մեջ դեռևս կա մի սովոր գանգված, որ խուսափում է վարկ վերցնելուց: Նման վարքագիծը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարկ վերցնելու համար հաճախորդները հաճախ ստիպված են լինում բավական ժամանակ և էներգիա ծախսել տարբեր դիմումներ գրելու, փաստաթղթեր հավաքելու և վարկ տրամադրող կազմակերպությանը որոշակի երաշխիքներով ապահովելու համար: Բացի այդ, բանկերը վարկառուի համար սահմանում են այնպիսի խիստ չափանիշներ, ինչպես օրինակ բարձր, հաստատուն և որ առավել կարևոր է՝ որևէ փաստաթղթով հիմնավորված եկամուտներ ունենալու անհրաժեշտությունը: Այս ամենի պատճառով շատերը ֆինանսական կազմակերպություններից վարկ վերցնելու փոխարեն նախընտրում են պարտք վերցնել անհատներից անգամ այնպիսի տոկոսադրույքով, որը բազմապատիկ գերազանցում է բանկերի կողմից սահմանված առանց այն էլ բարձր

¹ <http://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx> (Առևտրային բանկերի վարկերն ըստ ոլորտների):

տոկոսադրույքը: Իսկ նրանք, ովքեր բարձր տոկոսադրույքի պատճառով աննպատակահարմար են գտնում վարկ կամ պարտք վերցնել, ստիպված են խոշոր գնումներ կատարել սեփական խնայողությունների հաշվին կամ հրաժարվել նման գնումներից: Նշենք նաև, որ այդ խնայողությունները հաճախ ձևավորվում են ոչ թե ընթացիկ եկամուտներով բարեկեցության որոշակի մակարդակ ապահովելուց հետո մնացած գումարների հաշվին, այլ ընթացիկ սպառման սահմանափակման և ինքնագույքման շնորհիվ անգամ առաջնային պահանջարկների մասնակի բավարարման արդյունքում գոյացած ավելցուկային գումարների հաշվին:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնային տնտեսություններին տրված վարկերի մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ (մլն. դր.)



Ծանոթություն՝

Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

Ներառյալ բանկի աշխատակիցներին և բանկի հետ կապված անձանց տրված վարկերը:

Այս հանգամանքները ՀՀ տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի վերլուծությունը դարձնում են անհրաժեշտ և արդիական: Առավել ևս, որ ՀՀ-ում տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի վերլուծությանը միտված հետազոտությունների հիմնական շեշտադրումը մինչ այս հիմնականում եղել է տնային տնտեսությունների խնայողական և ներդրումային վարքագծի հետազոտումը, վերլուծումն ու կանխատեսումը: Մենք նույնպես մեր հետազոտության շրջանակներում անդրադարձել ենք տնային տնտեսությունների խնայողական վարքագծի ինչպես դրդապատճառների ու շարժառիթների, այնպես էլ դրանց վրա ազդող գործոնների վերլուծությանը: Սակայն տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի վերլուծությունը մինչ այս մնացել է ոչ բավարար հետազոտված, մշուշոտ հարց:

Մեր հետազոտության շրջանակներում օգտագործվող հիմնական հասկացությունների՝ (փոխառություն, վարկ և պարտք) համար գոյություն ունեն տարբեր սահմանումներ, որոնց կարելի է հանդիպել տարբեր ժամանակահատվածներում տարբեր հեղինակների կողմից հրապարակված բացատրական բառարաններում: (ԽՏ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, 1945թ., Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, 1976թ., Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980թ., Ա. Հ. Բայադյան, Ֆինանսա-վիճակագրական բառարան, 2008թ. և այլն...): Հաշվի

առնելով այս հանգամանքը՝ մենք հարկ ենք համարում նախ հստակեցնել այն սահմանումները, ինչ ընկալմամբ օգտագործվելու են նշված հասկացությունները մեր հետազոտության համատեքստում:

«Վարկ վերցնել» ասելով՝ մենք նկատի ունենք ֆինանսական կազմակերպությունից, իսկ «պարտք վերցնել» ասելով՝ այլ տնային տնտեսությունից կամ ֆիզիկական անձից փոխարինաբար գումար վերցնելը՝ վերադարձելիության պայմանով: Իսկ «փոխառություն վերցնել» հասկացությունը մենք կօգտագործենք որպես վերը նշված երկու հասկացությունների միավորում: Այսինքն՝ վերադարձելիության պայմանով փոխարինաբար գումար վերցնելը՝ անկախ նրանից այդ գումարը վերցվել է ֆիզիկական անձի՞ց, թե՞ ֆինանսական կազմակերպությունից:

Նշենք, որ նման սահմանումները զուրկ չեն պատմական հիմքերից: Այս սահմանումներին իմաստային առումով շատ մոտ ձևակերպմամբ սահմանումների կարելի է հանդիպել օրինակ Ս.Գ. Աբրահամյանի և Վ.Գ. Առաքելյանի խմբագրությամբ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում», որում «փոխառություն» հասկացությունը սահմանվում է որպես «դրամ փոխ վերցնելը որոշակի պայմաններով»¹: «Պարտք» հասկացությունը սահմանվում է, որպես «ուրիշից փոխարինաբար վերցրած գումար կամ ապրանք, առհասարակ գումար կամ այլ արժեք, որ մեկը պարտավոր է վճարել՝ հատուցել»², իսկ «վարկ» հասկացությունը որպես՝ «փոխատվական գումար, որ բանկը տալիս է մեկին որոշ ապահովությամբ»³:

Ուշագրավ են նաև դեռևս 1945թ. հրատարակված ԽՍ. Մալխասյանցի կազմած «Հայերեն բացատրական բառարանում» տրված սահմանումները: Այստեղ «փոխառություն» հասկացությունը սահմանված է որպես «դրամ փոխ առնելը»⁴, «պարտք» հասկացությունը՝ որպես «ինչ որ մեկը ստացել է ուրիշից փոխարինաբար, դրամով կամ իրով. առհասարակ գումար, որ մեկը պարտավոր է վճարել»⁵, իսկ «վարկ» հասկացությունը՝ որպես «փոխառութեան իրաւունք, որ բանկը տալիս է մեկին որոշ ապահովութեամբ»⁶:

Հարկ է նկատել, որ երկու դեպքում էլ «պարտք» հասկացության սահմանման մեջ օգտագործվում է «ուրիշից» բառը, «վարկ» հասկացության սահմանման մեջ՝ «բանկ» բառը, իսկ «փոխառություն» հասկացության մեջ դրանից և ոչ մեկը չի շեշտվում:

Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կարելի է հանդիպել «փոխառուական պայմանագիր» և «վարկային պայմանագիր» հասկացությունների մեկնաբանումները:

«Վարկային պայմանագիր» հոդվածով սահմանվում է, որ «Վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպություն (վարկատու) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել

¹ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատոր 4-րդ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան 1980, էջ 663:

² Նույն տեղում, էջ 197:

³ Նույն տեղում, էջ 379:

⁴ Մալխասյանց ԽՍ., Հայերեն բացատրական բառարան, հատոր 4րդ, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչություն, ԵՐԵՒԱՆ 1945, էջ 509:

⁵ Մալխասյանց ԽՍ., Հայերեն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչություն, ԵՐԵՒԱՆ 1945, էջ 91:

⁶ Մալխասյանց ԽՍ., Հայերեն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչություն, ԵՐԵՒԱՆ 1945, էջ 311:

փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից»¹:

Իսկ «փոխառության պայմանագիր» հոդվածով սահմանվում է, որ «Փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք»²: Իսկ «փոխառության պայմանագրի տոկոսները» հոդվածով սահմանվում է. «...փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով»³:

Կարծում ենք, որ նշված սահմանումները նույնպես մեզ թույլ են տալիս «փոխառություն վերցնել», «պարտք վերցնել» և «վարկ վերցնել» հասկացությունները մեր հետազոտության համատեքստում օգտագործել մեր կողմից վերը նշված ձևակերպումների ընկալմամբ:

Այսպիսով, փոխառուական վարքագիծ ասելով՝ մենք նկատի ունենք անհատի կամ տնային տնտեսությունների այն գործողությունները, որոնք կապված են հետագայում հետ վճարելու պայմանով գումար վերցնելու հետ: Ի տարբերություն ֆինանսական կազմակերպությունից վերցվող վարկերի՝ անհատների միջև պարտք տալ-վերցնելիս կարող են և չլինել հետ վճարման խիստ ժամկետներ, ուշացման դեպքում կիրառվող տույժ-տուգանքներ, կամ իրավական ուժ ունեցող որևէ համաձայնագիր: Ինչ վերաբերում է տոկոսադրույքին, ապա միջանձնային պարտքի տոկոսադրույքը կարող է ինչպես բազմապատիկ գերազանցել ինստիտուցիոնալ վարկերի տոկոսադրույքը, այնպես էլ ընդհանրապես գոյություն չունենալ: Սակայն մեզ համար ամենակարևոր հանգամանքն այն է, որ այդ «փոխառությունը» պետք է վերադարձվի:

Տնային տնտեսությունների փոխառուական վարքագիծը՝ տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի ամենահիմնական տարրերից մեկը, արժանացել է ինչպես տնտեսագիտական, այնպես էլ հոգեբանական և սոցիալական գիտությունների շատ ականավոր ներկայացուցիչների ուշադրությանը: Իսկ տնային տնտեսությունների տնտեսական վարքագիծը տարբեր հասարակական գիտությունների՝ տնտեսագիտության տեսության, տնտեսագիտական հոգեբանության և տնտեսագիտական սոցիոլոգիայի հետազոտման առարկան է: Թվարկվածներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն տեսական մոտեցումներն ու խնդրի հետազոտման մեթոդները: Սակայն մեր խորին համոզմամբ՝ տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի հանգամանալից հետազոտման, վերլուծման և առավել ևս կանխատեսման համար հնարավոր չէ սահմանափակվել միայն տնտեսական գործոնների ազդեցության քննարկմամբ: Եկամուտները, գները, տոկոսադրույքները և այլ տնտեսական գործոններ անկասկած տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի վրա մեծ ազդեցություն ունեն: Սակայն չենք կարող պնդել, որ տնային տնտեսությունների տնտեսական վարքագիծը ձևավորվում է միայն այս գործոնների գերակշիռ ազդեցությամբ: Տարբեր երկրներում, տարբեր ժամանակաշրջաններում իրականացված հետազոտությունները, որոնց մենք կանդրադառնանք հետագայում, հաստատել են տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի հետազոտություններում ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու հոգեբանական գործոնները հաշվի առնելու անհրաժեշտությունը:

¹ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, յոթերորդ բաժին, հինգերորդ ենթաբաժին, գլուխ 46, հոդ. 887:

² Նույն տեղում, հոդ. 877:

³ Նույն տեղում, հոդ. 879:

Տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի վրա ազդող գործոնների շարքում մենք առանձնացրել ենք մի շարք գործոններ, որոնք էական ազդեցություն ունեն փոխառուական վարքագծի և փոխատուի ընտրության (անհատ, թե կազմակերպություն) վրա: Դրանց թվում կարելի է նշել՝

- փոխառուական գործողության պարբերականությունն ու հաճախականությունը
- փոխառության չափը
- հետ վճարման ժամկետը
- տոկոսադրույքի չափը
- վարկի հասանելիությունը (ֆինանսական կազմակերպությունից վարկ վերցնելու համար հաճախորդը պետք է բավարարի վարկունակության որոշակի չափանիշների, որոնք բացակայում են անհատից պարտքով գումար վերցնելու պարագայում):

Նշված գործոններից յուրաքանչյուրը առանձին, կամ մի քանի գործոններ միասին կարող են էական ազդեցություն ունենալ տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի ձևավորման վրա: Սակայն տնտեսագիտական հիմնական տեսություններում բնակչության տնտեսական վարքագծերի համար որոշիչ գործոն է դիտարկվում եկամուտների մակարդակը: Այս տեսությունների շարքն են դասվում օրինակ «բացարձակ եկամտի», «հաստատուն եկամտի», «հարաբերական եկամտի», «կյանքի պարբերաշրջան» հիպոթեզները: Սակայն հարկ է նշել, որ թեպետ այս բոլոր տեսությունները տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի ձևավորման ազդեցիկ գործոն համարում են եկամուտները, սակայն իրենց կանխադրություններում ունեն նաև սկզբունքային տարբերություններ: Եվ չնայած այս տեսությունները համարվում են տնտեսագիտական՝ դրանցում նաև քննարկվում է տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի վրա ինչպես սոցիալական, այնպես էլ հոգեբանական գործոնների ազդեցությունը: Եվ կարելի է փաստել, որ նշված տեսություններում հիմնական շեշտադրումն արված է սպառողական վարքագծի հետազոտման վրա: Բայց քանի որ փոխառուական վարքագիծն էականորեն առնչվում է խնայողական և հատկապես սպառողական վարքագծերին, մենք հարկ ենք համարում անդրադառնալ այս տեսություններին:

«Բացարձակ եկամտի» հիպոթեզի հիմնադիրը Ջ.Մ. Բեյնսն է, որը 1936թ. առաջ է քաշել սպառման հակվածություն հասկացությունը: Այս հիպոթեզի համար ելակետային է համարվում այն վարկածը, որ սպառման հակվածությունը կախված է ընթացիկ զուտ եկամտից: Տեսության մեջ առանձնացվում են սպառման սահմանային հակում և սպառման միջին հակում հասկացությունները: Այս տեսության հիմնական ենթադրությունն այն է, որ սպառումը աճում է եկամտի աճին համընթաց, բայց ոչ համամասնորեն: Այսինքն՝ սպառման թե՛ սահմանային, թե՛ միջին հակվածությունները նվազում են եկամտի աճին համընթաց: Սակայն սպառման միջին հակումն ավելի մեծ է, քան սպառման սահմանային հակումը: Եկամուտների աճին զուգընթաց՝ աճում է խնայված եկամտի մասնաբաժինը, և նվազում է ընդհանուր եկամտից սպառմանը տրամադրվող եկամտի մասնաբաժինը: Ամփոփելով ասենք, որ սպառման ֆունկցիան դիտվում է ուղիղ կախվածության մեջ՝ ընթացիկ եկամուտներից:

Սպառման ֆունկցիայի այլ վարկած է առաջարկվում «Հաստատուն եկամտի» հիպոթեզում, որը զարգացրել է Մ.Ֆրիդմանը¹: Այս հիպոթեզը ենթադրում է, որ սպառումը կախված է ոչ թե ընթացիկ եկամտից, այլ երկարաժամկետ ժամանակահատվածի համար եկամտի սպասումներից: Այսինքն՝ մարդիկ համահարթեցնում են իրենց սպառումը՝ թույլ չտալով, որ այն ենթարկվի կտրուկ տատանումների՝ կախված եկամտային տատանումներից: Ֆրիդմանը

¹ M Friedman, 'A Theory of the Consumption Function', National Bureau of Economic Research (Princeton, N.J., 1957).

ենթադրում էր, որ մարդիկ սպառում են իրենց եկամտի համեմատաբար հաստատուն մասը, և երկարաժամկետ հատվածում սպառման սահմանային և միջին հակվածությունները հավասար են:

Չարգացնելով սպառողական վարքագծի վրա սպասումների ունեցած ազդեցության մեկնաբանումը՝ մենք տարբերակել ենք եկամուտների փաստացի փոփոխության և սպասումների չորս համադրություն:

1. Եկամուտների աճը ուղղորդվում է հետագայում նույնպես այդ աճի միտումների պահպանման սպասումներով:
2. Եկամուտների աճը ուղղորդվում է հետագայում այդ աճի միտումները չպահպանելու, կամ եկամուտների նվազման սպասումներով:
3. Եկամուտների նվազումը ուղղորդվում է հետագայում նույնպես այդ նվազման միտումների պահպանման սպասումներով:
4. Եկամուտների նվազումը ուղղորդվում է հետագայում այդ նվազման միտումները չպահպանելու, կամ եկամուտների աճի սպասումներով:

Անդրադառնալով երկրորդ և չորրորդ տարբերակներին՝ նշենք, որ այս դեպքերում մարդկանց սպառողական վարքագիծը կարող է հակադրվել «հաստատուն եկամտի» հիպոթեզի ենթադրություններին: Օրինակ, եթե եկամուտները աճում են, սակայն ուղղորդվում են հետագայում նվազելու միտումով, մարդիկ կարող են ոչ միայն չավելացնել իրենց սպառման ծավալները, այլև անգամ կրճատել՝ անելով խնայողություններ: Կամ եթե եկամուտները նվազել են, սակայն ուղղորդվում են հետագայում աճելու սպասումներով, սպա մարդիկ ամենայն հավանականությամբ կպահպանեն իրենց սպառման ծավալները՝ անգամ գերազանցելով ընթացիկ եկամուտները: Ընթացիկ եկամուտներին սպառման գերազանցումը կարող է լինել նախկինում արված խնայողությունների կամ էլ վերցված փոխառությունների հաշվին: Սա հենց այն դեպքերից է, երբ սպասումներն ազդեցիկ գործոն են ոչ միայն սպառողական, այլ նաև խնայողական և փոխառուական վարքագծերի համար:

Նույն տրամաբանությամբ կարելի է տարբերակել գների կամ տոկոսադրույքի փոփոխությունների և հետագայում այդ միտումների պահպանման սպասումների տարբեր համադրություններ: Այս պարագաներում նույնպես սպասումները կարող են ազդեցիկ լինել, և հնարավոր չէ խոսել մարդկանց տնտեսական վարքագծի վրա գների կամ տոկոսադրույքի փոփոխության միանշանակ ազդեցության մասին:

Սպառման համահարթեցման գաղափարն օգտագործվում է նաև «Կյանքի պարբերաշրջանի» հիպոթեզում, որը զարգացրել են Ա. Անդոն և Ֆ. Մոդիգլիանին¹: Այս հիպոթեզում որպես մարդկանց սպառողական վարքագծի վրա ազդեցություն ունեցող գործոններ նշվում են ճաշակը, նախապատվությունները և եկամուտները: Սակայն կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ այս հիպոթեզում մարդկանց տնտեսական վարքագծի համար որոշիչ գործոն է «տնային տնտեսության տարիքը»: Առաջարկվում է առանձնացնել կյանքի երեք պարբերաշրջաններ, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են տնտեսական վարքագծի ուրույն առանձնահատկություններ:

Հիպոթեզի հիմնական ենթադրությունն այն է, որ միջին տարիքի մարդկանց եկամուտներն ավելի բարձր են, քան երիտասարդներինն ու տարեցներինը: Երիտասարդներն առավել հակված են փոխառություններ վերցնելու, միջին տարիքի ներկայացուցիչները՝ խնայողություններ անելու, իսկ տարեցները՝ նախկինում արված խնայողությունները ծախսելու: Հետ-

¹ M A Ando and F Modigliani, 'Tests of the Life Cycle Hypothesis of Saving: Comments and Suggestions', Oxford Institute of Statistics Bulletin, vol. xix (May, 1957), 99-124.

ևարար սպառման միջին հակվածությունն ավելի բարձր է երիտասարդների և տարեցների մոտ: Իսկ միջին տարիքի ներկայացուցիչների մոտ ավելի բարձր է խնայողություններ անելու հակվածությունը: Ինչպես տեսնում ենք, այս հիպոթեզում նույնպես առաջ է քաշվում, ի հաշիվ փոխառությունների կամ արված խնայողությունների, կյանքի տարբեր պարբերաշրջաններում համաչափ սպառում ապահովելու վարկածը:

«Հաստատուն եկամտի» և «կյանքի ցիկլի» հիպոթեզներից սկզբունքորեն տարբերվում է Ջ.Ս. Դյուսենբերիի առաջարկած «հարաբերական եկամտի» հիպոթեզը: Այս սկզբունքային տարբերությունն այն է, որ առաջարկվում է սպառման ֆունկցիա, որը կախված է ոչ այնքան անձնական եկամուտներից կամ դրանց սպասումներից, ինչքան ուրիշ մարդկանց սպառումից: Ընդ որում, ազդեցիկ են ոչ միայն անմիջական շփման սոցիալական շրջանակների, այլ նաև «էտալոնային» խմբերի սպառողական վարքագծերը: Այս դեպքում մարդկանց համար համեմատության չափանիշ է որոշ թիրախային խմբերի սպառողական վարքագիծը, իսկ սեփական վարքագծի ձևավորման շարժառիթ է հասարակության առավել «էլիտար խավերի» պատկանելու ձգտումը: Արդյունքում՝ «...հարաբերական եկամտի ցանկացած տրված բաշխման համար անհատի կողմից խնայված եկամտի մասնաբաժինը հակված է լինելու եզակի, անփոփոխ և աճող ֆունկցիա՝ կախված եկամուտների բաշխման մեջ ունեցած իր տոկոսային մասնաբաժնից: Խնայված եկամտի տոկոսային մասը անկախ է եկամտի բացարձակ մակարդակից»¹: Իսկ անհատի անձնական սպառումից ստացած բավարարվածության (օգտակարության) ինդեքսը կախված է անձնական սպառման և այլ մարդկանց միջին կշռված սպառման հարաբերակցությունից: Այսինքն՝ ավելի շատ կախված է հասարակական սպառման մեջ ունեցած իր անձնական սպառման մասնաբաժնից, քան անձնական սպառման ծավալից:

Ավելի հարուստ խավերի հետ համեմատվելու ձգտումը մարդկանց դրդում է, որ սպառեն ավելին, քան իրենց թույլ են տալիս սեփական եկամուտները, իսկ նման սպառումը հնարավոր է դառնում փոխառու միջոցների հաշվին:

«Հարաբերական եկամտի» հիպոթեզի մյուս կարևոր ենթադրությունն այն է, որ ընթացիկ սպառումը կախված է ոչ միայն ընթացիկ կամ հարաբերական եկամտի մակարդակից, այլ նաև նախկինում արված սպառման ծավալներից: Դյուսենբերին գտնում էր, որ մարդկանց սպառողական վարքագիծը կարող է բացատրվել մի «հոգեբանական ֆունդամենտալ պոստուլատով», ըստ որի՝ տնային տնտեսության համար ավելի դժվար է կրճատել սպառման ծավալները, քան ի սկզբանե խուսափել նման սպառումից²: Մյուս կողմից՝ մարդիկ ավելի հեշտությամբ ավելացնում են սպառման ծավալները եկամուտների աճի դեպքում, քան հետո կրճատում՝ եկամուտների նվազման դեպքում³:

Այս գործոնը նույնպես է տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի վրա ազդեցություն ունեցող գործոն է, քանի որ տնային տնտեսությունը, չհամակերպվելով նոր իրականությանը ու պատրաստ չլինելով սպառումն անմիջապես համապատասխանեցնելու կրճատված եկամուտներին՝ սպառման ընթացիկ մակարդակը պահպանելու համար վերցնում է փոխառություններ:

Նշենք, որ «հարաբերական եկամտի» հիպոթեզի ենթադրությունները զուտ տեսական չեն և զուրկ չեն վիճակագրական հիմքերից:

¹ Duesenberry, J. S. (1949). *Income, Saving, and the Theory of Consumer Behavior*. Cambridge, MA: Harvard University Press, p. 3.

² Duesenberry, J. S. (1949). *Income, Saving, and the Theory of Consumer Behavior*. Cambridge, MA: Harvard University Press, pp. 58-59.

³ Smyth D.J. *Toward a theory of saving // The economics of saving / Ed. by J.H. Gapinski*. Boston: Kluwer Academic Publishers, 1993. PP. 47-92. P 58-59.

Մասնավորապես Ռ. Էսթերլինը բացահայտել է, որ մարդկանց երջանկության ինքնագնահատականը ուղղակիորեն կախված է տվյալ պահի եկամտից, սակայն ընդհանուր բավարարվածությունը բավական հաստատուն է ժամանակի ընթացքում՝ չնայած եկամտների աճին¹: Հեղինակը գտնում էր, որ այս երևույթը համապատասխանում է այն պնդմանը, որ մարդկանց բավարարվածությունը կախված է ոչ միայն անձնական, այլ նաև հարաբերական եկամտից: Հետագայում Ա. Օսվալդի կողմից իրականացված հետազոտությունը վկայում է այն մասին, որ այս պնդումը համապատասխանում է իրականությանը²:

«Հարաբերական եկամտի» հիպոթեզը հետագայում կիրառություն է գտել նաև այլ հետազոտություններում: Մասնավորապես Զ. Քարոլը, Ջ. Օվերլանդը և Գ.Ն. Վեյլը, իրենց «զարգացման մոդելում» կիրառելով այս հիպոթեզը, առաջ են քաշում «համեմատության բավարարվածություն» հասկացությունը և առաջարկում են այս «համեմատության բավարարվածության» մոդելի երկու տարբերակ³: Մի տարբերակում համեմատության չափանիշ է այլ մարդկանց սպառումը, իսկ մյուս տարբերակում՝ նախկինում արված սպառումը:

Ջ. դե Գրաֆը, Գ. Վանը և Թ.Հ. Նեյլորը իրենց «Ընչաքաղցություն՝ անհագ սպառման համաճարակ» գրքում նույնպես անդրադառնում են մարդկանց սպառողական վարքագծի վրա սոցիալ-հոգեբանական գործոնների ունեցած ազդեցությանը: Նրանք նշում են, որ «...ամենքը, ցանկանալով համեմատվել ավելի հարուստ կամ բարձր վարձատրվող մարդկանց հետ, գիտակցաբար, թե անգիտակցաբար տարածում են գերսպառման հակվածության վիրուսը, ինչն էլ աննախադեպ արագությամբ մեծացնում է մարդկանց պահանջմունքներն ու ձգտումները»⁴:

Այս «սպառողական մրցակցությունը» պայմանավորված է նրանով, որ սպառման ծավալները խոսում են եկամտի մակարդակի մասին, իսկ վերջինս էլ իր հերթին տարբեր մարդկանց ձեռքբերումների համեմատման չափանիշ է: Սակայն ասել, թե այս երևույթը մեր օրերի իրականության ֆենոմեն է, մենք չենք կարող: Մարդկանց սպառման և իրենց վարկանիշի մեջ եղած ուղղակի կապի մասին է վկայում նաև Թ. Վերլենի նկարագրած «ցուցադրական սպառման» ֆենոմենը: «Այն համայնքում կամ դասակարգում ընդունված սպառման չափանիշները, որին մարդ պատկանում է, զգալիորեն հարկադրում են նրա կենսամակարդակը»⁵:

Հ. Լեբենստեինը, հետազոտելով սպառողական ապրանքների պահանջարկի շարժառիթները, այս ֆենոմենը դիտում է որպես պահանջարկի վրա ազդեցություն ունեցող հիմնական արտաքին գործոններից մեկը՝ անվանելով «Վերլենի էֆեկտ»:

Նա ի սկզբանե պահանջարկը բաժանում է «ֆունկցիոնալ» և «ոչ ֆունկցիոնալ» պահանջարկի: «Ֆունկցիոնալ պահանջարկ» ասելով՝ նա նկատի ունի բարիքի նկատմամբ եղած պահանջարկի այն մասը, որը պայմանավորված է այդ բարիքին հատուկ որակական հատկանիշներով: «Ոչ ֆունկցիոնալ պահանջարկ» ասելով՝ պահանջարկի այն մասը, որը պայմանավորված չէ այդ բարիքին հատուկ որակական հատկանիշներով⁶:

¹ Easterlin, Richard A. "Does Economic Growth Improve the Human Lot? Some Empirical Evidence." In Nations and Households in Economic Growth: Essays in Honour of Moses Abramovitz, eds. Paul A. David and M. W. Reder. New York and London: Academic Press. 1974, pp 89-125.

² Oswald, Andrew J. (1997) Happiness and economic performance. Economic Journal, Vol.10 (No.445). pp. 1815-1831.

³ Carroll, Christopher D & Overland, Jody & Weil, David N, 1997. "Comparison Utility in a Growth Model," Journal of Economic Growth, Springer, vol. 2(4), pp 339-67, p 340.

⁴ John De Graaf, David Wann, Thomas H. Naylor, Affluenza: the all-consuming epidemic: Berrett-Koehler Publishers, 2001, pp.23-31.

⁵ T. Veblen, The theory of the leisure class, London, Macmilan & Co. Ltd, 1912, p. 111.

⁶ H. Leibenstein, Bandwagon, Snob, and Veblen Effects in the Theory of Consumers' Demand, The Quarterly Journal of Economics, Vol. 64, No. 2. (May, 1950), pp. 183-207. p 188-189.

Վերջինս իր հերթին տրոհվում է «սպեկուլյատիվ», «խռացիոնալ» և «արտաքին էֆեկտներով պայմանավորված» պահանջարկի տեսակների:

Հեղինակը «սպեկուլյատիվ» է անվանում այն պահանջարկը, որը պայմանավորված է ինֆլյացիոն սպասումներով: Այսինքն, երբ սպառման համար շարժառիթ է այն մտավախությունը, որ ապագայում ստիպված են լինելու նույն ապրանքը ձեռք բերել ավելի բարձր գնով:

«Խռացիոնալ» պահանջարկ ասելով՝ Լեբենստեինը նկատի ունի պահանջարկի այնպիսի դրսևորում, որը պայմանավորված է հանկարծակի ցանկության առաջացմամբ: Սա ենթադրում է չժրագրված և չհաշվարկված սպառում, որի նպատակն է հանկարծակի առաջացած ցանկության բավարարումը:

Իսկ «արտաքին էֆեկտներով պայմանավորված» պահանջարկը պահանջարկի այն տեսակն է, որի վրա էլ արված է նրա հետազոտության հիմնական շեշտադրումը:

Որպես պահանջարկի վրա ազդեցություն ունեցող արտաքին գործոններ՝ հեղինակն առանձնացնում է «Վերլենի», «պճնամոլի» և «մեծամասնությանը միանալու» էֆեկտները:

«Մեծամասնությանը միանալու» էֆեկտով պայմանավորված պահանջարկի դրսևորման համար շարժառիթ է այն հանգամանքը, որ այլ մարդիկ էլ են սպառում այդ բարիքից: Սա արդեն մեր կողմից քննարկված սպառման այնպիսի տեսակ է, որն ապահովում է բավարարվածություն՝ կախված սոցիալական համեմատություններից: Ընդ որում՝ չնոռանանք, որ մարդիկ հաճախ սպառում են այս կամ այն բարիքը, որպեսզի համապատասխանեն այն խավին, որին ցանկանում են պատկանել: Ուստի տվյալ դեպքում մեծամասնություն է ընկալվում միայն տվյալ խավի ներկայացուցիչների մեծամասնությունը:

Ճիշտ հակառակն է «պճնամոլի էֆեկտի» ազդեցությունը: Այս դեպքում կոնկրետ բարիքի հանդեպ եղած անձնական պահանջարկը հակադարձ համեմատական է այլ մարդկանց սպառման ծավալներին: Այս էֆեկտով դրսևորվում է անձի՝ յուրահատուկ, բացառիկ լինելու, ընդհանուրից տարբերվելու ձգտումը:

Վերլենի էֆեկտը դրսևորվում է, երբ պահանջարկը պայմանավորված է բարիքի բարձր գնով: Հիշենք, որ այս դեպքում խոսքը «ցուցադրական սպառման» մասին է:

Նկատենք, որ «պճնամոլի» էֆեկտը ֆունկցիա է այլ մարդկանց սպառումից, իսկ «Վերլենի» էֆեկտը՝ զնից:

Մենք անդրադառնում ենք այս հետազոտությանը, քանի որ պահանջարկի բավարարմանն ուղղված գործողությունները, այսինքն՝ տնային տնտեսության տնտեսական վարքագիծը էականորեն կախված է պահանջարկի առաջացման շարժառիթներից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ եկամուտները, որպես կանոն, սահմանափակ են, իսկ պահանջումները՝ անսահմանափակ, տնային տնտեսությունները ինչ-որ մի պահի կանգնում են երկրնտրանքի առաջ: Մեր վերլուծության արդյունավետության համար մենք կքննարկենք այն դեպքը, երբ ընթացիկ եկամուտները չեն բավականացնում պահանջումների բավարարման համար: Նման պարագայում տնային տնտեսությունը կարող է իրականացնել տվյալ բարիքի սպառումը՝ ի հաշիվ փոխառության, հետաձգել՝ սկսելով անել խնայողություններ կամ ընդհանրապես հրաժարվել սպառումից: (Սկսել խնայողություններ անել ասելով՝ մենք նկատի ունենք ոչ թե այն, որ տնային տնտեսությունը մինչ այդ ընդհանրապես չէր անում խնայողություններ, այլ այն, որ սկսում է անել նպատակային՝ կոնկրետ այդ պահանջարկի բավարարմանը նպատակաուղղված խնայողություններ): Տնային տնտեսության ընտրության վրա մի շարք այլ գործոններից բացի, ազդում է նաև այն հանգամանքը, թե հատկապես ինչպիսի բավարարվածություն է ակնկալում ստանալ տնային տնտեսությունն այդ սպառման իրականացումից:

Իսկ այդ «ակնկալվող բավարարվածությունը» կախված է նրանից, թե ինչ շարժառիթներով է պայմանավորված պահանջարկը, և թե որքանով են ազդեցիկ այդ շարժառիթները:

Շարժառիթներն անկասկած էական դերակատարում ունեն տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի ընտրության հարցում: Բացի նրանից, որ շարժառիթները սկզբնապես են, ինչից առաջանում է խնայելու կամ փոխառություն վերցնելու անհրաժեշտությունը, դրանք միաժամանակ նաև տնտեսական պարբերաշրջանի վերջնակետ են, որն իրականացնելուց հետո, այսինքն՝ նպատակին հասնելուց՝ պահանջարկը բավարարելուց և փոխառությունը մարելուց հետո, սկսում է պտույտի նոր գալար, տնտեսական վարքագծի նոր պարբերաշրջան:

Տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի ցանկացած դրսևորում ունի իր շարժառիթները, որոնք այդ վարքագիծը ձևավորող էական գործոններ են: Եվ պատահական չէ, որ շատ հետազոտություններում տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի տիպականացման կառուցման հիմքում ընկած են հենց շարժառիթները:

Վերադառնալով տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի վերլուծությանը՝ նշենք, որ Ս. Լիին, Պ. Վերլին և Ք. Վոլբերը փոխառուական վարքագծի վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնները հետազոտելիս առանձնացրել են ութ գործոններ¹: Այդ գործոններից մեզ համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում երկուսը՝

1. Սոցիալական համեմատությունները

Այս պարագայում փոխառուական վարքագիծը դիտվում է որպես անհամապատասխան սոցիալական խավերի հետ համեմատվելու արդյունք: Այս պարագայում փոխառություն վերցնելու շարժառիթ է սոցիալապես ավելի ապահովված մարդկանց սպառմանը համահունչ սպառողական վարքագիծ ունենալու ձգտումը:

2. Անհրաժեշտության ընկալումը

Հաճախ փոխառուական վարքագծի շարժառիթ է այն, որ մարդիկ անհրաժեշտ են դիտարկում այնպիսի ապրանքները, որոնց միակ գործառույթը իրականում հասարակական ցուցադրումն է: Միևնույն ապրանքը մեկի համար կարող է հանդիսանալ շքեղություն, իսկ մեկ ուրիշի կողմից ընկալվել որպես անհրաժեշտություն, ինչը ձեռք բերելու համար նա պատրաստ է անգամ փոխառություն վերցնել: Այս գործոնն իր հերթին մեծ առնչություն ունի սոցիալական համեմատությունների հետ, քանի որ այս կամ այն ապրանքի հանդեպ տարբեր մարդկանց վերաբերմունքը և որպես անհրաժեշտության կամ շքեղության ապրանքի ընկալումը հաճախ սոցիալական համեմատության արդյունք է: Անհրաժեշտ կարող է համարվել ոչ միայն այնպիսի ապրանքը, որը բավարարում է մարդու առաջնային ֆիզիոլոգիական պահանջմունքները, այլ նաև այնպիսի ապրանքը, որի սպառումը պարզապես ընդունված է տվյալ մարդու սոցիալական շրջապատում կամ այն հասարակարգում, որին նա ցանկանում է պատկանել:

Կարծում ենք, որ փոխառուական վարքագծի վրա ազդող այս գործոնների և «մեծամասնությանը միանալու» էֆեկտով պայմանավորված պահանջարկի միջև ակներև առնչություն կա: Ինչպես նկատեցինք, սոցիալական համեմատություններն ազդեցիկ գործոններ են ոչ միայն սպառողական, այլ նաև խնայողական և փոխառուական վարքագծերի ձևավորման համար: Այս գործոնը հասցրել է գրավել տարբեր հետազոտողների ուշադրությունը, որոնց իրականացրած հետազոտությունները հաստատել են տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի վերլուծություններում այս գործոնը ներգրավելու անհրաժեշտությունը:

¹ Lea S.E.G., Webley P., Walker C.M. Psychological factors in consume debt: Money management, economic socialization, and credit use // Journal of Economic Psychology. 1995. Vol. 16. P. 681-701.

Յավոր այսօր Հայաստանի Հանրապետությունում չեն իրականացվում լայնամասշտաբ հարցումների վրա հիմնված այնպիսի հետազոտություններ, որոնց արդյունքները մեզ հնարավորություն կընձեռեն իրականացնելու ՀՀ տնային տնտեսությունների տնտեսական վարքագծի համակողմանի և խորաքափանց վերլուծություն:

Քննարկված տնտեսական ու սոցիալ-հոգեբանական գործոնների ընդգրկմամբ հետազոտության իրականացումը մեզ հնարավորություն կտա պարզելու ՀՀ տնային տնտեսությունների փոխառուական վարքագծի հիմնական շարժառիթները, մեկնաբանելու արտառոց երևույթների դրսևորումներն ու կանխատեսելու այս կամ այն հանգամանքի կամ գործոնի փոփոխությանը տնային տնտեսությունների համապատասխան արձագանքները:

ТАТУЛ МАНАСЕРЯН

*Доктор экономических наук, профессор
Руководитель Исследовательского Центра АЛЬТЕРНАТИВА*

УРОКИ КАЗАХСТАНА

Несмотря на то, что в мировой экономике немало примеров, когда государство ставит перед собой амбициозные цели, однако немало и провалов. Одни стараются копировать завоевания и успехи развитых стран, другие пытаются использовать модели, разработанные международными организациями, третьи строят проекты несоразмерно своим возможностям. Очевидно, что обречены не только вышеперечисленные попытки, что неоднократно доказано историей, но и те, кто достигают успеха в экономическом развитии, жертвуя фактической политической независимостью. Таких примеров, к сожалению, тоже немало.

На наш взгляд, странам в постсоветском пространстве следует не столько завистливо смотреть на развитые страны и пытаться сравнивать себя с несопоставимым уровнем их развития, сколько координировать свои усилия, совместно разрабатывать и реализовывать программы на приемлемых принципах, и, что немаловажно, учиться друг у друга.

В то время, как многие страны с переходной экономикой ищут спасения на Западе, Казахстан, вслед за Японией, Китаем и Таиландом, ломает старые стереотипы и учит своих конкурентов и партнеров, что не всегда уместно говорить о том, что “идеи рождаются на Востоке, но реализуются на Западе”. Многие идеи, планы и проекты здесь давно уже стали реальностью.

Анализируя успехи этой страны за последние два десятилетия, поневоле задаешься вопросом: в чем их секрет и является ли достигнутое закономерностью? Итак, каковы уроки Казахстана.

Урок первый: эффективная внутриэкономическая интеграция. Вместо конвергенции политической и финансовой элит, что привело к глубокому экономическому и политическому кризису, например, в Аргентине в 1998г., в Казахстане намечается тенденция сращивания промышленного и финансового капитала, что дает толчок к динамичному развитию экономики. После первых лет экономических реформ, испытаний и трудностей, в 1992-1995гг., страна добилась именно устойчивых темпов экономического развития. В результате вырос не только объем ВВП со среднегодовыми темпами близко к десяти процентам, но и

заметно улучшился качественный показатель ВВП на душу населения, который в 1994 году составлял чуть более семисот долларов, к 1 января 2011 года вырос более чем в 12 раз и превысил 9 тысяч долларов США.¹

3. ՄՀ հասկացության վերը ներկայացված նորովի բացատրությունը, որը, մեր կարծիքով, ադեկվատ է նրա էությանը, հնարավորություն է ընձեռում զարգացման ռազմավարության ավելի բարձր հիմնավորվածության նպատակադրումներ առաջադրել և դրանց իրականացման բարձր արդյունավետ ուղիներ մշակել: Մյուս կողմից, ռազմավարությունը հիմնականում ձևավորվում է ժամանակի զգալի տևողություն ունեցող հեռանկարի համար՝ հաճախ նույնիսկ չորոշակիացնելով այդ ժամանակահատվածը: Ուստի հարց է առաջանում, թե երկարատև ժամանակում հնարավոր է արդյոք ՄՀ էության փոփոխություն: Կարծում ենք՝ ոչ: Վերը ներկայացված բնութագրի և առաջարկված անվանման հիմքում դրված են բնության կողմից մարդակերպին շնորհված հատկությունները՝ մտածելու և գիտակցված աշխատանք կատարելու հնարավորությունը, որը զարգանում է, սակայն հազիվ թե էությամբ փոփոխվի: Մարդկությունը, օգտագործելով այդ հնարավորությունը, ավելացրել է իր պահանջմունքների բավարարման մակարդակը, ապահովել է ՄՀ շարունակական զարգացում: Կարելի է եզրակացնել, որ վերը ձևակերպված բնութագիրը հատուկ է եղել մարդկությանն իր գոյության անցյալ ողջ ժամանակաշրջանում: Այն կապահավի նաև հետագա գոյատևման ընթացքում, ուստի կարող է ծառայել նաև ՄՀ զարգացման ճիշտ ռազմավարություն ընտրելու գործին: ՄՀ էությունը չի փոփոխվում, դրա խորը և բազմակողմ ճանաչումը, դրանից բխող նպատակադրումների արդյունավետ իրականացումը հանգեցնում են մարդու և ՄՀ շարունակական զարգացման, ընդ որում աճող ինտենսիվությամբ: Այս հանգամանքը ՄՀ էության նորովի բացատրության տեսագործնական կարևորության ևս մի ապացույց է և հուշում է առաջարկված բնութագրի լայն օգտագործման անհրաժեշտությունը տնտեսության կառավարման, այդ թվում նաև զարգացման ռազմավարություններ մշակելու գործընթացներում¹:

4. ՄՀ ընդհանրական և ժամանակի ընթացքում չփոփոխվող բնութագրի գոյությունը թույլ է տալիս անել ևս մի կարևոր հետևություն: Եթե այդ բնութագիրն արտահայտում է ՄՀ էությունն իր ամբողջության մեջ, ապա այն կարող է և պետք է կիրառվի նաև ՄՀ բաղադրատարրերի համար, հասարակության հիերարխիկ կառուցվածքի ամեն մի մակարդակում, դրա ցանկացած կազմակերպությունում՝ անկախ ԳԳ ոլորտից, կազմակերպության կարգավիճակից, իրականացվող գործառնությունների կազմից: Սակայն կազմակերպությունները կարող են խիստ տարբեր լինել, ինչը կպահանջի դրանց ՁՌ-Վ մշակման համար օգտագործել տարբեր մոտեցումներ և զարգացումը բնութագրող տարաբնույթ ցուցանիշներ:

Այսպիսի տարատեսակումը բացասական ազդեցություն կարող է ունենալ ՁՌ-Վ որակի վրա, ինչպես նաև մեծապես կոժվարացնի տարբեր հիմքերի վրա ձևավորված ռազմավարությունների համեմատությունն ու գնահատումը: Կարծում ենք, խնդրի լուծման ուղղություն կարող է համարվել ՁՌ-Վ ձևավորելու տիպային մեթոդական մոտեցումների մշակումը և

¹ Նշենք, որ ՄՀ բնութագրի՝ ժամանակի ընթացքում փոփոխության հնարավորության կողմնակիցներ ևս կան: Տե՛ս, օրինակ, Друкер, Питер, Ф. “Управление в обществе будущего”. Пер. с англ. –М.: ООО “И.Д. Вильямс”. 2007. -320с.

երկրի կազմակերպություններում այն կիրառելու պաշտոնական հանձնարարումը: Այս մոտեցումը կպահանջի ՄԳԳ կազմակերպությունների և դրանցում մշակվող ՁՌՎ-ների հնարավոր տեսակների կառուցվածքավորում՝ որոշակիացնելու համար դրանցից յուրաքանչյուրի այն առանձնահատկությունները, որոնց հաշվառումը մշակվող ռազմավարությունում յուրահատուկ մոտեցումներ է պահանջում: Դա հնարավորություն կընձեռի դիտարկվող հանրության համար ձևավորել կազմակերպությունների տիպաբանություններ և հիմք ընդունելով դրանց տարբերությունները՝ տարատեսակել նաև համապատասխան ռազմավարությունների մշակման մեթոդական մոտեցումներ՝ յուրաքանչյուր տարատեսակի առանձնահատկումների հաշվառումով:

5. Շարունակելով ՄՀ էության վերաբերյալ վերն առաջարկված ընդհանրական բնութագիրը (ՄԲԳԳՀ) հասարակության բաղադրատարրեր հանդիսացող կազմակերպությունների նկատմամբ կիրառելու շուրջ դատողությունները՝ կարելի է հավաստել, որ այդպիսի մոտեցումը կիրառելի է նաև ՄՀ հիերարխիայի ավելի ստորադաս մակարդակների՝ ԳԳ իրականացնելու բաղադրատարրերի նկատմամբ: Այդպիսիք են, օրինակ, ՄԳԳ ապահովումները (ենթակառուցվածքները), գործառույթները, գործողությունները և շատ այլ տարրեր: Դրանց ՁՌՎ-ները կարող են մշակվել միատեղ (որպես համալիր), ինչպես և կազմակերպության ՁՌՎ կազմում: Չի բացառվում դրանք յուրաքանչյուր տարրի համար առանձնացված մշակելու հնարավորությունը, իհարկե, նկատի ունենալով յուրաքանչյուրի առանձնահատկությունները և այլ ռազմավարությունների հետ փոխհամաձայնեցման և վերադաս մակարդակի (գործունեություն իրականացնող կազմակերպության) հիմնարար սկզբունքներին չհակասելու պահանջները:

Հասարակության հիերարխիկ համակարգի տարբեր մակարդակների, յուրաքանչյուրում ներառված կազմակերպությունների, դրանց բաղադրատարրերի համար ձևավորված և պաշտոնապես հավանություն ստացած ռազմավարությունների ամբողջությունը կդառնա տվյալ հանրության ԳԳ համակարգի զարգացման համալիր ռազմավարություն: Այն հիմք կհանդիսանա կառավարող վերադաս համապատասխան մարմինների կողմից կազմակերպությունների ԳԳ նկատմամբ պահանջվող հսկողություն իրականացնելու և արդյունքները գնահատելու համար:

6. Կազմակերպությունների հիերարխիզմը հասարակությունում և ցանկացած մակարդակում յուրաքանչյուր կազմակերպության զարգացման ռազմավարություն ունենալու անհրաժեշտությունը պահանջում են որոշել, թե դիտարկվող կազմակերպություններից որի ռազմավարությանը պետք է առաջնայնություն տրվի, և այն օգտագործվի նաև այլ կազմակերպությունների ռազմավարություններ մշակելիս: Դա կարևոր է, քանի որ ինչ-որ չափով պայմանավորում է նաև ռազմավարությունների մշակման հաջորդականությունը, հետևապես նաև ժամանակը, ինչպես և որոշակիացնում է ռազմավարությունների կարևոր ուղղությունը (կամ մի շարք ուղղությունները)՝ առաջնային համարվող ռազմավարության օրինակով:

Հայտնի է, որ որևէ երևույթի հիերարխիզմը ձևավորվում է երկու հակադիր գործողություններով՝ ընդհանրականի կառուցվածքավորումով (տարրալուծումով իր բաղադրատարրերի) և իր առանձին տարրերը միատեղելու ընդհանրական (ագրեգացված) երևույթի ձևավորումով: Ընդհանուր զարգացումը վերջին հաշվով պայմանավորված է նաև այդ ընդհանուրի մաս կազմող տարրերի գործունեությամբ, քանի որ դրանում դրսևորվում են այդ տարրերի կողմից ցուցաբերվող օգտակար ինքնուրույնությունն ու նորարարությունը: Մեր կարծիքով, առաջնային է համարվելու ընդհանրական (վերադաս, ագրեգացված) մակարդակի ռազմավարությունը, որի իրականացմանն է ուղղված լինելու ստորադաս մակարդակի գործունեությունը:

Վերջինը, ծայրագույն դեպքում, չպետք է հակասի վերադասի նպատակադրմանը: Հասարակության զարգացման ճիշտ ռազմավարության ձևավորումը և ստորադաս մակարդակներում դրա իրագործմանն արդյունավետ օժանդակող ռազմավարության գոյությունն է, որ հնարավորություն կստեղծի ապահովելու ողջ հասարակության ինտենսիվ զարգացումը: Ուստի անհրաժեշտ է միանշանակ պարզորոշել հասարակության ռազմավարության հիմնարար ուղղությունները և պարտադիր համարել ստորադաս կազմակերպությունների ռազմավարություններում դրանց չհակասելու պահանջի կատարումը: Այսպիսի մոտեցումը կարևորվում է նաև նրանով, որ հիմքեր է ստեղծում նաև ստորադաս մակարդակի կազմակերպությունների ռազմավարությունների փոխհամաձայնեցման համար:

7. Մակրոմակարդակային նպատակադրումների և դրանց իրականացման ռազմավարության առաջնայնության արդարացի սկզբունքը, կարծում ենք, նպատակահարմար է իրագործել հետևյալ կերպ: Մշակվելու է և ստորադաս մակարդակների ղեկավարների փորձաքննությանն է ներկայացվելու այդ ռազմավարության սկզբնական տարբերակը: Դրա փոփոխման կամ լրացման վերաբերյալ ստացված առաջարկությունների քննարկման և գնահատման արդյունքում ձևավորվում է մակրոմակարդակային ռազմավարության նոր տարբերակը, որը պաշտոնապես ընդունվելուց հետո ներկայացվում է ստորադաս մակարդակներում ի կատարումն և իրենց ռազմավարություններում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Իրագործելու համար այսպիսի ոչ պարզ, բայց ժողովրդավարական մոտեցումը, նախապես մշակվելու են դրա կազմակերպման բոլոր կողմերը: Այն պետք է ստանա օրենսդրաիրավական ձևակերպում, ընտրվելու են տեղական մարմինների այն ընդգրկումն ու ցանկը, որոնք մասնակից են լինելու այդ գործընթացին՝ տեղեկացնելով նրանց դրանց մանրամասներին: Հնարավոր է, որ տեղական մարմիններին հնարավորություն ընձեռվի իրենց մակարդակում կազմակերպել ռազմավարության հիմնարար դրվածքների ավելի լայն քննարկում, եթե դա որոշակի պատճառներով չի սահմանափակվում վերադաս մակարդակի ղեկավար մարմնի կողմից: Արված առաջարկները պետք է բազմակողմ հիմնավորված լինեն, ներկայացվեն դրանց իրագործման ուղղությունների շուրջ դատողություններ և դրական ու բացասական բոլոր հնարավոր արդյունքները: Առաջարկվող մոտեցման իրականացման դժվարությունները, ֆինանսական և այլ, այդ թվում նաև ժամանակի ռեսուրսների զգալի ծախսումները կարդարացվեն լուծումներ ստանալու գործընթացի ժողովրդավարացման, ՁՌՎ որակի բարձրացման, կառավարման տեղական մարմինների աշխատանքի, մասամբ նաև բնակչության մասնակցության ակտիվացման, հնարավոր է նաև այլ դրական արդյունքների ակնկալիքով:

8. ՁՌՎ մշակումն իր էությանը գիտական հետազոտություն է՝ առաջադրվող պահանջների ապահովմամբ: Դրանում հիմնավորվում են կազմակերպության հետագա զարգացման ցանկալի հեռանկարները, բացահայտվում են առկա խնդիրները, առանձնացվում են առաջնային լուծում պահանջողները, դրանցից ընտրվում են տվյալ հետազոտությունում ընդգրկվողներ:

Ստացված արդյունքների հիման վրա որոշվում են զարգացման նպատակահարմար հեռանկարը և դրան հասնելու ռազմավարությունը: Թվարկված հարցերի պարզաբանումը և ռազմավարության ձևավորումը կատարվելու են տվյալ կազմակերպության առանձնահատկությունների և հնարավորությունների, ինչպես նաև միջավայրի պայմանների հաշվառումով, հետագա գործունեության հնարավորինս բարձր արդյունավետություն ապահովելու ակնկալիքներով, որոնց իրականացումը հնարավոր կլինի ռազմավարության բարձրորակ մշակման և արդյունավետ իրագործման պայմաններում:

Խնդրի բարդությունը, լուծմանը մասնագիտական և ստեղծագործական մոտեցում ունենալու անհրաժեշտությունը, գիտելիքային և իրավիճակային տեղեկատվությանը բազմակողմ ծանոթության պահանջը և այլ պայմանների ապահովումն անհրաժեշտ են դարձնում բարձրորակ մասնագետ կադրերի մասնակցությունը, հետևաբար դրանց պատրաստումը և ներգրավումը ռազմավարությունների մշակման գործընթացներում: Կարծում ենք, նպատակահարմար պետք է համարվեն յուրաքանչյուր կազմակերպությունում գիտելիքային ապահովման, առկա խնդիրների լուծման, ՋՌՎ մշակման մասնագիտացված բաժնի (ստորաբաժանման) ստեղծումը և բարձր որակավորման մասնագետներով համալրումը: Փոքր կազմակերպությունները նույնպես պահանջ ունեն այդպիսի մշակումների կատարման: Կարծում ենք՝ դրանց համար ավելի նպատակահարմար կարող է համարվել ՋՌՎ-ների մշակման ոլորտում մասնագիտացված կազմակերպությունների ծառայություններից օգտվելը պայմանագրային կարգավիճակով: Հետևաբար և այդպիսի կազմակերպությունների ստեղծմանը և դրանց նպատակային գործունեության իրականացմանը համապատասխան աջակցություն պետք է ցուցաբերվի կառավարման մարմինների կողմից:

9. Կազմակերպությունների զարգացման, հետևաբար և դրան ուղղված ՋՌՎ-ների և ծրագրերի մշակման գործընթացների վրա զգալի ազդեցություն կարող են ունենալ տնտեսագիտության հիմնախնդիրների տեսական հետազոտությունների այն արդյունքները, որոնցում ստացված են նաև ՋՌՎ մշակման խնդիրների նոր լուծումներ: Բացի այդպիսի ուղղակի օժանդակությունից՝ տնտեսագիտության տեսության զարգացումը կարող է նաև անուղղակի նպաստել ՋՌՎ մշակմանը: Թե՛ մեկ և թե՛ մյուս ուղղվածության հետազոտությունները պետք է արժանանան տնտեսագետ գիտնականների և կառավարման ղեկավար մարմինների լուրջ ուշադրությանը: Սա ծավալուն խնդիր է, որի լուծումը պահանջում է լայնածավալ հետազոտությունների կատարում, ուստի այստեղ բավարարվենք միայն մի քանի ուղղությունների թվարկումով:

Առաջնահերթ է ՄՀ էության նորովի բացատրության տեսության ստեղծումը, քանի որ դրա դրույթների կիրառությունը հիմք է դառնալու նաև ՄՀ և դրա բաղադրատարրեր հանդիսացող կազմակերպությունների գործունեության ճիշտ նպատակադրումներ և զարգացման նպատակահարմար ուղղություններ ընտրելու համար:

Նշենք նաև գիտելիքի պաշարի (ռեսուրս) և գիտելիքի ստեղծման գործունեության տեսության կարևորությունը ՄՀ զարգացման գործում, ինչը հավաստվում է թեկուզ ՄՀ-ն այժմ գիտելիքի հասարակություն անվանելու իրողությամբ: Չնայած նրան, որ գիտելիքաստեղծ գործունեությունը ՀՀ համար համարվում է զարգացման հիմնարար ուղղություն, այն հանրապետությունում դեռևս չունի իր գիտությունը: Գրա ստեղծումը և զարգացումը, կարծում ենք, մեծապես կնպաստեն նաև կազմակերպությունների զարգացման ճիշտ ռազմավարությունների ձևավորմանը:

Պատմականորեն ապացուցված է ՄՀ զարգացման օրենքի իրողությունը, դրա պարզաբանմանը և հետագա զարգացմանն է նվիրված կայուն զարգացման և աղքատության վերացման ծրագրերի մշակումը, որը առայժմ իր նշանակությանը համահունչ ինտենսիվությամբ չի իրականացվում մեր երկրում:

ՋՌՎ-ները մշակվում են ապագա, հաճախ մեծ տևողությամբ ժամանակահատվածի համար, ուստի մեծ է այդ հեռանկարում երկրի իրավիճակի շուրջ հավաստի պատկերացումներ ունենալը: Այն կարող է բացահայտվել բացառապես կանխատեսումների միջոցով, որոնց տեսությունը դեռ բավարար զարգացում ու կիրառություն չունի մեր երկրում՝ չնայած իր մեծ կարևորությանը կազմակերպությունների կառավարման և ՋՌՎ-ների մշակման գործում:

Չմոռանանք նաև ՄՀ զարգացումը խոչընդոտող երևույթների գոյությունը, մասնավորապես ՄԳԳ կառավարման գործում և կառավարչական որոշումներում թույլ տրված բացթողումների արդյունքում տնտեսությունում ճգնաժամերի առաջացումը: Դրանք, ինչպես ցույց տվեց նաև վերջին (2008-2010թթ.) համաշխարհային ճգնաժամը, տնտեսության զարգացման զգալի դանդաղեցման, նույնիսկ հետադիմության պատճառ կարող են դառնալ: Անհրաժեշտ պետք է համարել հակաճգնաժամային քաղաքականության մշակումը և իրագործումը, այսինքն՝ հնարավորինս անճգնաժամ ՄՀ ստեղծելու և պահպանելու խնդրի տեսության ձևավորումը, որը, չնայած իր կարևորությանը, սկսվել է միայն վերջին տարիներին: Նշենք, որ այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվել ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում, հրատարակվել են ճգնաժամի կանխարգելման հարցին նվիրված ամբողջ շարք մենագրություններ:

Վերը ներկայացված թվարկումը կարելի է դեռ շարունակել: Կարծում ենք, դրանց շուրջ ավելի ընդգրկուն տեղեկատվությունն օգտակար կլինի գիտական հետազոտությունների ֆինանսավորման խնդիրների առավել նպատակային լուծման տեսանկյունից ևս, ուստի ժամանակի որոշակի հատվածում առկա խնդիրների ցանկի ձևավորումը և դրանց առաջնայնության գնահատումը ճանաչվելու են կառավարման մարմինների կարևոր գործառույթ:

ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՏՊԾՏ, ընդհանուր տնտեսագիտության
ամբիոնի ասիստենտ, Վ. Գ. Թ*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ տնտեսագիտական միտքը XIX դարի վերջին և XX դարի սկզբին տնտեսական ճգնաժամերի հարցը քննության է ենթարկել ընդհանուր դիտողությունների մակարդակով: Ութեն կատարվել են արժեքավոր վերլուծություններ, այնուամենայնիվ դրանք մի հայտնի մասով կատարվում էին մտքի նույն տիրույթում: Այս իմաստով առանձին տեղ է պատկանում Մենտոր Բունիաթյանին, որի աշխատությունները հայ տնտեսագիտության մեջ ճգնաժամերի տեսության պատմությունը շարադրող առաջին լիարժեք ուսումնասիրություններն են¹:

Մ.Բունիաթյանը ճգնաժամերը համարում է ժողովուրդների տնտեսական կյանքի համար ամենամեծ աղետը, որի հիմնապատճառների իմացությունը հսկայական նշանակություն կարող է ունենալ տնտեսական ներհակությունները մեղմելու և բազմաթիվ հարցերի լուծման առումներով: Այդ է վկայում տնտեսագետների բազմաթիվ սերունդների ուշադրությունն այդ հիմնահարցին, որի բացատրությունը վճռական ազդեցություն ունի տնտեսագիտության ընդհանուր տեսության համար:

Ճգնաժամերի վերաբերյալ տնտեսագիտական միտքն իր ընդհանուր գծերով շարունակում է հիմնվել դասական դպրոցի կանխադրությունների վրա: Խոսքը վերաբերում է Ջ. Միլի և Ժ.Մեյի՝ արժեքի շուկայական տեսության ու կապիտալի տեսության ձևակերպումներին: Տնտեսական ազատության պայմաններում առանձին տնտեսավարող սուբյեկտների և ամբողջ հասարակության շահերի ներդաշնակության գաղափարը, չնայած վերջինիս որոշակի ճեղքվածքներին, Բունիաթյանի բնութագրմամբ, դեռևս շարունակում է իշխել: Իսկ դա, ըստ էության, մերժում էր տնտեսական ճգնաժամերի երևույթը՝ ելակետ ունենալով այն դրույթը, թե

¹ Այդ մասին տես՝ Սարգիսյան Ռ.Ն., Հայ տնտեսական փիլիսոփայություն (հոսանքներ, դեմքեր), Ե., 2001, էջ 109-122:

ապրանքներն արտադրվում են փոխանակության համար, և ամեն մի արդյունքի արտադրությունն ինքնին ստեղծում է շուկա այլ ապրանքների համար: Իրականում, արտադրությունը և փոխանակությունը որպես նպատակ ունեն կամ սպառումը, կամ էլ կապիտալի կուտակումը, այսինքն՝ հետագա արտադրության միջոցների կուտակումը: Այս կամ այն նպատակի համար, եթե արտադրությունները բաշխված են համամասնորեն, բոլոր բարիքները պետք է գտնեն իրենց իրացումը: Դասական տնտեսագիտությունն առաջնորդվում էր «կուտակում՝ կուտակման համար» սկզբունքով: Այնպես, ինչպես մասնավոր անձը խնայողության միջոցով կարող է մեծացնել իր կարողությունը, այդպես էլ դասական տնտեսագիտությունը կուտակումը դիտում է որպես հասարակության հարստության աճի միջոց:

Դասականները ճգնաժամերի ժամանակ գների ընդհանուր անկումը բացատրում էին որպես փոխանակային հարաբերությունների փոփոխություն հոգուտ մի բարիքի՝ փողի, և ի վնաս այլ բարիքների՝ ապրանքների: Նման դատողությունների արդյունքում, ճգնաժամերի պատճառներ էին նշվում ժողովրդատնտեսական կյանքի բարդ մեխանիզմի պայմաններում արտադրությունը պահանջարկին հարմարեցնելու դժվարության հետ կապված ձեռնարկատերերի սխալները, ինչպես նաև վարկի չարաշահումն ու կործանումը: Փաստորեն, ժխտելով ընդհանուր գերարտադրության հնարավորությունը, իշխող քաղաքական գիտության ջատագովներն ընդունում էին միայն մասնակի գերարտադրության հնարավորությունը, մինչդեռ դրա քննադատները, որոնցից Բունիաթյանն առանձնացնում է Սիսմոնդիին, Ռոդբերտուսին, Մարքսին, Մալթուսին, Չոմերսին և Կիրխմանին, հիմք ընդունելով բաշխման անհավասարաչափությունը, ինչպես նաև կապիտալի չափազանց ավելացումը, ճգնաժամերը կապում էին հենց ընդհանուր գերարտադրության հետ՝ դրանք դիտարկելով որպես կապիտալիստական կազմակերպության օրգանական արդյունք:

Արտադրության, սպառման, ինչպես նաև կապիտալի կուտակման միջև հարաբերությունների բավականին խոր վերլուծություն նկատվում է Լոդերդելի մոտ, որին անդրադառնում է Մ. Բունիաթյանը: Ա. Սմիթին ուղղված քննադատությունում (որն ընդունում էր կապիտալի անսահմանափակ կուտակման հնարավորությունը՝ դրանով իսկ անջատելով արտադրությունը սպառումից) Մ. Բունիաթյանն ուշադրությունը սևեռում է մասնավոր և ժողովրդական հարստության մեծությունների որոշման չափանիշների՝ Լոդերդելի նշած տարբերությունների կամ նույնիսկ կարելի է ասել հակասությունների վրա: Չնայած նրան, որ Լոդերդելը չի առարկում ընդունված այն մտքին, որ կապիտալը կուտակվում է խնայողության շնորհիվ, սակայն ընդգծում է, որ ժողովրդական հարստությունը կազմված է այն ամենից, ինչը օգտակար և ցանկալի է մարդու համար, մինչդեռ մասնավոր անձանց հարստությունը որոշվում է նրանց ունեցվածքի արժեքով, և որ առավել կարևոր է, ընդհանուր առմամբ այն չի հարստացնում հասարակությանը: Այսինքն՝ բացի դրանց կազմի տարբերություններից, տարբեր են նաև դրանց ուղղությունները: Իսկ ինչ վերաբերում է ազգային տնտեսությունը հարստացնող միջոցներին, ապա այստեղ էլ մասնավորի հարստությունը, հասնելով հայտնի չափերի, կարող է միայն ունեցվածքը տեղափոխել հասարակության մի անդամից մեկ ուրիշին՝ բնավ չավելացնելով ժողովրդական հարստությունը: Ըստ որում, տեղի է ունենում գնողունակ ուժի կենտրոնացում դեպի արտադրության միջոցների կողմը, ինչը, ի վերջո պատճառ դառնալով գերարտադրության և վերջիններիս արժեզրկման, հանգեցնում է արտադրության կրճատման ու տնտեսական գործունեության թուլացման: Այսպիսով, Լոդերդելը ցույց է տալիս, որ հասարակությունն այնպես է կառուցված, որ մի մասի կուտակման մոլուցքի վնասը չեզոքացվում է մյուսների վատնողությամբ: Այս ամենից Մ. Բունիաթյանն առանձնացնում է Ա. Սմիթի կապիտալի տեսության դեմ ուղղված Լոդերդելի այն փաստարկը, ըստ որի կապիտալացման

և սպառնան միջև հայտնի հարաբերակցությունը ներկայանում է որպես անհրաժեշտություն:

Մ.Բունիաթյանն առանձին ուշադրություն է դարձնում Ժ. Միսնոնդ դը Միսնոնդու հայացքների քննությանը: Եվ ոչ պատահականորեն: Միսնոնդին առաջին տնտեսագետն էր, որը լուրջ ուշադրության արժանացրեց տնտեսական ճգնաժամերի հարցը: Ա. Անիկինը հենց այս իմաստով է նկատում, թե «Չնայած Միսնոնդին նույնպես չկարողացավ լուծում տալ այդ հիմնախնդրին, բայց և այնպես, այն, որ նա հարցը բարձրացրեց տեսական մի նոր աստիճանի, նրան մի մեծ քայլով առաջ տարավ իր ժամանակակիցներից»¹: Լինելով նաև պատմաբան և ամենայն ուշադրությամբ հետևելով ճգնաժամերի ընթացքին՝ Միսնոնդին 1815-1818թթ. ճգնաժամերից հետո փաստեց, որ տնտեսական ճգնաժամերն օրգանապես կապված են ազատ մրցակցության վրա հիմնված տնտեսական կյանքի հետ՝ դրանով իսկ հակադրվելով առանձին տնտեսվարող անձանց և հասարակության շահերի ներդաշնակությունն ու ազատ մրցակցության առավելությունները քարոզող դասական ազատամտական դպրոցին: Նա գտնում էր, որ շուկաների գերլցվածությունն առևտրի ողջ պատմության մեջ ամենահաստատված փաստն է, և կարիք չկա պահանջարկը գերազանցող չափազանց մեծ արտադրությունը դիտարկել որպես չալանավորված արտադրության հետևանք՝ տալով դրան մասնակի բնույթ: Այն ընդհանուր է բարիքների պահանջարկի նկատմամբ՝ ընդհանրապես: Սպառողների լայն շրջանի համար նախատեսված գործարանային արտադրություն, իր տրամադրության տակ ունի բավականին սահմանափակ շուկա: Միսնոնդին վերջինս պայմանավորում է այն հանգամանքով, որ արդյունքի իրացումը կախված է երկու գործոններից՝ գնորդների պահանջից և իրենց գնողունակ միջոցներից, որոնցից առաջինը շատ դանդաղ է զարգանում, իսկ երկրորդն էլ սահմանափակված է եկամուտներով: Եթե կապիտալիստական կազմակերպությանը մի կողմից հատուկ է արտադրության արագ աճը՝ ելնելով արտադրության կատարելագործման հնարավորությունից, ապա մյուս կողմից՝ արտադրության մեքենայացումը, նպաստելով գործազրկության մեծացմանը և աշխատավարձի իջեցմանը, առաջ է բերում հասարակական եկամտի կրճատում: Եվ փաստորեն ստացվում է, որ տեխնիկայի կատարելագործման շնորհիվ տեղի է ունենում հասարակական արտադրության գերազանցում նախորդ տարվա հասարակական եկամտի համեմատ, և քանի որ, ըստ Միսնոնդու, մի տարվա հասարակական արդյունքը գնվում է նախորդ տարվա հասարակական եկամտով, ուստի դրանց միջև առկա անհամապատասխանությունը գնալով պիտի մեծանա, ինչն էլ տրամաբանորեն կհանգեցնի շուկաների գերլցմանը, գների ուժեղ անկմանը, ինչպես նաև թե՛ բանվորների և թե՛ ձեռնարկատերերի աղքատացմանը, մի խոսքով՝ ճգնաժամի:

Բնավ չհամաձայնելով Միսնոնդու այս տեսակետի հետ և վերջինիս «եկամտի տեսությունը» որակելով որպես չկայացած, Բունիաթյանը նկատում է, որ հասարակական եկամուտը չի կարող չհամընկնել հասարակական արդյունքի հետ, քանի որ «հասարակական եկամուտը նույն հասարակական արդյունքն է, լոկ բաշխման տեսակետից վերցրած»²: Բացի դրանից բացարձակ սխալ համարելով նախորդ տարվա հասարակական եկամտի և տվյալ տարվա հասարակական արդյունքի կապը՝ Բունիաթյանը նշում է, որ տարբեր ապրանքներ փոխանակվում են մեկը մյուսով շուկա մտնելուն զուգընթաց, ուստի վերը նշվածը չի համապատասխանում իրականությանը: Բայց և այնպես, չի կարելի աննկատ թողնել Միսնոնդու այնպիսի դիպուկ մտքերը, որը Անիկինի խոսքերով չէր անցնի անգամ Սմիթի և Ռիկարդոյի մտքով. այն է՝ թե ազգերը «...կարող են սնանկանալ ոչ միայն այն բանից, որ չափազանց

¹ Аникин А.В., Юность науки, М.,1985, с. 271.

² Бунятян М., Экономические кризисы, 1915, М., с. XIII.

շատ են ծախսում, այլև այն բանից, որ չափազանց քիչ են ծախսում»¹: Եվ ընդհանրապես, չնայած նրան, որ իր հետևություններում, ինչպես օրինակ՝ գերարտադրության հարցում նա դրսևորում է անհետևողականություն, մի դեպքում ընդհանուր գերարտադրության տակ նկատի ունենալով մասսայական գործարանային արտադրության առարկաների գերարտադրությունը, մեկ այլ դեպքում՝ ներառելով այդտեղ նաև ճոխության առարկաները, պետք է ընդունել, ինչն անում է նաև Բունիաթյանը, որ նրա ներդրումը ճգնաժամերի հիմնախնդրի լուծման մեջ ահռելի է՝ հաշվի առնելով այն, որ նա առաջինն է ընդգծել գերարտադրության ընդհանուր բնույթը և սերտ կապը բնակչության լայն զանգվածներ սահմանափակ սպառման և տնտեսական ճգնաժամերի ծագման միջև:

Ճգնաժամերի տեսության պատմության մեջ Բունիաթյանը որոշակի տեղ է հատկացնում Ռ. Մալթուսին՝ որոշ ընդհանրություններ գծելով նրա և Լոդերդեյի հայացքների միջև: Արժեքի տեսության հարցում նրանց հայացքները շատ մոտ են միմյանց: Արժեքը, ըստ Մալթուսի, որոշվում է բացառապես առաջարկով և պահանջարկով: Վերլուծելով դրանց վրա ազդող գործոնները՝ նա կառուցում է մի շղթա, որտեղ առաջարկի ավելացումը պահանջում է արտադրված բարիքների ճիշտ բաշխում, ինչն իր հերթին մեծացնում է պահանջարկը, հետևապես նաև բարիքների արժեքը, որն էլ հնարավորություն է ստեղծում կուտակման համար: Ըստ որում, պետք է նշել, որ այդ շղթայի կարևոր «շարժիչ ուժը» նա համարում է սպառումը, ինչը, սերտ կապված լինելով բարիքների բաշխման հետ, կարգավորում է արտադրությունն ու կուտակումը: Այն դեպքում, երբ սպառման ձգտումը պահպանում է հավասարակշռությունն առաջարկի և պահանջարկի միջև, կուտակման չափից դուրս ձգտումն էլ վերջին հաշվով բերում է գերարտադրության: Փաստորեն, նա մեկ անգամ ևս հաստատում է արտադրության, սպառման և կուտակման միջև փոխադարձ այնպիսի կապի առկայությունը, որը որոշում է վերջիններիս հարաբերակցությունը տնտեսական կյանքի բնականոն ընթացքի համար: Սակայն, Բունիաթյանը նշում է մի հանգամանք, որը վրիպում է Մալթուսի աչքից, այն է, որ հավասարաչափ բաշխումը համարելով բարենպաստ ինչպես սպառման, այնպես էլ արտադրության համար, նա հաշվի չի առնում, որ աշխատավարձի բարձրացումը կարող է լինել միջոց արտադրության աճի համար և կրճատել ձեռնարկատիրական օգուտը՝ դրանով իսկ դադարեցնելով կուտակման աճը:

Այնուհանդերձ, Մալթուսն առաջիններից մեկն էր, ով հակադրվեց իշխող այն կարծիքին, թե կապիտալիզմի կարևոր հիմնախնդիրը կապիտալի կուտակումն է, որն ապահովում է արտադրության աճ, իսկ պահանջարկի և իրացման հարցերում լուրջ դժվարություններ չկան, դրանով իսկ տնտեսագիտական միտքը սևեռելով իրացման հիմնախնդրին: Արտադրության և սպառման միջև հավասարակշռությունը պահպանելու համար և այդպիսով իրացման, իսկ հետևաբար նաև ճգնաժամերի հիմնախնդրի լուծման համար Մալթուսն առաջ քաշեց մի գաղափար, որը հետագայում բավականին մեծ դեր ունեցավ հակաճգնաժամային միջոցառումների մշակման հարցում: Այն էր՝ ոչ արտադրողական դասի անհրաժեշտությունը և սպառմանը վերջիններիս օժանդակման միջոցով՝ արտադրության խթանումը: Այսպիսով՝ գերարտադրությունը Մալթուսին ներկայանում է որպես չափազանց կուտակման հետևանք, ինչն առաջ բերելով նոր արտադրողական ուժերի պահանջ, նպաստում է տեխնիկայի կատարելագործմանը: Նկատենք, որ, ի տարբերություն Մալթուսի, Միսմոնդին վերջինս դիտում էր ոչ թե որպես հետևանք, այլ գերարտադրության անմիջական պատճառ: Հատկանշական է, որ Մալթուսը գերարտադրության դրսևորումը տեսնում է աշխատանքի նկատմամբ բարիքների արժեքների անկման մեջ, մինչդեռ Բունիաթյանի դիտարկմամբ ճգնաժամերի փուլերում

¹ Симонд де Сисмонди Ж., Новые начала политической экономии, т.2, М., 1937, с. 201.

միաժամանակ տեղի է ունենում ապրանքների գների և աշխատավարձի անկում: Այսպիսով՝ Բունիաթյանը գալիս է այն մտքին, որ Մալթուսի գերարտադրության տեսությունը հենված չէ արժեքի հիմնավոր տեսության վրա. նրա վերակապիտալացման միտումների բացատրությունը բավարար չափով հաշվի չի առնում կապիտալիստական հասարակարգի առանձնահատկությունները, որոնք այդ ձգտումը դարձնում են անխուսափելի: Եվ վերջապես, կարևորելով բաշխման և սպառման դերն արտադրության զարգացման գործում, նա բավարար չափով չի խորանում դրանց միջև գոյություն ունեցող կապի մեջ և ընկնում է հակասության մեջ, երբ համեմատում է աշխատավարձը ձեռնարկատիրական շահույթի հետ և առաջինի բարձրացման մեջ տեսնում խոչընդոտ արտադրության զարգացման համար¹:

Միսմոնդիի և Մալթուսի՝ ճգնաժամերի առաջացման մասին մտքերն իրենց արտացոլումն են գտնում Կիրխմանի մոտ, որի դատողությունները թեև կառուցված են տեսական ավելի թույլ հիմքի վրա, սակայն Բունիաթյանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերջինիս հայացքներին, որոնք իրենց ամբողջությամբ ներկայացնում են «խրոնիկ գերարտադրության տեսության սրամիտ սխեմա»: Այն հետևյալն է. եկամուտների անհավասարաչափ բաշխման հետևանքով բանվոր դասակարգը, ստանալով հասարակական արդյունքի աննշան մասը, ի վիճակի չէ ընդլայնելու արտադրությունը: Մյուս կողմից, հողային և կապիտալային ռենտա ստացողները, չնայած առկա հնարավորությանը, գերադասում են կուտակել իրենց միջոցները և սեփական եկամուտների ավելացման ակնկալիքով ներդնել արտադրության մեջ, որի արդյունքները, սակայն, վերը նշված պատճառներով մնալու են չիրացված: Ուստի, կուտակման ձգտումը և անբավարար իրացումը պատճառ են դառնում գերարտադրության: Ծգնաժամերի կապը բաշխման անհավասարությունից առավել տեսանելի դարձնելու համար Մ. Բունիաթյանը դիմում է Ռոդբերտուսի հայացքների քննությանը, որոնց առանցքային միտքն այն է, որ գերարտադրության ընդհանուր պարբերական ճգնաժամերի պատճառը պետք է փնտրել ոչ թե ձեռներեցների սխալներում կամ դրամական ու վարկային շրջանառության ոլորտներում, այլ հողի և կապիտալի մասնավոր սեփականության և ազատ մրցակցության վրա հիմնված տնտեսության կազմակերպությունում: Հողային ռենտան և շահույթը Ռոդբերտուսին ներկայանում են որպես բանվորի չվարձատրված աշխատանքի արդյունք, քանի որ «...եթե աշխատանքի արտադրողականությունն այնքան մեծ է, որ բանվորը անհրաժեշտ կենսամիջոցներից բացի կարող է արտադրել ևս շատ այլ սպառողական բարիքներ, ապա հողի և կապիտալի մասնավոր սեփականության առկայության պայմաններում այդ ավելցուկը դառնում է ռենտա, այսինքն՝ առանց աշխատանքի յուրացվում է այլ անձանց կողմից»²: Ըստ որում, ինչպես նկատում է Բունիաթյանը, ի տարբերություն Միսմոնդու և Կիրխմանի, Ռոդբերտուսը պնդում է բանվորի բաժնի **հարաբերական** փոքրացման և ոչ դրա **բացարձակ** աննշանության վրա, այսինքն՝ աշխատանքի արտադրողականության մեծացմանը զուգընթաց բանվոր դասակարգի վարձատրությունը կազմում է ազգային արդյունքի համապատասխանաբար էլ ավելի փոքր մասը³: Դրա բացատրությունը ևս հանգում է բաշխման պայմաններին՝ հաշվի առնելով, որ եթե հասարակական արդյունքում յուրաքանչյուր դասի ունեցած բաժինը հավասար լինի արտադրության մեջ նրա ունեցած բաժնին, ապա, ըստ Ռոդբերտուսի, մինչև հասարակության բոլոր անդամների պահանջմունքները լրիվ չբավարարվեն, թե՛ մասնակի և թե՛ ընդհանուր գերարտադրության հնարավորության մասին խոսք լինել չի կարող: Իսկ քանի

¹ Bouniatian M., Les crises économiques, Paris, 1922, pp. 15-16.

² Родбертус К., К познанию нашего государственно – хозяйственного строя. Пять теорем. М., 1935, с.115.

³ Այս կապակցությամբ Տ. Բարանովսկին հայտնում է իր անհամաձայնությունը՝ նշելով, որ Ռոդբերտուսը, չտալով աշխատավարձի պարբերաշրջանային շարժման պատկերը, անտեսում է այն փաստը, որ իրականում վերելքի փուլում աշխատավարձը բարձրանում է:

որ, ինչպես տեսանք, հասարակական արդյունքում աշխատավոր դասակարգի մեծ մասի ունեցած բաժնի չափի և իր աշխատանքի արտադրողականության միջև առկա է բացասական կախվածություն, ուստի բնակչության մեծամասնության գնողունակ ուժի և հասարակական արտադրողականության միջև առաջ է գալիս անհամապատասխանություն: Եվ չնայած նրան, որ վերջին հաշվով գնողունակ ուժի ընդհանուր չափի փոփոխություն տեղի չի ունենում, այնուհանդերձ, վերջինիս ուղղության փոփոխությունը փոխում է պահանջարկի կազմը, այն դեպքում, երբ արտադրության կազմը մնում է անփոփոխ: Հետևաբար, Ռոդբերտուսը գալիս է այն մտքին, որ բաշխման տվյալ պայմանների դեպքում աշխատանքի արտադրողականության անընդհատ մեծացումը հանգեցնում է պահանջարկի և առաջարկի անհամապատասխանության, ինչն էլ բերում է սպառման և արտադրության լճացման, հետևաբար նաև ճգնաժամերի: Ուստի, տնտեսական ճգնաժամերից, ըստ նրա, կարելի է խուսափել միայն բաշխման այնպիսի կարգի դեպքում, որի ժամանակ աշխատանքի ցանկացած արտադրողականության պայմաններում բնակչության տարբեր շերտերի բաժինը հասարակական արդյունքում կկազմի անփոփոխ մեծություն:

Տեսանելի է, որ Ռոդբերտուսը ճգնաժամերի պատճառը համարում է ոչ թե չափազանց արտադրությունը, այլ ավելի շուտ արդյունքների բաշխման մեջ համաչափության բացակայությունը: Ծգնաժամերի այս տեսությունը ևս չի գոհացնում Բունիաթյանին, որն այն քննադատում է մի քանի պատճառներով: Նախ, որպես ճգնաժամերի պատճառ դիտելով աշխատանքի արտադրողականության մեծացման ժամանակ պահանջարկի և առաջարկի անհամապատասխանությունը, նրա տեսությունն ի վերջո հանգեցվում է մասնակի գերարտադրության և արտադրության տարբեր ճյուղերի համապատասխան թերարտադրության, ինչը Բունիաթյանի համար ընդունելի չէ: Երկրորդ՝ նույնիսկ այն պարագայում, եթե թույլ տրվի աշխատանքի արտադրողականության զարգացման ազդեցությունը բաշխման վրա, Բունիաթյանը չի համաձայնում Ռոդբերտուսի այն մտքին, թե հասարակական արդյունքում բանվորների բաժնի փոքրացումն անխուսափելիորեն պետք է բերի պահանջարկի ու առաջարկի նման հակասության: Երրորդ, ինչ վերաբերում է պահանջարկի կազմի փոփոխության պայմաններում արտադրության արագ արձագանքման անկարողությանը, սպա Բունիաթյանը նկատում է, որ արտադրության տեխնիկայի զարգացումը բավականին դանդաղ գործընթաց է, և նոր կատարելագործումները հազվադեպ են կցվում կապիտալի հին կազմին, հետևաբար չեն կարող անսպասելիորեն ավելացնել հասարակական արտադրողականությունը: Հաջորդ հանգամանքն այն է, որ եթե ճգնաժամերը ծագեին անփոփոխ գնողունակ ուժի պայմաններում ավելացող հասարակական արտադրողականության հետևանքով, սպա դրանք պետք է առաջ գալին մի քանի տարիների աճող դեպրեսիայից հետո: Մինչդեռ Բունիաթյանի դիտարկմամբ, դրանք հանկարծակի երևան են գալիս աճող տնտեսական վերելքի տարիներից հետո: Եվ վերջապես, ճգնաժամերի վերացումը կապել հասարակական արդյունքում աշխատավորների տարբեր դասերի ունեցած ֆիքսված բաժինների հետ՝ անիմաստ է, քանի որ մարդկանց պահանջմունքները միանման էքսպանսիվ չեն, և աշխատանքի արտադրողականության աճն առանց արտադրության համապատասխան փոփոխության կտանի պահանջարկի և առաջարկի այն նույն հակասություններին, որոնք, ըստ Ռոդբերտուսի, պետք է վերանային¹:

Բունիաթյանին հակասություններից զերծ չի ներկայանում նաև Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը:

¹ Бунятян М., Экономические кризисы, 1915, М., с. XII.

Ճգնաժամների էության և նախապատճառների վերաբերյալ դրույթների՝ Մարքսի տեսական հիմնավորումների հետ կապված, Բունիաթյանը տալիս է իր մեկնաբանությունը, եթե ոչ քննադատությունը: Խոսելով Մարքսի կապիտալի շահույթի անկման օրենքից, որը նրան ներկայանում է որպես հակասական և իրականությանը ոչ համապատասխան, Բունիաթյանը նկատում է, որ իրականում ճգնաժամներին նախորդող վերելքի փուլում նկատվում է ոչ թե շահույթի անկում, այլ հակառակը՝ պրոգրեսիվ մեծացում, հասարակական կապիտալի ինտենսիվ աճի և աշխատավարձի հետ միաժամանակ: Իսկ շահույթի հետագա բարձրացման հարցում, ըստ նրա, ընդհանրապես գերազնահատված է առկա կապիտալի դերը, քանի որ իրականում կապիտալից ստացված միջին շահույթը սահմանվում է՝ կախված կապիտալի քանակությունից և սպառման տվյալ պայմաններում դրա անհրաժեշտությունից: Վերը նշված օրենքը դիտելով նաև «տրամաբանորեն անհիմն»՝ Բունիաթյանը տալիս է հետևյալ պատճառաբանությունը. ըստ Մարքսի, կապիտալի «օրգանական կազմի» մեծացումը համապատասխանաբար մեծացնում է աշխատանքի արտադրողականությունը: Ընդհանուր արտադրանքում բանվորների և կապիտալիստների բաժնի անփոփոխ հարաբերակցության դեպքում կմեծանա նաև արտադրված հավելյալ արդյունքը, աշխատանքի արտադրողականության մեծացումը կհանգեցնի արդյունքների, իսկ հետևաբար նաև՝ կապիտալի արժեքի իջեցման, ինչն էլ հնարավորություն չի տա ազդելու կապիտալից ստացված շահույթի վրա: Մինչդեռ, – շարունակում է Բունիաթյանը, – աշխատանքի արտադրողականության աճը սովորաբար կրճատում է հասարակական արդյունքում բանվորների ունեցած բաժնի չափը և մեծացնելով կապիտալիստների բաժինը՝ նպաստում է շահույթի մեծացմանը¹: Բացի դրանից, վերը նշված օրենքը հիմնված է նրա արժեքի տեսության վրա, որտեղ արժեքը ներկայացվում է որպես ապրանքների մեջ կարծրացած աշխատաժամանակի որոշակի քանակություն, ինչը թույլ չի տալիս այն ընդունել որպես տնտեսական պարբերաշրջանի սահմաններում գների ընդհանուր շարժի բացատրություն, հենց միայն այն պատճառով, որ ինքը՝ Մարքսը, նշում է, որ որոշակի ապրանքային գներ չեն ղեկավարվում աշխատանքային ծախսերով, այլ կախված են կոնյունկտուրայից: Այսպիսով՝ Բունիաթյանը գտնում է, որ Մարքսը չի բացահայտում բարիքների բաշխման և սպառման ու արտադրության գործընթացի փոխհարաբերությունը, և կուտակման պատճառներն ու նշանակությունը՝ կապված ճգնաժամների հետ, նրա մոտ մնում են գրեթե չլուսաբանված: Եվ վերջապես, Մարքսի այն միտքը, թե աշխատավարձի կրճատումը և աշխատուժի ինտենսիվ շահագործումը միջոց են շահույթի մեծացման և ճգնաժամներից հետո տնտեսական կյանքի աշխուժացման համար, հակասության մեջ է մտնում իր իսկ հիմնական դրույթի հետ, թե բոլոր ճգնաժամների հիմքում ընկած են արտադրողական ուժերի զարգացման համեմատ մասսաների աղքատությունն ու սպառման սահմանափակությունը²:

Վերակապիտալացման ձգտման և դրան հետևող ընդհանուր գերարտադրության գաղափարն ընդունողների շարքից Բունիաթյանն առանձնացնում է նաև անգլիացի և ամերիկացի տնտեսագետներ Մոֆֆատին, Կրոկերին, Մոմերին և Գոբսոնին, որոնց հայացքները զուգահեռներ են գծում Լոդերդեյի, Մալթուսի, Միսնոնդիի հայացքների հետ: Հիմքում ունենալով դասական դպրոցի կապիտալի տեսության՝ Ջ. Ստ. Միլի քննադատությունը³, վերջիններս ընդգծում են, որ արտադրության շարժառիթը ոչ միայն սպառման ցանկությունն է, այլև կուտակման մեծ ձգտումը: Եվ երբ ընդհանուր հասարակության մեջ կուտակման ձգտումը գերազանցում է սպառման տվյալ պայմաններում դրա անհրաժեշտության չափը, վերակա-

¹ Bouniatian M., Les crises économiques, Essai de morphologie et théorie des crises économiques périodiques, Paris, 1930, p. 26.

² Bouniatian M., Les crises économiques, Paris, 1922, p. 26.

³ Այլ մասին տե՛ս ԴՋ.Ս. Милль, Основы политической экономии, т.1, М., 1980, с.163-168.

պիտալացումը դառնում է անխուսափելի, և ըստ որում չափից ավելի կուտակումը տանում է ոչ թե հասարակական կապիտալի կազմի մեծացման, այլ սեփականատերերի միջև դրա բաշխման փոփոխությանը, ինչին էլ հետևում են թե՛ սպառողական բարիքների և կապիտալի ընդհանուր գերարտադրությունը, թե՛ արտադրական գործընթացի խաթարումը: Ամեն դեպքում, ըստ Բունիաթյանի, նույնիսկ այս համեմատաբար նոր տեսությունները՝ իրենց մտքերի հարստությամբ և պերճախոս փաստարկներով, ըստ էության հեռու չեն Կիրիսմանի նմանօրինակ սխեմայից և նույնպես զուրկ են անհրաժեշտ տեսական հիմնավորումից: Ակներև է, որ հիշատակված բոլոր տեսություններից և ոչ մեկը Բունիաթյանին չի ներկայանում որպես լիարժեք և ավարտուն տեսություն, ինչը նա առաջին հերթին կապում է կապիտալիստական համակարգի պայմաններում տնտեսական կյանքի բազմաթիվ կարևոր գործընթացների ոչ պարզ պատկերացման հետ, ինչպիսիք են կուտակման ու բաշխման գործընթացները, սպառման ու արտադրության փոխհարաբերությունը, արտադրության հարմարեցումը սպառմանը, գնագոյացումը, ինչպես նաև տնտեսական շրջանառության մեջ բարիքների արժեքի էության, փողի ու վարկի դերը: Այդ տեսություններից ոչ մեկին, – շարունակում է Բունիաթյանը, – չհաջողվեց ապացուցել բարիքների ընդհանուր արժեզրկման, իսկ հետևաբար նաև ընդհանուր գերարտադրության տեսական հնարավորությունը: Չնայած գերարտադրության որոշ տեսաբաններ՝ Լոդերդելը, Մալթուսը, մասամբ և Սիամոնդին մոտենում են սուբյեկտիվ արժեքի տեսության հայեցակետերին, սակայն արժեքի հետևողական տեսության հիմքի վրա գերարտադրության իրենց տեսության զարգացումը նրանց մոտ բացակայում է¹: Փաստորեն գերարտադրության ճգնաժամերի տեսությունն այդպիսով մնում էր որպես մի անլուծելի խնդիր:

Մ. Բունիաթյանն անդրադառնում է նաև Ա. Աֆտալիոնի հայացքներին. «Աֆտալիոնի աշխատությունը², – գրում է նա, – ապշեցուցիչ նմանություն է հայտնաբերում մեր աշխատության տեսական մասի հետ, որը ոչ միայն չի սահմանափակվում մի ամբողջ շարք մտքերի զարգացման մանրամասնությունների նմանությամբ ..., այլև տարածվում է մեր տեսության որոշ հիմնական դրույթների վրա»³: Աֆտալիոնի տեսությունը, ինչպես և Բունիաթյանինը՝ որոշ ավելացումներով, հիմնված է երկու մտքի վրա. այն է՝ բարիքների քանակության և անհրաժեշտության հարաբերակցության փոփոխության ժամանակ դրանց հասարակական օգտակարության փոփոխության դիտարկումը՝ որպես տնտեսական կյանքի վերելքային փուլում գների ընդհանուր մակարդակի բարձրացման պատճառ և իջեցման պատճառ՝ ճգնաժամերի փուլում: Եվ երկրորդ միտքը, թե կապիտալիստական արտադրությունը իր տևողության մեջ պահանջում է վերելքի փուլին անհրաժեշտ վերջնական սպառողական բարիքների արտադրության համար մի ամբողջ շարք միջանկյալ բարիքների ստեղծում: Բունիաթյանի տարակարծությունները Աֆտալիոնի հետ, ըստ էության, սկսում են այնտեղ, որտեղ վերջանում է վերջինիս տեսությունը. եթե, ըստ Աֆտալիոնի, տնտեսական կյանքի պարբերականությունը վերը նշված երևույթների հետևանք է, ապա Բունիաթյանին դրանք գնագոյացման և գների շարժի մեխանիզմի հետ միասին ներկայանում են լոկ որպես անհրաժեշտ պայմաններ:

¹ Бунятян М., Экономические кризисы, М., 1915, с. XXIX (Նշենք, որ Շ.Շիդն իր «Քաղաքատնտեսության դասընթաց» աշխատության մեջ Մ. Բունիաթյանի արժեքի օրենքի վերաբերյալ ուսումնասիրությունը բնորոշում է որպես «ամենահամոզիչ ուսումնասիրություն» (մեջբերումը կատարված է ըստ «Հայրենիքի ձայն» թերթի, 1968, փետրվարի 28, էջ 8):

² Стів Афталион А., Периодические кризисы перепроизводства, т. I, 2, М., Л., 1930.

³ Bouniatian M., Les crises économiques, Paris, 1922, p. XV-XVI (սույն հարցին Մ. Բունիաթյանն անդրադառնում է նաև իր ուշ շրջանի հրատարակած աշխատություններից մեկում՝ Les fluctuations économiques, Paris, 1959, pp.101-133).

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆՑԱՆՇՈՒՄՆԵՐ

Վերջին երկու տարիների հայ տնտեսագիտությունը իրական և տեսական հատվածների վերաբերյալ ուսումնասիրությունների թեմատիկ բազմազանության մեջ որոշակի նյութ է տալիս ծավալուն վերլուծության համար: Սույն հոդվածում լուսանցանշումներ են այդ ուղղությամբ:

– 1 –

Տարադրամի փոխարժեքը և միջազգային ֆինանսներն անգետներին ներկայանում են որպես առեղծվածային ոլորտ: Բայց հաճախ այն այդպիսին է նաև մասնագետների համար: Ասում են՝ մեծն Ջոն Մեյնարդ Զեյնսին, որն զբաղվում էր արտասահմանյան տարադրամի առք ու վաճառքով, երեք անգամ ուղեկցել է հաջողությունը, իսկ երկու անգամ էլ բաժին է ընկել անհաջողությունը:

Սովորաբար ազգային պետությունները ձգտում են ունենալ սեփական տարադրամ՝ ակնկալիքով իրականացնելու հայրենական տնտեսության ճկուն կառավարում, ապահովելու երկրի լրիվ անկախությունն այլ պատմություններից, որոնք իրականացնում են դրամական քաղաքականություն իրենց շահերի համար և ազգային տնտեսությունը պաշտպանում ինֆլյացիայից: Սա գուցե տեսականորեն ճիշտ է, եթե երկիրը մեկուսացված է արտաքին աշխարհից և վարում է ինքնաբավ տնտեսություն: Սակայն, աշխարհատնտեսական արդի կապերի պայմաններում տարադրամի փոխարժեքը դարձել է այն վճռական գինը, որը երկրի տնտեսությունը կապում է մնացած աշխարհի հետ, երբ «անվանական և իրական փոխարժեքների վարքագծերը» դարձել են մակրոտնտեսական հավասարակշռության ձևավորման գործընթացի «հիմնարար փոփոխականներ»: Այս առումով գիտական ուրույն հետաքրքրություն է ներկայացնում Տիգրան Սարգսյանի «Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ» աշխատությունը (Եր., «Ֆեյնոմեն» հրատարակչություն, 2008, 127 էջ), որը հետամուտ է փոխարժեքի դերի առանձնահատկությունների ու դրամավարկային քաղաքականության հետ փոխկախվածության քննությանը: Այն առավել կարևորություն է ստանում «փոքր բաց տնտեսություն» ունեցող Հայաստանի համար, որում կատարվող կառուցվածքային տեղաշարժերն իրենց անմիջական արտացոլումն են գտնում փոխարժեքի վարքագծում: Ընդհանրապես, հարցերի բացատրության ժամանակ տնտեսության տիրույթը մի առանձնակի ուշադրություն է շարժում՝ հայտնվելով առաջին հորիզոնականում: Ուստի և ոչ պատահականորեն աշխատության մեջ փոխարժեքի՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի, վերլուծությունը սկսվում է գնողականության համարժեքության տեսության (մեկ գնի օրենքի) մեկնությամբ: Գաղափարի ի հայտ գալը հեղինակը հատկացնում է XVI, XVII դարերին, ի դեմս Իսպանիայի Մալամանկայի դպրոցի ներկայացուցիչների և անգլիացի մտածող Ժերարդ Մալինսի: Իսկ արդեն XX դարի քսանական թվականներին շվեդ տնտեսագետ Գուստավ Կասսելի մոտ այն սահմանվեց որպես տեսություն՝ հետագայում ընդլայնելով ու կատարելագործելով նրա կիրառական տարրերի սահմանները: Դիպուկ է Տ.Սարգսյանի այն նկատումը, թե «գնողականության համարժեքայնության կիրառությունը գործնականում ցույց է տալիս, որ այն վատ է բացատրում իրականությունը»: Այսինքն, այն արտարկցիա է և գործում է որպես ընդհանուր սկզբունք, որն իրական հատվածում ենթակա է շեղումների տրամաբանու-

թյանն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հատվածներում: Հեղինակի վերլուծական անցումները հանրագումարային իմաստ են ստանում հետևյալ ընդհանրացումներում.

1. Միևնույն արժույթի բերված արտահանելի ապրանքների գները պետք է հավասարվեն, որն անվանում ենք մեկ գնի օրենք:
2. Ոչ արտահանելի հատվածում գների հավասարությունը չի գործում, քանի որ այդ ապրանքները, տրանսպորտային մեծ ծախսերի պատճառով, չեն կարող տեղափոխվել մի երկրից մյուսը: Դրանց գինը որոշվում է միայն ներքին պահանջարկի և առաջարկի հիման վրա:
3. Ոչ արտահանելի ապրանքների գների տարբերության պատճառը հիմնականում երկրների միջև մեկ շնչին բաժին ընկնող եկամուտների տարբերությունն է, որն առաջանում է արտահանելի հատվածում տարբեր արտադրողականության հետևանքով:
4. Գործնականում հաճախ դիտարկվում են նաև մեկ գնի օրենքից շեղման բազմաթիվ դեպքեր, որոնք պայմանավորված են տրանսպորտային ծախսերով, առևտրային սահմանափակումներով, կատարյալ մրցակցության բացակայության և գների կոշտություններով¹: Աշխատության սույն հատվածը թերի կլիներ առանց իրական փոխարժեքի ներքին ու արտաքին մրցունակության, ներքին ու արտաքին իրական փոխարժեքների միջև կապի, մրցունակության վրա իրական փոխարժեքի արժևորման ունեցած ազդեցության հարցերի բացատրության: Դրան հաջորդում է իրական փոխարժեքի՝ ներքին ու արտաքին հավասարակշռվածությունն ապահովող ցուցանիշի վերլուծությունը կարծես շրջանառվող հասկացությունների մեջ նախապատրաստելով անցումը փոխարժեքի և դրամավարկային քաղաքականության հիմնահարցի քննությանը:

Կատեգորիաները և հասկացություններն իրենց ֆունկցիաները ստույգ են արտահայտում այն ժամանակ, եթե ճիշտ կետում են դիտվում դրանց ունեցած նշանակությունները: Իրավացի է Տ.Սարգսյանի այն նկատումը, թե բաց տնտեսություններում փոխարժեքի դերը երկակի է՝ մի կողմից իր ազդեցությունն ունենալով մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վարքագծի վրա, իսկ մյուս կողմից՝ որպես գնային գործոն, փոփոխվելով մակրոտնտեսական հավասարակշռության ձևավորման գործընթացում. «Միաժամանակ, փոխարժեքը, որպես երկրի ներքին արժույթի արտաքին գին, փոփոխվում է ինչպես ներքին ու արտաքին արժույթների քանակական, այնպես էլ դրանց ներքին գնային՝ տոկոսադրույքների փոփոխություններից՝ հայտնվելով դրամավարկային քաղաքականության ուղղակի ազդեցության ներքո», այսինքն՝ «փոխարժեքի վարքագիծն առավելապես պայմանավորված է դրամավարկային քաղաքականության նպատակների սահմանմամբ»: Ընտրությունը միշտ եղել է տնտեսական պահվածքի ուղեկիցը: Նույնը նաև մակրոտնտեսական կարգավորման ժամանակ՝ արժութային և դրամավարկային քաղաքականության ընտրությունը:

Իրական փոխարժեքի ճշգրտման միջոցով տնտեսության մեջ ձևավորվում է ներքին ու արտաքին հավասարակշռվածությունը: Իսկ երբ կապիտալի և տրանսֆերտների ներհոսքի արդյունքում մեծանում է արտարժույթի առաջարկի աճը և խթանում ներքին պահանջարկը, ապա ձևավորվում են փոխարժեքի արժևորման և բարձր գնային միտումներ: Այստեղ է, որ կենտրոնական բանկը խնդրի գործնական իրացումներում բախվում է որոշակի դժվարության՝ «...երբ չի կարող միաժամանակ իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կապահովի ցածր գնաճ և չարժևորված կամ քիչ արժևորված փոխարժեք» (էջ 76): Իսկ

¹ Տղան Սարգսյան, Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ, Եր., 2008, էջ 25-26:

երկրնտրանքից խուսափելու հնարավորությունը տալիս է Ռոբերտ Մանդելի «անհնարին երրորդությունը»:

Վերը նշված հարցերն իրենց կոնկրետ իրացումները ստացել են հանրապետության վերջին երկու տասնամյակների տնտեսական պատմության հատվածում: Դա եղել է դժվարությունների, որոնումների ժամանակահատված, երբ հատկապես կայունացման առաջին տարիներին կենտրոնական բանկը չէր տնօրինում «դրամավարկային քաղաքականության անհրաժեշտ ամբողջ գործիքակազմին»:

Տ.Սարգսյանի աշխատությունը հնարավորություն է տալիս ճիշտ կարդալու այդ պատմությունը: Հարկ է նկատել աշխատության այն առանձնահատկությունը, որ նրանում երևույթների գնահատումը կատարվում է այն չափանիշներով, թե հարցերն իրենց դրվածքում ու լուծումներում ինչ նստվածքներ են հայտարարում տարբեր երկրների արդի տնտեսական զարգացման փորձի մեջ, և թե հիմնավորումների մեջ տնտեսագիտական մտքի նորագույն հետազոտությունների ինչ նոր փաստարկներ են բերվում: Տ.Սարգսյանի «Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ» աշխատությունը գրված է պրոֆեսիոնալ գրչով, դուրս է գուտ ուսումնական ձեռնարկ լինելուց և երաշխիք է նրա վերահրատարակության համար, ավելի լայն հարցադրումների ու ընդգրկումների ակնկալիքով:

– 2 –

Կարելի է վկայակոչել բազմաթիվ պատմական փաստեր այն մասին, թե հարկային համակարգն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ հասարակության սոցիալ-տնտեսական գործընթացների վրա՝ պատճառ դառնալով քաղաքական, տնտեսական ու սոցիալական խոր ցնցումների, վերելքների և վայրէջքների: Ինչպես նկատել է Պ.Պրուդոնը. «...հարկի հարցն ըստ էության ոչ այլ ինչ է, քան պետության հարցը»: Իսկ ռուս հասարակագիտական մտքի հայտնի ներկայացուցիչ Ն.Տուրգենևի կարծիքով. «Հարկերն ավելի որոշակի ասած, հարկային վատ համակարգերը, ինչպես ցույց է տալիս պատմությունը, եղել են այն պատճառներից մեկը, որ միդեռլանդցիներն անկախացել են Իսպանիայից, շվեյցարացիները՝ Ավստրիայից, ֆրիսլանդցիները՝ Դանիայից և վերջապես կոզակները՝ Լեհաստանից: Արտասահմանյան առևտրի նկատմամբ ֆինանսական կառավարման վատ համակարգը վճռական նշանակություն է ունեցել Անգլիայի դեմ հյուսիսամերիկյան գաղութների խռովության վրա: Վիճարկման ենթակա չէ նաև այն, որ Լյուքսեմբուրգի ռեֆորմացիային առիթ է տվել ժողովրդից ոչ հմուտ փող հավաքելը:

Իհարկե, ֆինանսների խանգարումը չէ, որ առաջացրել է ֆրանսիական հեղափոխությունը, բայց շատ արագացրել է այն և առանձնահատուկ ազդեցություն ունեցել նրա ընթացքի վրա»¹:

Խորհրդային տարիներին, երբ ամեն ինչ «որոշ» էր, հարկերի և հարկազանձման թեման ոչ այնքան արժարժվող հարցերից էր: Հասարակական փոխակերպումների վերջին երկու տասնամյակների ընթացքում այն հայտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում, և թեման շարունակում է հետաքրքրել մասնագետներին: Եվ դա բնական է: Ու թեև իր ամբողջության մեջ ուրվագծվել է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը, բայց նրա օրենսդրական դաշտում դեռևս առկա են անորոշություններ, հակասական կողմեր, հարկաբյուջետային իրավասությունների ու սոցիալ-տնտեսական պատասխանատվությունների կենտրոնի և տեղերի հստակեցման և այլ առումներով:

¹ Майбург Е.М. “Введение в историю экономической мысли”. М., 2000, с. 124.

Վլադիմիր, Դավիթ և Տիգրան Հարությունյանների «Հարկեր և հարկազանձում» (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Եր., 2010, 599 էջ) ծավալուն աշխատությունից կարելի է հետաքրքիր տեղեկություններ քաղել հարկերի և հարկազանձման սկզբունքների ու տեսաիրավական հիմքերի վերաբերյալ՝ սկսած Հին աշխարհից, ինչը գալիս է հաստատելու, որ ժամանակակից գրեթե բոլոր հարկատեսակներն այս կամ այն չափով ունեցել են իրենց նախնական դրսևորումները, և որ հարկերը տնտեսական հարաբերությունների հնագույն ձևերից են:

Ընդհանրապես, պետության մեջ հարկային հարաբերություններն արտահայտվում են հարկային քաղաքականության մեջ, որը կոչված է պետության գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովումը ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման բարենպաստ պայմանների ստեղծման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Սակայն «...հարկային քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման այն տեսության ածանցյալն է, որը որդեգրում է տվյալ երկրի իշխանությունը»¹: 1990-ական թվականների ՀՀ-ի համար այդպիսին մոնետարիստական տեսությունն էր, որում շուկայական տնտեսությանն անցնող երկրների վերաբերյալ ցուցումներ չկային և վերածվեց տնտեսության արագ վերականգնման հույսերի էյֆորիայի²:

Աշխատության մեջ ՀՀ հարկային օրենսդրության պատմությունը բաժանվում է երկու փուլերի՝ 1992-1997թթ., որպես առաջին կամ ձևավորման փուլ և 1997թ.-ից հետո՝ որպես երկրորդ կամ բարեփոխումների փուլ: Ինչպես ամբողջ տնտեսական համակարգի, այնպես էլ նրա մի մասը կազմող հարկային համակարգի համար դա բեկման ժամանակաշրջան էր, երբ նորմատիվ օրենքներով կարգավորվածությունը, գործողության մեջ դրված հարկատեսակներն ու տուրքերը հաճախ իրական հատվածում ունենում էին այլ հետևանքներ՝ ազգային տնտեսության աճի լծակներից վերածվելով «պատժամիջոցների»: Նշված հարցերը ստացել են համապատասխան մեկնաբանություններ և ժամանակի հոսքի մեջ վեր հանվել հարկատեսակների և տուրքերի գործողության սահմաններն իրենց հակասական և կատարելագործում սկսնկալող պարագծերում: Այսպես օրինակ, ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության համատեքստում տալով հարկային եկամուտների գնահատականը՝ ընդհանրացվում են հարկման մակարդակի ցածր լինելու փաստը, անուղղակի հարկերի բարձր մասնաբաժինը, հարկման անարդարությունը³ և այլն: Կամ անդրադառնալով առանձին հարկատեսակների և դրանց փոխարինիչների գծով հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման խնդիրներին⁴, հեղինակներն առկա բացթողումների ու թերությունների վերացումը կարևորում են հարկման արդյունավետության մակարդակի բարձրացման և պետական բյուջեի եկամուտների աճի առումներով: Նշված հիմնախնդիրների լուծման համատեքստում, որպես հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական ու մեթոդաբանական մոտեցումներ, առաջարկվել են. ուժը կորցրած ճանաչել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 15-րդ և 17-րդ, 16-րդ հոդվածի 1-ին, 5-րդ, 7-րդ և 11-րդ կետերը, «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դիզելային վառելիքի և բենզինի հաստատագրված վճարների մասին», «Հաստատագրված վճարների մասին» և «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքները, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի «նվազագույն շահութահարկի» հաշվարկման և գանձման դրույթը,

¹ Վ.Հարությունյան, Գ.Հարությունյան, Տ.Հարությունյան, Հարկեր և հարկազանձում, Եր., 2010, էջ 148:

² Նույն տեղում, էջ 148-154:

³ Նույն տեղում, էջ 366-371:

⁴ Նույն տեղում, էջ 371-415:

վերանայել նույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետը և այլն: Նույն դիտողականությամբ են շարադրված նաև աշխատության մյուս բաժինները:

Այս իմաստով հարկային պարտավորությունների հաշվարկման օրենսդրական և մեթոդաբանական հիմքերը ՀՀ-ում, հարկման արդյունավետության և պետական բյուջեի հարկային եկամուտների գնահատականը ՀՀ-ում, ՀՀ հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական ու մեթոդաբանական մոտեցումները ՀՀ-ում, փոքր և միջին ձեռնարկատիրության հարկման հիմնախնդիրները և դրանց լուծման մոտեցումները ՀՀ-ում, ֆինանսատնտեսական արդի ճգնաժամի հետևանքները, դրա հաղթահարման և հակաճգնաժամային միջոցառումների բարելավման ուղիները ՀՀ-ում. հարկային ասպեկտ գլուխները ՀՀ հարկային օրենսդրության ընթերցումներն են՝ կոնկրետացված ազգային տնտեսության տեսադաշտի վրա իրականության հետ համադրման, պարզաբանումների և միջազգային փորձի հաշվառման առումներով: Գրանցում պիտի տեսնել «Հարկեր և հարկազանձում» աշխատության արժանիքները:

– 3 –

2009-ի մարտին լույս է տեսել Ա.Աղանբեգյանի «Кризис: беда и шанс для России» մենագրությունը: Դա ճգնաժամի սկիզբն էր, երբ հրապարակումներում ավելի շատ խոսում էին նրա պատճառների, հետագա հնարավոր միտումների մասին: Այն շարունակվում է առաջօր, ու թեև ընդլայնվել են մեր պատկերացումները ֆինանսատնտեսական ճգնաժամի վերաբերյալ, այնուամենայնիվ նրա «ելքի ու տևողության, իմաստով շատ կողմեր դեռևս մնում են չգիտակցված: Իրողություն են արդի ֆինանսատնտեսական ճգնաժամի դասերը երկրների «չօգտագործված հնարավորությունների» բացահայտման առումով: Այն փորձություն է, որի ընթացքում «...կհարատեն և կամրանան առավել ուժեղ, կենսակայուն բանկերն ու կազմակերպությունները, տեղի կունենա մի տեսակ բնական ընտրություն՝ որպես առաջընթացի հիմք»: Ճգնաժամը կկոփի միլիոնավոր մարդկանց դուրս գալու նրանից... շատերին «խելքի կբերի», կխորտակի դոզմաներն ու պատրանքները, կստիպի վերաիմաստավորել հին պատկերացումները, կենսական կարևոր դասեր կմատուցի ապագայի համար, պարզապես ճգնաժամը կմաքրի և ցույց կտա զարգացման ավելի արդյունավետ ուղի նրանց, ովքեր դրանից օգտակար դասեր կքաղեն»¹: Հենց այս համատեքստում էլ նրա նոր աշխատության մեջ փորձ է արվում պատասխանել «Ինչ է մեզ սպասվում փոփոխություններից», «Ինչպիսին պիտի լինի մեր պահվածքը» և «Ինչի պատրաստվել» հարցերին: Չի կարելի ասել, թե Ռուսաստանի համար արդեն ավարտվել է անցման շրջանը: Հասարակական հաստատությունների, տնտեսական ու սոցիալական կառույցների ներքին որոնումները դեռևս շարունակվում են, ինչն ավելի է բարդացնում կացությունը: Շուկայական տնտեսությանն անցնելու հարյուր քայլից հազիվ կատարված է քառասունը: Տնտեսագետը հատկապես կարևորում է երկու առաջնահերթ խնդիրների լուծում. առաջին՝ անհրաժեշտ է անցնել հավասարակշռված տնտեսության, որտեղ ապրանքների և ծառայությունների, կապիտալի և աշխատուժի առաջարկը բավարարում է համապատասխան վճարունակ պահանջարկը և երկրորդ՝ կենտրոնացված պլանի և վարչարարական հարկադրանքի մեխանիզմը փոխել տնտեսությունը շարժող շուկայական պայմաններով և խթաններով²: Տնտեսագետը հատկապես կարևորում է երկրորդ խնդրի լուծումը, մինչդեռ երկրում ՀՆԱ-ի միայն քառասուն տոկոսն է ստեղծվում մասնավոր սեփականության հիմքի վրա: Տնտեսությունը շարժող շուկայական մեխանիզմը լավատեսական գնահատությամբ ձևավորված է երեսուն տոկոսի չափով: Ֆինանսատնտես-

¹ Аганбекян А. “Экономика России на распутье. Выбор посткризисного пространства”. М., 2010, с. 6-7.

² Նույն տեղում, էջ 180-181:

ասկան ճգնաժամի խորությունը նշանակալից չափով հետևանք է հենց շուկայի անգարգացածության: Ի վերջո «Ապացուցված է, որ պետությունը վատ առևտրական է, և մասնավոր սեփականությունն ամենուր ցուցադրում է ռեսուրսների արդյունավետ օգտագործման ավելի բարձր արդյունքներ»¹: Շատ են տնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ Ադանբեգյանի աշխատության մեջ արված դիտողությունները, տեսակետներն ու առաջարկությունները: Անհրաժեշտ են համարում ներկայացնել ճգնաժամից ելքի դասեր ակնկալող նրա ընդհանրացումները.

- առանց «երկար փողերի», որպես ինվեստիցիաների, ֆինանսական և բանկային համակարգի կայուն հիմքի, երկիրը չի կարող ունենալ բարեհաջող և արդյունավետ ապագա, ուստի Ռուսաստանին անհրաժեշտ է անհապաղ ստեղծել խնայված «երկար» փողերի շուկայական ֆոնդեր,
- հիմնավոր կրճատել ինֆլյացիան՝ վրա հասած ստագֆլյացիան հաղթահարելու համար, ինչը պահանջում է սոցիալական համակարգի այնպիսի փոփոխություն, որը չի խթանի ինֆլյացիայի աճը,
- արտադրության իրական դիվերսիֆիկացիայի ռազմավարական պլանների մշակում և ճյուղերում հումքի վերամշակման ու պատրաստի արտադրանքի արտադրության իրականացում,
- արագ և համակողմանի բանկային համակարգի ամուր ծրագրի մշակում և իրականացում,
- զգուշանալ արտասահմանյան պարտքերի աճից, դրանք ավելի շահեկան պայմաններով փոխարինել սեփական փոխառու միջոցներով²:

Ա.Ադանբեգյանի աշխատությունը հարուստ է հարցադրումներով:

Սույն թեմատիկային վերաբերող հետազոտություններից է Վլադիմիր Հարությունյանի և Վիլեն Խաչատրյանի «Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում» (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Եր., 2010) աշխատությունը, որի «...նպատակն է հետազոտել և վերլուծել ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման, միտումների բացահայտման և կանխատեսումների իրականացման հայեցակարգային ու մեթոդաբանական հիմնախնդիրները, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա առաջարկել ցուցանիշների միտումների բացահայտման և կանխատեսման արդյունավետության բարձրացման գիտականորեն հիմնավորված կառուցակարգեր, ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ տնտեսության մեջ մակրոտնտեսական քաղաքականության առանձին մեխանիզմների և գործիքների կիրարկման առանձնահատկությունները և տնտեսական հիմնահարցերի առկա իրավիճակն ու գնահատելով դրանց հետագա զարգացման միջոցառումներն ու հեռանկարները՝ անել առաջարկություններ ՀՀ տնտեսության կատարելագործման և արդյունավետության բարձրացման ուղղությունների վերաբերյալ՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունների մեղմման համատեքստում»³: Նկատենք, որ նշված հարցերի վերլուծությունը կատարվում է ծավալուն վիճակագրական տվյալների համակարգման արդյունքում՝ գիտության փորձով դրանք ստուգելով իրենց բազմակի կապերի ու առնչությունների մեջ: Արդի համաշխարհային զարգացման անհայտները շատ են ապագա միտումների համար ստույգ ու ժամանակի մեջ կանխատեսումները կատարելու համար, «տեղի են ունե-

¹ Նույն տեղում, էջ 184 (նկատենք, որ ռուս հասարակագիտական միտքը այսօր էլ կարևոր տեղ է հատկացնում պետական սեփականությանը՝ որպես շուկայական սուբյեկտի, տե՛ս “Литературная газета”. 24-30 марта 2010, N 11):

² Նույն տեղում, էջ 280-294:

³ Վ.Հարությունյան, Վ.Խաչատրյան, Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում, Եր., 2010, էջ 4:

նում մի շարք վերադասավորումներ, որոնք փոփոխելու են աշխարհի հիմնական դերակատարների դիրքերը» իրենց ազդեցությունն ունենալով աշխարհի պետություններից յուրաքանչյուրի ֆինանսական և տնտեսական համակարգերի վրա: Իսկ գրականության մեջ հնչող կանխատեսումների հոսանքի մեջ Հայաստանի Հանրապետությունը մոտակա տարիների մակրոտնտեսական կայունության ապահովման համար պետք է ունենա իր կանխորոշումները: Վ.Հարությունյանի և Վ.Խաչատրյանի կարծիքով դրանք հանգում են հետևյալին.

- գուգակցելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները՝ առաջնությունը որպես խթանիչ լծակի հատկացնել հարկաբյուջետային քաղաքականությանը,
- միայն պետական բյուջեի միջոցով տնտեսական աճի ապահովումը հանրապետության համար ներկայանում է ոչ իրատեսական, ուստի առավել արդյունավետ ուղին գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծումն է, որը մեծապես կնպաստի համախառն ներքին պահանջարկի խթանմանն իր բազմարկիչ շարունակության մեջ,
- պետական ներդրումային ծրագրերն ուղղորդել դեպի այն ձեռնարկությունները, որոնք ունեն արտահանման ուղղվածություն, և պարզեցնել այդ բնագավառի օրենսդրական «քաշքշուկների համակարգը»,
- լիզինգային, վարկային ծրագրերի, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինմանն ուղղված ռացիոնալի որոնումների նոր լուծումների իրականացումը և այլն:

Ինչպես Ա.Աղանբեգյանի, այնպես էլ Վ.Հարությունյանի և Վ.Խաչատրյանի աշխատություններում տնտեսական ժամանակի շարժումը գերազանցապես արտահայտվում է թվերով: Իսկ ինչպես ասում են, թվերով երկիր չեն կառավարում, բայց թվերը ցույց են տալիս, թե երկիրն ինչպես են կառավարում:

– 4 –

Պոլ Հեյնեն «Տնտեսագիտական մտածելակերպ» աշխատությունն ավարտում է «տնտեսագիտության սահմաններից դուրս» այսպիսի մի ընդհանրացմամբ. «Տնտեսագետների մեծ մասն ընդունում է, որ իրենց կողմից կիրառվող հասկացությունները և մեթոդները երբեմն խեղաթյուրում են իրենց կողմից ուսումնասիրվող իրականությունը: Նրանք պատրաստ են իրենց վերլուծությունը և եզրակացությունները հանձնել ռացիոնալ քննադատության դատին: Բայց ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտություններում ցանկացած հետազոտության մեջ անհրաժեշտ է ընդունել ինչ-որ տեսակետ: Եթե տնտեսագիտական մտածելակերպը երբեմն հանգեցնում է աղավաղման, ոչ ճիշտ շեշտադրումների և անգամ ակնհայտ սխալների, ռացիոնալ քննադատությունը պետք է անհրաժեշտ ուղղումներ կատարի: Նման ուղղումները հաճախ հերքում կամ ձևափոխում էին անցյալի տնտեսագետների եզրակացությունները: Հավանաբար, այդպես կշարունակվի նաև ապագայում»¹: Ի վերջո, տնտեսագիտական բոլոր դպրոցներն էլ փորձել են կյանքի տնտեսական լուծումները քննության ենթարկել ռացիոնալի տեսանկյունից, երևույթների իմացաբանական չափանիշները ենթարկելով ճանաչողության որոշակի սկզբունքների: Եվ որքան էլ «ռացիոնալ քննադատությունը» փորձում է հաղթահարել ռացիոնալի և ոչ ռացիոնալի խզումները, այնուամենայնիվ այդ ճեղքվածքը շարունակում է տեղ ունենալ, իսկ արդյունքում տնտեսական պրոցեսները, ըստ էության, ճիշտ մեկնաբանություն չեն ստանում: Բրիտանացի հայտնի փիլիսոփա, սոցիոլոգ Կառլ Պոպերը, մի երկար ուղի գծելով ռացիոնալիզմի ու իռացիոնալիզմի վեճի պատմությանը, նկատում է, թե «...մարգարեական իռացիոնալիստներից մեկը հաստատել է (մանավանդ

¹ Պոլ Հեյնեն, Տնտեսագիտական մտածելակերպ, Եր., 2008, էջ 676:

Beryson-ի ու գերմանական փիլիսոփաների ու ինտելեկտուալների մեծ մասի միջոցով) ռացիոնալիստի նման նսեմ արարածներին անտեսելու կամ փնտելու մի սովորություն: Մրանց համար ռացիոնալիստները (կամ «մատերիալիստները», ինչպես իրենք են հաճախ ասում) ու մանավանդ ռացիոնալիստ գիտնականները հոգով աղքատ են ու հետամուտ են անհոգի ու մեծ մասամբ մեխանիկական գործերի ու լրիվ անտեղյակ են մարդկային ճակատագրի բազմաթիվ խնդիրներին ու փիլիսոփայությանը: Ռացիոնալիստներն էլ մեծ մասամբ ասում են, թե իռացիոնալիզմը բացարձակ անհեթեթություն է»: Իր հայեցողության մեջ Պուպերը «կանխակալ» է և «լրիվ կողմ է» ռացիոնալիզմին¹: Ստեղծվում է այն պատկերացումը, թե երևույթների ուսումնասիրության հարցում այն, ինչ վերաբերում է իռացիոնալին, գիտությունից դուրս է: Մինչդեռ, ինչպես նկատում է Հ.Ադաջանյանը. «...հասարակական երևույթների ներքին պատճառականության վերաբերյալ մեր պատկերացումներն ամբողջապես բացահայտված չեն: Այս համատեքստում դիտարկելով մուտացիոն գործընթացները՝ պարզ է դառնում, որ դրանց ներքին դրդապատճառների առումով իռացիոնալ վարքագիծն էական դերակատարություն ունի»²: Մուտացիաները պայմանավորված են ենթագիտակցական, հոգեբանական, սոցիալական, քաղաքական, մշակութային բազմաշերտ գործընթացների անկանխատեսելի հետևանքներով, որոնք ժամանակի ընթացքում ձեռք են բերում օրինաչափություն՝ համակարգը ենթարկելով համապատասխան արժեքային փոփոխության: Մերժելով իռացիոնալությունը զուտ փիլիսոփայության, այլ ոչ թե մարդու կենսագործունեության իրական հատկանիշ դիտելու մտայնությունը՝ Հ.Ադաջանյանը մուտացիայի և իռացիոնալության դրսևորումները դիտում է որպես հասարակության պատմության մշտական ուղեկիցներ: Մուտացիայի երևույթները կարող են պայմանավորված լինել տարբեր պատճառներով՝ ռեսուրսների սահմանափակություն, արժեքային համակարգի փլուզում, հասարակական կյանքում առկա տարբեր տեսանելի և անտեսանելի հակասություններ, քաղաքակրթական տարբեր մակարդակների առկայություն, արտաքին տարաբնույթ ազդեցություններ և այլն: Մուտացիայի երևույթն ուղեկցել է հասարակությանը նրա ամբողջ էվոլյուցիայի ընթացքում, սակայն ժամանակակից տեխնոլոգիական դարում ընդլայնվել են և՛ մուտացիաներ ծնող դրդապատճառները, և՛ մուտացիաների ռիթմը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ի հայտ գալով փոխվել են ժամանակի ու տարածության ընկալման պատկերացումները: Փոխվել է «մարդկային կյանքի հիմնարար չափողականությունը», և հոսքերի այդ տարածության մեջ այլ դրսևորումներ են ստանում հասարակության սոցիալական շերտավորումը, մարդկային փոխհարաբերությունները, իշխանության, հասարակության, սովերային գործունեության մասշտաբները, ֆինանսական հոսքերի հսկողությունը, հասարակության կառավարման էլիտար համակարգը, որոնք իրենց բնույթով մուտացիոն գործընթացի (դրական կամ բացասական) մի ամբողջություն են ներկայացնում³:

Համաձայն հավանականության տեսության՝ տարածությունը և ժամանակն ինքնուրույն առանձին էություններ չեն, այլ միասին կազմավորում են տարածաժամանակային կոնտինիում: Տեղեկատվական հոսքերի արագացման արդյունքում տեղի է ունեցել տարածաժամանակային խտացում՝ բարձրացնելով սոցիալական գործընթացների ինտենսիվացումը: Հ.Ադաջանյանը՝ որպես իր առաջադրույթի գործակից, անդրադառնում է Մ.Կաստելի հայեցողությանը և այս առումով որոնումների ընդհանուր ուղղությունն իրավացիորեն իմաստավորելով նրա այն արտահայտությամբ, թե «Կապիտալը ոչ միայն սեղմում է ժամանակը, այլև

¹ Մրր Կատյ Ռ-այմոնը Պուպեր, Բաց հասարակությունն ու դրա թշնամիները, հատոր 2, 2006, էջ 222:

² Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2008, N3, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 12-13:

ներծծում է այն»¹: Խոսքը միայն ֆինանսական հոսքերի կամ աշխատանքի արտադրողականության քանակական չափակցում ենթադրող փոփոխությունների մասին չէ: Հենց այս իմաստով էլ երևույթների շարժումը՝ կապված մարդու հոգեբանության, աշխարհընկալման և արժեքային համակարգի մուտագիոն փոփոխության հետ, ընդհանրացնում է, թե «Տեղեկատվական հոսքերի, կապիտալի կերպափոխման մեծ արագության, կենսաբանական ժամանակի, մարդու աշխատանքային գործունեության, սոցիալական կառուցվածքի, հակասությունների և հակամարտությունների լուծման ձևերի փոփոխության, բնակչության տեղաշարժի նոր դրսևորումների, ժամանակի և տարածության, ինչպես նաև կյանքի փիլիսոփայության նոր ընկալումների պայմաններում դժվար է ենթադրել, թե ինչ նոր «վայրիվերումներ» կարող են լինել»՝ նպաստելով մուտագիաների շարունակականությունը²: Հասարակության պատմությունը ռացիոնալի և իռացիոնալի զուգահեռ պատմություն է, անկախ նրանից, թե ինչ հատկանիշների միջոցով են ներկայացվում սոցիալական զարգացումները: Հ.Ադաջանյանը, վկայակոչումներ կատարելով Մ.Կաստելսի, Կ.Փոլանի, Դ.Շտոմկայի, Գ.Մարկագեի, Է.Թոֆլերի և այլ հեղինակների աշխատություններից, ցույց է տալիս, որ հասարակական կյանքում մուտագիաները բարդ հոգեբանական, քաղաքական, մշակութային քաղաքակրթական տրանսֆորմացիայի արդյունք են: Շարունակականության իմաստով մուտագիայի համար առանցքայինը մարդու իռացիոնալ պահվածքն է, հետազոտությունների արդյունավետ գործողությունները, քառսի ձևավորումը և անսպասելի գործընթացների հաղթահարման մեխանիզմների բացակայությունը: Անտեսել մուտագիոն գործընթացների դերը, նշանակում է իռացիոնալը դիտել գիտության սահմաններից դուրս: Այսինքն, ոչ թե բացասման վերացական սկզբունքը, այլ երևույթի իմացությունը դեպի ճշմարտության բացահայտումը: Սակայն, քանի որ ռացիոնալն ու իռացիոնալն անջատված են հեռավորությամբ, ուստի մարդիկ իրենց պահվածքում գործում են իրական կյանքի թելադրանքով: «Հայտնի ճշմարտություն է, – նկատում է Ս.Մարինյանը, – որ բնությունը չի իրագործում կատարելության գաղափարը կոնկրետ մի երևույթի մեջ: Այս իմաստով բացարձակը կարելի է գիտակցել միայն մետաֆիզիկորեն: Հանգամանք, որ գծում է հարաբերականության սահմանը երևույթների ճանաչման հարցում: Բայց ընդունենք հարաբերականի դրական սկիզբը, որը երևույթի իմացությունն ուղղորդում է դեպի ճշմարտության բացահայտում, ի հակադրություն բացասման վերացական, մտահայաց սկզբունքի: Ժամանակին Նալբանդյանը հեզնում էր իր մտահայաց բացասումի իռացիոնալ հրճվանքը: Ես սովորական ճաշ եմ ուտում, ասում է նա, իսկ իմ ընկերը հրաժարվում է դրանից՝ արդարանալով, թե մտքում ավելի կատարյալ ճաշի գաղափար ունի՝ «Դե, սատկեցեք քաղցած»: Իսկ մեկ այլ իդեալիստ հրաժարվում է ամուսնանալուց, քանզի չի գտնում մեկին, որը Աֆրոդիտեի կամ Բելվետերյան Վեներայի գեղեցկությունն ունենա»³:

Ժամանակակից հիմնարար գիտությունները հասել են ճանաչողական հսկայական նվաճումների ու նոր որոնումների՝ փորձելով հաղթահարել ռացիոնալի ու իռացիոնալի հավիտենական տարանջատման սահմանը: Սակայն ինչպես մի առիթով նկատել է Դոստոևսկին. «Եթե ինձ մաթեմատիկորեն ստույգ ապացուցեն, որ ճշմարտությունը Քրիստոսից դուրս է, ես կգերադասեմ մնալ Քրիստոսի, այլ ոչ թե ճշմարտության հետ»:

¹ Նույն տեղում, էջ 13:

² Նույն տեղում, էջ 14:

³ «Գրական թերթ», 5 հուլիսի 2009թ. (Ս.Մարինյանը մի այլ առիթով նկատել է, թե «Հայտնի է փիլիսոփայական նշանաբանը՝ «Ամեն բան ենթարկիլի կասկածի»: Բայց սա իրական է բոլորովին այլ մակարդակներում: Եթե ճանաչման պրոցեսը ենթարկենք կասկածող պայմանականության, այդ պարագայում աշխարհն առհասարակ կներկայանա որպես մի իռացիոնալ զանգված»): (Տե՛ս Հայոց գրականության երկու դարը, Եր., 2004, էջ 407):

Վերջերս լույս է տեսել Հ.Աղաջանյանի հետազոտությունը ռացիոնալի և իռացիոնալի սահմանի վերաբերյալ, որտեղ հեղինակը սրում է հասարակական առաջընթացի ռացիոնալիստական մեկնության վերաիմաստավորման պահանջը¹: Ինչպես հայտնի է, դասական և նեոդասական տնտեսագիտության ներկայացուցիչների տեսադաշտում տնտեսական մարդը ռացիոնալ է իր գործողությունների և որոշումների կայացման ժամանակ՝ նպատակ ունենալով հասնելու առավելագույն օգտակարության՝ իր ամենալայն իմաստով: Մինչդեռ հենց իրական շփումների մեջ ի հայտ են գալիս ռացիոնալիստական կոնյունկտուրայի հավաստիության ճեղքվածքները: Թ.Վերլենը, քննադատելով մարդու պահվածքը՝ որպես «ոժվարության վիճակում ռացիոնալ ռեակցիայի հայեցությունը», վերանայում է «տնտեսական մարդու» գեղոնիստական հայացքը, ըստ որի նա ղեկավարվում է սեփական շահի մաքսիմալացման սկզբունքով, որպես կանոն, հավասարակշռության մեջ գտնվող մեկուսացված սուբյեկտի, որը «ոչ անցյալ ունի, ոչ էլ ներկա» և իր գործողությունները մշտապես ենթարկում է Բենթամի օգուտի թվաբանությանը: Ջակոնո-Մարչալի բարեկեցության տեսությունը, թե իբր կատարյալ մրցակցությունը, այսինքն՝ պահանջարկի ու առաջարկի ազատ խաղը տանում է օպտիմալ արդյունքների, ոչ այլ ինչ է, քան status quo-ի ջատագովություն: Սպառողի ինքնության և նրա ռացիոնալ պահվածքի մասին դրույթները, Վերլենի կարծիքով, չի կարելի հավաստի համարել: Իսկ Ու.Միտչելը նկատել է, թե «Մենք՝ գիտնական հումանիտարներս, տառապում ենք խելացնության հետաքրքիր ձևով: Մենք գիտակցում ենք, որ տնտեսական, քաղաքական և իրավական գիտությունների օրթոդոքսալ դոկտրինաները հանգչում են այն ոչ ակնհայտ ենթադրության վրա, որ մարդու պահվածքը ենթակա է ռացիոնալ հաշվարկի սկզբունքին: Այնուհետև մենք սկսում ենք հասկանալ, որ այդ ենթադրությունը հակասում է իրականությանը: Սակայն պարզվում է, որ մեզ ոժվար է թոթափել հին սխալները, չխոսելով արդեն այն մասին, որպեսզի օգտագործենք նոր գիտելիքներ»²:

Ըստ Վ.Պարետոյի՝ մարդկանց բոլոր գործողություններն իրական կյանքում ենթակա են տրամաբանականի (նպատակների և միջոցների ռացիոնալ համապատասխանության) և անտրամաբանականի գուգորդմանը: Նա նշում է մարդկանց բնագոյաին գործողությունները պայմանավորող վեց հիմնական խմբեր (արտադրողական բնույթի բնագոյների կամ տրամաբանությունների ամբողջությունը, մարդկանց միջև կամ մարդկանց և իրերի միջև կայուն հարաբերություններ արտահայտող բնագոյները, ինքնարտահայտության բնագոյները, օրինակ՝ կրոնը, հասարակական բնագոյները, որոնց օրինակ է տալիս ինքնագոհողությունը, ձգտումների և ինքնապահպանության հետ կապված բնագոյներն ու տրամադրությունները, սեռական բնագոյները), որոնք, կազմելով մարդկային գործողությունների իռացիոնալ հիմքերը, պայմանավորում են նաև ռացիոնալի և իռացիոնալի սահմանը³:

Հ.Սայմոնը դեռևս 1950-ական թվականներին գրված աշխատություններից մեկում նկատել է, թե հոգեբանության և սոցիոլոգիայի նորագույն հետազոտությունները գալիս են մերժելու մարդկանց գործունեությունները ռացիոնալիստական դիտելու կարծիքները՝ առաջադրելով սահմանափակ ռացիոնալության սկզբունքը: Իսկ «...եթե տնտեսագետների մեծ մասը տվյալ կոնցեպցիային վերաբերվեր նույնքան կասկածամտորեն, որքան Սայմոնը, Պարետոն, Միտչելը և Վերլենը, ապա մեր գիտությունն առաջ ընթանալու մեծ քայլ արած

¹ Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, 2005թ., N1,3, 2006թ., N1,2,3, 2007թ., N3:

² Джеффри Ходжсон “Экономическая теория и институты”, М., 2003, с.155.

³ Селичмен Б. “Основные течения современной экономической мысли”, М., 1968, с. 251.

կլիներ»¹: Տ.Սկրտչյանը կարևորում է այդ կարգի վերլուծությունների դերը տնտեսագիտության գիտականացման հետագա ուղու առումով: Որոշումների ընդունման գործընթացի վրա ազդող շեղումները բազմաթիվ են (տիրապետման էֆեկտ, հիպերբոլիկ դիսկոնտավորում, իռացիոնալ տարածում, կորստի նկատմամբ անտարբերություն, հավանականության արհամարհելը, կեղծ որոշակիության, խարսխման, անորոշության էֆեկտները և այլն), որոնք և պատճառ են դառնում լավագույն տարբերակի ընտրության շեղումների համար: Այստեղից էլ, նկատում է Տ.Սկրտչյանը, ռացիոնալ ընտրության դոկտրինան ճշմարտության ըմբռնումից հայտնվում է հակասությունների բանաձևի առաջ. դասական տնտեսագիտությունը հակասություն չի տեսնում «ինչ են անում» և «ինչ են ցանկանում անել»-ի միջև, մարդիկ սովորաբար կատարում են նույն իռացիոնալ ընտրությունը, քանի որ նույնիսկ անսահմանափակ տեղեկատվության պայմաններում «սովորելու» հնարավորությունները սահմանափակ են, «...որքան շատ են ընտրության տարբերակները, այնքան որոշման ձախողման հավանականությունը մեծ է»²: Նա ռացիոնալ ընտրության վարքագծային մոդելի վերաբերյալ իր դիտողությունների հավաստիությունը հաստատում է Ջ.Ակերլոֆի «կիտրոնների շուկայի», Ս.Մալեյնաթանի պահի ազդեցության, Վաների շարժառիթների և պատասխան արձագանքի միջև կապի բացակայության, նեյրոտնտեսագիտության և փորձարարական տնտեսագիտության այլ նվաճումների վկայակոչումներով, որոնք, հակասելով ընտրության դասական տեսության կանխադրույթներին, իրենց հիմքում ունեն սահմանափակ ռացիոնալության սկզբունքը:

– 5 –

Շուրջ չորս տասնամյակ առաջ գերմանացի գիտնական Գերման Հակենը շրջանառության մեջ է դնում սիներգետիկա հասկացությունը: Այն, որպես փոփոխության նոր ունիվերսալ տեսություն և միջառարկայական հետազոտությունների ուղղություն, նպատակ ունի հաղթահարել ժամանակակից գիտության մասնատվածությունը և գիտական իմացության մասնագիտացումն ու հյուլեացումը, ինչի արդյունքում կորչում է մարդու ներդաշնակ ինքնագարգացման համար այդքան անհրաժեշտ աշխարհի ամբողջական պատկերը³:

Հակենը, բացի ֆիզիկայից, քիմիայից և կենսաբանությունից, սիներգետիկայի մեխանիզմների միջոցով աշխարհի նկարագրության ուղեծրի մեջ⁴ ներառում է նաև սոցիոլոգիան և տնտեսագիտությունը: Կարելի է բազմաթիվ վկայակոչումներ կատարել տնտեսագետներից, որոնք զուգահեռներ են գծում բնական գիտությունների և տնտեսագիտության օրենքների միջև և դա, հավանաբար, շնորհիվ այն բանի, որ «...տնտեսական համակարգը՝ տնտեսագիտության առարկան, այնքան շատ ընդհանրություններ ունի բնագիտության շրջանակներում ուսումնասիրվող ֆիզիկական համակարգերի հետ»⁵:

XIX –XX դարերի տնտեսագիտական դպրոցների հաջորդափոխության արդյունքում տնտեսական երևույթները, կապերը ենթարկվել են վերլուծական որոշակի չափումների, առաջադրվել են բանաձևեր, որոնցով փորձ է արվել կարգավորել տնտեսական կյանքը: Սակայն, ի դեմս սիներգետիկայի տեսության, տնտեսագիտությունը մեթոդաբանական վերակառուցման կարիք ունի: «Ակնհայտ է, – նկատում է Ա.Մարգարյանը, – որ տնտեսագիտական հետազոտությունների ոլորտը չի կարող սահմանափակվել ավանդական նեոդասական, քեյնսյան կամ դրանց հիմքի վրա գոյացած այս կամ այն համակցությունը ներառող մեթոդաբանական մոտեցումներով: Սրանք տնտեսական համակարգը ներկայացնում են որպես

¹ Джеффри Холдсон, նշվ. աշխ., մեջ, էջ 160:

² Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2009, N3, էջ 20-21:

³ Василькова, Яковлев И.П. и др. “Волновые процессы в общественном развитии”, Новосибирск, 1992, с.47.

⁴ Хакен Г. “Синергетика”, М., 1980, с. 281.

⁵ Титова Н.Е. “История экономических учений”, М., 1997, с.250-251.

հարաբերականորեն փակ համակարգ, իսկ արտաքին ազդեցությունները, ինչպես նաև ներքին տատանումների ներգործությունները, դիտարկվում են որպես զարգացման գործընթացի նկատմամբ չեզոք գործոններ: Այնինչ տնտեսական համակարգն իր բնույթով բաց, էվոլյուցիոն համակարգ է, որի վարքագիծն անհնար է լիարժեքորեն նկարագրել, առավել ևս՝ նրա զարգացման հնարավոր այլընտրանքների վերաբերյալ ճշգրիտ կանխատեսումներ անել՝ հենվելով սոսկ ավանդական պատճառական (դետերմինիստական) մեթոդաբանության վրա»¹: Այս առումով արդեն վերջին տասնամյակների իրադարձությունները տեսության մեջ ստացել են որոշակի ուղղություն՝ կարծես նախանշելով հին և նոր տեսությունների բաժանման ժամանակը: Այսպես՝ «ռացիոնալ ընտրության» վարկածը, որն ընկած է ավանդական տնտեսագիտական պարադիգմի (մեյնսթրիմի) հիմքում, կտրվածություն է հայտաբերում իրական շուկայական գործընթացներից, կամ վերանայվել են ընդհանուր տնտեսական հավասարակշռության վերաբերյալ պատկերացումները:

Ա.Մարգարյանը նկատում է, որ սոցիալ-տնտեսական համակարգի վարքագիծը կտրուկ որակական փոփոխությունների փուլում սկզբունքորեն տարբերվում է էվոլյուցիոն զարգացման փուլի վարքագծից, ինչը ոչ գծային շարժնթացի ու անհավասարակշռության վրա հիմնված պահանջների նկարագրումն ավանդական մոտեցումներով դարձնում է անհնար: Մինչդեռ նրա կարծիքով սիներգետիկ մոտեցումը հնարավորություն կտա գտնել շուկայական կոնյունկտուրայի օրենքներով գործող ոչհավասարակշռված տնտեսական համակարգերը կառավարելու արդյունավետ մեխանիզմներ:

*
* *
*

Ռուս հայտնի բանաստեղծ Ա.Ս.Պուշկինը նկատել է, թե «Ռուսաստանը երբեք ոչինչ ընդհանուր չի ունեցել մնացած Եվրոպայի հետ, նրա պատմությունն այլ խորհուրդ, այլ բանաձև է պահանջում»: Ամերիկյան ռուսագետ Ռ.Փայփսը հենց այդ դիտակետից Ռուսաստանի հիմնական տարբերությունը Եվրոպայից տեսնում է ռուսական կյանքի ազգային հայրենակալվածքային կացութաձևի մեջ, որտեղ իշխանությունը և սեփականությունը կենտրոնացած են միապետի ձեռքում, մինչդեռ Եվրոպայում մասնավոր սեփականության հաստատությունը բուրժուական հեղափոխությունից հետո, ըստ էության, դարձել է ինքնուրույն կառավարող ուժը: Ինչպես լրացնում է Ա.Կազինը, դրա արդյունքում ոչ թե սեփականությունն է սկսել պատկանել մարդկանց, այլ մարդիկ դարձել են իրենց սեփականության կցորդը, այդպիսին է գովաբանած արևմտյան կապիտալիզմի տխուր պարադոքսը²: Ռուսաստանի մշակութային-պատմական այդ առանձնահատկությունը շեշտել են նաև XIX դարի ռուս հասարակագիտական մտքի շատ ներկայացուցիչներ: Հայտնի է, որ ճորտատիրության վերացումից հետո երկրի ազատականացման ուղղությամբ իրականացվող դժվարությունները, հատկապես, կապված էին գյուղում մասնավոր սեփականության հաստատության արմատավորման հետ: Գեռևս այսօր էլ Ռուսաստանի համար այն օրակարգի հարց է: Փիլիսոփա Ա.Կազինը նկատում է. «Ո՛չ, հարգելի՛ լիբերալ պարոնայք, այստեղ խոսքն արդեն ոչ թե առաջավոր արևմտյան երկրներից լոկ հետ մնալու մասին է (առավել ևս մեկ-երկու սերունդ, ինչպես ենթադրում էր Ե.Գ.այդարը): Եթե դա հետ մնալ է, ապա հինգ հարյուր տարով, իսկ դա արդեն ոչ թե հետ մնալ է, այլ ուրիշ քաղաքակրթական ուղի»³: Իսկ Պ.Գուրևիչը խոսում է նախախորհրդային Ռուսաստանի տնտեսական կապերում, այսպես

¹ Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2007, N3, էջ 53:
² Литературная газета, 21-27 июля 2010, N 29.
³ Նույն տեղում:

կոչված, «ազնիվ առևտրականի խոսքի» երևույթի մասին: Ռուսաստանի հայտնի պետական գործիչ Ս.Վիտեն գրում է, որ պետության շրջանառության մեջ գտնվում են շուրջ 50 միլիոն առևտրական փողեր՝ տրված ազնիվ խոսքի դիմաց: Առևտրական, վարկավորման և այլ ֆինանսական գործարքների համար հաճախ բավական էր ազնիվ առևտրականի խոսքը: Վերջինս նույնքան «նշանակություն ուներ, ինչպես որ բուրժուական միջավայրում ազնվականական պատիվը»¹:

Սրանք լոկ թռուցիկ դիտողություններ են՝ կատարված նոր պատմական դարոցի և վերլեկյան ինստիտուցիոնալիզմի ոգով, որով որպես թե «սեղանի շուրջը նստելու կանոններն» էլ կարևոր են տնտեսական կանքի ճանաչողական առանձնահատկությունների բացահայտման և տնտեսական արդյունավետության առումներով: Տնտեսագիտական մտքի հայտնի պատմաբան Բ.Սելիգմենը գրում է. «...միանգամայն ակնհայտ է, որ տնտեսական աճը չափազանց բարդ երևույթ է: Տնտեսական աճն արտահայտող տեսությունը պետք է հաշվի առնի բնական ռեսուրսները, քաղաքական օրենսդրությունը, ինչպես նաև բազմաթիվ հոգեբանական և սոցիալական գործոններ: Այդպիսի համապարփակ տեսության մշակումը գրեթե անիրագործելի խնդիր է ներկայանում»²: Ինչպես ակներև է, հեղինակը շեշտում է տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության բազմակի կապերի հանգույցներում կողմնորոշվելու և իրենց փոխներգործության մեջ դրանք ամբողջացնելու դժվարությունը: Այնուամենայնիվ, հենց այդ ենթատեքստում է Ա.Մարգարյանն անդրադառնում ազգային նորամուծական համակարգի ձևավորման տեսամեթոդական հիմքերի քննությանը՝ ցույց տալով ժամանակի հետ հայացքների էվոլյուցիան: Ա.Մարգարյանն առանձնացնում է երկու շրջան՝ 1930-70-ական թվականներ և 70-80-ական թվականներից սկսած: Առաջինին բնորոշ էր տեխնոլոգիական զարգացման գծային դետերմինիստական սկզբունքի գերակայությունը, որը ենթադրում է «գիտություն - տեխնիկա - տեխնոլոգիա - արտադրություն» շղթան: Այդ հայեցողությունն իր հիմքում ուներ ժամանակաշրջանի տիրապետող երկու հիմնական ուղղությունների՝ նեոդասականության և քեյնսյան տեսությունների տեսական դրույթները, որպես թե «տեխնոլոգիան և գիտելիքները տնտեսական աճի նկատմամբ արտաժին (էկզոգեն) գործոններ են, և տնտեսական համակարգն իր շարժիչ ուժի՝ մրցակցության մեխանիզմի միջոցով շուկայում մրցակցող ընկերություններին պարտադրում է կիրառել տեխնոլոգիական նորամուծություններ»: Սակայն 70-80-ական թվականների գիտատեխնիկական առաջադիմության արագընթաց տեմպերը՝ տեխնոլոգիական նորարարության գործոնների ազդեցությամբ տնտեսագիտական միտքը դիմորոշեց դեպի խնդրի ավելի համակարգված ու համալիր մոտեցման: Առաջադրվեց ազգային նորամուծական համակարգի (ԱՆՀ) ստեղծման ու զարգացման հիմնադրույթը: Հազիվ թե կարելի է վկայակոչել մի բնորոշում, որն ամբողջական արտահայտի ԱՆՀ-ի բնույթն ու ընդգրկման ծավալները, այնուամենայնիվ դրանցում այն բնութագրվում է որպես ինստիտուտների ամբողջություն, որոնք կոչված են նորարարական գործընթացների իրականացմանը, ոչ թե գծային-շղթայական, այլ «ցանցային մոդելի» գործողության շրջանակ-

¹ Նույն տեղում, 2-8 июня 2010, N 22 (Այստեղ ուզում են վկայակոչել մի դրվագ՝ կատարված իմ հայրենի ԼՂՀ Սելիգեն գյուղում: 1920-ական թվականներին՝ ՆԷՊ-ի շրջանում, Ղախրամանյանների ընտանիքը գյուղում կառուցել էր մետաքսի գործարան, որը գյուղական կենցաղում առաջ էր բերել նկատելի տեղաշարժեր և՛ նյութական օժանդակության, և՛ կապերի, և՛ ընդհանուր պահվածքի առումներով: Գործարանի համար հումքը հիմնականում ստանում էին Միջին Ասիայից: Ֆինանսական հաշվարկները կատարվում էին «ազնիվ առևտրականի խոսքի» սկզբունքով: Պատմում են, որ գործարանատերը արդեն արտոնից տեղեկացնում է հումքի դիմաց մնացած պարտքը՝ 100 ոսկին մարելու համար: Տոնի կանանցից մեկը այն կարում է արխալուտի փեշին, որը պիտի Կասպից ծովով տեղ հասցնեն: Մատակարարը ոսկին ստանում է, սակայն մեկով պակաս և տարակուսանքով ասում, թե այդպես չի կարող լինել. ես վստահում եմ Ղախրամանյանին: Ինչպես պարզվում է, այդ կինը ճանապարհին մի գիշեր հյուրընկալվել էր Բաքվում, որտեղ էլ տանտիրուհին...):

² “Экономическая теория” // под общей редакцией М.Н.Чепурина и Е.А.Киселева, М., 2002, с.557.

ներում, որի հաջողությունը պայմանավորված է ինստիտուցիոնալ միջավայրի գործոններով¹: Ա.Մարգարյանն ազգային տնտեսության արդիականացման և դեպի նորամուծությունների զարգացման վերակողմնորոշման ուղի է գծում նաև Հայաստանի Հանրապետության համար:

Կարծես թե զարգացող երկրները կարող են հայտնվել բարենպաստ պայմաններում զարգացած երկրների կառավարման փորձի կիրառման, հաստատությունների և բարձրակարգ տեխնոլոգիաների փոխառման հնարավորությունների և այլ առումներով:

Ընդհանրապես, տեսական դրույթները ճշմարիտ են միայն տեսության մեջ: Եվ հազիվ թե կարելի է համահարթել և իրավացի դիտել համաշխարհային տնտեսության զարգացման մեջ ինովացիայի դերի գնահատման այն ընդհանրացումը, թե հեռանկարում «Արևմուտքի և մնացած աշխարհի միջև դիմակայություն գոյություն չունի, չկա զարգացող և զարգացած քաղաքակրթությունների ընդհարման վտանգ, զարգացումը մոտակա տասնամյակներին կունենա անհավասարաչափ, տուրբուլենտ բնույթ՝ պայմանավորված ուշ ինդուստրացման երկրների առավել արագ զարգացմամբ և ինտենսիվությամբ, ինովացիոն տնտեսության անկայուն զարգացմամբ, և վերջին հաշվով շուկայական ուժերը կտանեն երկրների համահավասարեցմանը և դարավերջին կարելի է սպասել, որ այն երկրներում, որոնց բաժին է ընկնում մոլորակի բնակչության 80-85 տոկոսը, մարդիկ կապրեն ավելի բարեկեցիկ և կայուն պայմաններում, կյանքի մակարդակի, հասարակությունների և մշակույթի քիչ տարբերություններով»²:

Իրողությունն այն է, որ շահում են այն երկրները, որոնք համաշխարհային տնտեսության տեխնոլոգիաների բրգաձև հիերարխիայում զբաղեցնում են վերին հորիզոնականները: Իսկ զարգացող և կերպափոխվող երկրների գերակշիռ մեծամասնությանը փաստորեն բաժին է ընկնում «համաշխարհային եկամտի» չնչին մասը, եթե չասենք՝ սակավ մնացորդը: Սրանց, շարունակում է Ա.Մարգարյանը, ավելի շուտ, մնում է ավանդական ռեսուրսների և որակյալ (սակայն էժան) մարդկային կապիտալի մատակարարի՝ ռազմավարական առումով անշահավետ գործառույթը, հնացած կամ, հնարավոր է, առաջնակարգ, սակայն, էկոլոգիապես վտանգավոր տեխնոլոգիաների յուրացում – մնանակումը և այլն³:

ԱՄՆ-ը արտադրում է համաշխարհային ներքին արդյունքի 20 տոկոսը, սակայն սպառում է 40 տոկոսը: Սա է համաշխարհային եկամտի բաշխման արդի սկզբունքը զարգացած և զարգացող երկրների միջև: Ինչպես բնությունը, այնպես էլ հասարակությունը գործում են անհավասարության օրենքով:

Գերմանացի տնտեսագետ Կ.Մարքսը նկատել է. «Բավական չէ, որ միտքը ձգտի մարմնավորվելու իրականության մեջ, ինքը՝ իրականությունը պետք է ձգտի դեպի միտքը»: Հենց այս վերջին հանգամանքով պիտի բացատրել, որ Արևմուտքի «ազատական բարեփոխումների» առաքելությունը, որը պարտադրվեց պատմամշակութային ու հասարակական այլ նախադրյալների առումով անպատրաստ երկրների, իր գործնական իրացումներում ունեցավ հակառակ արդյունքները՝ այդ երկրների համար գծելով մշտական «անցման» շրջանում գտնվելու ուղին»:

Խոսքը, հատկապես, վերաբերում է ինստիտուցիոնալ փոփոխությունների հետ կապված դժվարություններին: ԽՍՀՄ փլուզումն ավերիչ էր ինչպես Ռուսաստանի, այնպես էլ խորհրդային նախկին հանրապետությունների համար. վերացան ապրանքների իրացման ավանդական շուկաները, խզվեցին երկարատև ժամանակում ձևավորված կոոպերատիվ

¹ Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2009, N3, էջ 10:

² “Вопросы экономики” // 2009, N9, с. 30-31.

³ Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2009, N3, էջ 15:

կապերը մատակարարների միջև, ի հայտ եկած նոր պետական սահմանները խոչընդոտում էին ապրանքների, գիտելիքների, կապիտալի և աշխատուժի անարգել տեղաշարժերը: Ա.Մարկոսյանը և Մ.Մանուկյանն իրավացիորեն շեշտում են, որ եթե ընկերությունների գործունեությունը, կազմակերպական կառուցվածքը և կառավարման մեխանիզմները ներդաշնակ չեն երկրի սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ միջավայրին, ապա տնտեսական բարեփոխումները կոչված են լուրջ ժամանակավոր խնդիրների լուծմանը. «...որոշակի ժամանակահատվածում ստեղծվեց ինստիտուցիոնալ դատարկություն: Առևտրային կազմակերպությունների ներքին և արտաքին ինստիտուցիոնալ միջավայրերի հավասարեցումը հանգեցրեց ֆինանսական երաշխավորված և կայուն հոսքերի դադարեցման, ինչպես նաև ներկազմակերպական տարբեր խնդիրների (աշխատողներ, կառավարիչներ, տնօրինություն) շահերի սահմանազատման: Ի հայտ եկավ այնպիսի մի երևույթ, որը կարող է կոչվել «ֆիզիկական անձանց տնտեսություն»¹:

Ինչպես նկատում է Դ.Հախվերդյանը, այդ փուլում շուկայական տնտեսությանն անցնելու մոտեցումներում առաջնահերթ նշանակություն էին տալիս տնտեսության ազատականացմանը, կայունությանը և մասնավորեցմանը: Այն, որ ինստիտուցիոնալ գործոնները կարևոր ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա, տնտեսագետները վաղուց են գրանցել: Սակայն, հատկապես անցման տնտեսության վրա ունեցած ազդեցությունների առումներով ուսումնասիրությունները սկսվել են 1990-ական թվականների կեսերին: Կատարվում են տնտեսական աճի վրա ինստիտուցիոնալ գործոնների ազդեցության գնահատումներ այնպիսի փոփոխականների գծով, ինչպիսիք են՝ տնտեսական ազատության միասնական ինդեքս, կոռուպցիայի ինդեքս, ժողովրդավարության զարգացման մակարդակ, իրավական համակարգի արդյունավետության, ներդրումային օրենքների կանխատեսելիության և այլն: Բնականաբար, որքան կայացած են այդ հասկացությունները, այնքան բարձր է ազգային մրցունակությունը: Համաձայն մրցունակության համաշխարհային զեկույցի՝ որակի առումով Հայաստանի ընդհանուր ինստիտուցիոնալ մակարդակում էական փոփոխություններ չեն կատարվել և շարունակում են բնորոշ մնալ.

- հանրային և մասնավոր հաստատությունների գործունեության լուրջ թերացումները,
- մասնավոր հատվածն իր ինստիտուցիոնալ արդյունավետությամբ չի գերազանցում հանրային հատվածին,
- կորպորատիվ կառավարումը, ընկերությունների բարոյական վարքագիծը, փոքրամասնային բաժնետերերի շահերի պաշտպանությունը մտահոգության առարկա են,
- հանցագործությունների և բռնության ցածր մակարդակը:

Դ.Հախվերդյանի եզրահանգումը հետևյալն է. «Եթե մեր կարճաժամկետ քաղաքականությունը սահմանափակված է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ պայմաններով, ապա երկարաժամկետ հեռանկարում մենք կարող ենք դրանք վերածել արտադրության աճն ու սոցիալ-տնտեսական զարգացումը խթանող գործոնի: Բայց այդպիսի քաղաքականության հաջող անցկացման համար անհրաժեշտ են այլ գիտելիքներ, քան փոխարժեքի և տոկոսադրույքների ուղղումների քաղաքականությունը»²:

¹ Ա.Մարկոսյան, Մ.Մանուկյան, Առևտրային կազմակերպությունների արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները ՀՀ իրական հատվածում // Եր., 2010, էջ 9:

² «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» // հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., 2009, էջ 426:

Անտիկ ժամանակներից սկսած՝ փիլիսոփայական միտքը փորձել է որոշակիացնել մարդու հասարակական գոյության կերպը, սոցիումի զարգացման ուղիները: Առաջադրվել են հասարակության վերակառուցման ծրագրեր՝ ուրվագծելով մի ներքին զարգացման առաջընթաց դեպի ավելի բարձր, կատարյալ վիճակ: Վ.Սադովնիչին գտնում է. «Վերջին հաշվով մարդկությունը միայն երկու հնարավորություններ ունի գուշակելու ապագան՝ գիտությունը և կրոնը: Ինչպես նկատել է փայլուն ֆիզիկոս Սթիվեն Հոփինգը, ընդարձակվող տիեզերքի և մեծ պայթյունի ճշմարտության տեսության հավատքը չի հակասում արարչագործ Աստծո նկատմամբ հավատքին, բայց ցույց է տալիս այն ժամանակի սահմանները, որի ընթացքում նա պետք է իրագործեր իր խնդիրը: Գիտությունը, ինչ խոսք, միշտ ժամանակի մեջ է, հետևապես ապագա ունի: Բայց փորձը ցույց է տալիս, որ գիտության զարգացումը կանխատեսելի անշնորհակալ գործ է»¹: Այսինքն՝ մարդկության սոցիալական ու բարոյական կատարելագործման իրական միջոցները բանականությունը տեսնում է գիտության մեջ: Վերջինս էլ պետք է ձևավորի գիտելիքի կամ գիտելիքահենք ապագա հասարակությունը: Մի կողմ թողնելով շարունակական առաջընթացի իրողությունը մարդկային հասարակության անշեղ զարգացման տնտեսագիտական օրենքի գոյության գործողություն դիտելու վերաբերյալ դիտողությունները՝ Բ.Եղիազարյանը հասարակության ապագա ցանկալի տարբերակներ ձևավորելիս կարևորում է հետևյալ հարցերին «միանշանակ» պատասխաններ գտնելը.

- «որո՞նք են մարդկության համընդհանուր (գլոբալ) նպատակները,
- ո՞ր գործոններն են հիմնականում պայմանավորում մարդու և մարդկային հասարակության անշեղ զարգացման տնտեսագիտական օրենքի գործողությունն անցյալում, և ինչպիսի՞ն են լինելու դրանք ապագայում,
- որո՞նք են այդ պայմանների արտահայտման հիմնական ձևերը, դրանց պահպանման և զարգացման միջոցառումները,
- որո՞նք են մարդկային հասարակության հետագա փոփոխությունների կանխատեսվող ուղղությունները և չափը, ինչպիսի՞ն է դրանց իրողություն դառնալու հավանականությունը, և ինչպե՞ս կարող են դրանք ազդել մարդկային հասարակության զարգացման վրա, մարդկային գործունեության ո՞ր ուղղությունները, ազդող ո՞ր գործոնները և դրանց կիրառման ինչպիսի՞ միջոցառումներն են առաջնայնություն ունենալու և ռազմավարական են մարդու և, մարդկային հասարակության և հետագա զարգացման համար, որոնց մշակումն ու կիրառությունն այս առումով առավել հրատապ է համարվելու կառավարման համակարգում,
- տարածաշրջանային, ժամանակաշրջանային, սոցիալական և գործառութային (ոլորտային) ինչպիսի՞ տարատեսակներ կարող է ունենալ ապագա մարդկային հասարակությունը, և ինչպե՞ս դա կարող է ազդել համընդհանուր (համաշխարհային) հասարակության զարգացման և դրանում առանձին տեսակների տեղի և դերի վրա,
- ինչպիսի՞ն է լինելու ապագա հասարակության ձևավորման, անվտանգ գոյության և արդյունավետ գործունեության կառավարման համակարգը...,
- ինչպիսի՞ն է լինելու ապագա հասարակության... անվանումը»²:

¹ Տե՛ս «В мире науки», 2006, N1, с.71.

² «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» / գիտական հոդվածների ժողովածու 2 / Եր., «Ամսնիա Շիրակացի համալսարանի» հրատ., 2009, էջ 38-39:

Մարդկության զարգացման ապագա հիմնական ուղղությունները, հատկապես երկարատև ժամանակի կտրվածքով, հազիվ թե հնարավոր է կանխատեսել, կարող են ի հայտ գալ երևույթներ, որոնց արդյունքում այն կսկսի շարժվել այլ ուղիով: Այս իմաստով նշված հարցերը՝ մշակման դժվարությունների և պատասխանների առումներով, պատկանում են անորոշությունների տիրույթին: Դրանք մի զգալի մասով իրենց մեկնություններն են ստացել Ա.Գյուրջյանի «Տնտեսության զարգացման գիտելիքահենք կառավարման հիմնախնդիրները» աշխատության մեջ, որտեղ հեղինակն իր նպատակադրումը փորձում է իրացնել գրքի հետևյալ գլուխներում՝ «Գիտակցված գործունեությունը մարդու ապրելակերպ և նպատակների իրագործման ուղի», «Մարդկային կապիտալը՝ գիտակցված գործունեության հիմնական մասնակից և միջոց», «Մարդկային գիտելիքահենք գործունեության կառավարման սկզբունքային ապահովման համակարգը. էությունը և կառուցվածքը», «Սկզբունքագիտություն. առանձնացումը որպես գիտության ճյուղ, հետազոտությունների հիմնական ուղղությունները», «Կառավարման ընդհանրական գործառնությունները և իրականացման տեխնոլոգիական ապահովումը», «Համակարգային կառավարում. էությունը և գործոնները», «Նպատակային ծրագրերի իրականացման ընթացիկ պլանավորում և կազմակերպում»: Վերնագրերում կարծես սղագրված է գրքի բովանդակությունը՝ կոչված ուրվագծելու մարդկության գլոբալ նպատակների՝ գոյատևման ու զարգացման հիմնախնդիրները: Իսկ դրան հեղինակը հետամուտ է «ոչ թե մասնակի նպատակների միավորման և փոխհամաձայնեցման (այսինքն՝ նպատակների սինթեզի կամ ներքևից վերև համատեղման) եղանակով, այլ մարդակերպի առանձնահատկություններից մարդկային առավել ընդհանրական նպատակների հնարավոր բազմությունից տրամաբանական ընտրություն կատարելով: Հետևաբար, այս ընտրությունը հիմք կարող է դառնալ պատասխանելու այն հարցին, թե ինչպես ձևավորել մարդկային հասարակություն, այդ թվում նաև ողջ մարդկության համար, նպատակների համակարգը, համակարգել մարդկության և իր հատվածների բազմաթիվ և տարաբնույթ նպատակները՝ ձևավորելով դրանց հիերարխիկ պատկերը՝ որպես համակարգ: Քանի որ հիմքում դրվում են վերին մակարդակում տրամաբանորեն ընտրված ընդհանրական (գլոբալ) նպատակները, ապա համակարգի ձևավորումն ընթանալու է դրանց հիերարխիկ կառուցվածքավորման միջոցով, հաջորդական մակարդակների աստիճանական մանրամասնեցման և կոնկրետացման եղանակով, յուրաքանչյուր մակարդակին հավելելով նաև այդ մակարդակին հատուկ սեփական նպատակները»¹: Ինչպես ակներև է, մարդկության գոյության և զարգացման պրոցեսների ճանաչողությունը ենթարկվում է վերլուծական որոշակի սխեմայի: Ինձ թվում է բերված սխեմայում հարցերի բարդությունները պարզապես կտարրալուծվեն մակարդակների հիերարխիայում: Այսօր հասարակության բնույթի ու օրինաչափությունների վերաբերյալ տեսական ընդհանրացումների ժամանակ ընդունված է խոսել գլոբալ, փոխկախված աշխարհի տեսանկյունից: Ինչ խոսք, փոխվել է աշխարհը, երկրները, ազգերը հայտնվել են նոր կապերի մեջ, որոնք ինքնաբերաբար առաջադրում են «փիլիսոփայական նոր խորհուրդներ որոնելու անհրաժեշտությունը»՝ գլոբալացումն իմաստավորելով որպես «համաշխարհային տնտեսության զարգացման բարձրագույն ստադիա»: Վերանում են երկրների, տնտեսական շրջանների միջև ավանդական արգելքները, տնտեսությունը, գիտությունը, քաղաքականությունը, պաշտպանությունը, մշակույթը, բնակչության միգրացիան կարծես դուրս են եկել զուտ ազգային լուծումների շրջանակներից՝ ցրելով այն մտայնությունը, թե պատմությունը գիտակցորեն կերտում են մարդիկ՝ այն ուղղորդելով այս կան այն կողմը, իրականում լինելով

¹ Գյուրջյան Ա., Տնտեսության զարգացման գիտելիքահենք կառավարման հիմնախնդիրները, Եր., 2008, էջ 67:

